

Գիրքը լուսապատճենահանվել է  
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից և ներկայացվում է իր  
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է  
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ՊՆԻՔ ԱՌԻՅՆՈՒԹԱ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՈՐԿՈՒՄՆԸ ՈՒՆԵԱՆԱԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԱԿ  
ԼՈՒՄՄԱՍՅԱՑՔԵՆԱԶԱՆԵԸ ԳՐՔԵՐ:

ԹԿՈՅՔՆ ԳՐՔԵՐԻ ՄՏԵՂՈՒՄԱՆ ՄԱՆՐԱՍՏԱՄԱՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ  
ԻՄԱՆԱԸ "ՀԱՄԱՀԱՅՐԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅՔԻ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՑ՝

[www.freebooks.am](http://www.freebooks.am)

ԸՆԴՈՂՆԱԿԱԸ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՑ:  
ՑԱՆՎԱԼՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵՐԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅՈՒՆ:



ԳՐՔԻՔ ՄԵՁ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

ՄԷՎԼԱՆ ԶԱՏԷ ՐԻՑԱԹ


ՕՍՄԱՆԵԱՆ  
ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ  
ՄՈՒԹ ԾԱԼԲԵՐԸ

Ե Ի

Ի Թ Թ Ի Հ Ա Տ Ի

Հ Ա Յ Ա Ջ Ի Ն Ջ

Ծ Ր Ա Գ Ի Ր Ն Ե Ր Ը



**ՄԵՎԼԱՆ ՋԱԴԵ ՐԻՑԱԹ**

**ՕՍՄԱՆՅԱՆ  
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ  
ՄՈՒԹ ԺԱԼՔԵՐԸ**

**ԵՎ**

**ԻԹԹԻՀԱՏԻ ՀԱՅԱՋԻՆՋ  
ԺՐԱԳՐԵՐԸ**

**ԵՐԵՎԱՆ «ԿՓՀ»**

**1990**

**Րիֆաթ Մեվլան Չադե**

**Բ 676** Օսմանյան հեղափոխության մուֆ էջերը և իթթիհատի հայաջինջ ծրագրերը Եր.: ԿՓՀ: 330 էջ.

Րիֆաթի գիրքը բացահայտում է երիտթուրքական կառավարության բարձարոտական ծրագիրը, որ նա նյութել էր հայ ժողովրդի և թուրքական տիրապետության տակ գտնվող մյուս ժողովուրդների դեմ:

Այս վավերաթուղթը մեզ կօղնի ըմբռնելու թուրք կառավարող շրջաններին հատուկ և ցայտօր շարունակվող քաղաքական նենգ խաղերը և համապատասխան վերաբերմունք դրուևորելու դրանց նկատմամբ:

Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

**Բ 0503030000-02** չհայտարարված  
**715 90**

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում Մեվլան Զադե Րիֆաթի «Թուրքական հեղափոխության մութ ծալերը և իթթիհատի հայաչինջ ծրագրերը» գիրքը, որը գիտական և ֆաղափական բացառիկ նշանակություն ունեցող աշխատություն է:

Մեծ եղեռնի մասին հայ իրականության մեջ և մասնավորապես արասասանմանում տարբեր լեզուներով հրատարակվել են բազմաթիվ մենագրություններ, հոդվածներ, հուշագրություններ ու վավերագրեր: Սակայն դրանց մեջ եզակի են թուրք հեղինակների գործերը: Եվ դա պաասահական չէ, քանի որ թուրքական իշխող շրջանները, գիտնականները, ինֆորմացիայի միջոցները, տասնամյակներ շարունակ նախանձելի համատությամբ ու համերաշխությամբ նգնում են ապացուցել, որ թուրքերը հայերին չեն կոտորել, որ 1915 թ. հայկական ցեղասպանությունը այլ բան չէ, եթե ոչ հայ ֆարոգիչների երևակայության ու ֆաղափական դիավորությունների արգտսիֆ: Թուրք հեղինակների պնդմամբ 1915 թվականին և առաջին աշխարհամարտի ասրիներին, հայեր, իհարկե կոտորվել են: Բայց դա տեղի է ունեցել պատերազմի հետևանքով ստեղծված անիշխանության, առանձին թուրք պաշտոնյաների ինֆնագլխության, ֆրդերի ընչափաղցության ու ցեղային վրեժխնդրության պատճառով: Ինչ վերաբերում է օսմանյան կառավարությանը, ապա նա «հայերի դավանանության առաջն առնելու» համար նրանց ռազմանակատին հարող շրջաններից տեղափոխել է կայսրության հարավային շրջանները: Այդ տեղափոխության ընթացքում շաա հայեր (նաև թուրքեր) գոն են գնացել ցրտին, ֆաղցին, համանարակին: Օսմանյան կառավարությունը հե-

յերին բնաջնջելու մտադրություն և ծրագիր բնավ էլ չի ունեցել:

Ահա այս դրույթն է իշխում Քուրֆիայում, որին հակառակվելը համարվում է ազգային դավանանություն՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Եվ եթե դրան ավելացնենք նաև այն, որ թուրքական հասարակայնությունը, և առաջին հերթին նրա մտավորականությանը, տասնամյակներ շարունակ թրծել են մեծապետական, ազգային խտրականության ոգով, ուստի պատշաճը պետք է հաաուցել այն թուրքերին, որոնք փորձում են նշմարտությունն ասել թուրքական կառավարող շրջանների հայաջինջ ֆաղափականության վերաբերյալ:

Այդ եզակի թուրքերից են Հալեպի գաղթականության վարչության փոխտնօրեն Նազիմ Բեյը և լրագրող Մեվլան Զադե Րիֆաթը:

Րիֆաթի կյանքի ու գործունեության մասին մենք մանրամասն տեղեկություններ չունենք, սակայն մի բան տնօրինելի է. նա այն թուրք գործիչներից էր, որը դեմ էր երիտթուրքերի արկածախնդրական ֆաղափականությանը և դրա համար էլ հալածանքի է ենթարկվել ու հարկադրված թողել Պոլիսը:

«Քուրֆակտն հեղափոխության մութ ծալերը և իթթիհատի հայաջինջ ծրագրերը» աշխատությունը նման ֆաղափական կողմնորոշման արգասիքն է: Աշխատությունը սղագրական մանրամասնությամբ ու նշգրտությամբ շարադրում է «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտկոմի նիստերի, մասնավորապես 1915 թվականի փետրվարի կեսերին անդի ունեցած նիստի, բովանդակությունը: Իհարկե «օսմանյան հեղափոխության մութ ծալերը...» գերծ չէ նաև աշխարհայացքային ու ֆաղափական ըմբռնումներից ու շահերից բխող թերություններից ու սխալներից: Օրինակ, հազիվ թե կարելի լինի համաձայնվել Րիֆաթի հետ, երբ խոսքը գնում է օսմանյան կայսրության ֆայֆայման ու հայերին բաժին ընկած դժբախտ նահատուգում հրեաների խաղացած դերի մասին: Սակայն նման թերությունները մասնակի ու հատուկենտ բնույթ ունեն, իոկ ամբողջության մեջ մենք լիակատար հիմքեր ունենք ասելու, որ

Ռիֆաթի տշխատությունը վավերագրական փաստաթղթերի հավաքածուի նշանակություն ունի:

Գիրքը տոաջին տնգամ հրատարակվել է 1929 թվականին, Հայեսպում, օսմաներեն լեզվով: Մի ֆունի տարի անց թարգմանվել ու ֆունիցս հրատարակվել է հայերեն: Վերջին հրատարակությունները լույս են տեսել 1968 և 1975 թթ. Քեյրութում:

Խորհրդային Հայաստանում գիրքը հրատարակվում է տոաջին անգամ: Այն ներկայացնում է 1968 թվականի հրատարակության լուստպտանենտհանումը, տրեմտահայերեն է տոանց ծանոթագրությունների:

«Քուրֆական հեղտփոխության մուք ծալֆերը և իթթի-հտտի հայաջինջ ծրագրերը» գիրքը հայ պտտմաքտնների մեկ տնգամ ևս հնտրտվորություն կտտ թուրֆ պտշտոնակտն գտղտփտրտխոսության կեղծաբարությունը, պտտմությունը նենգտփոխելու նրանց ջանֆերը կանխել իրենց իսկ աղբյուրների օգնությամբ, հտմտշխտրհտյին կտրծիֆը կրկին բենելու Հտյկտկտն հտրցի, Հտյ դատի վրտ:

Ներկայացվող աբեմտահտյերեն տտրբերակը թուրֆերեն գրֆի ամբողջտկան թարգմանությունը շէ:

ՀՐԱՏԱՐԱԿԻԶ



## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ներկայ հատորի ընդգրկած նիւթերուն շուրջ ցարդ հրատարակուածները կիսկատար եւ մասամբ իրականութեան անհամապատասխան եւ դիւանական փաստերէ գուրկ ըլլալուն, սոյն պատմական հարցերով հետաքրքրուողները յանախ բուն իրականութեան անտեղեակ մնացած են: Այս պարագան պարտք կը դնէ մեր վրայ, թարգմանաբար հունրութեան ներկայացնելու սոյն վաւերագրական հրատարակութիւնը:

Մէվլան Զատէ Ռիֆաթ, թուրք լրագրող մը, նախապէս կատարի Իթթիհատական մը, իր յօդուածներով նշանաւոր եղած է: 1914-18 պատերազմի ընթացքին ահարուեցաւ Թուրքիոյ ներքին գաւտոներէն մէկը: Այն ատեն Իթիլաֆ կուսակցութեան կը պատկանէր:

Մուսթաֆա Քէմալի դէմ դաւադրութիւն կազմակերպելու ամբաստանութեամբ դատապարտուած էր: Մեռաւ Հալէպի մէջ 30ական թուականներուն:

Հեղինակը *Իթթիհատ* եւ *Թերազզը* կուսակցութեան նախկին ղեկավարներէն, մօտէն տեղեակ եւ շատ անգամ ներկայ գտնուած է յիշեալ կուսակցութեան գաղտնի ժողովներուն, որոշումներուն գործադրութեան ձեւերուն եւ անոր վարած քաղաքականութեան: Հեղինակը ներկայ գրքով նոր լոյս կը սփռէ Օսմանեան յեղափոխութեան իրական ներքին ծալքերուն, Թուրքիոյ ընդհ. պատերազմի մուտքին, հայկական սպանդին դրդապատճառներուն եւ պատասխանատուներուն մասին: Ան կը ներկայացնէ պատերազմի յտրակից հարցերը, Քէմալական գաղտնի առաքելութեան նպատակն ու *Միլլի* կառավարութեան կազմութիւնը, ինչպէս նաեւ Սիոնական կազմակերպութեան հրէական քաղաքականութիւնը:

U. UFSU



1914 Յունիս 28-ին Սարակձօ Պամնիայի մէջ Սերպիայի Փրինչիփ անուն ուսանող մը, իր ձեռքին տրուած տարրճանակին աւերիչ ուժը փորձելու մեծ փափաք կը զգար Այս տրամադրութեան մէջ էր, երբ նշմարեց, որ Աւստրո-Հունգարիոյ կայսրութեան գահաժառանգ Արհիագուքս Թրանսուա Գերաինանտ և կինը Դքսուհի Տահանկայուրի իր մօտէն կ'անցնէին: Փրինչիփ երբ դանսնք կը տեսնէ ինքնակորոյս վիճակի մը մտանուած, մտար տարճանակին ըլթակին կը տանի ու իրարու ևսեւէ արձակուած գնդակները կը սպաննեն գահաժառանգն ու անոր կինը:

Այս գնդակներուն կայծերը արծարծած էին ատրիններէ ի վեր աշխարհի մէջ ամբարտուած ղինամթերանոցները: Եւրոպայի, Ասիոյ, Ափրիկէի, Ովկեանիոյ և զոյգ Ամերիկաներու մէջ, իրենց սուօրեայ գործերով զրապող բոյսր աղպերը ստքի հանելով՝ զիրար բզբտելու միգած էր: Այս քանդիչ արարը չորս տարի, երեք ամիս և ութ օր ամբողջ աշխարհը սարսած էր:

Սոյն ընդհ. պատերազմին՝ օգէն արձակուած ուսմիր, ծովու մէջ գետեղուած ականր և միլիոններու հասնող բանակները իրարու կը բախէին, ամէն ինչ կը քանդէին, կ'ոչրնչացնէին յիւներ, քաղաքներ, գիւղեր. վերջապէս շարժուն և անշարժ ամէն բան, մարդոցմով միասին կը բնաջրնջուէին: Մարդկայ թիւնը, քանդելու, աւերելու սոժամեայ յիմարութեան մը մտանուած կը կարծուէր:

Ընդհանրացող այս պատերազմը, գահաժառանգին ըստանութեան իրը հետեւանք, Աւստրո-Հունգարիոյ փոքր Սերպիոյ դէմ պատերազմի յայտարարութեամբ սկսած էր:

Աւստրո-Հունգարիոյ Սերպիոյ դէմ պատերազմ յայտարարելուն երրորդ օրը, իր գինակիցը Գերմանիա՝ նախ Ռուսիոյ և ապա երկու օրուան մէջ յաջորդարար Թրան-

սայի եւ Պելճիքայի դէմ պատերազմ յայտարարած եւ միլիոններու հասնող բանակներով յարձակման անցած էր: Դիտցող Անգլիան՝ Պելճիքայի դէմ եղած յարձակումը պատրրուակելով, Գերմանիոյ եւ Աւստրո-Հունգարիոյ դէմ պատերազմ յայտարարած էր:

Ընդհ. պատերազմի բուն սկզբնաւորութեան թուականը նկատուած է Գերմանիոյ Ռուսիոյ դէմ պատերազմի յայտարարութեան օրը, այսինքն 1 Օգոստոս 1914-ը:

1914-ի Օգոստոս 1-ին, Շարաթ օր ժամը 7.40-ին, Գերմանիոյ Ս. Փեթրսպոլեկի դեսպան Կոմս Փորթալլին Ռուս կառավարութեան կը յանձնէր պատերազմի յայտարարութեան պատճէնը:

Գերմանական բանակը կարճ ժամանակի մը մէջ Պելճիքական ամրոցները քանդելէ ետք, Ֆրանսական հող մտած եւ Փարիզի ուղղութիւնը բռնած էր: Գերման բանակներուն այս արագ եւ չնախատեսուած ճակատներէն կատարած յարձակումը եւ յառաջխաղացումը Ֆրանսան դժուար կացութեան մը մատնած էր: Ֆրանսա մէկ կողմէն կեղըր. կառավարութիւնը Պորտո փոխադրելով, իսկ միւս կողմէն մահը անարգող բանակներով եւ գերմարդկային ճիգով մաքառելով, վերջապէս Մառնի ճակատամարտին յաջողած էր Գերման յառաջացող բանակը կասեցնել եւ հետզհետէ նահանջի մատնել զայն:

Մառնի ճակատամարտին, Գերման բանակներուն կասեցումը եւ հետզհետէ կատարուած նահանջը, զինուորական մասնագէտներու կողմէ Գերմանիոյ պարտութեան սկզբնաւորութիւնը նկատուած է:

Գերմանիա ասիկա կ'ըմբռնէր, սակայն ափսո՛ս, որ պատերազմը ինք սկսած ըլլալուն, չէր կրնար նահանջի գիծը որդեգրել: Ան յաղթանակը ապահովելու համար սկսած էր նոր զինակիցներ փնտռել. օրինաւոր եւ ապօրէն ամէն տեսակ աւերիչ միջոցներու դիմելով, պատերազմը միջազգային օրէնքներու հակառակ ձեւի մը վերածած էր: Գերման ընդժովեաները՝ ճամբորդատար, չէզոք կառավարութեանց պատկանող փոքր ու մեծ նսուերը փոքր կասկածով մը ընկղմած ըլլալուն, աշխարհի բողոքներուն տեղի տուած էին: Այս բողոքները Գերմանիոյ վրայ չաղկեցին, ընդհակառակը Գերմանացիները կը կարծէին, թէ միջազգային օրէնքներու հակառակ միջոցներով պատերազմելով, պիտի կրնային յաղթութիւնը ապահովել: Վերջապէս Գերմանիոյ վերջին յոյսը այսպիսի ապօրինի միջոցներով յաղթելու մէջ կը կայանար:

\* \* \*

Այս ընդհ. պատերազմէն առաջ Եւրոպայի մեծ պետութիւնները, «Երեւակ Համաձայնութիւն» եւ «Երեւակ Զինակցութիւն» անուան տակ երկու ճակատներու բաժնուած էին:

«Երեւակ Համաձայնութիւնը» կը բաղկանար Անգլիոյ գլխաւորութեամբ՝ Ֆրանսայէ եւ Ռուսիայէ, իսկ «Երեւակ Զինակցութիւնը» Գերմանիոյ գլխաւորութեամբ՝ Աւստրո-Հունգարիայէ եւ Իտալիայէ: Միս փոքր աէրութիւնները, որպէս արբանեակներ, այս երկու ճակատներու շուրջ կը դառնային:

Եւրոպայի այս երկու թշնամի ճակատներու բաժանման միջոցին էր, որ Սերպ Պոսնիայի մէջ Փիլիքիֆի ձեռքի ատրճանակին սրայթիւնը ամբողջ աշխարհը ցնցեց:

Օսմանեան Կայսրութիւնը իրենց ձեռքին մէջ ունեցող Իթթիհատ եւ Թերապլը կուսակցութեան պատկանող զինուորականներէն Գերմանիոյ մէջ ուսած մասը Գերմանիոյ զինուորական ուժին վրայ կը հիանար. Այս հիացումը պատճառ կը դառնայ, որ Պալքանեան պատերազմէն քայքայուած Օսմանեան բանակին բարեկարգման համար, Ա. բանակի հրամանատարի տիպոտով կը հրաւիրուի Գերման զորավարներէն Լէման Ֆոն Զանդերս փաշան, ինչ որ Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ ընդվզումին պատճառ հանդիսացաւ:

Գերմանիա՝ Մառնի ճակատամարտէն անչաջոյ դուրս գալուն, կը ստիպուէր ամէն գնով նոր զինակիցներ փրնարուել, որովհետեւ մէկ ամսուան ընթացքին պատերազմական կացութիւնը հետեւեայ պատկերը կը պարզէր:

Գերմանիա 1 Օգոստոսին՝ Ռուսիոյ, 3 Օգոստոսին՝ Ֆրանսայի, 4 Օգոստոսին՝ Պելճիքայի դէմ պատերազմ կը յայտարարէր. նոյն օրը Անգլիա՝ Գերմանիոյ, 6 Օգոստոսին՝ Գարա Տաղ՝ Գերմանիոյ դէմ. 13 Օգոստոսին Եգիպտոս՝ Գերմանիոյ դէմ. 23 Օգոստոսին Ճարոն՝ Գերմանիոյ դէմ. 25 Օգոստոսին՝ Աւստրո-Հունգարիա՝ Պելճիքայի դէմ պատերազմ յայտարարած էին:

Պատերազմի դաշոր մէկ ամսուան ընթացքին այս աստիճան ընդարձակուած էր եւ աւելի ընդարձակուելու հաւանականութիւն ցոյց կու տար:

Այս կացութեան մէջ, Գերմանիոյ «Կոպէն» եւ «Պրբեսլա» անուն երկու զրահաւորները Միջերկրականի մէջ Անգլիական եւ Ֆրանսական տորմիդէն հալածական եւ բրնաջնջուելու վտանգին ենթակայ՝ առիթը դտած էին Զա-

նազ Գալէէն անցնելու եւ Պոլսոյ նաւահանգիստը ապաստանելու :

Գերման տորմիզին պատկանող այս երկու զրահատորներուն Պոլիս ապաստանելուն հիման վրայ, Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ դեսպանները սլահանջած էին այս երկու նաւերուն յանձնուիլը եւ կամ ապագինուելով մինչեւ պատերազմի վերջաւորութիւն արգելափակուելը :

Օսմանեան կայսրութիւնը կառավարող Իթթիհատ եւ Թէրազգըրի ղեկավարները շատոնց Գերմանական ազդեցութեան տակ մտած եւ նոյնիսկ Գերմանիոյ Պոլսոյ դեսպան Վանկէնհայմի հետ զինակցութիւն կնքելու համար բանակցութեան սկսած էին. ասոր համար դեսպաններուն պահանջին զոհացում տալու հարկ չէին տեսած :

Երբ Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ դեսպաններուն պահանջը սպառնական դարձաւ, Գերման դեսպանը թելադրեց Թուրքիոյ յայտարարել, որ երկու զրահաւորները Գերմանիոյ կողմէն Օսմանեան կառավարութեան ծախուած են, միեւնոյն ժամանակ պահանջելով շուտափոյթ յանձնումը «Օսմանիյէ» եւ «Րէչատիյէ» անուն երկու զրահաւորներուն, որոնք Անգլիոյ մէջ կը շինուէին : Այսպէսով ժամանակ չահիլ էր դեսպանին նպատակը :

\* \* \*

Կացութիւնը երբ այսքան կը փափկանար, Գերմանիոյ Պոլսոյ դեսպան Վանկէնհայմ, իրիկուն մը վարչապետ Սաիտ Հալիմ Փաշայի Նոր Գիւլի սպարանքը կ'այցելէր եւ իրենց միջեւ հետեւեայ խօսակցութիւնը տեղի կ'ունենար :

Վանկէնհայմ (Ժպտումերես). — Ն. Վսեմութիւն, այսօր Ձեզի շատ ուրախառիթ լուր մը կը բերեմ. վաղուրնէ սկսեալ կրնաք «Կոպէն» եւ «Պրեսլաւ» զրահաւորներուն անունը փոխել եւ Գերմանականին տեղ Օսմանեան դրօշակը պարզել. ուրախ եմ, որ կրցայ վերջապէս կառավարութեանս հաւանութիւնը ստանալ եւ Ձեզ ազատել Անգլո-Ֆրանքո-Ռուս դեսպաններուն սպառնալիքներէն :

Սաիտ Հալիմ Փաշա. — Շնորհակալ եմ Ն. Վսեմութիւն, ըսել է այս նաւերը Օսմանեան կառավարութեան իւրացնել տալ կ'ուզէք :

Վանկէնհայմ. — Կ'ուզեմ տեղեկացնել Ձեզի, թէ այս երկու նաւերը Ձեզի տրուած են. նոյնիսկ Օգոստոսափառ կայսրը առանձինն ղիւրութիւն մըն ալ ցոյց տուած է, եթէ թոյլ տաք պարզեմ :

Սաիտ Հալիմ Փաշա. — Խնդրե՛մ :

Վանկէնհայմ.— Ինչպէս գիտէք, այս նաւերը գիտութեան եւ արագութեան վերջին դրութեամբ շինուած են եւ սազմական արժէքնին շատ բարձր է: Ձեր ծովայինները չեն կրնար զանոնք պէտք եղածին պէս գործածել, կառավարութիւնս այս կէտը նկատի առնելով, կայսերական հրովարտակով անոր բոյոր գինուորական կազմը, մինչեւ պատերազմի վերջաւորութիւնը, Ձեր հրամանին ենթարկած է. (ժպտելով), ուրեմն կրնաք վազուրնէ սկսեալ անոնց տարազները փոխել եւ Փէս դնել տալ:

Սաիտ Հալիմ Փաշա.— Խնդրեմ, հաճեցէք ընդունիլ անկեղծ շնորհակալութիւններս եւ նորին կայսերական Բարձրութեան ներկայացնել իմ խոնարհ երախտագիտութիւններս:

Վանկէնհայմ.— Հիմա հեռագրով կը ներկայացնեմ:

\* \* \*

Սաիտ Հալիմ փաշա, Օսմանեան կայսրութեան փլուզման նախանշանը եւ ընդհ. սլատերազմի մուտքին միակ պատճառը հանդիսացող այս սեւ յուրը, որպէս «յաջողութիւն», անմիջապէս ընդհ. կեդրոնին հետաձայնած էր, մինչդեռ դեսպան Վանկէնհայմ ասոնց խնդրանքին վրայ Սաիտ Հալիմ փաշան այցելած էր: Ընդհ. կեդրոնին մէջ Թալաաթ, Ճէմալ, Էնվէր, Ճասիա եւ միւս ընկերները գլխուս գլխի այս նիւթին շուրջ կը խորհրդակցէին եւ Էնվէր կը խօսէր:

Էնվէր.— Այլեւս կը հաւատամ, որ Մակեդոնիոյ կորուստը կրկինով պիտի դարձանենք, քանի Գերմանիան, պողպատէ բանակներու տէր հզօր Գերմանիան, մեզի թիկունք կը կանգնի ո՛չ միայն Մակեդոնիան, այլեւ կովկասը եւ Եգիպտոսն ալ կրնանք Իթթիհատ եւ Թէրապզըի իշխանութեանը ներքեւ առնել եւ աշխարհի ամենահզօր կայսրութեան վերածել Թուրքիան:

Ճաւիտ.— Ընկեր Էնվէր, այս աստիճան երեւակայութեամբ մի տարուիր. աղէկ խորհէ եւ նկատի առ, որ այսօր մենք նիւթապէս սնանկացած վիճակի մէջ կը գլուխուինք. ամէն բանէ առաջ մեր նիւթական անձկութիւնը խորհելու ենք: Ես զինուոր չեմ եւ զինուորականութենէ բան չեմ հասկնար. միայն Նարոյէոն նշանաւոր խօսք մը ունի, որը իմ պաշտօնիս հետ աւրնչութիւն ունենալուն կը յիշեմ եւ ես ալ պիտի կրկնեմ: Նարոյէոն ըսած է, որ պատերազմը երեք բանի կը կարօտի, դրամ, դրամ, նոյնպէս դրամ, (խորհրդաւոր ժպիտով մը), առանց դրամի բան մը

կարելի չըլլալը, դուք ալ Նարուէոնի շափ կը չեշտէք, այնպէս չէ՞ . . . :

Էնվէր (հպարտօրէն). — Տարակոյս չկայ, սակայն դրամական խնդրոյն կարգադրութիւնը Ձեր կարողութենէն կախեալ է, մեզի այսչափ ձեռնտու եղող Գերմանիան, կրնայ մեզի հարկ եղած դրամն ալ հայթայթել:

Թալաաթ. — Գերման դեսպանին առաջարկին ի՞նչ կ'ըսէք. այս պայմաններու տակ այդ երկու դրահաւորներուն ընդունուիլը յարմար է:

Ճէմալ. — Դեսպանը կը յայտարարէ, որ այդ երկու նաւերը մեզի տրուած են, սակայն ղեկը ուղղակի մեզի չի յանձներ, կազմը իրենց ձեռքը պիտի մնայ. այս ձեւով այդ նաւերէն օգուտ մը չսպասուիր, եւ չենք կրնար զանոնք մեր հրամանին ենթարկել եւ ա՛յս, ծովային նախարարի հանդամանքովս կը խօսիմ:

Էնվէր. — Եթէ բարեկամեցողութիւն ըլլայ դիւրին է. անպամ մը յայտարարենք, որ այս նաւերը մերն են, մնացածը կը հարթուի:

Ճէմալ. — Մեր առաջին իսկ քայլին չսխալինք, վերջը նահանջը դժուար կ'ըլլայ. մեզի դէմ պիտի ելլեն Անգլիա, Ֆրանսա, Ռուսիա եւ ասոնց դաշնակիցները, իսկ մենք պիտի գործակցինք Գերմանիոյ հետ. ամէն պարագայի տակ պէտք է խոհեմութեամբ շարժինք:

Գարա Քէմալ. — Մէկ կողմը ՔիֆիՐիկ (Անգլիա). ԹԱՆԿՕ (Ֆրանսա) եւ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՁԸ (Ռուսիա). միւս կողմը անպարտելի Գերմանիան, կեցցէ՛ Գերմանիան:

Թալաաթ. — Կատակը ձգենք եւ բուն նիւթին դառնանք: Գերման դեսպանը թէեւ կը յայտարարէ, թէ սոյն երկու նաւերը իրենց ամբողջ կազմով մեր տրամադրութեան տակ դրուած են, սակայն յայտարարութիւնը երկդիմի է. ձէմալ կը փափաքի, որ սոյն նաւերուն ղեկը ուղղակի մեզի յանձնուի, անկասկած ասիկա աւելի լաւ է. այս կէտի շուրջ խորհրդակցինք եւ միեւնոյն ժամանակ աշխատինք, որ Գերման դեսպանը չդժգոհի:

Էնվէր. — Խնդրեմ ընկերներ, տարակոյսներով չի գործենք. խնդիրը պարզ է. այս նաւերը ղեկավարելու համար ծովային սպաներու պակասը ունինք. սակայն Գերմանները մեզմէ աւելի լաւ կ'ըմբռնեն եւ այս առաջարկով կ'ուզեն մեզի դիւրութիւն տալ. ես վստահ եմ, թէ Գերման կայսրը մեզի հանդէպ անկեղծ է. Գերմանիոյ այս առաջին զոհողութիւնը պէտք է գնահատենք. արդէն Գերման սպաները չեն կրնար մեր հրամանին ենթարկուիլ, մեր եւ ա-



նոնց միջեւ գիտական մարզի մէջ հսկայ տարբերութիւն մը կայ:

Ճէմալ.— Ինքզինքնիս այնչափ նուաստ չզգանք: Եթէ դեկը հիմակուրնէ Գերմաններուն յանձնենք, չեմ գիտեր թէ վերջաւորութիւնը ո՞ւր կը յանգի:

Շիւքրի.— Խնդրե՛մ ընկերներ, ինչու այս նաւերուն համար պարապ տեղ կը վիճինք: Այս նաւերուն մեզի տրբուիլը անակնկալ բարիք է եւ ի՛նչ պայմաններով որ մեզի յանձնեն զանոնք, ընդունելու պարտաւոր ենք. կարելոր ինդիրը դրամի անձկութիւնը բառնալն է. ամէն բանէ առաջ պէտք է բանակցութիւնները վերջացնել, համաձայնութիւնը ստորագրել եւ դրամը ձեռք բերել. տակաւին քանի մը օր Անգլիական, Ֆրանսական եւ Ռուսական դեսպանները կրնանք օրօրել. օրինակի համար, կրնանք վաղը ՕՍՄԱՆԻՅԷ եւ ՐԷՇԱՏԻՅԷ գրահաւորներուն անմիջական յանձնումին համար կիներու միջոցաւ Անգլիական դեսպանատան առջեւ ցոյց մը կազմակերպել, իսկ քանի մը օրուան ընթացքին պէտք է դիրքերնիս ճշդենք:

Իսմայիլ.— Լաւ միջոց մը. այս ձեւով Գերման դեսպանը շոյած եւ միեւնոյն ժամանակ Խալիտէ Հանըմին ալ նեղուցի գրօսանք մը պատրաստած կ'ըլլանք:

Թալաաթ (ձէմալին դառնալով).— Ընկեր ձէմալ, դո՛ւք ծովային նախարար էք, ըսէք տեսնենք այս նաւերուն ի՞նչ անուն պիտի տաք:

Ճէմալ.— Նախ թող պարզուի թէ մերն են, յետոյ Աստուած ողորմած է:

Թալաաթ.— Եթէ Աստուծոյ ողորմութեան ձգենք, վա՛յն է եկեր մեր գլխուն. նաւերը մերն են եւ մեր նաւահանգիստին մէջ, ըսէք ուրեմն ի՞նչ անուն գտաք:

Ճէմալ (քիչ մը խորհելէ ետք).— Եթէ յարմար կը տեսնէք, «Կոպէն»ը՝ «Յավուզ» եւ «Պրեսլաւ»ը՝ «Միտիլի» կոչենք:

Ճաւիտ.— Ի՞նչ գեղեցիկ անուններ. կը յուսամ թէ մօտերս «Յավուզ»ին Աղեքսանդրիան գրաւելը եւ ձէմալին ալ «Միտիլի»ով Գահիրէ յաղթական մուտքը կը տօնենք:

Ճէմալ.— Եթէ յարմար դատէք, իմ հրամանատարութեանս տակ Մարմարայի բացերուն մէջ ռազմափորձ մը կատարել տամ: Այսպէսով թէ մեր ծովայիններուն կարողութիւնը եւ թէ Գերմաններուն մեր հրամանատարութեան հանդէպ ունեցած հնազանդութիւնը կչոած կ'ըլլանք:

Թալաաթ.— Շատ յարմար կ'ըլլայ:

Ճէմալ (Էնվէրին դառնալով) .— Ընկեր էնվէ'ր, դուք  
ալ մեզի հետ պիտի ըլլաք:

Թալաաթ .— Բոլորս կու գանք:

Յետ խորհրդակցութեան, նաւերը առաջարկուած  
պայմաններով ընդունելը եւ ճէմալին ալ ռազմափորձի ա-  
ռաջարկը յարմար դատուեցաւ:

\* \* \*

Այս գաղտնի խորհրդակցութեան յաջորդ օրը բոլոր  
Պոլսական թերթերը կը ծանուցանէին, թէ «Կոպէն» եւ  
«Պրեսլաւ» զրահաւորները Օսմանեան կառավարութեան  
կողմէ գնուելով «Յալուզ» եւ «Միտիլի» կոչուած եւ ա-  
նոնց ամբողջ զինուորական կազմը Օսմանեան բանակին  
մաս կը կազմեն:

Արդարեւ, այս զրահաւորներէն «Կոպէն» եւ «Պրես-  
լաւ» անունները ջնջուած եւ անոնց տեղ թրքերէն «Յալուզ»  
եւ «Միտիլի» անունները գրուած եւ անոնց զինուորական  
կազմին Օսմանեան ծովայինի տարազ հազցուցած էին:

Նոյնպէս տարածա յնուած էր, թէ նոյն օրը երեկոյին  
Իթթիհատ եւ Թէրազըր կուսակցութեան նշանաւոր բանա-  
խօսուհին՝ Խալիտէ Էտիպի նախագահութեամբ թուրք տի-  
կիներէ կազմուած յանձնախումբ մը Անգլիական դեսպա-  
նատան Թարապիյէի եւ Նոր Գիւղի միջեւ գտնուող ամառ-  
նային սպարանքը դիմելով եւ Անգլիոյ մէջ Օսմանեան կա-  
ռավարութեան հաշտոյն շինուող «Օսմանիյէ» եւ «Րէշա-  
տիյէ» զրահաւորներուն անմիջական յանձնումը պահան-  
ջած էր:

Անգլիոյ դեսպանը թերթերու ծանուցումներէն եւ  
տիկիներու դիմումէն դժգոհած, մանաւանդ տեղեկացած  
ըլլալով որ յաջորդ օրը Օսմանեան տորմիդը այս երկու զը-  
րահաւորներուն մասնակցութեամբ Մարմարայի բացերը  
ռազմափորձ մը պիտի կատարէ, բոլորովին կասկածի  
մատնուած՝ իր դաշնակիցները հանդիսացող Ֆրանսայի եւ  
Ռուսիոյ դեսպաններուն հետ Օսմանեան կառավարութեան  
նոր բողոքագիր մը ներկայացուցած էր:

Կը զրուցուի, թէ Անգլիական դեսպան Սրբ Լոյս Մա-  
լէթ, նոյն իրիկունը մասնաւոր կերպով վարչապետ Սախտ  
Հալիմ փաշայի Նոր Գիւղի ծովեզերեայ սպարանքը այցե-  
լած է եւ մէջընդմիջ հետեւեալ խօսակցութիւնը տեղի ունե-  
ցած է այդ առթիւ:

Անգլ. դեսպալանը .— Նորին Վսեմութիւն, կը տեսնեմ,

որ Մեծն Բրիտանիոյ եւ իր դաշնակիցներուն հանդէպ թըշնամական դիրք մը բռնել սկսաք. ես անձնապէս ցաւ կը պզամ. Մեծն Բրիտանիան Օսմանեան կառավարութիւնը քանիցս քայքայման վտանգներէն փրկած էր. կը կարծեմ որ այսօր ալ Օսմանեան կառավարութեան շահը կը պահանջէ, որ Մեծն Բրիտանիան չվշտացնէք:

Սաիտ Հալիմ Փաշա.— Նորին Վսեմութիւն, կը տեսնեմ, որ սխալ հասկացողութիւն մը կայ. վստահ եղէք, որ մեր կառավարութիւնը Մեծն Բրիտանիոյ բարեկամն է եւ փափաք ունի այդպէս ալ մնալու. միայն թէ, այսօր Ձեր դաշնակիցներէն Ռուսիոյ դէմ պաշտպանողական միջոցառումներու դիմելու պարտաւոր ենք. պաշտօնապէս կը յայտարարեմ, որ Օսմանեան կառավարութիւնը միայն խաղաղութիւն կը ցանկայ:

Անգլ. Դեսպան.— Ես ալ այնպէս կը կարծեմ, սակայն կը զարմանամ, թէ Գերմանիոյ Պոլսոյ նաւահանգիստը դրկած երկու գրահաւորներու կապակցութեամբ մեր պաշտօնական պահանջքին ինչո՞ւ զոհացում չտրուեցաւ:

Սաիտ Հալիմ Փաշա.— Ասոր մէջ ալ թիրիմացութիւն կայ. հոս Գերմանական գրահաւոր գոյութիւն չունի. Օսմանեան կառավարութեան Գերմանիայէն պնտ նաւերը կան:

Անգլ. Դեսպանը (քմծ իծաղով).— Փոխարժէքը կանխիկ վճարուած նաւերը, չէ՞... Նորին Վսեմութիւն, Անգլիական կառավարութիւնը եւ իր դաշնակիցները սարքուած այս խաղերուն չեն կրնար հաւատք բնծայել. անպայման պէտք է որ կամ նաւերը յանձնուին եւ կամ ապագինուին, Անգլիոյ եւ իր դաշնակիցներուն այս պահանջքը միջազգային օրէնքներու վրայ հիմնուած է. եւ եթէ Օսմանեան կառավարութիւնը Գերմանիոյ եւ իր գլխակիցներու կողմը հակելով անոնցմէ օգուտ մը կը սպասէ, ըսելիք չունինք. միայն բարեկամարար կը յանձնարարեմ Ձեզի, սը՝ Ղղոջ բլլաք:

Սաիտ Հալիմ Փաշա.— Կը կրկնեմ, Նորին Վսեմութիւն, որ կառավարութիւնս Անգլիոյ եւ իր դաշնակիցներուն, հաճոյ եւ բարեկամ բլլալ կ'ուզէ. միայն թէ մինչեւ պատերազմի վերջաւորութիւնը պիտուած բայց չէ գործի գիրքին մէջ մնայ կը փափաքի:

Անգլ. Դեսպանը.— Անգլիա եւ իր դաշնակիցները Ձեր այս խորհրդածութիւնը կը պնտաստեն եւ ի հարկին կրնան Ձեզի նիւթապէս աւ բարոյապէս օջակցել: Ձեր այս շարժումը տեղին է, միայն թէ նեղուցներու ազատ անցքը

չվտանգուի. երկիրը կը հարստանայ եւ ղեկավար շրջանակներուն հեղինակութիւնը կը զօրանայ, եւ Ձեր պետութեան հողային ամբողջականութիւնը կը պաշտպանուի. եւ եթէ կը փափաքիք, այս մասին հնարաւոր է մեզի հետ բանակցութեան դուռ մը բանալ:

Սախտ Հալիմ Փաշա.— Մեր նպատակը այդ է:

Անգլ. Դեսպանը.— Ուրեմն կրնա՞ք զիս լուսարանել, թէ Գերմանական նաւերը ե՞րբ պիտի ապագինուին եւ թէ Մարմարայի մէջ կատարուելիք ծովային ռազմափորձերուն ո՞վ պիտի հրամայէ:

Սախտ Հալիմ Փաշա.— Խնդրեմ Նորին Վսեմութիւն, կը կարծեմ որ ապագինուելիք օտար նաւերու գոյութենէն տեղեկութիւն չունենալս յայտնած էի. մեր նաւահանգիստին մէջ գտնուած ռազմանաւերը մերն են, իսկ կազմակերպուած ռազմափորձն ալ միայն մեր ռազմանաւերուն ուժը եւ մեր ծովայիններուն կարողութիւնը փորձելու համար է եւ կը կարծեմ որ ասիկա ներքին հարց մըն է:

Անգլ. Դեսպանը (քմծիծաղով).— Ուրեմն ըսել կ'ուզէք, թէ «Կոպէն» եւ «Պրեսլաւ» զրահաւորներուն եւ անոր գերման զինուորական կազմին Գերմանիոյ հաշտոյն թուրք ջուրերու մէջ ազատ շարժումը ներքին խնդիր մըն է, եւ մենք իրաւունք չունի՞նք այդ մասին հարցում ուղղելու:

Սախտ Հալիմ Փաշա.— Խնդրեմ, Նորին Վսեմութիւն, սխալ կը մեկնէք: Մենք Գերմանիոյ հետ գործ չունինք, մենք զինուած չէզոքութեան դիրքին մէջ մնալ կ'ուզենք: «Նավուզ», «Միտիլի» եւ այլ պատերազմական նաւերը մեր կառավարութեան կը պատկանին եւ անոնց սպայակոյտը եւ զինուորական կազմը Օսմանեան բանակին մաս կը կազմեն:

Անգլ. Դեսպանը (ոտքի ելլելով).— Հասկցուեցաւ. վերջին անգամ ըլլալով անկեղծօրէն կը յանձնարարեմ, որ խոհեմ ըլլաք եւ զգոյշ, Գերմանիոյ այս երկու նաւերուն մի՛ վստահիք:

Սախտ Հալիմ Փաշա (նոյնպէս ոտքի ելլելով).— Նորին Վսեմութիւն, պատիւովս Ձեզ կը վստահեցնեմ, թէ քանի այս աթոռին վրայ մնամ, Օսմանեան կառավարութիւնը իր չէզոք դիրքէն դուրս պիտի չգայ:

Անգլ. Դեսպանը.— Ձեր խօսքին եւ պատիւին վստահութիւն ունիմ, ուրեմն ներեցէք որ անկեղծօրէն եւ բարեկամարար ձեռքերնիդ սեղմեմ:

Սախտ Հալիմ Փաշա.— Նոյն անկեղծութեամբ ձեռքերնիդ սեղմելու պատիւը ունիմ:

\* \* \*

Ելեմտական նախարար Ճաւիտ, պետական գանձին անձկութիւնը պատճառարանելով, Գերմանիոյ դեսպանին փափաքներու իրագործման, Գերմանիոյ հաշւոյն պատերազմի դաշտը իջնելու համար դաշնագրութեան շուտափոյթ ստորագրութեան գաղտագողի աշխատանք կը թափէր: Ներքին Գործոց նախարար Թալաթ եւ Պատերազմական նախարար Էնվեր՝ ասոր համամիտ էին: Ծովային նախարար Ճէմալ՝ խնդրոյն առնելիք ընթացքը նկատի ունենալով ցարդ իր կարծիքը չէր յայտնած: Վարչապետ Սաիտ Հալիմ Փաշա զինեալ չէզոքութիւն պահել կ'ուզէր, եւ այս կէտին վրայ կը պնդէր. եւ քանի օրերը անցնէին, Գերման դեսպանը կը մտահոգուէր, որովհետեւ Գերման սպայակոյտը նեղուցները իր ձեռքին մէջ ունենալ կ'ուզէր: Եթէ նեղուցները Համաձայնական ուժերու կողմէ բացուէին, թէ՛ Ռուսիոյ անմիջապէս հարկ եղած ռազմամթերքը հասցնել կարելի պիտի ըլլար եւ թէ՛ Պալքանեան տէրութիւնները ասոնց պիտի ենթարկուէին. Ռումանիա, Պուլկարիա, եւ Սերպիա միասնաբար Աւստրո-Հունգարիոյ վրայ պիտի քայէին եւ զայն պիտի կրնային տապալել: Ահա այս մտահոգութեամբ, «Կոպէն» եւ «Պրեսլա»ի Պոլիս մուտքի վաղորդայնին, Գերման կառավարութիւնը իր Պոլսոյ դեսպանին խիստ հրահանգներ կու տար, ամէն գնով աշխատելու եւ համոզելու Օսմանեան կառավարութիւնը որ Գերմանիոյ հաշւոյն պատերազմի դաշտ նետուի: (1)

Գերման դեսպանը Վանկէնհայմ, որչափ ալ յաջողած էր Ճաւիտը, Թալաթը եւ մասնաւորաբար տակաւին երիտասարդ Էնվէրը համոզել, սակայն տակաւին Սաիտ Հալիմ փաշայի գլխաւորութեամբ ընդդիմադիրներ կային:

Գերման դեսպանը ամէն տեսակի զոհողութեան կը դիմէր, եւ երբ առիթը ներկայացաւ, (մանաւանդ որ երբ Ծովային նախարար Ճէմալ փաշա Ծրանսայէն յուսարեկ վերադարձաւ), Էնվէրը զրդեց եւ մասնաւոր տեսակցութիւն մը ունեցաւ հետը: Ահա այդ խօսակցութիւնը.—

(1) Ծովակալ Լորայ, իր ընդհ պատերազմի ընթացքին «Թրքական ջուրերու մէջ պատերազմ մը» անուն գրքոյկին մէջ կ'ըսէ

— Գերմանիայէն եկած գանազան հրահանգներու մէջ փափաք կը յայտնուէր, որ Թուրքիա պատերազմի դաշտ իջնէ, ի շարս այլոց Գերման Սպայակոյտի պետը Տ Սեպտեմբերին ընդհ բանակատեղիի սպայակոյտի պետէն հետեւեալ հեռագիրը կը ստանար

«Նեղուցները ամբացուելէն յետոյ փափաքելի է որ Թուրքիա պատերազմի դաշտ իջնէ»

Վանկէնհայմ.— Նորին Վսեմութիւն, Պալքանեան պատերազմին, Ձեր պատերազմական միջոցները փճացած եւ Ձեր ուժերը եւ դրամը սպառած ըլլալով հանդերձ, մենք կ'ուզենք Ձեզ մեր զինակցութեան մէջ առնել. Սեւ Շովու Ռուս նաւատորմիդը մէկ յարձակումով իսկ փճացնելու կարող վերջին ձեւով շինուած մեր երկու զրահաւորները, Անգլ. եւ Ճրանսական տորմիդներու մէջէն անցնելով, մեր ամենաճարպիկ ծովային սպաներով Ձեզի կը յանձնենք. եւ աւելին՝ կը խոստանանք պէտք եղածին չափ դրամ եւ ռազմամթերքը տալ եւ ի հարկին Գերման զինուորական ուժալ տրամադրել, եւ տակաւին Ձեզ դժգոհ կը տեսնենք. պարոններ, չեմ հասկնար, թէ տակաւին ի՞նչ կ'ուզէք եւ ի՞նչ կ'ակնկալէք. ինչո՞ւ մինչեւ ոտքերնիդ եկող այս բարիքները զնահատանքով չէք կրնար ընդունիլ:

Կը լսեմ, թէ Ձեզմէ ոմանք Պուլկարիայէն վախ ունին. այս վախը անտեղի է. Ձեզ կը վստահացնեմ, թէ Պուլկարիոյ հետ մեր զինակցութիւնը ստորագրուելու վրայ է. Պուլկարիոյ հետ զինակցութիւնը Ձեզի համար է: Պերլին-Պոլիս գիծը ապահովել, նեղուցները զինելով Ռուսիան արտաքին օժանդակութիւններէ զրկել եւ Ձեզի հետ միացեալ ուժերով զայն ճզմել: Կովկասը Ձեզի տալով, Ձեր առջեւ թուրանի ճամբան բանալ կ'ուզենք, թուրքիոյ ամբողջականութեան արգելք հանդիսացող տարրերը պիտի փճացնէք եւ Պարսկաստանն ալ պիտի գրաւէք, վերջապէս Պալքանեան պատերազմին նահանջի արատը պատուով եւ յաղթանակով պիտի սրբէք, միջնորդի հանգամանքովս կը խորհիմ եւ Ձեր վարանումին պատճառ մը չեմ կրնար գըտնել. եթէ ոչ Անգլիացիներէ խաբուի՞լ կ'ուզէք. արդարեւ, Վարչապետութեան աթուրը գրաւող Սաիտ Հալիմ փաշա Եգիպտացի մը ըլլալով՝ կրնայ Անգլիացիներուն հալածանքէն սարսափած ըլլալ, կրնայ իր Եգիպտոսի մէջ ունեցած կալուածներուն եւ շահերուն մասին խորհիլ: Իրականութեան մէջ այս անձին Եգիպտոսի հետ ունեցած կապը բնականաբար աւելի ամուր է քան Ձեզի հետ. եւ զինուորականութենէ բոլորովին անտեղեակ, դուք ալ կ'ըմբռնէք որ անոր վարչական կարողութիւնն ալ սահմանափակ է. հետեւաբար անոր կարծիքը կեղծ է, շիտակ չի՛ կրնար ըլլալ. բայց դո՛ւք Նորին Վսեմութիւն, հռչակաւոր էնվէ՛ր, վարժ զօրավա՛ր, քաջ զինուո՛ր, եւ Օսմանեան Սահմանադրութեան հիմնադրութեան հիմնապէր, դո՛ւք, որ երկար ժամանակ Գերմանիա բնակած, Գերման զինուորական ուժը մօտէն քննած եւ զայն ուրիշ տէրութիւններու

զինուորական ուժին հետ բաղդատած ու կշռած կարող հրամանատար մըն էք, Ձեր տակաւին սատամսող ընկերները յուսաբանելու եւ զանոնք համողելու պարտականութիւնը կարծեմ ամենէն ստաջ Ձեզի կ'իյնայ: Երէկ, կառավարութենէս հետագիր մը ստացայ, որով զինակցութեան շուտափոյթ կնքումը կը հրահանուէր: Եթէ շարթ մըն ալ յետաձգուի (մեր միջեւ կը խօսիմ), սոյն զինակցութեան ընծայելիք բոլոր բարիքները պիտի անհետանան, (ոտքի ելլելով), նոյնպէս պաշտօն ունիմ Ձեր վսեմութեան հաղորդելու նորին կայսերական բարձրութեան միայն Ձեզի ուղղեալ սլոյնը:

Էնվէր. — Նորին Վեհափառութեան շնորհքին համար խորին շնորհակալութիւններս յայտնելէ ետք, Ձեր վսեմութեան բոլոր խօսքերուն իրատունք կու տամ, Գերման մեծ կառավարութեան ցոյց ստած բարիքները դնահատողներէն եմ: Վստահ եղէք, Նորին Վսեմութիւն, Գերմանիոյ հետ պատերազմի շարքին վրայ գտնուիլը ինծի համար մեծ պատիւ մըն է. ամէն պարագայի տակ ընկերներս համողելու եւ Նորին Կայսերական Բարձրութեան ինծի հանդէպ ունեցած վստահութիւնը արժեցնելու համար ամբողջ ուժովս պիտի աշխատիմ, միայն Նորին Վսեմութիւն, դրամական խնդիրն ալ պէտք է լուծել. մեր նիւթական վիճակը այս օրերս շատ խեղճ է, գիտէք որ, մեր ընդդիմադիրներուն տեղի տուած Պայքանեան պատերազմէն պարտուած դուրս եկանք. փափաքելի է որոշ կերպով դիտնալ, թէ մեզի ե՞րբ եւ որչա՞մ կանխավճար պիտի տրուի: Եթէ այս մասին կրնաք զիս յուսաբանել, խնդրոյն յուծման եւ վերջնական կարգադրութեան համար զիս քաջայերած ըլլալով, ընդհ. Կեդրոն զրկած կ'ըլլաք:

Վանկէնհայմ (քիչ մը խորհելէ ետք). — Կ'աշխատիմ որ երբոր ուզէք, Ձեզի 10 միլիոնի հնչուն օսկի կանխավճար տրուի:

Էնվէր. — Շատ քիչ է եւ Ձեր խօսքերն ալ որոշ չեն. կ'աշխատիմ որ տրուի. ես զինուոր եմ, որոշ եւ մէկին խօսք կ'ուզեմ, որ կարենամ ընդհ. Կեդրոնին մէջ կորովի կերպով պաշտպանելով խնդիրը լուծել:

Վանկէնհայմ (ժպտելով). — Կը տեսնեմ որ ինչպէս զինուորականութեան, նոյնպէս դիւանադիտութեան մէջ ալ ճարպիկ էք. տրուելիք դրամը առաջին կանխավճարն է եւ քիչ չէ. այնուհետեւ զգացուած սէտքին համաձայն վճարումը պիտի շարունակուի. ստացած մասնաւոր տեղեկու-

Թեանս համաձայն, կառավարութեանս Ձեզի բանալիք վարկը քանի մը հարիւր միլիոն է:

Էնվեր.— Այս տասը միլիոնի կանխավճարը կրնա՞ք վաղը մեզի յանձնել:

Վանկէնհայմ (քիչ մը խորհելէ վերջ).— Կը հասկընամ. կ'ուզէք որ խնդիրը այսօր իսկ լուծում գտնէ:

Էնվեր.— Ճիշդ է:

Վանկէնհայմ.— Այդ պարագային, երբ ուղղակի Ձեր վսեմութեան կողմէ պահանջուի, նոյնիսկ ոչ գրաւոր եւ հեռաձայնով. բոլոր պատասխանատուութիւնը ստանձնելով նոյն ժամուն Ձեր կառավարութեան 10 միլիոն ոսկի վճարել պիտի տամ:

Էնվեր.— Լաւ չկրցայ ըմբռնել:

Վանկէնհայմ (ժպտելով).— Նորին կայսերական բարձրութեան կատարեալ վստահութիւնը վայելող Ձեր վսեմութեան հանդէպ կատարեալ վստահութիւն ունենալով, դաշնագրի փոխանակութեան ձեւակերպութիւններուն առանց սպասելու եւ միայն Ձեր վսեմութեան խօսքին վրստահելով սոյն դրամը Ձեր կառավարութեան անուան անձնապէս վճարել տալ կը խոստանամ, հերիք է որ որոշէք, թէ կ'ընդունիք:

Էնվեր.— Կրնաք վստահ ըլլալ, թէ Ձեր վստահութիւնը չարաչար պիտի չգործածեմ:

Վանկէնհայմ.— Այդ մասին երբեք կասկած չունիմ:

Էնվեր (ոտքի ելլելով).— Այդ պարագային ինձի ներեցէք:

Վանկէնհայմ.— Ցտեսութիւն նորին վսեմութիւն:

\* \* \*

Էնվեր.— Գերման դեսպան Վանկէնհայմէն բաժնուէլէն յետոյ, ուղղակի ընդհանուր կեդրոն եկած եւ անմիջապէս Իթթիհատի պարագլուխները եւ վարչապետ Սախա Հալիմ փաշան կեդրոն հրաւիրած եւ պատերազմական նախարարի հանգամանքով պահանջած էր, որ Գերմանիոյ հետ զինակցութիւն կնքելու համար անմիջապէս որոշում արուի:

Խնդիրը կարեւոր էր. պետութեան կենաց եւ մահուան կը վերաբերէր. գումարուած գաղտնի նիստին Թալաթ նախագահած էր:

Վիճարանութիւնը բուռն եւ կրակոտ կ'ըլլայ: Առաջին խօսքը Էնվերին կը արուի: Ան՝ կացութիւնը պարզելով կ'ըսէ:



Էնվէր.— Ընկերներ, պատերազմական կացութիւնը փափուկ է: Եւրոպական տէրութիւնները երկու կողմերու բաժնուած, իրարու հետ պատերազմի բռնուած եւ յաղթանակը շահելիք կողմը վճռած է պարտուողը փճացնել: Կողմերէն մին Գերմանիան, իսկ միւսը՝ Անգլիան կը պեկավարէ: Միւս տէրութիւնները պարտաւոր են կողմերէն մէկուն կամ միւսին յարիլ. նոյնիսկ հաստատ տեղեկութիւն ունիմ, թէ մեր դրացի Պուլկարիան՝ Գերմաններու հետ զինակցելու վրայ է. իսկ մենք տակաւին կը վարանինք եւ մեր բռնելիք ուղղութիւնը դեռ չկրցանք վճռել: Եթէ Պուլկարիա մեզմէ առաջ Գերմանիոյ հետ զինակցութիւն կնքէ, կը վախնամ որ ատիկա ի վնաս մեզի բլլայ: Ինչ կը վերաբերի Անգլիոյ եւ իր դաշնակիցներուն, անոնց հետ հասկացողութեան գալու հնարաւորութիւն չէ մնացած, որովհետեւ այս կողմին յարած է մեր դարաւոր թշնամին Ռուսիա եւ դաշնագրութեամբ՝ Պուլխար անոր խոստացուած եւ այս կը հաստատէ մեր արտաքին դործոց նախարարութեան պաշտօնական լրատուութիւնը. ուրեմն պէտք է մեր դիրքը ճշդ դենք եւ զգուշանանք Ռուսիոյ որս դառնայէ: Գերմանիա, առանց մեր կողմէ գիմում կատարուելուն, մեզի զինակցութեան համար ձեռք կ'երկարէ. պայմանները շատ մեղմ եւ շմերժուելու սաւիճան նպատատուր են: Հակառակ այս ամենուն, չարաթներէ ի վեր մեր բռնած դիրքը ի՞նչ է. ինչո՞ւ այս ստտիճան կասկածոտ կը դանուինք. ինչո՞ւ այս թանկագին ժամերը կը կորսնցնենք. տակաւին ի՞նչ բանի կը սպասենք: Պատերազմի ներկայ կացութիւնը վաղը կըրնայ փոխուիլ եւ Գերմանիա մեզի կրնայ պէտք շունենայ. ուրեմն գէթ խորհինք, թէ ի՞նչ բնէլ հարկ է Կը կրկնեմ, Անգլիական ճակատը մեզ Ռուսիոյ դո՛հած եւ մեր մայրաքաղաքը անոր նուիրած է. հետեւաբար կորելիութիւն չէ մնացած անոնց հետ հասկացողութեան գալու. բաւ ամանց կարծիքին, չէզոքի դիրքին մէջ չենք կրնար մնալ. մենք չենք կրնար մեր գոյութիւնը պաշտպանել. կացութիւննիս վատ է. Երեւակայութենէլ գուրս վատ. մեր բնոյզ իմաստիւններուն տեղի տուած Պալքանեան պատերազմէն պարտուած դուրս եկանք, Մակեդոնիան վրայ առինք. գանձին մէջ դրամ եւ մթերանոցներուն մէջ զինամթերք չէ մնացած. այս դառն իրականութիւնը ինչո՞ւ իրարմէ պահենք: Մենք զմեզ սույ ծախելու միճակին մէջ չենք Գերմանիոյ առաջարկները, որպէս մեծ բարիք, որպէս անակնկալ երախտիք բնագունելու պարտաւոր ենք. մեր սղղային յաճը այդ կը պահանջէ. վասնուելիք ամէն վայրկեան հայրենիքի գէմ

դաւաճանութիւն է. ահաւասիկ Գերմանները, Անգլիական եւ Ֆրանսական տորմիդներուն մէջէն ճողոպրելով մեզի այս երկու արժէքաւոր զրահաւորները ղրկեցին. զինուորական լման կազմով մեզի յանձնեցին: Ռուսիոյ Սեւ ծովու տորմիդը մէկ յարձակումով փճացնելու կարող այս երկու նաւերը քանի մեր ձեռքն են. Ռուսիոյ Սեւ ծովու կողմէն յարձակման կարելիութիւն չկայ. կը մնայ Միջերկրականի կողմը: Չանազ Գալէի նեղուցը առանձին մեր միջոցներով չենք կրնար պաշտպանել, մեր ծովեզերքի դիրքերը շատ տկար են. ասոնց ներկայ պահանջներու համաձայն ամրացնելու միջոցներէն զուրկ ենք, ուրիշ հզօր տէրութեան մը աջակցութեան կը կարօտինք: Մինչդեռ Գերմանները այս մարզն ալ կը ստանձնեն. ուրեմն ինչի՞ կը սպասենք, ի՞նչ կ'ուզենք. կը տեսնենք որ, Անգլիա, Ֆրանսա եւ ասոնց դաշնակիցները, իրենց բոլոր ուժը սպառելով հանդերձ չկրցան Գերման բանակները իրենց դիրքերէն թիզ մը իսկ խախտել. Գերման բանակը պողպատեայ ամրոց մըն է: Հետեւաբար Ռուսիա չի կրնար կարեւոր ուժով մը կովկասէն մեր վրայ յարձակիլ եւ պաշտպանողական դիրք բռնելու ստիպուած է: Որոչ է որ Անգլիա եւս պիտի չկրնայ Եգիպտոսը պաշտպանել. Գերմանիա համաձայն է որ Եգիպտոսը, կովկասը վերագրուենք եւ նոյնիսկ Պարսկաստանն ալ գրուենք, եւ կարելիութիւն ստեղծուած է որ այդ երկու կողմերը զինուորական պտոյտով մը մտնենք: Այս կերպով, տարակոյս չկայ, որ մենք պիտի կրնանք թուրանի ճամբան բանալ եւ թուրք միութիւնը ապահովել: Ընկերներ, կը խնդրեմ, հայրենիքի սիրոյն կ'աղերսեմ, այս պատեհութիւնը ձեռքէ չհանենք եւ այսօր իսկ Գերմանիոյ հետ զինակցութիւնը որոշենք, որպէսզի պատերազմական կարգադրութիւններու համար թանկագին վայրկեաններ կորսընցուցած չըլլանք:

Պէհաէտտին Շաֆիր.— Ընկեր էնվէրին յայտարարութիւնները կարեւոր են, կացութիւնը լաւ կերպով պարզեց, այս կը բաւէ. թուրքիոյ յաղթութեան ճամբան էնվէրին ցոյց տուածն է. Գերմանիոյ հետ քալել նախընտրելի է. այս ճամբան փրկութեան եւ թուրանի ճամբան է:

Տօֆթ. Նազըմ.— Ո՛վ թուրք, կը տեսնեմ որ բաղդիդ արեւը պիտի ծագի. թուրանի ճամբան բացուելով լոյսերը աչքերը պիտի շլացնեն (ոտքի ելլելով եւ բարձրաձայն)

«Ո՛վ մեծն Աստուած, ո՛վ սիրելի հայրենիք,  
«Սնդրենք, ըսէ մեզի, ո՞ւր է քու ուղին»,

Ան երգել սկսած էր: Ասոր վրայ Վարչապետը խօսք առնելով հետեւեալ կժու մտքերը յայտնած էր:

Սախտ Հալիմ փաշա.— Խնդրեմ, պարոններ, այս խնդիրը շատ փափուկ է, տէրութեան եւ հայրենիքին կենաց մահու խնդիրն է, պէտք է լաւ խորհիլ. զգոյշ եւ հեռատեսութեամբ շարժիլ, Գերման զինուորական ուժին արտաքին տեսքը թող մեր աչքերը չչլացնէ. կը կարծեմ որ անմիջապէս Գերմանիոյ գիրկը նետուիլ վտանգաւոր պիտի ըլլայ, երեւակայուած յաղթանակը ու շահը ձեռք բերել կասկածելի է, մեր դէմ ելլելիք թշնամիները հսկաներ են եւ չանտեսուելու աստիճան զօրաւոր. Մեծն Բրիտանիա, Տրանսա, Ռուսիա եւ իրենց դաշնակիցները:

Գարա Քէմալ.— (Սախտ Հալիմ փաշան ընդմիջելով) Քիբիրիկներ, Թանկօներ եւ Հիւսիսային Արջեր:

Սախտ Հալիմ փաշա (խօսքը շարունակելով).— Այո՛, բայց մեր աշխարհագրական դիրքը նկատի առնելով պիտի կրնա՞նք մեր երկիրը այս մեծ տէրութեանց քանդիչ միջոցներուն դէմ պաշտպանել. այս կէտի մասին խորհիլ է պէտք. Պալքանեան պատերազմին ցաւերը տակաւին չեն մոռցուած. ինչպէս ահագին Մակեդոնիան ձեռքէ հանեցինք՝ այս անգամ ալ Արարիան չկորսնցնենք: Ըստ անձնական համոզումիս եւ դեսպաններէն ստացած տեղեկութիւններուս՝ կ'ըսեմ, որ մեզի համար ամենէն ապահով ուղին զինեալ չէզոքութիւնն է:

Էնվէր (Չղայնոտ).— Փաշա՛, ի՞նչ կ'ըսէք, խենթեցա՞ք, զինեալ չէզոքութիւն պահել ինչպէ՞ս կարելի է, երբ Պոլիսը մեր դարաւոր թշնամիին՝ Ռուսիոյ խոստացուած է:

Սախտ Հալիմ Փաշա.— Ասիկա պարզ լուր մըն է. կրնայ իրականութիւն կամ սխալ ըլլալ. ես Անգլիական դեսպանը մեզի շատ համակիր կը տեսնեմ, եթէ կը փափաքիք անգամ մըն ալ անոր կարծիքը շօշափենք:

Թալաաթ.— Մեր արտաքին տեղեկութիւնը սխալ չի կրնար ըլլալ. ես կը տեսնեմ որ Սախտ Հալիմ Փաշան Անգլիական դեսպանի ազդեցութեան տակ է. չի խորհիր որ իր Անգլիական դեսպանին հետ տեսակցութենէն անմիջապէս յետոյ, թերթերը պիտի յայտարարեն, թէ երէկ վարչապետ Սախտ Հալիմ փաշան Անգլիական դեսպանին հետ մասնաւոր տեսակցութիւն մը ունեցած է. եւ այս լուրը կարգացող Գերման դեսպանը Պոլսէն Պերլին մեկնած է. ահա այն ժամանակ ամէն բան կ'անհետի:

Էնվէր (բարկացայտ).— Սախտ Հալիմ փաշային նե-

րելի է. որովհետեւ Եգիպտացի է. որովհետեւ Անգլիական հալածանքներէն սարսափած է, որովհետեւ...:

Սաիտ Հալիմ փաշա (էնվէրին խօսքը ընդմիջելով եւ հետզհետէ աւելի գրգռութեամբ).— Կը ներէք, կը յանձնարարեմ, որ Ձեր խօսքերուն ուշադրութիւն ընէք, լաւ պէտք է գիտնաք որ այս վայրկեանիս ես գործնականապէս Օսմանեան կայսրութեան վարչապետն եմ:

Էնվէր (բարձրաձայն խնդալով).— Ես ալ այսօր, այս վայրկեանիս, նուիրական Իթթիհատ եւ Թէրազզըի իշխանութեան գործնականապէս պատերազմական նախարարն եմ. ասկէ ի՞նչ կ'ելլէ: Բայց մեր միջեւ տարբերութիւն մը կայ. ան ալ քեզի պէս Եգիպտոսի մէջ կալուածատէր եւ այդ մտավախութեամբ Անգլիոյ ազդեցութեան տակ գրտնուելու ստիպուած չըլլալս է:

Սաիտ Հալիմ Փաշա (մեծ ցաւով).— Եթէ կ'ուզէք հիմա կը հրաժարիմ:

Թալաաթ.— Խնդրեմ ընկերներ, անօգուտ խօսքերը ձգենք եւ պաղարիւննիս պահենք, խնդրոյն կարեւորութիւնը եւ փափկութիւնը չի մոռնանք. հայրենիքը վտանգի տակ է. Ռուսական վտանգը մեր աչքին առջեւ մեր քեթին տակ է:

Ճաւիտ.— Չէի փափաքեր խօսիլ, որովհետեւ այս խնդիրը իմ ճիւղէս դուրս է. ես զինուոր չեմ. Սաիտ Հալիմ փաշային նման զինուորական գործերէն բան մը չեմ հասկնար. միայն թէ մենք Անգլիոյ եւ Ֆրանսայի շատ բան կը պարտինք, նոյնիսկ երախտապարտ ենք. այս տէրութիւնները Օսմանեան կայսրութիւնը յաճախ փրկած են Ռուսական ծաւալումէն, ասկէ դատ Ֆրանսայէն միլիոններով ոսկի առինք, անուշ անուշ կերանք: Եթէ Ռուսական վտանգը չըլլար, եթէ Անգլիա եւ Ֆրանսա Պոլիսը Ռուսիոյ խոստացած չըլլային, անտարակոյս ես ալ Սաիտ Հալիմ Փաշային պէս Անգլիան եւ Ֆրանսան կը նախընտրէի եւ «Գերմանիայէն Երես դարձնենք», պիտի ըսէի:

Սաիտ Հալիմ Փաշա.— Խնդրեմ պարոններ, անմիջապէս զիս մի՛ դատապարտէք, ես ոչ մէկուն ազդեցութեան տակ կը խօսիմ. ես միայն հայրենիքին, միայն տէրութեան բարձր շահը եւ փրկութիւնը խորհելով կը խօսիմ: Պալքանեան պատերազմին նման փորձանքի մը չհանդիպելու համար կը զգուշացնեմ. երանի գիտնայիք, թէ մեր դեսպանները ինչե՛ր կը գրեն. հաճեցէք կարգալ սա հեռագիրը, որ տակաւին ժամ մը առաջ ստացայ մեր Բարիզի դեսպան Րիֆաթ Փաշայէն:

Սախտ Հալիմ փաշա գրպանէն հեռագիրը հանելով՝  
 էնվէրին կ'երկարէ:

էնվէր սոյն հեռագիրը առնելով ակնարկ մը կը պը-  
 տրտցնէ եւ ապա հրապարակաւ կը կարդայ:

Ահաւասիկ հեռագրին ամբողջութիւնը.—

«Ձեռքերնիդ, ոտքերնիդ պագնեմ, պատերազմի մի՛  
 մասնակցիք. մասնաւորապէս ստուգուած է, որ Գերմանի-  
 ները, Մառնի քաղաքամարտէն յետոյ, բացարձակապէս  
 պիտի չյաջողին. իսլամութիւնը երկրորդ աղէտի մը մի՛  
 ենթարկէք»:

Թալաաթ.— Խեղճ ծերուկ. հին մտայնութենէն,  
 ձեռք ոտք համբուրելէ տակաւին չէ ձերբազատուած:

էնվէր (Չղայնոտ).— Այս հին գլուխներէն, այս զա-  
 ուամածներէն ե՞րբ պիտի ձերբազատուինք:

Հիֆմէթ.— Խնդրեմ, ընկերներ՛ր, չի Չղայնանանք եւ  
 խնդրին շուրջ լրջութեամբ խորհրդակցինք. վարչապետ  
 Սախտ Հալիմ փաշային խորհրդածութիւնը եւ մեր Փարի-  
 զի դեսպան Րիֆաթ փաշային հեռագիրը նկատի պէտք է  
 առնուի. համաձայնականներու դէմ մեր սահմաններուն  
 պաշտպանութիւնը դիւրին պիտի չըլլայ, մանաւանդ Մառ-  
 նի պարտութենէն ետք Գերմանիոյ կարելի չէ վստահիլ:  
 Անգլիոյ եւ Ֆրանսայի կարգ մը տնտեսական շահեր ցոյց  
 տալով ներկայ ընդհ. պատերազմի ընթացքին, զինեալ չէ-  
 զոքութիւն պահել կարելի չէ՞. մենք ցարդ Գերմանիայէն  
 ի՞նչ օգուտ տեսանք: Մեր սուրբ յեղափոխութեան նախօր-  
 եակին իսկ Աւստրիա Պոսնա Հերցեգովինը մեր ձեռքէն  
 չխլէ՞ց: Աւստրիա Գերմանիոյ ամենաանկեղծ զինակիցը  
 չէ՞ եւ ասոր դէմ Գերմանիա ի՞նչ ըրաւ: Անակնկալ յարձա-  
 կումով մը Ափրիկեան Թրիփոլին, Պէնկագին եւ մեր մի-  
 ջերկրականի կղզիները գրաւող Իտալիան Գերմանիոյ զի-  
 նակիցը չէ՞: Գերմանիոյ դեռ վերջերս հայկակ. բարեկար-  
 գութեան խնդրոյն միջամուխ ըլլալը կարելի՞ է մեզի հան-  
 դէպ բարեկամական նկատել: Անոր բարեկամութիւնը, մի-  
 այն Ռուս ազդեցութեան մինչեւ Պաղտատի գծին սահման-  
 ները ընդարձակուիլը արգիլելու մէջ կը կայանայ: Վտան-  
 գի պահուն մեզ պաշտպանելը անոր դիւանագիտական ծը-  
 րագրէն բոլորովին դուրս է: Անցեալները մեր պէտք ու-  
 նեցած դրամին համար Գերմանիոյ եղած դիմումին ստաց-  
 ուած պատասխանը մոռցա՞նք. մեզի չյայտնեցի՞ն, թէ մել  
 միակ փրկութեան ճամբան Ֆրանսացիներուն հետ հաշս  
 ապրիլը եւ անոր նիւթականէն օգտուիլն է: Ուրեմն, հար՛  
 է Անգլիոյ եւ Ֆրանսայի հետ հասկացողութեան դալ եւ ա-

նոնց ապաւինելով այս պատերազմի ընթացքին չէզոք դիրք բռնել:

Խալիլ.— Խնդրե՛մ, Հիքմէթ պէյ, սխալ մօտեցումով միտքերը չխանգարենք: Անգլիոյ եւ Ֆրանսայի հետ հաշտ ապրելու համար ինչե՛ր չըրինք... Որչափ բարեացակամութիւն եւ զոհողութիւն ցոյց տուինք Պասրայի ծոցին մէջ: Արաբիոյ թերակղզիին հարաւային կողմը Թրքօ-Անգլիական ազդեցութեան շրջանակներ հաստատելով, Ատէնի շըրջակայքը եօթը գաւառակներու հարցն ալ Անգլիան գոհ ձգելու ձեւով լուծել յանձն առինք: Պաղտատի գծէն մինչեւ Պասրա երկարաձգումի, Մուրատ եւ Տիգրիս գիծերուն վրայ նաւարկութեան հարցին մէջ ալ Անգլիական պահանջները նկատի առինք: Էնձէզիբէի մէջ քարիւղի աղբիւրներ փնտռելու, Այտընի գծին երկարաձգումով կարգ մը ճիւղերու յաւելման, Տրապիզոնի եւ Սամսոնի նաւահանգիստներուն շինութեան մենաշնորհները Անգլիական ընկերութիւններու տուինք. անոնց նման շատ մը զոհողութիւններ բնելով հանդերձ, տակաւին մէկ երկու ամիս առաջ երբ մեր հայկական նահանգներու բարեկարգութեան վարչութիւնը Անգլիացի պաշտօնեաներու յանձնել առաջարկեցինք, Ռուսիոյ կողմէն ընդդիմութեան հանդիպելով, Անգլիա մերժեց: Անգլիական քաղաքականութեան մեր նուիրական կուսակցութիւն իթիհատ եւ Թերազգըի իշխանութեան խիստ կերպով դէմ ըլլալուն, ասոնց հետ հասկացողութեան պալը անհնար է:

Թալաաթ.— Ներքին գործոց վարչութեան կազմակերպութեան եւ պաշտօնեաներու բարեկարգման համար ալ, Ներքին գործոց Նախարարութեան մօտ Անգլիացի ընդհանուր քննիչ մը եւ քանի մը Անգլիացի պաշտօնեաներ նշանակելով. նոյնպէս մեր մաքսատուներուն բարեկարգումն ալ Սըր Գրուֆորդ անուն Անգլիացիի մը չյանձնեցի՞նք եւ որոշում չառի՞նք որ տակաւին կարգ մը Անգլիացի մաքսային քննիչներ ալ հրաւիրենք:

Ճալիտ.— Մեր ելեւմտական գործերու բարեկարգման համար նախապէս նշանակուած ելեւմտական բարեկարգիչ յանձնախումբին աւելի լայն իրաւասութիւններ չտուի՞նք... այնպիսի իրաւասութիւն մը, որ մեր ելեւմտական ոեւէ գործառնութիւնը, առանց նախապէս այս յանձնախումբին քննութենէն անցնելու, պիտի չկրնայինք Երեսփոխանական ժողովին ներկայացնել: Մեր ելեւմտական պաշտօնեաները տեւական հսկողութեան տակ պահելու եւ այսպէսով զանոնք կարգապահութեան եւ պարտաճա-

նաչութեան վարժեցնելու համար ելեմտական պաշտօնէից ընդհ. քննիչութիւնը Պր. Ժիւլիին չյանձնեցի՞նք: Մենք Անգլիոյ եւ Ֆրանսայի բարեկամութիւն ինչ գնով որ ալ ըլլայ շահելու շատ աշխատեցանք, սակայն ի վերջոյ հասկըցանք, որ այդ անկարելի է:

Թալաաթ.— Մեր ոստիկան-զինուորներու բարեկարգումը Ջորավար Պոմէն անուն Ֆրանսացիին չյանձնեցի՞նք եւ այս զօրավարին իրաւասութիւնները աւելի ընդլայնելով մինչեւ այն ժամանակ մեր քաղաքէն դուրս ձգուած Լիբանանի ոստիկան-զինուորներու բարեկարգութիւնն ալ Ֆրանսան գոհ ձգելու դիտումով, անոր չփոխանցեցի՞նք:

Օսմանեան պետութեան ճամբաներու շինութեան գործն ալ Ֆրանսական ընկերութեան մը չտուի՞նք:

Խալիլ.— Անգլիական դեսպանը Սըր Լոյտ Մալէթ թէեւ բարի մարդ մըն է, թերեւս մեզի հանդէպ ալ բարեացակամ. սակայն Անգլիա Թուրքերուն, մանաւանդ մեր կուսակցութեան հանդէպ ունեցած չար դիտաւորութիւնը չի կրնար փարատել եւ վերջին անգամ Ռուսիոյ հետ կրնաքած դաշնագրութեամբ Անգլիական դարաւոր քաղաքականութիւնը չի՛ կրնար փոփոխութեան ենթարկուիլ. Ֆրանսացիներն ալ նոյն ուղղութեամբ կ'ընթանան, նոյնիսկ վերջին փորձ մը ըրինք, անցեալները իբր Ֆրանսայի բարեկամ ճանչցուած ընկեր ձէմալ փաշան մինչեւ Ֆրանսա դրկեցինք: Ի՞նչ արդիւնք ունեցաւ դիտէ՞ք... Եթէ կը հաճի, այս մասին ինքը թող բացատրութիւն տայ:

Ձէմալ.— Մեծ յոյսով Ֆրանսա մեկնած էի՝ մեծ յուսախարութեամբ վերադարձայ. այսօր, այս վայրկեանիս մեզի համար Գերման առաջարկը ընդունելէ ուրիշ ճար չէ մնացած:

Հիֆմէթ (խօսքը ձէմալ փաշային ուղղելով).— Նորին Վսեմութիւն, Ձեր այս անգամուան Փարիզ ուղեւորութիւնը Ֆրանսայի հետ հասկացողութեան գալու համար էր, այնպէս չէ՞:

Ձէմալ.— Այո՛, ընկե՛ր. Պոսնիայի մէջ Փրինչիփի պայթեցուցած զէնքին վերջ ի վերջոյ համաշխարհային պատերազմի պատճառ դառնալը կռահած (էնվէրին դառնալով) եւ մեր կարգ մը ընկերներուն կողմնակցութեան հակառակ, Երեակ Զինակցութենէն՝ Երեակ համաձայնութիւնը նախընտրած էի, ասոր մեզի աւելի նպատաւոր ըլլալուն համոզում գոյացուցած էի. կը կարծէի որ Ֆրանսական կառավարութիւնը եւ հանրային կարծիքն ալ շահիլ կարելի պիտի ըլլար: Ահաւասիկ այս համոզման

վրայ, կառավարութեան հրամանով բանակցութեան առիթ մը ստեղծելու համար գացած էի. ցաւով կը յայտնեմ, որ արտաքին գործոց նախարար Պր. Վիւվիանի ինծի հետ ուղղակի տեսակցիլ հարկ չտեսաւ եւ այդ պաշտօնը յանձնեց դիւանապետ Պր. Մարտորիի եւ ես այս ձեւը բարեկամեցողութեան վերագրած էի. խնդիրը լաւ կերպով ձեզի կարենալ հասկցնելու համար Պր. Մարտորիի հետ մեր տեսակցութիւնը նկարագրեմ: Երբ տեսայ որ Պր. Մարտորի վերապահութեամբ կ'արտայայտուի, բացէ ի բաց իրեն ըսի — Բարեկամս, փոխանակ խօսքը ասդին անդին դարձնելու, ուղղակի նպատակին դիմենք. գիտէք որ Օսմանեան կայսրութիւնը յաճախակի յարձակումներու ենթարկուելով տկարացած եւ վերջին Պալքանեան պատերազմին պարտուելով, Եւրոպական հողամասը գրեթէ ամբողջութեամբ եւ կղզիներէն մեծ մասը կորսնցուցած է: Այժմ այս տկար եւ անկարող պետութիւնը զօրացնելու, անոր նոր կեանք տալու համար, մեր բոլոր գոյութեամբը կ'աշխատինք. սակայն պարագաներ կան, որ մեր ուժերը կը ջլատեն, մեր այս օրուան ամենէն կարեւոր պարտականութիւնը զանոնք բառնալն է:

Ադա Օդլու Ահմէտ (ժպտելով). — Որչա՛փ քաղցր, որչա՛փ անկեղծ եւ դիւանագիտական նախարան...:

Ճէմալ (խօսքը շարունակելով). — Պր. Մարտորի, ըսի, դուք Յոյներուն հանդէպ ունեցած Ձեր համակրութենէն եւ ապագայ շահերու տեսանկիւնէն կը կարծէք թէ, Յոյները պաշտպանել դիւանագիտութեան պահանջքն է, բայց երբ որ քարտեսը բանաք եւ քննէք, պիտի տեսնէք, որ մենք Ձեզի Յունաստանէն աւելի օգտակար պիտի ըլլանք: Կառավարութիւնս կ'ըսէ, որ Փրանսայի եւ Անգլիոյ դիւանագիտութեան նպատակն է կեդրոնական կայսրութիւնները պողպատեայ օղակի մը մէջ առնել, այս օղակը Հարաւ-Արեւելքի կողմէն ամբողջացուած է, վերջին մասին շամբողջանալուն պատճառը Թուրքիան եւ Պուլկարիան է: Եթէ Թուրքիա Երեակ Համաձայնութեան մէջ մտնէ, Պուլկարիա Պալքաններու մէջ պիտի մեկուսանայ եւ պիտի ստիպուի այս կողմը հակելու. ուրեմն, եթէ կը փափաքիք որ այս օղակը ամբողջանայ, Յունաստանի եւ մեր միջեւ եղած կղզիներու վէճը հարթելու միջոց մը գտէք եւ ի վերջոյ մեզ ալ Ձեր մէջ ընդունեցէք եւ Ռուսիոյ կողմէն մեր ակնկալած հարուածներուն դէմ պաշտպանելով՝ մեր յառաջդիմութիւնը ապահովեցէք. այսպէսով կարճ ժամանակի ընթացքին Արեւելքի մէջ զօրաւոր գինակից մը կ'ունենաք:



Աղա Օղլու Ահմէտ.— Զինուորականի մը վայել սըր-  
տարաց խօսք... :

Ճէմալ.— Առաջարկս բոլորովին անկեղծ էր. կ'առա-  
ջարկէի կղզիներու վէճը Յունաստանի հետ լուծելու միջոց  
մը գտնել եւ Թուրքիոյ հետ համաձայնելով Գերմանիոյ Ա-  
րեւելքի ճամբան բոլորովին փակել:

Աղա Օղլու Ահմէտ.— Այո՛, այո՛, Պր. Մարտորի Ի՞նչ  
պատասխանեց:

Ճէմալ.— Ի՞նչ պատասխանէ, քիչ մը խորհելէ ետք  
րսաւ, որ կղզիներու խնդրոյն լուծման համար Ի՞նչ միջոց  
կ'առաջարկէք:

Բացայայտօրէն ըսի, թէ օրինակի համար, սոյն կղզ-  
իներուն Իտալիայէն վերադարձուելիք քանի մը կղզ-  
իներն ալ աւելցնելով, հարկ է Օսմանեան գերիշխանու-  
թեան ներքեւ ինքնավարութիւն տալ, ամբողջ հասոյթը  
կղզիներուն յառաջդիմութեան յատկացնել, տեղական ժո-  
ղովուրդը զինուորական ծառայութենէ զերծ կացուցանել,  
եւայլն:

Պր. Մարտորի սոյն բացատրութեան վրայ րսաւ.—  
Փաշա, կղզիներու հարցին լուծման համար Ձեր առաջար-  
կը բանաւոր կը գտնեմ եւ կը կարծեմ որ այս պայմաններով  
կարելի պիտի ըլլայ վերջնական լուծման մը յանգիլ. կեղ-  
րոնական տէրութիւններու համար մեր ծրագրած երկաթէ  
օղակը շատ լաւ դուշակած էք, սակայն Ձեզի հետ դաշնակ-  
ցութիւն մը եւ կամ քաղաքական համաձայնութիւն մը  
կարենալ կնքելու համար, մեր դաշնակիցներուն համաձայ-  
նութիւնը հարկ է, եւ ասոր կարելիութիւնը կամ անկարե-  
լիութիւնը կասկածելի է. այսուհանդերձ Օսմանեան կա-  
ռավարութեան այս անդամուան առաջարկը շատ որոշ է եւ  
յստակ: Հանրապետութեան եւ Նախարարաց Խորհուրդին  
Նախագահներուն Փեթերսպոլը կայցելութեան ես ալ պիտի  
ընկերանամ: Ձեր խորհրդածութիւնները մեր դաշնակից-  
ներուն կը հաղորդեմ եւ միասնաբար տրուելիք որոշման  
վրայ մեր դեսպանին հարկ եղած հրահանգը կու տանք.  
դժբաղդաբար ներկայիս Ֆրանսական կառավարութիւնը  
անջատօրէն չի կրնար գործել:

Աղա Օղլու Ահմէտ.— Կտրուկ մերժողական մը:

Ճէմալ.— Այո՛, ասոր վրայ յուսարեկ Յուլիս 18-ին  
Փարիզէն Պոլիս վերադարձայ:

Խալիլ Պէյ.— Աշխարհի մէջ անուրանալի ճշմարտու-  
թիւն մըն է, որ Ռուսիա Օսմանեան կայսրութեան ոխերիմ  
թշնամին է, եւ Պոլսոյ տիրել է անոր գլխաւոր նպատակը

Ռուսիան այս դաղափարէն հեռացնել անկարելի է: Յարիզմը երբ Պերլինի դաշնագրութեամբ հասկցաւ, թէ Պոլսոյ պիտի չկրնայ տիրանալ, աչքերը Հնդկաստանի վրայ յառած էր, սակայն Անգլիական դիւանագիտութեան նըրքութիւններուն շնորհիւ, երբ տեսաւ որ այդ ճամբան իր առջեւ գոցուած է, դէպի հեռաւոր Արեւելք դարձաւ, մինչեւ Փորթ-Արթիւր երկարած թաթը շարունի կողմէ ջախջախուեցաւ: Արիւնլուայ նահանջեց եւ հիմա իր հին քաղաքականութեան վերադարձաւ: Խրիմի պատերազմին յաջորդող եւ Պերլինի վեհաժողովին ստեղծուած կացութիւնը այսօր բոլորովին փոխուած է: Եգիպտոսի վրայ իշխող Անգլիան՝ Պասրայի ծոցէն ներս տնտեսական նպատակներ սնուցանող Գերմանիա մը աւելի վնասակար կը գտնէ քան Պոլսոյ եւ ամբողջ Անատոլուի վրայ յաւակնութիւն ունեցող Ռուսիան, հետեւաբար Միջագետքի փոխարէն Պոլսը Ռուսիոյ յանձնելէ պիտի չվարանի, իսկ Ֆրանսան՝ Սուրիոյ մէջ իրեն արգելք չյարուցանելու պայմանաւ Թուրքիոյ բաժանման պիտի չհակառակի: Իր դաշնակիցներուն շահերուն եւ իր փափաքներուն նոյնութիւնը տեսնող Ռուսիոյ շահը կը պահանջէ, որ կարելի եղածին չափ աշխատի Թուրքիան մեկուսացնել: Ահա Պր. Մարտորիէն, լաւ եւս է ըսել, անոր միջոցաւ Արտաքին Նախարար Վիւլիանիէն առնուած մերժողական պատասխանին միակ սլատճառը:

Էնվէր.— Խնդրե՛մ, աւելի պարզ եւ հասկնալի կերպով ներկայացնեմ: Թուրքիոյ հանդէպ երկու պատերազմիկ կողմերու դիրքորոշումը ի՞նչ է: Դաշնակից պետութիւններէն Անգլիա կ'ուզէ Եգիպտոսը ամբողջութեամբ իր իշխանութեան տակ առնել, Միջագետքը անպայման, Պաղեստինը եթէ կարելի է ձեռք անցնել եւ ամբողջ Արաբական Թերակղզիին վրայ իր ազդեցութիւնը տարածել: Ֆրանսա տարիներէ ի վեր ծրագրած է անպայման Սուրիան գրաւել եւ ամենաշնչին առիթէն իսկ օգտուելով կ'ուզէ իր այս ծրագիրը իրագործել: Ռուսիա, հարկ չկայ փաստելու, Թուրքին թշնամին է եւ կ'ուզէ ամէն գնով Պոլսոյ տիրանալ: Այս տէրութիւններէն եւ ո՛չ մէկը այսօր մեզի կ'օգնէ: Գալով Երեւակ Զինակցութեան պետութիւններուն՝ Աւրստրո-Հունգարիա եւ Իտալիա Թուրքիայէն պահանջելիք բան մը չունին: Իրենց աւերը գործելէն ետք՝ հեռացան: Միայն թէ Իտալիան դաշնակիցներուն փափաքներուն դէմ կարգ մը յետին նպատակներ կրնայ ունենալ. օրինակի համար Անթալիոյ եւ Փիւնիկէի ծովեզերքները: Իսկ Գերմանիա՞ . . . ո՛վ ինչ ուզէ թող ըսէ. Թուրքիոյ զօրացումը

իափաքող տէրութիւն մըն է: Գերմանիոյ շահը մասնաւորապէս Թուրքիոյ զօրացումով կրնայ ապահովուիլ: Գերմանիա չի' կրնար Թուրքիան դաղթավայրի մը վերածել, անոր ո'չ աշխարհագրական դիրքը եւ ո'չ ալ միջոցները կը թոյլատրեն: Ուրե'մն, Գերմանիա, իր շուկան եղող Թուրքիոյ դաշնակիցներուն միջեւ բաժանման ամենամեծ հակառակորդն է: Ահաւասիկ այս երկու պատերազմիկ կողմերէն մին միայն գրաւման կը ձգտի, իսկ միւսը իր մասնաւոր շահերը նկատի ունենալով, բարի նպատակ կը սընուցանէ: Առաջինը մեր գինակցութիւնը կը մերժէ. երկրորդը՝ այսինքն Գերմանիա՝ իրաւունքի եւ պարտականութեան հաւասարութեամբ մեզի գինակցութիւն կ'առաջարկէ. այս գինակցութիւնը ինչպէ՞ս կրնանք մերժել:

Տոքթ. Նազրմ.— Ընկերներ, շատ թանկագին վայրկեաններ կը կորսնցնենք. կը խնդրեմ, թող վիճարանութիւնները վերջանան եւ քուէարկութեան դիմուի:

Թալաաթի ազդարարութեան վրայ վիճարանութեան վերջ կը տրուի. քուէները առնուելով կը դասաւորուին եւ Գերմանիոյ հետ առաջարկուած գինակցութեան պայմանները նոյնութեամբ ընդունելու եւ ստորագրելու համար մեծամասնութիւն կը գոյանայ: Գերմանիան յաղթանակը տարած էր իթթիհատի կեդրոնին մէջ:

\* \* \*

Ժողովը փակուած էր. կեդրոնին մէջ միայն Թալաաթ, Ճաւիտ, Էնվէր, Ճէմալ, Շիւքրի, Խալիլ եւ Սաիտ Հալիմ փաշա մնացած էին: Նախարարաց Խորհուրդը կազմող այս անձերը մասնաւոր խորհրդակցութեան մը սկսած էին: Անոնցմէ Ճաւիտ, կ'ըսէր:

Ճաւիտ.— Դիրքերնիս ճշդուեցաւ. կը մնայ դրամական խնդիրը: Ձեզ կը վստահեցնեմ, որ եթէ մինչեւ վաղը առտու Գերմանիայէն 2-3 միլիոն ոսկի կանխավճար մը չկարենանք գանձել, ո'չ միայն ամսաթոշակները պիտի չկրնամ վճարել, այլ եւ պատերազմական նախարարութեան հրամանին ալ սանթիմ մը իսկ տալու կարելիութիւն չունիմ:

Էնվէր.— Քանի որ գինակցութիւնը որոշուեցաւ, պէտք է անմիջապէս Գերման դեսպանէն դրամ ուզենք. ես վաղուան համար երկու հարիւր հազար ոսկիի ստիպողական պէտք ունիմ:

Սաիտ Հալիմ Փաշա.— Դաշնագրութեան փոխանակումէն առաջ դրամ չի' պահանջուիր, վաղուան համար եթէ այս օրուրնէ դրամ ուզենք, պետական գործերու մէջ

մեզի ասլիկարութիւն կը վերագրուի. մինչեւ գաշնագրութեան փոխանակումը, թող ձաւիա պէյ կարգադրութիւն մը ընէ :

Թալլաաթ.— Աստուած իմ Աստուած, ահա հին մասյնութիւն մըն ալ, կարգադրութիւն, կարգադրութիւն: Ի՞նչ է այս բառին «գործնական» նշանակութիւնը... զբամբի պէտք ունինք, ուրեմն ըլլալիք կարգադրութիւնը պէտք եղած դրամը ճարելն է :

Էնվէր.— Հիմա հեռաձայնով ուզենք :

Ճաւիտ.— Որմէ՞ :

Էնվէր.— Որմէ՞ պիտի ուզենք, Գերման գեսպան վանկէնհայմէն :

Սաիտ Հալիմ Փաշա.— Շատ անտեղի է :

Ճէմալ.— Լաւ միջոց մը գտայ, Լէման Ֆոն Սանտէրս փաշայի միջնորդութիւնը խնդրենք :

Ճէմալ (հեռաձայնի ընկալուչը առնելով).— Այ՛օ, այ՛օ...  
— . . .

— Առաջին բանակի հրամանատարութեան թիւը տրուէք :

— . . .

— Ո՞վ էք, սլարոն :

— . . .

— Հա՛, բարեւ, Լէման Սանտէրս փաշա, ես ծովային նախարար Ճէմալ, կ'աւետեմ Ձեզ, թէ մեր Գերման բարեկամներուն առաջարկած զինակցութիւնը ընդհանուր կեդրոնին կողմէ որոշուեցաւ ընդունիլ :

— . . .

— Այո՛, այո՛, այո՛, ընդունուեցաւ. խնդիրը վերջացաւ :

— Այո՛, առաջարկուած սլայմանները հոյնութեամբ ընդունուած են, հիմա ձեզմէ կարելոր խնդրանք մը ունինք. պետական գանձը իր վաղուան ստիպողական պէտքերը հոգալու համար Ձ միլիոն ոսկիի պէտք ունի. յանուն ընկերներու կը խնդրեմ, որ բարեւ ըլլաք միջնորդելու գեսպան վանկէնհայմի մօտ, որպէսզի առ հաշիւ այս դրամը անմիջապէս վճարէ :

— . . .

— Եթէ կարելի է, հիմա հեռաձայնով ղրմեցէք :

— . . .

— Շնորհակալ ենք. հոս Ձեր պատասխանին կը սպասենք :

Ճէմալը ընկալուչը տեղը դնելով եւ ընկերներուն դառնալով ըսաւ .

— Ահաւասիկ միջնորդել ընդունեց, արդիւնքը հիմա պիտի տեղեկացնէ :

Կէս ժամ վերջ զանգը կը հնչէր . Ճէմալ անմիջապէս ընկալուչը առնելով՝

— Ալօ՛, ալօ՛ . . .

— . . .

— Այո՛, ես ծովային նախարար Ճէմալն եմ :

— . . .

— Պարապ տեղ Ձեզի ճանճրոյթ պատճատեցինք, չընորհակալ ենք :

Ճէմալ ընկերներուն դառնալով՝

— Լէման Ծօն Սանտէրս փաշա դիմած եւ դեսպանէն պատասխան ստացած է, թէ զաշնագրութեան փոխանակումէն առաջ կարելի չէ :

Սախտ Հալիմ Փաշա (յաղթականօրէն) .— Ես ձեզի չըսի՞ :

Էնվէր (վայրկեանական զրգուրթեամբ) .— Ասանկ բան կ'ըլլա՞յ . խօսք ըսել՝ ստորագրութիւն ըսել է, թող փոխանակութեան ձեւակերպութիւնները կատարուին . իսկ քանի որ ճաւիտը վաղուան համար դրամի պէտք ունի՝ հիմա պէտք է տրուի :

Սախտ Հալիմ փաշա (բմթիծաղով) .— Էնվէր փաշա, այսօր Ձեզ շատ ջղային կը տեսնեմ :

Էնվէր (ջղայնանալով) .— Քանի որ դրամի պէտք ունինք եւ զինակցութիւնն ալ որոշուած է, ուրեմն դեսպանը մեր ուղած դրամը հիմա՛ պէտք է տայ :

Սախտ Հալիմ փաշա .— Ամէն բան օրէնքով : Պետական գործերու մէջ պէտք է օրէնքը յարգուի . դեսպանը եթէ այդ դրամը տալ ուզէ իսկ, հիմա չի կրնար :

Էնվէր փաշա .— Մեզի պետական գործերու դասախօսութի՞ւն կու տաք . . . մենք՝ յեղափոխականներս, այսչափ նուրբ ձեւակերպութիւններէ չենք ախորժիր . քանի որ դրամի պէտք ունինք, անմիջապէս պէտք է տրուի . կեցէ՛ք անգամ մըն ալ ես հեռաձայնով խօսիմ :

Սախտ Հալիմ փաշա .— Որո՞ւ հետ :

Էնվէր .— Աստուած իմ, Աստուա՛ծ, որո՞ւ հետ պիտի ըլլայ . դեսպան Վանկէնհայմի հետ :

Սախտ Հալիմ փաշա .— Խնդրեմ, շատ ամօթ բան կ'ըլլայ . մասնաւորապէս Լէման Ծօն Սանտէրս փաշա հիմա հեռաձայնով խօսեցաւ եւ մերժողական պատասխան ստացաւ . գէթ Ձեր անձնական պատիւը խորհեցէք :

Էնվէր. — Խնդրեմ, փաշա', խորհեցէք եւ աշխատէ՛ս խօսեցէք. աշխատէ՛ս շատ կը ճոտումարանէք. մենք զստամած դըլուխները չենք սիրեր...

Էնվէր տեղէն ելլելով հեռաձայնի ընկալուչը ձեռքը առած՝

— Ալօ', ալօ', Գերման զեապանին թիւր ատէք:

— . . .

— Ո՞վ էք:

— . . .

— Օ', նորին վսեմութիւն, դո՞ւք էք, եւ Ձեր բարեկամը՝ պատերազմական նախարար Էնվէրն եմ:

— . . .

— Քաւ լիցի, հրաման շունիմ: Ձեզի աւետիս կուտամ. խորհրդակցութեան նիւթ դարձած զինակցութեան ընդհանուր կեդրոնին կողմէ ընդունուած ըլլալը կը տեղեկացնեմ:

— . . .

— Այո', այո', եւ ոչ մէկ կէտ փոխել հարկ չէ տեսնուած: Թուրքիո Գերման կառավարութեան հանդէպ կատարեալ վստահութիւն ունի:

— . . .

— Բան մը չէ, մեր պարտականութիւնն է. Նորին Վսեմութիւն, փոքր խնդրանք մը ունիմ. իմացայ որ մեր ելեւմտական նախարարութիւնը իր վաղուան ստիպողական պէտքերը հոգալու համար 10 միլիոն ոսկիի պէտք ունի. զիս երախտապարտ պիտի ձգէք, եթէ առանց դաշնադրութեան փոխանակութեան սպասելու՝ կանխավճարին ի հաշիւ՝ իմ երաշխաւորութեամբ այս գումարը վաղը ելեւմտական նախարարութեան հաճիք վճարել:

— . . .

— Այո', այո', այո'. ամէն պարագայի տակ եթէ վաղը վճարուի լաւ կ'ըլլայ:

— . . .

— Շնորհակալ եմ, շնորհակալ եմ:

Էնվէր ընկալուչը տեղը դնելով՝ ընկերներուն կ'ըսէ.

— Ահաւասիկ ընդունեց. վաղը Տէօջ Օրիան դրամատունէն 10 միլիոն ոսկի պիտի կրնաք գանձել:

Ճաւիտ. — Կեցցե՛ս Էնվէր. բառին բուն նշանակութեամբ հերոս ես եղեր: Ես երկու միլիոնով պիտի գոհանայի, զուն տասը միլիոն փրցուցիր:

— Կը ներէք, սխալ մը գործեցի. վաղը կը սրբադրէք:

— Ո՞չ, ո՞չ, լաւ բրիք. լա՛ւ:

Չէմալ.— Երեսփոխանական ժողովին գումարման յետաձգուիլը որչափ լաւ եղաւ. կը շնորհաւորեմ Ձեզ թաւաթ: Եթէ ժողովը չյետաձգուէր, մեր այս խորհրդակցութիւնը այսչափ շուտ չէր կրնար վերջանալ: Այս տասը միլիոն ոսկին ալ այսպէս միանուագ չէր կրնար դանձուիլ. խնդիրը ժողովին ներկայացնելով անոր որոշումը ստանալ հարկ պիտի ըլլար:

Թալաաթ.— Նոյնիսկ խնդիրը գաղտնի ալ չէր կըրնար պահուիլ եւ դուրսը պիտի տարածայնուէր:

Էնվէր.— Ձինակցութեան առաջարկէն առաջ Գերմանները Երեսփոխանական ժողովին յետաձգումը պահանջելով՝ իրենց դիւանագիտական նրբութիւնը ցոյց տուին. այս զինակցութիւնը մեծ յաջողութիւն մըն է:

Ճաւիտ.— Տարակոյս չկայ, մանաւանդ այս տասը միլիոն ոսկիին ասանկ անմիջապէս վճարումը ցոյց կուտայ, թէ Գերմանները տնտեսապէս լաւ վիճակի մէջ են, եւ անոնց վարկը մեր մօտ աւելի կը բարձրանայ:

\* \* \*

Սախտ Հալիմ փաշա այս կատակերգութենէն անտեղեակ, շուարած մնացած էր. շատ կը ցաւէր որ Անգլիական դեսպանին տուած չէզոք մնալու պատուոյ խօսքը չէր կըրցած յարգել, միեւնոյն ժամանակ ենթարկուած այսչափ ծաղրանքի եւ արհամարհանքի փոխարէն չէր կըրցած պաշտօնէն հրաժարիլ:

Էնվէր, Թալաաթին գաղտնի համամտութիւնը անելով ընդհանուր կեդրոնէն ելած, ուղղակի Գերման դեսպան Վանկէնհայմին այցելած եւ հետեւեալ խօսակցութիւնը տեղի ունեցած էր:

Էնվէր.— Նորին վսեմութիւն, այսօր ինծի հանդէպ ցոյց տրուած վստահութեան համար շնորհակալութիւնս յայտնելու եկայ:

Վանկէնհայմ.— Ձեր արժեր. Ձեր վսեմութեան հանդէպ իմ վստահութիւնս շատ բնական է. Նորին Կայսերական Բարձրութեան բացարձակ վստահութիւնը վայելող զօրավար Էնվէրին հանդէպ Պոլսոյ դեսպանն ալ վստահութիւն ցոյց տալու կրնա՞յ վարանիլ. զինակցութեան հարցը ի նպաստ մեզի լուծելով, զիս պաշտօնակիցներուս մօտ վարկաբեկումէ փրկելնուդ համար շնորհակալութիւնս յայտնելու պարտաւորութիւնը ինծի կ'իյնայ. շնորհակալեմ զօրավար:

Էնվէր.— Իրաւի շատ համակրելի եւ քաղաքավար էք:

վանկէնհայմ. — Կարծեմ մայր ծովային սաղմափոր-  
ձերուն պիտի սկսիք:

Էնվէր. — Այո՛, ծովային նախարարը այլպէս բառ:

վանկէնհայմ. — Այս սաղմափորձերը Մարմարայէն  
վերջ Աւ ծովու մէջ ալ պիտի կրկնէք, չէ՞. շատ լաւ խոր-  
հեր էք: Այսպէսով Ձեր հրամանին ներքեւ Գերման ծովա-  
յին ուժին քաջութիւնն ու զօրութիւնը ճշգրտւած և անոնց  
պատերազմական արժէքը գնահատած կ'ըլլաք:

Էնվէր (չիտթած՝ գեսպանին նայելով). — Նորին վը-  
սեմութիւն, Աւ ծովու մէջ կատարուելիք սաղմափորձէն  
տեղեակ չեմ և կը կարծեմ որ ասանկ փորձ մը անմիջապէս  
Ռուսիոյ ընդդիմութեան կը հանդիպի և միջապէպի մը  
ծնունդ կու տայ:

վանկէնհայմ (սասանայական ժպտով մը). — Նո-  
րին վսեմութիւն, ասկէ վերջ Ռուսիոյ և նոյնիսկ Անգլիոյ  
և Ֆրանսայի ընդդիմութիւնները ի՞նչ արժէք կրնան ունե-  
նայ: Գերմանիա և Թուրքիա գինահիցած են: Այս օրուրնէ  
սկսեալ Ձեր բարեկամները և Ձեր թշնամիները մերն են և  
փոխադարձաբար: Երբ Գերմանիա Ռուսիոյ հետ պատե-  
րազմի մէջ է՝ Օսմանեան կառավարութիւնն ալ պատերազ-  
մի մէջ է. ուրեմն, թրքական տորմիզը, բառ թերթերու  
յարտարարութեան, Մարմարայի սաղմափորձերը վերջա-  
ցնելէ յետոյ (ժպտելով), նոր դնած Գերման զրահաւորնե-  
րուն պատերազմական արժէքը և թրքական բանակին կըց-  
ուած գինուորական կազմին արխութիւնը և փորձառու-  
թիւնը հասկնալու համար երբ Աւ ծովու մէջ ալ կրկնէ՝  
ասոր ս՞ով ինչ բսելու իրաւունք կ'ունենայ:

Էնվէր. — Ձեր վսեմութեան փափաքը յաւ չկրցայ ըմ-  
բանել:

վանկէնհայմ. — Խնդիրը շատ պարզ է: Թրքական  
տորմիզը Մարմարայի մէջ կատարած սաղմափորձերը  
բաւարար չնկատելով, Աւ ծովու մէջ ալ կրկնած կ'ըլլայ.  
ձամբան սուս տորմիզին հանդիպելով յարձակման կ'են-  
թարկուի: Թրքական տորմիզը չէզոքութիւն պահել ձեւա-  
ցնելով պաշտպանողական դիրք կ'որդեգրէ և վերջապէս,  
Օսեասայի նաւահանգիստը ապաստանելու կը ստիպուի: Օ-  
սեասայի գիրքերէն կրակ կը բացուի և երկու սուրի մէջ  
մնացած կ'ըլլայ: Թուրք տորմիզն ալ ինքնապաշտպանու-  
թեան համար կը ստիպուի Օսեասայի գիրքերը ոմբակոծե-  
լով քանդել և լուսնել: Ռուսական տորմիզը մասամբ ըն-  
կըղմելէ և մասամբ ալ նահանջի մատնելէ ետք անվնաս  
Պոլիս կը վերադառնայ. Օսմանեան կառավարութիւնն ալ



այս անահնկալ գէպքը պատճառ բռնելով Ռուսիոյ գէմ կը բողոքէ :

Էնվէր (զարմացած) .— Ի՞նչ աղուոր ծրագիր . պատերազմի յայտարարութեան համար ուրիշ սլաոճաւ փրնտուելու հարկ չի մնար :

Վանկէնհայմ .— Ասիկա չըլլալիք բան չէ :

Էնվէր .— Լաւ խորհուրդ . սակայն մեր ընկերները , մանաւանդ ծովային նախարարը հարցին տեղեակ պահել պէտք է :

Վանկէնհայմ .— Անտարակոյս . կը կարծեմ , թէ Ձեր հոս գալու ժամանակ այս խնդիրը լուծուած պէտք է ըլլար :

Էնվէր (ցասկոտ) .— Ուրե՞մն :

Վանկէնհայմ (էնվէրի ցասումը շտեմնել ձեւացնելով եւ ժպտելով) .— Լսածիս համաձայն , Սախտ Հալիմ փաշան Անգլիական զեապանին խոստացած է զինեալ չհրքութիւն պահել եւ ասոր համար մեծ մտահոգութեան մատնուած է եղեր . այս ձեւը զայն կը փրկէ , սրովհետեւ պատերազմին կատարուած իրողութեամբ մը ծագելուն պատասխանատուն Ռուսիան եղած կ'ըլլայ :

Էնվէր (զարմայած) .— Խնդիրը վճուուած բսել է :

Վանկէնհայմ (չիոթած տեղէն ելլելով) .— Քիչ մնացոր մոռնայի . Նորին Վեհափառութեան կողմէ Ձեր վսեմութեան ուղղեալ նամակ մը եւ ծրար մը կայ . ներեցէք սր Ձեզի ներկայացնեմ :

Այս ըսելով , Վանկէնհայմ սենեակին անկիւնը գրտնուած երկաթէ արկղը բացած եւ արժէքաւոր տուփ մը եւ նամակ մը հանելով էնվէրին երկարած էր : Էնվէր՝ տուփն ու նամակը ստանալէն ետք , գէմքի զայրոյթը անհետացած էր :

Էնվէր .— Նորին կայսերական բարձրութեան յաջողական շնորհները զիս կը յուզեն . շնորհակալութիւնս կը ներկայացնեմ նորին վսեմութեան :

Վանկէնհայմ .— Հա՛ , ուրիշ լաւ լաւ մըն ալ ունիմ Ձանազ-Քալէի մարտկոցները սլատերազմական տեսակէտով շատ աղար են : Անոնք Անգլիական եւ Ֆրանսական սուրմիղներուն սմբակոծումներուն երկար ժամանակ չեն կրնար գիմադրել : Ասիկա նկատի ունեցող կատարութեանէս քանի մը ժամ առաջ հեռագիր մը ստացայ , սրով կը տեղեկացնէ թէ շատ մը սլատերազմական սլաոյքներ եւ երկրաչափներ ճամբայ հանուած են . կը յուսամ որ մինչեւ երկուօր հոս կը հասնին . Պուլկարիա ասանց անցքը սպասուած

է: Ուրիշ մէկ տեղեկութեանս համաձայն՝ ժամանակ մը ետք Նորին Վեհափառութիւնը Չանագ-Փալէն պիտի այցելէ եւ Ձեզ ընդհանուր հրամանատարի դիրքին մէջ տեսնել կը փափաքի:

\* \* \*

Այս տեսակցութեան յաջորդ օրը Թրքական տորմիդը Պոլսոյ նաւահանգիստէն կը մեկնէր, Նեղուցներու եւ Ընկերութեան շոգենաւերու ողջոյնի սուլիշները անդադար կը սուլէին, Իթթիհատ-Թերագզը կուսակցութեան մասնաճիւղերուն կազմակերպած այս ցոյցին մասնակցողներ, վարձուած նաւակներով եւ շոգեմակոյկներով սոյն տորմիդը շրջապատած՝ կոկորդալից ձայնով «կեցցէ՛ «Յաւուզ», կեցցէ՛ «Միտիլի» կ'աղաղակէին: Կամուրջին վրայ «ասեղ ձգելու տեղ չկայ» ասացուածին պէս, խոնուած՝ ցոյցը եւ այս շարժումը կը դիտէին. կարգ մը ծեր կիներ ուրախութեան արտասուք կը թափէին. այս շարժումէն ապագային ծնելիք աղէտին վրայ ոչ ոք կը խորհէր:

Հասարակութիւնը զարմանալի եւ ոչխարի մը չափ միամիտ է. ինչպէս ոչխարը անգիտակցարար զինք մորթողին հետեւելով սպանդանոց կ'երթայ, հասարակութիւնն ալ ինքզինք հերոս ճանչցուցած պոռոտախօսներու կը հետեւի եւ կուրօրէն վտանգներու կ'ենթարկուի:

Օսմանեան տորմիդի հռչակ առած այս երկու գերմանական շարաշուք զրահաւորները, խնդրոյն անտեղեակ՝ ժողովուրդին ծափերու հեղեղին մէջ պատերազմական դիրք բռնած՝ կամաց կամաց կը յառաջանան:

Տորմիդին հետեւողներուն եւ երեկոյեան թերթերուն յայտարարութեան համաձայն, տորմիդը իր ռազմափորձերուն մէջ կատարելապէս յաջողած, «Յաւուզ» եւ «Միտիլի» երեւակայութենէ դուրս ճարպիկութիւն ցոյց տրւած էին:

Պոլսոյ դեսպաններուն պատերազմական եւ նաւային կցորդները, օտար եւ թուրք թերթերու թղթակիցներ, հայթայթուած միջոցներով սոյն տորմիդին կը հետեւէին եւ անոր շարժումները կը դիտէին:

Տորմիդը, Գրզ Գուլէսին, Սարայ Պուրնուն անցնելով Գում Գափուի առջեւէն դէպի Մարմարա ուղղուած եւ ժողովուրդին տեսողութենէն հեռացած էր:

Քանի մը օր ետք, Պոլսոյ մէջ հետեւեալ լուրը կը տարածուէր: Օսմանեան տորմիդը, «Յաւուզ»ի եւ «Միտիլի»ի հետ Մարմարայի ռազմափորձերը լրացուցած, Սեւ Մովու մէջ ալ կարգ մը փորձեր կատարելու համար

գիշերանց Նեղուցէն անցած եւ Սեւ Մովու ճաթրան գոցելու համար Նեղուցներու մուտքին վրայ ական զետեղելու եկող Ռուս տորմիդին հաղիպած է: Այս վերջինը Օսմանեան տորմիդը տեսնելուն ումրակոծման անցած է: Օսմանեան տորմիդը՝ առանց փոխադարձելու, ինքնապաշտպանութեան դիրքով ուզած է Օտեսայի նաւահանգիստը ապաստանիլ, սակայն Օտեսայի դիրքերէն ալ ումրակոծուած է: Երկու կրակի մէջ մնացող Օսմանեան տորմիդը ինքնապաշտպանութեան եւ փոխադարձելու ստիպուած ըլլալով, Օտեսայի ռուսական դիրքերը ումրակոծելով՝ զայն լռութեան դատապարտած է եւ Ռուս տորմիդին մէկ մասը փճացուցած եւ մէկ մասն ալ նահանջի մատնելով անվնաս Պոլսոյ նաւահանգիստը վերադարձած է: «Կեցցէ՛ «Շաււուզ», կեցցէ՛ «Միտիլի» թող կորչին Ռուսերը»:

Օտեսայի ումրակոծումը կը պատահի 19 Հոկտեմբեր 1914-ին. այս լուրերուն կը յաջորդէ հետեւեալ լուրը:

«Ռուս բանակը Կովկասի ճակատէն յարձակման անցած է, սակայն թուրք քաջարի բանակը փոխադարձ յարձակման անցնելով՝ Ռուսերը նահանջի մատնած է»:

«Կեցցէ՛ թուրք բանակը, թող կորչին Ռուսերը»:

Քանի մը օր ետք, 5 Նոյեմ. 1914-ին՝ Անգլիոյ դէմ, եւ 6-ին ալ Ֆրանսայի դէմ պատերազմ յայտարարուած էր թուրքիոյ կողմէ:

\* \* \*

Օսմանեան կառավարութեան Գերմանիոյ հաշտոյն պատերազմի մտնելուն յաջորդ օրը, 8-րդ զօրաբանակի հրամանատար գնդապետ ձէմալ պէյ (Կիւլչիւք ձէմալ փաշա) որ Պէհճէթ պէյի հրամանատարութեան տակ Հոմս գտնուող 23-րդ զօրաբանակի մօտ որպէս քննիչ զրկուած էր, Պատերազմական Նախարար Էնվէրէն ստացած ծածկագիր հաղորդագրութեան վրայ, զօրաբանակի սպաները իր մօտ կանչած եւ հետեւեալ ճառը խօսած է:

«Մեր կառավարութիւնը Ռուս տորմիդին յանկարծակի յարձակման ենթարկուեցաւ: Անգլիական բարեկարգիչ յանձնախումբին դաւաճանութիւնը ցաւալի պարագայ մ'է. Մովակալ Լեմփոս եւ իր ընկերները մեր զրահաւորները անգործածելի վիճակի մը մատնեցին: Պատերազմական Նախարարութիւնը ասիկա ժամանակին տեղեկանալով հարկ եղած միջոցները ձեռք առած եւ Մովակալ Լեմփոսի եւ իր սպայակոյտի պաշտօնին վերջ տուած է: Արդ, Օսմանեան կառավարութիւնը, այս կազմակերպուած յարձակման դէմ, Աստուծոյ զօրութեան ապաւինելով եւ Կեդր.

պետութեանց հետ զինակցելով պատերազմի մտած է. յաղթանակը մերն է»:

Անգլիական բարեկարգիչ յանձնախումբին պաշտօնին վերջ տուող Ծովային Նախարար Ճէմալ փաշա, իր յուշերուն մէջ այս դէպքը հետեւեալ կերպով կը մեկնէ եւ կ'ըսէ.

«Յաւալի է որ ընդհ. պատերազմի նախօրեակին, մեր թերթերուն մէջ, Գերման թերթերէն քաղելով, սուտ լուր մը հրատարակուած էր, ըստ որում, Անգլիացի ընդհ. Տրնօրէնը, Անգլիական բարեկարգիչ յանձնախումբի հրահանգին համաձայն, մեր նաւերուն նորոգման միջոցին, ամենէն կարեւոր մասերը հանել տուած եւ այսպէսով մեր նաւերուն արագութեան չափը նուազեցուցած է:

«Այս լուրը հրատարակուած շրջանին, Արդ բանակի հրամանատարութեան պաշտօնը կը վարէի: Եւ զիս փոխանորդող Էնվէր փաշային տեղեկացուցի, թէ այս լուրը բացարձակապէս սուտ է. թէ՛ Անգլիական բարեկարգիչ յանձնախումբը, եւ թէ՛ մեր նաւաշինարանները արդիական երկրաչափները մինչեւ իրենց պաշտօնին վերջ տրուելը կատարեալ խղճի մտօք եւ պատուով աշխատած եւ ո՛չ մէկ դաւաճանութիւն զործած են, եւ խնդրեցի որ այս լուրը Ծովային Նախարարութեան կողմէ հերքուի: Յարդ չեմ դիտեր, թէ այս հերքումը կատարուեցա՞ւ թէ ոչ, սակայն ցաւով կը հաստատեմ, որ այս անհիմն լուրին հրատարակումը շատ դէշ արձագանդ գտաւ եւ շատ մը քաղաքական հեղինակութիւններու մէջ՝ մեր եւ Գերմանիոյ դէմ չարամիտ հրատարակութիւններու պատճառ դարձաւ: Բարոյական պարտականութիւն կը զգամ հոս կրկնելու, թէ Ծովակալ Լեմփոս եւ իր սպայակոյտը եւ թէ մեր նաւաշինարանները բարեկարգելու պաշտօն ունեցող Անգլիացի երկրաչափը եւ գործաւորները իրենց պարտականութիւնը խիստ պատուաւոր կերպով կատարեցին»:

Սոյն դէպքերը փաստելու համար, հարկ կը տեսնեմ 1922ին հրատարակուած Ճէմալի յուշերէն քաղել նաեւ հետեւեալը.

«Որչափ որ Գերմանները նախապէս ընդունած էին, որ մենք մինչեւ մեր զօրաշարժը լրացնենք, մեր չէզոքի դիրքը պահենք եւ կարելի եղածին չափ ուշ պատերազմի մասնակցինք. սակայն ի վերջոյ Մասնի պարտութեան վերայ, երբ ստիպուեցան իրենց յարձակող բանակը ետ քաշել եւ յարձակողականէն՝ պաշտպանողականի անցնելու եւ երբ Ռուս բանակը մէկ կողմէն Արեւելեան Բրուսիան ոտնակոխ ընելով յաղթական կը յառաջանար եւ միւս կողմէն

Կալիցիան կ'ողողէր, եւ իրենց դիրքերը բոլորովին խախտած էր, կտրուկ կերպով Գերմանները պահանջեցին որ պատերազմի մասնակցինք, որովհետեւ Կովկասի մէջ Ռուսական, իսկ Եգիպտոսի մէջ Անգլիական կարեւոր ուժերը մենք կրնայինք կասեցնել:

«Գերման զեսպանը այս ուղղութեամբ ամէն օր թէ Եպարզօս Սախտ փաշային եւ թէ մեր մօտ դիմում կը կատարէր. այդ միջոցին մեր ընդհ. զօրաշարժը լրացած եւ բանակները հարկ եղած ուղղութեամբ շրկուելու պատրաստ վիճակի մը մէջ դրուած էին. տեւականօրէն կը մարզուէին եւ գրեթէ ամէն օր Պոլսոյ եւ Սկիւտարի կողմերը ռազմափորձ կը կատարուէր:

«Էնվէր փաշային, հրամանատարական կազմը զօրացնելու նպատակով ի գործ դրած զինուորական բարեկարգումը զգալի էր: Զօրագունդերուն՝ զինուորական, առաքման եւ այլ կանոններուն տեղեակ երիտասարդ հրամանատարներու ձեռքին տակ մարզուած ըլլալը կը հաստատուէր:

«Գերմանները այս յաջողութիւնը տեսնելով կ'առարկէին, թէ երբ ձեր ձեռքը ասանկ կանոնաւոր զինուորական ուժ ունիք, փոխանակ զանոնք անմիջապէս գործի լծելու, Գերմանիոյ եւ Աւստրիոյ պարտութիւններուն հետուէն հանդիսատես կը հանդիսանաք:

«Արդարեւ, մեր բանակին ընդհ. զօրակոչը պատճառաբանելով պատերազմէն խուսափելու կարելիութիւն չէր մնացած: Այն ժամանակ դրամական խնդիրը առաջ քշուեցաւ, թէ եւ առանձնաշնորհումները առժամեայ օրէնքով մը ջնջուած էին, սակայն ասկէ անմիջապէս օգտուելի կարելի չէր, մաքսատան հասոյթները Յ/Աով նուազած եւ տասանորդի հասոյթներն ալ ամբողջութեամբ բանակին յատկացուած էին:

«Մեր կառավարութեան Ֆրանսայէն առած փոխառութեան առաջին մասնավճարը հազիւ թէ մինչեւ տարեվերջի պետական ծախքերուն բաւէր, ուստի Գերմանիոյ առաջարկուեցաւ որ դրամական խնդիրն ալ լուծուի:

«Դեսպան Վանկէնհայմէն հրաւիրադիր մը ստացայ, որով կը տեղեկացնէր թէ Հոկտ. 11ին Թարապիոյ զեսպանատան մէջ տրուելիք կէսօրուան ճաշկերոյթին հրաւիրուած եմ: Դեսպանատուն երթալուս, Եպարզօս փաշան, Թալաաթ եւ Խալիլ պէյերը ու էնվէր փաշան հոն դտայ. այդ միջոցին Գերման զեսպանատան խորհրդական նշանակուած Փոն Քոլմանն ալ հոն էր: Ճաշէն ետք դեսպանին աշխատութեան սենեակը անդանք

«Վանկէնհայմ մէկ կողմէն դրամական խնդրոյն կար-  
ժադրութիւնը Գերմանիոյ կողմէն ընդունուած ըլլալը կը  
յայտնէր եւ միւս կողմէն ալ, ասկէ վերջ ուրիշ արգելք մի  
յարուցանէր — հասկցնելու ձեւով երեսս կը նայէր:

«Այդ միջոցին էնվէր փաշա յայտարարեց, որ «Կո-  
պէն» եւ «Պրեսլալ» գրահաւորներուն Սեւ Ծով անցնելու  
արգելքը անիմաստ էր, որովհետեւ ծովակալը կարգ մը  
շատ օրինաւոր զինուորական պատճառներ կը ներկայա-  
ցընէր: Սակայն այս երկու նաւերուն մեր միւս նաւերուն  
հետ Սեւ Ծով անցնիլը կրնար մեր անպայման պատերազմի  
մտնելուն պատրուակ դառնալ: Համաձայնական տէրու-  
թիւնները անգամ մը բաց է թաց ազդարարած էին՝ որ  
«Կոպէն» եւ «Պրեսլալ»ը որպէս թրքական նաւ չեն ընդու-  
նիր, եւ եթէ ասոնք Օսմանեան դրօշ պարզելով եւ թրքական  
նաւազներով նեղուցներէն դուրս գան, անմիջապէս թշնա-  
մական արարքի մը պատճառ պիտի դառնան:

«Ուստի յայտնի էր, որ Ռուս նաւատորմը սոյն նա-  
ւերը տեսնելուն անմիջապէս յարձակում գործելու պիտի  
չվարանէր:

«Ոեւէ պարագայի տակ, եթէ Ռուս նաւատորմը «Կո-  
պէն» եւ «Պրեսլալ»ի վրայ յարձակում չգործէր, մեզ պա-  
տերազմի մտցնել փափաքող Ծովակալ Սոչոն, ուղղակի  
Ռուս նաւատորմին եւ կամ Ռուսական նաւահանգիստնե-  
րուն վրայ յարձակելով կրնար մեզ պատերազմի քշել:

«Ծովակալ Սոչոնի՝ Սեւ Ծովու մէջ Հոկտ. 29ին տե-  
ղի ունեցած ընդհարումներու մասին տուած տեղեկագրին  
համաձայն, թէ եւ պարտաւորուած են ընդունելու, որ Ռուս  
նախայարձակումը առիթ տուած է որ մենք ծովային գոր-  
ծողութեան ձեռնարկենք, սակայն այս պատճառ դարձաւ՝  
որ Ռուսերը եւ յաջորդաբար Անգլիացիները եւ Ֆրանսացի-  
ները Օսմ. պետութեան դէմ պատերազմ յայտարարեն:

«Եպարքոս Սախա Հալիմ փաշա հոգեկան տազնապի  
մատնուած էր: Ըստ իրեն Գերմանիա թուրքիան պատե-  
րազմի մղելու պատասխանատուութիւնը պիտի չուզէր  
ստանձնել: Այդ օրերուն տօն ըլլալուն՝ իր ծովեզերեայ ա-  
պտրանքին մէջ կը գումարուէինք, Սախա Հալիմ Փաշա կը  
յայտարարէր թէ, եթէ տորմիղին այս յարձակումը պա-  
տերազմի պատճառ դառնայ, ինք անպայման պիտի հրա-  
ժարի: Պատշաճ յեզուով մը անոր բացատրուեցաւ, որ  
Գերմանիոյ հետ զինակցութիւնը ինքը ստորագրած, ասկէ  
ծագելիք բարդութիւններուն դիմակալելու համար քանի  
մը օր առաջ արուած որոշման ձայնակցած ըլլալով, այս

ընդհարումին բնական հետեւանքը եղող ներկայ կացութեան հիման վրայ իր հրաժարիլը աններելի էր:

«Սոյն անհերքելի փաստարկութեան վրայ իշխանը լռեց եւ համակերպելով չհրաժարեցաւ»:

Օսմանեան կառավարութիւնը, այս կերպով Գերմանիոյ հաշտոյն ընդհ. պատերազմի մտած ժամանակ՝ Իթթիհատ եւ Թէրազզը կուսակցութեան դիրքը ի՞նչ վիճակի մէջ էր: Այս մասին գաղափար մը կազմել տալու համար հարկ կը տեսնենք անցեալի դէպքերէն ամփոփ մէջբերում մը բնել:

1910ին Եմէն ապստամբութեան դրօշ պարզեց: Թաւաթ երեսփոխանական ժողովին առջեւ յայտարարեց, թէ պիտի կրնայ այս ապստամբութիւնը երեք ամսուան մէջ ջախջախել եւ դանոնք տեւական անշարժութեան մատնել. այս յայտարարութիւնը ջերմ ծափերու արժանացած էր:

Թաւաթ Եմէնը դապելու եւ բարեկարգելու պաշտօնով, Ահմէտ Իզզէթ փաշան կառավարիչ հրամանատար նշանակել տուած եւ ճամբու դրած էր: Իթթիհատ եւ Թէրազզը կուսակցութիւնն ալ Ահմէտ Իզզէթ փաշայի գործերը հակակշռելու համար, իրր յիտգօր պատուիրակ հաղարակա խուլ Իսմէթ պէյր(1) անոր ընկերացուցած էր:

Դէպի Եմէն կարեւոր ուժերու առաքման սկսուած էր, եւ այս ուժին 18000 հոգին բոլոր պիտոյքներով Ալիբիկեան Թրիփոյիէն փոխադրուած էր եւ այսպէսով Թրիփոյին անպաշտպան ձգուած էր:

Թրիփոյիի հրամանատար-կառավարիչը Իսրահիմ փաշա, Կեդը. կառավարութեան տեղեկացուցած էր, թէ այս փոխադրութիւնը վտանգաւոր է, թէ անոր հետեւանքը աղէտայի պիտի ըլլայ, եւ շեշտած էր, թէ Իտալիա դրաման յաւանութիւններ կը սնուցանէ եւ եթէ Իտալիոյ կողմէն անմիջական յարձակում մը գործուի, ինչ որ շատ հաւանական է, հոն մնացած 3000 զինուորով, որոնք գրեթէ անղէն են, կարելի պիտի չըլլայ պաշտպանուիլ, սակայն կեդը. կառավարութիւնը յոռ մնացած էր:

1911ի Սեպտ. 16ի դիշերը Վարչապետ Հապը Փաշա, ըստ իր սովորութեան, երբ ստաիկան զինուորներու դատարարակութեան համար հրաւիրուած Իտալացի քննիչ Ռոպէլլան Փաշայի տան մէջ ալիկիններու հետ թուղթ կը խա-

(1) Այս Խամէր պէյր, եախկին վարչապետ այժմ «Հալ» կուսակցութեան պարագլուխն է

ղար, կը զուարճանար, սեղանի վրայ Իտալական դեսպա-  
նատան կնիքով կնքուած եւ «չատ կարեւոր եւ խիստ ստի-  
պողական» մակագրութեամբ նամակ մը իրեն յանձնուած  
էր: Հագգը փաշա տիկիներու հանդէպ քաղաքավար գրտ-  
նուելու մտօք, նամակը առանց բանալու սեղանին վրայ  
դրած եւ խաղը շարունակած էր:

Կը պատմուի թէ, Ռոպէլլան փաշա նամակին պարու-  
նակութենէն եւ կացութեան փափկութենէն տեղեակ ըլլա-  
լով կը զարմանար՝ թէ Հագգը Փաշա, ի՞նչպէս պետական  
կարեւոր գործերու մէջ այսչափ անհոգ կը գտնուի, եւ  
միայն կէս գիշերուան մօտ Հագգը փաշային դիտել տուած  
է թէ՛

— Փաշա, կը տեսնեմ որ սեղանին վրայ ձգուած նա-  
մակին վրայ «չատ կարեւոր եւ ստիպողական» մակագրու-  
թիւնը կայ: Կը կարծեմ որ եթէ բարեհաճիք քանի մը  
վայրկեան խաղը ընդհատելով նամակը կարդալ, գէշ չըլ-  
լար. անշուշտ տիկիները ներողամիտ պիտի գտնուին,  
այսու հանդերձ այս դիտողութեանս համար Ձեր ներողա-  
մըտութիւնը կը խնդրեմ, որովհետեւ ես տակաւին Արե-  
ւելքի նիստ ու կացին եւ սովորութիւններուն կատարելա-  
պէս տեղեակ չեմ:

Ռոպէլլան Փաշայի այս դիտողութիւնը, որ տեսակ  
մը ծաղրանք էր, Հագգը Փաշան սթափեցուցած, խաղը  
ընդհատելով նամակը բացած եւ գրութեան տեղեկանալով  
չուարման մատնուած էր, որովհետեւ նամակը Իտալիոյ  
կողմէն վերջնագիր մըն էր, որով Օսմանեան կառավարու-  
թենէն Թրիփոլին 24 ժամէն պարպել կը պահանջուէր:

Հագգը փաշա ժամանակին ուշ ըլլալուն պատճառաւ,  
չէր կրցած ոեւէ միջոցի դիմել եւ յաջորդ առտուն, 17 Սեպ-  
տեմբեր 1911ին Թրիփոլին Իտալիոյ կողմէն գրաւուած էր:

\* \* \*

Իտալիոյ կողմէն այս անակնկալ եւ միջազգային օ-  
րէնքներու հակառակ տրուած հարուածը Իթթիհատ թէ-  
րագգը կուսակցութիւնը եւ Պոլսոյ բոլոր քաղաքական շըր-  
ջանակները շջմեցուցած էր:

Գնդապետութենէ հանգստեան կոչուած Սատրգ Պէյ,  
Իթթիհատ եւ Թէրագգը կուսակցութենէն անջատուելով  
«Հիւրրիէթ եւ Իթիլաֆ» (1) անուան տակ ընդդիմադիր կու-  
սակցութիւն մը հիմնելու կ'աշխատէր: Ան եմէնի սպրս-

(1) Իթիլաֆը յետագային բուն կերպով կը բնագատէր Իթթիհատի քաղա-  
քականութիւնը բոլոր մարգերու մէջ.



տամբութեան վրայ աւելցող Թրիփոլիի Իտալական գրաւումբը յարմար առիթ նկատելով երեսփոխանական ժողովին մէջ թէ դուրսը իր համախոհներով, սկսած էր Իթթիհատ եւ Թէրազզը կուսակցութեան դէմ պայքարել: Քանի պայքարը կը սաստկանար, այս նոր հիմնուած կուսակցութիւնը աւելի ժողովրդականութիւն կը գտնէր, եւ Երեսփոխանական ժողովին մէջ քանի մը աթոռ ունեցող «ժողովրդային» կուսակցութեան հետ միանալով իր դիրքը աւելի կ'ամրացնէր:

Հիւրրիէթ եւ Իթիլաֆ կուսակցութեան միջոցաւ ընդդիմադրութիւնը միութիւն մը կազմած էր եւ այս միութիւնը նախկին վարչապետ Կիպրոսցի Քեամիլ Փաշան կրկին աթոռ բարձրացնելու կը ձգտէր:

Արտաքին թշնամիները երկրին այս խառնակ վիճակը օգտագործելու չյապաղեցան: Յունաստանի հռչակաւոր վարչապետը Վէնէզէլոս, Օսմանեան կառավարութեան դէմ Պալքանեան դաշնակցութիւն մը կազմելու կ'աշխատէր:

Վէնէզէլոսին այս ճիգին միակ նպատակն էր Կրէտէն ամբողջութեամբ Յունաստանի կցել: Այս միջոցին եթէ կառավարութեան ղեկը վարչապետ եւ դիւանագէտ մէկու մը ձեռքը գտնուէր, Յունաստանի հետ համաձայնիլ շատ դիւրին պիտի ըլլար եւ թոյլ պիտի չտրուէր որ Պալքանեան դաշնակցութիւնը կազմուէր եւ Մակեդոնիան կորսուէր. սակայն ի՞նչ օգուտ. պետական գործերը ընդդիմադիր զառամած փաշաներու եւ Իթթիհատ եւ Թէրազզըի նորելուկ անփորձներու ձեռքերուն մէջ կը գտնուէին:

\* \* \*

Քաղաքական կացութիւնը Թուրքիոյ համար աննրպաստ էր. Մակեդոնիոյ մէջ վտանգը գլուխ կը ցցէր: Իթթիհատ եւ Թէրազզըի ղեկավարները, ժողովուրդին մօտ կուսակցութեան պատիւն ու վարկը պաշտպանելու համար կը խորհէին կառավարութիւնը առժամեայ կերպով ընդդիմադիրներու յանձնել եւ անխուսափելի պատերազմը փութացնել:

Իթթիհատ եւ Թէրազզը կուսակցութեան ղեկավարները այս կերպ շարժելով, իրենց կամքով 1912ի Յունիսին կառավարութիւնը ընդդիմադիրներուն յանձնեցին եւ հեռացան: Ընդդիմադիրներու կողմէ կազմուեցաւ Ղազի Մուխթար Փաշայի դահլիճը, որուն կ'անդամակցէր նաեւ Քեամիլ Փաշան:

Ահմէտ Մուխթար եւ Քեամիլ փաշաները իրարու դէմ կը պայքարէին, անցեալի մէջ պատահած կարգ մը դէպ-

քերու պատճառաւ գժտուած էին. այս երկու հինցած, զառամած զլուխները, մին Մարաշախտ, միւսը Նախարար, որ պէտք էր փորձառութիւն ունեցած ըլլային, չի կրցան կացութեան ստացած փափկութիւնը կշռել: Քեամիլ փաշա Պատերազմական Նախարարութեան կոչուած Նազըմ Փաշային աղղեցութեան եւ զինուորական տաղանդին կը վստահէր եւ կը խարուէր, կարծելով որ բանակը Իթթիհատ եւ Թէրազզըի ձեռքէն խլուելէն ետք իրենց թիկունք պիտի կենար: Իսկ ներքին նախարարութեան կոչուած Բէշիտ պէյին չափէն աւելի կարեւորութիւն եւ վստահութիւն ցոյց կը տրուէր:

Մակեդոնիոյ կացութիւնը ծանրացած էր. Իթթիհատ եւ Թէրազզըի պարագլուխները, գիտնալով հանդերձ որ հետեւանքը պարտութիւն պիտի ըլլայ, ընդդիմադրութիւնը հանրային կարծիքին առջեւ վարկարեկելու համար պատերազմ յայտարարել տալու կ'աշխատէին:

Ահմէթ Մուխթար եւ Քեամիլ փաշաները պատերազմէն կը խուսափէին, պետութեան զինուորական կացութիւնը եւ նիւթականը ձեռնտու չէին նկատեր եւ խնդիրը դիւանագիտական ճամբով լուծել կ'աշխատէին, նոյնիսկ թերթերու միջոցաւ յայտարարելով, թէ կառավարութիւնը Պերլինի դաշնագրին 77-րդ յօդուածը իրագործելու վրայ է:

Պերլինի դաշնագրին 77րդ յօդուածը Մակեդոնիոյ տեղական ինքնավարութիւն տալ կը խոստանար: Խնդիրը այս կերպով լուծել քաղաքական յաջողութիւն պիտի նրկատուէր. գէշ միջոց մը չէր, մանաւանդ որ իրաւական կողմ ալ ունենալով, կարելի էր մեծ տէրութիւններու հետ բանակցութեան դուռ բանալ եւ ժամանակ շահիլ. սակայն ինչ օգուտ, որ Իթթիհատ-Թէրազզըի ղեկավարները ժողովուրդը զրգռելով պատերազմը փութացնել կ'աշխատէին, ընդդիմադրութիւնը եւ կառավարութիւնը չէին կրընար հակամիջոց մը գտնել:

Իթթիհատ եւ Թէրազզը կուսակցութիւնը վերջապէս բարձրագոյն վարժարաններու եւ համալսարանի ուսանողութիւնը Բ. դրան առջեւ ցոյց մը կատարելու մղեց, եւ Ահմէտ Մուխթար փաշայի կառավարութիւնը շփոթութեան մատնելով պատերազմ յայտարարել տալու յաջողեցաւ:

Բոլոր երկիրներու մէջ համալսարանները գիտական հաստատութիւններուն սիրտը կը նկատուին: Երբեմն համալսարանականները, որպէս աղգին ներկայացուցիչը եւ

Ջիզը, կրնան ցոյցերու առաջնորդողը ըլլալ, բայց այս կը պատահի, երբ ազգին և բնութանու ըին պահանջը զգացուի:

Յու ի սիրտ պէտք է բսել որ 1908ին պատահած Իթթիհատ և Թէրազըրի յեղափոխութիւնը, Օսմանեան կայսրութեան բայր խաւերուն մէջ ծայրահեղութիւն, գինովութիւն յառաջացուցած և ասիկ ամենէն շատ ազդասուր համայտարանի և բարձր վարժարաններու ուսանողութիւնը եղած է. սրանք իրենց սահմանէն և պարտականութենէն դուրս կուրթէն Իթթիհատ և Թէրազըրի բարակամախաները վարձած էին. և ասոնց սրտին մէջ իրական հայրենասիրութեան տեղ, կեղծ և շեշտուած ազգայնամոյութիւն մը բոյն դրած էր:

Պերլինի պաշնադրութեան 77րդ յօդուածին գործադրութեան ի նպատակաւարութեան ծրագրին թերթերու յայտարարուելէն մէկ օր ետք Հայտար Փաշայի բժշկական վարժարանի ուսուցիչներէն սմանք, բժշկական գասախօսութեան տեղ աշակերտութեան բսած էին, թէ կառավարութիւնը պատերազմէն կը խուսափի, թէ Պոսնա-Հէրսէքովէնի պէս, Մակեդոնիան այ թշնամիներուն ծախելու վրայ է, և կեղծ զայրոյթ մը ցոյց տայով ուսանողութիւնը կառավարութեան դէմ գրգռելով ցոյց մը կազմակերպելու կը մղէին, նոյնիսկ ուսուցիչներէն մէկը գրգռուած բսած էր.—

«Պարոններ, կառավարութեան նպատակը Մակեդոնիան տայ, ծախել է, կառավարութեան այս շատ սկներեւ պաւածանութեան դէմ զարգացած երիտասարդութիւնը պէ՞տք է յսէ... Եթէ պատերազմինք հարի ըին հարիը յաղթանակը մերն է. և սակայն դաւածան Քեամիլ փաշան, Պոսնա Հէրսէքովէնի պէս Մակեդոնիոյ մնացած մասերն այ ծախել կ'ուզէ, ո՞վ հայրենիքի պաշտպան երիտասարդութիւն, զարգացած երիտասարդութիւն, այս հայրենագասութիւնը լուս ու մունջ պիտի դիտէ՞ք, Ձեր երակներուն մէջ արիւն, ջիղերան մէջ պրկում, և Ձեր սրտին մէջ կամք և փառք չմնաց, ինչո՞ւ համար Բ. Դուս գիմելով Վարչապետէն և Արտաքին Նախարարէն բացատրութիւն չէք պահանջեր, այս թէ Ձեր իրաւունքը և թէ պարտականութիւնն է:

Բժշկական վարժարանի ուսանողներուն գրգռութիւնը իր գագաթնակէտին հասած էր, ուսուցիչներու դրդումով ուսանողութիւնը Հայտար Փաշայէն մեկնած և Պոլիս անցնելով «Ձէյնէպ Հանրմի Ապարանքը» կոչուող համալսարանը հասած էին՝ և հոն այ նախ պէս պատրաստուած

ուսանողութեան հետ միանալով դասախօսութեան սրահը մտած էին, հոն աթոռ բարձրացող եւ իր ընկերներուն կողմէ քաջալերուող բժշկական ուսանող մը, առտուան իրենց ուսուցչին ըսածները կը կրկնէր եւ երիտասարդութեան յատուկ ջղայնութեամբ մը կ'ըսէր.

— Ընկերներ, Մակեդոնիան մեր ձեռքէն կը խլեն, ղեկավարները պետութեան դէմ կը դաւաճանեն, այս ճրջմարտութիւն է. այս պարագային մեր զարգացած եւ հայրենասէր երիտասարդներու պարտականութիւնը ի՞նչ է. ընկերներ, սրտիս բոլոր թափովը Ձեզի հարցում կ'ուղղեմ. մեր պարտականութիւնը ի՞նչ է այսօր, ինչո՞ւ հաւաքուելով անմիջապէս Բ. Դուռ չենք երթար եւ այդ դաւաճան նախարարներուն օձիքէն բռնելով փողոցներու մէջ չենք քաշկոտեր եւ անոնց դաւաճանութեան արժանի պատիժը չենք տար, եւ կամ ինչո՞ւ պատերազմ չենք յայտարարեր, երբ ապահով ենք, թէ մենք պիտի յաղթենք... Օ՛ն ընկերներ, Բ. Դուռ երթանք եւ Վարչապետն ու Արտաքին Նախարարը մինչեւ դուռ բերելով բացատրութիւն պահանջենք:

Համալսարանի բոլոր ճիւղերու մէջ այս ուղղութեամբ ճառեր խօսուեցան, զիրար գրգռելով խնդիրը արծարծուեցաւ, համալսարանի դրօշակը պարզած ուսանողութիւնը ազատութեան երգեր երգելով դէպի Բ. Դուռ ուղղուեցաւ եւ ճամբան՝

— Պատերազմ կ'ուզենք, չենք թոյլատրեր որ Մակեդոնիան տրուի, — կ'աղաղակէին: Այս ցուցարարները քանի մը հոգիի կողմէ առաջ կը քշուէին: Անոնք յորձանքէն բռնուած, իրենց ընկերները յորձանքի կու տային. ասոնք կը պոռային եւ պոռալ կու տային:

Համալսարանականներէ եւ բարձրագոյն վարժարաններու ուսանողութենէն բաղկացած այս խումբը պատերազմական նախարարութեան շէնքին առջեւէն անցնելով «Տիվան Եօլու»ին միացած ճամբան մտած եւ Տամատ Ֆէրիտ փաշայի ապարանքին առջեւ հասած էին: Այս միջոցին երկու ձիեր ու լծուած կառք մը տեսնուեցաւ: Յուցարարները զայն շրջապատելով «պատերազմ կ'ուզենք, չենք ձգեր որ Մակեդոնիան տրուի», պոռացին. կառքին մէջի ճամբորդը անհամբեր գլուխը դուրս հանելով ցուցարարներուն՝

— Պատերազմ փափաքողները (ձեռքովը Պատերազմական Նախարարութեան ուղղութիւնը ցոյց տալով) թող հոն գան. եւ կառապանին ալ՝ «քէ՛» ըսաւ: Կառապանը



ԷՆՎԷՆ

Թուրքիոյ Պատերազմական Նախարար, մեծ ռերագործ, հոգոպրեցաւ հայ ահաբեկիչներու ձեռքէն, սակայն սպաննուեցաւ Թուրքեաստանի մէջ, հայ կարմիր բանակայինի մը կողմէ .



ԹԱԼԱԱԹ

Թուրքիոյ Ներքին Նախարար եւ Իթթիհատի հայաջինջ ծրագիրը տառացիօրէն գործադրող ռերագործը : 15 Մարտ 1921-ին, Պերլինի մէջ, Սողոմոն Թէհլիրեանի մէկ գնդակով սատկեցաւ :

ձիերը մտրակած էր և և կառքը դէպի Պատերազմական նախարարութիւն սուրացած էր:

Կառքին մէջ գնացող անձը, օրուան Պատերազմական նախարար Նազըմ փաշան էր:

Յուցարար ուսանողները թէեւ «պատերազմ կ'ուզենք» կը պոռային և սակայն անոնցմէ և ոչ մէկը պատերազմի դաշտը պիտի երթար եւ զոհուէր. խումբը ճամբան շարունակելով Բ. Դուռ հասած էր. 30ի մօտ զինուորներ և 10ի մօտ սատրիկաններ արգիլել ուզեցին՝ սակայն երիտասարդական ծայրայեղութիւնը յաղթեց, ուսանողները մինչև Դուռ մօտենալով բարձրադաղակ գոչեցին.

— Վարչապետ փաշան և Արտաքին Նախարարը տեսել կ'ուզենք: Մակեդոնիան չի՛ կրնար տրուիլ. պատերազմ կ'ուզենք.

Ենիշէրիներու շրջանը յիշողներ անշուշտ կը կռահէին, թէ նման ցոյց մը Վարչապետին եւ Արտաքին Նախարարին պիտատուած (1) ուղել կը նշանակէր: Շատ անգամ ալ զոհացում տալ հարկ կը տեսնուէր: Փառք Աստուծոյ այլ սէ օրերը պատմութեան անցած են:

Այս ցոյցերուն պէմ Բ. Դրան մէջ և ո՛չ մէկ շարժում կը տեսնուէր, և սակէ գայրացած՝ ուսանողութիւնը լուտանքներ, հայհոյութիւններ և անէծք կը թափէր. վերջապէս շարժում մը տեսնուելու պէս եղաւ եւ շուրջ մը ելաւ, թէ պիտի գան, կու գան, պիտի չգան եւայլն. չեկողը Արտաքին Նախարար Նորատունկեան էֆէնտին էր, իսկ եկողը իր գահին Մահմուտ Մուխթար փաշայի ընկերակցութեամբ՝ Վարչապետ Ահմէտ Մուխթար փաշան էր:

Յուցարարներուն գոռում գոչումին վրայ, Ղազի Ահմէտ Մուխթար փաշային մինչև դուռը մօտենալը կառավարութեան տկարութիւնը ցոյց կու տար, վարչական եւ դիւանագիտական ապիկարութիւնը.

Ղազի Ահմէտ Մուխթար փաշա սկսած էր իր զինուորական անցեայր պատմել Գարա Տաղ եւ Սերպիայէն սկսելով, մինչև կովկասի պատերազմի դէպքերը կը դասաւորէր, և Պերլինի դաշնադրութեան ներկայացումով կ'ու-

(1) Ենիշէրիներու շրջանին քաղաքական պայտօն սոցիւ «չեմբ ուզեր» պոռայով ցոյց ընող ենիշէրիները գոհացնելու համար նախկին քաղաքներ վարչապետը գլխատելով ցուցարարներուն կու տային. Այս ցոյցը կազմակերպողները դիրքի տիրանային եւ ամոնց հարցնէին, թէ «ի՞նչ կ'ուզեն», անոնք կը պատասխանէին, թէ պատրաստուած կերակուրը մահուր չըլլալուն ցոյց ընելու ստիպուած են վերջապէս այս ժողովուրդը սկիզբէն ի վեր անգիտակ, փառասէրներուն գործիք դարձած էր

զէր խօսքը վերջացնել: Հանդուցեալին նպատակն էր հասկրցնել, թէ ի՞նչ պատճառներով այդ դաշնագիրը կնքուցաւ. կ'ուզէր հասկցնել թէ կատախարութիւնը ստիպուած էր դործադրել, եւ վերջապէս համոզել, թէ կատախարութեան բռնած ուզին, այդ օրուան համար ամենէն շիտակ եւ ստրահով ուզին է:

Միայն թէ չէր կրցած հասկնալ, թէ իր առջեւ գրանուող ամբոխը յարուած մեքենայ մ'ըն է, եւ «պատերազմ կ'ուզենք» խօսքէն դուրս բան մը չէր հասկնար:

Ամբոխին մէջ կը գտնուէր Իթթիհատ եւ Թէրապղրի հետեւորդներէն եւ «Ալա կ'ընտխոյ» անունով ծանօթ էնիս Անի, որը խօսքը Ահմէտ Մուխթար փաշայի ուղղելով ըստաւ. — Ո՛վ փաշա, դուք շատ պատերազմներ տեսաք, Ղազը պատուանուներ առիք. եւ հիմա Մակեդոնիան ձեռք կ'ելլէ, ազգն ու երիտասարդութիւնը Ձեզի թիկունք դարձած՝ պատերազմ կ'ուզէ. եթէ անմիջապէս պատերազմ յայտարարէք՝ քասապատիկ Ղազի կը գտնուիք:

էնիս Անիին այս պատասխանին վրայ լոյսը ուսանողութիւնը միտքերան.

— Պատերազմ կ'ուզենք, չենք ձգեր որ Մակեդոնիան արուի, ազադակեցին: Մահմուտ Մուխթար փաշան միջամտելով «պատերազմ պիտի բլլայ» շեշտած էր եւ որուն նոյնիսկ ինքն ալ պիտի մասնակցէր: Վերջապէս այս խոստումին վրայ ձայները լսեցին, Մահմուտ Մուխթար փաշային խոստումը փստահութիւն ներշնչեց եւ ցուցարարները ցրուեցան:

\* \* \*

Ցուցարարներուն արտած պարտականութիւնը ասով չէր վերջացած: Իթթիհատ եւ Թէրապղրի խլրղային աշխատանքները ուսանողութիւնը մինչեւ թագաւորական պալատ մղած էր նոյն դոսում գոչումներով:

— Պատերազմ կ'ուզենք, թոյլ չենք սար որ Մակեդոնիան արուի, ազադակները կը շարունակուէին եւ առանց արգելքի պայտաին ծաղկանոցը մանելով՝

— Մեր թաղաւոր հայրը տեսնել կ'ուզենք պոռացին: Հինդ վայրկեան յետոյ հանդուցեալ Սուլթան Մուհամմէտ Բէշատ Ե. ընդունելութեան սենեակին պատուհանէն տեսնուցաւ, հասկցուեցաւ որ ուսանողութեան ուղղեալ բաներ մը կը խօսէր, սակայն չէին լսուեր բառերը: Միայն չրթունքներուն շարժումները կը տեսնուէին: Ան վերջապէս ձեռքը բարձրացնելով լուծ էր: Ամբոխին մէջ գտնուող բրոբականտիստ մը բարձրաձայն գոչեց.

— Ահաւասիկ պարոննե՛ր, կը լսէք չէ՞, մեր թագաւոր հայրն ալ մեզի համախոս է, ան ալ պատերազմ կ'ուզէ եւ կառավարութիւնը դաւաճանութեամբ կ'ամբաստանէ: Կեցցէ՛ մեր վեհափառ թագաւորը. անկցի՛ն դաւաճանները:

Այս կեցցէ՛ եւ անկցի՛ն բառերը ուսանողութեան կողմէ կրկնուած էին եւ վերջապէս պալատէն մեկնելով դէպի Պոլիս վերադարձը սկսած էր: Ճամբան հանդիպած բարձրաստիճան անձնաւորութեանց կառքերը կեցնելով՝

— «Պատերազմ կ'ուզենք, թոյլ չենք տար որ Մակեդոնիան տրուի», աղաղակները կը կրկնէին եւ ապա թոյլ կու տային որ կառքը ճամբան շարունակէր: Ճամբան թաւաթին կառքին ալ հանդիպեցան: Թաւաթ գլուխը կառքին պատուհանէն դուրս հանելով:

— «Պատերա՛զմ, պատերա՛զմ, պատերա՛զմ», պոռագած էր: Այս «պատերազմ» բառը ո՛չ միայն ուսանողութեան, այլ եւ Իթթիհատ-Թէրապզըի ուղեղը եղող թաւաթին բռնով երեք անգամ կը կրկնուէր: Պատերազմ բառը Իթթիհատ-Թէրապզըն ուսանողութեան թէ ուսանողութենէն Իթթիհատ-Թէրապզըին ներարկուած էր: Մէկ րան յստակ էր: Որոշ էր որ մղում մը կար, վերջապէս այս բառը արձագանգ գտնելով՝ կառավարութեան, բարձր անձնաւորութեանց եւ նոյնիսկ թագաւորին կողմէ իւրացուած էր:

Ուսանողութեան պարտականութիւնը ասով ալ չէր վերջացած. նոր հնարք մը պէտք էր, թերթերն ալ պատերազմի կուսակից դարձնելու համար:

Ուսանողութեան երկրորդ անգամ Բ. դրան պողոտան եկած ժամանակ, արդէն մթնած եւ լոյսերը վառուած էին: «Մապահ» եւ «Իգտամ» թերթերուն առջեւ քիչ մը կանգ առնելէ եւ պոռալ կանչելէ յետոյ, ամբոխը դէպի «Նուրը Օսմանիէյի» մօտ «Թանին» թերթին խմբագրատունը ուղղուած էր:

«Թանին»ի խմբագրութեան մէջ պատրաստութիւններ տեսնուած եւ շէնքը վերէն վար լոյսերով եւ Օսմանեան կարմիր դրօշներով պարզարուած էր: Իթթիհատ եւ Թէրապզըի նշանաւոր բանախօսը՝ Էօմէր Նաճի պատշգամին վրայ անհամբեր ուսանողութեան հասնելուն կը սպասէր, երբ անոնք հասան եւ «Պատերազմ կ'ուզենք, թոյլ չենք տար որ Մակեդոնիան տրուի» բացազանչեցին, Էօմէր պէյ յուղուած, սկսած էր բանախօսել. եւ թերթերուն Պերլինի դաշնագրին շուրջ տուած բացատրութիւններուն վտանգը եւ հանրային կարծիքին վրայ ձգած տպաւորութիւնը շեշտե-



լով ըսած էր. «Ուսանողական այս շարժումը ամենամեծ հայրենասիրութիւնն է: — Պարոններ, պիտի պատերազմինք եւ պիտի յաղթենք: Պուլկարն ալ պիտի յաղթէ... Գարա Տաղն ալ պիտի յաղթէ... Յոյնն ալ պիտի յաղթէ»:

Այս պուռտախօս բանախօսին երկդիմի խօսքերը խոր տպաւորութիւն ձգած էին. խօսած ժամանակ ձեռքը կուրծքին կը դարնէր եւ գրօշակներ վար կը ձգէր: Օսմանեան դրօշներ վար կը ձգուէին, իսկ անոնց անկումը դիտողները արդեօք չէի՞ն հասկնար, թէ Օսմ. կայսրութեան անկման ժամը կը փութացնէին:

\* \* \*

Ղաղի Ահմէտ Մուխթար փաշա, այս ցոյցերու ազդեցութեան սակ Պալքանեան պատերազմը յայտարարած էր: Հաղար ու մէկ դաւերու մէջ դայարուող, եւ բոլոր միջոցներէ եւ ուժէ զուրկ կառավարութեան մը այս տրամաբանութեամբ պատերազմ յայտարարելը մեծ եւ անդարմանելի սխալ մըն էր. սակայն ափսո՛ս... սկսուած պատերազմը դէշ փուլի մը մէջ մտած էր, եւ այս պարագան հաստատող Ղաղի Ահմէտ Մուխթար փաշան հրաժարած եւ գործէ քաշուած էր: Բայսը յանցանքը եւ պատասխանատուութիւնը Քեամիլ փաշայի կազմած գահիծին կը մերադրուէր եւ Քեամիլ փաշայի հասցէին հաղար ու մէկ լուտանքներ կը թափուէին եւ «Պօսնա-Հէրսէֆուլէն եւ Արեւելեան Մակեդոնիան ծախող Քեամիլ փաշան այս անգամ ալ ամբողջ Մակեդոնիան կը ծախէ» խօսքերը ոչ միայն հասարակութեան, այլ նաեւ կարգ մը բարձր անձնուորութիւններու կողմէ կը յեղյեղուէր:

Բանակին մէջ կարգապահութեան հետքն իսկ չէր մընացած: Իթթիհատ եւ Թէրազգը կուսակցութեան պատկանող սպաներ զինուորական գործը ձախող եւ փտանդասը կերպով կը վարէին, կամաւոր արձանագրուելով շորքերուն մէջ մանուկ Թալասթ եւ Իթթիհատ-Թէրազգրի սարազլուներ՝ զինուորը բարոյսայրելի չէին քաշուեր. հայրենիքին արատութեան տեղ՝ կուսակցական փաստասիրութիւնը տեղ բռնած էր անոնց մտքին մէջ:

Նազըմ փաշան ալ ակնկալուած հեղինակութիւնը եւ հմտութիւնը չէր կրցած ցոյց տալ. ո՛չ բանակին վրայ կրքացած էր իշխել եւ ո՛չ ալ զինուորական տասարամները կանոնաւորել: Բայսը գործերը Իթթիհատ եւ Թէրազգրին սպականող սպաներուն ձգուած էին:

Պալքանեան գաշնակցութեան բանակը ամէն կողմէն յարձակման սնցած էր, իսկ Օսմանեան բանակը գտերու

հետեւանքով չէր կրնար դիմադրել: Քանի մը օրուան ընթացքին — Աստուած հեռու ընէ — այն տեսակ խուճապահար նահանջ մը սկսած էր, որ խղճի տէր մարդոց աչքերը արցունքով եւ սիրտերը արիւնով կը լեցնէր: Նահանջ մը, որ խումբ-խումբ զինուորներ գէնքերնին նետած, իրենց սպաներն ու ընկերները կորսնցուցած եւ շուարած վիճակի մէջ ճամբաները ինկած էին: Մակեդոնիոյ բնակչութիւնն ալ յանկարծակիի դալով, սարսափահար, իր կեանքը փրկելու համար, ամէն ինչ չգելով եւ միայն իրենց կիներն ու զաւակները առած՝ սայլերով՝ Պոլսոյ ուղղութեամբ կը դադարէին:

Պուլկար բանակը՝ էտիրնէն պաշարման տակ առնելով՝ Չաթալճայի կողմէն Պոլսոյ կը սպառնար: Յունական բանակը Սելանիկ մտած, վերջապէս քանի մը օրուան մէջ ամբողջ Մակեդոնիան ձեռքէ կ'լիւծէր:

Քեամիլ եւ Նազրմ փաշաներու դէմ յարձակումը սաստկացած էր: Քեամիլ փաշան եւ իր ընկերները, Իթթիհատ-Թէրազզըին ժողովուրդին եւ բանակին մէջ սերմանած որոմները մաքրելու անկարող էին: Գաղթականներուն ալ չէին կրնար հոգ տանիլ, պաշտօնականներուն ամսականները անվճար կը մնային, բոլոր դէպքերը Քեամիլ եւ Նազրմ փաշաներուն աննպաստ էին:

Քեամիլ փաշա եւ իր դահլիճը շուարած, չճամ հաշտութեան միջոցներ կը փնտռէին, ասով հանդերձ հաշտութեան պայմաններուն ծանրութենէն ալ կը վախնային եւ պատասխանատուութիւնը ուրիշներու հետ բաժնելու մասին կը խորհէին:

Սահմանադրական կառավարութեան մը համար անթոյլատրելի «Երեւելեաց ժողովի» մը կազմութեան ձեռնարկեցին: Այս ձեռնարկը Քեամիլ փաշայի կառավարութեան ապիկարութիւնը եւ պետական գործերու մէջ տգիտութիւնը ցոյց տուաւ: Իթթիհատ եւ Թէրազզըն ալ կըրկին կառավարութեան ղեկը ձեռք առնելու եւ բոլոր պատասխանատուութիւնը ընդդիմադիրներուն վերադրելու համար յարմար առիթի մը կը սպասէր: Երեւելեաց ժողովը սպասուած այս առիթն ալ տուած եղաւ եւ Բ. Դրան վերայ յարձակում գործուելով՝ կառավարութիւնը կրկին Իթթիհատ Թէրազզըին ձեռքը անցաւ:

\* \* \*

Բարձրագոյն Դրան դէմ գործուած յարձակումը շատ տխուր եւ ոճրագործութեամբ վերջացած ասպատակութիւն մըն է: Ալէմտար Մուսթաֆա փաշայի զինուորական

մթերանոցին օղը հանուելէն ի վեր, Բ. Դրան մէջ արիւն չէր հոսած, ոճիր չէր գործուած: Բ. Դուռը պետութեան ամենէն կարևոր, ամենէն բարձր մէկ ներկայացուցչութիւնը նկատուած էր: Մեծ պետութիւնները Օսմանեան կայսրութեան միահեծան Սուլթաններու պալատէն աւելի, բարձրագոյն Դրան կարևորութիւն կու տային եւ անոր որոշումները աւելի յարգի կը նկատէին: Բ. Դուռ ըսել՝ կառավարական կեդրոն կը նշանակէր: Բ. Դրան անձնատրութիւնները պետութեան ամենէն կարող եւ ամենէն վարչապետ մարդիկն էին:

Իթթիհատ եւ Թէրապզըն այս սլաշտօնավայրին անունը աղարտած եւ նոյնիսկ կանանոցին եւ վարչապետական յարկարաժնին մէջ ոճիր գործելէ չէր քաշուած:

«Բարձրագոյն Դրան յարձակումը» մտկադրութեամբ սլաշտութեան անցած այս նախճիրը, Նազըմ փաշայի եւ թիկնապահներուն սպանութիւնը, Օսմանեան պետութեան մեծ տէրութիւններու մօտ ունեցած վարկը կտորած եւ Իթթիհատ եւ Թէրապզը կուսակցութեան եւ անոր կառավարութեան ոճրագործներու բոյն մը ըլլալը հաստատած էր:

Բ. Դրան յարձակումը նախապէս Իթթիհատ եւ Թէրապզըրի ղեկավարներուն կողմէ ծրագրուած էր եւ գործադրութեան համար յարմար առիթի մը կը սպասուէր: Ընդդիմադիրներէն ոմանք ասիկա տեղեկացած եւ որչափ որ ալ Ներքին Նախարար Բէշիտ սէյին ու Պատերազմական Նախարար Նազըմ փաշան զգուշացնելով կանխամիջոցներ ձեռք առնել յանձնարարած էին, սակայն բնդդիմադիր պարապլուխներ համողում գոյացնելով, թէ Իթթիհատ եւ Թէրապզըն ասանկ մեծ ոճիր մը գործելու պիտի չկրնայ համարձակիլ, տրուած տեղեկութիւններուն կարևորութիւն չէին տուած եւ արգելիչ միջոցներու չէին դիմած:

Իժբախատութիւնները ասանկ կու վան. միջոցներ չեն խորհուիր, արամարանութիւն եւ հեռատեսութիւն կը չքանան եւ վճիռը կը գործադրուի:

Ըլլայ անհատներու, ըլլայ ժողովուրդներու մէջ, երբեմն անանկ յանկարծակի բողոք եւ դժբաղդութիւններ ու ալիաներ կը պատահին, որոնց ծաղման պատճառը չի կրնար հասկցուիլ եւ «ի՞նչ բնեւք, ճակատապիր է», ըսելով կը վերջանայ:

Իրականութեան մէջ երջանկութիւն եւ ալէտ կարգ մը դէպքերու ծնունդն են, զգոյշ ըլլալու է եւ կանխամիջոցներու մէջ պէտք չէ թերանալ. ասով հանդերձ այս երկուքն ալ կեանքի պատահական դէպքերուն ենթակայ են:

Մարդը եւ մահը, պատերազմը, փոթորիկը եւ նոյնիսկ առողջ եւ մաքուր օդ մը երբեմն մեծ փոփոխութիւններու կը ծառայէ եւ ահա երջանկութիւնը աղէտի եւ, աղէտը երջանկութեան կը փոխուի, վերջապէս ազգի մը, անհատի մը պատահած աղէտը, ուրիշ ազգի, անհատի մը բախտը կը բերէ:

Գիտենք որ կլիմայի բերումով Պոլիս Յունուարին ցուրտ կ'ընէ: Զիւն, անձրեւ անպակաս կ'ըլլայ: 23 Յունուար 1913ին կատարուած Բ. Դրան վրայ յարձակման օրը, զարուհը յիշեցնող արեւոտ օր մըն էր: Օդը պայծառ, անամպ, արեւը կը փայլէր, Լրթեւեկը դժուարացնող անձրեւ եւ ցեխերէն հետք չէր տեսնուեր: Զգուշութեամբ քալելու ստիպող սառ ալ չկար. ամենուն դէմքին վրայ գոհութիւն մը կը նշմարուէր: Իթթիհատական պարագլուխները նպաստաւոր օդէն կրցած էին իրապէս օգտուիլ, իրենց կազմած ծրագիրը դիւրութեամբ կը գործադրէին:

23 Յունուարին այս գարնանային օրուան կէս օրէն ետք, ժամը 1,30ին մօտերը, փոխ-դնդապետ ձէմալ պէյ(1) հետեւորդ ունենալով ուրիշ երկու հեծեյազունդի սպաներ, կարմիր ձի մը հեծած, Բ. Դրան Լտեւի ճամբաները կը թափառէր, ծրագրի գործադրութիւնը կը կազմախերպէր եւ անոնց վրայ կը հսկէր:

«Գաբալը Ծրուհէն» ծերակոյտի եւ Բ. Դրան մէջտեղի ճամբուն հետեւելով, Սալպըմ Սէօկիւտէն Ապու էլ Սուուտ ճամբան անցնելով Մէսէրէթ սլանդոկին առջեւէն Բ. Դրան սլողոտան կտրելով, Ենի Փոսթախանէի շէնքին ետեւի ճամբէն սասիկանական տնօրէնութեան շէնքին առջեւ ելլելով՝ Պարսիկ դեսպանատան քովէն Բ. Դրան ընդհանուր մուտքին առջեւ եկած էր: Ամբողջ ճամբու ընթացքին կարգ մը մարդոց կը հանդիպէր եւ ասոնց մասնաւոր հրահանգ կու տար:

Այն ժամանակ Բ. Դրան ղիմաց «պաշտօնանկներու սրճարան» անունով ծանօթ սրճարան մը կար: Ձէմալ եւ իր ընկերները այս սրճարանի առջեւ ձիերէն վար իջան:

Այս միջոցին Թալաաթ ձեռքերը գրպանը երեւցած եւ ձէմալի հետ փոխանակ խօսելու՝ կարգ մը նշաններ փոխանակած եւ ձէմալ Թալաաթէն հարկ ելած հրահանգը ստացած էր:

Ձէմալ անմիջապէս գրպանէն փոքր սուլիչ մը հանե-

Ե. Հեղ (1) Հոչակաւոր ձէմալ փաշան է Այս դէպքին անձամբ ականատես եղած եմ

լով երեք անգամ սուլած էր. ասոր վրայ վերոյիշեալ սրճա-  
րանէն 10ի չափ յետադիմական տարազով եւ ձեռքերնին  
մէյ մէկ ձողիկներու վրայ կրօնական վերտառութեամբ  
կարմիր-կանաչ դրօշակներ բռնած մարդիկ դուրս գալով  
եւ բարձր ձայնով աղօթելով Բ. Դուռ յառաջացած եւ մուտ-  
քը գրաւած էին: Ասկէ ետք ետեւի փողոցներէն 5-10 հոգի-  
նոց խումբեր գալով ասոնց միացած եւ Թալաաթն ալ եր-  
կու ձեռքերուն մէջ մէյ մէկ ումբ բռնած ընդհ. մուտքին  
առջեւ եկած եւ հերթապահի պէս դիրք բռնած էր: Գարա  
Քէմալ եւ իր քանի մը արբանեակներն ալ նոյն զէնքով  
զինուած՝ Թալաաթին քով գալով հրամանի կը սպասէին:

Այս կարգադրութենէն յետոյ, ձէմալ նորէն Թա-  
լաաթին նշանացի հրահանգին վրայ ձի նստած եւ իր հե-  
տեւորդներով սրարչաւ Պարսիկ դեսպանատան դիմացի կա-  
ռավարչատունը գալով ձիէն իջած եւ ուղղակի վեր ելլե-  
լով կառավարիչ խուլ Մէմտուհ փաշան հսկողութեան տակ  
առած եւ անոր աթոռը գրաւելով, առանց միջադէպի, ըս-  
կսած էր գործերը վարել, եւ նոյն ձեւով եւ նոյն ժամուն  
Ազմի պէյ ալ ոստիկանական տնօրէնութիւնը գրաւած եւ  
ընդհանուր Տնօրէն Ճաֆէր Իւհամ պէյը հսկողութեան տակ  
առնել տուած էր:

Պոլսոյ բոլոր թերթերու խմբագրատուներուն առջեւ  
ոստիկան-զինուոր պահակ մը դրուած էր եւ ելեւմուտքը  
արգիլուած: Բ. Դրան կառավարչատան, պատերազմական  
նախարարութեան եւ այլ պաշտօնատուներու միջեւ եղած  
հեռագրի եւ հեռաձայնի գիծերը կտրուած էին:

Բ. Դրան ընդհ. մուտքը գրաւող կեղծ յետադիմա-  
կաններու աղօթքի ձայնին վրայ՝ տեղւոյն պահակ ջոկատը  
սուինները անցուցած եկած, մուտքի եւ սանդուխին մէջ-  
տեղի միջոցը գրաւած էր: Վերջապէս Բ. Դուռը ամէն կող-  
մէն պաշարուած էր: Ներսը գրասենեակներուն առջեւ ալ  
կրկուական պահակ դրուած եւ պաշտօնէութեան դուրս  
գալը արգիլուած էր: Խնդրէն անտեղեակ պաշտօնեաներ  
ահ ու դողի մատնուած էին:

Այս միջոցին երկու ինքնաշարժ Բ. Դրան մուտքին մօ-  
տեցած էին: Յետադիմական տարազով հոն գտնուող եւ  
աղօթող խումբը ասոնց դէմ զինուորական պատուոյ դիրք  
բռնած էր, ինքնաշարժէն արագ դուրս եկած էին էնվէր,  
եղբայրը Նուրի եւ հօրեղբայրը Խալիլ, իսկ միւսէն՝ հա-  
րիւրապետ Մուսթաֆա Նէճիպ եւ չորս ենթասպաներ՝ ո-  
րոնք էնվէրին հրամանին կը սպասէին:

էնվէր, Թալաաթին նայելով հարկ եղած հրահանգը

ստացած եւ առանց բառ մը փոխանակելու իր ընկերներով դէպի Վարչապետութեան յարկարաժինը յառաջացած էր:

Այս շարժումէն քանի մը վայրկեան յետոյ զէնքի ընդհատ պայթիւններ լսուած եւ Թալաաթ ժամացոյցին նայելով 2-էֆին՝ իր յուշատետրին մէջ արձանագրած էր:

Չէնքի ձայները չէին կրկնուած եւ հասկցուած էր որ էնվէր իր պաշտօնը աւարտած էր: Կէս ժամ ետք, էնվէր եւ իր ընկերները, բացի հարիւրապետ Մուսթաֆա Նէճիւպէն, վերադարձած եւ իրենց սպասող ինքնաշարժերը յարձրանալով վարիչներուն դէպի Թագաւորական պալատ, «արա՛գ», հրամանը սուած էին: Բ. Դրան առջեւ հաւաքուածներուն մէջ ցած ձայնով «կեցցէ՛ էնվէր, զործը շատ շուտ վերջացուց» ձայնը կը լսուէր:

Ճիշդ այս միջոցին Թալաաթ գոռ ձայնով հետեւեալ հրամանը կ'արձակէր:

— Անմիջապէս յայտարարութիւնները թող տրուին, ժամանակ թող չկորսուի:

Նոյն վայրկեանին՝ ամբոխէն մօտ 50 հոգի բաժնուելով զանազան ուղղութիւններով մեկնած էին: Ասոնք իրենց մօտ գտնուող հարիւրաւոր տպուած յայտարարութիւններէն անցորդներուն կը ցրուէին:

Պոյսոյ ժողովուրդը այս յայտարարութիւններէն տեղեկացած էր, որ կառավարութիւնը կրկին Իթթիհատ եւ Թէրապի վարիչներուն ձեռքը անցած էր: Նազրմ փաշայի սպանութեան դէպքը հազիւ կէս զիշերէն վերջ Բերայի շրջանակներուն մէջ տարածայնուած էր:

\* \* \*

Բարձրագոյն Դրան մէջ զործուած սճիրը, եւ Նազրմ փաշայի եւ թիկնապահներուն սպանութեան պարագաները նոյնութեամբ ներկայացնել անտեղի չէ կը կարծենք:

Նկարագրուածին պէս, էնվէր եւ ընկերները ինքնաշարժերով Բ. Դուռ հասած եւ Թալաաթէն հարկ եղած հրահանգը ստանալով, առանց բառ մը փոխանակելու զէնքերը ձեռքերնին, մատերնին բլթակին հպած դէպի վարչնապետութեան յարկարաժինը ուղղուած էին: Յարկարաժինն մեծ սրահին մէջ, սպատերազմական նախարար Նազրմ փաշա էնվէրը տեսնելով ցասումով եւ բարկութեամբ ըսած էր:

— էնվէր, ի՞նչ է այս խայտառակութիւնը, ձեր ինձի տուած զինուորականի խօսքը ս՞ոյս էր:

Նազրմ փաշայի այս յանդիմանութեան՝ հարիւրապետ Մուսթաֆա Նէճիւպ պատասխանած է.

— Փաշա՛, Ձեր դաւաճանութիւնը կուսակցութեան կողմէ ստուգուած եւ մահուան դատապարտուած էք, եւ ահա տեսէք, վճիռը դործադրելու պաշտօնը մեզի յանձնուած է. իբրեւ զինուոր ձեզի կ'ազդարարեմ, եթէ կտակ մը ունիս ըսէ եւ կամ գրէ:

Մուսթաֆա Նէճիպին այս թշնամական եւ ոճրային խօսքերը Նազըմ փաշայի զինուորական պատիւը վիրաւորած եւ պաղարիւնը կորսնցնելով ձեռքը դէպի իր զէնքը մեկնած էր. սակայն զայն հանելու միջոցին, վրան արձակուած զնդակներէն դիտապաստ ինկած եւ հողին աւանդած էր:

Իր թիկնապահներէն օգնութեան փութացող Կիպրոսցի Մուսթաֆա փաշայի զաւակը հարիւրապետ Թէվֆիդ պէյ այս սպաննութիւնը տեսնելուն զէնքի դիմած եւ Մուսթաֆա Նէճիպին վրայ կրակելով զայն շնչասպառ դետին տապալած էր:

Չէնքին ձայնը առնող թիկնապահ Նաֆիզ պէյ դէպքին վայրը փութացած եւ զէնքը հնվէրին ուղղելով տակաին չի կրակած, հնվէրին եւ անոր ընկերներուն կողմէ արձակուած զնդակներուն զոհ գացած էր: Այսպէսով Բ. Դրան մէջ հնվէրին եւ ընկերներուն դէմ զէնք դործածող մարդ չէր մնացած:

Այս ոճիրը գործուած պահուն, Նախարարաց Խորհուրդը գումարուած եւ զէնքի ձայներէն սարսափահար խորհրդակցութիւնը ընդհատած էր եւ դէպքին ելքին կր սպասէին: Էնվէր ոճիրը գործելէ յետոյ ուղղակի անոնց ժողովասրահը մտած եւ — զէնք ունեցողները թող յանձնուին, գոռացած էր:

Էնվէրին այս հրամանին մահուան քրտինքով լի պատասխանողը միայն հանգուցեալ Շէյխ-Իւլ-Իսլամ Ճէմալէտտինը եղած է:

Ճէմալէտտին. — Էնվէ՛ր, զաւակս, մեզի պէս մարդիկ զէնքի հետ ի՞նչ գործ ունին, զէնքը միայն ձեզի պէս հերոսներու կր վայելէ, խնդրեմ հրաման մը ունի՞ք:

Էնվէր. — Ձեր համաձայնութիւնը տեղեկացնող եւ ստորագրուած պատասխան յուշագիրը տուէք: (1)

(1) Եւրոպական մեծ պետութիւնները պատերազմին վերջ տալու համար միջամտած եւ Օսմանեան պետութեան իբր Մակեդոնիոյ սահման Միտիա Այնոս ուղիղ գիծը ընդունելու համար յուշագիր մը տուած էին.

Վարչապետ Քեամիլ փաշա, այս յուշագրին դրական պատասխան մը կարենայ տալու համար, քաղաքական պալատին մէջ պետական երեւելեաց ժողով մը գումարած եւ անոր տուած որոշումէն փաշայիւրուած նոյն օրը առաջարկուած սահ-

Պր. Նորատունկեան.— Պատասխան յուշագիրը անկախն չէ ստորագրուած:

Էնվէր (Չղագրգիր).— Պատճա՞ռը:

Պր. Նորատունկեան.— Կարգ մը պատճառներու հետ ձեր ազմուկը եւ...:

Պր. Նորատունկեան վայրկենական սթափած եւ խօսքը չէր կրցած վերջացնել, էնվէր ալ պահ մը վարանած էր, որովհետեւ վստահ էր, թէ այդ պատասխան-յուշագիրը ստորագրուած պատրաստ պիտի ըլլար: Ինչ օգուտ, որ բողբոջ այս մասին իթիհատ եւ Թէրագղըին չժպտեցաւ:

Էնվէր Քեամիլ փաշան ալ երկար դիտելէ եւ քանի մը վայրկեան Չղագրգիր վիճակ մը անցնելէ յետոյ զէնքը դրպանը դնելով Քեամիլ փաշային «ինչ եւ իցէ փաշա, թերութիւններուդ Աստուած թող ներէ, հիմա անմիջապէս հրաժարականդ գրէ», ըսաւ:

Քեամիլ փաշան զարմացած էնվէրը կը դիտէր, չէր կրնար բմբռնել, թէ ասանկ գեղակազմ մարդու մը մօտ այս սատիճան վայրենի փառասիրութիւն ի՞նչպէս կը գտնուի... ասով հանդերձ իբր պատասխան «լա՛ւ, գրեմ», կրցած էր ըսել: Երկու կողմերն ալ ժամանակ մը լռեցին: Քեամիլ փաշա, դողդոջուն, հրաժարականը գրելով էնվէրին տուած էր: Էնվէր հրաժարականը ուշի ուշով կարդացած եւ յարմար գտնելով դրպանած, հոն խոնուող ամբոխին մէջ մըտած եւ առտուրնէ ի վեր վարչապետական յարկարածին դաղանի հսկողութեան ղրկուած ոստիկանական քննիչ, նրչանաւոր հրեայ Սամուէլ էֆէնտիին դառնալով.

— Այս յարկարածին հսկողութեան պաշտօնը քեզի՞ յանձնուած է, հարցուցած էր:

Սամուէլ.— Այո՛, տէր իմ, այս առտուրնէ ի վեր: Հրաման մը ունի՞ք:

Էնվէր.— Ես հիմա կը մեկնիմ, մինչեւ վերադարձս ոչ ոք հոսկէ դուրս պիտի ելլէ, եւ թոյլ պիտի չտաս որ ոեւէ գրութիւն անհետացուի, հրամանիդ անաստողները տեղն ու տեղը կը գնդակահարես:

Սամուէլ.— Հրամանը Ձերն է, տէր իմ, (ձեռքով Քեամիլ փաշան ցոյց տալով), այս ծերուկին հե՞տ ալ այնպէս պիտի վարուիմ:

---

մանագծին ընդունուած ըլլալը տեղեկացնել որոշած ըլլալուն՝ Նախարարաց հորհուրդը գումարուած էր իքթիհատ եւ Թէրագղը կուսակցութիւնը այս խնդրէն տեղեկ էր էնվէր սոյն պատասխանագիրը ստորագրուած կարծելով զայն պահանջած էր



Էնվէր՝ առանց Սամուէլ և Քէնտիին պատասխանելու տուած քայած էր, որովհետեւ Բ. Դրան մէջ իր պաշտօնը լրացած էր. դրան առջեւ սպասող ինքնաշարժին նայելով վարիչին «Օ՛ն, դէպի Թաղաւորական պալատ եւ արա՛ղ», հրամանը տուած էր:

Այլ օր Քեամիլ փաշան այցելող եւ այս դէպքին բերումով մինչեւ կէս դիշեր պաշարուածներուն մէջ կը գրտնուէին նաեւ Անատոլուի երկաթուղագիծի բնդհ. անօրէն Պր. Ռոպէր:

Էնվէր ժամը 4:30ին Թաղաւորական պալատ հասած էր Ա. Քարտուղար Ֆուատի բնկերակցութեամբ եւ Սուլթան Մուհամմէտ Բէշատ Ե. ին ներկայանալով ըսած էր.

— Ո՛վ արքայ, պատերազմին ստացած աննպաստ փոփոխութիւնները ծանօթ են Ձեր վեհափառութեան: Քեամիլ եւ Նազրմ փաշաներու անձին հանդէպ ազդին վստահութիւնը խախտած է եւ անոնց դաւաճանութիւնը փաստուած: Այսօր Բ. Դրան առջեւ կատարուած ցոյցի միջոցին Նազրմ փաշա սպաննուեցաւ եւ Քեամիլ փաշա հրաժարեցաւ: Ինձի պաշտօն տրուած է ինդիրը Ձեր վեհափառութեան տեղեկացնել եւ Քեամիլ փաշայի հրաժարականը ներկայացնելով ինդրել որ բարեհաճիք նախկին պատերազմական նախարար Մահմուտ Շէվքէթ փաշային Մարաջախտի աստիճան շնորհել եւ նոր դահլիճը կազմելու պաշտօնը անոր տալ:

Սուլթան Մուհամմէտ Բէշատ ժպտելով ըսած էր. «զոհ մնացի, շատ զոհ մնացի»:

Էնվէր Ա. Քարտուղար Ֆուատ պէյին դառնալով մեր Թաղաւոր տէրը, նախկին պատերազմական նախարար Մահմուտ Շէվքէթ փաշային մարաջախտի աստիճան շնորհելով, անոր նոր դահլիճը կազմելու պաշտօնը տուաւ, Օ՛ն, անմիջապէս այս մասին ըստ օրինի տրուելիք հրամանագիրը գրէ եւ տուր:

Ա. Քարտուղարը շուարուն Թաղաւորին կը նայէր եւ հրամանի կը սպասէր. զայն տեսնող Էնվէր կրկին Թաղաւորին դիմելով ըսաւ.

— Տէր Թաղաւոր, կը կարծեմ որ Ա. Քարտուղարը պաշտօնադիրը՝ դրելու եւ ինձի յանձնելու համար Ձեր բարձր հրամանին կը սպասէ:

Սուլթան Բէշատ. — Շատ լաւ, թող դրեն եւ մինչեւ որ պատրաստեն, հաճեցէք ինձի հետ միւս սենեակը գալ. թէ՛յը միասին առնենք, չըլլա՞ր. ես Սահմանադրութեան Ա. Թաղաւորն եմ եւ սահմանադրասէր. նուիրական կուսակցութեան բոլոր փափաքները կատարելով զոհ կը մնամ:

Յաջորդ օրը Մահմուտ Շէվքէթ փաշայի դահլիճը կազմուած էր: Թալաթ նոյն զիշերը Վարչապետական տեղակալ անունով երկիրը իր ինքնակոչ կառավարութեան տակ առած էր:

Մահմուտ Շէվքէթ փաշայի դահլիճին մաս կը կապմէին՝ Վարչապետ և Պատերազմական Նախարար Մահմուտ Շէվքէթ փաշա. Շէյխ Իւլ Իսլամ՝ Մուսա Քեազիմ էֆէնտի. Արտաքին՝ Մուխթար պէյ, Ներքին՝ մինչև Էտիրնէի կուսակալ Հաճի Ատիլ պէյի ժամանումը, փոխանորդարար Թալաթ պէյ. ծերակոյտի նախագահ՝ Սախ Հալիմ փաշա. Ելեմտական՝ Մէնէմէնտի Բիֆաթ պէյ. Փոսթ և Հեռագրական՝ Թալաթ պէյ. Էվլաֆ՝ Սայրի էֆէնտի. Դատական՝ Իպրահիմ պէյ. Մովային՝ Ջիւրիւք Սուլու Մահմուտ փաշա և Կրթական՝ Շիւքրի պէյ:

\* \* \*

Բ. Դրան դէպքը, նորակազմ Հիւրրիյէթ և Իթիլաֆ կուսակցութիւնը բուռն կերպով ցնցած և զեկամարներուն մէջ նորածագ սերտակցութիւնը խանգարած էր: Նորադիրներ կը հրաժարէին. պատիւի և դիրքի սիրահարներ կը սակարկէին: Վերջապէս այս կուսակցութիւնն այ նախապէս կազմուած և յետոյ յուժնուած «Ահրար» և «Էհսալի» կուսակցութիւններու նման իր ներքին կազմակերպչական գործը չաւարտած երեք մասի բաժնուած էր:

Ա.— Իշխան Սապահէտտինի կուսակիցները:

Բ.— Քեամիլ փաշայի և որդւոյն կուսակիցները:

Գ.— Հիւրրիյէթ և Իթիլաֆի կուսակից հօճաներ: Ասոնցմէ Իշխան Սապահէտտինի կուսակիցները ապակերտնացման, Քեամիլ և իր որդւոյն Սախ փաշայի կուսակիցները պահպանողական, իսկ հօճաններու կուսակիցները՝ Անգլիական վարչաձեւին յար և նման տեսակ մը ինքնավարութեան կողմնակից էին:

Այս բաժանումը բնդդիմադրութիւնը աստիճան մ'ալ տկարացուցած, ղեկավարները իրարու դէմ լարած և նախանձն ու փառասիրութիւնը աւելնալով կուսակցութիւնը զանազան մասերու բաժնած էր և չէր կրցած յառաջիմել:

Բ. Դրան դէպքը և Նազըմ փաշայի և Թիկնսալահներուն սպաննութիւնը, բնդդիմադիր երիտասարդութիւնը փոխվրէժի մղած էր:

Կուսակցութեան այս երիտասարդութիւնը, պառակտուած պարազլուխները ոչինչ համարելով, իրենք իրենց մէջ խմբակցութիւն մը կազմած և իրենց պետերէն դադար-

նի ժողովներ գումարելով, Իթթիհատ եւ Թէրագզըի պետերէն վրէժ լուծելու ձեւին շուրջ կը խորհրդակցէին:

Ասոնց տուած որոշումները պարզապէս Իթթիհատ եւ Թէրագզըին պետական հարուածի փորձը կեղծել էր. Ասոնք ալ կը մտադրէին պարզապէս Վարչապետ եւ Պատերազմական Նախարար Մահմուտ Շէվքէթ փաշան սպաննել, ոստիկանական եւ կառավարական շէնքը ձեռք անցրնել եւ նոյն ժամուն ու վայրկեանին Բ. Դուռը գրաւելով նախարարները հսկողութեան տակ առնել: Ապա Քեամիլ փաշայի անդամակցութեամբ նոր դահլիճը կազմելու պաշտօնը Իշխան Սապահէտտինի յանձնելու համար թագաւորին հաւանութիւնը ստանալ:

Փափաքուած եւ գործադրութիւնը որոշուած այս ծրագիրը կարեւոր էր եւ ասոր գործադրութիւնը իրենց միջոցներով անհնար: Մեծ զգուշութիւն, ուժ, կազմակերպութիւն եւ դրամ պէտք էր. անոնք իրենց փափաքը գոհացնելու համար հարկ եղած միջոցներու վրայ չէին կըրցած խորհիլ եւ կշռել, երիտասարդական տաքարիւնութիւնը կարծել տուած էր, որ ամէն բան դիւրութեամբ կը գործադրուի:

Երիտասարդութեան այս որոշումէն պետերէն ոմանք անուղղակի կերպով տեղեակ էին, սակայն անտեղեակ ձեւանալով եւ անյաջողութեան պարագան նկատի ունենալով միայն զաղտնի աշխատանք կը տանէին եւ միայն ճախողութեան կամ անյաջողութեան պարագային պատասխանատու չի նկատուելու համար անտարբերութիւն ցոյց կու տային:

Երիտասարդներու ծրագրին գործադրութիւնը առաջին քայլին իսկ դժուարութեան բախած էր: Մահմուտ Շէվքէթ փաշան սպաննելու, ոստիկանական տնօրէնութիւնն ու կառավարչատունը գրաւելու, Բ. Դուռ յարձակելով Նախարարաց Խորհուրդը հսկողութեան տակ առնելու, վերջապէս նոր դահլիճի կազմութիւնը Իշխան Սապահէտտինին յանձնելու համար թագաւորը ստիպելու անձեր պէտք էին եւ անմիջական ծախքերու համար ալ հարկ եղած դրամը չէին կըրցած հայթայթել:

Այս երիտասարդներուն մէջ բուն վիճաբանութիւնը կը շարունակուէր. վերջապէս այս փոքր խմբակցութիւնը երեք գործադիր յանձնախումբերու բաժնուած էր: Ասոնցմէ առաջինը Մահմուտ Շէվքէթ փաշայի սպանութեան, երկրորդը ոստիկանատունը եւ կառավարչատունը գրաւելու, իսկ երրորդը Բ. Դուռը գրաւելով նոր դահլիճի

կազմութեան դործը ստանձնած էր: Միայն այս երեք դործադիր յանձնախումբերը ղեկավարելու եւ գործի մղելու, ասոնց մէջ յարարերութեան կապ պահելու համար կեդրոնական մարմին մը եւ կամ անձ մը նշանակել մտոցուած էր:

Մահմուտ Շէվքէթ փաշայի սպանութիւնը ստանձնող յանձնախումբը, թէեւ անճարակ, իր պարտականութիւնը կատարելու մէջ յաջողած, սակայն միւս երկու յանձնախումբերը չէին կրցած իսկ շարժիլ. եւ Մահմուտ Շէվքէթ փաշայի սպանութենէն ակնկալուած բարիքը՝ շարիքի փոխուեցաւ: Մահմուտ Շէվքէթ փաշայի սպանութիւնը եւ ձեռք առնուած միջոցները հոս ամփոփ կերպով նկարագրել անօգուտ չլլար, կը կարծեմ:

\* \* \*

1913 Յունիս 10ի առաւօտեան ժամը 11ին Պայազիտի կողմերը, հանրակառքի ճամբուն վրայ Տինի Պիւթիւն կեսարացի Մուսթաֆա փաշայի ապարանքին առջեւ ինքնաշարժ մը հասած էր. սոյն ինքնաշարժէն երկու հոգի դուրս ելած եւ հանրակառքի գծէն դէպի Պայազիտ եւ Փարմազ Գափու դառնալիք անկիւնը եկած եւ հոն կանգ առած էին, ու այնտեղէն պատերազմական նախարարութեան մուտքը կը լրտեսէին: Ասոնցմէ մէկը կաղ ըլլալով ջլազրդիո ընկերոջը բաներ մը կը խօսէր եւ ընկերոջը գրգռութիւնը կ'սուկնար:

Ինքնաշարժը կեցած էր, վարիչը եւ օգնականը ինքզինքնին իրր թէ ինքնաշարժի աւրուած մասին քննութեամբ զբաղած ցոյց տալով ուշադրութիւնը չգրաւելու կ'աշխատէին եւ այսպէսով իրենց ընկերներուն վերադարձին կը սպասէին:

Իրերու այս վիճակին մէջ, սլատերազմական նախարարութեան դռնէն բաց եւ գեղեցիկ ինքնաշարժ մը ելլելով դէպի ասոնց կողմը կը սուրար, լրտեսներէն կաղը իր ընկերոջ՝

– Հասա՛ն, ահա կու գան, սթափէ եւ պատրաստ եղիր պարտականութիւնդ կատարելու, փափսացած էր:

Հրամանը տուած եւ գրպանէն ատրճանակը հանելով ձեռքին մէջ պատրաստ բռնած էր: Ճիշդ այդ վայրկեանին ինքնաշարժը իրենց մօտեցած եւ անկիւնը դառնալու համար արագութիւնը դանդաղեցուցած էր: Կաղը իր ընկերոջ օ՛ն, Հասա՛ն, ըսելով ինքը ինքնաշարժին վրայ խոյացած եւ ձախ ձեռքով բռնելով, աջով ինքնաշարժին մէջ գտնուողներուն վրայ կրակած էր:



**ՃԷՄԱԿ ՓԱՇԱ**

Հայակեր հրէշ մը եւ արաբ հայրենասէրներու դահին, 25 Յուլիս 1922-ին Թիֆլիսի մէջ սպաննուեցաւ օր ցերեկով Ստեփան Մադիկեանի խումբին կողմէ :



**ՊԷՀԱԷՏՏԻՆ ՇԱՒԻՐ**

Հայոց ցեղասպանութիւնը հնարող եւ գործադրող գլխաւոր ռեժիսորը, Պերլինի մէջ դիտապատ տապալեցաւ 17 Ապրիլ 1922-ի գիշերը, Արամ Երկանեանի վրիժառու զնդակով :

Սոյն ինքնաշարժին մէջ կը գտնուէին Վարչապետ և Պատերազմական Նախարար Մահմուտ Շէվքէթ փաշան ու թիկնապահներէն Շէրիֆ և Իպրայիմ պէյերը:

Կապին տրձակած զնդակները պարտալի չէին անցած: Մահմուտ Շէվքէթ փաշան ու իր թիկնապահը Իպրահիմ պէյ երկուքն ալ տրինյուտայ վիճակի մէջ էին: Շէրէֆ պէյն ալ փարիչը ինքնաշարժին միւս կողմէն դուրս նետուած, կապին յարձակումներէն զերծ մնացած էին, և Պաշազէաի հրապարակը փաղելով «օղնութի՛ւն, ոճիր կայ» կը պոռային Կապին բնկերը Հասան, անոր ինքնաշարժին վրայ խորանայուն պէս փաղն ի վազ ինքնաշարժին քով եկած և շփոթած փարիչին լսած էր. «Ապախ լրահման, Թէվֆիզը դարնուեցաւ, փայրկեան մը իսկ կորսնցնելու ժամանակ չկայ, փախչինք»: Օղնական փարիչի պաշտօնը կատարող Ապախ լրահման Հասանի խօսքերուն հաւատ ընծայած և ստանց իրականութիւնը ստուգելու Հասանը ինքնաշարժին մէջ առած, փերջին տրապութեամբ Ազակբայի ուղղութիւնը բռնած և անհետացած էր:

Կապ Թէվֆիզ, իր պարտականութիւնը յաջողապէս կատարած, Մահմուտ Շէվքէթ փաշան սպաննելէ ետք, երբ Հասանը իր քով չէր գտած, կուրծքը քերելով բնկերներուն դանտուած փայրը եկած և սակայն անոնցմէ և ո՛չ մէկուն հետքը գտած էր:

Այս յեղափոխականը թէև իր խոստումը յարգելով, ստանձնած պարտականութիւնը համարձակութեամբ աւարտած էր, սակայն իր բնկերներուն վախկոտութենէն տոանձին ձգուած, ինքզինք փախուստի միջոցներէն զրրկուած գտած էր այդ պահուն:

Կապը պահ մը շուտրած էր, ստիկանական պաշտօնեաներ գէպքին վայրը գոյ սկսած էին. տոնք տեսնելուն, իր սաքերուն կարողութեան ներած շափով սկսած էր Տինի Պիթիւն Մուսթաֆա փաշայի ապարանքէն վար գէպի Գում Գափու փախչիլ. ստիկաններ զինք տեսած և փախուստէն կասկածելով՝ կը հետապնդէին:

Այս փառնգաւոր պահուն կազը անկիւնադարձ մը հասած և հոն Մէտրէսէյի (Բալամական կրօնական վարժարան) մը հանդիպած ու հոն կենայով յայն շունչ մը առած և շփոթութիւնը փարատած էր: Անմիջապէս հնար մը խորհած ու Մէտրէսէյէն ներս մտնելով առանձնասենեակ մը մտած ու գէնքը հոն գտնուող դարակի մը մէջ պահած ու կանգ առած էր:

Ոստիկանները հասած էին. անկիւնադարձէն վերջ

կազը չէին տեսած ու հոնկէ տնցնող պատու կնոջ հարցնելով անկէ կազին Մկարէսէ յէն ներս մտնելը սասուցած էին :

Ոստիկանները Մկարէսէ յէն ներս մտնելով ստանձնատենեակին սաջեւ եկած էին եւ հասկնալով որ կազը հոն կը գտնուի, կանչած էին . կազը ստանձնատենեակէն դուրս դալով ոստիկաններուն ներկայացած էր . ոստիկաններէն մէկը կազին՝

— Ձէնքդ յանձնէ՛, բտած էր . կազը խնդալով եւ շփաթու թեան ոչ մէկ հետք ցոյց տալով .

— Ի՞նչ գէնք կ'ուզէք, ես գէնքի հետ ի՞նչ դորձ տնիմ .

Ոստիկանը .— Այդ պարտադրելն ինչո՞ւ Պայտպիտէն մինչեւ հաս կը փախչէիր :

Թէվֆիզ .— Հետո ձենէ փութարաթիսն տնիմ եւ նեզն էի :

Ոստիկանները կազին վրան գլուխը խաղարկելով կտակածելի բան մը չեն կրնար գտնել եւ անոր պահած պաղարխնութենէն չեն կտակածիր, բայց այսչափ հետապրնդումէն ետք ձեռնուստ յոստիկանատան վերադառնալը ամօթ սեպելով, Թէվֆիզը, հակառակ անոր սպաշանքներուն մխտաին տարած էին :

\* ~ \*

Մահմուտ Շէվքէթ փաշայի այս ձեւով սպանութիւնը Իթթիհատ եւ Թէրազըրի գեկաւարներուն վախ ազգած էր . եւ մինչ ինքրոյն պարզուելը՝ բնոջ . կեդրոնին մէջ գումարուելու չէին համարձակած . ձուխի ճրգոյ օգլուի բնակարանը հաւաքուելով, հոնկէ հետաձայնով կատալարիչին եւ ոստիկանական տնօրէնին քննութիւններուն կը հոկէին :

Իթթիհատ եւ Թէրազըրի գեկաւարները, բնոգլում պիրներէն վախ չունէին, միայն պատերազմական կացութեան աննպատակ բնթացք մը տանելուն հետեւանքով կը վախնային, որ բանակը իրենց գէմ շարժէր . մանուսանդ որ համաձայն գէպքի մտաին իրենց ստացած տեղեկութեան, Մահմուտ Շէվքէթ փաշայի սպաննիչները, ինքնաշարժով Չաթալճայի ուղղութիւնը բնած եւ գէպի բանակատեղի վախած էին :

Ախտ՝ս, որ Թօլուայ Թէվֆիզի ձերբակալուելը ու Շէրիֆ պէյի կողմէ ճանչցուելը կէս գիշերուան մօտ մահափորձը եւ անոր կազմակերպութիւնը պարզած էր :

Մահափորձին ոչ թէ բանակայիններուն, այլ բնոգլում սուղիրներու կողմէ կատարուած բլլալը ստուգուած եւ

Իթթիհատի պարագլուխներուն երկիւղը փարատած էր եւ ընդդիմադիրները ճզմելու առիթ տուած էր:

Պոլսոյ կառավարիչն ու ոստիկանութեան տնօրէնը ընդհ. կեդրոնէն հասած հրահանգին վրայ, Պոլսոյ բոլոր ընդդիմադիրները ձերբակալել սկսած էին:

Ասով հանդերձ երիտասարդներու գործադիր յանձնախումբի անդամներէն եւ ոչ մէկը ձերբակալուած էր: Երեք օր վերջ անոնցմէ մէկը պատահամբ ձերբակալուած եւ անկէ իրենց թագստոցի մասին տեղեկացած էին:

Ասոնք Բերա «Փիրէ Մուհամմէտ» փողոցին մէջ Անգլիացի կնոջ մը յարկարաժինն մէջ պահուրտած էին:

Այս յարկարաժինը ոստիկան եւ ոստիկան զինուորներու կողմէն պաշարուելով դուռը բանալ տալ կ'ուզէին, պաշարուածները ինդիրը հասկնալով զէնքի դիմած էին:

Յարկարաժինն դռնէն առաջին մտնել համարձակող սպան՝ Ամասիացի Հիւմին սպաննած եւ անոր յաջորդող ոստիկանական քննիչ նշանաւոր հրեայ Սամուէլը ոտքէն վիրաւորած եւ կրկին դուռը գոցել յաջողած էր:

Երկու կողմէն կը կրակէին, ոստիկան-զինուորներ զնդակ կը տեղացնէին, պաշարուածներն ալ կը փոխադարձէին, բայց 6-7 հոգինոց պաշարուած ուժ մը կառավարութեան գերադանց ուժին դէմ մինչև ե՞րբ պիտի կրնար դիմադրել:

Ոստիկան զինուորներէն մաս մը դրացիներուն տանիքէն այս յարկը անցնելով պաշարուածները վերէն եւ վարէն երկու կրակի մէջ առած եւ զանոնք անձնատուր ըլլալ ստիպած էին:

Պաշարուածները եօթը հոգի էին: Ասոնցմէ մէկը փախչելու առիթ գտած եւ մնացեալ վեց հոգին ձերբակալուելով Պոլսոյ կառավարչատունը բերուած ու բանտարկուած էին:

Այս երկրորդ դէպքն ալ Մահմուտ Շէվքէթ փաշայի սպանութեան դէպքին վրայ աւելնալով ընդդիմադիրները շատ փափուկ ու նեղ կացութեան մը մատնուած էին. փախուստ տուողները օձիքնին ազատած, մնացածները ձերբակալուած ու խոշտանգուած էին:

Պատերազմական Ատեանը ինդիրը ձեռք առնելով քանի մը օրուան մէջ քննութիւնները վերջացուցած եւ վճիռը տուած էր: Մեղապարտ կամ անմեղ, ի ներկայութեան կամ ի բացակայութեան 24 հոգի մահուան դատապարտուած էին:

Ձերբակալուածներէն 24 հոգի, որոնց շարքին նաեւ



Տամատ Սալէ՛՛՛ Խայրէտտին փաշա, միեւնոյն օրը Պայազիտի հրապարակին վրայ կախաղան հանուած էին:

Տամատ Սալէ՛՛՛ փաշայէն զատ կախաղան հանուածներուն մէջ կը գտնուէին քաղաքական բաժնի պետ Մուհրաբ, գնդապետ Փուատ, Թօփալ Թէվֆիգ, ծովային սպաներէն Շէվքի, Մուհամմէտ Ալի, ոստիկան սպայ Բէմալ, Ապտուլլահ Սաֆա եւ Չէրքէզ Քեազիմ պէյերը:

Ի բացակայութեան դատապարտուածներու շարքին մէջ կը գտնուէին՝ Իշխան Սապահէտտին, Խօճա Մուսթաֆա, Սապրի էֆէնտի, գնդապետ Սատրգ պէյ, տեղակալ Չէքի պէյ, Շէրիֆ փաշա ու տիկինը իշխանուհի էմինէ Հալիմ:

Ասոնցմէ զատ ձերբակալուած ընդլիմադիրներէն 650 հոգի առաջին կարաւանով եւ «Պահրը Ճէտիտ» նաւով եւ յաջորդաբար նոյնչափ ալ Սինոպ աքսորուած էին. Ասոնց մէջ կը գտնուէր հրապարակազիր եւ յետագային Անգլիոյ դեսպան Ահմէտ Ֆէրիտ պէյ, Րէֆիգ Խալիտ պէյ, Րաֆի Ճէվատ պէյ, Փէհրիվան Գատրի պէյ եւ Հիյմի էֆէնտի:

Վերջապէս այս դէպքը եւ անոր հետեւանքները երկրին մէջ Իթթիհատ եւ Թէրապզըի դէմ խօսելու լեզու չէր ձգած: Վերջապէս հայրենիքին վրայ ինքնիշխան մնացող Իթթիհատ եւ Թէրապզըն, նախապէս նկարագրուածին պէս, Օսմանեան պետութիւնը Գերմանիոյ հաշտոյն ընդհ. պատերազմի մղած էր:

Օսմանեան կառավարութիւնը բառին բուն նշանակութեամբ Գերմաններու ազդեցութեան ենթարկուած էր: Գերմանները քննադատութիւններէ եւ բողոքներէ զերծ մնալու եւ խոչոր շահեր ապահովելու համար իր նստաշրջանին մէջ գտնուող Օսմանեան Երեսփոխանական ժողովրդարձակելով նոր նստաշրջանին բացումն ալ մէկ ամիս լետաձգել տալ յաջողած էր: Առիթէն օգտուելով Սուլթան Մուհամմէտ Րէշատ Ե. ին նախ պատերազմ եւ ապա ձիհատ «Ս. պատերազմ» յայտարարել տուած էին:

Եթէ Երեսփոխանական ժողովրդարձակուէր, կոտորվարութիւնը տակաւին շատորայրուած Գերման-Թուրք զինակցութիւնը առանց Երեսփոխանական ժողովի վտերացման սխալ շղթար ստորագրել եւ Գերմանները սխալ ստիպուէին առաւելագոյն զոհողութիւններ ստանձնել Սակայն Երեսփոխանական ժողովին արձակումը եւ նոր նստաշրջանին մէկ ամսով յետաձգումը՝ Գերմանները այս զոհողութիւններէն փրկած եւ առիթ տուած էր սր իրենց պահանջները դիւրութեամբ ձեռք բերելին:

Կ. Պոլսոյ նաւահանգիստը ռալաստանող «Կոպէն» եւ «Պրեսլաւ» զրահաւորներուն, նոյնիսկ գնման ձեւով, պետութեան կողմէ իւրացուիլը, անոր զինուորական կազմին Օսմանեան կառավարութեան Գատրին մէջ ընդունուիլը՝ կրկին Երեսփոխանական ժողովին հաւանութեան պիտի ենթարկուէր: Մասնաւորապէս Սեւ Մովու մէջ Ռուսական նաւատորմին վրայ կատարուած յարձակումէն եւ Օտեսայի ումրակոծումէն յառաջացած կացութենէն Երեսփոխանական ժողովը տեղեակ պահել եւ պատերազմի յայտարարութեան համար անոր համաձայնութիւնն առնել հարկ պիտի ըլլար, այլապէս Սբ. պատերազմի յայտարարութիւնը թերեւս անկարելի պիտի դառնար: Որչափ ալ Երեսփոխանական ժողովը Խալիֆայութեան կրօնական իրաւասութիւններուն ուղղակի միջամտելու իրաւունքէն զրկուած ըլլար, ամէն պարագայի տակ, իսլամ կրօնապետներու հետ խորհրդակցիլ անհրաժեշտ ըլլալուն, գէթ այս ձեւով Երեսփոխանական ժողովը խնդրէն տեղեակ պիտի ըլլար:

Ահաւասիկ այս եւ ասոր նման խորհրդածութիւններու հիման վրայ, Գերմանները մինչև գործը իրենց ուղածին պէս լրացնելու պահը, Երեսփոխանական ժողովը արձակելու եւ նոր նստաշրջանը մէկ ամսով յետաձգել տալու եւ երեսփոխանները կատարուած իրողութեան մը առջեւ դնելու աշխատած եւ յաջողած էին:

\* \* \*

Յայտարարուած Ս. պատերազմը սպասուած ազդեցութիւնը չէր գործած: Իրականին մէջ կրօնական օրէնքներու տրամադրութեանց վրայ չհիմնուելով յայտարարուած այս Սբ. պատերազմը, իր ազդեցութիւնը չունենալէ զատ միլիոնաւոր իսլամ հպատակ ունեցող մեծ տէրութիւնները Օսմանեան պետութեան դէմ լարած էր:

Մեծ տէրութիւնները, խորհելով թէ Օսմանեան գահը միեւնոյն ժամանակ խալիֆայութիւն ունի եւ յայտարարուած Սբ. պատերազմը կրնար յառաջիկային վատ անդրադարձում ունենալ, սկսած էին կանխարգելիչ միջոցներու դիմել:

Սուլթան Մուհամմէտ Բէչատ Ե. Իթթիհատ եւ Թէրազզըի անդամներէն ըլլալով, Շէյխ Իւլ-Իսլամ Խայրի էֆէնտիին ստորագրած կոչին տակ Սբ. պատերազմը յայտարարել բռնադատուած էր:

Եւսուլդ Սուլթան Սէլիմէն ասդին, Օսմանեան գահուն տրուած Խալիֆայութեան հաւաքամանքը, գոց տուփի

մը մէջ գտնուող բայց ազդեցութիւնը չփորձուած ուղմբի մը նման էր. վտանգաւոր նկատուած ուժ մը. ամէն մարդ, նոյնիսկ Եւրոպական տէրութիւնները, ասոր ուժը եւ ազդեցութեան շրջանակը որոշելու անկարող գտնուած էին:

Յայտարարուած Սբ. պատերազմը կրօնական բնոյթ չունենալուն, չէր կրցած իր ազդեցութիւնը ունենալ ո՛չ միայն իսլամական շրջանակներու, այլ եւ Թուրքիոյ մէջ անգամ լաւ ընդունելութեան չէր արժանացած:

Սուլթան Մուհամմէտ Բէչատ Ե.-ին յայտարարել տուած Սուրբ պատերազմը կրօնական օրէնքներու բոլորովին հակառակ էր. Խալիֆան քանի մը քրիստոնեայ պետութիւններու դէմ Սբ. պատերազմ յայտարարելով, ուրիշ քանի մը քրիստոնեայ պետութիւններու հետ զինակցած, իսլամական աշխարհը այս զինակիցներուն հաշուոյն եւ շահուն ոտքի հանել ուզած էր:

Սբ. պատերազմը կը յայտարարուի այն ժամանակ, երբ իսլամութեան վտանգ մը կը սպառնայ կամ կրօնքի դէմ հալածանք մը կը յայտարարուի: Անոր պաշտպանութեան համար ամբողջ իսլամութեան ոտքի կանգնելէն ուրիշ ճար չի մնար. մինչդեռ յայտարարուած այս Սբ. պատերազմը սոյն հիմունքներուն եւ ո՛չ մէկուն կը պատշաճի, միայն Գերմանիոյ հաշուոյն Իսլամական աշխարհը շարժման մէջ դնելու կրնար ծառայել:

Սուլթան Մուհամմէտ Բէչատ Խան Ե. բնաւորութեամբ հեզ մէկն էր, եւ ոչ մէկը ցաւցնել կ'ուզէր եւ չէր մերժեր. ասելին՝ Իթթիհատ եւ Թէրազլըի ազդեցութեան եւ հեղինակութեան ենթակայ ըլլալով իր կամքին չէր կըրցած տիրանայ. բոլոր այս անցուդարձերն Իթթիհատ եւ Թէրազլըի զեկաւարները՝ իրենց սննդական շահուն ու փառքին, եւ ի խնդիր Գերմանիոյ հաշուոյն կը վարէին:

Այսօր պատմութեան անցած Օսմանեան Գահակալները, պէտք է խոստովանիլ, որ Եզիպատոսի իշխաններու եւ Սուլթաններու ձեռքին մէջ խաղալիք դարձած Խալիֆայութեան կեանք տալով՝ չորս դար շարունակ պատուով պահելու հոգ ատրած էին: Օսմանեան խալիֆաներուն իսլամական աշխարհին մատուցած ծառայութիւնները մեծ եւ անուրանալի են: Բաշխտներուն յաջորդու Ապպասիները, խալիֆայութիւնը Օսմանեան գահակալներու չափ չէին կրցած պահպանել: Այս ճշմարտութիւնը ուրանալ կարելի չէ. պատմութիւնը ասոր վկան է:

Վերջապէս Օսմանեան կառավարութիւնը Գերմանիոյ ճնշումին տակ պատերազմի մտնելէ եւ ճակատներու վրայ

ընդհարումը սկսելէ ետք, Երեսփոխանական ժողովը նիստի հրաւիրուեցաւ:

14 Դեկտեմբեր 1914ին բացուող այս նիստին՝ յանուն թագաւորին Ա. Քարտուղար Ֆուլատ պէյի կողմէն կարգացուած բացման ճառը եւ ժողովին տուած պատասխանը կացութիւնը շատ յստակ կերպով սլատկերացնելուն, նոյնութեամբ կ'արձանագրենք յանուն թագաւորին կարգացուած բացման ճառը.—

«Յարգելի ծերակուտականներ եւ երեսփոխաններ,

«Գ. ընտրութեամբ անցեալ Նոյեմբերին սկիզբին գումարուելիք Ազգ. ժողովին ամիս մը յետաձգումէն յետոյ, առաջին նստաշրջանը բանալ յաջողելու համար Ալլահին փառք կը մատուցանեմ եւ Ձեզի բարի գալուստ կը մաղթեմ:

«Պետութեանց հետ մեր յարաբերութիւններուն յաճախակի յոռի ազդեցութիւն տուող առկախ խնդիրները լուծելով, արտաքին հոգ եւ դժուարութիւններու ծագումը փարատելով, մեր ներքին բարեկարգութեան եւ յառաջդիմութեան նուիրուիլ եւ այսպէսով Պալքանեան պատերազմին յառաջացուցած չարիքները դարմանելու ձգտած ժամանակնիս Եւրոպայի մէջ ընդհանուր խաղաղութիւնը լայն կերպով խախտեցաւ. Այս խառնակ վիճակին մէջ մեր քաղաքական շահերու պաշտպանութիւնը ամէն բանէ վեր դասելով, հրամայեցի որ չէզոքութիւն յայտարարելով հանդերձ մեր ցամաքային եւ ծովային ուժերը զինեալ վիճակի մէջ դրուին:

«Երբ մեր կառավարութիւնը իր որոշած զինեալ չէզոքութիւնը պահել վճռած էր, Սեւ Մոսկու մեր տարմիզը Ռուսական տորմիդէն յարձակման ենթարկուած եւ Ռուսիա, Անգլիա եւ Ֆրանսա մեր սահմաններուն վրայ զինուոր ու զրահաւորներ զրկելով զործնականապէս թշնամութեան սկսած ըլլալուն, Աստուծոյ մեծութեամբ եւ Մարգարէին բարեխօսութեան ապաւինելով, յիշեալ տէրութեանց դէմ պատերազմ յայտարարած եւ սահմանի մեր բանակներուն շարժման հրաման տուած եմ:

«Ռուսիոյ, Ֆրանսայի եւ Անգլիոյ սկիզբէն ի վեր իւրամական աշխարհի դէմ գործ դրած բնաջնջման քաղաքականութիւնը զէնքի ուժով բառնալ մեր կրօնական պարտականութիւնը նկատելով՝ յայտարարուած կոչին համաձայն ամբողջ իսլամութիւնը՝ ասոնց եւ անոնց օժանդակ պետութիւններու դէմ Սբ. սլատերազմի հրաւիրեցի:

«Բանակներու սահմաններու վրայ եւ տորմիզիս Սեւ

Ծովու մէջ ցոյց տուած քաջագործութիւնը մեր պատմութեան ամենէն փայլուն մէկ էջը պիտի գրաւէ: Ընդհանուր զօրաշարժի հրամանիս հանդէպ համակերպութիւնը եւ զինուորական պիտոյքներու հայթայթման ընթացքին տարուած գերմարդկային աշխատանքը, ազգին՝ հայրենիքի պաշտպանութեան համար անձնազոհութիւնը, անոր ճշմարիտ հայրենասիրութիւնը փաստած եւ այս ճշմարիտ հայրենասիրութիւնը մեր կողմէ խորապէս գնահատուած է:

«Կը յուսամ որ Ազգային ժողովն ալ այս մասին միութեան նոյն փաստերը պիտի տայ եւ կը սպասեմ որ պատերազմական պիւտճէն եւ այլ խնդիրները շուտով քննուին ու վաւերացուին:

«Վստահ եմ, որ մեր մեծ զինակիցներուն Գերմանիոյ, Աւստրիա եւ Հունգարիոյ բանակներուն մեր հասարակաց թշնամիներուն դէմ, Եւրոպայի մէջ տարած յաջորդական յաղթանակներուն վրայ պիտի աւելնան նաեւ մեր ցամաքային ու ծովային ուժերու եւ թշնամի տէրութեանց դէմ Սր. պատերազմի հրաւիրուող իսլամ պատերազմիկներուն փայլուն յաղթանակները Ասիոյ եւ Ափրիկէի մէջ, եւ անկէ վերջ իրաւունքի եւ արդարութեան համար զէնք բարձրացնող մեր կառավարութեան եւ աշխարհի չորս ծագերուն մէջ գտնուող իսլամներուն համար փայլուն ապագայ մը պիտի ապահովուի:

«Մեր կառավարութեան ժամանակին օտարներու տրուած առանձնաշնորհումները իրենց ձեւը եւ նպատակը փոխելով՝ մեր թագաւորական իրաւասութիւնները կաշկանդած եւ վտանգաւոր հանգամանք մը առած էին, ուրեմն միջազգային եւ ոչ մէկ օրէնքներու յարմարող եւ Գաբրիթիւլասիոն յորջորջուող այս օտարականներու առանձնաշնորհումները ջնջել հրամայած, եւ ինչպէս ուրիշ օտար երկիրներու, իմ երկրիս մէջ ալ օտարներու եւ ասոնց վերարեւել խնդիրներու միջազգային օրէնքներու համաձայն լուծելու ձեւը յարմար տեսած եմ:

«Գոհութեամբ կը յայտարարեմ, որ ընդհ. պատերազմի չմասնակցող մեծ ու փոքր տէրութիւններու, մասնաւորապէս մեր դրացի Պուլկարիոյ հետ մեր քաղաքական յարաբերութիւնները ըստ առաջնոյն անկեղծ են եւ բարեկամական:

«Կը խնդրեմ, որ Ձեր պետութեան եւ հայրենիքին պաշտպանութեան՝ համար թափելիք ջանքերը յաջողութեամբ պսակուին: Ժողովը բացուած կը յայտարարեմ»:

Դիտելի է որ յանուն թագաւորին կարգացուած սոյն բացման ճառը, սահմանադրական կառավարութեան մը պահակալէն աւելի ինքնակալ թագաւորի մը վայել ոճով դրուած է:

Երեսփոխանական ժողովին պատասխան ճառը Գահակալին. —

«Նորին Կայսերական Վեհափառութիւն,

«Երեսփոխանական ժողովիս ամիս մը յետաձգումէն ետք, Աստուծոյ օգնութեամբ իր առաջին նստաշրջանը բացուած յայտարարելնուղ համար Ձերդ վեհափառութեան կը ներկայացնէ իր շնորհակալութիւններն ու շնորհաւորութիւնները:

«Յիշելն անգամ մեր սիրտերը մորմոքող Պալքանեան աղէտին դարձանման համար մեր ներքին բարեկարգութեան ու յառաջդիմութեան նուիրուած պահուն՝ Եւրոպայի մէջ պայթած բնդհ. պատերազմին վրայ Ձերդ բարձրութեան, ընդմիջոտ եւ առանց պատճառի ու իրաւունքի բռնարարման ենթարկուող Օսմանեան իսլամական իրաւունքի եւ շահերու պաշտպանութեան համար իր բոլոր ցամաքային եւ ծովային ուժերը շարժման մէջ դնելը պարտականութիւն էր. այս պարտականութեան ճիշդ ժամանակին կատարումը, Ձեր վեհափառութեան արթնամտութիւններէն մէկը կը ամարուի:

«Օսմանեան կառավարութիւնը շէզոքութիւն պահել ու խտած էր. սակայն սկիզբէն ի վեր իսլամութեան եւ Օսմանեան կայսրութեան հակառակ քաղաքականութիւն հետապնդող Ռուսական, Ֆրանսական եւ Անգլիական կառավարութիւններուն գործնականապէս թշնամութեանց սկսիլը, մեզ պատերազմի բարոյական պատասխանատուութիւնէն փրկած է. ուրեմն այս պարագան պէտք է ընդունինք Աստուծոյ բարձրագոյն մէկ շնորհքը: Իսլամութեան թըշնամիներուն Ձեր գահուն վրայ յարձակած մէկ պահուն, աշխարհի վրայ գտնուող ամբողջ իսլամութեան Ձեր կողմէ Սր. պատերազմի հրաւիրուիլը, Ձեր բարձր խալիֆայութեան իրաւունքը եւ թէ կրօնական պարտականութիւնն էր. եւ այս Ձեր գահուն փառք ու պատիւ կը բերէ:

«Իսլամներու համար Սր. պատերազմը քաղաքներ գրաւելու եւ քանդելու, ժողովուրդներ բնաջնջելու համար չէ. միայն իրաւունքի պաշտպանութեան նուիրուած պարտականութիւն մըն է. եւ քանի որ երկրապունդին վրայ հարիւր միլիոններով իսլամ զոյութիւն ունի, իսլամական

բարձր իշխանութիւն մըն ալ դոյութեան իրաւունք ունի-  
 նե այս իրաւունքին պաշտպանութիւնը ամենէն առաջ Օս-  
 մանցիներուն պարտականութիւնն է. ուրեմն յանուն իս-  
 լամութեան պատուոյն Ձեր գահուն եւ մեր Ս. հայրենիքին  
 պաշտպանութեան համար բոլոր ազգը զոհուելու պատ-  
 րաստ է, եւ այս կը փաստուի բոլոր ժողովուրդին Ձեր  
 ընդհ. զօրաշարժի կոչին սիրով ընդառաջելովը:

«Ահա այս արդար դատը պաշտպանելու եւ իրենց կը-  
 րօնական պարտականութիւնը կատարելու պատրաստ եւ  
 միայն Ձեր բարձր հրամանին սպասող երեք հարիւր միլիոն  
 իսլամներ, իսլամութեան թշնամի վերոյիշեալ պետու-  
 թեանց եւ անոնց ղինակիցներուն ղէմ շարժելու համար ի-  
 րենց արամաղրութիւնը կը յայտնեն:

«Մեր ծովային եւ ցամաքային բանակներուն թշնա-  
 միներուն ղէմ ցոյց տուած քաջազորութիւնները այս պա-  
 հուն՝ իրենց նախնիքներէն ժառանգած հերոսութիւնը փայ-  
 յուն կերպով կ'ապացուցանեն. Ազգ. ժողովն ալ նոյն պզ-  
 ցումով առաջնորդուած իր պարտականութիւնները լրիւ  
 կատարելու պիտի ձգտի.

«Ապահով ենք, որ արդար դատին պաշտպանութեան  
 համար ղէնքի ղիմոց Օսմանեան կատաւարութիւնը եւ Սր.  
 պատերազմի կոչին անսացող իսլամութիւնը եւ մեր մեծ  
 ղինակիցները Գերմանիա եւ Աստրո-Հունգարիա Աստու-  
 ծոյ օգնութեամբ ի վերջոյ յաղթանակը պիտի տանին:

«Ոչ մէկ իրաւական հիմ անկող օտարներու ստանձ-  
 նաշնորհումներուն ջնջամբ մեր հայրենիքին եւ պետու-  
 թեան համար ամենամեծ յաջողութիւնն է:

«Մեր պետութեան հանգչոյ բարեկամական յարաբե-  
 րութիւն մշակող մեծ ու փոքր աէրութիւններու, մտանա-  
 տրապէս մեր ղրացի Պալկարիոյ հանգչոյ նոյն բարեկա-  
 մութեան ոգին ցոյց տալ ժողովին ամենաջերմ փափաքն է

«Ամէն պարապալի տակ, Աստուծոյ օգնութեան եւ  
 Մարգարէին բարեխօսութեան ապաւինող ժողովս յարա-  
 բարտած Ս. պատերազմը իւրացնելով կը մայթէ որ ան  
 յաջողութեամբ պսակուի»

\* \* \*

Պատերազմը սաստկացած էր, եւ Անգլիա ու Իրանսա  
 իրենց ղաշնակցին՝ Ռուսիոյ ղինամիներք հասցնելու հա-  
 մար երկու անգամ 18 Մարտ եւ 12 Ապրիլ 1915-ին, իրենց  
 ղրահատորները Չանսոյ Գալէէն անոյնելու եւ նեղուցներու  
 աղաս անցքը ապահովելու ձեռնարկած եւ քանի մը կարե-  
 տոր նաւեր ղոհնէլէ ետք անյաջող ղուրս եկած էին

Համաձայնական տէրութիւններէն՝ Անգլիոյ եւ Ֆրանսայի զրահաւորներուն Չանագ Գալէի մէջ կրած անյաջողութեան վրայ՝ Պոլսոյ եւ բոլոր Օսմանեան երկիրներու մէջ խրախճանք կատարուած եւ Սուլթան Մուհամմէտ Բէշատ Ե․ին ալ «Ղազի» պատուանունը տրուած եւ այս առթիւ առաջին գոհարանական աղօթքը կարդացուած էր 30 Ապրիլ 1915-ին, Ուրբաթ օր, Այա Սօֆիա մզկիթին մէջ՝ Թագաւորին ներկայութեան:

Այս միջոցին Իտալիա ալ իր երեսուն տարուան զինակիցները լքելով համաձայնականներուն յարած եւ 23 Մայիս 1915-ին Աւստրո-Հունգարիոյ եւ 24 Օգոստոսին ալ Օսմանեան պետութեան դէմ պատերազմ յայտարարած էր: Պուլկարիա ալ 14 Հոկտեմբեր 1915-ին Գերմանիոյ զինակցութեան մէջ մտնելով Սերպիոյ վրայ քալած էր, իսկ Հոկտեմբեր 16-ին՝ Ռուսիա, Ֆրանսա եւ Անգլիա Պուլկարիոյ դէմ պատերազմ յայտարարած էին:

Պատերազմը 1915-ին սաստկացած՝ բոլոր ճակատներու վրայ դժոխային կրակ կը տեղար: Ի՞նչ էր ուզուածը: Ինչո՞ւ համար էր այս, ոչ ոք գիտէր. ո՞ր արդար դատի պաշտպանութեան, ո՞ր մարդասիրական նպատակի համար միլիոններով ժողովուրդներու, ան ալ «քաղաքակիրթ» նկատուած Եւրոպայի ժողովուրդներուն արիւնը կը հոսէր, գիւղեր, քաղաքներ կը բնաջնջուէին. ասիկա ոչ ոք կրնար ճշդել: Աւստրո-Հունգարիոյ գահաժառանգ Արհիդուքս Ֆերտինանտ սպաննուած էր. արդեօք Եւրոպայի շարժումը եւ ամբողջ աշխարհի այս շարժման մասնակցութիւնը իրապէս Արհիդուքս Ֆերտինանտի՞ համար էր. սպաննուած Արհիդուքսերու յուղարկաւորութիւնը այսպէ՞ս կը կատարուէր, միլիարներով ումբ, միլիարներով թորփի՞լ պայթեցնելով...:

Արհիդուքսը մեռաւ կամ սպաննուեցաւ եւ այս աղէտը անոր համար ծագեցաւ: Արդեօք կարելի՞ է հարցում ուղղել. պատերազմէն յետոյ Աւստրո-Հունգարիոյ կայսրութիւնը ի՞նչ եղաւ. Արհիդուքսին պատկանած Հապսպուրկեան գերդաստանը ո՞ւր մնաց. արդեօք ասո՞նք ալ Արհիդուքսին համար սպաննուեցան...:

Ա՛հ, Սիոնիստները, Սողոմոնի շար ոգիներուն նման առանց շօշափելու, առանց տեսնուելու մարդկութեան կեանքի երակները ծծեցին, գանձեր դիզեցին: Իսրայէլի ժողովուրդը առանց զոհողութեան, եւ առանց Հրեայի քիթը արիւնելու, նպատակին հասնելու համար աշխարհի բրնակչութիւնը իրարու դէմ պատերազմի մղեց:



\* \* \*

Սիրոնական միութիւնը, այսօր աշխարհի վրայ ամենէն սոսկալի եւ ամենէն լայն կազմակերպութիւնն ունեցող յեղափոխական կուսակցութիւնն է: Սոյն կուսակցութիւնը Քրիստոսի 135 թուականին Սիրոնի մէջ կազմուած էր. նրա պատակը՝ Սողոմոնի փլած գահը վերականգնել եւ ամբողջ աշխարհը տնտեսական պերութեան սակ առնել էր:

Սիրոնական միութիւնը, ամէն բանէ առաջ աշխարհի տնտեսութեան իշխելու աշխատեցաւ եւ յաջողեցաւ. այսօր ամենակարեւոր դրամատուներ, երկաթուղիներ, հարուստ հանքեր եւ սակարաններ անոր ձեռքը կը դնուին:

Սիրոնական միութիւնը, աշխարհի տէրութիւններուն հետ ալ ուզածնին պէս խաղալու եւ իր շահուն համաձայն անոնց վարչաձևերը կարենալ փոխելու համար ամենակարեւոր թերթերը իրեն ենթարկեց, բաժանորդներու, անթիւ հեռագրի կայաններուն եւ Մասոնական լոժերուն ալ տիրացաւ:

Սիրոնական միութիւնը, Սողոմոնի փլած գահը վերականգնելու համար, հետեւեալ նպատակակէտը կը հետապնդէր.

«Ամէն բանէ առաջ աշխարհի վրայ գտնուող ոսկիները ժողվել, ասոր ուժով եւ թերթերու միջոցաւ հանրային կարծիքին աիրել եւ աշխպէսով ալ տէրութիւններու իշխել»:

Այս տեսութիւնը միայն ընկերվարական տէրութիւններու վրայ իրապօրծել կարելի ըլլալուն, ամէն բանէ առաջ աշխարհի բոլոր պետութիւնները ընկերվարական վարչաձևի մը վերածելու կ'աշխատէին:

Այս նպատակին հասնելու համար էր, որ Հրեայ կարլ Մարքս Սոցիալիզմի տեսութիւնը եւ նոյնպէս Հրեայ Իսինող կրօնական միութեան փիլիսոփայութիւնը մէջտեղ դրնելով, բոլոր խաւերու մէջ կրօնական եւ հաւաքական յաշրջման եւ յեղափոխութեան զգացումը արթնցունէին:

Սիրոնական միութիւնը 1897-ին Պալի մէջ կազմակերպած մեծ համագումարով հրէական յաղթանակին ընդհանուր գիծերը գծեց եւ 24 փրոթոգոյներով անոր գործադրութիւնը որոշելով, առ այդ բոլոր հրեաներուն հրահանգ տուաւ:

Այս փրոթոգոյներով իրագործուած եւ տակաւին իրագործելի նպատակներ, ձեռք առնուելիք միջոցներ, կատարուելիք քաղաքական դաւեր ճշդուած եւ յատակագիծերը պատրաստուած էին եւ այս յատակագիծերուն ցոյց

տուած վերջին կայաններն ալ նետերով նշանակուած էին. այս կայանները Մոսկուա, Քիէվ, Օտևսա և Պոլիս էին, և ամենավերջինը՝ Երուսաղէմ:

Սիոնիստները իրենց նպատակին առջև ցցուած արգելքները՝ առաջին առթիւ դրամական կաշառքով և իտալաղ միջոցներով բառնալ կ'աշխատին, երբ այս միջոցը անոր ըլլայ, նոյնպէս դրամի ուժով ամէն տեսակ միջոցներու գիմել օրինական կը համարեն, և ատոր դիմադրոյ արգելքները կը տապալեն:

Սիոնիստներու մինչև այսօր քանդած պետութիւնները, մարած օճախները, տապալած գահերը անթիւ, և ասոնց կազմակերպած արիւնոտ յեղափոխութիւնները անհամար են:

Վերջին տարիներուն՝ անոնք Ռուսիոյ եւ Օսմանեան կայսրութեան աչք տնկեցին և երկուքն ալ տապալեցին:

Ռուսիոյ մէջ Սիոնիստներու արիւնոտ վրէժը, քաղաքականութիւնը և հրէական համայնավար վարչաձեւին վայրագութիւնները մեր նիւթէն դուրս են. միայն Սիոնիստներու Օսմանեան կայսրութեան հանդէպ անուցած տետելութեան պատճառները պարզելով պիտի բաւականանամ:

Սիոնիստները, Պաղեստինի մէջ անկախ հրէական օճախ մը կազմել կը փափաքէին և ատոր համար Սուլթան Ապտիւլ Համիտի հաւանութիւնը խնդրած և այս նպատակին հասնելու համար նախապէս խաղաղ միջոցներու, դրամական ուժին դիմած էին. և 1901-ին, հանգուցեալ Սուլթան Ապտիւլ Համիտին դիմելով գործի ձեռնարկած և էմմանուէլ Գարասու անունով փաստարան մը Պոլիս զրկած էին:

Էմմանուէլ Գարասու Մասոնական յոժին պատկանող պալատական Արիֆ և Հասիպ պէյերու միջնորդութեամբ՝ 17 Սեպտեմբեր 1901ին յաջողած էր Չիթլիի ապարանքին մէջ Սուլթան Համիտին ներկայանալ և հետեւեալ ճառը արտասանելով Սիոնական միութեան խնդրագիրը անձամբ ներկայացնել:

---

Ծ շ. Պատմական փաստ մը հանդիսացող այս նախն ընդօրինակութիւնը հանգուցեալ Սուլթան Համիտի պալատական գորավարներէն մէկը ինծի տուած և առանց անունը յիշելու հրատարակել արտօնած է:

Արտասանուած նառը նոյնութեամբ.—

«Վեհափառ տէր Թագաւոր,

«Ձեր վեհափառութեան ծանօթ է, որ Հրեայ ժողովուրդը զանազան երկիրներու մէջ ցիր ու ցան կ'ապրի: Սպանիոյ հաւատաքննական հալածանքներուն շկարենայ դիմացողներ, Ձեր բարձր հովանաւորութեան ապաստանեցան: Լաւ ընդունելութիւն գտնելով երջանկացած եւ առեւտրական ու տնտեսական մարզերու մէջ ծառայութիւններ մատուցած են: Օսմանեան պետութիւնը Եւրոպական պետութիւններու հետ բաղդատած տնտեսապէս յետամնաց ըլլալով, այս հաւատարիմ ժողովուրդը այդ թերին դարմանած է եւ ասոր իրր վարձատրութիւն, Ձեր կայսերական բարձրութիւնը, անոնց հանդէպ շատ բարեացակամ կը դանուի:

«Նորին վեհափառութիւն, Ռուսիոյ մէջ բնակող քանի մը միլիոն հրեաներու ենթարկուած հալածանքը անտանելի է. ասոնց ազատագրումը եւ համասեղ ընակեցումը հրէական միութեան ջերմ փափաքն է: Քրիստոսի 135 թրւակսնին Սիոնի մէջ կազմուած սիոնական միութիւնը այժմ պաշտօն տուած է ինծի սոյն խնդրագիրը յոտս Ձերդ վեհափառութեան ներկայացնելու (այս միջոցին խնդրագիրը կը ներկայացնէ): Ինչպէս որ սոյն խնդրագիրին կցուած քարտէսէն կը հասկցուի, Եաֆայի հիւսիսէն անցնող գիծ մը Թապարիոյ լիճին Արեւելքը կտրելով, Ղազայի հարաւէն ծովուն կը յանգի: Այս գծին մէջ գտնուած փոքր հողամասը Հրեայ ժողովուրդին յատկացնելով տեղական ինքնավարութիւն շնորհել կը խնդրեն: (1) Ասոր փոխարէն Սիոնական միութիւնը անցեալ Յունական պատերազմէն սկարացած պետական գանձին, առանց տոկոսի եւ պայմանաժամի եւ Ձեր ուզած պահուն վճարելու պայմաններով՝ 20 միլիոն ոսկի փոխատուութիւն ընել եւ Ձեր անձնական գանձին ալ 5 միլիոն ոսկի նուիրել յանձն կ'առնէ եւ այս խնդրագրին Ձեր բարձր շնորհքին արժանանալը խոնարհարար կը խնդրէ»:

Ծ շեղ (1) Նախապէս Պաղեստին անունը միայն Ղազայի եւ Եաֆայի, այսինքն Քանանու երկրին հարաւը եւ Ս երկրին արեւմուտքը ծովեզերեայ հողամասին տրուած էր

Սակայն վերջերս հրեական ծնունդ ըլլալով Պաղեստին անունը, Գամասկոսի ամբողջ հարաւակողմը, մէջն առնելով Փիւնիլիի հարաւին մէկ մասը եւ ամբողջ Ս երկիրը, Մեռեալ ծովու հովիտը ընդգրկած էր այս բաժանումով Պաղեստինի տարածութիւնը 30 հազար քառ. ֆիլոմետր էր

Սուլթան Ապտիւլ Համիտ հրեաներու այս ասաջարկէն վերջին ծայր զայրացած, էմմանուէլ Գարասուն իր ներկայութենէն վռնտած եւ Արիֆ պէյն ալ խիստ կերպով յանդիմանած էր: Իսկ Արիֆ պէյ թաղաւորին բարկութենէն սարսափած նոյն իրիկունն իսկ Եւրոպա փախուստ տուած էր:

Հոս հարց կը ծագի, թէ Սուլթան Ապտիւլ Համիտ եթէ պիտոնար, որ հրեաներու ազդեցութեամբ Օսմանեան պետութիւնը վերջ ի վերջոյ պիտի կործանի, արդեօք նոյն կորովն ու համարձակութիւնը ցոյց պիտի տա՞ր:

Տարօրինակ ճակատադիր... Սուլթան Ապտիւլ Համիտին զահազրկումը հայորդոյ պատուիրակութեան մէջ Սելանիկի երեսփոխանի հանգամանքով կը գտնուէր նաեւ էմմանուէլ Գարասու:

\* \* \*

Սրտնական միութիւնը երբ դրամի ուժով չյաջողեցաւ Պաղեստինի անկախութիւնը ստանալ, ներքին յեղափոխութիւնները ծրագրեց: Այդ թուականին Աւստրիոյ արտաքին նախարար հրեայ պարոն Էրէնթալի հետ համաձայնելով Մակեդոնիոյ մէջ մեծ յեղափոխութեան մը կազմակերպութեան ձեռնարկեց եւ Մակեդոնական յեղափոխական կուսակցութեան դործիչներէն Սանտանաքին Իսկուպ հրաւիրելով հետեւեալ փրոթոգոյր ստորագրեց:

### ՓՐՈԹՈԳՈՂԻ ՊԱՏՃԷՆ

Ա.— Վիւէի մէջ գտնուած եւ Սանտանաքիի ղեկավարած յեղափոխական կուսակցութիւնը յետ այսու ո՛չ Ռուսիան եւ ո՛չ Պուլկարիան պիտի ճանչնայ եւ միայն Աւստրիոյ հրահանգին համաձայն պիտի գործէ:

Բ.— 1902ին Մակեդոնիոյ մէջ յեղափոխութիւնը պիտի սկսի եւ այս յեղափոխութեան կազմակերպութեան համար Սանտանաքիին երեսուն հազար ոսկի կանխավճար մը պիտի տրուի:

Գ.— Մակեդոնիոյ Աւստրիական բոլոր հիւպատոսարաններն ու պաշտօնէութիւնը սոյն կուսակցութեան պիտի օժանդակեն. զէնք, սազմամթերք եւ հաց հայթայթելով եւ յեղափոխականները Օսմանեան կառավարութեան հետապնդումներուն դէմ պիտի պաշտպանեն:

Դ.— Մակեդոնիոյ ապագայ իշխանը Վիւէի մէջ Սանտանաքին է:

ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ  
 ՄԱՐԿՈՍ ԿՈՄԻՏԵ

Երևանի քաղաքի քաղաքապետարանի  
 Կենտրոնական օրհանգրվանի Կոմիտեի  
 Կենտրոնական օրհանգրվանի Կոմիտեի  
 Կենտրոնական օրհանգրվանի Կոմիտեի

ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ  
 ՄԱՐԿՈՍ ԿՈՄԻՏԵ

Երևանի քաղաքի քաղաքապետարանի  
 Կենտրոնական օրհանգրվանի Կոմիտեի  
 Կենտրոնական օրհանգրվանի Կոմիտեի  
 Կենտրոնական օրհանգրվանի Կոմիտեի

ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Երկու ծածկագիր հեռագիրներ՝ Թալաաթի կողմէ դրկուած

Թէ այս դադանի Փրոթոպոլը ի՞նչպէս ձեռք բերուած է, այս կէտը պարզել կարեւոր կը նկատենք, որովհետեւ իրականութիւնը ի յայտ պիտի գայ:

Սանտանաքի Իսկուպ Տրախրուելոյ լուսանկարիչ Փոպոֆ անուն մէկու մը տունը հիւրասիրուած էր: Փոպոֆ՝ Մակեդոնիոյ Պուլկար յեղափոխական կուսակցութեան Կեզր. Վարչութեան անդամներէն եւ Սանտանաքի կուսակից ըլլալուն, Սանտանաքի սոյն փրոթոպոլը Փոպոֆին ցոյց տալու մէջ անպատեհութիւն մը չէր տեսած: Փոպոֆ սոյն փրոթոպոլը Պուլկարիոյ շահերուն հակառակ գտնելուն, անմիջապէս մէկ պատճէնը Պուլկարիոյ Կեզր. կուսակցութեան զրկած եւ մէկ պատճէնն ալ սահմանապահ ուժերու քննիչ կայսերական թիկնապահներէն Բ. փաշային ծախած եւ այս կերպով տակաւին յեղափոխութիւնը չծագած, թէ՛ Սուլթան Ապաիւլ Համիտ եւ թէ՛ Պուլկարիոյ իշխան Ֆերտիհանա՝ խնդրէն տեղեակ էին:

Արդարեւ, 1902 թուին, դարնան առաջին օրերուն, Մակեդոնիոյ մէջ մեծ յեղափոխութիւն մը ծագած եւ Սանտանաքի խումբերը պործի անցած էին: Միայն թէ կառավարութիւնը ժամանակին խնդրէն տեղեակ ըլլալուն, Գ. րանակը զօրացուած եւ այս մեծ յեղափոխութիւնը շուտով զսպում էր եւ երոտական տէրութեանց, մասնաւորապէս Աւստրիոյ զինուորական միջամտութեան առիթ չէր տուած:

\* \* \*

Սիոն միութիւնը՝ Մակեդոնիոյ 1902ի յեղափոխութենէն ակնկալուած արդիւնքը չկարենալով ձեռք ձգել, Բումէլիի մէջ գտնուող Գ. րանակը կառավարութեան դէմ ըմբոստացնել ծրարած եւ այս ծրագրին գործադրութիւնը կամանուէլ Գարասուին յանձնելով՝ Սելանիկի մէջ՝ Վիեննական գրամատան մօտ, անոր անուան մեծ վարկ մը բացած էր:

Սիոնականները Գ. րանակի երկրորդական աստիճանի սպանները համոզելով՝ ասոնց վարչութեան տակ յեղափոխական կուսակցութիւն մը պիտի հիմնէին: Երբ այս կուսակցութիւնը ըստ բաւականին զօրանար, սահմանադրական վարչաձև մը պահանջելու պատրուակին տակ, Գ. րանակը Պուլսոյ եւ կեդրոնական կառավարութեան դէմ պիտի ըմբոստանար: Սուլթան Ապաիւլ Համիտ եւ պալատական բարձրաստիճան անձնաւորութիւններ՝ բնական է այս ըմբոստութիւնը զսպելու համար՝ Անատոլուէն զինուորական ուժ պիտի փոխադրէին եւ այս ձեւով Բումէլիի մէջ երբ թրքական ուժերը դիրար բզբտէին, Աւստրիա միջամ-

տելով իր բանակը մինչև Աելանիկ պիտի քշէր եւ Օսմանեան կառավարութիւնը պիտի ստիպէր, որ Ռուսիին պարպէ: Հաւատակ պարապոյսին, երբ Սուլթան Ապտիւլ Համիտ զինուորական ուժ չփոխադրէր եւ յեղափոխութիւնը մարելու համար Սահմանադրութիւն հռչակէր, ծերակուտական եւ երեսփոխանական ընտրութեանց միջոցին սոյն կուսակցութեան անդամներուն ցանկին վրայ պիտի կեդրոնանային եւ մեծամասնութիւնը ապահովելէ ետք ասոնց միջոցաւ կառավարութեան բոլոր պաշտօնատուներու վրայ պիտի իջիւէին:

Էմմանուէլ Գարասու կարճ ժամանակի ընթացքին դրամի ուժով Գ. բանակի շատ մը սպաները կրցած էր համոզել եւ ասոնց կեդրոնը Աելանիկ բլրալան՝ յաջողած էր Իթթիհատ եւ Թէրապըր անստով յեղափոխական կուսակցութիւն մը հիմնել եւ Մանասթրի, Իսկուպի եւ Շիրուրայի մէջ ալ մասնաճիւղեր բանալ:

Աելանիկի կեդրոնական մարմնի անդամներն էին՝ Էմմանուէլ Գարասու, կրօնափոխ եւ առեւարական վարժարանի ուսուցիչներէն Մուհամմէտ Ճաւիտ, փոսթ-հեռադրատան Ա. քարտուպար Թալասթ, Սիրուսի Միտհատ Շիքերի, Աելանիկցի Հրֆզի, Աելանիկցի Րահմի, փաստարան Մանևասի Չատէ Րէֆիզ, Նիկաէցի Ղալիպ, ելեւմտական պաշտօնեայ Ֆատրի, ուսուցիչ Իսմայիլ Մահէր, Հաֆրզ Սիւլէյման. Գ. բանակի սպայակոյսի անդամներէն հազարապետ Իսմայիլ Հապըր, հազարապետ Ճէմալ, հարիւրապետ Էնվէր, Մուսթաֆա Քէմալ եւ Ֆէթհի:

Մանասթրի կեդրոնական մարմնի անդամներն էին՝ հեծելազօրքի տեղակալ Սատրղ, հազարապետ Սալահէտտին, հարիւրապետ Հասան Թոսուն, թնդանօթաձիգ հարիւրապետ Չիա, հարիւրապետ Վէհիպ, հարիւրապետ կրօնափոխ Րէմզի, թնդանօթաձիգ հարիւրապետ Հապիպ:

Իսկուպի կեդրոնական մարմնի անդամներն էին՝ ոստիկան զօրաց հրամանատար Ղալիպ, հարիւրապետ Էմին, հեծելազօրքի հազարապետ Նազմի, հետեւակ զօրաց հազարապետ Վասֆի, հարիւրապետ Ճաֆեր Թայյար, փոսթի անօրէն Սատրղ, բարձրագոյն գատարանի Ա. քարտուղար Սիւրէյեա Աքիֆ, Իսկուպի ոստիկանական տնօրէն Էօմէր Միւսթազ:

\* \* \*

Սուլթան Ապտիւլ Համիտ սոյն կազմակերպութենէն տեղեակ էր: Եանեացի Էսատ փաշա տեղեկացուցած էր, թէ Էմմանուէլ Գարասու Աելանիկ պահուրտած է, թէ Գ.

բանակի սպաներէն մեծ մասը համոզելով Օսմանեան կառավարութեան դէմ յեղափոխական կուսակցութիւն մը հիմնած է:

Սուլթան Ապտիւլ Համիտ, էսատ փաշայի տուած տեղեկութիւններուն հիման վրայ քննիչ յանձնախումբ մը նշանակած էր, որոնք կը բաղկանային հետեւեալներէ. նախագահ՝ Բումէլիի ընդհ. քննիչ Հիւսէյին Հիլմի փաշա, անդամներ՝ Գ. բանակի հրամանատար էսատ փաշա, զօրավար Շիւքրի, զօրավար Իսմայիլ Մահէր, զօրավար Սատրգ, զօրավար Բէճէպ փաշա եւ տեղակալ Ֆէհմի պէյ:

Սոյն յանձնախումբը խնդիրը լրջօրէն քննելէ ետք, կուսակցութեան պատկանող սպաներուն անունները նշանակած եւ ըստ ժամանակի սովորութեան՝ ասոնց մասին ըլլալիք կարգադրութեան համար Կեդրոնէն հրահանգ ուղած էր: Պոլսէն եկած հրահանգին համաձայն Գ. բանակի սպայակոյտի պետ Գոլոնեայի Ալի փաշա եւ թնդանօթածիք զօրավար Պաղտատցի Հասան Բիզա Պոլիս զրկուած էին. եւ ապա Սալահէտտին, Հասան Թոսուն, Իսմայիլ Հապըր եւ էնվէրն ալ պահանջուած էին: Հիւսէյին Հիլմի փաշա խնդիրը իր պատկանած Մասոնական լոժին տեղեկացուցած էր: Երբ խնդիրը կուսակցութեան սեփականութիւնը դարձաւ, ասոնք լեռ բարձրանալով ապստամբութեան դրօշ պարզած էին, հարիւրապետ Նիազի պէյ ալ Բէսնէի վաշտէն փախստական կարգ մը զինուորներ համոզելով, ապստամբներուն միացած էր:

Մանասթրի Կեդր. Մարմինը Շէմսի փաշայի սպանութեան համար տեղակալ Աթըպ պէյին պաշտօն տուած էր եւ Շէմսի փաշա հեռագրատունէն ելլելով կառք հեծնելու պահուն սպաննուած էր:

Սոյն դէպքերը չափազանցուած կերպով Պոլիս արձագանգ գտնելով՝ թագաւորը և պալատականները միջոց մը չէին կրցած խորհիլ առաջքը առնելու համար:

Կանոնաւոր տեղեկատուութեան բաժիններու եւ աշխարհի բոլոր մասերուն մէջ կարեւոր թերթերու տիրացող Սիոն միութիւնը պալատին այս վիճակէն օգտուելով եւ խնդիրը չափազանցելով բրտականտ կը մղէր գրել տալով, թէ ամբողջ բանակը Սուլթան Ապտիւլ Համիտի կառավարութեան դէմ ըմբոստացած եւ Սահմանադրական վարչաձեւ կը պահանջէ, թէ ըմբոստութիւնը Օսմանցիներու սիրտէն բզխած է: Սուլթան Համիտի եւ արբանեակներուն հասցէին ալ անարգական խօսքեր պակաս չէին:

Այս միջոցին Սիրոտի մէջ ալ կարգ մը Մակեդոնա-



ցիներու սահմանադրութեան հռչակումը պահանջող հեռագիրներ ստորագրել տրուած էր: Կառավարիչ Րէշիտ փաշան ալ կը գրէր. «Եթէ անմիջապէս սահմանադրութիւն չի հռչակուի, բանակը եւ Րումէլիի ամբողջ ժողովուրդը ի նպաստ գահաժառանգ Րէշատ էֆէնտիին պիտի ըմբոստանայ:

Այս եւ ասոր նման ցոյցեր եւ բրորականտ Սուլթան Ապտիւլ Համիտը եւ պնակալէզութենէ տարբեր յատկութիւն չունեցող պալատականները շփոթութեան մատնած եւ վերջապէս իբր խելացի եւ ուշիմ հռչակ հանած եւ սակայն մեկուսացուած Չափար Չէլէպի անունով ծանօթ՝ Քիւչիւք Սաիտ փաշան պալատ հրաւիրելով անոր կարծիքին դիմած էին: Սաիտ փաշա ըսած էր «Երեսփոխանական ժողովի բացումէն եւ ընդհ. ներում յայտարարելէ ուրիշ միջոց չկայ»: Ասոր վրայ անմիջապէս Վարչապետ Արնաւուտ Ֆէրիտ փաշա պաշտօնազրկուած եւ անոր տեղ Քիւչիւք Սաիտ փաշա նշանակուելով երեսփոխանական ժողովի բացման վերաբերեալ յայտարարութիւնը՝ պետական 1324 Յուլիս 10 թուականին զուգադիպող 1908 Յուլիս 23-ին հրատարակուած էր:

Ահա այս օրուրնէ սկսեալ Պոլիս գտնուող Սելանիկցի կրօնափոխներ՝ թուրք եւ իսլամական տարազներով սկսած էին ցոյցեր կազմակերպել, հրապարակներու վրայ ճառեր արտասանել, գրգռիչ յայտարարութիւններ ցրուել:

Նման ցոյցերու անվարժ ժողովուրդը, մասնաւորապէս պալատական շրջանակները, իրենց ուղին բոլորովին կորսնցուցած էին. կուսակցութեան անունով մէջտեղ եկած շատ մը անձեր կառավարութեան գործերուն միջամտելու եւ պալատականները կողոպտելու սկսած էին:

Վերջապէս Սահմանադրութեան դիմակին տակ պետական գործերը հարստահարող խմբակի մը ձեռքը անցած, օրէնքի տեղ իթթիհատ եւ Թէրապըր կուսակցութեան տիրապետութիւնը տեղ բռնած էր եւ Սուլթանի տիրապետութեան երանի կարգալ կու տար:

Պալատական լրտեսներէն շատեր, կուսակցութեան մէջ մտնելով մէյ մէկ ազատութեան հերոս դարձած եւ ստեղծուած անիշխանութիւնը աւելի սաստկացուցած էին:

\* \* \*

Հրէական հանճարը, այս երկար, դժուար եւ աւերիչ միջոցներովը, վերջապէս Օսմանեան կառավարութիւնը Գերմանիոյ հաշուոյն պատերազմի մղած եւ զգետնելէ յետոյ հետապնդուած նպատակին հասած եւ առանց կաթիլ

մը արիւն թափելու, Սողոմոնի փլած գահուն հիմերուն վրայ հրէական Տուն մը հիմնելու յաջողած էր:

Սակայն հրէական ցեղին տնտեսական եւ քաղաքական մարզերու վրայ կատարած դերը եւ ուրիշ ազգերը ոչինչ համարելը, աշխարհը սթափեցուցած էր: Քանի մը տարի առաջ Ռուժանիոյ մէջ ծագած հակա-հրէական շարժումները, Սուրիա այցելող Լորտ Պալֆուրին եւ Իրազ այցելող Լորտ Ալֆրէտ Մոնտին դէմ կատարուած ցոյցերը, հրէական տիրապետութեան դէմ ծագած արթնութեան մէկ ապացոյցն էին:

Զինադադարէն յետոյ Պաղեստինի հողին վրայ, առանց հրեայի մը արիւնը թափուելու իր տիրապետութիւնը հաստատող Իսրայէլի զաւակները շատ շփացան. ղեկավարներէն Տոքթ. Վայզմանի Երուսաղէմի, «էլ-Նէֆախէլ-Ասրիյէ» թերթին մէջ ընդօրինակուած ճառին հետեւեալ մասը որոշ փաստ մըն է առ այդ:

«Սիոնականները այսօր աշխարհի կը տիրեն, ուզուած պահուն կրնան մնացեալ գահերը կործանել: Մենք Սիոնականներս դարերէ ի վեր Քրիստոնեաներու գերին դարձած էինք, սակայն ասկէ ետք ամբողջ աշխարհը մեզի գերի պիտի դառնայ»:

\* \* \*

Պատմութիւնը կ'արձանագրէ, թէ հրեաները երբայցինքնու սերունդն են: Ասոնք Բաբելոնէն գաղթելով Պաղեստինի Արեւելքը եւ Հարաւային կողմերը ծովեզերքէն հեռու քարքարուտ տեղ մը ցեղախումբ որպէս հաստատուած էին: Փառաւոնեան հարստութեան ժամանակ, ասոնց ցեղին պատկանող Յակոբի որդին Յովսէփ, երբ գերութենէ վարչապետութեան բարձրացաւ, հրեաները Եգիպտոսի մէջ քիչ մը շնորհքի արժանացան, բայց երբ ասոնց շարահանութիւնները, առանց աշխատելու ժողովուրդին հարստութիւնները կողոպտել ու իրենց ցեղին չպատկանողները տնտեսական գերութեան ենթարկելը, ժողովուրդին պոռթկալուն պատճառ դարձաւ. բողոքներ ծայր տուին եւ երբ այս պոռթկումը եւ բողոքը սաստկացաւ՝ Փառաւոնեան կառավարութիւնը ստիպուեցաւ հրեաներու դէմ խիստ միջոցներու դիմել եւ նոյնիսկ այս ցեղը աստիճանական եւ ստակայն յաւիտենական բնաջնջումի ենթարկելու համար որոշեց յետ այնու ծնելիք հրեաներու արու զաւակները սպաննել:

Այս որոշման գործադրութեան թուականներուն էր, որ կողովի մը մէջ գրուած եւ յորձանքի տրուած մանուկ

Մովսէս՝ Փառաւոնի գետեղերեայ պալատին առջեւէն ան-  
ցած պահուն պալատական տիկիներէն կը անտուի եւ ներս  
ընդունուելով իբր ոքոզի կը խնամուի ու կը մեծնայ :  
Սոյն Մովսէսը օր մը շուկան հրեայի մը եւ տեղացի երե-  
ւելիի մը վէճին ականատես կ'ըլլայ եւ տեղացին անիրաւ  
զտնելով չի կրնար համբերել եւ կ'ապաակէ զայն : Տեղա-  
ցին այս հարուածներուն աղղեցութեան տակ կը մեռնի :  
Մովսէս կը ստիպուի հրեաներու մօտ ապաստանիլ, վեր-  
ջապէս իբր իր եղբայրը ճանչցուած՝ հրեայ մեծաւորներէն  
Ահարոնի միջամտութեամբ եւ պալատին մէջ ունեցած իր  
հեղինակութեան շնորհիւ, հրեաները այս անխուսափելի  
ընաջնջումէն փրկելու համար, կը յաջողի, ասոնց համար  
իրենց հին հայրենիքը եղոյ Քանանու երկիրը վերադառնա-  
լու արածութիւն ստանալ :

Հրեաները ճամբան իրենց ազատարարը եղոյ Մով-  
սէսին դէմ ապատամբեցան եւ մեծաւորներէն Սամէլի թե-  
լագրու թեամբ ոսկիէ կուռքեր սկսան պաշտել : Մովսէս զա-  
նոնք անիծեց եւ ամբողջ քառասուն տարի անապատներու  
մէջ թափառեցան :

Մովսէսի մահէն ետք Յեսու՝ ասոնք Պաղեստին ս-  
սաջնարկելով 12 սերունդներու բաժնեց :

Ի վերջոյ ծերերու ժողովներ եւ ապա Իսրայէլի զա-  
տատորները կոչուող վարչութիւններ կազմուելով՝ նախ-  
քան Քրիստոս 1080 թուականին իրենց կամքով եւ Սամուէ-  
լի միջնորդութեամբ Սաւուր թագաւոր նշանակեցին, եւ  
այս դերպասանի յաջորդները Դաւիթի եւ սրբույն Սողո-  
մոնի օրով զօրաւոր պետութիւն մը հիմնեցին :

Սողոմոնի մահէն ետք, թագաւորական սերունդը եր-  
կուքի բաժնուեցաւ եւ մէկը Իսրայէլ, իսկ միւսը Եէճուա  
(հրեալ) կոչուեցաւ :

Ասոնցմէ Իսրայէլի թագաւորութիւնը Ասորեստանի  
թագաւորներէն Սողմանասարի եւ Եէճուա (հրեայ) թա-  
գաւորութիւնը Նաբուգոթոնոսարի կողմէ գրաւուելով՝  
ընդհանուր ջարդէն ողջ մնացած ժողովուրդը Բաբելոն գե-  
րի տարուեցաւ :

Այս թուականէն սկսեալ հրեաները իրենց անկախու-  
թիւնը կորսնցուցին եւ Ասորեստանի տիրապետութեան  
տակ ճիշդ 70 տարի Բաբելոնի մէջ գերի մնացին :

Երբ Պարսիկները Բաբելոնը գրաւեցին, հրեաները  
թագաւոր կիրոսին դիմելով Պաղեստին վառնալու եւ ու-  
ղատ պաշտամունք կատարելու արածութիւն ստացան,  
սակայն 200 տարի Պարսիկ տիրապետութեան տակ մնացին

Մեծն Աղեքսանդրի մահէն ետք, ծնած փոքր տէրութիւններու լուծէն ազատուելով եւ Պաթալսախ եւ Սելեւկեաններու պատերազմէն օգուտ քաղելով կարգ մը ազատութիւններ ձեռք բերին եւ մօտ 130 տարի Քահանայապետներուն վարչութեամբ կառավարուելէ յետոյ, Հռովմայեցիներու պաշտպանութեան դիմեցին եւ անոնց հաւանութեամբ Հերովդէսը գահ բարձրացուցին:

Քրիստոս այս թագաւորին ժամանակ աշխարհ գալով հրեաներու հալածանքին ենթարկուած էր:

Հերովդէսի մահէն ետք, Պաղեստին իր չորս զաւակներուն մէջ բաժնուած եւ քիչ ժամանակէն Հռովմայեցւոց տիրապետութեան տակ ինկած էր:

Հրեաները հռովմայեցւոց վարչութեան տակ հանդարտ չմնալով, խռովութիւններ հանել սկսան: Քրիստոսի 135 թուականին, Ավէրիէն զօրավարը ասոնց վրայ զըրկուեցաւ եւ Երուսաղէմը գրաւելով ընդհ. ջարդէն ճողոպրած հրեաները նորէն Պաղեստինի հողէն վտարուեցան:

Այս թուականէն սկսեալ՝ հրեաները աշխարհի բոլոր կողմերը ցրուելով խեղճ ու կրակ կեանք մը ապրած են: Սակայն իրենց նախնիներէն ժառանգած չարաշահութիւնը, լուծմայափոխութիւնը եւ ժողովուրդին հարստութիւնը կողոպտելու ճարպիկութեան շնորհիւ, այսօր աշխարհի հարստութեան կէսին տիրացած եւ աշխարհի քաղաքականութեան անտեսանելի մղում տուողը հանդիսացած են:

Հրէական պատմութիւնը եթէ մանրամասն քննուի, պիտի տեսնուի, որ հանրային բարօրութեան համար հրեաները հալածել հարկ տեսնող պետութիւններ, ոչ թէ հասարակ պետութիւններ՝ այլ ծաղկեալ քաղաքակրթութիւն ունեցող հին Եգիպտոսը եւ Հռովմայեցիները եղած են:

\* \* \*

Պատերազմը աւելի սաստկացած էր. անգլիական եւ Ֆրանսական զրահաւորները թէեւ չէին կրցած Չանազ Գալէի ճամբան բանալ. սակայն նեղուցը փակած եւ ծովեզերքները պաշտպանման տակ առած էին: Ռուսիա կովկասի ճակատէն մաս մը զինուոր գերմանական սահմանը փոխադրելով պաշտպանողական դիրք բռնած էր: Ընդհ. հրամանատարի փոխանորդ նշանակուած Էնվէր, ռուսական ճակատը քննելէ եւ անոր «տկարութիւնը» իմանալէ ետք նոր փառք շահելու տղայամտութիւնը ունեցած էր եւ առանց նկատի առնելու եղանակն ու կլիման, ինչպէս նաեւ կեդրոնէն հեռանալիք բանակի մը պարենաւորման դժուարութիւնները, իր հրամանատարութեամբ ռուսերու դէմ

յարձակում մը շղթայաղերծել ուզած եւ այս նպատակը տեղեկացուցած էր Կովկասի ճակատի հրամանատար Տամատ Հաֆրդ Իսմայիլ փաշային, որ համամիտ չգտնուելուն, բոլոր բանակի սպայակոյտի անդամները եւ բարձրաստիճան սպաները հրաւիրելով խորհրդակցած էր ժամերով: Ետեր յարմար տեսած էին, որ ձմեռը պաշտպանողական վիճակի մէջ անցնեն եւ մինչեւ ամառ ամէն տեսակ պատրաստութիւն տեսնելէ յետոյ յարձակման անցնին: Հակառակ ասոր, էնվէրին ընկերացող ընդհ. սպայակոյտի նախագահ գերմանացի Զօրավար Պրոնզօ փաշա՝ գերման բանակին դէմ ճակատող ռուսական ուժերը տկարացնելով Գերմանիոյ բռնութեանցնելու սատանայամտութեամբ՝ էնվէրը համոզած եւ թրջական բանակին, (հրամանատարութեան եւ սպայակոյտի առարկութիւններուն հակառակ) իր ընդհ. հրամանատարի հանգամանքով պատասխանատուութիւնը ստանձնելով յարձակման անցնիլ թելադրած էր:

1915ի Յունուարին կատարուած այս յարձակումը Սարը Գամըշի մէջ՝ թրջական ամենալաւ մարզուած բանակին բնաջնջման պատճառ եղած էր եւ համաձայն սոսոյզ տեղեկութեանց, այս յարձակման միջոցին 75 հազարի մօտ զինուոր կորսուած էր:

Ռուսերը՝ Օսմանեան բանակին այս ահուկի պարտութենէն եւ տկարացումէն օգտուելով, սահմանի վրայ զրանուած զօրքը նոր բերուածներով զօրացնելէ ետք, հակա-յարձակման անցած եւ մէկ կողմէն Վանի, միւսէն՝ ծովեզերքի ուղղութեամբ Լազիստանի եւ Տրապիզոն նահանգի, իսկ կեղրոնէն ալ էրզրումի եւ Երզնկայի ուղղութիւնը բռնելով յառաջանալ սկսած էին:

Հայ կամաւորներ ռուսական զօրքին առաջնորդ կը հանդիսանային: Ասոնք վրէժի զգացումով առյցուն էին: Նախապէս կատարուած դէպքերու ընթացքին՝ ասոնցմէ ոմանց ծնողքը, ոմանց քոյրն ու եղբայրը, ոմանց կիներն ու զաւակները սպաննուած, առեւանգուած կամ լլկուած էին եւ տուներնին տեղերնին կողոպտուած կամ հրկիզուած էր: Բնական է որ ասոնց սրաին մէջ վրէժը կ'եսար, եւ երբ այս զգացումը յեղափոխականներու կողմէ ալ գրգռուեցաւ, բնականաբար մարդկային եւ քաղաքակրթութեան դարուցում բռնումները մոռցուեցան: Ռուսերը այս պարագան լաւ հասկցած ըլլալուն, անոնց տուած էին առաջնորդի դերը:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ղեկավարները՝ յանուն հայ ազգին Իթիհատ եւ Թէրազըրի ղեկավարնե-

րուն հետ նախապէս համաձայնած եւ Ռուս-Թուրք պատե-  
րազմի մը պարագային հայերուն չէզոքութիւնը յայտնած  
եւ պատերազմէն քիչ առաջ Իթթիհատ եւ Թէրազզըի կա-  
ռավարութեան արտօնութեամբ՝ 1914ի Յուլիսին էրզրու-  
մի մէջ գումարուած իրենց Ցրդ համաժողովին կողմէ այդ  
որոշումը վաւերացուցած էին:

Իթթիհատ եւ Թէրազզըի կառավարութիւնը, հայ կա-  
մաւորներուն ուսու բանակը առաջնորդելուն տեղեկանալով,  
այս պարագան յարմար առիթ նկատելով Իաշնակցութեան  
հետ կնքուած համաձայնութիւնը չեղեալ նկատած եւ ա-  
ռաջին առթիւ Պոլսոյ եւ դաւառներու մէջ գտնուող բոլոր  
դաշնակ շէֆերը մէկիկ մէկիկ ձերբակալելով, զանազան  
տեղեր քշելով ճամբան սպաննել տուած էր:

Իթթիհատը Պոլսէն՝ Չոհրապը, Վարդգէսը եւ Տի-  
րան Քէլէկեանը՝ հանրաժանօթ եւ ընդհանուր յարգանք  
վայելող մտաւորականները, քշելով անհետացուցած էր:

Պ. Պ. Չոհրապ եւ Վարդգէսը Հայէպ, Տիգրանակեր-  
տի ճամբուն վրայ եւ Տիրան Քէլէկեանը Չորում-Ամասիա  
ճամբուն վրայ սպաննած էին:

Խաթակ, Չարդարեան, Ճիհանկիւլեան, Ակնունի,  
Տոքթ. Տաղաւարեան եւ ասոնց նման դեկավարներն ալ Տիգ-  
րանակերտի ճամբուն վրայ ձին Տէրէսի մէջ սպաննած  
էին: Չինուորագրուող հայ երիտասարդներն ալ ճամբանե-  
րու շինութեան ղրկելով տաժանակիր աշխատութեամբ փր-  
ճացնել սկսած էին:

Այս վիճակը հայերը մտահոգութեան մատնելով՝  
ինքնապաշտպանութեան նպատակով տեղ տեղ ըմբոստու-  
թիւններու մղած էր:

Վերջապէս, Հայոց Վանը գրաւելով էնվէրին քեռայ-  
րը կուսակալ Ճէւտէթ պէյը փախուստի ստիպելնին, եւ  
մինչեւ ուսական բանակին հասնիլը առժամեայ կառավար-  
ութիւն մը կազմելով Արամ Մանուկեանը կառավարիչ  
նշանակելնին եւ իսլամ տարրին հանդէպ անարդարութիւն  
ցոյց տրուիլը՝ Իթթիհատ եւ Թէրազզըն զայրացուցած էր:  
Ճէւտէթ պէյին փախուստը՝ հայոց հանդէպ սնուցուած  
վրէժխնդրութիւնը անոնց չար դիտաւորութիւնը բացայայ-  
տած էր եւ մինչեւ վերջին անհատը բնաջնջելու համար Իթ-  
թիհատ եւ Թէրազզըի ընդհ. կեդրոնին մէջ գաղտնի նիստ  
մը գումարուելով որոշում տրուած էր:

\* \* \*

Կարգ մը դէպքերու ըստ էութեան պարզուիլը անյար-  
մար տեսնողներ կրնան ըլլալ, սակայն այս ձեւ լուսարա-

նութիւնը թէեւ դժուարին, սակայն կարելոր է: Յարգելի ընթերցողներուն առանց յոգնութիւն պատճառելու, ճշմարտութիւնը ցոյց տալով, դէպքերը իրենց կարելորութեամբ պարզած եւ դերակատարներուն դերերը, մտային կարողութիւնները, քաղաքական եւ հասարակական բմբռնումները պարզած կ'ըլլամ:

Հայկական տեղահանութիւնը եւ սպանդը շատ վայրագ քաղաքական ոճիր մըն է:

Հայերուն Ռուս բանակին կամաւոր ղրկելէն, Վանը գրաւելով էնվէրին քեռայրը կուսակալ ձէւտէթ պէյը փախուստի մատնելէն գրգռուող Իթթիհատ եւ Թէրագզը կուսակցութիւնը՝ ընդհ. կեդրոնին մէջ գաղտնի նիստ մը գումարելով՝ առանց սեռի եւ տարիքի խտրութեան հայերու մէկ անհատն իսկ չի ձգելու պայմանաւ բնաջնջել որոշած եւ ասոր գործադրութիւնը ոճրագործ եւ մարդասպաններէ բաղկացած մասնաւոր կազմակերպութեան մը յանձնած էր: Իսկ ասոնց ղեկավարութիւնն ալ «Երեակ Գործադիր Յանձնախումբ» անուան տակ Տոքթ. Նազըմի, Տոքթ. Պէհաէտտին Շաքիրի եւ Կրթական Նախարար Շիւքրիին յանձնած էր:

Հարեանցի ակնարկ մը չի կրնար ոճիրին ահաւորութիւնը պատկերացնել:

Եթէ Իթթիհատ եւ Թէրագզըին այս ոճրափորձ եւ պատմական գաղտնի նիստը կարենամ մօտաւորապէս պատկերացնել, եթէ գործադրող անձերու առաջարկները եւ վիճարանութիւնները, գիտական կարողութիւնները, քաղաքական եւ հասարակական ըմբռնումները կարենամ պարզել, անկասկած այս ոճիրին պատճառները աւելի լուսաբանած եւ իրական պատասխանատուները ճշդելով պատմութեան ծառայութիւն մը մատուցած կ'ըլլամ:

Իրականութեան մէջ զանազան ձեւերու տակ կատարուող դէպքերը, ժամանակին իրաւասու եւ իրագեկ անձերէ քաղած տեղեկութիւններու եւ կարդացած հրատարակութիւններու հիման վրայ գրած եմ. հետեւաբար հայկական դէպքերը, սիրտ մորմոքող նախճիրը, մագերը փուշ փուշ ընող սպանդը, եւ պատասխանատու անձերը լաւապէս ճանչցնելու համար կատարուած գաղտնի խորհրդակցութիւնը նոյնութեամբ արձանագրել աւելի յարմար կը սեպեմ:

\* \* \*

Թալաաթի նախագահութեամբ գումարուած այս գաղտնի նիստին առաջին խօսքը Տոքթ. Նազըմին տըր-

ուած էր: Տոքթ. Նազըմ դողդոջուն ձայնով մը խնդիրը հետեւեալ կերպով կը բացատրէ.

Տոքթ. Նազըմ.— Յարգելի ընկերներ, առանց արիւնահոսութեան կատարուած յեղափոխութիւններուն պրտուղը խակ, լեղի եւ անմարսելի կ'ըլլայ. միշտ վտանգաւոր, միշտ հակառակ արդիւնքը կու տայ. ասիկա քանիցս կրկնած եմ. հայերը, որոնք այս անգամ պատերազմը յարմար առիթ նկատելով, հակառակ իրենց չէզոքութիւն պահելու խոստումին՝ ուսական բանակին կամաւոր արձանագրուած հրոսակային խումբեր կազմելով մտած գիւղի եւ քաղաքի բնակչութիւնը առանց խղճահարութեան սպաննած եւ տեղ տեղ ապստամբութիւններ հանելով մեր վրայ յարձակելով մեր բանակին նահանջի դժին սպառնալ սկսան: Վանի մէջ Արամ Մանուկեան անուն հայ ապստամբապետ մը, մեր ազատութեան հերոս էնվէրին քեռայրը՝ կուսակալ Ճէւտէթ պէյը փախուստի մատնելով՝ առժամեայ կառավարութիւն մը հիմնեց: Արեւելեան Շ. Գարահիսարի հայերն ալ բերդը գրաւելով աշտարակներուն վրայ ապրտամբութեան դրօշ սլարգեցին: Թէեւ Սեբաստիոյ կուսակալ Մուհամմէտ ասոնց արժանի դասը տուաւ, թաղերնին չըկիզեց եւ մէկ անհատ չմնալու պայմանաւ բոլորը սպաննեց, սակայն ամենուրեք ապստամբութեան պատրաստութիւններ կը տեսնուին եւ մենք ասոնց տեղեակ ենք. ահաւասիկ Ներքին Նախարար Թալաաթ ներկայ է, հարցուցէք:

Թալաաթ.— Այո՛, Տոքթ. Նազըմին խօսքերը իրականութիւն են: Այս իժերը կրկին գլուխ կը բարձրացնեն, վերջնականապէս ասոնց հաշիւը մաքրել պէտք է:

Հասան Ֆէհմի.— Ասոնք ի՞նչ կ'ուզեն, ի՞նչու սահմանադրութեան բարիքները չեն գնահատեր, երախտապարտօրէն կը խօսիմ. ես չարաչուք բռնապետութեան ժամանակ թշուառ վիճակ մը ունէի՝ նուիրական երեք ամիսներուն կրօնական քարոզչութեամբ խնայած քանի մը դուրուշով չմեռնելու աստիճան կ'ապրէի: Փառք Աստուծոյ, սահմանադրութիւնը հռչակուեցաւ, երեսփոխան եղայ, դո՛հ եմ: Ասոնք տակաւին ի՞նչ կ'ուզեն, ինչո՞ւ ինձի պէս երախտապարտ եւ խաղաղ չեն ապրիր:

Տոքթ. Նազըմ.— Թէ ասոնք ի՞նչ կ'ուզեն, բացատրեմ Ձեզի: Ասոնք մեզ բնաջնջելով մեր գոյքերուն եւ կալուածներուն տիրանալով մեզի ըսել կ'ուզեն. «ո՛վ թուրք, դուն ասկէ ելիր եւ հեռացիր, դուն այս հողին տէրը չես. այս հողերը, այս լեռները, այս անտառները, այս գետերը մերն են, աշխարհի ստեղծումէն առաջ մերն են, ահաւասիկ



պատմութիւնը ասոր վկան է, հիմա հասկցա՞ք, ո՛վ հօճա» :  
 ,Հասան Ֆէհմի. — Սատանաները տանին, թող կոր-  
 չին, ասոնց անիծապարտ մարմինը գեհենի հուրին բաժին  
 թող ըլլայ :

Ադա Օդլու Ահմէտ. — Պարապ խօսքերը եւ անէծքնե-  
 րը մէկ կողմ ձգենք : Վանի դէպքին մանրամասնութիւնը,  
 ծագման պատճառները եւ արդիւնքը հասկնալ եւ ըստ այնմ  
 միջոցներ ձեռք առնելու ենք : Կարելի՞ է արդեօք այս մա-  
 սին քիչ մը բացատրութիւն տալ :

Թալաաթ. — Սիրով, ես կը բացատրեմ, զիտէք որ  
 տակաւին պատերազմի չմտած, հայերու Դաշնակցու-  
 թեան ղեկավարներուն հետ համաձայնած եւ պատերազմի  
 պարագային հայերու չէղոք մնալու եւ ո՛չ մեզի, ո՛չ ալ  
 ոռւսերուն օգնելու համար ստորագրուած Փրոթոգոյր՝  
 էրզրումի մէջ գումարուող համաժողովին վաւերացնել ար-  
 ւած էին : Հիմա խնդիրը փոխեցին : Ռուս բանակին կամա-  
 ւորներ ղրկեցին, խօսքերնին չյարգեցին, խոստմնաւրութ-  
 եղան, այս պատճառաւ ոռւս բանակին ընկերացող հայ կա-  
 մաւորներու հետ շփման մէջ մտնելու եւ զանոնք համոզե-  
 լով վերադարձնելու պատրուակով՝ Դաշնակցութեան հրա-  
 մանով եւ կռուակալ ձէւտէթ պէյի արտօնութեամբ՝ Վա-  
 նէն երկու ընկերներով ճամբայ հանուած պարագլուխ «Իշ-  
 խանը» ճամբան սպանուած եւ երեսփոխան Վրամեանն ալ  
 անհետացուած է : Թէեւ Ա. Մանուկեանն ալ մէջտեղէն  
 վերցնել ուզուած է, սակայն Մանուկեանն աւելի ճարպիկ  
 դտնուելով ապստամբած եւ կռուակալ ձէւտէթը փախուս-  
 տի մատնելով, իր վարչութեան տակ սոժամեայ կառավա-  
 րութիւն մը հիմնած է : Խնդիրը այս է : Ամէն կողմէ ուժ  
 կը փութացնենք : Տեսէ՛ք, Ռասթովի մէջ հրատարակուող  
 «Օթրոյոդա» թերթին «Ապրիլ 6էն 16, տասը օր» վերնա-  
 գրով հրատարակած յօդուածին թարգմանութիւնը կար-  
 դամ, խնդիրը կը բացատրուի :

Թալաաթ ձեռքը բռնած թուղթը կարդալ սկսաւ .

«Վեց դարերէ ի վեր այս վայրենի եւ բռնակալ կառա-  
 վարութեան դէմ կը պայքարինք, եւ իրաւունք եւ արդա-  
 րութիւնը ոտնակոխ ընող եւ հայ արջունքով եւ արիւնով  
 սիրտը պաղշտկող արիւնհարբու ճէւտէթներու դէմ միշտ կը  
 կռուինք :

«Ասոնք դուրսը Ս. պատերազմ յայտարարելով՝ ներ-  
 սը կիներու, փոքրիկներու, ծերերու, երիտասարդներու,  
 հիւանդներու եւ անկարողներու ընդհ. ջարդ կազմակեր-  
 պեցին :

«Մենք Վասպուրականի հայերս, ահա 10 օր է, մեր բոլոր ուժով, ազգային եւ անհատական ամբողջ էութեամբ կը կռուինք: Մեր այս կռիւը պատմութեան մէջ աննման պիտի մնայ, եւ այս ընդհ. պատերազմի ընթացքին բոլոր քաղաքակիրթ ազգերու գնահատութեան պիտի արժանանայ. ամբողջ աշխարհ պիտի հասկնայ, որ բուռ մը հերոսներ արդարութեան եւ իրաւունքի համար կը պատերազմին, վրէժխնդիր Աստուածը մեզի հետ է, մեր հերոսներու փառքն ու պատիւն ալ մեզի վարձատրութիւն պիտի ըլլայ»:

Ադա Օդլու Աիւէտ.— Հայ Դաշնակցութիւնը ի՞նչպէս կրնայ ամբողջ հայ ազգը ներկայացնել, կուսակցութեան մը պատկանողի անունով կրնայ խոստանալ, բայց ոչ ամբողջ ազգի մը. այս պատճառաւ ամբողջ ազգ մը չի՛ կրնար պատասխանատու նկատուիլ, դուք հայերու մէկ մասին, այսինքն դաշնակցութեան հետ հասկացողութեան եկած էք. միւս հայերը չեն կրնար ընդունած ըլլալ: Հայութիւնը միայն դաշնակցականներէ չի բաղկանար. ամբողջ ժողովուրդը ասոնց շուրջ չէ համախմբուած, նոյնիսկ շատ մը հայեր այս կուսակցութեան հակառակ են, որովհետեւ դաշնակցականները ուրոյն քաղաքականութիւն հետապնդող յեղափոխականներ են: Պարոննե՛ր, այս կուսակցութեան եւ իթիհատ եւ թէրագզրի միջեւ գոյացած համաձայնութիւնը գործադրութեան չի կրնար դրուիլ, որովհետեւ երբ մենք մեր երկրին մէջ բնակող հայերը ըստ օրինի կը զինուորագրենք, կրնանք Ռուսիոյ դէմ պատերազմի դրկել. նոյնն է պարագան նաեւ Ռուսիոյ մէջ. ուրեմն հայ դաշնակ կուսակցութեան Ռուսո-թուրք պատերազմի մը պարագային հայերուն չէզոք մնալու խոստումը ի՞նչ արժէք կրնայ ունենալ:

Թալաաթ.— Սակայն Վանի վրայ յարձակող եւ Արեւելեան Ե. Գարահիսարի մէջ ապստամբութեան դրօշ պարզելով բերդը գրաւող հայերը դաշնակցութեան անուն հանած պարագլուխներուն կողմէ կը ղեկավարուին. պէտք էր որ դէպքը ծագելուն դաշնակցութիւնը չէզոք մնար եւ ոչ մէկ դէպքի մէկ անհատն իսկ չմասնակցէր: Յաւալի է, որ դաշնակ չէֆերը մեզ քնացնել ուզեցին. դաշնակցութիւնը յայտարարած էր որ ինք ամբողջ ազգը կը ներկայացնէ, համոզում գոյացուած էր, որ ինչպէս որ մենք ամբողջ թուրքիան կը ներկայացնենք, անոնք ալ հայութիւնը կը ներկայացնեն: Եթէ մեզ խարած են, պատասխանատուութիւնը մեզի չի վերաբերիր, իրենց կը պատկանի: Լսեցէ՛ք, Սեւերեանի ստորագրութեամբ Ռոսթով հրատարակուող

«Օթրոյոդա» թերթի 142րդ թիւին մէջ «Երազը կ'իրականանայ» վերնագրութեամբ լոյս տեսած յօդուածին մէջի բարբաջանքները կարգամ:

### ԵՐԱԶԸ Կ'ԻՐԱԿԱՆԱՆԱՅ

«Ահաւասիկ, այդ բարձր նպատակը, դարերէ ի վեր հայերուն սրտին մէջ տեղ բռնող երազը իրականացաւ, այդ նպատակը, որ փոքրիկներու ժառանգ մնացած, այդ երազը, որ դարերէ ի վեր ամբողջ սրտերու փափաքը եւ մեր ամենէն սիրուածներուն հեռանկարը եղած էր:

«Անոնք իրենց արիւնը, ջանքը, կարողութիւնը այսօր մեր փառաբանած յաղթանակը պատրաստելու նուիրեցին: Անոնք ազգին մէջ այդ քաղցր երազին անպատճառ իրականանալու յոյսովը եւ համոզումովը ապրեցան.

«Հայերու վարչութեան տակ ազատ Հայաստան մը տեսներ»:

Անշուշտ հեռագրէ տեղեկացած պէտք է ըլլաք որ այսօր Վան հայերու ձեռքն է, 2 Ապրիլէն ի վեր հայ ռազմիկները Արամի հրամանատարութեամբ ապստամբութեան դրօշը բարձրացուցած եւ 30 օրուան ընդհարումէ մը ետք Վանին տիրացած են:

Գարա Քէմալ.— Թո՛ղ կորչին, Վանը մերն է, նուիրական իթթիհատ եւ թէրագրին կը պատկանի, ոչ ոք կրնայ խլել:

Հասան Ֆէհմի.— Այս Արամ ըսուած գաւաճանը Վանի երեսփոխան թշուառակա՞նն է:

Թալաաթ (ընթերցումը շարունակելով).— Պատերազմի գոռում գոչումները Իքտիբի մէջ սպասող ուսերու ականջները խլացուցին:

«Վարդանի հրամանատարութեան տակ գտնուող հայ կամաւորական գունդն ալ գէպի Վան սուրալով իրենց եղբայրները ազատել կ'ուզէ:

«Ահագին դժուարութիւններու եւ արգելքներու հակառակ՝ Քեռին, Համագասպր, Դրօն եւ Խէչօն ալ ուս գինուորական հրամանատարէն արտօնութիւն կը պահանջեն, որ գողաքներու եւ իրենց նոր ընկերացող հայ կամաւորներու հետ Վանի վրայ արշաւեն: Պահպանողական գորավար Ա. այս հերոսներուն փափաքը չափաւորել կ'ուզէր. Թափաճերի անցքին վրայ սոսկալի ձիւնամբրիկ մը կը տիրէր եւ ձորերու մէջ փոթորիկը կը շարունակէր: Զինուորները լեռնային թնգանօթները շալկած ժայռերն ի վեր

կը մագլցէին, գողաքները կամաց կամաց իրենց կորովը կորսնցնելով «Ա՛հ, Աստուած ալ մեզի դէմ է, կ'ըսէին»:

Հասան Ծէհմի.— Տարակոյս չկայ, Աստուած անհաւատներուն չ'օգնէր:

Թալաաթ (ընթերցումը շարունակելով).— Սակայն հրամանատարին սրոշումը վերջնական եւ հրամանը խիստ էր, ամէն դնով Թափաճերի անցքը անցնիլ պէտք էր. այս վնահատելի եւ հերոս բանակը հրաշք գործելով բնութեան դէմ պայքարեցաւ, փոթորիկներուն ձայնին խուլ մնաց եւ բնութիւնը պարտուեցաւ, եւ մարդը վերջապէս իր կամքը անոր պարտադրեց: Թափաճերի միւս կողմը՝ երկինքը անամպ եւ օդը պայծառ էր: Գողաք գունդերը եւ հայ կամաւորները իրենց ամբողջ յոգնութիւնը մոռնալով նոր ուժ ստացած՝ անմիջապէս դէպի Վան խոյանալով, հանդիպած բոլոր արգելքները անհետացնելով եւ հետապնդելով հոն հասնելէ ուրիշ բան չէին խորհէր»:

Գարա Քէմալ.— Թող կորչի՛ն:

Թալաաթ (ընթերցումը շարունակելով).— Անմիջապէս Այաղա գիւղախումբերէն անցնելով եւ Պէքրիի բերդը գրաւելէ եւ քանդելէ յետոյ Վանայ լիճը իրենց սողեւ պարգուեցաւ: Ի՛նչ սքանչելի տեսարան, սրտաշարժ պատկեր, իր կանաչ դաշտերով եւ բերդերով Ա. Սաչակրութեան Երուսաղէմը գրաւելը կը յիշեցնէր:

Գարա Քէմալ.— Անկցին:

Թալաաթ (ընթերցումը շարունակելով).— Անյուշ ժամանակներէ ի վեր լռութեան դատապարտուած զանգակները բոլոր յանկարծ ղօղանջել սկսան եւ խոր քունէ մը սթափեցան, բաղդը կամ ճակատագիրը այսպէս կ'ուզէ եղեր, որ ասոնց այս սթափումը՝ ռուսական արծիւներու առաջին անգամ ըլլալով Բզնունեաց(1) ծովու վրայ սաւառնած օրուան հանդիպէր:

«Զանգակներուն ականջ իլացնող ձայները դաշտերը կը լեցնէին. պաշարուածները կը զգային թէ ազատութեան ժամը մօտեցած է: Այլեւս խմբապետ Արամին քաջալերութիւնը եւ յոյսը բոլոր սրտերը ամբապնդած եւ ամէնուն վստահութիւն ներշնչած էր: Արամ... այս անունը արդէն յաւերժացած էր. զանգակները միշտ կը հնչէին, թուրքերն ալ այս ձայնին յաղթական արձագանգի իմաստը հասկնալով, յաղթականներուն ուշադրութիւնը չգրաւելու համար՝ առանց ձայնի եւ շուտով փախուստ տուին. այնչափ արագ՝

(1) Վանայ լիճի պատմական անունը:

որ հայերը սատանորդիներուն այս խայտառակ փախուստը, անհետ կորսուելէն օր մը ետք հասկցան: Հայերը Այգեաստանէն դուրս գալով բերդը գրաւեցին եւ իրենց դրօշակը պարզեցին, լման երկու օր ուրախութիւնով եւ խրախճանքով անցուցին:

Գարա Քէմալ. — Ի մօտոյ պիտի լաք, բայց ոչ, լալը կրկին ապրիլ է՝ պիտի սատկիք:

Թալաաթ (ընթերցումը շարունակելով). — Վերջապէս Մայիսի 6րդ օրը, ընդհ. հրամանատար Զօրավար Ա. դիմացէն երեւցած եւ նոյն օրը Վանի գրաւումը հրամայած էր:

«Յէջոյի հրամանատարութեան տակ գտնուող յառաջապահ գունդը անմիջապէս առաջ քալած, սակայն յանկարծ մեծ զարմանքով կեցած էր: Այս ի՞նչ է ընկերներ, հազարաւոր Ֆէսաւորներ նուագի առաջնորդութեամբ դէպի մեզ կու գային, խանդավառ բազմութիւն մը մեզ կը դիմաւորէր, փայլուն զգեստներով քահանաներ կու գային, ոսկի խաչեր եւ եկեղեցական դրօշակները արեւուն ճառագայթներուն դէմ կը փայլէին, զգեստաւոր զինուորներ, դարդարանքներով ամէն հասակի մարդիկ, կիներ, աղջիկներ, երախաներ, ձեռքերնին աղ ու հաց յաղթականները շնորհաւորելու եւ ողջունելու կու գային, կը միանային. ամէն մարդ կը գրկընդխառնուէր, կը խնդար, կ'արտասուէր եւ շնորհաւորութիւններ կ'ըլլային. ամէն կողմ ուրախութիւն, ազատութեան մեծ տօն էր. ամբողջ այս ուրախութիւններէն վերջ Վան քաղաքի Վարագ վանքին զանգակը անընդհատ կը հնչէր:

Գարա Քէմալ. — Թող կորչին, այս հողերը իթթիհատ եւ Թէրագգըրի իշխանութեան կը պատկանին, թոյլ պիտի չտանք որ ոեւէ մէկը ձեռք երկարէ անոր:

Տոքթ. Նազըմ. — Պարապ խօսքով նաւ չի քալեր. գործել եւ արագ գործել պէտք է: Հայերը մահացուցիչ վէրքի մը կը նմանին. այս վէրքը նախապէս անվնաս կը կարծուի, բայց երբ ժամանակին կարող վիրաբուժի մը գործողութեան չենթարկուի եւ չհանուի, անպատճառ կը սպաննէ. գործել եւ արագ գործել պէտք է: Եթէ 1909ի մեր Ատանայի եւ այլ վայրերու մէջ կատարել տուածին նման տեղական ջարդերով պիտի գոհանանք, օգուտի տեղ վնաս կը հասնի, մեր մաքրագործել առաջադրած ուրիշ տարրերը, արարները, քիւրտերը կ'արթնցնէ եւ վտանգը մէկի տեղ երեք կ'ըլլայ. կը մեծնայ եւ գործադրութիւնը կը դժուարանայ. այս ժողովին մէջ քանիցս խօսած եմ եւ հիմա կը կրկն-

նեմ. եթէ այս մաքրագործումը բնդհանուր եւ վերջնական պիտի շրջայ, օգուտի տեղ վնաս կը բերէ. պէտք է հայ ազգը արժատախիլ ըլլայ, մեր հողին վրայ անհատ մը անգամ չմնայ, հայ անունը մոռցուի: Հիմա պատերազմի մէջ ենք, սակէ յարմար առիթ չի գտնուիր, մեծ պետութեանց միջամտութիւնը եւ թերթերու բողոքի ձայնը նկատելի իսկ չի կրնար ըլլալ, ըլլալու պարագային խնդիրը կատարուած իրողութիւն մը կը դառնայ եւ կը փակուի. այս անգամուան գործողութիւնը բնաջնջումի գործողութիւն մը պիտի ըլլայ, հայերէն անհատ մը իսկ չմնայու պայմանաւ բնաջնջումը անհրաժեշտ է. թերեւս ձեզմէ ոմանք ըսեն, թէ այսչափ վայրագութիւն ներելի՞ է. երախաներէն, ծերերէն եւ անկարներէն ի՞նչ վնաս կրնայ հասնիլ որ ասոնց բարբիտն այ բնաջնջման հարկ տեսնուի, ով որ յանցաւոր է ան կը պատժուի: Տունը հանգիստ նստած ծերերու, կիներու, ծծկեր մանուկներու վրայ յարձակիլ վայրագութիւն է, քաղաքակրթութեան եւ մարդասիրութեան հակառակ է. Տօքթ. Նազըմ կը չափազանցէ, չի տրամարաներ:

«Սնդրեմ, պարոններ, այսչափ տկար եւ գթասիրտ մի՛ ըլլաք. ասիկա մահացու հիւանդութիւն մըն է, անասիկ պատերազմը, հարցում կ'ուղղեմ Ձեզի, պատերազմը ի՞նչ է. վայրագութիւն չէ՞. գիւղէն հեռացուելով պատերազմի ճակատին վրայ սպաննուող հողագործը, խանութէն հեռացուելով թնդանօթի հարուածներուն տակ ինկող առեւարականը ի՞նչ բրած է, ի՞նչ ոճիր գործած է, որ այս սոսկալի մահուան կ'ենթարկուի: Վայրագութիւնը բնութեան օրէնքն է, հարցը ասոր բնուենելի կամ մերժելի ըլլալը արամարանելու մէջն է: Ամբողջ կենդանիները, նոյնիսկ բոյսերը զիրար ուտելով, զիրար ջնջելով չե՞ն սընանիր, ուրեմն ասոնց զիրար ուտելն եւ զիրար ջնջելը արգիւնցէք. բայց վայրագութիւն է կրնա՞նք ըսել:

Հասան Ֆէհմի.— Այո՛, պարոն. այս տեսութիւնը ես ալ գիտեմ. «կեր ու կերակուրի տեսութիւնը»; բնագիտութեան մէջ տեսած եմ:

Տօքթ. Նազըմ (խօսքը շարունակելով).— Աղէկ խորհինք, մենք այս յեղափոխութիւնը ինչո՞ւ կատարեցինք. մեր նպատակը ի՞նչ էր: Սուլթան Ապտիւլ Համիտին մարդիկը իրենց աթոռներէն վար առնելով անոնց տեղը բազմելո՞ւ համար: Ես այսպէս չեմ խորհիր: Ես թրքութիւնը կենդանացնելու համար Ձեզի ընկեր, եղբայր եղայ, ես թուրքին, միայն թուրքին ապրիլը, այս հողին վրայ անկախ իշխող մը ըլլալը կը փափաքիմ: Ոչ-թուրք տարրերը

Թող ջնջուին, ո՛ր ազգութեան եւ ո՛ր կրօնին ալ պատկանած ըլլան: Այս երկիրը սչ-թուրք տարրերէն մաքրել պէտք է: Կրօնը իմ քովս ոչ մէկ արժէք ունի, իմ կրօնս թուրանն է:

Տօքթ. Պէհաէտտին Շաֆիր (բառերը մէկիկ մէկիկ արտասանելով եւ շեշտելով).— Մովսէսի պէս թշուառական մը, Յիսուսի պէս պարապ մարդ մը, Մուհամմէտի պէս որը մը աշխարհի վրայ երբ կրցած են մէկմէկ կրօններ հիմնել, ինչո՞ւ մեզի պէս կամքի տէր մտաւորականներ թուրանի կրօնը չհիմնենք եւ չընդհանրացնենք:

Հասան Ֆէհմի.— Աստուած դուն ներկ. այս խօսք չէ, այլ՝ զառանցանք. զառանցանք չէ, հայհոյութիւն է. (երկչտո չորս կողմը նայելով) սասանաները մեր վրայ պիտի թափին:

Գարա Քէմալ (խոճային երկչտուութիւնը տեսնելով եւ ծայրահեղով).— Խոճա Էֆէնտի, ի՞նչ կը խօսիք. կ'ազօթէ՞ք, խնդրեմ եկուր զլիսուս կարգայ, թերեւս գլխու ցաւին դարման մը ըլլայ:

Տօքթ. Նազրմ (խօսքը շարունակելով).— Վա՛յ մեզի, եթէ վերջնական մաքրագործում, վերջնական բնաջրնջում չկատարուի: Մեր այսօրուան տեղը չենք կրնար նրատիլ. մտայր մեր թեւերէն կը բռնեն դուրս կը նետեն, ասով ալ չեն գոհանար, կը սպաննեն: Յեղափոխութիւնը չի՛ խղճար, այլ միայն իր հետապնդած նպատակը կը խորհի. ի՞նչ արգելքի ալ հասնի կը փլցնէ, կ'անհետացնէ:

Տօքթ. Պէհաէտտին Շաֆիր.— Մենք յեղափոխականներս թուրք ազգին հաշուոյն, Օսմանեան պետութիւնը ազգային իտէալներու վրայ հիմնելով ներկայ իշխանութիւնը մէջտեղ բերինք: Մեր ազգային կալուածին մէջ միայն թուրք յառաջդիմութիւնը եւ բարգաւաճումը կրնանք արտօնել. հինէն մնացած ազգերը անհարազատ եւ վնասակար խոտերը սրմատախիլ բնելով մեր հողը մաքրելու ստիպուած ենք: Մեր յեղափոխութեան նպատակ-ծրագիրը այս է. ասոր համար էր որ Իթթիհատ եւ Թէրապզըի իշխանութեան «Նոր Թրքական Պետութիւն» անունը տուինք եւ Օսմանցի անուան արժէքը ղէրոյի իջեցուցինք. իրականութեան մէջ Օսմանցի բար ի՞նչ արժէք կրնար ունենալ: Օսմանցի անունով հիմնուած պետութեան մը կալուածը ի՞նչ կրնայ արտադրել. խառնարանի պէս զանազան ազգութիւններու աւազապետները, Օսման անուան տակ զարմանալի խառնուրդ մը կազմած են, գիտական եւ մասնագիտական ըմբռնումով ասոր պետութիւն չի կրնար ըսուիլ. ասոր շատ շատ Օսմանէն իր զաւակներուն ժառանգ մնա-

ցած ազարակ մը կրնայ ըսուիլ. զանազան տարրերէ բաղկացած Օսմանեան խառնուրդը ազգային դրոշմ չունի. ազարակի մէջ գտնուած ընտանի կենդանիներու կը նմանի: Հայ, Յոյն, Պուլկար, Պօշնագ, Փօմագ, Սերպ, Արնաւուտ, Քիւրտ, Ձէրքէզ, Արաբ, Վրացի, Լազ, այս զանազան տարրերը իրր Օսմանցի անուան տակ ամբողջութիւն մը կազմած են: Այս գաղափարը պէտք է սրբազրել. ազարակի մը մէջ սագ, բազ, հաւ, ոչխար, կով, եզ եւ հորթը, ինչպէս որ մնացին ինչ որ էին, առանց իրենց ցեղը փոխելու, այս զանազան ազգութիւններն ալ նոյն ձեւով մեր հողին վրայ մնացին առանց իրենց ազգութիւնը եւս փոխելու. առիթը ներկայանալուն թուրքը ճնշած եւ անոր հողերը ձեռքէն առնելով անջատուած են: Ահա Ռումանացիները, Սերպերը, Պուլկարները եւ վերջապէս Մակեդոնացիները:

Գարա Քէմալ.— Թո՛ղ կորչին:

Հաճան Ֆէհմի.— Ձեր բարձր ներողամտութեամբ ես ալ մեր տոբթոր ընկերոջս նման (բայց ո՛չ թէ Արեւմտեան գիտութեանց ըմբռնումին համաձայն, այլ Աստուծոյ օգնութեամբ) քանի մը բառ խօսիլ կ'ուզեմ: Մարգարէն ըսած է «Քիւլմուզիր ըզթուր» (ամէն վնասակար բան պէտք է անհետացուի), ուստի քանի որ հայերու վնասը փաստուած է, քանի որ մեր նուիրական Իթթիհատ եւ Թէրագըր կուսակցութեան դէմ ապստամբած են, քանի որ ազատութեան հերոս ինվէր փաշային քեռայրը փախուստի մատնած են, այլեւս անոնց տեղ չկայ. անոնց մէկ անհատն իսկ ողջ չձգելու պայմանաւ ընաջնջումը օրինական է. նոյն իսկ պատրաստ եմ առ այդ քարոզելու. զիս փաթթոցաւոր տգէտ մէկը մի կարծէք. երախտագիտութեամբ կը խօսիմ. ես ազատութեան շնորհիւ երեսփոխան եմ. 50 հազար իսլամական կրօնական ուսանողութիւնը կը ներկայացնեմ. խնդիրը պարզեմ. քանի որ վնասը ընդհանուր է, զայն կանխելու համար մասնաւորներուն վնասել ներելի է: Ասացուածին համաձայն՝ ծեր, երեխայ, կին, անկարող նկատի չ'առնուիր, եւ բոլորը կը ընաջնջուին: Ես ընաջնջումի դիւրին ձեւ մը կը խորհիմ, ներեցէք որ պարզեմ. հիմա պատերազմի մէջ ենք, հայերու դէնք վերցնելու կարող երիտասարդները պատերազմի առաջին գիծը կը զրկենք, հոն դիմացէն ռուսերուն, իսկ ետեւէն մեր կողմէն մասնաւոր կերպով զրկուած ուժերուն կրակին մէջ կ'առնենք եւ կը ընաջնջենք. իրենց տունը մնացող տկար ու ծեր, կին ու երախայ տարրերուն համար ալ կը հրամայենք եւ մեր հաւատացեալները կը մաքրեն, ինչքերնին կը կողոպտեն, աղ-



Ջիկները կ'առեւանգեն: Այս միջոցառումը յարմար կը տեսնուի:

Գարա Գէմալ.— Ապրիս խոճա, տեսա՞ք ընկերներ մեզի վայել կրօնապետը:

Էնվէր (լրջօրէն).— Բնաջնջման եղանակը որոշել գործադիր մարմնին պարտականութիւնն է:

Հասան Գէհմի.— Հրամանատար, Ձեր վսեմութեան գործն է:

Ճաւիտ.— Եզրակացնենք. Տոքթ. Նազրմ, Պէհաէտտին Շաքիր եւ խոճա Հասան ընկերներուն բացատրութիւնները խնդիրը ըստ բաւականին լուսարանեցին: Հայերը երկար դարերէ ի վեր իրենց ապրած այս հայրենիքին դէմ դաւաճանելով, բոլոր առիթները օգտագործելով թուրքին թշնամիներուն հետ ձեռք ձեռքի տուին, ի վնաս թուրքին աշխատեցան. այն թուրքին՝ որ իրենց հանգստութիւնը, բարգաւաճումը կ'ապահովէր: Պարոններ, թուրքը այս երկրին մէջ միայն անուանական իշխող մըն է: Թուրքը արեւին կիզիչ ճառագայթներուն տակ իր արտին մէջ կ'աշխատի, բերքը կը բերէ եւ քաղաքի վաճառական հայուն կը ծախէ, զայն կը հարստացնէ, անոր հանգստութիւնը կ'ապահովէ: Տնտեսական իշխանութիւնը հայու ձեռքն է, հայերէն ոչ ոքի մնալու պայմանաւ բնաջնջումը մեր ազգային քաղաքականութեան տեսակէտին որչափ որ ստիպողական պէտք մըն է, նոյնչափ ալ թուրքին տնտեսական իշխանութիւնը հիմնելու համար կարելոր է, քուէի դիմենք:

Թալաաթի հրամանին վրայ քուէները հաւաքուեցան եւ դասաւորուեցան. արդի՞ւնքը... մէկ հատ իսկ չմնալու պայմանաւ հայերուն բնաջնջման մասին միաճայնութիւն գոյացած ըլլալը հասկցուեցաւ:

Հայկական խնդիրը, արեւելեան խնդիրներուն կարեւորներէն է: Պերլինի դաշնագրէն ետք, քանի մը արիւնոտ շրջաններ բոլորած, անգլիական, ռուսական եւ գերմանական մրցակցութեան հետեւանքով քանակով քիչ եւ սակայն աշխատասէր, գործունեայ այս ազգը խիստ տուժած էր:

Եւրոպայի դիւանագիտութեան խարկանքէն եւ հայ կուսակցութիւններուն ասոնց վստահելէն ու փառասիրութենէն՝ այս ազգին հասած դժբաղդութիւնները ցաւոտ եւ արիւնոտ են եւ ասոնց նկարագրութիւնը երկար է:

Ստորեւ յիշուելիք հայկական ցաւոտ դէպքերը, Իթթիհատ եւ Թէրազըր կուսակցութեան Օսմանեան պետութեան տիրացած շրջանին կը պատկանին եւ ասիկա կիլի-

կիոյ Ատանա քաղաքին մէջ 1909 Ապրիլ 14 Դշ. օր պատահած կոտորածով սկսած է:

Այս կոտորածին զաղտնի պատճառները «Պոլսոյ մէջ 31 Մարտի շարժում» որպէս պատմութիւն արձանագրուած գէպքին մէջ փնտռելու է:

13 Ապրիլ 1909ին զուգադիպող, 31 Մարտ 1325ի պետական տարին, Պոլսոյ մէջ ծագած շարժումը, Իթթիհատ եւ Թէրազզը կուսակցութեան տարածայնութեան պէս, ո՛չ յետադիմական շարժում մը եւ ո՛չ ալ հանգուցեալ Սուլթան Ապտիւլ Համիտի գործն էր: Այս շարժումը թագաւորազուն Սապահէտտինի եւ նախկին վարչապետ Քեամիլ փաշայի նախագահած «Ահրար» (ազատական) քաղաքական կուսակցութեան ստուղն էր: Այս շարժման արագ ծաղկումին նպաստող պատճառները շատ են, մասնաւորապէս Իթթիհատ եւ Թէրազզը կուսակցութեան կեդրոնին այն ժամանակուան ղեկավարներուն մերժողական գիրքն ու մեծ ուճիրներն են:

Ազատական քաղաքական կուսակցութիւնը, հանգուցեալ Սուլթան Ապտիւլ Համիտի անձին եւ Իթթիհատ եւ Թէրազզըի զաղտնի կազմակերպութեան գէմ էր: Ազատական քաղաքական կուսակցութեան նպատակը Սուլթան Ապտիւլ Համիտը դահաղրկել, դահաժառանգ Րէշատ էֆէնտին դահ բարձրացնել, բանակը քաղաքականութեամբ զբաղելէ արգելել եւ իրական սահմանադրական վարչաձեւ մը հաստատել եւ իրենց ծրագիրը գործադրել տալ էր:

Ազատական քաղաքական կուսակցութեան ծրագիրը ապակեդրոնացման դրութեան վրայ հիմնուած էր: Ասոր համար էր, որ Երեսփոխանական Ժողովի արար, քիւրտ, հայ, արնաւուտ եւ յոյն անդամները՝ այս կուսակցութեան յարած եւ անոր յառաջդիմութեան եւ ծաւալման կ'աշխատէին:

Ազատական քաղաքական կուսակցութեան ղեկավարները հայ Դաշնակցական քաղաքական կուսակցութեան ղեկավարներուն հետ մասնաւոր հասկացողութեան եկած եւ Իթթիհատ եւ Թէրազզը կուսակցութեան Սահմանադրութեան հակառակ ըլլալով՝ զաղտնի պահած կազմակերպութեան եւ բանակին քաղաքականութեամբ զբաղելուն զէմ միասնաբար պայքարիլ որոշած էին: Այս երկու կուսակցութիւններուն, ազատական եւ Դաշնակցութեան Պոլսոյ մէջ բրորականաի միջոցները զօրաւոր ըլլալուն, կարճ ժամանակուան մէջ Իթթիհատ եւ Թէրազզը կուսակցութիւնը յաշս ժողովրդեան վարկարեկեցին եւ գէշ կերպով

սարսեցին: Այս պատճառաւ Իթթիհատ եւ Թէրագզը կուսակցութիւնը՝ Ազատական կուսակցութեան 31 Մարտի շարժումը զսպելով եւ զայն պարտութեան մատնելով յարձակումը հայերու դէմ սկսած եւ յոյն, արնաւում, արար եւ քիւրտերը պատժելու գործն ալ ասպագային ձգած էր:

Իթթիհատ եւ Թէրագզը կուսակցութիւնը զօրաւոր կեդրոնական կառավարութեան մը կուսակից էր: Կառավարութիւնը տեւական կերպով իրենց ձեռքին մէջ ունենալու համար տարրեր քաղաքական կուսակցութիւններուն գործունէութիւնը կը խափանէր, եւ իրենց դէմ պայքարելիք ազատամիտ անձնաւորութիւններն ալ իր գաղտնի կազմակերպութեան եւ իր ձեռքը ունեցած պետական ուժերու աջակցութեամբ անհետացնել կու տար:

Իթթիհատ եւ Թէրագզը կուսակցութիւնը կը ձգտէր թուրք տարրը օսմանցի այլ տարրերու վրայ տիրապետող դարձնել, անոր բացառիկ դիրք մը ստանձնել, մնացեալ տարրերը յուծելով եւ կամ ձեւով մը բնաջնջելով Օսմանեան միութիւնը քանդել եւ անոր տեղ նոր թրքական պետութիւն մը հիմնել կը ծրագրէր:

Իթթիհատ եւ Թէրագզը կուսակցութեան գեկավար անձնաւորութիւնները, մասնաւորապէս զինուորական բարձրաստիճան անձնաւորութիւնները չէին կրցած հասկընալ, թէ Սելյանիկի հաւատարմիներուն յղացած այս թուրանի քաղաքականութիւնը երկրին մէջ ի՞նչ տալնայ, ի՞նչ բաժանումներ պիտի յատաջացնէր:

Օսմանցի բտոր, ընդարձակ երկրի մը մէջ զանազան ազգերու պատկանող իսլամ եւ ոչ-իսլամները համախմբած եւ առանց խտրութեան Օսմանեան դրօշին տակ միութիւն մը կազմած էր: Այս միութեան մէջ սուրոյ իսլամ տարրին մաքէն սղգային զգացումը ջնջուած, միայն կրօնական տարրերութիւն մը մնացած էր: Իսլամ տարրը իշխողի դիրքին մէջ էր: Քրիստոնեաներն ալ, բացի զինուորացութենէ, բայտը պետական զործերու մէջ կը գտնուէին, եւ մինչեւ իսկ ամենաբարձր նկատուող նախարարական ասթոներ կը բարձրացուէին: Օսմանեան պահակայիներն ալ Մարգարէի փոխանարկութիւնը եւ իշխանութիւնը իրենց վրայ կեդրոնացուցած, իսլամական աշխարհի վրայ մասնաւոր բարոյական առանձնաշնորհման մը տիրացած եւ այսպէսով իրենց հեղինակութիւնը ուրիշ թաղաւրներէն պերկիւր գարծուցած էին:

Այս միութիւնը քանդել եւ տտոր տեղ միայն թուրք անունը տիրապետել տալ, ոչ թուրք իսլամ տարրերը վրջ-

տացնել եւ ասոնց մէջ կրկին ազգային զգացումը արթնցրնել, անկասկած քանդիչ, ձախող եւ ո՛չ բանաւոր քաղաքականութիւն մըն էր, որ վերջապէս ահագին Օսմանեան կայսրութիւնը հիմէն քանդեց, երկիրը բաժան բաժան ընելով Անատոլուի թուրքն ալ հազար ու մէկ պայմաններու ենթարկելով՝ թշուառացուց:

Ազատական քաղաքական կուսակցութիւնը 31 Մարտի շարժումը չէր կրցած ղեկավարել եւ պարտուած էր: Իթթիհատ եւ Թէրազզը կուսակցութեան ղեկավարները, Բումէլիէն հաւաքած եւ «Շարժման Բանակ» յորջորջուած գունդերով Պոլիս մտած, ընդդիմադիրներէն ձեռք անցուցածը սպաննած, կախաղան բարձրացուցած եւ թագաւորական պալատը աւարի տալով կրկին իշխանութեան տիրացած էր:

\* \* \*

Այս տագնապի ընթացքին Իթթիհատ եւ Թէրազզը կուսակցութիւնը հայերը չէր մոռցած: Ատանայի մասնաճիւղը կեդրոնէն ստացած հրահանգին համաձայն կիլիկիոյ, մասնաւորապէս Ատանայի մէջ ընդհանուր ջարդ մը պատրաստելու սկսած էր:

Տարածայնելով, թէ հայերը պիտի ապստամբին եւ կիլիկիոյ մէջ հայկական օճախ մը հիմնելու կը ձգտին, հասարակ ժողովուրդը հայերու դէմ զրգուելու ձեւով գործի սկսած էին:

Ատանայի կուսակալ ձէւատ պէյ եւ զօրավար Բէմզի փաշա, հայերուն ապստամբութիւն վերագրելով, նախապէս զինուորական ուժ խնդրած էին:

Ատանայի հայերը, տիրող կացութեան ընթացքէն կասկածելով վախ կը զգային, որովհետեւ շրջակայ դիւղացիները հրացանով, ատրճանակով, սուր եւ մանգաղով, բիրերով զինուած, խումբ խումբ քաղաք գալ սկսած էին: Հայերը իրենց դէմ զրգուուած այս ամբոխին եւ հասարակ ժողովուրդին յանկարծական յարձակումէն կը վախնային եւ կառավարութեան ընթացքէն ալ կը խրտչէին: Ուստի ամէն հաւանականութեան եւ յարձակման դէմ ստիպուած էին իրենց թաղերը ամրացնել:

Կասկածելի վիճակ եւ անվստահութիւն կը տիրէր: Երկու կողմերն ալ՝ իսլամներ եւ հայեր, տարբեր ազդեցութեան մը տակ մագնիսացած, երկու կողմերն ալ իրարմէ կը վախնային եւ իրարու յանկարծական յարձակման դէմ պաշտպանուիլ կը խորհէին:

Քաղաքին մէջ զրգուութիւն կը տիրէր: Մանր կայծ

մը ինչպէս որ վառօթի տակառ մը բռնկեցնելու պիտի բաւէր, այնպէս ալ փոքր եւ աննշան դէպք մը սոսկումով վարակուած ժողովուրդը իրարու վրայ խոյանալու պիտի ծառայէր:

Իրերու այս վիճակին մէջ 13 Ապրիլ 1909ի Գշ. գիշերը կահագործ Լուսթֆիկ անուն հայ մը սպաննուելով դիակը ժամացոյցի աշտարակին մօտերը նետուած էր:

Որո՞ւ կողմէ եւ ի՞նչ պատճառներով սպաննուած ըլլալը առանց ստուգելու եւ միայն Լուսթֆիկին թլփատուած ըլլալը տարածայնուելով, սպանեալէ իսլամ թէ քրիստոնեայ ըլլալը խնդիր դարձած էր եւ ընդհ. գրգռութիւնը աւելի սաստկացած, եւ հայերու երկիւղը աւելցուցած էր:

Հետեւեալ Գշ. օր հայերը խանութները բանալու չէին համարձակած: Կուսակալ ձէւտէթ պէյ եւ հրամանատար Րէմզի փաշա երեւութապէս գրգռութիւնը մեղմելու նպատակաւ վարչական ժողովի անդամներէն Պաղտատցի Զատէ Ապտիւլ Գատէրը եւ Ուրֆալեան Տաւուտ էֆէնտինները ժողովուրդը խրատելու, հայերու երկիւղը փարատելու համար շուկան եւ հայկական թաղերը դրկած էին:

Ճամբան Գարա Սոքու ըսուած վայրը, Ուրֆալեան Տաւուտ էֆէնտիի աչքերուն առջեւ յօշոտուած գտնուած էր, քաղաքապետական չէնքին մէջ, գործարանատէր Շատրիկեան Յարութիւն աղան:

Բացայայտօրէն կազմակերպուած այս ոճիրներուն վրայ գրգռութիւնը կասեցնել անկարելի դարձած եւ կողմերու միջեւ հրացանաձգութիւնը սկսած էր:

Իսլամները հայկական թաղերու վրայ յարձակել փորձած եւ սակայն ցոյց տրուած զօրաւոր ինքնապաշտպանութեան վրայ չկարենալով ներս մտնել, խանութները թալանի տուած եւ գիշերը թաղերուն կրակ ձգած էին:

Այս խուճապը, բնդհարումը, արիւնոտ կռիւր ճիշդ երեք օր երեք գիշեր տեւած եւ միայն երրորդ օրը Ամերիկեան միսիոնարներէն Մր. Չէմպրըսի միջնորդութեամբ երկու կողմերու, իսլամներու եւ հայերու միջեւ գինադադար կնքուած էր: Երեւելիներ իրարու մօտ գալով զիրար հասկըցած եւ այսչափ արիւն թափուելուն պատճառ երկու խրոնովութեան հեղինակները անիծած էին: Թիւրքիմացութիւնը փարատուելով խոռովութիւնը վերջ գտած եւ ամէն ոք իր գործով զբաղել սկսած էր:

Այս դէպքի ընթացքին՝ միայն Ատանա քաղաքին մէջ հարիւրէ աւելի հայ եւ հարիւր յիսունի մօտ իսլամ աստուանուած էր:

«Ազատութեան Բանակ», «Սելանիկի Բանակ» անու- նով պանծացուած Տէտէ Աղաճի վաշտն ալ եկած էր: Այս զինուորները նախորդներէն աւելի վստահելի կարծուած եւ հայկական թաղերու տիրող դիրքերուն մէջ բաժնուած էին:

Տէտէ Աղաճի վաշտին հասնելէն օր մը ետք, 25 Ապ- րիլ 1909ի Կիրակին, առանց ոեւէ պատճառ տեսնուելու, կէսօրէն ետք յանկարծ հայկական թաղէն զէնքի ձայները լսուիլ սկսած էր, շուկան իրենց գործերով զբաղող հայերը այս ձայներէն խուճապի մատնուած էին: Իթիհատ եւ թէրագղըի բրորականտիստները վախցող հայերուն՝

— Վախնալիք բան չկայ. գոմէջ մը խենթացած ըլլա- լով վրան զէնք կը պարպեն — խօսքերով հայերը քնացնելու եւ անոնց փախուստին առիթ չտալու աշխատած էին:

Չէնքի ձայները սաստկացած էին եւ խնդիրը հաս- կըցուած էր: Տէտէ Աղաճի վաշտը, առանց ոեւէ պատ- ճառի, հայերու վրայ կրակելու հրաման ստացած էր:

Հայերու մէկ մասը տուներու մէջ ինքնապաշտպանու- թեան եւ մէկ մասն ալ եկեղեցիներու եւ օտար նկատուած Յիսուսեան եւ Ամերիկեան միսիոնարներու շէնքերը փու- թացած էին հոն ապաստան գտնելու յոյսով:

Կրկին սկսած այս ջարդը եւ ասոր յաջորդող հրդեհ ու թալանը մինչեւ հետեւեալ առաւօտ շարունակուած էր եւ հայկական եկեղեցի մը, հոն ապաստանած փոքրիկներու եւ անմեղներու հետ հրկիզուած էր; այլ եկեղեցիի մըն ալ կրակ տալու հրաման տրուած էր:

Այդ վայրկեանին, Յիսուսեան հաստատութիւններու տնօրէն Բէր Ժու, անձնութեամբ եւ կեանքը անարգե- լով հոն հասած եւ այս եկեղեցւոյն հրկիզման առիթ չտա- լով, հոն ապաստանած ժողովուրդը փրկած եւ իրենց հաս- տատութիւններէն ներս ապաստան տուած էր:

Վերջապէս Ամերիկեան միսիոնարներէն Մր. Չէմ- պրրօսի եւ Յիսուսեան հաստատութիւններու Բէր Ժուի ջան- քերուն շնորհիւ՝ ջարդէն ազատած բոլոր հայերը, կառա- վարական պալատի դիմացի պարտէզին մէջ հաւաքուելով զինուորական շղթայի մը մէջ առնուած էին:

Հայերը ութը ժամ այս վիճակին մէջ մնալէն ետք, գերմանական եւ թրքիստի գործարաններուն մէջ բաժ- նուած եւ 5 օր հսկողութեան տակ պահուելէ ետք՝ Պոլսէն ստացուած հրահանգին վրայ տուներին երթալու եւ իրենց գործերով զբաղելու արտօնուած էին:

Ահաւասիկ Ատանայի ջարդը. վարագոյրը այսպէսով փակուած եւ ընական վիճակ ստեղծուած էր:

\* \* \*

Ճէմալ փաշա 1922ին հրատարակած իր յուշերուն մէջ Ատանայի կոտորածին մասին հետեւեալը կը գրէ.—

«Պոլսոյ 31 Մարտի դէպքի ընթացքին թուրքերու եւ հայերու միջեւ մեծ կոտորած սկսած էր:

«1909ի Օգոստոսի կէսերուն, Ատանայի Կուսակալ նշանակուած Ըլլալուս, Օսմանեան Սահմանադրութեան ամենասեւ էջը եղող այս կոտորածին պատճառները մանրամասնօրէն քննող ինձմէ զատ ոեւէ մէկը չէ գտնուած»:

Ճէմալ փաշա այս նախարանէն վերջ, կ'ըսէ.

«Ատանայի նահանգին բնակչութեան մեծամասնութիւնը թուրքերէ կը բաղկանայ: Ասոնցմէ վերջ՝ հայերը եւ աւելի վերջն ալ՝ արաբ ուշադր կոչուած արարներ եւ յոյներ: Նահանգին ընդհ. բնակչութեան թիւը 550,000ը անց է: Ասոր մօտաւորապէս 60 հազարը հայ, 20-25 հազարը արաբ ուշադր 10-15 հազարը յոյներ եւ մնացեալը թուրքեր են:

«Գրեթէ բոլորն ալ երկրագործներէ բաղկացած, անոնց մէջ դարերէ ի վեր սէր եւ համերաշխութիւն կը տիրէր:

«Անհերքելի ճշմարտութիւն է, որ Ատանայի նահանգը օսմանցիներէ շատ առաջ թուրք էր, թէեւ Կիլիկիա կոչուած այս հողամասին մէջ խաչակրութեան ժամանակ հայկական իշխանութեան մը գտնուիլը պատմութիւնը կ'արձանագրէ, սակայն այն ժամանակ այս մասին մէջ շատ մը թուրքեր կը բնակէին եւ ասոնց աւատապետները այս իշխանութեան հանգիստ չէին տար:

«Ներկայիս Ատանայի նահանգին մէջ բնակող հայերու շատերը հարստանալու նպատակով 19րդ դարու ընթացքին Տիգրանակերտէն, Սերաստիայէն եւ Խարբերդէն գաղթողներ են:

«Բուն տեղացի հայերը, նահանգին Հիւսիսային սահմանին մէջ գտնուող Հաճնոյ գաւառակին, Գողանի գաւառակին կեդրոնը եղող Սոոյ եւ անոր քանի մը գիւղերուն եւ Իսկէնտէրունի ծոցին եզերքը գտնուող Տէօրթ Եօլի եւ անոր մօտ քանի մը գիւղերու բնակիչներն են:

«Արաբ ուշադներն ալ Ապաիւլ Ազիզի գահակալութեան ժամանակ Լաթաքիայէն գաղթածներ են:

«Նահանգին հայ եւ թուրք բնակչութիւնը վերեւ յիշուածին պէս իրարու հանդէպ վստահութեամբ եւ առանց տարակարծութեան կ'ապրէին:

«Այն աստիճան, որ 1894–1896ի յեղափոխութեան եւ կոտորածներու ժամանակ, Ատանայի նահանգին մէջ ոչ մէկ զէպք պատահած է. եւ այս խառնակութիւններէն իրենց նահանգին չազդուելուն համար հայ-թուրք միասին աշխատած եւ յաջողութիւններ արձանագրած էին:

«Սահմանադրութեան հռչակումէն ետք Ատանայի մէջ կազմուած թուրք յեղափոխական կուսակցութիւններու դէմ հայերն ալ Դաշնակցական, Հնչակեան եւ վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւններու մասնաճիւղեր բացած, աւելի ճիշդը հինէն գործող զաղտնի կազմակերպութիւնները երեւան հանած էին:

«Այն ժամանակ Ատանայի Առաջնորդը՝ Մուշեղ Էֆէնտի անունով փառասէր եւ երիտասարդ եկեղեցականն էր:

«Մուշեղ Եպիսկոպոս Սահմանադրութեան հռչակման վաղորդայնին ինքզինքը Ատանայի հայոց քաղաքական եւ կրօնական ամենամեծ պետը կը նկատէր:

«Կառավարութեան պաշտօնեաներուն ապիկարութենէն օգտուելով՝ օր մը նահանգային Վարչական ժողովին մէջ կուսակալին հանդէպ խիստ անարգական դիրք բռնած եւ անմիջապէս երթալով ոստիկան-գօրաց հրամանատարը ապտակել ուզելը յայտարարելով, ժողովը կէս ձգած ըլլալը ինծի պատմեցին:

«Նոյնպէս հայերը ինծի պատմեցին, թէ այդ ժամանակ շատ մը հայ երիտասարդներ Մուշեղ Եպիսկոպոսին զօրավիգ եղած են: Հոս հոն գումարուած միթիւնկներուն յանդգնած է յայտարարել, որ հայերուն թուրք լուծէն ազատագրուելու ժամանակը ուշ չէ:

«Մուշեղ Եպիսկոպոս ասով ալ չի գոհանալով, իր մարդիկը զինելու համար Եւրոպայէն զէնք բերել տալ սկսած էր. այն ժամանակ կառավարութիւնը ինչպէս ամէն բան, զէնքի ներածումն ալ ազատ ձգած էր:

«Մուշեղ Եպիսկոպոս բացէ ի բաց կը յայտարարէր, թէ հայերը զինուած ըլլալուն այլևս 1894ի կոտորածներուն նման դէպքերէն պիտի չվախնան եւ եթէ հայու մը մազին դաչին՝ փոխարէնը տասը թուրք պիտի սպաննուի:

«Մուշեղ Եպիսկոպոսի այս շփացածի յայտարարութիւնները Ատանայի թուրքերուն փոխադարձ միջոցառումներու դիմելուն պատճառ դարձած էր:

«Ատանայի կառավարութեան ամենամեծ պատասխանատուութիւնը հոս կը սկսի. անոր տկարութիւնը եւ ապիկարութիւնը չի՛ կրնար զայն արդարացնել: Մուշեղ Եպիսկոպոսին այս յորդումը իսլամ ժողովուրդին մտահոգու-



թիւն պատճառելուն՝ Մուշեղ Եպիսկոպոսն ալ, անոր ուժ տուողներն ալ, թուրքերէն խառնակութիւն հանելու ճրգտող անձերն ալ ձերբակալել, բանտարկել եւ դատարան յանձնել եւ ի հարկին պատերազմական վիճակ յայտարարել ամենէն յարմար միջոցն էր:

«Այն ժամանակ Ատանայի կուսակալը ձէւասի պէյ, թէեւ բարոյականի տէր, սակայն վարչականօրէն անկարող ըլլալուն՝ կուսակալութիւնը վարելու պայմանները շէր ներկայացնել:

«Զօրաբանակի հրամանատարն էր Մուսթաֆա Բէմզի փաշա անունով ծեր զինուորական մը: Երիտասարդութեան համբաւ չահած այս հին զինուորը ամբողջ իր կեանքը պատուով եւ հայրենասիրութեամբ անցուցած եւ սակայն ծերացած ըլլալուն՝ կարգապահութեան պաշտօնը վարելու անկարող էր:

«Ճէպէլ Պէրէքէթի գաւառակին կառավարիչն էր Արիֆ պէյ. այս մարդը շուքէն վախցող ըլլալուն, չեմ կրնար հասկնալ, թէ ինչո՞ւ կառավարիչ նշանակած էին:

«1909 տարուան սկիզբը, ամէն ոք կը խօսէր, թէ ի մօտոյ հայերը յեղափոխութիւն պիտի հանեն եւ թուրքերը բնաջնջեն եւ այս առիթով այս նահանգը եւրոպական տորմիդին կողմէ գրաւուելով Հայաստան մը պիտի ստեղծուի:

«Թուրքերը այս օտարաձայնութեան այնչափ հաւատք բնծայած էին, որ երեւելիներէն շատեր իրենց բնտանիքները ապահով վայրեր զրկել կը խորհէին:

«1909ի Ապրիլին կողմերու միջեւ լարուածութիւնը այնչափ սաստկացած էր, որ ժամէ ժամ ժողովուրդին իրարու վրայ յարձակելու լուրին կը սպասուէր:

«Վերջապէս Ապրիլ 14ին Մուշեղ Եպիսկոպոսի հրամանով առաջին անգամ հայերու կողմէ սկսած յարձակումը «Ատանայի դէպքը» յառաջացուցած էր:

«Ատանայի, Տարսոնի, Համիտիէյի, Էրզինի, Տէօրթ Եօլի, Ազիզիէի, վերջապէս հայերու բնակած վայրերու մէջ այնպիսի սարսափելի կոտորածներ կատարուեցան, որոնց նկարագրութիւնը կարդալն անգամ մարդ կը շմեցնէ:

«Ահաւասիկ Ատանայի առաջին դէպքին պատճառները ասոնք են: Երկրորդ դէպքը, որ առաջինէն 10 օր ետք տեղի ունեցած եւ միայն Ատանա քաղաքին մէջ կատարուած էր, գիշերանց հայ երիտասարդներուն զինուորական կեդրոնին վրայ կրակ բանալով սկսած եւ աւելի ծայրահեղ եղած է:

«Իմ համոզումովս Ատանայի կոտորածին միակ պա-

տասխանատուն Les vèpres ciliciennes<sup>1</sup> հեղինակ Մուշեղ Եպիսկոպոսն է: Անոր հետապնդած նպատակները ըմբռնելով հանդերձ հարկ եղած միջոցները ձեռք չառնող այդ ժամանակուան Ատանայի կառավարութիւնն ալ նոյնպէս, ըստ իս, պատասխանատու է:

«Ատանայի դէպքին 17 հազար հայ եւ 1850 իսլամ սպաննուած է. այս թիւերը ցոյց կու տան, որ եթէ Ատանայի հայերը մեծամասնութիւն ըլլային, հակառակը պիտի պատահէր եւ հայերը թուրքերը սպաննած պիտի ըլլային: Չարդի ընթացքին երկու կողմերու ցոյց տուած «քաջութիւնները» հաւասար էին:

«Մանտելշթայմ իր գիրքին 205րդ էջին մէջ որչափ որ իր հակաթուրք հրատարակութիւններով ծանօթ Ատոսիտէս անուն յոյնին երկին յենելով գրած է, թէ Ատանայի անարժէքներէն միայն 9 հոգի կախաղան հանուած են, սակայն թէ Ատոսիտէս եւ թէ Մանտելշթայմ կը ստեն: Ատանա ժամանելէս չորս ամիս ետք միայն, Ատանա քաղաքին մէջ պատերազմական ատեանի դատապարտուածներէն 30(1) եւ երկու օր ետքն ալ էրզին գաւառակի մէջ 17 իսլամներ կախաղան հանել տուի: Ասոնց հետ միայն մէկ հայ: Կախաղան հանուածներուն մէջ Ատանայի ամենահին եւ հարուստ ընտանիքներուն պատկանող երիտասարդներ եւ Պաղչէ գաւառակին միւլթիին ալ կային:

«Այս միւլթիին շրջանի թուրքերուն մօտ մեծ հեղինակութիւն ունէր: Շատ կը ցաւիմ որ դէպքին երկրորդ օրը օտար նաւով մը Աղեքսանդրիա փախչող Մուշեղ Եպիսկոպոսը չկրցայ ձեռք անցնել: Եթէ պատերազմական ատեանի կողմէ ի բացակայութեան մահուան դատապարտուած այս անձը ձեռք անցնէի, զինք Պաղչէի Միւլթիին դիմաց կախաղան հանել կու տայի»:(2)

Ատանայի Չարդը իր բոլոր մանրամասնութիւններովը եւրոպական թերթերու մէջ արձագանգ գտած եւ Իթթիհատ եւ Թէրագզըի դէմ գրուած աննպաստ հրատարակութիւնները, սոյն կուսակցութեան ղեկավարներուն վախ

Ծ Թ. (1) Սոյն թիւը չի համապատասխաներ իրականութեան. կախուղանքն յն 10 հոգի Մուհամմէտ էֆ ի Պազտատ Օզլու եւ եղբայրը՝ Իսմայիլ էֆ ի ու իրենց երկու փեսաները եւ վեց հայեր

Ծ Թ. (2) Սոյն յուշերուն հրատարակումով ձեւալ փաշա ուզած է Ատանայի դէպքին պատասխանատուութիւնը հայերուն, մասնաւորապէս Մուշեղ Եպիսկոպոսին վերագրել, սակայն ներկայ գրքոյկին հեղինակն իսկ կ'ընդունի եւ կը փաստէ, թէ այս եւ ուրիշ կոտորածներ՝ Իթթիհատ եւ Թէրագզըի կողմէ նախապէս որոշուած եւ գործադրուած են

ազդած ըլլալով, սկսած էին տարածայնել, թէ այս յետադիմական շարժումը ընդդիմադիրներու կողմէ կազմակերպուած է: Հայ կուսակցութիւններն ալ սիրաշահելով կըրկին իրենց կողմը գրաւել խորհող Իթթիհատ եւ Թէրազզըի ղեկավարները, նոյնիսկ Դաշնակցական կուսակցութենէն խնդրած էին, որ յետ այսու Ատանայի կուսակալ նշանակուելիք անձերը իրենք ներկայացնեն:

Դաշնակները, Իթթիհատ եւ Թէրազզըի խռովարարներուն այս առաջարկը առանձնաշնորհում նկատելով գոհ մնացած, բառին բուն նշանակութեամբ խարուած էին, նոյնիսկ «նշանաւոր» ձէմալին Ատանայի կուսակալութեան նշանակումը իրենց առաջարկով կատարուած ըլլալը յայտարարելէ եւ պարծենալէ չէին քաշուած: Դաշնակ թերթերը ամիսներով այս խնդիրը յեղյեղած էին, մինչդեռ խնդիրը հետեւեալ կերպով տեղի ունեցած էր:

Պոլսոյ երեսփոխան Չոհրապէֆէնտի, տակաւին ըսկիւտարի կառավարիչ եւ Իթթիհատ-Թէրազզըի հիմնադիրներէն ձէմալի հետ մտերիմ բարեկամ էր: Ձէմալ իր պատկանած կուսակցութեան հրահանգով Չոհրապէն խընդրած էր, որ իրեն Ատանայի կուսակալութեան թեկնածութեան ներկայացման համար Դաշնակցութեան մօտ բարեսօսէ եւ այս կերպով Դաշնակցութեան համամտութիւնը ապահովելով ձէմալ Ատանայի կուսակալ նշանակուած էր:

Ձէմալին Ատանայի կուսակալութեան նշանակումը երեւութապէս այսպէս կատարուած եւ սակայն իրականին մէջ անոր նշանակումը Իթթիհատ եւ Թէրազզըի կողմէ որոշուած էր, եւ միայն Դաշնակցութիւնը գոհ ձգելու եւ ընդդիմադիրներու հետ անոնց յարաբերութիւնը խզելու համար խաղցուած խաղ մըն էր, մէկ քարով երկու թռչուն վարնուած էր:

Իթթիհատ եւ Թէրազզը կուսակցութիւնը մինչեւ Ա. ընդհանուր պատերազմը նոր հայկական ջարդ մը կազմակերպելէ զգուշացած եւ նոյնիսկ Պալքանեան պատերազմին պարտութենէն ետք Ռուսիոյ առաջարկով եւ Գերմանիոյ հաւանութեամբ Արեւելեան նահանգները երկուքի բաժնելու եւ իւրաքանչիւր շրջանակին ինքնավար վարչաձեւ մը տալու եւ, ասոնց կառավարութիւնը չէզոք տէրութիւններու հպատակ անձնաւորութիւններու յանձնելու համար սլատրաստուած համաձայնագիր՝ Օսմանեան պետութեան կողմէ Վարչապետ եւ Արտաքին Գործոց նախարար Սաիտ Հալիմ փաշա եւ մեծ պետութեանց կողմէ Պոլսոյ Ռուս գործակատար Կոլքէվիչ ստորագրած էին:

Մասնաւոր կազմակերպութիւնը ուրիշ բան չէր, եթէ ոչ պատասխանատու եւ կէս պաշտօնական թալանիչներու խմբակ մը. ժողովուրդը այս խմբակը կը ճանչնար որպէս պետական եւ դատական հետապնդումներէ զերծ. իր գործունէութեան մէջ անկախ եւ միայն երեք հոգիէ բաղկացած գործադիր կոմիտէի հրամանին ենթակայ եւ Իթթիհատ եւ Թէրազզըի ոճրագործ, մարդասպան եւ թալանիչներէն բաղկացած կազմակերպութիւնն էր:

Տօքթ. Պէհաէտտին Շաքիրէ, Տօքթ. Նազրմէ եւ Կըրթական նախարար Շիւքրիէն բաղկացած այս երեքներու գործադիր կոմիտէն, անկախ, ոչ պաշտօնական եւ սակայն անպատասխանատու գործադիր մարմին մը ըլլալով, մասնաւոր Գրասենեակ, քննիչներ եւ այլ պաշտօնեաներ ունէր. պետութեան մէջ պետութիւն եւ կուսակցութիւն: Անոնք խիստ վտանգաւոր տարր մը դարձած էին:

Մասնաւոր կազմակերպութիւնը Տօքթ. Պէհաէտտին Շաքիրի ուղեղէն ծնած եւ ընկերներուն հաւանութեան արժանանալով մինչեւ ընդհանուր պատերազմի վերջաւորութիւնը երկրին ժողովուրդը այրած եւ զինադադարի տարիներուն ալ Անատոլուի շարժումներուն մէջ հրապարակ գալով շատ մը կարեւոր անձեր անհետացուցած, տուներ քանդած, քաղաքներ եւ գիւղեր այրած՝ աւերակ դարձուցած էր:

Մասնաւոր կազմակերպութեան մէջ Բումէլիի ազգութիւնը անորոշ ոճրագործները, սրիկաները եւ թալանիչները աւելի յարգի էին քան Անատոլուի ոճրագործները եւ թալանիչները:

Ընդհանուր թիւը 8-10 հազարի հասնող այս կազմակերպութիւնը նուազագոյնը տասը՝ առաւելագոյնը յիսուն հոգիէ բաղկացած խումբերու բաժնուած եւ ասոնց հրահանատարները մարդասպանութեամբ, կեղեքումով, տուն ու տեղեր այրելով եւ թալանով, առեւանգութեամբ եւ տեսակ տեսակ ոճրագործութիւններով սնած մարդիկներ ըլլալով, Երեքներու գործադիր կոմիտէէն արուած հրահանգները առանց խղճահարութեան կը գործադրէին:

Հետապնդումի եւ բանտարկութեան վախ չկար. նոյնիսկ գործուած ոճրագործութիւններն ու վայրագութիւնները հայրենիքի ծառայութիւն կը նկատուէին:

Մասնաւոր կազմակերպութեան մասին աւելի լաւ գաղափար մը կարենալ տունելու համար Երեքներու գործադիր կոմիտէին առաջին նիստը լսել կը բաւէ:

Երեքներու գործադիր կոմիտէն իր առաջին նիստը

Իթթիհատ եւ Թէրագգրի ընդհանուր Կեդրոնին մէջ գումարած եւ սուաջին խօսողը Տօքթ. Պէհաէտտին Շաքիր եղած է. յսենք:

Պէհաէտտին Շաքիր. — Ընկերներ, խիստ կարեւոր եւ ծանր պարտականութիւն մը ստանձնեցինք. եթէ այս պարտականութիւնը պէտք եղածին պէս չվերջացնենք եւ առաջիններուն նման կիսկատար ձգենք, երբեք կասկած չունենանք որ հայերու վրէժխնդրութենէն պիտի չկրնանք փրկուիլ: Պատերազմի մէջ ենք, Եւրոպայի եւ մեծ պետութիւններու միջամտութեան վախը չկայ. աշխարհի մամուլն ալ չի կրնար բողոք բարձրացնել, եթէ աղմկեն իսկ, որեւէ արգիւնք չունենար. յառաջիկային խնդիրը կատարուած իրողութիւն մը կը դառնայ, ձայները կը դադրին եւ ո՛չ ոք բողոքի ձայն բարձրացնելու համարձակութիւնը կ'ունենայ: Այս բացառիկ կացութեան նրբութիւններէն առաւելագոյն չափով պէտք է օգտուինք: Այս առիթը ամէն ժամանակ չի ներկայանար: Հիմա ամէն բանէ առաջ մեր տրամադրութեան տակ անկախ գինեալ ուժի մը պէտք ունինք: Այս ստիպողական պէտքը ինչպէ՞ս եւ ուրիշ՞ պէտք է ճարենք: Հայերը լման բնաջնջելու համար որո՞նց պաշտօն պիտի տանք: Ահաւասիկ բուն հարցը հոս է. գործը բանակին, ստիկան-գինուորներուն չենք կրնար յանձնել, ասոնցմով մեր նպատակին չենք կրնար հասնիլ: Ասիկա անցեալին փորձուած է. խնդիրը ուղղակի ժողովուրդին ալ չենք կրնար ձգել. ասով ժողովուրդը կը շփանայ եւ յառաջիկային մեզի դէմ կը շարժի, նոյնիսկ կրնայ գլուխ ցցել: Իրականութեան մէջ հանրային կարծիքը մեզի աննպաստ է. քանիցս կրկնեցի, թէ առանց արիւնի յեղափոխութիւնը այսպէս կ'ըլլայ. առանց արիւնի յեղափոխութիւնը տաղնապի օրեր, հակառակ շարժումներ կ'ունենայ, հին վարչաձևի կողմնակիցները քիչուոր ալ չեն, շատ են. մենք մեր մտային կարողութեամբ չէ որ բանակը, այս իշխանութիւնը ձեռք բերած ենք: Եթէ բանակին նուիրները չկարենայինք ձեռք ձգել, այսօր այս աթոռներուն, այս իշխանութեան գլուխ ժամ մը, նոյնիսկ վայրկեան մը չէինք կրնար մնալ: Եթէ մեր հակառակորդները փոքր գինուած ուժ մը կարենան ձեռք ձգել եւ գործի կարենան՝ անմիջապէս մեզ շնչահեղձ կ'ընեն: Այս անխուսափելի է, ուրեմն ժողովուրդը զինել, մեր պէտքը անոնց զգացնել վտանգաւոր է. կարգ մը բաղդախնդիրներուն առիթ եւ ուժ սուած կ'ըլլանք: Ներկայ պարագային ո՛չ բանակէն եւ ո՛չ ալ ժողովուրդէն կրնանք օգուտ մը սպասել: Մեզի մասնաւոր ուժ մը, մեր

դործունէութեան անկախութիւնը պաշտպանելիք ուժ մը, զինեալ ուժ մը պէտք է: Այս ուժը ուզուած կողմը զրկելու իրաւունքն ալ մեզի պատկանելու է. այս ո՛չ պաշտօնական եւ սակայն պատասխանատու ուժին նահանգներու մէջ ո՛չ կուսակալները, ո՛չ կառավարիչները, ո՛չ տեղակալները եւ ո՛չ ալ զինուորական հրամանատարները պէտք է միջամբանն եւ նոյնիսկ անոնք մեր հրահանգները պէտք է գործադրենք: Մենք, երեքներու դործադիր կամիտէն, պէտք է միտայն Կեդրոնական կառավարութիւնը ճանչնանք եւ ասոր ներկայացուցիչը եղող նախարարաց խորհուրդին հետ խորհրդակցինք, համաձայնինք եւ հարկ եղած միջոցները ապահովելէ ետք՝ դործադրութեան իրաւունքը մեզի պատկանելու է: Կուսակալ, կառավարիչ եւ զինուորական հրամանատարները նախարարաց խորհուրդին ենթակայ ըլլալով, ասանց միջոցաւ կարգադրուելիք գործերը պատկան նախարարութեան կը յանձնենք: Վերջապէս մեր կողմակերպելիք եւ մեզի ենթակայ ուժը միմիայն մեր կողմէ պէտք է պաշտպանուի. ահա սակամէն բանէ առաջ մեր ստիպողական պէտքը այս է. ասոր բնահանուր գիծերը եւ ախշափ կրցայ խորհիլ ու գծել, գուք ի՞նչ կը խորհիք:

Եիւրի.— Եթէ բանակէն, ստտիկան զինուորներէն օգուտ պիտի չստանանք, ուրեմն կրնամ հարցնել, թէ հայերու՝ ասանց նկատի սանելու կին, ծեր, երախայ բնաջնջամբ ո՞ր ստանաններուն պիտի յանձնենք. չեմ կրնար հասկնալ թէ ասանց զինուորի, առանց ստտիկան-զինուորի ինչպէ՞ս պիտի կրնանք յաջողիլ:

Տօքթ. Նազար.— Եթէ Պէհաէտտին Եաքիր մասնուոր ծրագիր մը շունենար՝ ախշափ երկար նախարանով մը չէր սկսեր, մեղ ունկնդրելով կը գոհանար. քիչ մը սպասէ որ իր խորհրդածութիւնը վերջացնէ:

Պէհաէտտին Եաքիր.— Այո՛, բնկերներ, ծանր բեռան մը տակ մտած ենք, երեւակայութենէ դուրս մեծ է. եթէ ասանց լարջ միջոցներ ձեռք ասնելու դործի անցնինք, յաջողութիւնը կասկածելի է. այս կէտը շատոնց է միտքս կը զրադեցնէ. հայոց ամբողջական բնաջնջումին համար միջոցներ կը խորհիմ եւ կարծեմ որ գտայ: Ես ասոր համար բազմաթիւ գիշերներ անքուն մնացի. ես միշտ կացութեան խորքին հետ առնչութիւն ունեցող կողմերը կը փնտռեմ, եւ ասանց փափուկ կողմերէն առաւելագոյն շահը կ'ապահովեմ. այսօր բնահանուր զօրաշարժ եւ պատերազմ կայ. ամէն զէնք վերցնելու կարող եղողը զինուոր է. այս կացութեան մէջ մեր առաւելագոյն շահը ո՞ր է. մեր պէտք ու

նեցած ուժը ուրկէ՞ կրնանք ճարել: Եթէ ասիկա կարենանք ճշդել, արդէն խնդիրը լուծուած կրնայ նկատուիլ: Մարդասպանութեան, տուն քանդելու եւ պատիւներ բռնարարելու վարժ եւ զինուորագրութենէ զերծ մարդիկ չկա՞ն... ասոնք գտնելու եւ գործի մղելու է, որ մեր յաղթութիւնը հարիւրին հարիւր ապահով ըլլալ: անհաւասիկ ես...

Շիւքրի (Պէհաէտտին Շաքիրը ընդմիջելով). — Խընդրեմ, Պէհաէտտին, մեր ղեկավարները իրենց անձերուն պաշտպանութեան համար մեր չէթէները զինուորագրութենէ զերծ կացուցած էին, եթէ ասոնք ըսել կ'ուզես եւ կամ ասոնց վստահելով գործի սկսիլ յանձնարարել կ'ուզես, հիմակուրնէ ըսեմ, որ ես ձեռնպահ եմ:

Պէհաէտտին Շաքիր (բարկութեամբ). — Շիւքրի, որչափ անհամբեր ես: Եթէ առարկելու, վիճարանելու եւ ծեծւորտուքի պիտի ելլես, սպասէ՛, ուշադրութեամբ զիս մտիկ ըրէ. մեր ստանձնած պարտականութիւնը ի՞նչ է. հայերը առանց բացառութեան՝ երախայ, կին, աղջիկ, ծեր ու անկար, մինչեւ վերջին անհատը սպաննել եւ բնաջնջել չէ՞... ես ալ քեզի կը հարցնեմ. ասիկա ամէն մարդու դիւրութեամբ կատարելիք սովորական գործ է... Ինչպէս ամէն գործի համար, ասոր համար ալ այս գործերով զբաղած, փորձառու եղած մարդիկը փնտուել եւ գտնելէ վերջ կազմակերպութեան մը ենթարկելու եւ կանոնաւոր կերպով գործել տալու աշխատիլ պէտք է: Կը կրկնեմ, այս գործը ո՛չ զինուորին, ո՛չ ոստիկան-զինուորին եւ ոչ ալ ժողովուրդին կրնանք կատարել տալ: Ասիկա անոնց գործը չէ: Զինուորին, ոստիկան-զինուորին կոչումը ուրիշ է, թէեւ զինուորին, ոստիկան-զինուորին մարդ սպաննելու, աւերներ գործելու ձեւերուն կը վարժեցնեն, սակայն զինուորը միայն պատերազմի մէջ, հայրենիքին եւ երկրին խաղաղութեան համար բացուած պատերազմի մը մէջ մարդ կը սպաննէ, աւեր կը գործէ եւ կարծեմ կ'ըմբռնես թէ պատերազմի եւ պարզ մարդասպանութեան միջեւ տարբերութիւն մը կայ: Մեր ընել տալիք գործը անզէն, ձեռքերը կապուած հայերը, երախաները, ծերերն ու անկարները մինչեւ վերջին անհատը սպաննել տալ է: Ասոր պատերազմի գոյն չենք կրնար տալ. ասիկա հասարակ եւ վայրագ ոճրագործութիւն մըն է. զինուոր մը կաթնկեր մանուկ մը մօրը գիրկէն յափշտակելով՝ մօրը աչքերուն առջեւ չի՛ կրնար գլուխը ջախջախել, չի՛ կրնար եւ թերեւս մայրն ալ փրկելու կ'աշխատի, տրուած հրահանգին գործադրութիւնը իր զինուորական պատուոյն հակառակ կը գտնէ եւ կ'ըմ-

բոստանայ. նոյնպէս զինուոր մը անկարող, ձեռքերը կապուած ծերուկի մը կուրծքին չի՛ կրնար իր սուինը մխել. Կերիին զթալ պարտականութիւն կը համարէ: Ան վայրագութիւնը հերոսութիւն չի նկատեր. այս պարագային պէտք է ընդունիլ, որ զինուորը, սասիկան-զինուորը, մեր կատարել աալիք բնաջնջումի գործողութեան յարմար չէ: Երբ այսպէս կ'ընդունինք, մեր գործին յարմար ուժը, մարդիկը ուր՞ կրնանք գտնել. ահաւասիկ բուն կարելուր կէտը: Ես կը կարծեմ, որ մեզի յարմար մարդիկը գտած եմ. ըսե՞մ թէ ուր գտայ, — բանտերու մէջ: Ասոնք իրե՛ց գործած ոճրագործութեան, մարդաստղանութեան հետեւանքով զինուորական պատիւը չարատաւորելու համար՝ զինուորական ծառայութենէ ղերծ կացուցուած մարդիկ են: Եթէ սսոնք արձակել տալով մեզի ենթարկենք եւ խումբերու բաժնենք, կը կարծեմ որ շատ լաւ մասնաւոր կազմակերպութիւն մը ստեղծած կ'ըլլանք:

Տօքթ. Նագրմ. — Դուք խնդիրը յաճած եւ գործադրութեան միջոցներն ալ լաւ կերպով պատրաստած էք. կը շնորհաւորեմ Ձեզ Պէհաէտաին. «մասնաւոր կազմակերպութիւն», ի՛նչ աղուոր անուն, ի՛նչ արդիական անուն. կեցցե՛ս, կեցցե՛ս:

Պէհաէտաին Շաքիր. — Եթէ այս խորհուրդս յարմար կը գտնէք, ձեզ կը վստահեցնեմ, թէ ասանց օճաւը ջուրին, այսինքն առանց բանակին ձեռք դպցնելու, մէկ ամսուան բնթացքին 10-12 հազար ընտրեալ ուժի մը տէր կը դառնանք: Աղէկ խորհինք. այս ընտրուած ուժով ինչե՛ր չենք կրնար ընել:

Շիւքրի. — Ես ալ համոզուեցայ որ պարտոյ ժամանակ չէք անցուցած, կը շնորհաւորեմ: Իրապէս յաւ պաղափար մը յղացած եւ գործադրութեան կարելիութիւնը խորհած էք: Այս կը խոստովանիմ. այս գործին համար ասկէ յարմար միջոց գտնելը կարելի չէ. հիմա կը հաւատամ որ մէկ երկու ամսուան մէջ՝ հայերը ամբողջութեամբ կրնանք բռնաջնջել:

Տօքթ. Նագրմ. — Եթէ ասոնց զինուորի համազգեստ տանք աւելի վայելուչ եւ աւելի ազդեցիկ կ'ըլլայ, չէ՞:

Պէհաէտաին Շաքիր. — Միայն համազգեստ չէ. նըւազագոյնը տասը, սուաեւագոյնը 50 հոգիէ բաղկացած ջոկատներու կը բաժնենք, բոլոր ջոկատներու վրայ մեր չէթէներէն վստահելի խմբապետներ կը նշանակենք մեր հրամանին ենթակայ: Արդէն ամենէն կարելուրը այս է:

Տօքթ. Նագրմ. — Շատ լաւ. այս ձեւը ընդունեցինք. հիմա գործադրութեան ծրագիրը պատրաստենք:



Պէտեւտտիճ Եաֆիթ.— Այս շատ պարզ է. ո՞ր քաղաքի եւ զիւղաքաղաքներու մէջ որ հայ կայ եւ ասոնցմէ ո՞ր մէկուն անաջին անգամ բնաջնջուիլը հարկ է, այդ մասին ներքին նախարարին հետ կ'որոշենք եւ իւրաքանչիւր շրջանակին պէտք եզածին շափ այս ուժերէն կը ղրկենք. ա՛սոնք մեր նշանակելիք ճամբաներուն յարմար վայրերուն վրայ հասնելիք հայ կարաւաններուն կը սպասեն. ներքին նախարար Թալաթն ալ այդ քաղաքներուն վարչական պաշտօնեաներուն կը հրահանգէ, որ հոն գտնուող բոլոր հայերուն, պատերազմական շրջագիծէն դուրս գտնուելու հարկը պատճառաբանելով, խումբ խումբ եւ իւրաքանչիւր Երկու օրը անգամ մը, ոստիկան-գինուորներու հսկողութեան տակ այս ինչ ճամբէն այն ինչ տեղը ղրկուին: Ոստիկանական պաշտօնեաներ, այս հրամանին վրայ բոլոր հայերը հաւաքելով, հսկողութեան տակ, խումբ խումբ որոշուած ճամբաներէն ղրկել կը սկսին: Ոստիկանները «մասնաւոր կազմակերպութեան» չէթէներուն կեցած վայրը հասնելուն՝ խումբերը չէթէներուն կը յանձնեն ու կը վերադառնան: Չէթէներն ալ այս հայերուն մինչեւ վերջին անհատը անմիջապէս կը սպաննեն եւ որպէսզի հանրային առողջութիւնը չվնասուի, դիակները նախապէս պատրաստուած փոսերու մէջ կը ձգեն ու կը թաղեն: Այս կերպով յաջորդաբար բնաջնջման գործողութիւնը կը լրացնեն: Այս հայերուն քով գտնուող գոյք, դրամ եւ գոհարեղէններէն ալ իբրեւ աւար չէթէներուն կը բաժնուին: Մենք ասոնցմէ բան մը առնելու չենք, եւ Եթէ կիներ ու աղջիկներ ալ լլկելու ըլլան, ատոր ալ պէտք է հանդուրժենք:

Տօքթ. Նազրմ.— Այս կարգի մարդոց հոգեբանութեան որչափ ո՛վ տեղեակ էք, Պէհա, ես ձեզի տօքթոր չէ, այլ այս վայրկեանիս արիւննուչտ չէթէներու խմբապետ մը կը կարծեմ. որչա՛փ լաւ կը խորհիք:

Եիւֆրի.— Պէտք չէ կասկածինք, որ իսլամ ժողովուրդը կարգ մը հայերը պահել, պաշտպանել պիտի ուզէ. ասոր անաջըր առնել, նոյնիսկ իսլամ ժողովուրդը անանց նեղելու եւ գոհ ձգելով կանխելը կարելի է: Հաւատարմութեան դարուն՝ Սպանիոյ մէջ արարներու եւ հրեաներու դէմ կիրարկուած ձեւ մը կը յիշեմ: Այս ձեւը մենք ալ կըրնանք կիրարկել: Հայերուն տարազրուելու պատրաստութեան համար բնականարար Յ-Է օր միջոց պիտի տրուի: Մենք անպաշտօն կերպով տարածայնել կու տանք, թէ այս միջոցին ո՛վ որ Իսլամութիւնը ընդունի՝ տարազրութենէ զերծ պիտի մնայ: Ասկէ Երկու օգուտ մէկ անգամէն կ'ա-

պահովուի: Առաջին՝ տարագրուելիքներուն մէջ այն համոզումը կը գոյանայ, թէ իրենց կեանքին դէմ վտանգ չըկայ եւ իրենց բոլոր հարստութիւնը փոխանակ թաղելու՝ միասին կ'առնեն եւ մեր չէթէններուն աւարը կը պարարտանայ եւ զանոնք կը քաջալերէ. միւս կողմէ՝ իսլամներուն մոլեռանդութիւնը կը գրգռենք եւ ասոնք փոխանակ իրենց դրացի հայերը պաշտպանելու, իսլամանալ պիտի առաջարկեն եւ մերժումի պարագային՝ անոնց հետ պիտի թշնամանան: Այսպէսով հայերէն միայն իսլամացած ջնջին փոքրամասնութիւն մը կը մնայ, յետոյ ասոնք ալ մաքրել դիւրին է:

Պէհաէտտին Շաֆիր.— Շիւքրիին այս խորհուրդը շատ թանկագին է, աննկատ չի կրնար ձգուիլ. մեր չէթէներուն շահուն համար կիրարկել պէտք է:

Շիւքրի.— Խնդիր մըն ալ մնաց եւ ամենակարեւորը. այն՝ կազմակերպութեան համար հարկեղած դրամը ուրկէ՞ պիտի առնենք:

Պէհաէտտին Շաֆիր.— Ազգային պաշտպանութեան սնտուկէն. եւ ասիկա արդէն ազգային պաշտպանութեան կը վերաբերի:

Տօֆթ. Նազրմ.— Սկզբունքով համաձայնեցանք, խորհրդակցելիք բան մը չմնաց. հիմա թալաաթին հետ ալ տեսնուելով գործադրութեան սկսելու ենք:

Մինչեւ վերջին հայը բնաջնջելու մասին իթթիհասա եւ թէրազը կուսակցութեան կողմէ տրուած որոշումը շատ արիւնոտ եւ քստմնելի կերպով գործադրուիլ սկսած էր:

Կառավարութիւնը Երեւակ գործադիր կոմիտէին հետ համաձայնած եւ բանտերու մէջ գանուոյ բոլոր ոճրապործները ազատ արձակելով՝ «մասնաւոր կազմակերպութեան» յանձնած էր եւ այս կերպով պատրաստուած չէթէները հարկ եղած վայրերը զրկուած էին:

Ներքին նախարար թալաաթ, հայերու տարագրութեան համար նահանգներու հարկ եղած վերջնական հրահանգը տուած եւ իթթիհասա-թէրազը կեղբունն ալ իր բոլոր մասնաճիւղերը եւ քննիչները ինդրէն տեղեակ պահած էր:

Թալաաթ իր հրահանգին մէջ հայերու խուզութիւններէն, Ռուս բանակին օգնելնին, տեղ տեղ ապստամբելով բանակին գործողութիւնները ղեկարացնելնին եւ երկրին ու կրօնին պաշտպանութեան համար մինչեւ պատերազմի վերջաւորութիւնը սուսնց խտրութեան այր, կին,

Երախայ, ծեր ու անկարող մէկ հասան իսկ շմնայու պայմանաւ պատերազմական շրջանակէն դուրս հանուելու ըստ ի պողականութենէն ճատելով՝ Հայէպի նահանգին մէջ Տէր Զօրի շրջանակը անոնց առժամեայ բնակութեան յատկացուած բլլալը տեղեկացուցած եւ հարկ եղած գաղանի հրահանգն ալ առանձինն զրկած էր:

Թայաաթին կողմէ հաղորդագրուած հրահանգին պատճէնը՝ նոյնութեամբ.—

«Հայերուն իրենց բնակավայրէն հանուելով բանակին չկարենայ սպառնալու եւ երկրին խաղաղութիւնը չկարենայ խանգարելու համար ուրիշ վայրեր զրկուիլը քաղաքային եւ գիւնուորական իշխանութեանց կողմէ տեսնուած ստիպողական պետքին համաձայն իբր կանխամիջոց կանավարութեան կողմէ որոշուած բլլալուն, այս որոշումին շուտափոյթ գործադրութիւնը կարելու է: Իրականութեան մէջ, իր գոյութիւնը պաշտպանելու համար պատերազմի դաշտերուն վրայ իր հագարաւոր գաւակները գոհող եւ այս պահուն առանց ցեղի եւ կրօնի խտրութեան իր բոլոր հպատակներէն հայրենիքին հանդէպ ամէն ժամանակէ աւելի սջակցութիւն ակնկալող կառավարութեան մը՝ զինքններսէն գրադեցնող եւ կոնակէն գարնելու աշխատողներուն հանդէպ այս որոշման յանգիլը եւ միեւնոյն ժամանակ գործադրութեան մէջ չթերանալը, շատ բնական է որ իր օրինական իրաւունքն է. ըստ այնմ հարկ եղածին լուրջ կերպով գործադրութիւնը կը հրահանգուի »

Այս հաղորդագրութենէն պատ 3 յօդուածներէ բաղկացած օրէնք մըն ալ հրատարակուած էր.

«Յօդ. Ա.— Երբ ժողովուրդին կողմէ սրեւէ կերպով կատաւարութեան հրամաններուն եւ երկրին պաշտպանութեան, արդարութեան պահպանման վերաբերեալ միջոցներու գէժ անստատամ, գէնքով գիմարութիւն տեսնուի, անակի եւ զօրարած իններու հրամանատարները եւ ստանց նախանորդները, անկախ կեցրոններու հրամանատարներ, անմիջապէս գինուորական ուժով եւ խիստ կերպով գատթելու եւ գիմարութիւնը հիմնովին բնաջնջելու արտօնուած եւ պարտաւոր են:

«Յօդ. Բ.— Զօրարանակի եւ անկախ կեցրոններու հրամանատարները՝ գինուորական պէտքին համաձայն բռնութիւն եւ գատճանութիւն զգացուած գիւղերու եւ լիւր պախումբերու ժողովուրդը կրնան անհատապէս եւ կամ ամբողջութեամբ ուրիշ վայրեր տարապրել եւ բնակեցնել

«Յօդ. Գ.— Սոյն օրէնքի հրատարակութեան թուականէն սկսեալ գործադրելի է:

13 Ռէնէպ 1333, 14 Մայիս 1331–1915»:

\* \* \*

Գաւառներուն քաղաքային պաշտօնեաները՝ կեդրոնէն ստացուած այս կտրուկ հրահանգին վրայ գործի փարած էին:

Կարգ մը կուսակալներ, կառավարիչներ եւ տեղակալներ, իրենց պետական պաշտօնեայի պարտականութեան գիտակ, տրուած հրամանը մեղմիւ եւ հեռատեսութեամբ կը գործադրէին, ոմանք ալ, Աստուած հեռու ընէ, կուսակցականութիւնը կառավարութենէն նախընտրելով՝ մէյ մէկ զժողովային սատանաներ դարձած էին:

Ամէն կողմ, առանց խնայելու, մեծ ու փոքր, ծեր եւ անկարող հայերը կը հաւաքէին, ասոնցմէ Իսլամութիւնը ընդունողները առժամեայ կերպով ազատ կը ձգէին, մնացածները ոստիկան-զինուորներու հսկողութեան տակ որոշուած ճամբաներէն խումբ խումբ կը տարագրէին:

Երեակ գործադիր կոմիտէին ենթակայ մասնաւոր կազմակերպութեան չէթէները դիակներու սպասող ազնաւներու նման որոշուած վայրերուն մէջ հայերու խումբերուն հասնելուն կը սպասէին:

Ճամբու նեղութիւններէն յոգնած, հոգեպէս բարոյալքուած, ծնած ու սնած տունէն ու տեղէն բաժնուելու վիշտէն ընկճուած՝ այս խղճալի խումբերը, չէթէներու գտնուած վայրը հասնելուն, ոստիկան-զինուորները իրենց ստացած հրահանգին համաձայն, անոնց յանձնելով կը վերադառնային:

Բառին բուն նշանակութեամբ խղճալի եւ ողբալի, նոյնիսկ քարսիրտ վայրենիներու անզամ գութը եւ կարեկցութիւնը շարժող թշուառ վիճակի մէջ, իրենց զաւակներով սպանդանոց առաջնորդուող ոչխարի հօտերու նման տարագրուող այս մարդկային խումբերը «մասնաւոր կազմակերպութիւն» անունով հրէչներու ձեռքը իյնալով, երեւակայութենէ եւ նկարագրութենէ վեր խժողութիւններու եւ տանջանքներու կ'ենթարկուէին:

«Մասնաւոր կազմակերպութեան» այս կատուած դահիճները, իրենց տուններէն, տեղերէն, երջանիկ բոյներէն բռնութեամբ դուրս հանուած, միայն հայ ըլլալուն համար տարագրուած այս մարդիկը իբր սովորական գործ ըսպաննելով՝ զոհերուն գոյքերը յափշտակելով, իրենց սըր-

տին մէջ ամբարուած վայրագութիւնը եւ գինախնդրութիւնը չէին կրնար յագեցնել:

Այս ոճրագործներու վոհմակին ի գործ դրած ոճիրներուն եւ վայրագութիւններուն ձեւը նկարագրած ժամանակ գրիչը կը դողայ եւ կը խպնի:

Տակաւին ծծկեր, աշխարհին անտեղեակ, գութի եւ սիրոյ կարօտ, մօրը գրկին մէջ քնացող եւ կամ հրեշտակային ժպիտներով ու նայուածքով հագին հրճուեցնող ճագուկ մը, մօրը գրկէն խլելով կացինի հարուածով մը, աչքերէն արցունքի տեղ արիւն հոսեցնող մօրը աչքին առջև անճիտել եւ այս վայրագութիւնը խնդուքներով ծափահարել եւ միւս կողմէ մահուան սպասող ուրիշ տարագիրներ ալ ծափահարելու ստիպել... յիմարացնող այս վայրագութիւններն ու քստմնելի ոճիրները նկարագրելու ժամանակ ինչպէ՞ս կարելի է որ գրիչը չդողայ...:

Տակաւին 7-8 տարեկան Եղջնակներ ծեծի տակ յլկեյէ չխպնող, վախի, սարսափի եւ դողի մատնուած այդ խեղճերուն վրայ իրենց անստնական կիրքը գոհացնող այդ հրէշներուն ոճիրները նկարագրելու ժամանակ, ինչպէ՞ս գրիչը չդողայ:

Վերջապէս Երեակ գործադիր կոմիտէին ենթակայ այս ոճրագործները, Երեւակայութիւնէ դուրս անտօր բարբարոսութիւն ի գործ դնելէ չէին քաշուած:

Այս բարբարոսութիւնները, հակառակ խիստ վրաքննութեան, իր բոլոր մանրամասնութիւններով եւ զանոնք փաստող նկարներով Եւրոպական եւ համաշխարհային մամուլին մէջ արձագանգ գտած, ամէն կողմէ բողոքի եւ ցասումի դառն ձայներ բարձրացած եւ ըսուած էր, թէ Թուրքերուն հետ Գերմաններն ալ քստաքակրթութենէ յատին չեն առած:

Մասնաւորապէս Անգլիացի դերկոմս Փրայսի կողմէ հրատարակուած 600 էջոց բարբարոսութիւններու հաւաքածոն մեծ ուշադրութիւն գրաւած եւ Եւրոպայի հանրային կարծիքը վրդոված էր: Յիշեալ հրատարակութեան մէջ բոլոր նահանգներու, դիւզերու եւ գիւղատնակներու ամենէն աննշան վայրերու մէջ անպամ հայերու դէմ գործուած խեղճութիւնները նկարագրուած եւ փաստերն ու նկարները ցոյց տրուած էին:

\* \* \*

Համաձայնական տէրութիւնները՝ Անգլիա, Ֆրանսա, Ռուսիա եւ ասոնց գաշնակիցները մամուլի խիստ յարձակումին վրայ, չկոչ տէրութեանց գեասաններուն մի-

ջոցաւ սկսած էին Գերմանիոյ եւ Թուրքիոյ շատ խիստ վերջնագիրներ տեղացնել: Միացեալ Նահանգներու դեսպան, նշանաւոր Մորկընթաուի միջոցաւ Թուրք կառավարութեան ուղղուած վերջնագրին մէջ յիշուած էր թէ, եթէ այս վայրագութիւնները շարունակուին, Թուրք պետական մարդիկը մէյ մէկ ոճրագործ, մարդասպան նկատուելով՝ պիտի պատժուին:

Մր. Մորկընթաու երբ այս խիստ բողոքագիրը ներկայացուց, Թալաաթ բորբոքելով, պետական մարդու մը վայել քաղաքավարութիւնը մոռնալով եւ առանց նկատի ունենալու որ իրեն ներկայացողը դեսպան մըն է, հրէշի մը շարժումներով բռունցքը սեղանին զարնելով՝ ըսած է. «Ո՞ր մէկ . . . ը կը յանդգնի մեր ներքին գործերուն խառնուիլ», եւ այս՝ Մորկընթաուի յուշերուն մէջ գրուած է:

Վերջապէս Գերմանիա եւ մասնաւորապէս Աւստրիա, մամուլի այս խստաշունչ հրատարակութիւնները իրաւացի գտնելով եւ թշնամի պետութեանց բողոքագիրները նկատի առնելով հայոց մասին տրուած բնաջնջումի որոշման գործադրութիւնը, հազարաւոր անմեղներու արիւնը թափուելէ ետք արգիլած էին:

Ֆրանսական, Անգլիական եւ Ռուսական պետութիւնները հետեւեալ յայտարարութեան հրատարակման շուրջ համաձայնած են.—

«Մէկ ամիսէ ի վեր Թուրք ժողովուրդը՝ Օսմանեան պետական պաշտօնեաներու հետ համաձայնելով եւ առհասարակ այս վերջիններուն օժանդակութեամբ, Հայերուն դէմ բնդհանուր ջարդ կը կատարեն: Այս բնդհանուր ջարդերը Ապրիլի կէսին՝ էրզրումի, Թերմանի, Պիթիսի, Սասունի, Մուշի, Զէյթունի եւ ամբողջ Կիլիկեան շրջանակին մէջ կատարուած են: Վանի շրջակայքը գտնուող հարիւրի մօտ գիւղերուն բնակչութիւնը ամբողջութեամբ սպաննուած եւ միեւնոյն ժամանակ Օսմանեան պետութիւնը Կ. Պոլսոյ մէջ անմեղ հայերուն վնասած է:

«Համաձայնական տէրութիւնները Բ. Դրան կը հաղորդեն, թէ Թուրքիոյ մարդկութեան եւ քաղաքակրթութեան հակառակ գործած այս նոր ոնրագործութեան համար, թէ՛ Օսմանեան պետական անձնաւորութիւնները եւ թէ՛ նման բնդհանուր ջարդերուն մասնակցող եւ մասնակցելիք մարդիկը անձնապէս պատասխանատու պիտի նկատուին:

Թուրք կառավարութեան տուած պատասխանը՝ այս բողոքագրին. —

«Թուրք կառավարութիւնը վերոյիշեալ բողոքագրին պարունակած վերագրումները բացարձակապէս կը հերքէ: Թուրքիոյ մէջ հայերու դէմ ընդհանուր ջարդ կատարուելը բացարձակապէս անհիմն է. խնդրին իրականութիւնը պարզելու համար հետեւեալ լուսաբանութիւնը կը տրուի:

«Էրզրումի, Թէրճանի, Ակնոյ, Սասունի, Պիթլիսի եւ Կիլիկիոյ հայերը ընդհանուր ապահովութիւնը խանգարելու բնոյթ ունեցող արարքներուն մէջ գտնուելնուն՝ Թուրք պաշտօնեաներու կողմէ ասոնց դէմ ոեւէ միջոցի դիմելու հարկ չէ տեսնուած: Այս ճշմարտութիւնը չէզոք տէրութեանց դեսպաններուն ծանօթ է: Համաձայնական տէրութեանց այս վերագրումները սուտ են: Արեւելեան գործերուն եւ խնդիրներուն տեղեակ եղողներ շատ լաւ գիտեն, որ հայ ժողովուրդը ամէն պատեհ առթիւ Օսմանեան կառավարութեան դէմ ապստամբութեան մղողները Համաձայնական տէրութեանց՝ մասնաւորապէս Ռուսիոյ եւ Անգլիոյ գործակալներն են: Այս դիւական դիտումները Օսմանեան տէրութեան եւ յիշեալ պետութեանց միջեւ թրջնամութեանց սկսելէն ի վեր շեշտուած է. նոյնպէս յիշեալ պետութեանց Պուլկարիոյ եւ Ռումանիոյ դեսպանները եւ այլ գործակալները, Օսմանեան հպատակ երիտասարդ հայերը՝ Վառնայի, Սուրիկայի, Քէօսթէնճէի եւ ուրիշ ճամբաներով Կովկաս կը դրկեն: Ռուս կառավարութիւնն այս թրջահպատակ հայերը զինուորագրելով եւ զինելով մեր սահմանները կը դրկէ: Ասոնք ալ Վանի, Շէնիկի, Խանասորի, Կուվաշի եւ Թեմարի հայերը Օսմանեան պետութեան դէմ զինեալ ապստամբութեան կը մղեն եւ միեւնոյն ժամանակ Թուրքերը եւ Քիւրտերը սպաննել կը դրդեն:

«Հետեւեալ օրինակները ցոյց տալ օգտակար կը նկատենք. — Օսմանեան պետութեան եւ Ռուսիոյ միջեւ թշնամութեանց սկսելէն անմիջապէս յետոյ՝ Արմէն Կարօ անունով ծանօթ, նախկին Օսմանեան երեսփոխան Գարեգին Պատորմաճեան, հայ կամաւորներու խմբապետներէն Դրոյի եւ Խէչոյի կազմած խումբին միացած եւ յիշեալ խմբապետներու հետ Ռուսիոյ կողմէ զինուած հայ կամաւորներու զլուխը անցնելով՝ Օսմանեան սահմանները անցած է. Պայագիտի Ռուսիոյ կողմէ գրաւման ժամանակ, յիշեալը ճամբուն վրայ հանդիպած բոլոր իսլամ գիւղերը քանդած եւ բնակչութիւնը սպաննած է: Ռուսիոյ այս վայրէն վրտարուած ժամանակ ինքը վիրաւորուած, եւ Էրզրումի

Դաշնակ ներկայացուցիչը՝ Սուրէն անունով անձն ալ սպաննուած է:

«Պատարմաճեան ներկայիս Կովկասի ճակատին վրայ գործօն դեր կը կատարէ:

«Ամերիկա հրատարակուող Դաշնակցութեան օրկան «Ասպարէզ» թերթը, յիշեալին ճակատ մեկնելէն առաջ, պաշտօնական երզման արարողութեան ժամանակ Դրոյի եւ Խէչոյի հետ լուսանկարուած պատկերը հրատարակած է:

«Այս դրդումները՝ Անդլիացի գործակալներու միջոցաւ Կիպրոսէն բերուելով Իսկէնաէրունի շրջակայքը ցամաք հանուած հայերու գործունէութեամբ ալ յստակօրէն պարզուած է: Թորոսի որդի Յակոբին վրայ գտնուած գլորութիւնները հետապնդուած ոճրային նպատակը անուրանայի կերպով կը փաստեն: Այս շարժումները ուրիշ հետեւանքն ըէ գաս, շողեկառքի դժէն դուրս ելլելուն պատճառ դարձած է. միւս կողմէ ալ Ֆրանսացի եւ Անդլիացի ծովային հրամանատարները՝ Ատանայի, Տէօրթ Եսլի, Եուժուրթալըզի, Իսկէնաէրունի եւ ուրիշ վայրերու հայերուն հետ թղթակցելով՝ զանոնք ասպատամբութեան կը մղեն:

«Մասնաւորապէս, ինչ կը վերաբերի Զէյթունի հայութեան՝ Անդլիայ եւ Ֆրանսայի կողմէ կատարուած բրտրականտի հետեւանքով կազմուած չէթէական կազմակերպութիւնները անցեալ Փետրուար սմիտէն սկսեալ գործի անցան, յիշեալ շրջանին հայերը Օսմանեան տէրութեան դէմ գէնք բարձրացնելով կառավարական շէնքը պաշարման տակ առին. սոյն պարագաներու բերմամբ Օսմանեան կառավարութեան պարտականութիւնն էր խոտովութիւնները զսպել եւ ընդհանուր ասպահովութիւնը երաշխաստրել:

«Նման անջատողական խոտովութիւններուն զսպումին համար հարկ եղած բոլոր միջոցներու գործադրութիւնը ողղակի կառավարութեան իրաւունքն ըլլալով՝ ստոր դէմ սեւէ մէկը ստարկելու իրաւունք չունի:

«Ասկէ դատ, յիշեալ միջոցները, ինչպէս նման պարագաներուն, պատերազմի ժամանակ ալ ստիպողական կը դառնայ: Օսմանեան կառավարութիւնը մէկ կողմէն զինուորական միջոցներով խոտովութեանց զսպումին եւ միւս կողմէ օտար երկիրներ դանտուղ եւ համաձայնական սէրութեանց գործակալներուն հետ յարաբերութիւն մշակող հայ յեղափոխականներու ձերբակալման եւ բանտարկութեան հարկը զղաց:

«Վերոյիշեալ երեք տէրութեանց վերագրումին հակառակ՝ թուրք կառավարութեան զսպողական միջոցն-



բուն գործադրութեան մէջ ժողովարդին ոչ մէկ ստորը բաժին ունեցած և մասնակցած է:

«Հայ յեղափոխականներու բնակարաններուն մէջ կատարուած խուզարկութեանց ժամանակ՝ յեղափոխական գրոջակներ և գործադրուելիք անջատողական խոսփութիւններու վերաբերեալ գրութիւններ գտնուած են. Այս գրութիւններուն մէջ տեսնուած է որ յեղափոխականներուն Փարիզի, Լոնտոնի և Թիֆլիսի կեդրոնները Ֆրանսական և Ռուսական կառավարութեանց գործօն օժանդակութեան կ'արժանանան: Գաւառներու մէջ կատարուած խուզարկութեանց բնթացքին հայերու քով հազարաւոր սամբեր և Ռուսական հրացաններ գտնուած են: Այս հայերու հետ Անդլիական և Ռուսական գործակալներու գրգռմամբ զինուորական ծառայութենէ փոխած և սասիկան զինուորներու վրայ յարձակողներ բնականաբար պատկան գատարանին յանձնուած են:

«Վերոյիշեալ խոսփութիւններուն Ռուսական, Անգլիական և Ֆրանսական տէրութիւններուն պաշտպանութեան սակ պատրաստուած բլլալուն և վերջին անգամ այ Բէօնթէնէի մէջ գումարուած յեղափոխականներու ժողովին մէջ երեսութապէս խոսփութիւններէն ձեռք քաշած ձեւանայով պատեհ առթիւ գործի սկսելու համար տրուած որոշման մասին աշտօր փաստեր գոյութիւն ունին: Բ. Դուր հանրային կարծիքը յասարանելու համար, այս փաստերը յարմար ժամանակին պիտի հրատարակէ

«Օսմանեան կառավարութիւնը՝ բնականաբար ապահովութեան պաշտպանման համար, իր իրաւունքին մէջն ըլլալով, ձեռք առած միջոցներուն շնորհիւ, հայերուն այս ապաստամբական շարժումը ստանց սեւէ բնականաբար ջարդի կրցած է դապել:

«Ասով հանդերձ, եթէ Պոլիս բնակող 77735 հայերէն յիշեալ խոսփութիւններու մասնակցութեամբ ամբաստանուած միայն 235 հոգիի բանտարկու ին ու մնացեալներուն խաղաղութեամբ իրենց գործերով զբաղու իլը և ապահով սիճակի մէջ ապրիլը նկատի առնուի, այս զսպողական միջոցներուն ստիպողականութիւնը և հայոց դէմ սեւէ հալածանքի նպատակակէտ չգտնու իլը ի յայտ կու գայ:

«Եթէ կարգ մը հայեր ուրիշ վայրեր փոխադրուած են, ասոր պատճառը անոնց պատերազմական գօտիին մէջ բնակելնին և կամ վերոյիշեալ բացատրութեանց համաձայն Աղդային պաշտպանութեան տեսակէտով կառավարութեան անոնց հանդէպ ունեցած կասկածն է:

«Ուրեմն, Բ. Դուռը իր ցամաքային եւ ծովային սահմաններուն պաշտպանութեան համար հարկ եղած կանխամիջոցները ի գործ դնել իր պարտականութիւնը կը համարէ եւ ասոր համար ո՛չ մէկ օտար տէրութեան հաշիւ տալու պարտականութիւն կը զգայ :

«Զարմանայի չէ՞, երբ Անգլիական եւ Ֆրանսական ծովային հրամանատարները Չսնայ Գայէի մէջ շարժուն եւ անշարժ հիւանդանոցները կը սմբակոծեն, երբ Ռուսական կառավարութիւնը հայոց ձեռքով Կարսի շրջակայքը անմեղ հազարաւոր Իսլամներ սուրէ կ'անցնէ, եւ երբ Կովկասի ճակատին վրայ գերի ինկած Թուրք գերիները նոյն այդ հայերու ձեռքով կը սպաննէ եւ անօթութեամբ կը մեռցրնէ, Անգլիական, Ֆրանսական եւ Ռուսական տէրութիւնները մարգասիրական զգացումներու կը դիմեն... պատերազմող տէրութեանց հիւպատոսներու հանդէպ զէչ վարձունք ցոյց տուողը Թուրքիան չէ, այլ՝ Ռուսիան է :

«Անգլիան, Ֆրանսան եւ Ռուսիան կառավարողները, հայերուն սպասամբութիւնն սլաւարաստելը բաւարար չը գտնելով, իսլամ տարրն ալ Թուրք կառավարութեան դէմ սպասամբեցնելու աշխատած են : Ասոնք իրենց նպատակին հասնելու համար սպանութիւններ ալ կատարել ծրարած են : Բ. Դուռը այս դժով փաստաթուղթեր ձեռք բերած է . եւ աներեւակայելի այս պատրաստութիւնները շատ հին ժամանակներուն, ոչ-քաղաքակրթուած դարերուն անգամ չէ տեսնուած :

«Կովկասի, Փասի, Եգիպտոսի, Հնդկաստանի եւ ուրիշ վայրերու մէջ ծագած ապստամբութիւնները սմենարիտ եւ հակամարդկային միջոցներով զսպող Անգլիական, Ֆրանսական եւ Ռուսական տէրութիւններուն, Թուրք կառավարութեան ստիպողարար, արդարութեամբ ու խղճով գործադրած կանխամիջոցներուն համար մեղադրելը եւ կամ դատաւարտելը արդար չէ :

«Երբ Օսմանեան կառավարութիւնը, այս դէպքերուն թացքին, իր պետական իրաւունքները գործադրելէ ուրիշ ոչ մէկ գործ կատարած է, պետական անձնաւորութեան եւ վերոյիշեալ զսպողական միջոցներուն գործադրութեան մասնակցող պաշտօնատարներուն պատասխանատու նկատուելու մասին եղած յայտարարութիւնները ո՛չ մէկ պատասխանի արժանի են :

«Բողոքելու ստիպուած ըլլալին՝ կարծուած դէպքերուն բոլոր պատասխանատուութիւնը կամ սոյն յեղափոխական շարժումները կազմակերպողի պատասխանատու-

ութիւնը Երեակ համաձայնական տէրութեանց կը պատկանի: Անոնց բողոքներն անգամ հայկական շարժումները պաշտպանել եւ քաջալերել կը նշանակէ:»

\* \* \*

Այս մասին Ճէմալ փաշայի նկատի առնուելիք խոստովանութիւններն ու խորհրդածութիւններն ալ արձանագրելով՝ վերջ պիտի տամ:

Ճէմալ փաշա կ'ըսէ.—

«Օսմանեան կառավարութիւնը՝ Գերմանիոյ հետ կընքած դաշնագրութեան բերումով ուշ կամ կանուխ պատերազմին մասնակցելու ստիպուած ըլլալը կը զգար: Հետեւաբար այս սարսափելի եւ երկարատեւ պատերազմի տարիներուն ներքին բարեկարգութիւններով զբաղիլ կարելի չըլլալուն՝ Արեւելեան Անատոլուի նահանգներուն համար հրաւիրուած երկու ընդհանուր քննիչներուն պաշտօններուն վերջ տրուած էր:

«Արդէն մեր միակ նպատակը, այս պատերազմին շրջանորհու մեր ներքին անկախութեան արգելք հանդիսացող բոլոր դաշնագրութիւններէ ձերբազատուիլ եւ ի վերջոյ երկրին մէջ տեղական պահանջներու պարտագրած բարեկարգութիւնները մեր ձեռքով կատարել, ազաս եւ անկախ ազգերու նման ասլրիլ էր:

«Մեր միակ ցանկութիւնն էր օտար եւ Լիբանանի առանձնաշնորհումները բաւնալ, եւ վերջին ժամանակ Ռուսիոյ ստիպման տակ ընդունուած Արեւելեան Անատոլուի բարեկարգութեան դաշնագիրը պատուելն էր:

«Մենք այս պատերազմին, արժանապատուութեամբ ապրող ազգերու նման անկախ ասլրելու նպատակով մասնակցած էինք: Երբ նպատակը այս է, կարծեմ թէ հայաբնակ նահանգներու մէջ բարեկարգութիւններ կատարելու մասին մեր դարաւոր թշնամիին՝ Ռուսիոյ ստիպումով ըստորագրուած համաձայնագիրը գոյութիւն չի կրնար ունենալ:

«Այսուհանդերձ, այս խորհրդածութիւնը չի նշանակեր, թէ մենք բարեկարգութիւն կատարել չէինք ուզեր. ընդհանուր բարեկարգութիւն կատարելու փափաքը մեր մօտ մեծ էր. առանց ներքին բարեկարգութեան՝ երկրին մէջ ասլրիլ անկարելի ըլլալուն կը հաւատայինք: Սակայն, ըստ մեզի, բոլոր բարեկարգութեանց սկզբնաւորութիւնը հնարաւոր էր երկուք ու կէս դարէ ի վեր մեր գլխուն երկնային փորձանք դարձած Յարիզմի փլուզումով, անոր մեր երկրին հանդէպ գործած դաւադրութիւններուն վերջ տա-

լով, եւ այս՝ պատերազմի բնթացքին Ռուսիոյ քայքայումով եւ մեր կողմէ մասակարգոյն ջանքերով կարելի պիտի ըլլար:

«Հետեւորար, յոյսը ներքին բարեկարգութեանց ծրարագիրները պատերազմի վերջաւորութեան ձգելով՝ ազգին յոյսը ուժերը պատերազմին յասակացնելու պէտքը որոշած եւ նոյնիսկ մեր այս տեսակէտը Գաշնակցութեան տեղեկացնելէ չէինք քաշուած:

«Վերջապէս մենք ալ պատերազմի մասնք. մտնելէն քանի մը օր ետք եղած ստաջարկին վրայ՝ Գ. բանակի հրամանատար նշանակուելով Պոլսէն Սուրիա մեկնեցայ:

«Արեւելեան Անատոլիոյ նահանգներու մէջ անցած դէպքերէն եւ կամ կառավարութեան հայերուն դէմ տարադրութեան որոշում տուած ըլլալէն տեղեկութիւն չունիմ: Այդ շրջանին Պոլսոյ մէջ կատարուած խորհրդակցութիւններուն շեմ մասնակցած եւ կարծիքս ալ չէ հարցուած: Միայն օրին մէկը, ներքին նախարարութենէն նահանգներուն հաղորդուած մէկ հրահանգէն տեղեկացայ, թէ հայերը Միջագետք պիտի փոխադրուին եւ մինչեւ պատերազմի վերջաւորութիւնը հոն պիտի բնակեցուին: Ընդհանուր հրամանատարութեան փոխանորդութիւնն ալ կը հաղորդէր, թէ քաղաքային պաշտօններու միջոցաւ տեղի ունենալիք այս տարադրութեան բնթացքին բանակի շրջանակէն անցնելիք հայերու վրայ ոեւէ յարձակումի փորձ չկատարուի. սակէ ուրիշ ոչ մէկ բանէ տեղեկ էի:

«Այդ միջոցին եւ Սուէզի ջրանցքին վրայ կատարուելիք երկրորդ յարձակման համար 1915-ի աշնան վերջաւորութեան, Սուրիա զրկուելիք զինուորական ուժերու միակ կայանաչարքը եզոդ Պողոսեթի-Հայէպ գծին վրայ կայաններ հաստատելու եւ հոն ամէն տեսակ մթերք ամբարելու գործով զբաղուած էի. այս կայանաչարքին կանոնաւորութեան արգելք ըլլալիք ամէն ձեռնարկ՝ Սուէզի արշաւին վնասակար նկատելուս, տարագրուած հայերուն Պողոսեթիէն Տարսոնի եւ Ատանայի ճամբով դէպի Հայէպ ուղարկուելը լսելով նեղուեցայ: Ես հայոց փոխանակ Միջագետքի՝ Գոնիայի, Անգարայի, Գասթէմունիի նման ներքին գաւառներուն մէջ տեղաւորուելը յարմար կը դատէի. սակայն, կառավարութեան մասնաւոր օրէնքին համաձայն, ձեռնարկուած գործի դէմ առարկել ննպատեհ ըլլալուն եւ հայ գաղթական խումբերուն Ատանայի եւ Հայէպի վրայով Միջագետք փոխադրութեան արգելք ըլլալու մասին կտրուկ հրաման ստացած ըլլալուս՝ համակերպեցայ:




ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ



ԵՐՈՒԽԱՆ



ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ



ԹԼԿԱՏԻՆՑԻ

«Այլ միջոցներուն Խարբերչի եւ Տիւրանակերտի նահանգներուն մէջ, հայ տարադիրներու խումբերուն յարձակումի ենթարկուած ըլլալը հետուէն կը տեղեկանայի:

«Տարազրութեան դարձը մասնաւորապէս քաղաքային պաշտօնեաներու կողմէ կը կառարուէր եւ բանակները ոչ զորձին հետ երբեք կապ չունէին:

«Սակայն ուրիշ բանակներու գաղթականներու դէմ դորձած հալածանքներուն նման, բանակիս շրջանակին մէջ ալ դորձուելուն երբեք չկարենայ հանդուրժելուս, այս մասին խիստ հրաման տալ ինքզինքիս՝ պարտականութիւն համարեցի:

«Եւ նոյնպէս այլ միջոցին Պոլանթիէն մինչեւ Հալայ ձամբուն վրայ գաղթականներուն պարենաւորումին համար քաղաքային պաշտօնեաները բուարար միջոցներ օգտնուանուն եւ հայերուն շատ խղճալի թշուառութեամբ անբողջ ձամբու երկայնքին ցրուած ըլլալը տեղեկանալով, կոպտութիւնը անձամբ քննելու համար Հայէպէն մինչեւ Պոլանթի գացի եւ հրաման տուի որ բանակին յատկացուած կալանամբարներէն հայ գաղթականներուն հաց բաշխուի. խի կալաններու բժիշկներուն պատուիրեցի որ հայ հիւանդները դարձանեն:

«Վերջապէս այս տարազրութեան միջոցին հայերուն սատուցուելիք ծառայութիւններուն ստատեյազոյնը չղլարայ:

«Անատոյուի հայերուն տարազրումէն ետք, Աստանալի եւ Հայէպի հայերուն ալ գաղթելու հրահանգին հակառակեցայ եւ բնդարձակ տեղեկազրով մը Պոլիս իմացուցի, թէ անտեղի է այլ, թէ՛ այս տարազրութիւնը Դ. բանակի շրջանակին տնտեսութեան եւ երկրագործութեան վրայ գէշ պիտի ազդէ. սակայն ինձի ազդարարուեցաւ, թէ քաղաքային պաշտօնեաներուն տրուած հրահանգին պէտք չէ միջամտելի եւ միայն անոնց օժանդակելի. այսպէսով, այս ալ չկրցայ արդիւիւլ:

«Միայն թէ բոլոր հայ գաղթականներուն Միջագետք դրկուելը, անոնց թշուառութեան պատճառ ըլլալուն վրստահ, ասոնց մէկ մասին Սուրիոյ, Պէյրութի եւ Հալէպի նահանգներուն մէջ տեղաւորումը յարմար տեսայ եւ պրնդեցի. եւ այս մասին Պոլսոյ հաւանութիւնը ստացայ: Ահա այսպէսով վերոյիշեալ նահանգներու մէջ 150 հազարի մօտ հայերուն բնակութեան խնդիրը կարգադրեցի:

«Ասոնց որբերուն, աչրիներուն եւ աչրերուն մատուցած ծառայութիւններս հոս կրկնելը ամօթ կը համարեմ:

Ինծի աշխղէս կը թուի որ, եթէ տասնք մանրամասնօրէն յիշեմ, մարդասիրական զգացումներով մատուցած այս ծառայութիւններս իրենց բարոյական արժէքը պիտի կորսնցնեն:

«Սակայն, հակառակ այսչափ ծառայութիւններու, մեր քաղաքական հակառակորդներուն զիս այ հայկական տարազրութեան մէջ բարոյապէս պատասխանատու նկատելու և նայիսի պինդագարի լնթաշքին Պոլսոյ մէջ կազմուած պետական Ատեանին կողմէ իբր տարազրութեան և ջարդերուն գործակից մահուան պատառարտուելու փոխան, այս մտքերը սայլ ինքնարդարացման տեսակէտով յարմար գտանցի:

«Այս բացատրութիւններէն հանրային կարծիքը կըրնայ բմբռնել, թէ հայկական տարազրութեան և սպանդին հետ ևս երբեք ատնչութիւն չունիմ. տարազրութեան որոշումին արուած ժամանակ ևս խորհրդակցութեանց չմասնակցեցայ. ո՛չ թէ ջարդել տուի, այլ արդիւնցի և տարազրութեան սկիզբէն միշտ ևս ետքը գաղթականներուն ամենամեծ ծառայութիւններս շտայլեցի:

«Սակայն եթէ Պոլիս գտնուէի և Արեւելեան Անաստուրի նահանգներուն մէջ բանակին ևս կատարուած գործերուն տեղեակ ըլլալով խորհրդակցութեանց մասնակցէի, արդեօք տարազրութեան որոշումին համամիտ պիտի գտնուէի՞ . . . ստիկա հիմա շեմ կընար սրտել:

«Միայն փաստհ եմ, թէ հայերը մեր կովկասի բանակին նահանջի դիմը փասնոյելու և բանակին ամբողջական քայքայումին պատճառ գտնուելիք յեղափոխութիւններ յատաջացնելէ չէին զաշուած .

«Աշխղէս կը կարծեմ, որ ընկերներս նկատի առած են, որ փոխանակ ամբողջ Օսմանեան հայրենիքը վտանգելու և Անատուրի ամբողջութեամբ Ռուսիոյ կողմէն գրաւման պատճառ գտնուելիք ընդհանուր ազգաբնի մը առիթ տալու, հայ ազգը ամբողջութեամբ միասնելու անկարող միջավայր մը փոխադրել:

«Ես այս կէտը մտնելու իրաւասու չիբքի մը մէջ չըգտնուելու, ասոր լուսարանութիւնը ընկերներու տալիք բացատրութիւններուն և ցոյց տալիք պատճառներուն կը թողում: Գալով տարազրութեան պարզած խղճալի տեսարաններուն, Ռուսական գրաւման ժամանակ հայերուն հալածանքներէն ազատելու համար Տիգրանակերտի վրայով՝ Հալէպ-Ատանաի ճամբով՝ Գոնիա, և էրզրումէն ու Երզրնկայէն՝ Սերասոիս ապստանած Քիւրտ և Թուրք

գաղթականներուն պարզած տեսարանները նուազ խղճալի չէին: Սակայն անոնք իսլամ ըլլալնուն համար ոչ մէկ Գերման կամ Ամերիկեան միսիոնար ասոնց մասին տեղեկագիր գրեց եւ ասոնց արգահատելի վիճակը ներկայացնելու խիղճ չունեցաւ:

«Ընդունինք որ, Օսմանեան կառավարութիւնը Արեւելեան Անատոլուի նահանգներէն 1-1/2 միլիոնի մօտ հայեր տարագրած է եւ ասոնցմէ 600,000ը ճամբու ընթացքին մասամբ սպաննուած եւ մասամբ ալ անօթութեան եւ թըշուառութեան հետեւանքով մեռած են, սակայն Տրապիզոնի, Էրզրումի, Վանի եւ Պիթլիսի նահանգներուն Ռուսիոյ գրաւման ժամանակ հոն բնակող Քիւրտերէն եւ Թուրքերէն արդեօք որքա՞նք հայերու կողմէ սպաննուած եւ որքա՞նք գաղթելու ժամանակ կորսուած են. ասոր մենք պատասխանենք. այդ պատճառաւ մեռնող Թուրքերուն եւ Քիւրտերուն թիւը անկասկած 1,5 միլիոնը կ'անցնի(\*):

«Ինչո՞ւ հայերուն ընդհանուր ջարդին համար Թուրքերը պատասխանատու կը նկատուին, իսկ Թուրքերու եւ Քիւրտերու ջարդին ու թշուառութեան հայերը պատասխանատու չեն նկատուիր. եթէ ոչ թուրքին եւ քիւրտին արժէքը Մորկընթաուերու, Մանսելչթալմներու նման դիւանագէտներու համար եղածին պէս բնականուր մարդկութեան համար ալ գէրոյի՞ հաւասար է...»

«Ո՛չ, պարոններ, ո՛չ. այս ժողովուրդին երկուքն ալ անիրաւարար կ'ամբաստանէք. յանցաւորը ասոնք չեն, ասոնք իրարու դէմ գրգռող Ռուս դիւանագիտութիւնն է: Թուրքը սպաննելու եւ անոր դարաւոր աղբային արժանապատուութիւնը ռոնակոխելով ժառանգի տիրանալ փափաքող եւ իրականութեան մէջ արիւն խմելէ ուրիշ նպատակ չունեցող Ռուսիան, հայերը Թուրքերու դէմ հանեց, Թուրքը չմեռնելու համար հայը սպաննել խորհեցաւ եւ մեր ականատես եղած աղէտը ասկէ ծագում առաւ եւ ըսուածին պէս մէկ կողմէն 600,000 հայ եւ միւս կողմէն 1,5 միլիոն Թուրքեր եւ քիւրտեր բնաջնջուեցան:

«Հիմա ալ խպնիլ չգիտցող Ռուս դիւանագիտութիւնը եւ անոնց Մորկընթաուի նման յիմար եւ սպուշ պնակալէդները, բոլոր յանցանքը բնաջնջել ուղուած Թուրքին վերագրելու համար՝ աշխարհի մամուլին մէջ բարբաջանքներ տեղացնել կ'աշխատին:

(\*) Առանց մեկնաբանութեան



«Մանտելըթայմ հայերուն, Վանը բացառութիւն ըլլալով, ո՛չ մէկ տեղ յեղափոխութիւն չյարուցած ըլլալնին կը գրէ, ես թէեւ յիշեցի, թէ Արեւելեան Անատոլուի նահանգներուն եւ մեր Կովկասի բանակին կոնակը անցած դարձածներուն տեղեակ չեմ, սակայն բանակիս շրջանակին մէջ եղածներուն քաջատեղեակ եմ:

«1915-ի կէսերուն Զէյթունի եւ Ուրֆայի մէջ ծագած խռովութիւնը, հայոց, կատարեալ զինեալ յեղափոխութենէն ուրիշ բան չէր: Մուսա լերան կողմերն ալ ծագած ապրտամբութիւնը այս յեղափոխութեան շարքէն էր: Ըստ իս փաստուած իրականութիւն է, որ Իսկէնտէրունի ծոցին սկիզբը եղող Ռաս էլ-Սընդըրէն սկսեալ մինչեւ Տէօրթ-Եօլ Մուսա Լեռ, Հալէպ, Այնթապ, Ուրֆա եւ Զէյթունի կողմերը ծագելիք հայ յեղափոխութիւնը՝ Սուրիան Անատոլուէն բաժնել ծրագրող Ֆրանսական եւ Անգլիական Արեւելեան Միջերկրականի բանակներու հրամանատարներուն՝ (Չանազ Գալէի ամենասաստիկ ընդհարումներուն ժամանակ) հայերու տուած հրահանգին համաձայն կատարուած է: Արդէն այս կողմերը հայերը շատոնց պատրաստուած ըլլալուն, միայն գործի սկսելու համար հրամանի կ'ըսպասէին:

«Արդեօք իմ այս համոզումիս սխալ ըլլալը շահագրգիռ տէրութեանց պատկան պաշտօնեաները կրնա՞ն փաստել. կը կարծեմ որ, հիմա որ այլեւս պատերազմը վերջացած է, իրականութեան տեղեակ հանրային կարծիքին առջեւ այս կէտերուն խոստովանութիւնը պատուաւոր գործ մը կ'ըլլայ»:

\* \* \*

Անգլիացիներ եւ Ֆրանսացիներ երկրորդ անգամ Չանազ Գալէի վրայ յարձակելով կարեւոր քանակութեամբ ուժ ցամաք հանած եւ արիւնալի ու դժոխային պատերազմի սկսած էին:

Չանազ Գալէի պատերազմը որչափ որ բանակին հերոսութիւնը ապացուցած էր, սակայն կորուստը սարսափելի էր: Չանազ Գալէի պատերազմին 200 հազարէն աւելի երիտասարդ զինուորներ նահատակուած եւ ասոր կրկինն ալ վիրաւորուած էր:

Պոլսոյ եւ շրջակայ հիւանդանոցները վիրաւորներուն չբուժուած, մեծ տուներ, պալատներ, հիւանդանոցներու վերածուած էին. առողջապահական պայմաններուն եւ դեղորայքի անբաւարարութեան պատճառաւ վիրաւորներուն կէսէն աւելին մեռած էին:

Ընդհանուր պատերազմին Չանազ Գալէ մահ, Չանազ Գալէ զրկուել՝ դժոխք զրկուել կը նշանակէր:

Չանազ Գալէի պատերազմական դաշտին վրայ տեղի ունեցած ապշեցուցիչ դէպքերուն վարագոյրը մինչեւ այսօր ոչ ոք բանալ ուղած է. ամէն ոք այս կէտը զինուորական պատմութեան ձգած է:

Ճեւտէթ Քէրիմ պէյ, Չանազ Գալէի պատերազմը հետեւեալ ձեւով կը նկարագրէ. —

«Մէկ կողմը ասաւոր տորմիզ, հողին մակերեսը ձեւափոխող խոշոր թնդանօթներով, արեւը խափանող օդանաւերով, բազմաթիւ ընդժովեաներով զինուած եւ ամպերէն վեր ու հորիզոնէն անդին յարձակող բանակ մը, միւս կողմը՝ մէկ փամփուշտն իսկ խնայողութեամբ գործածելու հարկին տակ գտնուող, զրկանքներու պատճառաւ վիրաւորուելէն ետք սեւ հողը գրկող հերոսներու բանակ մը:

«Այս երկու բանակները ճիշդ 256 օր, առանց իրարու շունչ առնել տալու՝ շարունակ մաքառեցան, նիւթական անհամապատասխան պայմաններով այս երկու բանակները երկար ժամանակ ընդհարում ունեցան, ի վերջոյ սկարկարծուած կողմը դօրաւոր կողմին յաղթեց:

«Այս զէպքը նիւթին՝ հաւատքին սուջեւ, փառասիրութեան եւ բռնութեան՝ առաքինութեան եւ հայրենասիրութեան առջեւ, սնանկ ըլլալուն ամենացայտուն մէկ օրինակն է»:

\* \* \*

Չանազ Գալէի մէջ արիւնտտ պատերազմը շարունակելով մէկասեղ, ամբողջ Թուրքիան խիստ սլաշարման տակ առնուած էր: Թուրքիան՝ Պուլկարիոյ, Աւստրօ-Հունդարիոյ եւ Գերմանիոյ հետ միայն կրնար յարարերիլ: Այս դինակիցներուն երկիրներն ալ պաշարման օղակի մէջ առնուած ըլլալուն՝ պարենաւորումը սոսկայի դժուարացած էր, իսկ ամենէն փոսանգաւորը, ամենամեծ ապէտը՝ հացի սղակասն էր:

Թուրքիոյ մէջ ցորեն չէր մնացած, և դաժն ալ իթթի-հատ-թէրագգը կուսակցութեան ականաւոր շարաշահներուն ձեռքը անցած էր: Ժողովուրդին տրուած օրական 300 կրամ հացը աւլուքի խառնուրդ մըն էր եւ դոր շուներն անգամ չէին կրնար ուտել: Չեղքէ ծախուած զինուորական հացին ալ դրամ հասցնել ամէն մարդու չէր վիճակուած: Մաքուր հացը իթթիհատի սլարալլուխներուն յատկացուած ըլլալուն՝ թապաւորական պալտան անգամ անկէ զըրկուած էր:

Շրջաբերութեան հանուած թղթաղբամբ իր արժէքը կորսնցուցած էր և գնման կարողութիւնը տասը անգամ պակասած էր. ժողովուրդը սլութենէն ու սովէն կը տառապէր, ուսեսանդէնի գինը 200 անգամ բարձրացած էր: Չարաշահութեան չափը անցած էր: Ժողովուրդին սնունդը կը գողցուէր: Ժողովուրդը հոգացող, անոր ցաւերն ու սկսեքերը թևթևեցնող շէր մնացած: Պետական մարդիկ, Իթթիհատի ղեկավարներ, ժողովուրդին ներկայացուցիչը ճանչցուած երեսփոխաններ, մէյ մէկ պատուաւոր ս. . . . . փաճառականներ գարձած էին: Նշանատուր գրողներ, բանաստեղծներ՝ այս պատուաւոր փաճառականներու գասին միացած էին: Այս նաւելուկ գողերու խմբակին շարաշահութիւնները հրեաներու՝ այս նշանատուր փաշխատուներու կողմէ կը ղեկավարուէին: Ամէն ինչ, փոխադրութեան միջոցներն ալ կը շահագործուէին: Առանց Իթթիհատ և Թէրազը կուսակցութեան պաշտպանութեան՝ գործ տեսնել, ասորիլ, անկարելի գարձած էր:

Վակոն ծախելը հարստանալու միջոց մըն էր: Ղեկավարները՝ փառարանողներուն և կամ արժէքատուր նուէրներով զիրենք գոհ ձգողներուն փակնի թուղթ կու տային: Այս շնորհքին արժանացողները գանսնր յանձնակատարներուն կը ծախէին և ասանց յայնա թեան՝ հաղարատու սկիներ կը գանձէին: Այս և ուրիշ միջոցներով պատերազմէն ասաջ տասը փարա շունեցող սինդրորներ միլիոններու տիրացան:

Հանրային կիներուն փետուրով լեցուած բարձերու տեղ՝ հաղարնոց թղթողիներով լեցուած բարձեր նախրել . . . Աստրիացի Միլոպիչ անուն պարս հիին մէկ գիշերուան համար 25,000 թղթոսի տայ. . . Մեծ կողի մէջ բնկերներու խնձոյրի պահուն, կէս գիշերուան մօտ հանրակնաջ մը փափաքին վրայ մտանատուր շուքմակոյկով Բերաի Թոպատիանէն պապապակ բերել տայու նման ծախսերը. . . այս պատուաւոր փաճառականներու համար նորութիւն գարձած էր:

Ընդհանուր երկրի կեանքին մէջ աններդաշնակութիւն մը յառաջացած էր: Ժողովուրդին մէկ մասը անօթութենէ, թշուառութենէ և ասիկ ծայրում ասնոց հիանդութիւններէ հիծելով արցունք կը թափէր, իսկ Իթթիհատի պատերազմի շնորհիւ հարստացածներն ալ ճոխութեան մէջ անփայլ կեանք մը կ'ստորէին:

Վերջապէս մէկ կողմէ ալպանելի շոտայութիւն և ցուփութիւն, միւս կողմէ՝ խղճալի անօթութիւն և թշուառութիւն կը տիրէր:

Բանակին մէջ ծառայող սպաներուն ընտանիքները այս երկու դրութեանց մէջ առանձնաշնորհեալ դասակարգ մը կազմած էին: Ասոնք իրենց աւելորդ կահերը եւ զոյքերը ծախելով կ'ապրէին:

Այս աւարտութեան շրջանին ամենէն նողկալին՝ Հիւսէյին Ճահիտի նախագահած Չարաշահութեան Արգելիչ Յանձնախումբը եւ Գարա Քէմալին հիմնած Ազգային Արտադրութիւն եւ Ազգային Ընկերութիւնները եղած են:

Չարաշահութեան արգելումը շարաշահութեան աղբիւր դարձած էր: Անատոլուի բուրդն ու բամպակը Ազգային Արտադրութիւն ընկերութեան վստահուած էր. բերքը ուրիշ ընկերութեան մը տրուած էր: Այս ընկերութիւնները ամէն տեղ, մասնաւորապէս բերքերու ամենէն առատ վայրերուն մէջ «ընկերներէն» բաղկացած մասնաճիւղեր ունենալով, տեղւոյն վաճառականներէն կը ղնէին, եւ իրենց Ընկերութեան հաշւոյն եւ անուան Պոլիս կը փոխադրէին: Շոգեկառքով վաճառքի ապրանք փոխադրել ասոնցմէ զատ ոչ ոքի կ'արտօնուէր:

Բերքը գիւղացիներէն հաւաքող միջնորդները այս Ընկերութեան հաշւոյն գնող մէյ մէկ յանձնակատարները դարձած էին:

Բերքին սակը Ընկերութիւնը կ'որոշէր: Այս գործին մէջ վնասուողը գիւղացին եւ արտադրողն էր. իսկ երեւակայութենէ դուրս հարստացողներն ալ Ընկերութիւնը եւ ասոնց զործակատարներն էին: Մէկ զուրուշի առնուած ապրանք մը 200 զուրուշի կը ծախուէր:

Մէկ կողմէն Գարա Քէմալին սեւ փորձանք դարձած Ազգ. Ընկերութիւնը ժողովուրդը կեղեքելով կը հարստանար, մինչ ընդհանուր պարենաւորումի նախագահ Թոփալ Իսմայիլ Հագգը փաշայի վարչութեան տակ գտնուող Բումէլիի, Անատոլուի եւ Սուրիոյ երկաթուղիները, վաճառականական փոխադրութեանց յատկացուած վաճառներու բաժանման մէջ ապօրինի շահեր կ'ապահովէին:

Վաճառներու բաժանման մէջ կատարուած այս ասօրինութիւնները, ապրանքի եւ պարէնի փոխադրութեան ծախքերը կրկնապատկելով, ժողովուրդը իր առօրեայ սրնունդը շատ սուղ գնելու կը ստիպուէր:

Ժողովուրդին քաշած տառապանքը անտանելի դարձած էր. գիւղացիին ձեռքը դանուած բերքերը բանակի անունով եւ ոչինչ գնով կը գնուէր, դրամի տեղ ալ յառաջիկային իրենց տուրքերուն տեղ հաշուելու պայմանաւ մէյ մէկ մուրհակ կը տրուէր եւ այս թուղթի կտորով ղնուած

բերքն ալ մինչեւ զինուորական ամբարները գիւղացիին միջոցաւ կը փոխադրուէր:

Նկատի առնենք, օրինակի համար, մէկ էշ ունեցող գիւղացի մը Մէծիտ Էօղէն գիւղէն մինչեւ Անգարայի զինուորական ամբարը (իշու գնացքով 12 օրուան ճամբայ) ցորեն փոխադրելու ստիպուի, բռնութեան չափը կը հասկըցուի, քանի որ մէկ իշուն փոխադրելիք ցորենը 60 քիլօն չանցնիր. սակայն այդ իշուն 12 օրէն հասնելը եւ 10 օրէն վերադառնալը եւ այդ շրջանին իշուն կերը ու սիրով ճամբու ուտելիքը եւ ծախքը հաշուելու ըլլանք՝ փոխադրուած ցորենին փոխարժէքին քանի մը անգամը գիւղացին տուած կ'ըլլայ: Եթէ անոր գիւղական աշխատանքէն եւ մնալուն սրտճառաւ ենթարկուելիք վնասներն ալ զուտարենք, կրնաք չափել, թէ գիւղացին ինչպիսի զրկանքներու կ'ենթարկուէր:

Բռնութեան եւ կաշառակերութեան սևասկները շատ էին: Տեղական եւ զինուորական ամբարներու պաշտօնեաներուն ապրանքը ստանձնելու տան 10 սո հարիւր պակաս կշռելով՝ տարբերութիւնը բաժնուելին՝ սրիկայութեան, զողութեան եւ անբարոյութեան ազ ու սղսլեղն էր.

Թշուառութենէ ու անօթութենէ զանազան վարակիչ հիւանդութիւններ յառաջ եկած էին. թիֆուսը ժանտախտէն աւելի սուեր կը պործէր, կործես հոգէտոր մանկազը ձեռք առած օրական հազարաւոր կեանքեր կը հնձէր:

Պատուի եւ սւղղամտութեան արժէքը կորսուած, անօթութիւնը եւ առատութիւնը երկրին բարոյականը բոյորովին խաթարած էին:

Իթթիհաս-Թէրազը կուսակցութեան անբարոյացած շրջանին, այր եւ կին առանձնաշնորհեայ դէմքեր կային: Աստուծէ իւրաքանչիւրը ուրոյն դեր ունէր: Աստուծ մէջ Խալիտէ Էտիպ բարձր գիրք ունէր, հետեւաբար այս կինը ճանչնալ աւելորդ չըլլար:

Խալիտէ Էտիպ Հանրմ, հրեայ, ապա իսլամացած էտիպի աղջիկն էր, Թուրքիոյ մէջ բարձր ուսում առած, արդիականութեան կողմնակից ազատատենչ կիներէն էր. համաշխարհային սյասեւրոզմին Իթթիհասի բրորական-տիտը եւ Սուրիոյ աղջկանց վարժարաններուն քննիչը բոյալով, Սուրիոյ եւ Պոլսոյ միջեւ անդադար երթեւեկած, դանազան ճամբորդութիւններ կատարած, ճէմայ փաշայի, սուլա Թալատի, եւ ի վերջոյ Մուսթաֆա Քէմալ փաշայի սիրուհին եւ խորհրդատուն եղած էր: Այս անձերուն մօտ ունեցած գիրքը, Տիկին Փամբատուրի Լուծովիկոս Ժե. Ի

մօտ ունեցած դիրքը կը յիշեցնէր եւ տէրութեան կարեւոր գործերուն իսկ միջամտելէ չէր քաշուեր:

Երբ Իթթիհատի իշխանութիւնը տապալեցաւ, Սալիտէ Էտիպ Ամերիկեան քննիչ յանձնախումբի մօտ Ամերիկայի հովանաւորութիւնը պահանջողներէն առաջինն էր: Իզմիրի Յոյներու կողմէն գրաւման ժամանակ կծու ազգայնական մը դարձած եւ սակայն ապահոված շահերուն համար Ամերիկեան հովանաւորութիւնը նախընտրելէն չըդադրելով, Էրզրում գտնուող Մուսթաֆա Քէմալ փաշան ձեռք ձգելու, իր սոյն նպատակին յարիլ տալու համար հետեւեալ նամակը գրած էր:

«Նորին Վսեմութիւն Մուսթաֆա Քէմալ փաշային,

«Յարգելի Տէ՛ր,

«Թուրքիոյ քաղաքական կացութիւնը շատ փափուկ փուլի մը մէջ մտաւ. մեր ուղղութիւնը ճշդելու համար Թուրք ժողովուրդի դիմակը վերցնելով ազատ քայլ մը առնելու ժամանակն ալ անցնելու վրայ է:

«Պոյսոյ մէջ, արտաքին կացութիւնը հետեւեալ կերպով կը մեկնարանուի: Յրանսա, Իտալիա եւ Անգլիա Թուրքիոյ հովանաւորութեան խնդիրը որչափ ալ Ամերիկայի առաջարկած են, սակայն ամէն ջանք կը թափեն որ ան մերժէ:

«Յրանսա՝ Սուրիոյ մէջ տուած կորուստը Թուրքիոյ մէջ դարմանել կ'ուզէ: Իտալիա սլաւուաւոր կայսրութիւն մը ըլլալով, բացէ ի բաց կը յայտարարէ, թէ Անատոլուէն բաժին մը ստանալու համար պատերազմի մասնակցած է: Անգլիոյ խաղը աւելի նուրբ է: Ան Թուրքիոյ միութիւնը, արդիականանայր, իրական անկախութեան մը տիրանայր սպազայի համար իսկ չի փափաքիր:

«Նոր միջոցներով եւ գիտութեամբ արդիականացած եւ զօրացած իսլամ Թուրք կառավարութիւնը, ղեկավարուած Մարգարէի փոխանորդութեամբ, Անգլիոյ իսլամ հպատակներուն համար գէշ օրինակ մը կը հանդիսանայ:

«Եթէ Անգլիա ամբողջ Թուրքիոյ տիրանայ, զայն սնդամահատելով քանի մը տարուան մէջ հլու դադթափայրի մը պիտի վերածէ: Սակայն նկատի ունենալով, որ առանց Յրանսայի հետ պատերազմելու իր նպատակը իրագործել պիտի չյաջողի, չի կրնար այս քաղաքականութիւնը հետապնդել. բայց երբ Թուրքիոյ ամբողջականութիւնը սլաւապանել հարկ տեսնուի, այսինքն երբ հասկնայ, թէ Թուրքիոյ բաժանումը զինուորական մեծամեծ զոհողութիւններու կը կարօտի, Լատին ցեղը Թուրքիա չմտցնելու համար

Ամերիկեան հովանաւորութեան պաշտպան կը կանգնի. արդէն Անգլիացի դիւանագէտներ այս ուղղութեան կը յարին եւ Մորիսոնի նման նշանաւոր դէմքեր՝ Ամերիկայի ամբողջ թուրքիոյ վրայ հովանաւորութեան կողմնակից կը գտնուին:

«Ուրիշ լուծում մըն ալ կայ. թուրքիան՝ թրակիան՝ յէն, Իզմիրէն, Ատանայէն, կարծեմ Տրապիզոնէն եւ անպայման Պոլսէն անջատելէն ետք, նախկին օտար առանձնաչնորհումներով կաշկանդուած եւ շնչահեղձ սահմաններով անկախացնել:

«Մեզի համար Պոլսոյ մէջ իբր նուազագոյն չարիք, հին եւ նոր թուրքիոյ սահմաններով Ամերիկայի հովանաւորութիւնը յարմար կը նկատենք հետեւեալ պատճառներով. —

Ա. — Ամէն պարագայի տակ, մեր մէջ Քրիստոնեայ փոքրամասնութիւն մը պիտի մնայ: Ասոնք թէ՛ Օսմանեան հպատակութեան իրաւունքները պիտի վայելեն եւ թէ՛ Եւրոպական տէրութիւններուն վստահելով խռովութիւններ պիտի հանեն եւ դիւանագիտական միջամտութիւններու տեղի պիտի տան եւ մեր Երեւութական անկախութենէն, ի նպաստ այս փոքրամասնութիւններու, ամէն տարի հողեր պիտի կորսնցնենք:

«Կազմակերպուած կառավարութիւն մը եւ արդիական վարչաձեւ մը ստեղծելու համար, Պատրիարքարանի քաղաքի առանձնաչնորհումները, փոքրամասնութեանց օտար տէրութիւններու պաշտպանութեամբ յաճախակի սպառնալիքները պէտք է չէզոքացուին. փոքր եւ տկար թուրքիա մը ասիկա չի կրնար գլուխ հանել:

Բ. — Զիրար ոչնչացնող, աւաղակութեան եւ արկածախնդրութեան համար ապրողներուն փափաքը դոհացնող պետական վարչաձեւի տեղ, ազգին բարօրութիւնը եւ յառաջդիմութիւնը ապահովող, ժողովուրդին գիւղերուն առողջապահական պայմանները եւ մտայնութիւնը արդիականացնող պետական վարչաձեւի մը կը կարօտինք, եւ ասոր համար պէտք եղած դրամը, մասնագիտութիւնը եւ ուժը չունինք. քաղաքական փոփոխութիւնը քաղաքական դիտութիւնները կ'աւելցնէ:

«Ոչ-քաղաքակիրթ Ֆլիյայեան կղզիները այսօր ինքնավար դարձնող Ամերիկան՝ մեր հաշուոյն կու գայ: 15-20 տարի տոկալէ ետք, նոր թուրքիա մը, զարգացած, իրական անկախութեան գաղափարը իւրացուցած թուրքիա մը, միայն Ամերիկան կրնայ ստեղծել:

Գ.— Արտաքին մրցակցութեանց եւ միջամտութեանց վերջ տալու համար, զօրաւոր պաշտպանի մը պէտք ունինք եւ այս՝ միայն դուրսէն կրնանք գտնել:

Դ.— Այս օրուան կատարուած իրողութիւնները բառնալու եւ անմիջապէս մեր դատը աշխարհի դէմ կարենալ պաշտպանելու համար, հարկ եղած ուժը ունեցող տէրութեան մը պաշտպանութիւնը խնդրել պէտք է. գրաւատենչ Եւրոպայի հազար ու մէկ խաղերուն եւ քաղաքականութեան դէմ, իբրեւ փոխանորդ, եթէ յաջողինք Ամերիկան շահիլ եւ ճակատեցնել, ապագայի համար Արեւելեան խընդիրն ալ լուծած սլիտի ըլլանք:

«Ինչպէս կարգ մը մարդիկ կը պնդեն, Ամերիկա պաշտօնապէս կրօնական հակում եւ կողմնակցութիւն չունի: Քրիստոնեաներուն նպաստ տուող միսիոնարը Ամերիկայի սկետական մեքանիզմի հետ կապ չունի:

«Ամերիկայի պետական մեքենան անկրօն եւ անցեղ է: Ան ներդաշնակ կերպով զանազան ազդութիւններու եւ կրօններու պատկանող ժողովուրդները համերաշխութեամբ կառավարելու ձևեր գիտէ:

«Ամերիկա՝ թէեւ Արեւելքի մէջ հովանաւորութիւն եւ Եւրոպայի դէմ սլարտականութիւն ստանձնել չուզեր, սակայն անոնք սրժանապատուութեան եւ Եւրոպայի դէմ գերակշռութեան ետեւէն վազողներ են:

«Անոնք Եւրոպայի ցոյց տալ կ'ուզեն, թէ ժողովուրդ մը անկեղծօրէն երբ իրենց դիմէ, այդ ժողովուրդին եւ երկրին համար ինչպիսի լաւ վարչաձեւ մը կրնան ստեղծել:

«Ամերիկայի պաշտօնական շրջանակներուն մէջ ի նըստատ մեզի բաւական համակրութիւն մը յառաջացած է: Իբրեւ հայասէր Պոլիս եկող կարգ մը ամերիկացիներ, Թուրքիոյ բարեկամ եւ Թուրքիոյ բրոքականտիստը դառնալով վերադարձան:

«Այս հոսանքը ներկայացնող պաշտօնական եւ անպաշտօն Ամերիկացիներուն գաղտնի նպատակը սա է. Թուրքիան՝ առանց հողային բաժանման, հին սահմաններով եւ միութեամբ սլահելու ոլայմանաւ, ընդհանուր եւ միակ հովանաւորութիւնը առնել կ'ուզեն: Սուրիան՝ Ամերիկեան Յանձնախումբին հոն գտնուած պահուն համաժողով մը գումարած եւ Ամերիկան ուզած է: Սուրիոյ այս խնդրանքը Ամերիկայի մէջ ջերմ ընդունելութիւն գտած է:

«Ամերիկեան պաշտօնական շրջանակը մեր երկրին մէջ Հայաստան մը ստեղծելու հակում չունի. լաւատեղեակ շրջանակներէ տեղեկացած եմ որ, եթէ Ամերիկան ընդունի



հայտնաւորութիւնը՝ բոլոր ազգերը հաւասար իրաւունք-  
ներով եւ մէկ ազգի մը գաւակները սրբէս նկատի պիտի  
առնէ :

«Մակաչն Եւրոպա աննշայման Հայաստանի մը խնդի-  
րը պիտի յարուցանէ, մասնաւորապէս Անգլիոյ հայերուն  
փոխառուութիւնը ընել կ'ուզէ եւ Ամերիկեան հանրային  
կարծիքին մէջ հայ ազգաեակներու ի նպատակը մը խա-  
ղալու կ'աշխատի :

«Եւրոպայի վախը մեր բանխմայներուն միտքը կ'ըզ-  
րագեցնէ : Բէշատ Հիքմէթ պէյ, Ճամի պէյի նման մեր ամ-  
բողջականութիւնը հետապնդող գիտնադէտներ՝ հայկա-  
կան խնդրին յուժման մասին աստջարկ մը ունին, սրուն  
համար պաշտօնապէս Ձեզի կը գրեն :

«Շատ վատնդաւոր ժամանակ կ'անցնենք : Անատոլի  
շարժման համակրողը, միայն Ամերիկեան է : Անգլիացիներ-  
ըր Ամերիկեան համոզել կ'ուզեն, թէ այս շարժման նպատա-  
կը քրիստոնեաները ջարդել եւ Իթթիհատականները կրկին  
գիրքի բերել է : Այս շարժումը կասեցնելու համար միշտ  
դինաւորական ուժ մը գրկել կը խորհուի : Ասոր համար  
Անգլիացիները համոզելու կ'աշխատին, նոյնիակ, իրազեկ  
չըջանակներէ կը տեղեկացուի որ, եթէ այս շարժումը փու-  
թով եւ յառ աստջարողութիւններով ծաւալի եւ քրիստոնէա-  
հայած գոյն մըն ալ չաճնենայ, Ամերիկայի մէջ աւելի հա-  
մակրութիւն պիտի չաճի :

«Մինչեւ որ Սերաստիոյ Համաժողովը գումարուի,  
Ամերիկեան յանձնախումբը հոս ձգելու կը ջանանք, թե-  
րեւս Համաժողովին Ամերիկացի թղթակից մըն ալ գրկելու  
յաջողինք :

«Ահաւասիկ բոլոր ասոնց դէմ մեր գատը պաշտպանե-  
լու համար, փոխանակ ներկայացած այս առիթները ձեռք  
փախցնելու, բաժանման եւ քայքայման վտանգին դէմ Ա-  
մերիկայի գիմելու ստիպողականութիւնը յարմար կը տես-  
նեմ : Ընկեր Վասրֆին հետ խորհրդակցեցանք եւ մեր հա-  
մաձայնած կէտերուն շուրջ ինքն ալ ստանձինն պիտի գրէ :

«Կը կարծեմ որ կամքի տէր, հեղինակաւոր եւ իմաս-  
տուն մէկ երկու հոգի կրնան Թուրքիան փրկել :

«Վիճարանութեան դարը անցած է. ապագային հա-  
մար յառաջդիմութեան եւ միութեան պայքար բանալու բո-  
տիպուած ենք : Իր սահմաններուն վրայ սոյսչափ զոհ ար-  
ող մեր հայրենիքը՝ գիտութեան եւ քաղաքակրթութեան  
համար քանի՞ զոհ տուած է : Մենք Թուրքիոյ հայրենասէր

դաւակներս, կը պահանջենք, որ անոնք վարդուան շինարարները դառնան:

«Ձեզմէ եւ ընկեր Բէուֆէն կը սպասենք, որ հիմերը սարսած մեր խեղճ հայրենիքին համար հեռատեսօրէն շարժիք:

«Յարգանքներս ներկայացնելով՝ յաջողութիւն կը մաղթեմ: Ազգային դատին համար աշխատողներու մէջ հասարակ զինուորի մը խոնարհութեամբ՝ միշտ Ձեզի հետ եմ:

Խալիտէ Էտիպ»

\* \* \*

Խալիտէ Էտիպ Պոլսոյ բոլոր շրջանակներուն եւ ազատ ընկերակցութիւններու նշանաւոր մէկ անդամն էր: Պոլսոյ Անգլիական դրաւումէն ետք Անատոլու անցած եւ այնտեղի հոսանքին խառնուած էր: Կանաչ վերարկուով եւ դուխը կանաչ ծածկոց դրած, երեւութապէս սզգին մայրը պատուանունով այդ շրջանին Իսլամութեան քաղաքականութեան մղիչ ուժը եղած էր: Անգարա, Գարօ Էօրէնի մէջ իրեն յատկացուած շէնքը՝ դործավարներու, դիւանապէսներու եւ նոյնիսկ հրոսակներու ս ժամադրավայրը եղած էր:

Խալիտէ Էտիպ ժամանակ մը տասնապետի աստիճանով բանակին մէջ մտած, երիտասարդ, առոյզ զինուորներու հետ ճամբորդութիւններ ալ կատարած էր...

Անգարայի բոլոր անցուղարձներուն ինքզինքը ցոյց տուող Խալիտէ Էտիպի աստղը, Լաթիֆէ հանրմին հանրապետութեան նախագահին կինը դառնալովը մարած էր:

Խալիտէ ամէն բան հաշտ աչքով կրնար դիտել ու ներել, սակայն իրեն մոռացութեան տրուելը սեւէ կերպով չէր կրնար մարսել. անցած տարիներու իր դէմքին եւ մարմինին վրայ կատարած աւերները, ուրիշ կիներու նման չէր կրնար նկատի առնել: Ահա ասոր համար է, որ Խալիտէ Էտիպ ընդդիմադրութեան բեմին վրայ՝ երբեմն Լոնտոն եւ երբեմն Ամերիկա կը տեսնուի:

Պոլսոյ մէջ հրատարակուող «Միլլիյէթ» թերթի 25 Յուլիս 1928-ի մէջ, Օրխան Սէյֆի պէյ կը գրէ, թէ Խալիտէ Էտիպ վերոյիշեալ վայրերու մէջ տազնապ մը կ'անցընէ: Օրխան Սէյֆի պէյի այս յօդուածը Խալիտէ Էտիպը աւելի լաւ ներկայացնելուն նոյնութեամբ կ'ընդօրինակենք:

«Խալիտէ Էտիպ տազնապ կ'անցնէ:

«Այո՛, Խալիտէ Էտիպ տազնապ կ'անցնէ եւ անանկ տազնապ մը, որ ե՛ւ Ամերիկեան թերթերուն յօդուածներ,

ե՛ւ օդանաւերով Պոլսոյ վրայ յայտարարութիւններ տեղա-  
ցրնէ, դարձեալ պիտի չկրնայ ջիղերը հանդարտեցնել:

«Ո՛հ, միթէ մենք բացէ ի բաց չլքեցի՞նք եւ հիմա ին-  
չե՛ր չենք խօսիր: Խալիտէ Էտիպի նման թէ՛ այր, թէ՛ կին  
արարած մը՝ այսչափ յարաբերութենէ զրկուելու կրնա՞յ  
համբերել, թէ այր մարդէ եւ թէ կնոջ զգացումներէ պո-  
հացում ստացող եւ տակաւին ցանկացող այս կինը, իրեն  
հանդէպ ցոյց տրուած անհոգութենէ կատղեցաւ:

«Ինչպէ՞ս եղաւ որ մոռցանք. արդեօք ձէմայ փաշայի  
մօտ իշխանութիւն վայելողը ան չէ՞ր, Երանի թէ նուռի եւ  
նարինջի ծաղիկները լեզու ունենային եւ պատմէին:

«Իշխանուհիի նման արեւուն տակ ման կու պար, զին-  
ուորներու մէջ հերոսի մը նման կը պատէր, այն ստտիճան  
տղիկցու թեան տէր էր որ ուզածը մէկ ակնարկով կամ խօս-  
քով անհետացնելու կարող էր:

«Անկախութեան պատերազմին զինուոր դարձաւ,  
յիսնապետէն բարձր տիտղոս շտուին, Երբ կին դարձաւ՝  
սեւէ կարեւորութիւն շտուին...»

«Կը կարծէր, որ Իթթիհատի շրջանին իր «պատուա-  
ւորութիւնը», պատիւը, ազգային շարժման մէջ կատարե-  
լութեան պիտի հասնի. սու՛ղ, որ քաղաքականութեան  
մէջ հասարակ զինուորի մը եւ կին դարձած ժամանակ պա-  
տաւի մը վայել յարգանքը տեսաւ:

«Ամբողջ այս անտեսումի եւ զրկանքներու դէմ գայ-  
րացած՝ Անգարայէն փախաւ, շարաթներով, ամիսներով,  
նոյնիսկ տարիներով պարզ հրաւէրի մը սպասեց:

«Ա՛հ, փոքր հրաւէր մը...»

«Երբ այս ալ զլացուեցաւ, իր սաղմը պարպեց, այսօր  
գրչէն արտասուքի նման մելան կը հոսի:

«Այլեւս ինչե՛ր պիտի չգրէ, ինչե՛ր պիտի գրէ, թող  
խօսի: Մենք անոր սիրտը կը ճանչնանք, խեղճ Խալիտէ Է-  
տիպ, կը տառապի անոր համար որ ոչ այր կրցաւ բլլալ եւ  
ո՛չ՝ կին:

«Այս կէս այր, կէս կին արարածը անաւաստիկ, այսօր  
Լոնտոնի մէջ իբր քաղաքական գառանցանք, իր յիսուն  
տարիքին տագնապը անցնելու վրայ է».

\* \* \*

Ամերիկայի Նիւ Եորք քաղաքը լոյս տեսնող հայա-  
տառ թուրքերէն «Րահնիւմա» հանդէսի 30 Մարտ 1929-ի  
թիւին մէջ Պր. Նապոլաչեանի ստորագրութեամբ հրատա-  
րակուած յօդուածը՝ սոյն խնդրին հետ կապ ունենալուն՝  
նոյնութեամբ կ'արտագրենք:

Պր. Նապոլեոնի անունով մէջ կը գրէ, թէ Խալիաէ Էտիպ այս օրերս Ամերիկայի բոլոր կողմերը պատեյով թրքութեան անուշով ճառեր կ'արտասանէ: Յիշեալին ծագման և անցեալի մասին թէեւ մենք ծանօթ ենք, սակայն հոս, Նիւ Եորքի մէջ կայ անձ մը, որ Խալիաէ Էտիպի ծնունդէն սողին անոր կեանքին ծանօթ, բարձր ուսում առած, բանաստեղծ, գրագէտ և պատուաւոր մէկն է:

Այս անձին տեղեկութեանց համաձայն, Խալիաէի հայրը Սեյանիկցի հրեայ մըն է. կրօնափոխ մէկը չէ. բուն հրեայ մըն է: Ան երիտասարդութեան ժամանակ Թուրքի մը ծառայ կըսէ, քանի մը տարի ետք իսլամացած և Էտիպ անունը առած է: Էտիպ՝ Ալի Շամիլ փաշայէն արձակուած կնոջ մը հետ ամուսնացած է և Խալիաէ այս ամուսնութեան պտուղն է:

Խալիաէ իր ուշիմութիւնը հրեայ արիւնէն ժառանգած և Ամերիկեան վարժարանի ուսման շնորհիւ զարգացած է:

Խալիաէ ժամանակ մը Սալէհ Ձէքի(\*) անունով երիտասարդէ մը մտքեմաթիքի դաս առած էր: Այս վերջինը թէեւ ամուսնացած և զաւակներու տէր էր, սակայն զանոնք լքելով Խալիաէին ետեւէն ինկած եւ անոր հետ ամուսնացած էր: Վեց տարի ետք այս մարդը Խալիաէին կողմէ հին հազուատի նման մէկ կողմ նետուած եւ թշուառութենէ մեռած էր: Խալիաէ յետոյ կրօնափոխ հրեայ Բոնանի հետ ամուսնացած էր:

Այս տեսակցութիւնն ալ նոյնութեամբ արձանագրել հարկ տեսնուած է:

Յարգելի ընկերս ճաշարանի մէջ տեսնող Խալիաէ Էտիպ, դայն իր մօտ հրաւիրած եւ անոր որպիսութիւնը հարցնելէ յետոյ մէջերնին հետեւեալ խօսակցութիւնը սկսած էր:

Խալիաէ Էտիպ. — Պարոն, Թուրքիոյ ներքին կացութեան տեղեակ էք. Թուրքին արեան գնով ձեռք բերուած յաղթանակը, զինուորական միապետի մը քմահաճոյքներուն եւ բռնութիւններուն գործիք դարձաւ: Այս միապետը իր քանի մը ընկերներով հայրենիքը դէպի վտանգաւոր վիճակ առաջնորդ է:

Խալիաէ Էտիպ, այս նախարանով ընկերոջս Թուրքիոյ

Ծ Է — (\*) Թէեւ Սալէհ Ձէքի «Բահմուտ» թերթին կողմէ ինքնաբերական անձնագր մէկը կը նկատուի, սակայն յիշեալը շատ ծանօթ մտաւորական մըն է

մասին ունեցած կարծիքը եւ դադարաբար հասկնալ ուզած էր:

Ընկերս.— Տիկին, գիտէ՞ք որ ես երկու տարիէ ասդին թուրքիոյ մասին առած տեղեկութիւններս՝ անկանոն կերպով՝ ձեռքս անցած թուրք թերթերուն տուած տեղեկութիւններէն եւ լուրերէն կը բաղկանան: Դուք թուրքիայէն նոր եկած ըլլալնուդ՝ Ձեր տեղեկութիւնները աւելի ճիշդ են եւ նոր: Եթէ կը հաճիք մեր հայրենիքի մասին կարգ մը տեղեկութիւններ տուէք:

Խալիտէ Էտիպ.— Թուրքիայ յաղթութեան սլակններով շփացած, գինեմով հրամանատարի մը շտապեցուցած խարազանին տակ հիւժեւում գէպի վտանգաւոր ասպագայ մը կը սուրայ. երկրին կարգ մը զարգացած երիտասարդները Յ, Տ դահեկանի շահուն համար կը լռեն, լռելով ալ չեն դահանար՝ պնակալէզութիւն եւ շողօքորթութիւն կ'ընեն: Այս ընթացքը երկիրը անսլայման գէպի անդունդ պիտի դահավիժեցնէ. անխուսափելի վտանգաւոր վիճակի մը ստեղծումէն առաջ թուրք հայրենասէրներուն պարտականութիւնն է այս միայեա ղինուորին բռնութեան վերջ տալ. այս մասին ի՞նչ կը խորհիք:

Ընկերս.— Այս յեղափոխութիւնը սրարչաւ վազող ձիու կը նմանի. հիմա ասոր առջեւը ելլել եւ սանձը բռնելու աշխատիլ խոհեմութիւն չէ. ան իր թափը պէտք է առնէ, յաղնի եւ վերջը բռնուի. մասնաւորաբար Ձեր ալ անուամակցած այս օրուան հայրենասէրներուն կողմէ մեղի «դաւաճան» կնիքը զարնուած ըլլալուն, հիմա հայրենիքի բոլոր դարձերը «հայրենասէր» կոչուողներուն ձգեցինք: Մենք հիմա կը լռենք:

Տիկին Խալիտէ ընկերոջս այս պատասխանին վրայ շատ խնդիրներ շօշափած եւ ընդդիմադիր հոսանք մը ստեղծել ուղելը անուղղակի կերպով հասկցուցած եւ ընկերոջս այս մասին կարծիքը հարցուցած է:

Ընկերս թէեւ չհասկնալ ձեւացուցած է, սակայն Խալիտէ իր հարցումը կրկնելով՝ ուզած է անսլայման անոր դադարաբար հասկնալ:

Ընկերս.— Տիկին, նկատելով որ խօսելիքներս կըրնան Ձեզի ցաւ պատճառել, լռելը կը նախընտրեմ:

Տիկին Խալիտէ.— Ինչո՞ւ ցաւիմ, իրականութեան կայծը վիճաբանութենէն կը ծաղի. հայրենիքի խնդիրներու մասին միշտ պէտք է վիճիլ, որպէսզի թերիները երեւան ելլեն, որովհետեւ զոցուած վէրքերը կ'որդնոտին, կ'ըսէ առածը:

Ընկերս.— Ուրեմն լաւ, բայց միայն կը խնդրեմ որ  
բակլիքներս մինչեւ վերջ առանց բնոյհատելու մտիկ ընէք,  
բակլով՝ խօսակցութիւնը շարունակած է.—

«Տիկի՛ն, դուք Ձեր կեանքին մէջ երբեք անկեղծ չե-  
ղաք. բոլոր կեանքերնիդ կեղծիքով անցաւ: Թուրքիոյ շատ  
բարձր դարդացում ունեցող բացասիկ կիներ, շատ ազգասէր  
աիկիներ եղող Խայիտէ Էտիպ, միշտ իր վարդացման, իր  
համոզման հակառակ շարժած է: Խայիտէ Էտիպ Սուրիա-  
յէն ճէմայր զովարանող սուրիական նամականին գրած  
ժամանակ այ անկեղծ չէր: Այն ժամանակ Սուրիոյ միա-  
պեաին հաճոյ երեւնայու եւ աշտպէսով իշխանաւլայել  
կեանք մը ապրելու համար իր համոզման հակառակը գը-  
րած էր: Արդարութեան հակառակորդ, խոժոռ եւ բռնա-  
պետ մէկ հրամանատար ճէմայր, իրը արդարասէր եւ խըղ-  
ճամիտ ներկայացուցած էր: Երբ պատերազմը վերջացաւ եւ  
Եգիպտոսի յայթականը ըլլայու յաւակնութեամբ ճամբայ  
ելլող այս պարտուած հրամանատարը Թուրքիայէն փա-  
խաւ, Խայիտէ Էտիպ իր զէնքը աջ ուսէն ձախ ուսը անցնել  
ուզած էր: Նախապէս Իթթիհատ եւ Թէրապոլի բնոյրիմա-  
դիրներուն մօտենայ փախաբաժ էր, սակայն հայրենիքին  
թշուառ վիճակին մէջ առանց դրամի եւ կազմակերպու-  
թեան գործի դուրս անցնող բնոյրիմադրութիւնը Խայիտէ  
Էտիպի երեւակայած դիրքը եւ փառքը չէր կրցած տալ: Պո-  
լիս եկող Ամերիկեան քննիչ Յանձնախումբին ներկայանա-  
լով Ամերիկեան հովանաւորութիւնը ուզող եւ ասոր ջատա-  
գովը եղող Խայիտէ Էտիպ, այս կողմնակցութենէն յուսա-  
ցածը չկարենայով ձեռք ձգել, կարծես յուսահատութեան  
մատնուած էր: Սակայն Իզմիրի գրաւումը, Խայիտէ Էտի-  
պին մարելու վրայ եղող փառքի ու պատիւի կանթնը կրը-  
կին յուսաւորած էր: Իզմիրի Յոյներուն կողմէ գրաւումին  
զէմ բողոքելու համար կողմակերպուած միթիւնկին, սե-  
ւեր հաւած նշանաւոր բանախօս Խայիտէ Էտիպ կրկին փայ-  
լած էր: Երէկուան հովանաւորութիւն փախաբոզը, նոյն  
օրը ծայրայեղ ազգայնական մը դարձած էր: Խայիտէ Է-  
տիպ, ինչպէս ուրիշ անգամ, այս անգամ այ անկեղծ չէր:  
17 Մարտ 1920ին երբ Պոլիսը գրաւուեցաւ, հայրենասէր-  
ներու շարքին մէջ մտնելու համար Անգարա փութացող  
Խայիտէ Էտիպ, հոն կանաչներու մէջ փաթթուած մոլե-  
ռանդ իսլամ մը եղած՝ «ազգին մայրը» մակդիրը ստացած  
էր... Բարձր եւ չէն սրահներու պայծառ աստղը եզող Խա-  
լիտէ Էտիպին կանաչ վերարկու չէր վայելեր: Ան մզկիթ-  
ներու եւ գեղջկական տուներու, ցած երգիքներու տակ չէր

կրնար բնակիլ: Բայց ի՞նչ ընէր Խալիտէն, իր կեանքը կեղծիքով անցնող սրահներուն տիկինը: Իր վրայ խօսիլ տալու եւ իրեն վատք եւ դիրք ապահովելու համար սոյն կեղծիքին ճամբան բռնած էր: Թուրք ազգայնականներուն հետ ունեցած յարաբերութիւնը, ո՛չ թէ թուրք բլրայուն, այլ իրեն փայլուն դիրք մը ապահովելու համար էր: Խալիտէ կտիպ օր մըն ալ ձիու վրայ նստած, ուսին վրայ հրացան, կօշիկներ հագած բանակին մէջ մտաւ, տասնապետ եղաւ, ազգային շարժման ժամանակ անուն շահեցաւ, բայց անկեղծ չէր... Երբ շատ նուրբ եւ մեծաքսեայ կօշիկները իր սաքները կը ցուցնէին, կոշտ սպառի կաշիէ շինուած կօշիկները բնականաբար իրեն չէր վայելած: Բայց ի՞նչ ընէր Խալիտէ, իր վրայ խօսիլ տալ եւ եղակի նկատուիլ կ'ուզէր: Ան ամբողջ այս նեղութիւնները փառքի համար յանձն առաւ, Խալիտէ կտիպ ազգային շարժման բոլոր բովերուն մասնակցեցաւ, երեսփոխանական թեկնածու իջաւ եւ միայն մէկ քուէ ստանալով չկրցաւ ընտրուիլ: Եողպատի հակաշարժումը դադար Չէրքէղ Կահէմը, «Հաքեմիյէթ»ի եւ «Միլլիյէթ»ի էջերուն մէջ իրր ազգային հերոս ծափահարող Խալիտէ կտիպ, երբ Չէրքէղ Կահէմ, Մուսթաֆա Քէմալի դէմ ապստամբեցաւ՝ զայն «Ազգային դատաճան» որակելէ չքաշուեցաւ, բայց այս անգամ ալ անկեղծ չէր... Վերջապէս Խալիտէ կտիպի ասույր, ասանց արգելքի, մինչեւ Իզմիրի վերադարձումը փայլեցաւ, բայց Իզմիրի ազատագրումը Խալիտէ կտիպի կորուստը եղած էր, որովհետեւ յաղթական Քէմալ՝ Իզմիրի հետ, Իզմիրի ամենաբարձր դասուն պատկանող տիկին Լաթիֆէն նախընտրած էր: Տիկին Լաթիֆէն Խալիտէ կտիպի նման բարձր ուսում առած, Թուրքիոյ բարձրանալուն կողմնակից կիներ էր: Լաթիֆէ հանրմին փայլուն անողին առջեւ, հետզհետէ մարող Խալիտէ կտիպի ասողը բոլորովին խաւարեցաւ:

«— Ահաւատիկ տիկին, դուք ասիկա չէիք կրնար մարտել, եւ իրաւունք ունէիք ի՞նչ օդուտ: Ինչպէս ամէն յաջողութիւն վերջաւորութիւն մը կ'ունենայ, դուք ալ Տիկին Լաթիֆէի առջեւ Ձեր աւելի երկար փայլելու իրաւունք չունենալնից պէտք է ըմբռնէիք շրմբռնեցիք, որովհետեւ չէիք կրնար: Ահա Ձեր այս օրուան հակառակութիւնն ալ այս պատճառաւ անկեղծ չէ եւ չի կրնար ըլլալ:

«Ձեզ շատ վերաւորեցի, բայց խնդրեմ գէթ ձեր կեանքին մէջ մէկ անգամ անկեղծութիւն ցոյց տուէք, թէեւ այս կերպով անկեղծութեան եւ իրաւունքի առջեւ խոնարհիլ Ձեզի համար շատ դժուար պիտի ըլլայ, սակայն կը կար-

ծեմ, որ այս դառն իրականութիւնը եթէ ոչ լեզուով, սըրտով կ'ընդունիք»:

Այս խօսքերուն վրայ շուարման մասնունդ Սալիտէ էտիպ ջղայնութեամբ սլատասխանել ուզած էր, սակայն յարգելի բարեկամս, առանց ուշ դնելու՝ Սալիտէ էտիպին բարի ճանապարհ մաղթելով րաժնուած է:

\* \* \*

Իթթիհատ եւ Թէրազզը կուսակցութեան շուայտ եւ ցոփ շրջանը, խայտառակութիւնները եւ ոճրագործութիւնները միայն Պոլսոյ յատուկ չէր: Գաւառներու կուսակալներուն, պատերազմը վարող հրամանատարներուն, Իթթիհատի ներկայացուցիչներուն եւ քննիչներուն եւ Կեդր. Վարչութեան անդամներուն կողմէ տրուած գինիի սեղանները, շոայտութիւններն ու շնութիւնները ամէն տեղ կը խօսուէին: Անոր համար էր, որ Պոլիս եւ գաւառներու մէջ գտնուողները կը փոխանակուէին եւ զիրար կը դերադանցէին: Մասնաւոր շոգեկառքեր դէպի Սուրիա, Սուրիայէն դէպի Պոլիս կանոնաւորաբար սիրուհիներ կը փոխադրէին եւ այս փոխադրութիւնը աւելի կանոնաւոր էր քան գինուորական փոխադրութիւնները...

Պաղտատի սազմաճակատին վրայ գտնուելու պարտաւոր բարձր հրամանատարներ, իրենց համազգեստը հրեայ ազջիկներուն հազցնելու եւ իրենք անոնց դէմ հասարակ զինուորի պէս կենալու յիմարութիւնը կը գործէին:

Իսկ Սուրիոյ մէջ կատարուած խայտառակութիւններու վրայ աւելցող ոճրագործութիւնները մազերը փուշ փուշ կ'ընէին: Լիրանանի Ալէյ գաւառակին մէջ կազմուած պատերազմական ատեանը, արարներուն խլամ եւ քրիստոնեայ երևելիները եւ մտաւորականները ձերբակալելով չէինձու պատճառներով կախաղան կը հանէր:

«— Դո՛ւն ժամանակին ժողովին մէջ Թալաաթին ապտակ զարկեր ես, մահավճիռ:

«— Դո՛ւն ապակեդրոնացման համալիր ես, մահավճիռ:

«— Դո՛ւն արարները ապստամբութեան մղող քերթուածներ գրած ես, մահավճիռ:

«— Դո՛ւն Բարիզի մէջ արարական համաժողովին մասնակցած ես, մահավճիռ:

«— Դո՛ւն բանախօս որպէս, ճառեր արտասանելով ժողովուրդը կը գրգռես, մահավճիռ:

«— Դո՛ւն մամուլի միջոցս ժողովուրդը կը լուսա-



ւորես եւ կառավարութեան դէմ հակահոսանք կը ստեղծես, մահաւճիռ:

«— Դո՛ւն հակառակ կուսակցութեան կը պատկանիս, մահաւճիռ:

«— Դո՛ւն Փրանսացիներէն ոտճիկ կը ստանաս, մահաւճիռ:

«— Դուն ձէմալին սիրուհիին եւ անոր սիրած դեղին պլպուլին ծուռ աչքով նայած ես, մահապատիժ»:

Մահաւճիռ արձակելու համար այսպիսի աննշան վերադրում մը Ալէյի պատերազմական ատեանին համար կը բաւէր, եւ այսպէսով Սուրիոյ երեւելիներն ու մտաւորականները իրարու ետեւէ կախաղան կը բարձրացուէին:

6 Մայիս 1916ին Դամասկոսի եւ Պէյրութի մէջ միւսնոյն օրուան մէջ 21 նշանաւոր անձեր կախաղան հանուած էին:

Դամասկոսի մէջ կախաղան հանուածներ՝  
Ծերակոյտի անդամ՝ Ապտիւլ Համիտ էլ Չահրաւի:  
Քաղաքին երեւելիներէն՝ Շէֆիզ պէյ էլ Մուայէտ:  
Երեսփոխան եւ Դամասկոսի երեւելիներէն՝ Բիշտի պէյ Շամա

Նշանաւոր բանախօս՝ Շիւքրի պէյ Ասէյլի:  
Բանաստեղծ՝ Ապտիւլ Վահապ էլ Մըլէհի:  
Իշխան Ապտիւլ Գատիր էլ Ճէզաիրի սերունդէն՝ էմիր Օմար:

Նշանաւոր բանաստեղծ՝ Բէֆիզ Սէյլում եւ ուրիշներ:  
Միւսնոյն օրը Պէյրութի մէջ կախաղան հանուածներ՝  
Բանաստեղծ Օմար Համտ. Մուհամմէթ էլ Շանթի.  
«էլ Մուֆիա» թերթի տնօրէն՝ Ապտիւլ Ղանի էլ Արալի.  
«Ֆաթա էլ Արապ» թերթի տնօրէն եւ իշխանական ցեղէ՝  
էմիր Արիֆ. ուսուցիչ՝ Թէվֆիզ էլ Պասթ, Սէյֆէտտին էլ  
Խաթիպ. նշանաւոր բանախօս եւ «Իթթիհատը Օսմանի»  
թերթի տնօրէն՝ Ահմէտ Թապպարա. երեւելիներէն՝ Բէթրո  
Փաւլի, Ճըրճի էլ Հատտատ. սպայակոյտի անդամ՝ Աէլի  
էլ Ճէզաիրի, մտաւորական՝ էմին Լութֆի, Շէյխ Սեյիմ  
Պուխարինի որդին՝ Ճէլալ. Պայթաբ Ալի, եւ այլն:

Ասոնցմէ զատ Թուրքիոյ զանազան փայրերու մէջ կախաղան հանուածներուն, զաղտնի դնդակահարուածներուն թիւը շատ է: Ասոնցմէ հետեւեալներուն անունները ստորոյ պիտի բաւականանանք:

Ապտիւլ Քէրիմ էլ Խալիլ, Սալէհ Հայտար, Մուհամմէտ եւ Մահմուտ էլ Մահմարանի, Ապտիւլ Գատեր էլ Խըրաս, Նուրէտտին էլ Գատի, Ալի էրմէնազի, Սեյիմ Ահմէտ,

Մուհամմէտ էլ Աճէմ, Նայիֆ Թըլան, Մուհամմէտ Սելիմ Խուրի, Եուսէֆ էլ Հայիք, Ֆիլիպ էլ Խազէն, Ֆէրիտ էլ Խազէն, Եուսէֆ էլ Հանի, Նախլէ Մըթրան, Մէսուտ էլ Հէլէլ:

Ալէյի մէջ կազմուած պատերազմական ատեանին որոշումով կախաղան հանուած այս անձնաւորութեանց մահը բոլոր սրտերու խոր ցասում պատճառած էր:

Այս ցասումը տեսնող եւ զգացող Իթթիհատի իշխանութիւնը եւ ասոր Դամասկոսի եւ Պէյրութի քննիչներն ու ներկայացուցիչները, կուսակալն եւ կառավարիչները ասկէ ծագելիք փոխադարձութենէն վախնալով՝ Սուրիոյ բոլոր քաղաքներու եւ գիւղաքաղաքներու ազդեցիկ եւ սիրուած երեւելիները՝ մաս առ մաս, խումբ խումբ իրենց ընտանիքներով Անատոլուի խորերը աքսորել սկսած էին:

Երբ Ալէյի Պատերազմական Ատեանին ոճիրները համաշխարհային մամուլին մէջ արձագանգ գտնելով բուռն քննադատութիւններու պատճառ դարձան, կառավարութիւնը այս ատեանին որոշումներուն մասին գիրք մը հրատարակելով Եւրոպական մամուլին պատասխանել ուզած էր:

Այս գիրքը, այդ միջոցին ձէմալի մասնաւոր քարտուղարը եւ այսօր Թուրքիոյ մեծ ժողովին Պոլսոյ երեսփոխան Սալէհ Րէֆգիի կողմէն գրի առնուած էր:

Ինքնարդարացման նպատակով գրուած այս գիրքը կարդալով, Ալէյի Պատերազմական Ատեանին ոճրագործութիւնները եւ ի զօրու եղող օրէնքները ոտնակոխ ընելը հասկնալու համար կը բաւէ:

Օրինակի համար, կախաղան բարձրացուած Ապտիւլ Համիտ էլ Չահրավիին յանցանքը, յիշեալ Պալքանեան պատերազմի ժամանակ Փարիզի մէջ գումարուած ասպակեղրոնացման ժողովին մասնակցիլը ելած է:

Ճիշդ է որ, այս համաժողովը գումարուած, Ապտիւլ Համիտ Չահրավին ալ անոր մասնակցած էր, նոյնիսկ Իթթիհատ եւ Թէրազզըն, ասիկա տեղեկանալով, իրենց ընդհանուր քարտուղարը Միտհատ Շիքրի պէյր մինչև Փարիզ զրկելով հասկացողութեան եկած եւ համաձայնազիր մըն ալ ստորագրել յաջողած էր:

Ըստ այս համաձայնութեան, Սուրիոյ մէջ պաշտօնատուներու եւ մասնաւորապէս դատարաններու մէջ Արարերէնը թրքերէնի հաւասար պաշտօնական լեզու պիտի ընդունուէր: Սուրիոյ համար նշանակուելիք պաշտօնեաները արարերէնի տեղեակ պէտք էր ըլլային, եւ ասոնց նշանա-

կումին մեծ կարեւորութիւն պիտի տրուէր, եւ ամբողջ Սուրիոյ համար Սուրիացի քննիչ մը նշանակելով պետական գործերը խիստ հսկողութեան մը պիտի ենթարկուէին: Իսկ համաժողովին մասնակցողներուն ալ ընդհ. ներում պիտի շնորհուէր:

Այս համաձայնութեան վրայ ընդհ. ներում յայտարարուած եւ խնդիրը փակուած էր. եւ նոյնիսկ Ապտիւլ Համիտ Չահրաւի եւ ուրիշ կարգ մը Սուրիացի անձնաւորութիւններ Մերակոյտի անդամ նշանակուած էին:

Հիմա խնդիրը լուծենք:

1. — Եթէ Փարիզի համաժողովին մասնակցիլ ոճիր մըն էր, ուրեմն շնորհուած ներումը դատական հետապնդումներուն արգելք մըն էր: Իսկ եթէ դատական հետապնդում կատարել հարկ էր, յանցանքը կատարուած ոճիլ մը չըլլալուն եւ յիշեալին Մերակոյտի անդամ ըլլալուն՝ Մերակոյտի որոշումով անձեանմ խելիութիւնը չվերացուած դատարան յանձնել կարելի պիտի չըլլար. դատաւարութիւնը օրինական ալ նկատուի, տրուած մահապատիժի որոշումը կայսերական վաւերացման չենթարկուած պէտք չէր գործադրուէր:

2. — Իշխան Ապտիւլ Գատերին թուներէն՝ Իշխան Օմարի մահուան դատապարտուելուն պատճառ ցոյց տրուած է յիշեալին Փրանսական հիւպատոսարանէն ոտձիկ ստանալը:

Ճիշդ է որ իշխան Օմար Փրանսական կառավարութիւնէն ոտձիկ կը ստանար, սակայն այս ոտձիկը իշխան Ապտիւլ Գատերին ձէզաիրի վրայ սենեցած իշխանութեան իրաւունքին փոխ-հատուցում մըն էր, եւ որ Փրանսական կառավարութեան պիւտձէին մէջ որոշ կերպով արձանագրուած էր. եւ այս մինչեւ ընդհ. պատերազմը՝ Իշխան Ապտիւլ Գատերի զուակներուն կը մտարուէր:

Որոշ իրաւունքի համար տրուած եւ անուած ոտձիկի մը համար մարդ մը ի՞նչպէս մահուան կը դատապարտուի:

Այս երկու օրինակները միւս մահապատիժներուն անարդար ըլլալը ցոյց տալու համար կը բաւէ:

Հիմադի իշխան Շէրիֆ Հիւսէյնի ասպտամբութենէն առաջ Սուրիոյ մէջ գործադրուած այս մահապատիժները, Եգիպտոսի յաղթականը բլլալու նպատակը սնուցանող ծովային նախարար եւ քրդ բանակի հրամանատար ձէմալին ինչպիսի արիւննարբու մէկը բլլալը ցոյց կու տայ:

Այս մահապատիժները Հիմադի ասպտամբութեան մասամբ պատճառ հանդիսացան:

Այն ժամանակ Դամասկոս գտնուող Իշխան Ֆէյսալ (ներկայիս Միջագետքի թագաւոր) մահուան դատապարտուածներէն, ոմանց համար ձէմալին դիմած և Խնդրած է որ մահապատիժը ցմահ տաժանակիր աշխատանքի կամ բանտարկութեան փոխուի, սակայն ձէմալ մերժած և ևնոյնիսկ Իշխան Ֆէյսալին երեսին պոռացած էր. «Եթէ պէտք տեսնուի՝ քեզ ալ կը կախեմ»:

Ասոր վրայ Դամասկոս բնակութիւնը վտանգաւոր տեսնող Իշխան Ֆէյսալ, իր արամադրութեան տակ գըտնուած ուժերով գաղտագողի մեկնած էր Մէքքէ ուր Իշխան Շէրիֆ Հիւսէյնի (նախկին Հիճազի թագաւոր) ապստամբութիւնը ծագած էր:

\* \* \*

«Թան» թերթի 18 Ակտ. 1919 թիւին մէջ հրատարակուած հետեւեալ յօդուածը այս Խնդրոյն ծագումը պարզելուն համար նոյնութեամբ կ'արտատպենք.—

«Արաբներ եւ Համաձայնական Տէրութիւնները»

«Այսօր, պատերազմի միջոցին, Հիճազի թագաւոր էմիր Ֆէյսալի և Անգլիական կառավարութեան պաշտօնեաներուն միջեւ կատարուած բանակցութեանց մասին կարգ մը տեղեկութիւններ տալու ի վիճակի ենք:

«Անգլիական կառավարութեան եւ ներկայիս Հիճազի թագաւոր Մէքքէի Շէրիֆ Հիւսէյնի միջեւ Արեւելքի բաժանման ձեւի մասին ընդունուած պայմանները 2 Յուլիս 1915էն մինչեւ 1916 Յունուար, փոխանակուած ութը նամակներով կը պարզուի.

Ա.— 1915 Յուլիսին Մէքքէի Շէրիֆը Անգլիական կառավարութեան գինուորական աջակցութիւն կը խոստանայ, եւ ասոր փոխարէն հիւսիսային Արաբիոյ մէջ Մերսին եւ Ատանան ալ մէջը ըլլալով 37րդ լայնութեան տասիճանէն մինչեւ Պարսկաստանի սահմանը երկարող տարածութեան անկախութիւնը կը պահանջէ:

Արեւելեան կողմէն Պարսկաստանի սահմանին երկարութեամբ մինչեւ Պասրայի ծոցը՝ հարսուային կողմէ՝ Ատէնէն զատ Հնդկաց ովկիանոսը և Արեւմտեան կողմէն՝ Կարմիր եւ Միջերկրական ծովերու վրայ մինչեւ Մէրսին սահման կը գծուի:

Բ.— 1915 Օգոստոս 30ին Գահիրէի Բ. Գոմիսէր Սըր Հէնրի Մաք Մահոն սահմաններու ճշգումին ժամանակը դեռ չէ՛ հասած, ըսելով, խուսափողական պատասխան կու տայ:

Գ.— 18 Հոկտ. ին Սըր Հէնրի Մաք Մահոնի կողմէ Արտաքին Նախարարութեան ներկայացուած նամակով կը տեղեկացուի, թէ Շէրիֆ կը պնդէ որ անմիջապէս սահմաններուն ճշդումին բանակցութեանց սկսուի, միւսին ժամանակ Սըր Հէնրի Մաք Մահոն Շէրիֆին Եգիպտոսի ներկայացուցիչէն ստացած հետեւեալ գրութիւնը կը ներկայացնէ :

«Միայն արաբ բնակչութիւն ունեցող Հալէպի, Համալի, Հոմսի եւ Դամասկոսի շրջաններուն Փրանսացիներուն կողմէ գրաւումը, արաբներու ապստամբութեան պատճառ պիտի դառնայ. սակայն այս շրջաններէն դուրս Հիւսիս Արեւմտեան մասին մէջ սահմաններու գծումէն ետք, արաբները Մէքքէի Շէրիֆին առաջարկած սահմանները պիտի ընդունին» :

Դ.— 24 Հոկտ. 1915ին Սըր Հէնրի Մաք Մահոն իր կառավարութեան հրամանով Մէքքէի Շէրիֆին հետեւեալ յուշագիրը տուած էր :

«Մերսինի եւ Իսկէնտէրունի շրջանները, ինչպէս նաև Դամասկոս, Հոմս, Համա եւ Հալէպ քաղաքներուն Արեւմտաքը զանուսդ Սուրիոյ շրջանին արաբները մեծամասնութիւն չկազմեցուն, այս շրջանները քննուելու վրայ եղող սահմանագծումէն զտու, եթէ մեր եւ արաբ ղեկավարներու միջեւ դոյսացած համաձայնութիւնը նկատի չառնուի, սահմաններուն ձևի շուրջ կը համաձայնինք : Մեծն Բրիտանիա, Փրանսական շահերը շիտանդելու պայմանաւ, ինծի թոյլ կու տայ հետեւեալ ապահովութիւնը ստու Ձեզի :

«Մեծն Բրիտանիա վերեւ յիշուած սահմանագծումով Մէքքէի Շէրիֆին կողմը ցոյց արուած շրջաններուն մէջ, արաբներուն անկախութիւնը եւ սահմանները ճանշնայով՝ անսնց օգնելու պատրաստ է» :

Ե.— Շէրիֆ 5 Նոյմ. 1915 թուակիր պատասխանով կը գրէ, թէ Մերսինի եւ Ատանայի յիշուած շրջաններէն դուրս ձգուելուն կը հաւանի, եւ սակայն միւս շրջաններուն եւ մասնաորակէս Պէյրութի անկախութեան վրայ կը պնդէ :

Զ.— 13 Դեկտ. ին Սըր Մաք Մահոն կը գրէր, թէ Շէրիֆին Ատանայի եւ Մերսինի շրջանէն հրաժարած ըլլալը տեղեկացած է :

Է.— 1 Յունուար 1916ին Շէրիֆ կը տեղեկացնէ, թէ Փրանս-Անգլիական յարաբերութիւնները շիտանդելու համար, պատերազմի տեսուցութեան ընթացքին Լիբանանի

վրայ ունեցած իրաւունքէն կը հրաժարի եւ սակայն պատերազմէն վերջ դարձեալ նոյն իրաւունքը պիտի պահանջէ:

Ը.— 30 Յունուար 1916ին Սըր Հէնրի Մաք Մահոն կը գրէ, թէ Շէրիֆին հետ Փրանս-անգլիական համաձայնութիւնը պատերազմէն ետքն ալ ի զօրու պիտի դառնայ:

Այս ժամանակէն սկսեալ Շէրիֆի եւ Մեծն Բրիտանիոյ միջեւ հաշտութեան պայմաններուն մասին թղթակցութիւն, բանակցութիւն եւ գաղափարի փոխանակութիւն կ'ընդհատուին:

Այս թղթակցութենէն կը հասկցուի, որ Մեծն Բրիտանիոյ եւ Շէրիֆի միջեւ անջատ համաձայնութեան մասին 25 Հոկտ. 1915 թուակիր նամակով՝ անգլիական կառավարութիւնը չէր ուզեր 1916 Մայիս թուակիր Փրանս-անգլիական համաձայնութեան հակառակ յանձնառութեան ենթարկուիլ. երկրորդ՝ 1916ի համաձայնութիւնը սլատրաստելու համար Պր. Ճորճ Բիքոյի եւ Լոնտոնի միջեւ եղած բանակցութենէն ետք, Մեծն Բրիտանիա Շէրիֆին պէ՛մ ուէ՛ նոր յանձնառութիւն չէր ընդունած: Կողմերուն երկայացուցիչներուն առաջին բանակցութիւնը իրականին մէջ 23 Նոյմ. 1915ին կատարուած էր:

1916 Յունուարին փոխանակուած վերջին 24 Հոկտ. թուակիր նամակով թագաւոր Հիւսէյնի հանդէպ յանձնառնուած խոստումներուն վրայ՝ ուէ՛ նոր բան չ'աւելցնէր:

\* \* \*

Ճէմալ փաշային այս շարժման մասին տուած բացատրութիւնն ալ պատմական փաստ մը ըլլալուն՝ մասամբ արտատպել հարկ կը տեսնենք.

Ճէմալ փաշա իր յուշերուն մէջ կ'ըսէ.—

«Շէրիֆ Հիւսէյն առաջին անգամ ըլլալով իր դիմակը վար առած էր: Պոլսէն վերադարձիս էնվէր փաշա Շէրիֆ Հիւսէյնի ծածկագիրը մէկ հեռագիրը ինձի դրկած էր: Այս հեռագրով Շէրիֆ Հիւսէյն կարգ մը աւելորդ ծանօթութիւններէ ետք կ'ըսէր.—

«Եթէ կ'ուզէք որ ես հոս հանգիստ նստիմ, թէպուքէն մինչեւ Մէքքէ երկարող Հիճազի գծին վրայ իմ անկախութիւնս ընդունեցէք, եւ իշխանութիւնը մեծ որդւոյս մնալու խոստումով, ցմահ ինձի յանձնեցէք: Բաց աստի, դատավարութեան տակ առնուած կարգ մը արաբ երեւելիներուն յանցանքները ներելով՝ Սուրիա-Իրագն ալ մէջը ըլլալով, ընդհանուր ներում յայտարարեցէք:

«Այս հեռագիրը անանկ ոճով մը գրուած էր, որ էն—

վէր փաշա զայն ինծի փոխանցելու ժամանակ ըսած էր որ, բան մը չէր հասկցած թէ խելագարի գործ է այդ:

«Այս միջոցին Շէրիֆ Ֆէյսալ իր հօրմէն ստացած հըրամանին համաձայն՝ Պատերազմական Ատեանին յանձնուած ամբաստանեալներուն համար ներում կը հայցէր:

«Ինչվէր փաշային զրկած հեռագիրը ստանալուս՝ Շէրիֆ Ֆէյսալը կանչել տուի. մեր խօսակցութեան իբր վը՛կայ սպայակոյտի պետը Ալի Ֆուատ պէյն (Ալի Ֆուատ փաշա) ալ ներկայ գտնուեցաւ, կարգ մը խօսքերէ ետք, Շէրիֆ Ֆէյսալին ըսի:

«Ինչվէր փաշայի հետ Մէտինէյէն վերադարձէն ետք, Մէտինէ եկող եղբայրը Ալի պէյ Հիճազի նախկին իշխան՝ Մէտինէյի կառավարչին գործերուն միջամտել սկսած էր, սակայն ես ատիկա Ալի պէյի երիտասարդութեան եւ անփորձութեան վերագրելով, կառավարչին միջոցաւ ազդարարած էի, որ նման քայլերէ զգուշանայ: Այս մասին հօրդ գրած էի: Ասկէ առաջ Ձեզի հետ ունեցած խօսակցութիւններուս միջոցին կրկնեցի, որ կայսերական հրովարտակներով Ձեզի պատկանող իշխանութեան իրաւունքներուն պաշտպանութեան համար աշխատիք (եւ եթէ յափշտակուած իրաւունք մը գոյութիւն ունի), իրական տիրոջ յանձնուելու համար, ես պայքարելէ ետ պիտի չկենամ: Ասիկա քանիցս հօրդ գրեցի եւ շնորհակալութեան հեռագիրներ ստացայ: Դուք ալ խոստովանած էք, որ ձեր ընտանիքէն կարգ մը անձեր հօրդ հակառակորդն են: Ասոնք Պոլիս գրտնուելնուն՝ ամէն օր ձեր հօր մասին աննպաստ տեղեկութիւններ տալէ եւ կեղբ. կառավարութեան կասկած ներշնչելէ ետ չեն կենար: Ուրեմն Ձեզի համար ամենախոհեմ միջոցը, ձեր այս հակառակորդներուն ըսածը փաստելու ծառայող գործերէ եւ խօսքերէ բացարձակապէս զուշանալն է, մանաւանդ որ, եթէ այս հեռագիրը կարդաք, պիտի տեսնէք, որ ձեր հայրը ի՞նչ սխալ քայլ կ'առնէ, եւ իր քաղաքական հակառակորդներուն իր վրայ յարձակելու ի՞նչ լաւ առիթ կու տայ:

«Մեծ շփոթութեամբ հեռագիրը կարդացող Շէրիֆ Ֆէյսալ վերջապէս ըսաւ.

«Ո՛հ, տէր իմ, չէ՛ք գիտեր, թէ որչափ մեծ վիշտ կը զգամ. իրապէս այս հեռագիրը մեծ սխալ է: Ձեզ կը վստահեցնեմ, որ ասոնք յոռի նպատակներով չեն գրուած. գիտէք որ հայրս լաւ թրքերէն չի գիտեր. կը կարծեմ որ հօրս տուած արարերէն բնագիրը թրքերէնի քարտուղարը լաւ չհասկնալուն անանկ գրած է. ապա թէ ոչ հայրս յետին նպատակներ չի սնուցաներ:

«Շէրիֆ Ֆէյսալին շիոթուիւնը հետզհետէ կ'աւելուար. կը խոստանար հօրը դրել որ անանկ ձեռնարկներէ զգուշանար եւ կարգ մը հաւաստիքներ կու տար: Շէրիֆ Ֆէյսալի հետ մեր խօսակցութենէն անմիջապէս յետոյ՝ Շէրիֆ Հիւսէյնին ծածկագիրը հեռագիր տուի եւ ըսի:

«Էնվէր փաշայի ուղղուած հեռագիրը կարդացի, իշխանութեան ժառանգականութեան ձեւով Ձեզի տրուելը կ'ուզէք, եւ քանի մը կրօնի եւ հայրենիքի դաւաճաններուն ներում շնորհուիլը կը փափաքիք. վերջին փափաքնիդ հանրային ապահովութեան հետ կապ ունենալուն չկրնար ընդունուիլ. դաւաճաններուն ներում շնորհող կառավարութեան մը հանրային կարծիքին կողմէ տկարութիւն կը վերադրուի, եւ շատերուն դաւաճանութեան եւ հայրենիքին վնասուելուն պատճառ կը դառնայ: Ասոնց ամբաստանագիրը եթէ տեսնէք, դուք ալ ասոնց դաւաճանութիւնը կը հաստատէք. գալով ժառանգական իշխանութեան խընդրոյն, ներեցէք ինծի հարցնելու, թէ ասոր ի՞նչ հարկ կը տեսնէք, եւ ձեր այս խնդրանքը ներկայացնելու ժամանակը լաւ չէք ընտրած: Երբ մեր բոլոր բարոյական եւ նիւթական ուժերը համաշխարհային պատելագմին յատկացուցած ենք, ընդունեցէ՞ որ Օսմանեան հայրենիքին ամենակարեւոր մէկ շրջանին մէջ իշխանութիւն վայելող անձի մը կողմէ նման առաջարկ մը որչափ անախորժ ազդեցութիւն պիտի ձգէ: Իմ կարծիքովս եթէ նման առաջարկ մը բերել ձեր իրաւունքն իսկ ըլլայ, ասիկա հիմա ընելու չէիք: Այսօր մեր բոլոր ուժերը մէկ կէտի վրայ կեդրոնացուցած ենք, եւ այս՝ վերջնական յաղթանակ ապահովել է: Հիմա Ձեզի հաղորդեմ. եթէ կառավարութիւնը իր ներկայ տազնապալի օրերուն, Ձեր կողմէ նոր տազնապ մը տակնալուն առիթ չտայու համար Ձեր հիմնական առաջարկները ընդունի, ո՞վ կրնայ արգիլել որ այդ կառավարութիւնը երբ ներկայ պատերազմէն յաղթական դուրս գայ, Ձեզի գէժ ամենայն խստութեամբ չվարուի:

«Սուլթան Ապտիւլ Համիտին՝ Ձեզ սարսափեցնող բռնապետութեան գէժ բմբոստացող անձերուն հիմնած ներկայ կառավարութիւնը, ի նպատակաւ իսլամութեան մղած ներկայ պատերազմի միջոցին, վնասելու յանդիմողներուն երբեք պիտի չներէ եւ դեռ, այս սրբազան նպատակին հասնելու համար, սուանց ակնկալութեան իրեն աջակցողներն ալ կայսերական զնահատանքի պիտի արժանացնէ»:

Ճէմալ փաշա նոյնպէս կ'ըսէ. —

«Այս թղթակցութեանց միջոցին, Ալէյի Պատերազմը



մահան Աստանը իր մօտիկ սուսած եւ հետեւեալ օր Գամաակոսի եւ Պէլրութի մէջ մահապատիժները գործադրուած էին»:

«Այս դէպքէն մօտ ամիս մը ետք, Շէրիֆ շիւնիին ուղղած հետադրին պատասխանը եկաւ . Շէրիֆին այս պատասխանը ցոյց կու տար, թէ իմ սուսած հետապիրս անհաճոյ ապաստութիւն մը գործած էր վրան: Շեշաւէլէ ետք, թէ բնականօրէն ներուժը ներքին ապահովութեան մեծապէս կրքնայ օգտակար բլլալ, Մէտինէյի կոտորածը ժամին բողոքներ կը ներկայացնէր եւ կը յայտարարէր, թէ Օսմանեան վեհապետներուն իրեն շնորհած իրաւունքներուն ստնակոխ բլլալուն երբեք պիտի չհանդուրժէ:

«Այդ միջոցին Մէտինէ զանաւոր Ալի պէյին կառավարիչ Պատրի փաշայի գէմ գործած յարձակումները իրապէս անհանդուրժելի կը գտնուային, հետեւաբար Շէրիֆ Ֆէյսայը հրապարակուեցաւ եւ հօրը զրկած հետապիրս ցոյց տալով խիստ կերպով յայտարարեցի, թէ եղբօրը յարձակումները կրկնուելու պարագային, զինուորական ուժով պիտի արգիլեմ. ըսի նաեւ .

«— Պր. Ֆէյսալ, թէ ձեր հօր վերջին ժամանակներուն գործած ոճէն, ձեր եղբօր՝ Ալի պէյին Մէտինէյի մէջ բռնած ընթացքէն բան մը չեմ հասկնար: Երբ Ձեզի հասաս, մեր յարարերութիւնները շատ անկեղծ են եւ բարեկամական, Ալի պէյին Մէտինէյի մէջ տնկած գործունէութիւնը ի՞նչ բանի կարելի է վերապրել: Մէկ կողմէն Սուէզի յարձակումին համար 1500 հոգինոց կամաւորական խումբի պատրաստութեամբ կը դրապիք, կառավարութիւնը Ձեզի այսչափ դրամ կու տայ, կամասորներուն զէնքերը Մէտինէ կը զրկէ, միւս կողմէ՝ ձեր հայրը բաժանման նրպատակ հետապնդող տոաջարկ կը ներկայացնէ: Իսկ ձեր եղբայրը՝ Ալի պէյն ալ, ձեր հօր խօսքերուն յարմարող գործունէութիւն ցոյց կու տայ: Ես պարզօրէն կ'ըսեմ. եթէ բարեկամներ ենք, անոր համեմատ փարուինք՝ եթէ տարրեր նպատակ ունիք՝ զէնքերնիդ ձեռքերնիդ ասէք եւ անմիջապէս ապստամբեցէք. գոնէ այդ պարագային ներկայ զաւեշտին պէտք չի մնար եւ երկու հակառակորդներու նման գէմ դիմաց կ'ըլլենք, հետեւա՞նք... Աստուած ինչպէս կամի այնպէս կ'ըլլայ: Եթէ ձեր նպատակը խառնակութիւն հանել չէ՛, գրեցէք ձեր եղբօրը Ալի պէյին, որ հոս գայ եւ զիս այցելէ եւ կառավարիչին գէմ գործելի գաղբի:

«Այս խօսքերս Շէրիֆ Ֆէյսալի գէմքին վրայ կաթիլ

մը արիւն չձգեցին. ոտքի ելլելով և և աջ ձեռքը կուրծքին տանելով, դողացող ձայնով մը ըսաւ.

«Խնդրեմ, ով փաշա, այս բաները ի՞նչպէս կրնաք մեզի վերագրել: Մենք իսլամներու Խալիֆային ամենահաւատարիմ ծառաներն ենք: Մարգարէի ցեղին պատկանող գերդաստան մը ի՞նչպէս կրնայ դաւաճանել: Աստուծոյ սիրոյն, ձեր կարծիքը փոխեցէք. ո՛չ ես, ո՛չ հայրս և ո՛չ ալ եղբայրներս այս կառավարութեան եւ ազգին դաւաճաններ ենք: Մենք բոլորս կայսերական գերդաստանին երախտապարտ ծառաներն ենք: Վստահ եղէք որ եղբօրս եւ կառավարիչ Պասրի փաշային միջեւ եղած տարակարծութիւնը պիտի լուծեմ եւ եղբայրս հոս բերելով ձեռքերնիդ համբուրել պիտի տամ:

«Մեր այս խօսակցութեան՝ բանակին սպայակոյտի պետ Ալի Ֆուատ պէյն ալ ներկայ էր: Շէրիֆ Ֆէյսալ ինձմէ բաժնուելէ ետք, սպայակոյտի պետին սենեակը երթալով Շէյխ Ահմէտ Շաքէյրին եւ Ալի Ֆուատ պէյին հասկըցուցած է շատ խիստ վարուած ըլլալս. եւ վախ յայտնած է, որ եղբայրը ձերբակալելով Դամասկոս բերեմ եւ կախաղան բարձրացնեմ: Այս պարագան Շէյխ Ահմէտ ինձի յետոյ յայտնեց»:

Ճէմալ փաշա այս միջադէպին նկարագրութիւնը հետեւեալ ձևով կը վերջացնէ.—

«Այս դէպքերը 1916ի Մայիսի սկիզբին տեղի կ'ունենային, մինչդեռ Շէրիֆ Հիւսէյն աւելի կանուխ՝ 1916 Յունուար 1ին անգլիացիներու հետ համաձայնած և և ապրատամբութեան դրօշը պարզելուն համար յարմար առիթին կը սպասէր: Եթէ երբեք ես այն ժամանակ տեղեկանայի, Դամասկոս գտնուող Շէրիֆ Ֆէյսալն ալ, Մէտինէ գրտնուող Շէրիֆ Ալին ալ ձերբակալել կու տայի եւ նոյնիսկ անմիջապէս Մէքքէ թրքական զօրախումբ մը ղրկելով Շէրիֆ Հիւսէյնը եւ միւս զաւակն ալ ձեռք անցնելով այս խառնակութիւնը իր սազմին մէջ կը խեղդէի. ինչ ընեմ որ այս ս...ներուն ոճիրը հաստատող ոեւէ շօշափելի փաստ չունէի»:

\* \* \*

Հիճազի ապստամբութեան շարժառիթներու մասին ստացուած հետեւեալ մասնաւոր տեղեկութիւններն ալ կարելոր ըլլալուն՝ կ'ամփոփենք:

Աւստրո-Հունգարիոյ զահաժառանգին սպանութեամբ սկսած համաշխարհային պատերազմին վրայ՝ Օսմանեան

կառավարութիւնը ընդհ. զօրակոչ յայտարարած եւ տակաւին պատերազմին չէր մասնակցած:

Այս միջոցին Մէքքէի իշխան Շէրիֆ Հիւսէյնէն վարչապետ Սաիտ Հալիմ փաշային ուղղուած նամակ մը պատերազմի չմասնակցիլ կը յանձնարարէր: Կը խնդրուէր որ, եթէ մասնակցիլ անհրաժեշտութիւն դառնայ՝ Անգլիոյ դաշնակից տէրութիւններու խմբակին դէմ պատերազմելէ զգուշանանք, պատճառաբանելով որ Հիւսէյն փաշայի չորս կողմերէն եկող իսլամ ուխտաւորներու նուէրներով կ'սպրի, եւ թէ Անգլիոյ եւ անոր դաշնակիցներուն դէմ պատերազմի մտնելիք Օսմանեան կառավարութեան բոլոր ծովեզերքները անգլիական մարտանաւերուն կողմէ խիստ պաշարման տակ պիտի առնուին եւ ուխտաւորներուն դուրսէն կենսամթերքի ներածումը պիտի արգիլուի եւ Հիւսէյն փաշայի ժողովուրդը սովամահ պիտի դառնայ:

Ժամանակ մը ետք, երբ Օսմանեան կառավարութեան պատերազմին մասնակցիլը որոշ էր, Շէրիֆ Հիւսէյն նոյնիմաստ նամակ մըն ալ ղրկած էր:

Բնականաբար իթիհատ եւ թէրազգրի պարագլուխները այս օգտակար եւ իրաւացի յանձնարարութիւնները նկատի չառնելով, ինչպէս տեսանք, Գերմանիոյ հաշտոյն պատերազմի մտած էին:

Մէտինէ՝ Հիւսէյն երկաթուղիի գծով կապուած ըլլալուն, սովամահ չըլլալու աստիճան պարէն եւ զլտելիք կրնար առնել, սակայն Մէքքէ, Թաիֆ եւ Ճէտտէ այս բոլորէն զրկուած էին:

Մէկ կողմէ անօթութիւնը, միւս կողմէ զինուորական իշխանութեան ամենուրեք գործի դրած ճնշումները, ծայրայեղութիւնները, Հիւսէյն փաշայի ժողովուրդին համբերութիւնը սպառած էր:

Այս միջոցին Անգլիա՝ Մէքքէի իշխան Շէրիֆ Հիւսէյնի հետ բանակցութեան սկսած էր եւ Հիւսէյն փաշային անկախութիւնը (Սուրիան դուրս մնալու պայմանաւ) ամբողջ Արաբական Թերակղզիին մէջ արաբական միութեան հաստատումը անգլիական կառավարութեան կողմէ ընդունուած ըլլալը յայտնած էր:

Մէկ կողմէ ժողովուրդին անօթութեան հետեւանքով Օսմանեան կառավարութեան հանդէպ աննպաստ վերաբերումը, միւս կողմէ արաբական միութեան համար Անգլիոյ տուած խոստումները, Մէքքէի իշխան Շէրիֆ Հիւսէյնը եւ զաւակները Օսմանեան կառավարութեան դէմ ապստամբելու մղած էին:

Այս ապստամբութեան վրայ Ղալիսի փաշայի հրամանատարութեամբ Մէքքէ գտնուող զինուորական ուժերուն և Շէրիֆ Հիւսէյնի ապստամբներուն միջև ծաղած տրիսնոս ընդհարումը, սրբատեղիին սմրակոծումը և սնոր մէջ կատարուած սպաննութիւնները, իսլամական պատմութեան հաշուոյն իրապէս արստ մըն է :

Ղալիսի փաշայի պարտութենէն և զերութենէն ետք, իշխան Շէրիֆ Հիւսէյնի կողմէ թուրք զերիններուն հանդէպ յոյց արուած անդթութիւնը՝ այս շարժման երես շիկնեցնող մէկ էջն է :

Պատերազմը աւելի սուստկացած էր. զերման ընդժովեաններուն, միջազգային օրէնքներու հակառակ մասնաւորապէս չէղոք աչրութիւններուն նաւերուն վրայ յարձակելով ընկղմելուն վրայ, Ամերիկան ստիպուած էր Եւրոպական դործերուն միջամտել :

Ամերիկան նախ իաղադասիրական եւ մարդասիրական յորդորներով միջամուխ եղած, սակայն ատկէ օգուտ չտեսնելուն՝ խիստ յուշադրեր տալ սկսած էր : Գերմանները Ամերիկայի յորդորներուն և խիստ ծանուցադրերուն կարեւորութիւն չտալով՝ շարունակած էին չէղոք աչրութիւններուն նաւերը ընկղմել :

Միջազգային օրէնքներու հակառակ և ներկայ քաղաքակրթութեան «վայրենութիւն» որակած այս յարձակումներուն զերմաններուն կողմէն շարունակուելը, Ամերիկայի հանրային կարծիքը իրենց դէմ լարած էր :

Գերմանները՝ համաշխարհային և մասնաւորապէս ամերիկեան հանրային կարծիքին իրենց դէմ դիրքորոշուելէն չզգաստանալով, յաղթական դուրս գալու համար այս վերջին գէնքը գործածելու մէջ ծայրայեղութեան դիմեցին :

Եւրոպայի և Ամերիկայի հանրային կարծիքին խիստ աննպաստ եղած շրջանին «Լոզիթանիա» ճամբորդատար նաւը՝ 1260 ճամբորդներով զերման ընդժովեաններու կողմէ ընկղմուած էր :

Ընկղմողներու մէջ 107 ամերիկացի և նշանաւոր դրամատէր Վանտէրպելտ ալ կը գտնուէր :

Այս դէպքը՝ արդէն աննպաստ եղող ամերիկեան հանրային կարծիքը աւելի գրգռած եւ պատերազմ բառը ամէն բերնէ լսուել սկսած էր. իսկ Համաձայնական մամուլն ալ ասոր աւելի ուժ կու տար :

Մ. Ն. ի հանրապետութեան Նախագահ, համբուռուոր Ուելսըն, մէկ կողմէ մտքերը հարգարտեցնելու, միւս կողմէ նոր ծանուցադրեր տալով իսպաղութեան հրեշտակը

դառնալու եւ ինքզինքը հանրային կարծիքի առջեւ բարձրացնելու կ'աշխատէր:

Գերմանները Ուիլսընին այս վերջին ծանուցագրէն օգտուիլ չգիտցան եւ խուսափողական պատասխաններով արդէն զրգոտած ամերիկացիները այն համոզումի բերին, որ գերմաններուն խօսք հասկցնել կարելի չէ. եւ անոնք այսպիսով իրենց դիւանագիտական անճարակութիւնը ցոյց տուին:

Իսկ Համաձայնականները ասոր բոլորովին հակառակը շարժելով, իրենց դիւանագիտական ճկունութեան շընորհիւ, իրենց գործունէութեան մարդկային ըլլալը գնահատել տալու մէջ յաջողեցան եւ ամերիկացիները կրցան համոզել, որ Գերմանիոյ միակ նպատակը աշխարհակայութիւն է: Անոնք Միացեալ Նահանգները համաձայնականներու միացուցին եւ 6 Ապրիլ 1917ին Գերմանիոյ եւ յաջորդօրը Աւստրիո-Հունգարիոյ դէմ պատերազմ յայտարարել տուին:

\* \* \*

Ամերիկայի Համաձայնականներու հետ պատերազմի մտնելուն մասին Անտիօք հրատարակուող «Անթաքիա» թերթին 108 թիւին մէջ ցոյց տրուած պատճառը նկատելի պարագայ մը ըլլալուն կ'ամփոփենք. «Անթաքիա» թերթը կը գրէ. —

«Ընդհ. պատերազմի ընթացքին Համաձայնական տէրութիւններուն թեթեւ ճարտարարուեստը կասած ժամանակ, ամերիկեան գործարանները անդադար կ'արտադրէին եւ ոչ միայն Եւրոպայի յաճախորդներուն այլ եւ բուն Եւրոպայի համար ալ կարեւոր արտածումներ կ'ընէին, հետեւաբար Համաձայնական երկիրները Ամերիկայի համար շահաւոր դնորդ մը կը նկատուէին. պատերազմին երկարելը Ամերիկայի համար շահաւոր առեւտուրի մը շարունակութիւնը ըսել էր. իսկ Գերմաններու յաղթանակը այս շահը պիտի վտանգէր եւ թէ յառաջիկային ալ հսկայ մրցորդ մը պիտի դառնար: Հետեւաբար, Ամերիկացիները լաւ ըմբռնած էին որ այս պողպատեայ ուժը անշարժութեան մատնել հարկաւոր էր:

Ըստ մեզի, Ամերիկան պատերազմի մղողը՝ մարդկային ըլլալէ աւելի՝ վերոյիշեալ տնտեսական պատճառները ունէր իր ետին:

\* \* \*

Ամերիկայի Համաձայնականներու կողքին պատե-

րազմի մասնակցութիւնը կացութիւնը փոխած եւ Գերմանիան եւ իր զինակիցները շփոթութեան մատնած էր:

Ճիշդ այս միջոցին, Ռուսիոյ ներքին կացութիւնը խառնակուած, ցարական Ռուսիան Մէնչէվիկներու կողմէն տապալուած եւ Ռումանոֆներու գերդաստանը ցար Նիկոլայի հետ Սիպերիա աքսորուած, սուս կառավարութիւնը Քէրէնսքիի կուսակցութեան ձեռքն անցած էր:

Ամերիկայի պատերազմի մուտքով յուսահատութեան մատնուած Երեսկ Զինակցութիւնը, Ռուսիոյ ցարական դահլին տապալումէն եւ ներքին խռովութիւններէն դո՛ւ մնացած եւ կրկին յուսալ սկսած էր:

Ռուս կառավարութիւնը ձեռք առնույ Քէրէնսքի, թէեւ պատերազմի հսկողակ էր, սակայն չէր կրցած ամբիջապէս պատերազմէն քաշուիլ: Ան հաշտութեան կողմնակից ըլլայն ալ չէր ժխտած:

Քէրէնսքի որչափ ալ պատերազմէն քաշուելով երկրին ներքին կացութիւնը եւ արտաքին քաղաքականութիւնը բարելաւելու համար աշխատիլ կ'ուզէր, սակայն անօթի եւ թշուառ ժողովուրդը չէր կրցած կշտացնել եւ դժգոհ զանգուածը դո՛հացնել: Այս խառնակ վիճակէն առաւելագոյն շափով օգտուողը յեղափոխական ղեկավարներուն մեծամասնութիւնը հրեայ եղող Պոլշեիկ կուսակցութիւնը եղած էր: Քսանի մը ամիս շանցած, Քէրէնսքիի կառավարութիւնը տապալելով, համայնավար սկզբունքներու վրայ հիմնուած եւ Լենինի նախապահութեամբ Սովիէթ վարչաձեւը հաստատուած էր:

Սովիէթ կառավարութիւնը, Սիոն Հրէական միութեան կառավարութիւնը ըլլալով(1), սուս կայտերական ընտանիքէն, իշխաններէն վրէժ յուծելու կը միտէր: Պրոլետարիայի վայրագ դործունէութիւնը բուն նշանակութեամբ կացութիւնը տակն ու վրայ ըրած էր: Վաճառատուններ, դրամատուններ, եկեղեցիներ եւ հարուստներ կողոպտուած, ազարակներ թալանի տրուած եւ Սիպերիա աքսորուող ցար Նիկոլայ իր ընտանիքի անդամներով սպաննուած էր:

Պոլշեիկ Ռուսիան ներքին վայրագ քաղաքականութեան մէջ ազատ մնալու համար պատերազմէն քաշուիլ ուղած եւ պատերազմող աէրութիւններուն դիմելով Պրէսթ-Լիթովսկիի հաշտութեան դաշնագիրը ստորագրած էր:

Պրէսթ-Լիթովսկիի դաշնագրով Օսմանեան կառավար-

ընթացին Ռուսիոյ վտանգէն ազատած, աւելին ըլլալով՝ 1878ի Ռուսո-Թուրք պատերազմին կորսնցուցած Կարս եւ Արտասանը ետ առած էր:

Ռուսիոյ այս յանկարծական յեղափոխութենէն, Գերմանիոյ եւ իր զինակիցներէն աւելի Անգլիա եւ Ֆրանսա օգտուած էին: Յարական Ռուսիոյ հանդէպ իրենց ստանձնած աջակցութիւններէն եւ Պոլիսը Ռուսիոյ սալու պարտաւորութենէն եւ խոստումէն ձերբազատուած եւ աւելին՝ կատակերգութեան ձեւով շարունակուող Չանայ Գայէի պատերազմին վերջ տուած էին:

\* \* \*

Ռուսիոյ մէջ ծագած այս մեծ յեղափոխութենէն Թուրքիան իրատուելով եւ կացութիւնը բարձնելով, ըստ այնմ միջոցներ ձեռք առնելու պարտաւորուած ըլլալով հանդերձ, ցաւալի է որ Թուրքիան բան մը չէր տեսներ, կացութեան ստացած ձեւը չէր հրահրար հասկնալ:

Այս միջոցին Սուլթան Մուհամմէտ Բէշատ Ե. իր գերդաստանի տխուր վախճանը եւ թաղաւորութեան քայքայումը առանց տեսնելու՝ հանդերձեալ եղած էր:

Սուլթան Մուհամմէտ Բէշատ ստաքինի եւ հեզահամբոյր էր, իր գահաժառանգ եղած շրջանին, մեկուսացած կեանք մը ապրելուն, կամքի եւ կորովի յատկութիւնները կորսնցուցած էր:

Յ1 Մարտի դէպքին վրայ 14 Ապրիլ 1909ին գահ բարձրացած եւ պետական բոլոր գործերը Իթթիհատ եւ Թէրազը կուսակցութեան ձեռքը ձգած թաղաւորավայել ոչ մէկ գործ կատարած էր: Միայն Իթթիհատի բոլոր փափաքներուն այն ըսած էր:

Անկասկած որ ան՝ կատաւարութեան տխուր վախճանը կը տեսնէր, սակայն Իթթիհատի ծայրահեղութիւններուն արդեւիք հանդիսանալիք ջիլը չունէր: Իր գահակալութեան շրջանին Ափրիկեան Թրիփոլին, Պէնկագին եւ Հիճազը ձեռքէ ելած էր, Պալքանեան պատերազմով ալ ամբողջ Մակեդոնիան եւ Միջերկրականի կղզիները կորսուած էին, եւ աւելին՝ Գերմանիոյ հաշույն ընդհ. պատերազմին մտած էր:

Բոլոր ասոնք, հակառակ իր կամքին, Իթթիհատ եւ Թէրազը կորսնցնելու կատարուած գործեր էին: Նոյնիսկ Մահմուտ Շէվքէթ փաշայի սպաննութեան խնդրով մահապատիժի դատապարտուած Տամատ Սալէհ Խայրէտտին փաշայի վճիռը իրեն ներկայացուած ժամանակ՝ մահապատիժի վճիռը ցկեանս բանտարկութեան փոխել փափա-

քած էր. իր այս փափաքը վարչապետին ալ յայտնած ըլլալով հանդերձ, հետեւեալ առտուն Տամատ Սալէճ փաշան կախաղան հանուած եւ խեղճ վեհապետը նորէն կատարուած իրողութեան առջեւ պնտուած եւ մահապատիժի դործադրութենէն հետք վճիռը հաստատելու ստիպուած էր:

Սուլթան Մուհամմէտ Բէշատ Ե.ի մահէն հետք, գահաժառանգ Մուհամմէտ Վահիտետտին՝ 4 Յուլիս 1918ին Սուլթան Մուհամմէտ Վահիտետտին Խան Զ. անունով գահ բարձրացած է:

Սուլթան Մուհամմէտ Վահիտետտին Խան Զ. լուրջ, կամքի եւ կորովի տէր ըլլալով, աշխարհի քաղաքականութեան ալ տեղեակ էր: Ան Թուրքիոյ տխուր կացութիւնը լաւ կերպով բմբռնած եւ զայն փրկելու ձգտած էր, նոյնիսկ Զուիցերիա դառնուող Պերնի դեսպանին միջոցաւ անպաշտօն կերպով անջատ հաշտութեան բանակցութիւններուն ձեռնարկել տուած էր: Աւա՛ղ, որ դէշ ժամանակ մը գահ բարձրացած էր: Պատերազմէն հետք ընդդիմադիրներու անունով զինք չըջապատողներուն անճարակութիւնները, տէրութիւնը իր գահավիժումէն փրկելու հնարաւորութիւն չէր ձգած:

Պատերազմը բառին բուն նշանակութեամբ սաստկացած եւ Փրանսական լանակը յայթականօրէն Գերմանիոյ հողը մտնել սկսած էր:

Պուլկար բանակը քայքայուելով՝ Ռատոսլաւոֆի դահլիճը ինկած եւ Պուլկարիա պատերազմական դժէն դուրս ձգուած էր: Այս դէպքը Թուրքիոյ եւ իր զինակիցներուն՝ Գերմանիոյ եւ Աւստրիոյ հաղորդակցութեան ճամբան կտրած եւ Պոլիս՝ Մակեդոնիոյ կողմէ սպառնալիքի տակ ինկած էր: Սուրիոյ ռազմաճակատին վրայ գրտնուած Թուրք բանակը ցրուած, կացութիւնը շատ ցաւալի վիճակ մը կը պարզէր:

Իթթիհատ եւ Թէրազզրի իշխանութեան Թալաաթ փաշայի դահլիճը, այս կացութեան հանդէպ շուարած դինադադար խնդրելու ձեռնարկած էր, միայն թէ պատերազմող եւ յաղթուող նոյն կառավարութեան հաշտութիւն կնքելը հնարաւոր չըլլալուն՝ Թալաաթ փաշա հրաժարելու ստիպուած էր:

Սուլթան Մուհամմէտ Վահիտետտին Խան Զ. նոր դահլիճի կազմութիւնը նախկին վարչապետ եւ Լոնտոնի դեսպան ծերակուտական Թէվֆիզ փաշային յանձնած էր:

Թէվֆիզ փաշա մէջտեղ ընդդիմադրութիւն չի գրտնելուն՝ իր պաշտօնակիցները չէզոք եւ պատերազմի հակա-



ուակորդ ճանչցուած անձնաւորութիւններէ ընտրել ուզած էր: Զ-Կ օր յետոյ արդիւնքի չյանգելով հրաժարած էր:

Վերջապէս դահլիճը կազմելու պաշտօնը ծերակուտական եւ նախկին պատերազմական նախարար Ահմէտ Իզզէթ փաշային տրուած էր:

Ահմէտ Իզզէթ փաշա՝ Իթթիհատ եւ Թէրազզըի ծախնդակութեամբ անմիջապէս դահլիճը կազմած, Բ. Դուռ գալով վաւերացման հրովարտակը կարդացնել յաջողած էր:

Ահմէտ Իզզէթ փաշայի կազմած այս դահլիճը ժամանակի պահանջին համեմատ չէր: Ելեւմտական Նախարարութեան՝ Ճաւիտ, Արդարութեան՝ Էրկիւպէի Սայրի, Ներքին՝ Տէթհի, Ծովային՝ Բէուֆ, Իթթիհատ եւ Թէրազզըի այս շատ ծանօթ դէմքերը առնուած էին:

Ամօթալի նահանջէ եւ պարտութենէ ետք այս բարձր դիրքերը գրաւող Իթթիհատ եւ Թէրազզըն, ինքզինքը պատասխանատուութենէ ազատելու դերը խաղալու եւ յարմար ժամանակին կրկին պետական հարուածով մը անկախ գործի գլուխ անցնելու միջոցները ստեղծելու մասին կը խորհէր:

Իթթիհատ եւ Թէրազզըի նեխած եւ պատմութեան մէջ պատասխանատու նկատուած ազտոտ անունը փոխելով արժանապատուութիւննին նորոգելով մաքրել կ'ուզէին:

Անմիջապէս ընդհ. ժողով մը գումարելով, Իթթիհատ եւ Թէրազզը կուսակցութեան լուծուած ըլլալը եւ անոր տեղ բարենորոգչական կուսակցութեան հիմնուիլը եւ Իթթիհատ եւ Թէրազզըին պատկանող կալուած, գոյք եւ ինչքերուն այս ապօրէն զաւկին փոխանցուած ըլլալը յայտարարելով՝ Ընդհ. կեդրոնին անդամներն ալ փոխած էին:

Իթթիհատ եւ Թէրազզըին այս կատակերգութիւնը խաղցած պահուն, պատասխանատու անձնաւորութիւններն ալ փախուստի կը պատրաստուէին:

\* \* \*

Ահմէտ Իզզէթ փաշան ալ գործի գլուխ անձնելուն զինուորադար խնդրած էր: Տէրութիւնները ի պատասխան այս խնդրանքին տեղեկացուցած էին, որ Մուտրոս գտնուող Համաձայնական ծովային ուժերու հրամանատար ծովակալ Կալթրոփին պէտք էր դիմել:

Պուլիս գերի գտնուող Զօրավար Թաուզէնտի ընկերակցութեամբ, Ծովային նախարար Բէուֆ պէյ, Մուտրոս գտնուող՝ Ծովակալ Կալթրոփին քով ղրկուած էր:

Մովակալ Կալթրոփ նախապէս պատրաստուած զինադադարի պայմանագիրը Բէռլին պէյիին ցոյց տուած եւ ընդունելու կամ մերժելու մէջ ազատ ըլլալը եւ այս մասին ոեւէ բանակցութիւն կարելի չըլլալը յայտնած էր:

Բէռլին պէյ զինադադարին թարգմանուած մէկ օրինակը առնելով Պոլիս վերադարձած եւ ինդիրը Նախարարաց Խորհուրդին տեղեկացուցած էր:

Սոյն զինադադարի պայմաններէն մին թուրքիոյ մէջ դտնուող գերման զինուորներուն եւ Իթթիհատ եւ Թէրագզըին պատերազմի պատասխանատուներուն յանձնումը կը պահանջէր:

Նախարարաց Խորհուրդը զինադադարին այս պայմանները շատ ծանր գտած եւ ծրագրած էր որ Սուրիոյ ճակատին վրայ յարմար գիծ մը քաշուի եւ բանակը պաշտպանողական դիրք մը բռնէ եւ պաշտպանողականի շնորհիւ առաջարկուած զինադադարի պայմանները թեթեւցնէ: Ուստի այս նպատակով անմիջապէս Հալէպ գտնուող արագահաս բանակներու հրամանատար գնդապետ Մուսթաֆա Քէմալ(1) փաշային կարծիքը հարցուցած էր, թէ այս ծրագիրը կարելի<sup>6</sup> էր թէ ոչ:

Մուսթաֆա Քէմալ փաշա Հալէպէն կը գրէ թէ, թէեւ Ամանոսի լեռներուն մէջ պաշտպանուիչ կարելի է, սակայն համախմբուելիք բանակ չէ մնացած, թէ կարգապահութենէ զուրկ զինուորը խառն ի խուռն ամէն մէկը տեղ մը կ'երթայ եւ թէ անգլիական բանակին յառաջապահը եղող արաբ ուժերը քաղաք մտած են, եւ ինքն ալ Գաթմա Գուրթ Գուլաթ Բաճոյի գծով մեկնելու պատրաստուած է եւ Ահմէտ Իզզէթ փաշայէն կը ինդրէր որ փոխանորդաբար կառավարուող Պատերազմական Նախարարութիւնը իրեն յանձնուի:

Պետութեան կացութիւնը իրապէս խիստ տագնապալի էր. վստահելիք միակ ուժը «Արագահաս բանակն» էր որ այս ձեւով ցրուած էր: Առաջարկուած զինադադարի պայմանները ընդունելէ ուրիշ միջոց չէր մնացած կառավարութեան:

Տակաւին մինչեւ երկկ կողք կողքի պատերազմող գերմանները յանձնել, թրքութեան համար մեծ արատ մը ըլլալուն, այս կէտին զինադադարի պայմաններէն ջնջուի-

(1) Թուրքիոյ հանրապետութեան նախագահ, յետագային «Աթաթիւրէ» յորջորջուած

լը յաջողցնելու համար՝ Զօրավար Թաուզէնտին հետ Բէուֆ պէյը նոյն իրիկուն կրկին Մուտրոս ղրկուած էր:

30 Հոկտ. 1918ին Զինադադարը Մուտրոս գտնուող անգլիական «Ակամեմնոն» զրահաւորին վրայ ստորագրութեւնով՝ Օսմանեան կառավարութիւնը այս կերպով պատերազմէն պարտուած դուրս եկած էր:

1918 Նոյեմ. 11 ժամը ճիշդ 11ին Սարի մէջ ալ Մարաշախտ Փոշի մասնաւոր շոգեկառքի սրահին մէջ՝ Փրանս-Քերմանական զինադադարը կնքուեցաւ եւ 4 տարի, 3 ամիս 8 օր շարունակուող ընդհ. պատերազմին վերջ տրուեցաւ:

Մեր յարգելի ընկերոջ՝ Բէֆիգ Խալիտ պէյին այս մասին ունեցած խորհրդածութիւնն ալ ամփոփելով այս գլուխը փակել հարկ կը տեսնենք:

Բէֆիգ Խալիտ պէյ կ'ըսէ.—

«Յաղթական կամ յաղթուած միլիոնաւոր ժողովուրդ, Զօրավար Փոշին ստորագրութեան թուղթի կտորի մը վրայ գրուելուն պէս, լայն շունչ մը առաւ: Փոշ անունը խաղաղութեան հրեշտակին թեւով անուշ շուք մը տարածեց:

«Այդ օրը յառաջացող բանակը կեցաւ, որոտացող թնդանօթները լուցին, լեռներու վրայէն վառօդի ծուխերը ցնդեցան, հոսող արիւնը կեցաւ, հառաչանքները դադրեցան, այլեւս երիտասարդ կուրծքերու վրայ վէրքեր պիտի չբացուէին, երիտասարդ գլուխներու վրայ հոգէառ հրեշտակը պիտի չսաւառնէր, որովհետեւ զինադադարը կընքուած էր:

«Այսինքն թնդանօթի բերանները թիմուած՝ այլեւս չէր որոտար, սուլիներու փայլը անհետացած, հեղձուցիչ կագերու ամպը փարատած էր: Գնդակներու տարափը չէր տեղար, պատերազմի երկինքը պայծառացած, խաղաղութեան արեգակը ծագած էր. զինադադար էր:

«Այդ օրը՝ ուզէք զինադադարի ասօն, ուզէք յաղթութեան կամ ուրախութեան, ուզէք սխալութեան ասօն սգատօն կոչեցէք, ըստ իս այդ օրուան արժէքը դէպի մահ սուրացող մարդկութեան՝

«Կեցիր եւ Ապրէ» կոչն էր:

«Մարդ թէ եւ ի վերջոյ մահուան պիտի յանձնուի, պիտի մեռնի, սակայն զինադադարը սպանուին արդելք ելաւ, եւ ապրելու իրաւունք ունեցող երիտասարդները դունդ առ գունդ հոգէառ հրեշտակին գիրկը նետուելէ արգիլեց:

«Այս նշանակութեամբ 11 Նոյեմբերը իրապէս աննրման Տօնի օր մըն է»:

\* \* \*

Գերմանիոյ եւ իր զինակիցներուն դէմ գործնականապէս պատերազմի մասնակցողներն էին՝ Մեծն Բրիտանիա, Ֆրանսա, Իտալիա, Պելճիքա, Ճարոն, Սերպիա, Գարատաղ, Փորթուգալ, Յունաստան, Ռումանիա, Պրագիլիա, Չինաստան, Ռուսիա եւ Միացեալ Նահանգներ:

Գերմանիոյ եւ իր զինակիցներուն հետ յարաբերութիւնը խզելով բաւականացողները եղան՝ Գուպա, Բոլոնիա, Հոնտուրաս, Հայիթի, Սիամ, Գոստարիքա, Բէրու, Ուրուկուէյ եւ Էքուաթօր:

Անգլիոյ եւ Ֆրանսայի գլխաւորութեամբ համաձայնական տէրութեանց հետզհետէ պատերազմի մասնակցած զինուորներուն թիւը՝ պաշտօնական վիճակագրութեան համաձայն 43,500,000 եղած է:

Գերմանիոյ գլխաւորութեամբ զինակիցներու հաւաքած ուժը 20,500,000 զինուոր եղած է, եւ այսպէսով ընդհանուր պատերազմին մասնակցող զինուորներու ընդհանուր թիւը 64 միլիոնի հասած է:

Համաձայնականներու պատերազմական ծախքերը եղած են 889 միլիար, իսկ զինակիցներունը՝ 489 միլիար Օսմանեան ոսկի:

Այս պատերազմին մօտաւորապէս 15 միլիոն երիտասարդ կեանքեր հնձուած եւ անոր կէսին չափ ալ թշուառութենէ եւ անօթութենէ մեռած են. հաշմանդամներն ալ մեծ թիւ մը կը կազմեն:

Ընդհանուր պատերազմին մէջ եղած մարդկային եւ նիւթական կորուստները լաւ կերպով հաշուողներ, առանց առարկութեան կ'ընդունին, որ թէեւ մարդկութիւնը գլխութեան եւ ճարտարարուեստի մէջ խելք թոցնելու ատիճան յառաջացած է, սակայն մարդկութիւնը եւ քաղաքակրթութիւնը բաւերուն նշանակութիւնն անգամ դեռ չէ հասկըցած:

\* \* \*

Իթթիհատ եւ Թէրազզը կուսակցութիւնը 10 տարի շարունակ Օսմանեան կայսրութեան տէրը մնալով՝ շատ մեծ աւերներ գործած է:

Իթթիհատ եւ Թէրազզը կուսակցութիւնը Օսմանեան կայսրութեան տիրացած ժամանակ 1908-ի վիճակագրութեանց համաձայն Օսմանեան տէրութիւնը 30,893,950 անձերու վրայ կ'ըլլէր:

Իթթիհատ-Թէրազզը կուսակցութիւնը, Օսմանեան կայսրութեան աւերակներուն վրայ Անատոլիոյ Անգարա

քաղաքին մէջ իր անդամներէն մէկուն հիմնած եւ ամէն օր գոյն եւ ձեւ փոխող նոր Թուրքիոյ հանրապետութեան միայն 8,500,000 հպատակներ փոխանցած էր:

Իթթիհատ եւ Թէրազզը կուսակցութեան այս ձեւով 10 տարուան ընթացքին կորսնցուցած հպատակներու թիւը 22,5 միլիոն է. իսկ հողային կորուստը հասկցնելու համար՝ կորսուած նահանգներուն անունները թուենք.—

Եւրոպայի մէջ՝ Գոսովա, Մանասթր, Շքոսարա, Եանիա, Սելանիկ նահանգները ամբողջութեամբ էւ Էպիրնէյի նահանգին կարեւոր մէկ մասը:

Ափրիկէի մէջ՝ Ափրիկեան Թրիփոլի, Պէնկաղի, Փեսսան նահանգները:

Արաբիոյ մէջ՝ Եմէն, Ասիր, Հիճազ, Նէճրա նահանգները:

Սուրիոյ մէջ՝ Պէյրութ, Լիբանան, Գամասիոս, Հալպ, Տէրզոր, Պաղեստին, Մասն նահանգները:

Միջագետքի մէջ՝ Պասրա, Պաղտատ, Մուսուլ եւ հարաւային Քիւրտիստանի նահանգները:

Միջերկրականի մէջ՝ Տոտէքանէզի կուսակալութիւնը կազմող կղզիները:

Այս հողամասերը տարածութեան տեսակէտով այսօր ձեռքի մէջ եղող հողերու տարածութեան 5 անգամը ըլլալով՝ նիւթական եւ կրօնական տեսակէտով այ Թուրքիոյ ամենակարեւոր շրջաններն էին:

Հակառակ այսչափ կորուստներու եւ ամէն տեսակ ստորնութիւններու եւ ոճիրներու, Իթթիհատ եւ Թէրազզը կուսակցութիւնը ցարգ պատասխանատուութենէ զերծ մընացած է, թէ եւ քանի մը անդամները հայերու կողմէ սպաննուած եւ ոմանք այ ուրիշ պատճառներով Անգարայի կառավարութեան կողմէ կախաղան հանուած են: Սակայն իրեն ազատա կազմը Անգարայի նոր Թուրքիոյ հանրապետութեան ոչնահարը եղող «Հայք» կուսակցութեան մէջ յուծած են:

\* \* \*

Օսմանեան կայսրութեան տիրանալով այս աստիճան տերներու պատճառ եղող Իթթիհատ եւ Թէրազզը խառնուրդն այ ներկայացնել օգտակար է:

Իթթիհատ եւ Թէրազզըն երկսեռ անդամներէ բաղկացած զարմանալի խառնուրդ մըն էր:

Նախարարներ ու մարաջախաներ, հրամանատարներ ու սպաներ, զխոնականներ ու կրօնականներ, բանաստեղծ—

ներ ու հրապարակագիրներ, քարտուղարներ ու պաշտօնեաներ այս խառնուրդին անդամակցած էին: Նոյնպէս՝ մարդասպաններ ու յեղուզակներ, գողեր ու դրամաշորթներ, կառապաններ ու վարիչներ, նաւավարներ ու մակուկավարներ, բեռնակիրներ, աղբահաւաքներ ու խաղամուկներ այս բարձր դասուեւ կողմէ ընկեր կը նկատուէին:

Իգական դասի կազմակերպութեան մէջ ալ պատկերը նոյնն էր:

Թագուհիներ ու իշխանուհիներ, տիկիներ, գրագիտուհիներ ու բանաստեղծուհիներ, ուսուցչուհիներ ու դաստիարակուհիներ, դայեակներ, սպասուհիներ եւ հանրային կիներ այս խառնուրդին մաս կը կազմէին: Վերջապէս երկսեռ ամէն դասակարգի մարդիկ անդամակցած էին:

Իթթիհատ եւ Թէրագզը կուսակցութիւնը իրականին մէջ Օսմանեան կայսրութիւնը քանդելու նպատակով «Սիոնիստ» հրեաներուն տաղանդէն ծնած էր: Իրենց այս նպատակը 1909ին Սելանիկի մէջ գումարուած համաժողովին մէջ, նախապէս Սելանիկի Կեդրոնը կառավարող անձնաւորութիւններու միջեւ որոշելով՝ գործադրութեան համար երդում տուած էին:

Որոշումները հետեւեալ չորս կէտերու մէջ ամփոփուած են.—

Ա.— Յետ այսու Թուրքիոյ մէջ կրօնքի ազդեցութիւնը բեկանել:

Բ.— Թուրքիոյ հարստութեան աղբիւրները ընկերներու մէջ բաժնել:

Գ.— Մարգարէի փոխանորդութիւնը իշխանութենէն զատելով տկարացնել:

Դ.— Առիթը ներկայանալուն միապետութիւնը տապալել եւ հանրապետութիւն հռչակել:

Իթթիհատ եւ Թէրագզը կուսակցութիւնը որոշուած այս ծրագիրներու իրականացման համար միշտ աւերող, միշտ սարսափազդու փոթորիկ մը եղած էր:

Իթթիհատ եւ Թէրագզըի մասին մինչեւ այս օր շատ բան գրուած եւ խօսուած է, սակայն այս անգամ Հալէպ հրատարակուող «Վահտէթ» (միութիւն) թերթին 8 Յունիս 1928 թուակիր եւ 14րդ թիւին մէջ Բէֆիգ Խալիտ ստորագրութեամբ եւ «Յունիսի Յուշերը» վերնագրով լոյս տեսած յօդուածին չափ ցայտուն գրութիւն մը չէր երեւցած. հետեւաբար Իթթիհատ եւ Թէրագզըն Բէֆիգ Խալիտ պէյի ակնոցով դիտելու համար յօդուածը նոյնութեամբ արտագրելով, սոյն գիրքի Ա. մասը կը վերջացնեմ:

## ՅՈՒԼԻՍԻ ՅՈՒՇԵՐԸ

«Թուրքիայէն բաժնուած տեղերու մէջ Յուլիս անու-  
նը յիշուելուն, առաջին անգամ ի՞նչ կը խորհուի:

### 10 Յուլիս

«20 տարի առաջուան 10 Յուլի՞սը, այդ օրերը նկա-  
րագրելու պէտք չկայ, դրօշակներու առատութիւն մը,  
ծայրայեղ շփացում, թմբկի եւ սրինգի աղմուկին խառ-  
նուող կարգ մը անկցի եւ կեցցեաներու ձայները, տակաւին  
երբ աչքերնիս գոցենք լսել կը կարծենք եւ մեր երեւակա-  
յութեան մէջ կը գտնենք:

«— Կեցցէ՛ Նիազի, կեցցէ՛ Էնվէր. ի վերջոյ Թա-  
ւաթներ, Պէհաէտտին Շաքիրներ, Ճէմալներ... նուի-  
րական Իթթիհատ կուսակցութիւնը, ամէն տեղ պզտիկ  
Նիազի մը, Էնվէր մը, Թալաաթ մը, Նազրմ մը, Ճէմալ  
մը, Պէհաէտտին ձագուկ մը... Իթթիհատի ակումբներ...»

«Աւելի ետք տարիներ անցնելով, այս աղմուկներէն  
ինչ մնաց, այս մարդիկը ի՞նչ եղան, խոր լուծիւն մը,  
ցիր ու ցան քանի մը գերեզմաններ...»:

\* \* \*

«Այս ամէն մէկը մէկ անկիւն անխնամ եւ աննշան գե-  
րեզմաններու մէջ ննջողներ, ժամանակ մը ահագին կայս-  
րութեան մը հողն ու քարը տակն ու վրայ բրած, հունտի  
տեղ թոյն սերմանած, անձրեւի տեղ փորձանքներ տեղա-  
ցուցած՝ հունձքի տեղ չարիք հնձած, կայի տեղ՝ անիրա-  
ւութիւններ դիզած էին. անոնց սնունդը մարդկային մար-  
միներ, լամաճին արիւն-արցունք, շնչածնին վառօդի  
ծուխ, արդարութիւննին՝ կախաղան, եղբայրութիւննին՝  
տարագրութիւն, հաւասարութիւննին՝ սպանութիւն եւ ա-  
ղատութիւննին՝ բանտի խորերն էին: Աւելի քանդեցին քան  
չինեցին. մէկ հոգիի բարիք կ'ընէին՝ 5000 հոգիի սիրտը կը  
խածնէին, մէկ հոգիին կեանքը կը փրկէին՝ 5000 անմեղ-  
ներու արիւնը կը ծծէին, մէկ բարիքի դիմաց հազար չարիք  
կը հասցնէին: Ժամանակ եղաւ որ մեռեալներու ոսկորնե-  
րով սպարանքներ շինեցին: Բարձերնին որբերու մազե-  
րով լեցուցին եւ սենեակնին այրիներու քօղերով զարդա-  
րեցին: Անօթիներու ճիշդ անոնց երաժշտութեան ձայն  
կու գար: Որբերուն արցունքները գաւաթներու մէջ լե-

ցուցին եւ նահատակներու վերջին շունչը համադամի տեղ գործածեցին, հայրենիքին կեանքը խաղի սեղանին վրայ վաճառեցին, թուղթի տեղ կեանքեր փճացուցին, Փիշի տեղ մահ սփռեցին՝ դրամի տեղ հողի առին եւ հարստութեան համար ամբողջ կայսրութիւն մը կորսնցուցին: Անոնց գրօսավայրը պատերազմական ճակատներն էին, իսկ դիտածնին մահ սփռող վայրեր, ժամանցնին հրկիզուած վայրեր, իսկ տեսարաննին՝ ոճիրներ. կարդացածնին՝ մահաժգոհներ, գրածնին՝ պատերազմական հրահանգներ էին, իսկ ծրագիրնին դաւադրութիւն եւ ընդհանուր ջարդ:

«Հիմա ամէն մէկը մէկ անկիւն... մէկը սպաննուած, միւսը կախաղան հանուած, մէկը թշնամիի գնդակով, միւսը բարեկամի հրամանով, մէկը թուրանի լեռներուն, միւսը գերման հողի վրայ: Իւրաքանչիւրը տեսակ մը մահով մեռնող եւ անհետացող այս մարդիկը, ահա այս ոճիրները գործող թշուառներ էին. այն թշուառները՝ որոնք հիմա անյիշատակ, աննշան եւ անխնամ գերեզմաններու մէջ, անցեալի մահազոհներու ժամանակը չմոռնալու համար միայն կը յիշուին եւ մտածեցէք անգամ մը, որ ասոնց ոչինչէ ամէն ինչ եւ ամէն ինչէ ոչինչ ըլլալուն համար 8-10 տարին բաւած էր»:



A. W. W.



**ՄՈՒՍԹԱՖԱ ՔԷՄԱԿ ՓԱՇԱ**

*«Նըլաըրըմ» բանակին հրամանատարը և  
ազգայնական շարժումին պետը*

ԶԻՆԱԴԱԴԱՐԷՆ ՄԻՆՉԵՒ ՏԱՄԱՏ ՖԵՐԻՏ ՓԱՇԱՅԻ

ԴԱՀԼԻՃԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԴԵՊՔԵՐԸ

ՓԱՍՏԵՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ ԵՆ



Ա. մասին մէջ ներկայացուածին պէս, յաղթական տէրութիւններու կողմէ պարտադրուած Զինադադարի պայմանները, պարտուած տէրութիւններու կողմէ առանց առարկութեան ընդունուած եւ ստորագրուած էր:

Իթթիհատ եւ Թէրազզըին Երզերով փառաբանուած հերոսները Եգիպտոսի գրաւումէն, Թուրանի ճամբան բունալու համար Պարսկաստանը ոտնակոխ ընելէն հրաժարած, մուկերու նման պահուլտելիք ծակեր փնտռելու սկսած էին:

«Համիտիէ» գրահաւորին հերոսը՝ գնդապետ Րէուֆ պէյի նախադահուլթեամբ Մուտրոս զրկուած պատուիրակութիւնը, «Ակամեմնոն» գրահաւորին մէջ ծովակալ Կալթրոփի առջև խոնարհելով՝ պատրաստուած զինադադարի պայմանագրութիւնը ստորագրած էր:

Աշխարհակալութեան երազով համաշխարհային պատերազմը յայտարարող գերման կայսրը Վիլհելմ՝ Գերմանիայէն հեռացած եւ անոր պատուիրակները Սարի մէջ Զօրավար Ֆոշի առջև իրենց պարտութիւնը խոստովանած եւ պատրաստուած պայմանագրութիւնը առանց ոեւէ առարկութեան ստորագրած էին:

Ստորագրուած զինադադարներէն Լտք, պատերազմական ճակատներու վրայ գտնուող 64 միլիոն զինուորներուն հրամայուած էր:

— Կեցէ՛ք:

Րէֆիզ Սալիտ պէյին նկարագրածին համաձայն՝ յառաջ շարժող բանակները կեցած. որոտացող թնդանօթները լուած, լեռներուն վրայէն վառօղի ծուխերը փարատած էր: Այլեւս երիտասարդ կուրծքերու վրայ նոր վէրքեր պիտի չբացուէին, առոյգ գլուխներու վրայ հոգէառի ստուերը պիտի չսաւառնէր. ստորագրուած զինադադարը դէպի մահ սուբացող մարդկութեան հրամայած էր.

— Կեցի՛ր եւ ապրէ՛:

Իթթիհատ եւ Թէրադզրի հերոսներուն Մուտրոսի մէջ յանուն Օսմանեան կառավարութեան ստորադրած զինադարի պայմանները շատ խիստ էին: Կառավարութիւնը կաշկանդած եւ հաշտութեան պայմաններուն ճշդումը յաղթական տէրութեանց խղճին ձգած էր:

Սոյն զինադարին պարունակած պայմաններու համաձայն, Օսմանեան կառավարութիւնը անմիջապէս պատերազմին վերջ պիտի տար, զինուորները պիտի արձակէր, պատրաստ զէնքերը եւ պատերազմական մթերքները յաղթականներու հսկողութեան տակ պիտի դնէր, յաղթող տէրութիւնները զինուորական կեդրոն նկատուելիք քաղաքները, զինուորական զիրքերը անմիջապէս պիտի դրաւէին, ապահովութիւնը խանդարուած վայրերը զինուորական պրաման ենթարկելու իրաւատուութիւնը պիտի ունենային. Չանագ Գալէի նեղուցը պատերազմական, փոխադրական եւ փոճառականական նաւերու համար բաց պիտի ըլլար:

Վերջապէս այս զինադարով Օսմանեան կառավարութիւնը ամէն կարգի պաշտպանութեան միջոցներէն զրրկուած էր:

Իթթիհատ եւ Թէրադզրի պարագլուխներէն եւ ներկայիս Թուրքիոյ Հանրապետութեան Նախագահ Մուսթաֆա Քէմալ փաշա իր ճառին մէջ կ'ըսէ. —

«Մուտրոսի շարաշուք զինադարին ընդունուիլը եւ ստորագրուիլն էր, որ յաղթական տէրութիւններուն այն համոզումը տուաւ, թէ Սելրի դաշնագրութեան գործադրութիւնը կարելի է»:

Մինչդեռ Մուտրոսի այդ անիծեալ զինադարը ըստորագրողը, Մուսթաֆա Քէմալ փաշային Կարնոյ անկեղծ բարեկամը, Ազգ. շարժման ժամանակ իր կողքին սրարշաւ վազող «Համիտիէյի» գնդապետ Րէուֆ պէյն էր:

Այս այն Րէուֆ պէյն է, որ Մուսթաֆա Քէմալ փաշայի կողմէ Անգարայի մէջ կազմուած կառավարութեան գործավարներու խորհուրդին նախագահ նշանակուած էր:

Մուսթաֆա Քէմալ փաշա, Մուտրոսի զինադարին տրամադրութիւնն դրսեւորող Փարիզի Սելրի գլեակին մէջ հաշտութեան պայմանագիրը ստորագրող թուրք պատուիրակութիւնը, հայրենիքի փրկութեան սիրոյն՝ 150նոց սև ցանկին մէջ անցուցած էր:

— Ինչո՞ւ, որովհետեւ նախկինները Իթթիհատ յկան, իսկ վերջինները ընդդիմադրութեան կը պատկանէին:



Գ.Ա.Հ.Ճ.Ա.Պ.Ե.Տ.Ն.Ե.Ր. — 1) Թալաթ, 2) Էնդէր, 3) Սախա Հալիմ, 4) Ճէմալ, 5) Տըթ. Ս. Նոման, 6) Ահմէտ Էնդէրի Հայրը, 7) Հիւսէյն Ճահիտ, 8) Մէճիթ, հայտնական փեռայ, 9) Իսմայիլ Հաքըլ, 10) Հիւսէյն Հիլմի, 11) Ռահմի, 12) անծանօթ, 13) Միթհատ Շիւքրի, Իթթիհատի քարտուղար, 14) Սալահեատին, հայտնական փեռայ: Բացակայ են Պէհաշտարին Շաքէր, Տըթ. Նազըմ եւ ուրիշներ:

Մինչդեռ Մուսթաֆա Քէմալ փաշա Անատոլուի մէջ պատրաստած շարժման սուալին շրջանին, Իթթիհատ եւ Թէրապզըին բռնութենէն, ոճիրներէն դժգոհ ժողովուրդին զանազան ասիթներով եւ վայրերու մէջ բարձրաձայն կ'ըսէր.

«— Այս շարժումը, կառավարութիւնը եւ ազգը փորձանքէ փորձանք տարած Իթթիհատ եւ Թէրապզըի խմբակին հետ ոչ մէկ կապ ունի. ազգին կենաց եւ մահու պայքարը եղող այս շարժման մէջ Իթթիհատ եւ Թէրապզըն անդ չունի»:

Ի՞նչ ընենք որ փաշային գործը, միշտ անոր խօսքերը հերքած են, որովհետեւ կը տեսնենք որ այս օրուան հանրապետութեան անձնաորութիւնները, Օսմանեան կառավարութիւնը ի նստատ Գերմանիոյ պատերազմի մղող եւ տէրութիւնը բաժան բաժան ընելով քայքայողը՝ մեր ամենուն ծանօթ Իթթիհատ եւ Թէրապզըի ղեկավարներն են:

Իթթիհատ եւ Թէրապզըն կանոնադիր մը ունի որ կը թելադրէ, թէ կեանքի՝ մասնաւորապէս վարչական անօրինումներու եւ քաղաքականութեան մէջ, ճշմարտութիւնները ոտնակոխ ընել, յոռիները լաւ ցոյց տալով աֆիոնի դեղահատներուն պէս միամիտ ժողովուրդին կլլեցնել եւ քնացնել էար, ուզածը ընել:

\* \* \*

Մուտրոսի զինադադարի պայմանները որչափ ալ շատ խիստ էին, սակայն պատերազմին վերջ տուած ըլլալուն համար ժողովուրդը չափէն աւելի ուրախացած էր, որովհետեւ ժողովուրդը պատերազմէն, պատերազմին պատճառած աւերներէն սարսափած, Իթթիհատ եւ Թէրապզըի իշխանութեան բռնութիւններէն զզուած էր:

Ժողովուրդը, պատերազմի ընթացքին Իթթիհատ եւ Թէրապզըի ստեղծած ապրուստի դժուարութիւնները, շահատակութիւնները եւ այլ ոճիրները մտաբերելով եւ պատերազմին վերջ տրուելովը ասոնցմէ փրկուած եւ ի՛նչ ձեւով ալ ըլլայ Իթթիհատ եւ Թէրապզըին կրկին իշխանութեան գլուխ չկարենայ գալը յուսալով մխիթարուած էր:

Իրենց զաւակները Չանազ Գալէի պատերազմին, Սարը Գամըշի յարձակումին զոհ տուող մայրեր, իրենց սիրելի ամուսինը կորսնցնելով այրիացած կիներ, հաց հայթայթելու համար ժամերով փուռերուն առջեւ սպասելով հացի

տեղ 300 կրամ աւլուքի խստնուրդին համար ոտտիկանին անարդանքին ենթարկւաւոյ ժողովուրդը, բնականաբար զինադադարի պայմաններուն խստութիւնը նկատի չէր առնել եւ յետ այնու յայն եւ հանդիսա շունչ մը առնելու յոյսով կը հրճուէր: Կ. Պոլսոյ պարզ մարդուն հոգեկան վիճակը այսպէս էր:

Նահանգներու, մոնաւանդ գիւղերու մէջ կայուածութիւնը բոլորովին տարրեր էր: Գիւղացին պատերազմէն խաւա խորշած էր, որովհետեւ Պոլսոյ եւ քաղաքներու ժողովուրդէն աւելի նեղութիւն քաշած եւ հիւժած էր: Երեք զաւակը մէկ անգամէն զինուորը զրկող ծեր գիւղացին, իր զաւակներուն բնտանիքները ապրեցնելու համար դաշտային աշխատանքները իր վրայ առած էր: Չմեւր անձրեւին ու ձիւնին, ամառը՝ արեւուն կիզիչ ճատադայթներուն տակ աշխատելու ստիպուելով եւ հողար ու մէկ տանջանքներով մէջտեղ բերած հունձքը, տակաւին շկայուած, «պատերազմական տարք» ի անտանով կը բռնադրուուէր եւ ասոր իրը փոխարժէք անարժէք թույթի կտոր մը կը ստանար:

Խնդիրը ասով այ չէր վերջանար. բռնադրուուած հացահատիկները մինչեւ ամբարները, զինուորական մթերանոցները փոխադրել կը ստիպուէր գիւղացին՝ կշով, եղով կամ ինք շարկած՝ մինչեւ 80-100 քիլոմետր տեղ ցորեն փոխադրելու կը պարտաւորուէր:

Այս բռնութիւնը, որպէս զստոյութիւն, կամ գնահատելի հայրենասիրութիւն ծափահարել գիւրին է, սակայն չարաչար գործածութիւններու տկանատե՞ս պէտք էր բոլորայինք:

Մինչդեռ անդին, զինուորական մթերանոցներու եւ ամբարներու մէջ սնանոց պարտեր եւ պաշտօնեաներ՝ այսչափ հեռուէն եւ հազար ու մէկ դժուարութիւններով բերուած զինուորին սնունդը կը պոլնային, զբալաննին լեցնելու կ'աշխատէին, իսկ զինուորները գիրքերու մէջ անօթի, հաց չէին կրնար գտնել:

Չինադադարի պայմանները որչափ որ ծանր, ժողովուրդը եւ գիւղացին ստիկա չէր խորհեր. անոնք ամէն կերպով պատերազմի վերջանալը կ'ուզէին եւ կը սպասէին:

Իսկ Իթթիհատ եւ Թէրազգրի տկանաւորները պատերազմի ընթացքին անհաշուելի հարստութեան տիրացողները, ուրիշ միջոցներ կը փնտռէին:

Անոնք պատասխանատուութենէ, հարցաքննութենէ ազատուիլ, ընդգիծագիրները իշխանութեան գլուխ անցնել

եւ ինքզինքնին պատժել չտալու համար մեծ տէրութիւններէն մէկուն հովանաւորութեան ապաստանելով փրկուիլ կ'ուզէին, եւ վերջապէս ամերիկեան հովանաւորութիւնը յարմար տեսնելով՝ ջերմօրէն զայն կը բաղձային: Այս ձեւով ցոյց կու տային, թէ Ազգային անկախութեան եւ հայրենասիրութեան զգացումները իրենց մօտ կեղծ էին:

Ասոնք, այս խմբակը, իրենց յանցանքներովն հանդերձ, ոճիրներուն վրայէն սպունգ մը քաշելով իրենց շորթած դրամներով հանգիստ կեանք մը անցնել կ'երազէին:

Տէրութիւն, ազգ, հայրենիք, այս խմբակին համար կարեւորութիւն չունէր:

Անգլիացի հրապարակագրի մը ըսածին պէս, Թուրքիոյ մէջ կուսակցութիւնը, քաղաքական եւ հանրային սկզբունքի հարց չէ, այլ յետոյքին կից մը տալու եւ բռնին պատառը խլելու խնդիր է:

\* \* \*

Յազթական Համաձայնական տէրութիւնները, ժողովուրդին այս հոգեկան վիճակը, պատերազմէն խուսափումը եւ խորշանքը տեսնելով, Հաշտութեան Ժողովը կը ձգձգէին եւ առաւելագոյն շահը կ'որոնէին:

Իրականին մէջ զինադադարը, բազադամաբ պատերազմի տարիներուն՝ ապրուստի նեղութիւնները թեթեւցուցած, փոխարէն անտանելի անգործութիւն մը տեղ բռնած էր, այս կերպով ձեւափոխուած անօթութիւնը կրկին տիրել սկսած էր երկրին մէջ:

Անգործութեան ծնած անօթութիւնը բնականաբար տապնապ պիտի յառաջացնէր, իսկ տապնապին հետեւանքը անկասկած խառնակութիւն պիտի ըլլար:

Այս վիճակը ժողովուրդը եւ կառավարութիւնը փրկութեան միջոցներ որոնելու ստիպած էր: Կառավարութիւնը արդէն սնանկ վիճակի մէջ էր. ի ձեռին ունեցած պատերազմական պիտոյքներուն մնացորդներուն վաճառումովը գործը դարձնել կ'ուզէր: Նոյնիսկ պատերազմի հաշմանդամներուն 3,5 դահեկան ամսաթոշակները չէր կրնար վճարել, պաշտօնէ դադրեցուած սպաններուն կարեւորութիւն չէր տրուեր, ասոնք անօթի ծարաւ մնացած խառնակութեան առիթներ կը պատրաստէին:

Կառավարութիւնը սնանկ վիճակի մէջ էր, որովհետեւ հանրային հարստութիւնները՝ պատերազմի բնթացքին խլուած՝ Միջապետք կամ Սուրիա արտածուած էր: Պոլսոյ եւ Անատոլոյի մէջ ոսկի, արծաթ դրամներու հեաքը





ՄՈՒՍԹԱՖԱ ԱՊՏԻԻԼԿԱԼԻՔ ՊԷՅ  
Հալեպի կառավարիչ

չէր մնացած: Երջարերութեան մէջ գտնուող թղթադրամն ալ իր արժէքը կորսնցուցած էր: Ապագան՝ մութ էր:

Օսմանեան կառավարութեան շրջարերութեան մէջ գտնուող դրամը արդէն սահմանափակ էր: 1846–1913 պատրաստուած էր 66 միլիոն ոսկի, 13,5 միլիոնը մանր: Սուլթան Համիտի ժամանակ՝ 150,000 ոսկինոց 10նոց եւ սահմանադրութեան 800 հազար ոսկինոց նիքել դրամներէն կը բաղկանար:

Ընդհանուր պատերազմին 161 միլիոն ոսկինոց թրղթադրամ շրջարերութեան հանուած էր, ասոր 1,5ին միայն փոխարժէքը Գերմանիոյ կողմէն հանրային պարտուց վարչութեան ցոյց տրուած էր եւ սակայն այս թղթադրամներու մասին համաձայնութիւն պոյացած չըլլալուն՝ վիճակը անորոշ կը մնար:

Մէկ կողմէ դրամական տագնապ, միւս կողմէն անպորժութիւն, ժողովուրդ եւ կառավարութիւնը շուարեցուցած եւ իթթիհատ եւ թէրազըրի խռովարար օճախը կրկին արժարժելու առիթ տուած էր:

Յաղթական տէրութեանց զրաւման տակ գտնուող տեղերու մէջ ալ, տեւական պայմաններուն անձանօթ սպաներուն եւ ասոնց քով պաշտօնավարող թարգմաններուն ժողովուրդին հանդէպ ունեցած վարմունքը յոռի եւ անտանելի դարձած էր:

Տակաւին երէկ այս երկրին մէջ իրր զինակից պերման զինուորներ կը դանուէին եւ ժողովուրդը բռնի դէպի մահ կ'առաջնորդէին, իսկ այսօր, անոնց տեղ յաղթական տէրութիւններուն յաղթութեան փառքով յղփացած զինուորները ման կու գային, ժողովուրդին թշնամիի աչքով կը նայէին եւ ազգային արժանապատուութիւնը վիրաւորող դիրքի մէջ էին:

\* \* \*

Յաղթական տէրութիւնները, հաշտութիւնը փութացնելով այս տագնապներուն վերջ տալ չէին ուզեր: Ազգեցութեան շրջանակները լայնցնել եւ մնացած քանի մը նահանգներն ալ գրաւել կը խորհէին եւ ժողովուրդին իրենց հանդէպ ունեցած համակրութիւնը կը կորսնցնէին:

Կառավարութիւնն ալ ներքին եւ մանր գործերուն համար իսկ եղած միջամտութիւններէն ինքնակորոյս ի՛նչ ընելիքը չէր գիտեր:

Ահա այս տաղնապալի օրերուն էր, որ Սուլթան Մուհամմէտ Վահիտետտին Խան Չ. Անատոլուի մէջ ազգային բանակ մը պատրաստել խորհած եւ այս բանակը կազմելու համար վստահելի անձերու ցուցմունքով իր թիկնապահներէն Գնդապետ Մուսթաֆա Քէմալ փաշան լայն իրաւասութիւններով եւ մասնաւոր հրահանգներով՝ յաղթական տէրութեանց Պոլիս գտնուող ներկայացուցիչներէն վաղաւորի՝ Անատոլու դրկած էր:

Ինչպէս քիչ ետք պիտի պարզեմ, Մուսթաֆա Քէմալ փաշային նշանակումը Սուլթան Վահիտետտինի թելադրողներուն գլխաւորն էր՝ Մոսկային Նախարար Աւնի փաշային աներհայրը՝ Պատերազմական Նախարար վրացի Շաքիր փաշան եւ ասոր օգնած էր նաեւ կայսրաժային տեսչութեան եւ թագաւորական դանձին ընդհ. անօրէնը Բէֆիզ պէյ:

Գնդապետ Մուսթաֆա Քէմալ փաշա այն ժամանակ Պոլսոյ մէջ գաղտնի հիմնուած «Լուսին եւ Աստղ» զինուորական կազմակերպութեան նախագահն էր, եւ այդ օրերուն կատարուած ընտրութեամբ ալ Մասոնական Արեւելեան Օթեակին մեծաւորը եղած էր:

Զինապալարի շրջանը՝ գաղտնիքներով յի զանազան էջեր ունի, իսկ Անատոլուի շարժումն այ տակաւին չպարզուած՝ անուշ եւ լեղի շատ մը դէպքեր ունի: Ասոնք փաստաթուղթերով եւ հետզհետէ նկարագրելու ժամանակ թէ եւ դիմակներ պիտի պատուուին, սակայն պատմութեան ծառայելու համար ճշմարտութիւնը ինչպէս որ է պիտի յայտնուի:

Դէպքերը նկարագրելու ժամանակ առանց յարմարութիւնը նկատի առնելու, դիւանապիտութեան բեմին վերայ խաղացող գերակատարներուն բոյսը դերերը ցոյց պիտի արուին:

Դէպքերուն մեծութիւնը եւ նրբութիւնը յաւապէս ըմբռնելու համար, այս օրուան Անդարայի բրտրականախտը՝ Աղա Օղլու Ահմէտ իր նկարագրութեան մէջ թէ եւ բոյսը դէպքերը եւ ասոնց նախատեսութիւնը եւ ներկայ հանրապետութեան ստեղծումին տուն տուող առիթները Մուսթաֆա Քէմային եւ անոր մեծ հանձարին կը վերադրէ, սակայն ասիկա միայն դէպքերը եւ անոնց բնթացքին անտեղեակ եղողները համոզելու կը ծառայէ, իսկ իրականութիւնը բոյսովին ասարբեր բլլայով, ասիկա շարքած՝ կ'ուզենք Աղա Օղլու Ահմէտը մեր բնթերցողներուն ծանօթացնել:

— Ո՞վ է Աղա Օղլու Ահմէտ պէյ:

— Ասիկա անանկ հարցում մըն է, որ սահմանադրութեան հռչակումին յաջորդող 1910 թուականէն ի վեր ամէն ոք ուղղած եւ սակայն ո՛չ ոք կրցած է պատասխան մը տալ:

Նոյնիսկ այս մարդը փառաբանող եւ իբր դրչի մարդ զայն պաշտօնի հրաւիրող Իթթիհատ-Թէրազզըն անգամ չէ կրցած պէտք եղածին պէս ճանչնալ:

Աղա Օղլու Ահմէտ ո՞ւր տեղացի է, ուսումը ի՞նչ աստիճանի է:

Աղա Օղլու Ահմէտ պէյ Ատրպատականցի է: Պոլիս եկած եւ թուրանիստներուն կարեւորութիւն չտրուած շրջանին Ռուս բարբառով Ահմէտ Աղայէֆ ճանչցուած այս անձը, ուսման եւ զարգացման տեսակէտով բարձր էր. Ռուսերէն, Ֆրանսերէն լեզուներուն տեղեակ, Թուրք եւ Պարսիկ գրականութիւնը եւ լեզուն կատարելապէս իւրացուցած էր:

Միայն թէ, զարգացումն ու բարձր ուսումը զինք հըպարտ մէկը դարձուցած էին:

Ահմէտ Աղայէֆ ինչո՞ւ Պոլիս եկած էր:

Ահաւասիկ այսօր Աղա Օղլու Ահմէտ անունով ճանչցուած Ահմէտ Աղայէֆին կեանքին չսպարզուած եւ ամենէն մթին կէտը այս է:

Շատեր՝ Ահմէտ Աղայէֆը, իբր Ռուսիոյ մէջ Յարիզմի ժամանակ քաղաքական յանցանքով Սիպերիա արտորուած եւ այն տեղէն փախչելով Պոլիս ապաստանած քաղաքական փախստական կը կարծէին:

Շատեր ալ զայն Ռուս կառավարութեան կողմէ, քաղաքական փախստականի դիմակին տակ Պոլսոյ մէջ քաղաքական շրջանակներու հետ շիման մէջ մանելով, ստանալիք տեղեկութիւնները Ռուս կառավարութեան հաղորդելու պաշտօնով զրկուած լրտես մը կը կարծէին:

Այսօր այս երկու կարծիքներն ալ թէեւ չեն հաստատուած, սակայն Ահմէտ Աղայէֆին Թուրքիա ապաստանելէն ետք, Ռուս քաղաքական շրջանակներուն հետ յարաբերութեան մէջ մտնելը Իթթիհատ եւ Թէրազզըրին Ահմէտ Աղայէֆէն զատ ոեւէ մէկուն համար, գաղտնի պահուած որոշումներուն անմիջապէս Ռուս շրջանակներուն տեղեկանալը, երկրորդ կարծիքը հաստատելու բնոյթ ունի:

Իթթիհատ եւ Թէրազզըրի իշխանութեան տեւողութեան շրջանին Ահմէտ Աղայէֆի յաջողութիւնը կատարեալ եղած եւ Աֆիոն Գարահիսաբէն երեսփոխան ընտրուած էր:

Այսօր ալ Քէմալական վարչութեան բրորականտայի ճիւղը ձեռք առած, հարստացած եւ կարսի երեսփոխան է:

\* \* \*

Մուտրոսի զինադադարին ստորագրութենէն անմիջապէս յետոյ, յաղթական տէրութիւնները Չանազ Գալէի նեղուցին մաքրագործումին սկսած էին:

Իթթիհատ եւ Թէրազըրի պատասխանատու վարիչները՝ Թալաաթ, Էնվէր, Ճէմալ, Թոփալ Իամայել փաշաները եւ Տոքթ. Նազրմ, Տոքթ. Պէհաէտտին Շաքիր, ոստիկանական տնօրէն՝ Պէտրի, Պէյրութի կուսակալ՝ Ազմի, հայկական սպանդին հետ կապ ունեցող պատերազմի պատասխանատուներէն շատերը, արժէքաւոր գոյքերնին առած, Ահմէտ Իզզէթ փաշայի դահլիճին մաս կազմող Իթթիհատականներուն ցոյց տուած դիւրութիւններուն շնորհիւ փախչիլ յաջողած էին:

Իթթիհատի պատասխանատու եւ ծանօթ դէմքերուն այս կերպ փախուստը, հանրային կարծիքին մօտ շփոթ եւ յաղթական տէրութեանց ներկայացուցիչներուն մօտ ալ Ահմէտ Իզզէթ փաշայի գահլիճին հանդէպ անվստահութիւն ստեղծած էր:

Սոյն շփոթ եւ անվստահելի մթնոյորաին մէջ, Սուլթան Մուհամմէտ Վահիտետտին Վարչապետ Իզզէթ փաշային հրամայած էր, դահլիճին անդամակցող Իթթիհատական ծանօթ դէմքերը հեռացնել եւ Իթթիհատի պատասխանատուները ձերբակալելով յանձնել:

Ահմէտ Իզզէթ փաշա, Իթթիհատի ճնշումով Սուլթանին սոյն ազդարարութեան խիստ ոճով գրուած երկտողով մը պատասխանած էր, գրելով, թէ այս առաջարկը Սահմանադրութեան հակառակ է. թէ թագաւորը Սահմանադրութեան տրամադրութիւնները ոտնակոխելով դէպի միապետութիւն քալել կ'ուզէ եւ թէ կառավարութիւնը չի կրնար այդ հրահանգին ընդառաջել եւ այսպէսով առաջարկը մերժած էր:

Ահմէտ Իզզէթ փաշային այս համարձակութեան վրայ, Սուլթան Վահիտետտին՝ Մերակոյաի նախագահ Ահմէտ Բիզա պէյը իր քով հրաւիրելով՝ «Սահմանադրութեան դահլիճի իրաւասութեան շուրջ եղած յօդուածը Մերակոյաի կողմէ ի՞նչպէս կը մեկնուի», հարցուցած էր:

Ասոր վրայ, նոյն օրուան ժողովին օրակարգին անցած սոյն խնդիրը Ահմէտ Իզզէթ փաշան խրաչեցուցած եւ իր յայտարարութեան սիտալ ըմբռնուած ըլլալը եւ սահմա-

նադրութեան դահլիճի կազմութեան մասին եղած յօդուածին մեկնութեան կարօտ չըլլալը յայտնելով՝ հրատարած էր:

Ամէն վեհապետ միապետութեան կողմնակից կ'ըլլայ: Սուլթան Վահիտեատին ալ կրնայ սոյն փափաքը ունեցած ըլլալ: Կրնայ ըլլալ որ, 1878ի պատերազմէն յետոյ Սուլթան Համիտի խաղացած դերը կրկնել խորհած ըլլայ, միայն թէ լաւ ըմբռնած էր, որ կացութիւնը աննպաստ է եւ իր շուրջը գտնուողները այս կարեւոր դերը խաղալու անկարող են:

\* \* \*

Ի թիւստի պատասխանատուներուն փախուստին վրայ՝ Րէֆիզ Խալիտ պէյին հրատարակած եւ հանրային կարծիքին վրայ մեծ ազդեցութիւն ձգած «Պարոններ դէպի ո՞ւր» յօդուածը նոյնութեամբ հրատարակել յարմար կր տեսնեմ:

«Պարոններ, դէպի ո՞ւր.

«Խնճոյքը լրացաւ. բերաննիդ չի սրբած, ձեռքերնիդ չլուացած եւ վրան ալ յեղի սուրճ մը չառած՝

«Պարոններ, դէպի ո՞ւր:

«Ամբան սկիզբը չորցած, նիհար կմախք դարձած մրտկներ դուրս կու գան, մեր մարմնին կը փակին, մեր մորթերը կ'այրեն, արիւննիս կը ծծեն եւ առտուան դէմ պարարտացած կը սկսին հոս ու հոն փախչիլ, կ'երեւի արշալոյս է, արեւը պիտ ծագի.

«Մրտկներ, դէպի ո՞ւր:


«Բարձր լեռներու վրայ կրակոտ աչքերով, սուր ժանիքներով, մազերնին փուշ փուշ անօթի գայլեր կը շրջին, պահապան շուն շունեցող հօտերու վրայ կը յարձակին, ոչխարները կը բզբտեն, չորս կողմերնին արիւն եւ ոսկոր դիզելով փորերնին կշտացած իրենց որջը կը փախչին, կ'երեւի հովիւր տեսաւ, շուները հաջել սկսան.

«Կշտացած գայլեր, դէպի ո՞ւր:

«Կատու չգտնուող տուներու մէջ մուկեր կը գտնուին, մարանները կը մտնեն, դարակները կը ծակեն, աս ան կըրծելով աջ ու ձախ կը վազեն եւ տան ամենապատուաւոր անկիւնները կը պտտին, փոքր ձայն մը առնելուն պէս ծակերը կը մտնեն, կ'երեւի հոտ առին, կատուն կու դայ.

«Մուկեր, դէպի ո՞ւր:

«Երբեմն այրի կիներ անառակ գաւակներ կ'ունենան, որոնք սնտուկները կը բանան, դրամ կը գողնան, հագուս-



Հայ որբերը թրֆացնելու միտող տխրահուշակ Հայիտէ  
Էտիպէ Հանրմ. դէմը կեցողը՝ հայ որբուհի մըն է



Ճէմալ փաշա Դամասկոսի մէջ հայ որբերը կը զննէ: Իր առաջին  
տեղակալը՝ Նուսրէք պէյ եւ Դամասկոսի տեղահանեալ հայերուն  
միտիրը՝ Զերֆէզ Հասան պէյ՝ որ Նուսրէքի կը հետեւի

տեղէն թոցնելով հրեաներուն կը ծախեն եւ յետոյ վախնալով փողոցէ փողոց կը փախչին, կ'երեւի գողութիւններն յայտնուելով օձիքը ձեռք պիտի տան...

«Անառակ որդիներ, դէպի ո՞ւր:

«Զարկին, կոտորեցին, քանդեցին, սպաննեցին, այրեցին եւ մեր դիակները մէջտեղ նետելով օձերու պէս փախան, թշնամին մեր տունը մտնելուն կորսուեցան.

«Զինուած, աչքերնին արիւնոտ փաշաներ, դէպի ո՞ւր:

«Այն ժամանակ գրիչներ՝ կոտրուած, աչքեր՝ փակ, վզեր՝ ծոած եւ բերաններ՝ կղպուած էին: ԵԿՄՒԲ, կը հրամայէիք, ժողովուրդը գետնաքարչ կը վազէր, ձեր ոտքերուն տակ կը դողդղար: ԳՆԱ՛, կը հրամայէիք, հազիւ դուռը բացած աստիճանները չորս չորս իջնելով հոգին կ'ազատէր...:

«Դուք ոչ թէ նախարար, այլ աւագակապետ էիք, դուք ոչ թէ պետ՝ այլ յելուզակներ էիք. դուք ոչ թէ կուսակալ՝ այլ ապստամբապետ էիք, ըմբոստներուն մատ իւածնել տուիք: «Զագըճի»ին երանի կարգալ տուիք, «Գապագճը»ն խաւարի մէջ ձգեցիք, եթէ քիչ մըն ալ անցնէր իբր սուրբ հանրային կիները պիտի պաշտէիք: «Մրսալլըները» հերոս ճանչնալով անոնց արձանը պիտի կանգնէիք, «Սագալլը»ներուն կեանք սալով դիրքերու պիտի բարձրացնէիք:

«Մա՛հ, ըսելնուդ պէս շարք շարք կախաղանները կը պատրաստուէր. այրեցէ՛ք, ըսելնուդ պէս բոցեր կ'արծարծէին, յարձակում ըսելնուդ պէս՝ գունդ գունդ ոստիկան զինասորներ կը վազէին: Զեռքերնիդ բանտերու բանալին, մէջքերնիդ կախաղանի չուաններ, կոնակնիդ կախաղաններ՝ նահանգէ նահանգ պտտեցաք, Ալին սպաննեցիք, Վէլին կախաղան բարձրացուցիք, Ահմէտը այրեցիք, Մուհամմէտը խանձեցիք: Հինգ տարի է, ամէն կողմ մարդկային դիակներէ ազոաւներուն ինճոյքներ սարքեցիք, զանոնք Երախաներու միտով կերակրեցիք, արծիւները մարդկային միսէն պժգացուցիք:

«Ընդդիմադի՞ր է, վար առէք. հրապարակագի՞ր է, զարկէք գլխուն. թո՞ւրք է, դէպի մահ առաջնորդեցէք. յո՞յն է, դրամը ուզեցէք. հա՞յ է, գլուխը կտրեցէք. արա՞բ է, կախաղան հանեցէք. կի՞ն է, տուն զրկեցէք. աւագա՞կ է՝ վեր հրամմեցէք. սրիկա՞յ է, քովս բերէք. հրեա՞յ է, ի՞նչ կ'ուզէ հարցուցէք, մնացածներուն գաւազանը քաշեցէք, դրամներն ալ գրպաննիս դրէք:



«Ահա ասիկ ձեր ծրագիրը, ահա ասիկ ձեր գործը նեղուցները փակելով ներսը ուզածնիդ բրիք, մեզ կողոպտեցիք. սպաննեցիք:

«Կր բացուին մեր խանութները ամէն առաւոյ առանց ծառայի, մեր ուսուցչապետն է դահճապետ Գարա Ալի:

«Նշանատախտակը ձեր դիտուն վրայ կախած սուրերով. գաւազաններով գործի սկսաք. խումբերով մարդիկ լեռները տանելով սուրէ անցուցիք, անմեղ հայրեր ու զաւակներ սպաննեցիք եւ Անատոլոյի մէջ այրի կիներէ եւ որբերէ զատ մարդ չձգեցիք: Այս արիւնոտ գործերը, այս բարբարոս արարքները, այս քաղաքականութիւնը ի՞նչ օգուտ պիտի ունենար, ի՞նչ պիտի շահէինք, աշխարհը պիտի գրաւէինք, Եգիպտոսի թագաւոր թէ Հնդկաստանի կայսր պիտի ըլլայինք:

«Վարչապետութիւն, Ընդհ. հրամանատարութիւն, Նախարարութիւն ձեր ծակ աչքերը չէին կշտացուցած. ո՛վ թաղաւորութիւն երազողներ, քիչ մնաց որ Դամասկոսի եւ Հալէպի մէջ ձեզի համար աղօթքներ մրմնջել տայով՝ ձեր անուան ալ դրամներ պիտի հանէիք:

«Քաջը դուք էիք, հերոսը դուք էիք, հրամայողը դուք էիք, ամէն բան ձերն էր:

«Հիմա մուկերու պէս առատաող կ առատաղ պէպի ո՛ւր, այո՛, ո՛ւր կ'երթան, թաղային սրճարանի անկիւնէն մէկ անպամէն վարչապետութեան, գիներտան ցած աթոռներէն նախարարութեան, հրէջջներու շարքէն կուսակալութեան բարձրացող նորեկներ՝

«Իէպի ո՛ւր կ'երթան:

«Իրենք մուշտակներու վաթթուեցան՝ ժողովուրդին մորթը քերծեցին, իրենք սնտուկներու մէջ սակիներ դիզեցին, մեր գրպանները թուղթի կտորներ թխմեցին, ժողովուրդը մերկ եւ թշուառ մզկիթներու բակին մէջ պառկած ժամանակ, իրենք ազարակներ գնեցին, ապարանքներ շինել տուին, անօթութենէ մեռնողներուն բեռնի պատառը առնելով բողբոռն խնճոյք սարքեցին. ծարաւէն մարողին կուժը գողնալով իրենց աւազանները լեցուցին եւ վրան նաւակնին պատցուցին. պանդուկները փլցնելով կախաղաններ պատրաստեցին, օճախներ մարեցին, քաղաքներ քանդեցին. գողցան ծախեցին. ո՛չ ծերուկին խնայեցին եւ ո՛չ մանուկին, ո՛չ թագաւոր ճանչցան, ո՛չ օրէնք, ո՛չ գութ ունեցան եւ ո՛չ իրիղծ:

«Ժողովուրդը փողոցներու մէջ կաշիի կտորներ կըրծած ժամանակ, իրենք ապարանքներու մէջ պլպուլի ուղեղ

կերան, թուշունի կաթով անունեցան՝ մայրերնիս անարդեցին, հայրերնիս ձեռնեցի՝ մեկ եղուեցի՛մ ըր հանեցին

«Վերջապէս այս կարգուս թիւնը սարքէն բանելով դեռին զարկին, ըստ ջի վերածեցին

«Այլևս վառահ թուշ չի մնա, այ՛ տղր մեռցուցին, սրով հետեւ եթէ մեր էրանը՝ ո՛ր է՛նչ կաթիլ ըր արին, եթէ մեր բազուկներուն վրաս քիչիկ ըր սէլ մնացած ըլլար, սնանց օձիքէն բանելով՝ սէլ գրէ՛ր կը յաճէինք, մինչդեռ անոնք ադաս համարձակ ձեւերովն թուշերնին շարժելով եւ մեր երեսին այ թքնելով՝ ստացան

«Ապրի բ՝ ձին այ ձեզի կը յաճէ՛ր, դէնքն այ՛ երբ մենք աչապէս թմրած վիճակ մը խակ տուց՝ հայնայ երես մը տնիք, օր մը կրկին կու գաք՝ ձեռքիկ տու՝ համբուրել կու տաք, սրահնիս կը բաշէր՝ կը հանէր

«Մենք ձեզի շիրցանք հարցնել, թէ քուստսուն ջա՞րդ կ'ուզէք, թէ քուստսուն սուր

«Ուրեմն՝ փաղր ձեր իրաւունքն է՝ ձեզի բտել.— «Մահերէն մահ նախընտրեցէք»

«Մեզի արժանի փաշաներ, դէպի ս'եր»

\* \* \*

Այս դէպքին եւ Իթթիհատի պատասխանատու անձերուն վախուստին վրայ, գահ լիճի կարմու թիւնը Լոնտոնի դեսպան՝ ձերակուտական Թէվֆիկ փաշային յանձնուած էր:

Թէվֆիկ փաշա այս անգամ գահ լիճը չէր և Իթիհատ Թէրազըրի պատերազմի, սպաննութեան եւ տեղահանութեան քաղաքականութեան հետ կապ չունեցող անձերէ կազմելու յաջողած եւ զրգուտած հանրային կարծիքը եւ տազնասլը մասամբ մեղմացած էր

\* \* \*

Յաղթական Համաձայնական տէրութիւնները Չանազ Գալէի նեղուցը մաքրագործելով 15 Նոյեմբեր 1918-ին իրենց տորմիդը Պոլսոյ նաւահանգիստը մացուցած եւ Գապա թաղի առջեւէն դէպի Վոսրոր պատերազմական շարքի վրած եւ թնդանութիւնը քաղաքին վրայ դարձուցած էին

Յունաստան թէեւ Օսմանեան կառավարութեան դէմ պատերազմ չէր յայտարարած եւ միայն դիւանագիտական յարաբերութիւնները խղելով բաւականացած էր, սակայն անոր «Ավէրոֆ»ի եւ «Քէլքիշ» գրահաւորներուն Համաձայնականներուն Պոլիս մտնող մարտանաւերուն մէջ գտնուելը եւ այս երկու Յունաստանի սրտերուն դիպուածով թա-

դրությունը, ինչպես Տոլսոյ Պաղչէի ապարանքին առջեւ խարսխելը, Պոլսոյ յոյները շփացուցած եւ անտեղի ծայրայեղութիւններու մղած էր: Ասոնք Այա Սոփիա մզկիթին կրկին եկեղեցւոյ վերածուիլը տարածայնելով իսլամ տարրը յուզած էին:

Համաձայնականները զինուոր ցամաք հանելով ընդհանուր ապահովութեան եւ վարչական գործերու միջամբտել սկսած էին եւ կառավարութեան պարտութեան հետեւանքով խախտած հեղինակութիւնը բոլորովին կտորած էր: Երկիրը գրեթէ անտէր, կառավարութեան ձեւն ու գոյնըն ալ անյայտ պատկեր կը պարզէր:

Պատերազմի շորս տարիներուն Իթթիհատ եւ Թէրազգրի իշխանութեան ոճրագործութիւնները ծախսահարող Երեսփոխանական Ժողովը իր նստաչրջանին մէջ էր:

Իթթիհատ եւ Թէրազգր կուսակցութիւնը իր անունը փոխած եւ «Վերանորոգչական» խմբակ անուան տակ նորէն Երեսփոխանական Ժողովին մէջ մեծամասնութիւն կը կազմէր:

Ահմէտ Իզզէթ փաշայի դահլիճին մէջ ներքին գործոց նախարար եւ սակայն Իթթիհատի պատասխանատու անձերուն փախուստին օժանդակած ըլլալուն համար հեռացուած Ֆէթհի պէյ(1) «Բեմ» անունով հրատարակել սկսած թերթով եւ Երեսփոխանական Ժողովին մէջ իրեն հետեւող քանի մը Երեսփոխաններով «Վերանորոգչական» խմբակին անջատ կազմած «Ազատասէրներու ընդհանուր միութեան» հետ Թէվֆիզ փաշայի կառավարութեան դէմ սատարիկ յարձակողականով մը մտքերը խանգարել սկսած էր:

Ֆէթհի պէյ, Թէվֆիզ փաշայի կառավարութիւնը զինազաղարի պայմաններուն գործադրութեան մէջ իրր տկար եւ անկարող կ'ամբաստանէր եւ նորէն Իթթիհատի պետութեան գործի գլուխ գալուն համար ջանքեր կը թափէր:

Թէվֆիզ փաշա ասանկ վլվլուկներուն կարեւորութիւն տուող մէկը չէր. տէրութիւնը գահավիժած անյունդէն ազատելու միջոցներ կ'որոնէր. հաստատ քայլերով յառաջանալ կը խորհէր. եւ ամէն բանէ առաջ Երեսփոխանական Ժողովէն վստահութեան քուէ ստանալ կ'ուզէր:

Ժողովին ներկայանալով իր ծրագիրը կարգացած էր. Ֆէթհի պէյ բեմ բարձրանալով իր «Ազատասէրներու ընդհանուր միութեան» անունով կառավարութեան կարգացած

(1) Յետագային Փարիզի դեսպան

ծրագիրը խոսիւ ջննադատած եւ իր ճառին վերջաւորութեան զայն Մուտրոսի զինադադարին գործադրութեան մէջ տկար եւ ասլիկար ցոյց տալով, իր յարձակումը սաստկացուցած էր:

Կրթական նախարար փիլիսոփայ Րիզա Թէվֆիզ պէյ բեմ բարձրանալով՝ յանուն կառավարութեան պատասխանած է.

— Ներկայ կառավարութիւնը ընդհանուր պատերազմին հետեւանքը եղող Մուտրոսի զինադադարին երբեք պատասխանատու չի կրնար ըլլալ: Այդ պատասխանատութիւնը, անկասկած, պատերազմ յայտարարող կառավարութեան հետ զինադադարը ստորագրող եւ այսօր ալ ներկայ կառավարութիւնը զինադադարի պայմաններուն գործադրութեան մէջ տկար եւ ասլիկարութեամբ ամբաստանող Ֆէթհի պէյին կ'իյնայ, քանի որ թէ՛ պատերազմը յայտարարող կուսակցութեան ազդեցիկ մէկ անդամը եւ թէ՛ ալ զինադադարը ստորագրող Ահմէտ Իզզէթ փաշայի դահլիճին անդամը ըլլալուն, այս ջննադատութիւնները սղղակի իր անձին եւ իրեն պատկանած քաղաքական կուսակցութեան կը վերաբերին:

Րիզա Թէվֆիզ պէյին այս պաշտպանողական ճառին վրայ Թէվֆիզ փաշայի դահլիճը գրեթէ միաձայնութեամբ մեծամասնութեան մտահոյսութեան քուէն կը ստանար:

\* \* \*

Թէվֆիզ փաշայի դահլիճը, թէեւ վստահութեան քուէ ստանալով ժողովէն ելած էր, սակայն չէր կրցած իր հակառակորդները լռեցնել:

Աքսորավայրերէն հետզհետէ վերադարձող ընդդիմադիրներ աթոռներ գրաւելու համար մամուլի միջոցաւ Թէվֆիզ փաշայի կառավարութեան դէմ պայքարի սկսած եւ այս կերպով կացութեան լրջութիւնը առանց նկատի առնելու, Իթթիհատ եւ Թէրազգըլի մարդոց հրապարակ գալուն նպաստած էին:

Ես այն համոզումը ունիմ, որ եթէ քսորավայրերէն վերադարձողները Թէվֆիզ փաշայի դահլիճին թիկունք եւ ուժ տուած ըլլային, կառավարութիւնը եւ ազգը իր այսօրուան ականատես եզած փորձանքներուն չէր ենթարկուեր:

Աւա՛ղ, որ ասոնք ամէն բանէ առաջ ապրուստի հոգը ունէին եւ այս միմիայն պետութեան մաս կազմելով կըրնային ապահովել: Ցաւով կը յայտնեմ, որ ընդդիմադիրներու մեծամասնութիւնը նախաձեռնելու ոգիէն զուրկ

մարդոցմէ կը բաղկանար: Իրենց ապրուստը միայն կառավարութենէն ստանալիք դոյզն ամսականով կրնային ապահովել, ինքնաշխատութեամբ իրենց ապրուստը ճարողներ այս խմբակին մէջ մատով ցոյց տրուելու աստիճան քիչ էին:

Իթթիհատ եւ Թէրագգըն թէեւ պատերազմի մէջ պարտուած ըլլալուն պատճառաւ փյած էր, սակայն ընդդիմադիրները զանոնք ոչնչացած ցոյց տալով, կառավարութեան ատրանայու իրաւունքը իրենց կը վերապահէին:

Այսպէս, մէկ կողմէն՝ ընդդիմադիրներու, միւս կողմէն Իթթիհատ-Թէրագգըն ներկայացնող «վերանորոգչական» եւ «ազատասէրներ»ու կուսակցութիւններուն քննադատութիւնները, Թէվֆիգ փաշայի կառավարութեան դիրքը խախտած եւ կացութեան փափկութեան հետեւանքով յաղթական տէրութեանց Պոլիս գտնուող ներկայացուցիչներուն մօտ ալ դայն վարկաբեկած էր:

Այս անել կացութեան մէջ տագնապող Թէվֆիգ փաշա, ընդդիմադիրներուն վլվլուկը մէկ կողմ ձգելով, առաջին անգամ Իթթիհատ-Թէրագգընը Երեսփոխանական Ժողովին մէջ ունեցած ազդեցութիւնը կոտրելու համար, ժողովը լուծել խորհած էր:

Ժամանակին համեմատ կարևոր եւ տեղին եղող այս խորհուրդը Բէֆիգ ինչպէս ալ էին այդ օրերուն «ոչ ոք յանցաւոր է» վերնագրութեամբ հրատարակած յօդուածին հետեւեալ պարբերութիւններէն ներշնչուած ըլլալու կարծիքը իբրեւ իրականութիւն ընդունուած էր:

Պարբերութիւնները հետեւեալներն են.—

«Արդարեւ բոլոր ժողովուրդը պատերազմին հակառակ, հաշտութիւն փափաքող կառավարութեան ընթացքէն դժգոհ է եղեր, Երեսփոխանական Ժողովն ալ այս կարգէն է եղեր:

«Իմ գիտցածս աղօթատեղիներու մէջ միաբերան աղօթող տէրվիշներու նման միաձայն այո, այո ըսողները անոնք էին. Կալիցիոյ արշաւը եւ Պուլկար սահմանագծումը ծափահարողները անոնք էին, կառավարութիւնը անոնց «բերաննիդ բացէք. աչքերնիդ գոցեցէք», ըսած էր, բերաննին գայլի պէս բացին, աչքերնին գոցեցին եւ «լեցուր, հա՛լ լեցուր» երգելով չորս տարի պատերազմի քաղաքականութիւնը գովեցին, իսկ հիմա կը տեսնեմ որ ասոնք այդ մարդիկը չեն:

«Մեզ փճացուցին, շատ խօսեցանք, բայց անօգուտ

դարձաւ, կ'ըսեն: Կ'երևի իբրևո՞ւ ականջին փսփսացած, շրթոնքներով խօսած են, իսկ մենք չենք լսած:

«Ասանկ բաներ բեմերէն բարձրաձայն կը խօսին. հա-  
կա-առաջարկները բացէն կը տրուին, կարծիքները ազատօ-  
րէն կը յայտնուին, քանի որ երկիրը ձևաքերը կապուած,  
բերանը պոցուած կրակի մէջ կը նիրհէ: Ինչո՞ւ. պոնկ 10-15  
ձայն չի բարձրացաւ, ինչո՞ւ 10-15 բուռնցքներ չստաւանա-  
ցին. հիմա խօսիլը ճարպիկութիւն չէ. ասիկա կաթնտուս  
այ կ'ընէ, մեծ հայրս ալ:

«Եւ այս ժողովը Ազգային ժողով նկատելով վստա-  
հութեան քուէ պահանջող կառավարութեան խելքին կը  
զարմանամ: Եթէ ես ըլլայի, փոխանակ անոնցմէ վստա-  
հութեան քուէ ուղելու եւ երթալու, Եւրոպայի վստահու-  
թիւն ներշնչելու համար՝

«Այլեւս բերաննիդ պոցեցէք եւ աչքերնիդ բացէք, ը-  
սելով, զանոնք կը չէզոքացնէի»:

\* \* \*

Թէվֆիդ փաշա, երբ ժողովը լուծելու մասին պատ-  
ճառներ կը փնտսէր, Ֆէթհի պէյին եւ անոր համախոհ  
կարգ մը երեսփոխաններու ստորագրութեամբ հարցարան  
գրութիւն մը ստացաւ:

Այս հարցարան գրութիւնը ստանալուն՝ Թէվֆիդ  
փաշա փնտռած պատրուակը գտած էր: Այս հարցարանին  
իբր պատասխան, դահլիճին կողմէ գրութիւն մը պատրաս-  
տելով ժողովին գումարման օրը սրոշած եւ ժողովին նա-  
խագահին տեղեկացուցած էր:

Հանրային կարծիքը եւ մամուլը այս հարցարանին  
վրայ Թէվֆիդ փաշայի կառավարութեան տապալիլը յու-  
սալով, պայքարը սաստկացուցած էր, իսկ Թէվֆիդ փաշա  
որոշեալ օրը պաղարիւն ժողովին ներկայացած էր:

Ներքին Նախարար Արիֆ պէյ բեմ բարձրանալով հար-  
ցարան գրութեան իբր պատասխան կառավարութեան  
պատրաստած յայտարարութիւնը կարդալ սկսած էր...

«Ասիկա յայտարարութիւն մը չէ, այլ՝ ամբաստա-  
նագիր. կառավարութիւնը՝ պետութեան ենթարկուած այս  
ցաւալի կացութեան համար (փաստեր ցոյց տալով), Իթ-  
թիհատ եւ Թէրապպրի կառավարութեան, առանց քուէար-  
կութեան նշանակովի կողմած սոյն ժողովը պատասխանա-  
տու կը նկատէր(1)»:

(1) Սոյն ժողովին արձանագրութիւնը չունեցաւ, հոյնութեամբ չկրցանք  
ձեռագրել:

Փաստերով հաստատուած այս յայտարարութեան ընդհանրացումէն յետոյ՝ Ծէթհի պէյ եւ հարցարան գրութիւնը ստորագրող երեսփոխանները թէեւ ձայն ուզած էին, սակայն Մուսթաֆա Արիֆ պէյ:

— Խնդրեմ պարոններ, քիչ մը համբերեցէք, տակաւին կարդացուելիք թագաւորական հրովարտակ մը կայ, ըսելով, ժողովին լուծումը եւ նոր ընտրութեան կատարումը հրամայող հրովարտակը կարդացած էր:

Կառավարութեան տուած այս հարուածը, ոճրագործ եւ պատասխանատու նկատուող երեսփոխանները չչմեցուցած էր. ի՞նչ ընելիքնին չգիտնալով շուարած մնացած էին, իսկ դահլիճին անդամները ժողովէն յաղթական մեկնած էին:

Այսպէսով, հինգ տարի շարունակ բոլոր ոճրագործութիւններու հեղինակ կառավարութիւնը (Իթթիհատ) ծափահարող այս ժողովին կեանքին վերջ տրուած էր:

\* \* \*

Այս կերպով Երեսփոխանական ժողովին յարձակումներէն ազատուած Թէվֆիգ փաշա լայն շունչ մը առնել կը կարծէր, բայց այս անգամ ալ հետզհետէ աքսորավայրերէն վերադարձող «Ազատական» կուսակցութեան պատկանողները, մասնաւորապէս չէյխերու եւ հոճաներու խումբակին եւ նորելուկ «Հաշտութիւն եւ Խաղաղութիւն» կուսակցութեան յարձակումներուն կ'ենթարկուէր:

Այս նորածին ընդդիմադիրները Իթթիհատ եւ Թէրագըրի մեռած բարոյականին, գիտութեամբ կամ անգիտութեամբ ուժ եւ կեանք կու տային:

Նոյնիսկ համբաւաւոր Էմմանուէլ Գարասու էֆէնտին՝ Շէյխ Չէյն էլ Ապետին էֆէնտին ի պատիւ խնճոյքներ սարքելով եւ անոր նիւթական պէտքերը հոգալով, զայն ուզած կողմը դարձնելու կ'աշխատէր:

Շէյխ Չէյն էլ Ապետին եւ Խոճա Մուսթաֆա Սապրի էֆէնտիններ թագաւորական ապարանք մուտք գործած եւ թագաւորին՝ Սուլթան Մուհամմէտ Վահիտետին Խան Չ. ի մօտ դիրքի եւ հեղինակութեան տիրացած էին:

Թէվֆիգ փաշա ալ յենուելիք զօրաւոր խմբակ մը կամ կուսակցութիւն մը կը փնտռէր եւ «Ազատականները», մասնաւորապէս չէյխերն ու հոճաները յարմար չէր տեսներ: Այս ընդդիմադիր ճանչցուած խմբակներուն յարձակումները ամէն պետական գործ հսկողութեան տակ առած յաղթական տէրութեանց ներկայացուցիչներուն, Թէվֆիգ

փաշային եւ անոր դահլիճին անդամներուն շուրջ աննպաստ կարծիք կազմել կուտար:

Թէվֆիզ փաշա ընդդիմադիրներուն այս յարձակումը մեղմելու համար, աքսորավայրէն վերադարձող Ազատական կուսակցութեան երկրորդ եւ երրորդ կարգի անդամները յարմար պաշտօններու մէջ տեղաւորել սկսած էր, սակայն ասիկա սոյն կուսակցութեան պատկանող շէյխերն եւ հոճաները չէր գոհացներ:

Թէվֆիզ փաշա քանի մը անգամ ալ իր դահլիճին անդամները փոխելու հարկադրուած էր, եւ ազատօրէն գործելու համար ալ Նախարարաց Խորհուրդի որոշումով, Իթթիհատ եւ Թէրազզըին Պոլիս գտնուող պարագլուխներէն 63 հոգի ձերբակալել տուած էր: Ասոնց մէջ կը գտնուէին նախկին Վարչապետ Իշխան Սախա Հայիմ փաշա, Վէհիպ փաշա, Միտհատ, Շիւքրի, Քիւշիւք Թալաթ եւ Ճէւատ պէյերու նման ծանօթ եւ կարեւոր անձնաւորութիւններ:

Իբր պատերազմի պատասխանատու եւ հայերու տեղահանութեան եւ ջարդին գործակից բանտարկուած այս անձերուն անմիջապէս դատուելուն եւ պատժուելուն համար ալ, Հայրէթ փաշայի նախագահութեամբ բարձրագոյն զինուորական Ատեան մը կազմել տուած եւ ասոնց մօտ ալ ոճրադատ Ատեան մը նշանակած էր:

Թէվֆիզ փաշային այս քայլը հանրային կարծիքին եւ յաղթական տէրութեանց ներկայացուցիչներուն մասամբ վստահութիւն ներշնչած եւ թագաւորին մօտ ազդեցութիւն ունեցող շէյխերն ու հոճաները առժամեայ կերպով լռեցուցած էր. սակայն Հայրէթ փաշան պաշտօնակալութեամբ գործի սկսելուն եւ արագ, կտրուկ եւ հաստատ գործ տեսնել չհամարձակելուն, Թէվֆիզ փաշայի հակառակորդները կրկին անոր մասին աննպաստ բրորականտի սկսան:

Հակառակորդներուն վերսկսած խիստ յարձակումները, յաղթական տէրութեանց ներկայացուցիչներուն Թէվֆիզ փաշային հանդէպ ունեցած անվստահութիւնը զօրացուցած էր:

Մուսթաֆա Սապրի էֆէնտի սնանկ վիճակի մէջ գտնուող պետական գանձէն իբբ իր տարագրութեան փոխ հատուցում՝ 15 հազար ոսկի քաշած էր: Շէյխ Զէյն էլ Ապետին էֆէնտին ալ Գոնիա եւ Պոզ Իբր գտնուող աղօթատեղիներուն նորոգութեան համար հարկ եղած դրամը ստացած էր:

Շէյխեր եւ հոճաներ այս անգամ գործին աւելի փա-



րած էին: «Փէյամ», «Սապահ» եւ «Ալէմտար» թերթերը ձեռք ձգած էին, «որուն որ հացը ուտէ՝ զայն փառաբանող» Իթթիհատ եւ Թէրազզըն՝ մասնաւորապէս Սուրիոյ դահիճը ձէմալ փաշան գովաբանող Սիւլէյման Նազիֆ պէյն ալ իրենց ափին մէջ առնելով, ասոնց միջոցաւ «փրկուի՞նք միակ միջոցը կուսակցութիւնները լքել եւ թագաւորին շուրջ համախմբուելու» ծրագիրը առաջ քշելով ժողովուրդը շուարումի մատնած էին:

Երբ ամբողջ աշխարհ դէպի հանրապետութիւն կ'ընթանայ եւ յաղթական տէրութիւններուն միապետները փախուստ կու տան, առաջ քշուած «փրկուի՞նք միակ միջոցը կուսակցութիւնները լքել եւ թագաւորին շուրջ համախմբուելու» ծրագիրը, Իթթիհատ եւ Թէրազզըին ուժ տուած եւ ժողովուրդին մօտ թագաւորին բացարձակ միապետութեան առիթ չտալու զգացումը արթնցուցած էր:

Շէյխերը եւ հոճաները այս անգամ աւելի լաւ գործի փարած էին: Անոնք թագաւորը համոզած էին, որ Տամատ Ֆէրիտ փաշայի նախագահութեամբ «Ազատականներու» հետ խառն դահլիճ մը կազմուի:

Այս դահլիճին մէջ Մուսթաֆա Սապրի էֆէնտին (այն Սապրի էֆէնտին, որ Սուլթան Համիտի ժամանակ կրօնական գործոց Աւագ Քարտուղար էր եւ պալատին «պատաններուն համբ» տակաւին չէր մոռցած), Շէյխ իւլ Իսլամ պիտի նշանակուէր, իսկ Կէմլէրիկի մէջ նպարավաճառ եղած Ձէյն էլ Ապիտին էֆէնտին ալ Մերակուտական պիտի դառնար եւ «Ազատական» կուսակցութեան նախագահ ընտրուելով՝ Նախարարաց Խորհուրդն ալ իր հսկողութեան պիտի ենթարկէր:

Թէվֆիզ փաշա այս հոսանքին ընդդիմութիւնը իր արժանապատուութեան դէմ գտաւ: Այդ պահուն Իթթիհատական բանտարկեալներէն, Անգարայի կուսակալ եւ Տիգրանակերտի հայերուն ջարդի կազմակերպիչ Րէշիտ պէյին փախուստը իր դիրքը բոլորովին խախտեց, եւ այս խառնակ եւ յոգնեցուցիչ գործէն ազատելու համար, իր հրաժարականը տուաւ:

\* \* \*

Թէվֆիզ փաշայի հրաժարումէն ետք, նոր դահլիճին կազմութիւնը Տամատ Ֆէրիտ փաշային յանձնուած էր:

Այս դահլիճին թէեւ ամբողջովին «Ազատականներու դահլիճ» չէր կրնար ըսուիլ, սակայն Ազատականներու մեծամասնութենէն եւ Ֆէրիտ փաշայի կառավարութեան գործունէութենէն կը հասկցուէր՝ որ Ազատական կուսակ-

ցութիւնը պատասխանատու պիտի նկատուէր:

Ազատականներու յայտնի դէմքերէն խոճա Մուսթաֆա Սապրի՝ Շէյխ-Իւլ-Իսլամութեան, Ճէմալ՝ ներքին, Իսմայել Սատք՝ Արդարութեան, Վասֆի՝ Կալուածոց, Ալի Քէմալ՝ Կրթական, Էտհէմ՝ Երկրագործական, Մուհամէտ Ալի՝ Փոսթ եւ հեռագրական նախարարութիւններուն մաս կազմելու հրաւիրուած էին:



«Սրբազան պատերազմի» (Ճիհադ) հանդիսաւոր հոշակումը

Պետական ժողովին հրաւիրուած ծերակուտական Սէլիա Ապտիւլ Գատիր էֆէնտին ալ «Քիւրախատանի Բարձրացման Միութեան» առաջնորդն էր:

Կառավարութիւնը Ազատական կուսակցութենէն կազմուած չէր, սակայն Ազատականներու վերսյիշեալ դէմքերուն հետ աշխատակցել յանձն առած ըլլալուն, Տամատ Ֆէրիա փաշայի կառավարութեան զործունէութեան հաւասարապէս պատասխանատու նկատուելին րացորոշ էր:

Տամատ Ֆէրիա փաշա իր կառավարութիւնը սոյն դէմքերով կազմած եւ ներքին քաղաքականութեան մէջ Իթթիհատ եւ Թէրազպրին իրր հակառակորդ ներկայացած էր:

Այս միջոցին Եւրոպա եւ Ամերիկա գտնուող Թուրքիոյ ոչ-իսլամ սարրերը, մասնաւորապէս հայեր, Օսմանեան տէրութեան պատերազմէն վերջ մնացած հողերու

բաժանման ձգտող խիստ բրորականտի մը սկսած էին:

Տրապիզոնի եւ շրջակայքի յոյները՝ Պոնտոսեան անկախութեան, Յունաստանի նշանաւոր վարչապետ Վենեզելոս՝ Իզմիրի եւ շրջակայքին յանուն Համաձայնականներու գրաւման, հայերն ալ Երեւանի հանրապետութեան ձրգուած հողերով չգոհանալով, Արեւելեան նահանգները, Քիւրտիստանը եւ Կիլիկիան պարունակող ընդարձակ Հայաստանի մը կազմութեան երեւակայութեամբ՝ Փարիզ գումարուող հաշտութեան Վեհաժողովը կը ձանձրացնէին:

Վերջապէս քաղաքական փառասիրութիւնները արթնցած եւ կարծիքները տակն ու վրայ ըրած էին: Ազա Օզլու Ահմէտ՝ այս կացութիւնը բացէ բաց չի նկարագրեր, չուզելով ունէ մէկը վիրաւորել: Ան անորոշ խօսքեր կ'ընէ. անիրաւօրէն Օսմանեան իշխանութեան եւ խալիֆայութեան վրայ կը յարձակի, այս կացութեան եւ անոր պատճառ եղողները չի փնտուեր, իրեն պատկանած Իթթիհատ եւ Թէրազըրին գործած աւերները Օսմանեան գահակալներուն, սահմանադրութեան հռչակումէն ետք ձեռքերը կաշկանդուած թաղաւորներուն կը վերադրէ: Իբր թէ Գերմանիոյ հաշտոյն Թուրքիան պատերազմի մ'դողը եւ պատերազմի ընթացքին կատարուած տեղահանութիւնը, սպաննութիւնը եւ այլ վայրապութիւնները գործադրել աուողը թաղաւորները եղած են. «Ասիկա մեծ անիրաւութիւն եւ պատմութեան դաւաճանել է», կ'ըսէ Ազա Օզլու Ահմէտ:

Ասով հանդերձ, Ազա Օզլու Ահմէտ փայլուն բառերով իր նոր տէրը գովելու ժամանակ անդդալարար եւ կամ գիտակցարար գայն կ'ամբաստանէ. իբր թէ Մուսթաֆա Քէմալ փաշա Անատոլու չանցած, Պոլիս գտնուած պահուն կառավարութեան դէմ բմբոստանայ ուզած եւ այս նպատակով Անատոլու անցած եւ Ազդ. իշխանութիւնը ապահովող բացարձակապէս անկախ նոր թրքական տէրութեան մը կազմութիւնը փափաքած է:

Մինչդեռ գնդապետ Մուսթաֆա Քէմալ փաշան Անատոլու գրկողը Ֆէրիտ փաշայի կատաւարութիւնը եղած է: Ասոր ուժ աուողն ալ Սուլթան Մուհամմէտ Վահիտեալին. Անոր տրուած պաշտօնը երեւութապէս բանակի քննիչ, իսկ իրականութեան մէջ բանակէն անկախ պահեստի ուժ մը պատրաստել էր:

Բ. Դուռը անոր ընդարձակ իրաւասութիւն աուած եւ թաղաւորն ալ առանձինն գրութիւն մը յանձնած էր:

Արդեօք Ազա Օզլու Ահմէտին կրնա՞նք հարցնել թէ, եթէ թաղաւորը մասնաւոր գրութիւն մը եւ Բ. Դուռն ալ

լայն իրաւասութիւն տուած չըլլար, դնդապետ Մուսթաֆա Քէմալ փաշա իր առաջին քայլին Անատոլուի մէջ ի՞նչ կրնար ընել, քանի՞ հոգի կրնար համոզել:

Այս կէտը քիչ մը պարզել կարելոր ըլլալուն, Մուսթաֆա Քէմալ փաշային Անատոլու զրկուելէն առաջ տեղի ունեցած դէպքերը նկարագրել հարկ կը տեսնենք:

Թէվֆիգ փաշա երբ Վարչապետ եղաւ, Պատերազմական Նախարարը Մուսթաֆա Րէշիտ փաշան էր. զինադադարի ստեղծած կացութեան պատճառաւ տէրութիւնը իրապէս դժուար կացութեան մասնուած էր. տակաւին հաշտութեան պայմանագիրը չէր ստորագրուած, արտաքին յարաբերութիւնները չէին սկսած, համաշխարհային դիւանագիտութեան կեդրոնը եղող Լոնտոնի, Փարիզի, Հռովմի եւ Վաշինկթընի մէջ տեղի ունեցող անցուղարձեւէն միայն մամուլէն կարելի էր տեղեկանալ. այս երկիրներու դահլիճներուն մէջ դումարուող ժողովներէն, արտաքին նախարարութիւններու սրահներուն մէջ տեղի ունեցող քաղաքական խօսակցութիւններէն Օսմանեան կառավարութիւնը բան չէր իմանար:

Կառավարութեան այսպէս բնդհանուր քաղաքականութեան հետեւելէ զուրկ դառնուած պահուն էր, որ Եւրոպայի եւ Ամերիկայի կարելոր թերթերը մեծ Հայաստանի մը կազմութեան բրորականտը կը մղէին:

Անկախ Հայաստանի սահմանը՝ Տրապիզոնի նահանգին մէկ մասը, Կարնոյ, Վանի, Պիթլիսի, նոյնիսկ Խարբերդի եւ Տիգրանակերտի նահանգները, Ուրֆան, Մարաշը եւ Կիլիկիան պարունակելով եւ Սերաստիոյ մէկ մասնալ աւելցնելով մինչեւ Միջերկրական ծով պիտի երկարէր:

Բ. Դուռը այս բրորականտը եւ այս ծրագրին ջատագովներուն մէջ կարելոր դիւանագէտներուն ներկայութիւնը տեղեկանալուն, փոխադարձ բրորականտ մը ընելու հարկը զգացած եւ Արեւելեան նահանգներու կարելոր անձնաւորութիւնները Արտաքին Նախարարութեան մօտ դադարի ժողովի մը հրաւիրած էր: Սոյն ժողովին սրոշուած էր, որ «Արեւելեան նահանգներու Իրաւանց Պաշտպան» Միութիւն մը կազմուի եւ անոր իրր օրկան Սիւլէյման Նազիֆ պէյին հրատարակած «Հատիսաթ» թերթը վարձուի:

Զուրիցերիա չէզոք երկիր մը ըլլալուն, հոն ալ Քրանսերէն թերթ մը պիտի հրատարակուէր եւ ի հարկին քաղաքական կարելոր կեդրոններու՝ մասնաւոր պատուիրակութիւններ պիտի զրկուէր, եւ պիտի տեղեկացուէր, թէ օտար վիճակագրութիւններու համաձայն, հայերուն տրուե-



Գերմանիայի ժամօր հայասեր՝  
ՎԵՐ. ԵՈՒՀԱՆՆԷՍ ԼԵՓՍԻՈՒՍ

իր նահանգներու մէջ հայկական մեծամասնութիւն գոյութիւն չունի: Եւրոպայի հանրային կարծիքը յուսարանելու պաշտօնը սոյն միութեան արուած էր և իր ծախք 50,000 ոսկիի գումար մըն այ վճարուած էր:

Այս առաջադրութեամբ կազմուած «Արևելեան Նահանգներուն Իրաւանց Պաշտպան» միութիւնը իր կազմութեան նախօրեակին կարևոր դարձ մը չէր կրցած ականել, միայն Տրապիզոնի և Կարնոյ մէջ մասնաճիւղեր յաջողած էր կազմել:

Ինչպէս նախապէս յիշեցինք, ևրբ Թէվֆիզ փաշա Յարտ 1919ին հրամարած և տեղը Տամատ Ֆէրիա փաշա անցած էր Արտաքին Նախարարութիւնն այ ստանձնելով, «Արևելեան Նահանգներու Իրաւանց Պաշտպան» միութիւնը՝ Ֆէրիա փաշայի մօտ մտնաւոր պատու իրակութիւն մը դրկած էր:

Ֆէրիա փաշային այցելող պատու իրակութիւնը Միութեան կազմութեան պատճառները, Թէվֆիզ փաշայի կառավարութեան սոյն միութեան բրած օժանդակութիւնները թուելով, իր այ հովանաւորութիւնը խնդրած էր: Տամատ Ֆէրիա փաշան խնդրին կարևորութիւնը ըմբռնելով, իր նախորդին սկսած այս կարևոր դարձին առաւելայոյն

չափով օժանդակել խոստացած եւ պատուիրակութիւնը դո՛ւ ձգելով, խնդիրը թաղաւորին տեղեկացուցած էր:


Այս ժամանակ Իթթիհատ եւ Թէրազզըի անպաշտօն մնացած սպաները՝ «Մահիկ-Աստղ» անունով զաղտնի միութիւն մը կազմած եւ անոր նախագահութեան՝ նախկին «Կայծակ» զօրաբաժիններու հրամանատար զնդապետ Մուսթաֆա Քէմալ փաշան հրաւիրած էին:

Այս միութեան ծրագիրը՝ Օսմանեան Տէրութեան բաժանման նպատակով կատարուած օտար դրաւումները արգելել եւ ընդհ. պատերազմի ընթացքին բանակին կրած պարտութիւնը եւ անպատուութիւնը բառնալու աշխատիլ էր:

Սուլթան Մուհամմէտ Վահիտետին Խան Զ., այս միութեան կազմութեան տեղեկացած էր: Գահաժառանգութեան շրջանէն ի վեր իր թիկնապահը եղող զնդապետ Մուսթաֆա Քէմալ փաշային սոյն միութեան նախագահը ըլլալէն դո՛ւ ըլլալով՝ բրորականտի նուիրուած «Արեւելեան Նահանգներու Իրաւանց Պաշտպան» այս միութիւնը քաջալերած էր:

Թաղաւորին փափաքին վրայ «Մահիկ-Աստղ» զինուորական միութիւնը՝ իր անդամներէն Յ հոգիի պաշտօն տուած էր, որ «Արեւելեան Նահանգներու Իրաւանց Պաշտպան» միութեան հետ յարաբերութիւն մշակէ: «Մահիկ-Աստղ» զինուորական միութեան այս պատուիրակութիւնը «Արեւելեան Նահանգներու Իրաւանց Պաշտպան» միութեան հասկցուցած էր, թէ բրորականտը արգիւնաւորելու համար միացեալ ճակատի կը կարօտի. եթէ Բ. Դուռը ըստիպուի Արեւելեան Նահանգները Հայաստանի միացնող դաշնագիր մը ստորագրել, այս նահանգներուն վրայ Հայաստանի կառավարութեան ունենալիք իշխանութիւնը պէտք չէր ճանչնալ եւ ի հարկին զէնքի դիմելով, պաշտպանութեան համար այժմէն Արեւելեան Նահանգներու մէջ զինուած ուժի մը պատրաստութեան աշխատիլ: Ապա փաստերով ցոյց տուած էր, որ Եւրոպական տէրութիւնները՝ Հայաստանին կցուելիք այս հողամասին մէջ հայերուն գերիշխանութիւնը պաշտպանելու համար ուժ պիտի չկրնային զրկել:

Համոզած էին նաեւ, թէ Արեւելեան Նահանգներու մէջ պատրաստուելիք այս ուժով՝ կարելի է տակաւին նորակազմ եւ հայերու Դաշնակցութիւն կուսակցութեան վարչութեան տակ դառնուած Երեւանի կառավարութեան բանակները ցրուել:



### Ուիլսոնեան Հայաստանի սահմանները

«Մասիկ Ասուր» լինությունյան լիազմեան գառաւորակներուն ալ ծրագրերը, «Արեւելեան լուսաւոյններ» Քլաւանց Պաշտպան» միութեան լոգոսէ զեաւաստեայ եւ իւրացուելով անոր գործադրութիւնն կաւարկէ:

Սուլթան Մուսթաֆա Վախաբեան Սան Չիքիկնապահներէն զնդապետ Մուսթաֆա Քէմալ Քաթիբ խաթապարի կնքումէն ետք Ռթիկուս Վախաբեան լոգոսէ զամենբնուցիւններուն փարչեպետն զիս Վախաբեան լոգոսէ զամենբնուցիւններուն փարչեպետն եւ իւրացում է Արեւելեան նասանդներու մէջ Մուսթաֆա Քէմալ լուսաւան արութեամբ ու ժողովապետեան զրկին լուսաւաբութեան տիրանալ շեւեալար Պատարապետեան նախարար վարդի Մարաշախա Շուրիք փաշայի լիամտութենէն եւ Ներութենէն, պետական գանձի նախարար՝ Րէֆիգ պէյի՝ ապահովութենէն, փարչապետ Տամաս Սերիա փաշայի՝ գաշտունականութեան բժախնդրութենէն եւ Սուլթան Մուսթաֆա Վախաբեանին Սան Չիքիկն Մուսթաֆա Քէմալ փաշային հանդէպ հինաուրց փոստուրիստեան Վախաբեանի զգտուելով՝ զնդապետ Մուսթաֆա Քէմալ փաշային Վախաբեանի քննիչի հանգամանքով եւ բնդարձակ իրաւասութիւններով Անատոլու զրկուիլը արշուած էր Աւելին պետական գանձէն զազանի փարկերու հաշտին հարիւր հազար ոսկիի գումար մը եւ թագաւորական գրութիւն մը յանձնուած էր:

Ազատական կուսակցութիւնը Ռթիկուս եւ Ռէրագ-

զըին այս խաղը չէր կրցած հասկնալ, իրարու հետ վիճելէն շուրջերնին չէին տեսած եւ իրենց նախկին յիմարութիւնները շարունակած էին: Գնդապետ Մուսթաֆա Քէմալ փաշային տրուած 14 Մայիս 1919ի թագաւորական հրովարտակին պատճէնը.—

«Ընդհանուր պատերազմին Համաձայնականներու ի նպաստ վերջանալովը ստեղծուած քաղաքական կացութիւնը՝ մեր նախահայրերուն երկիրը եւ գահը դժուարին եւ վտանգաւոր վիճակի մը մատնած է: Կառավարութեանս որոշման համաձայն, Ձեր նշանակուած շրջանին մէջ պէտք է խաղաղութիւնը ապահովել, թագաւորական փափաքիս հակառակ խնդիրներուն ծագումը արգելել եւ ազգիս անդորրութիւնը եւ միակամ աշխատիլը՝ կայսերական ողջոյններու հետ, զինուորականներուն, ժողովուրդին եւ պաշտօնեաներուն հաղորդել»:

Մուսթաֆա Քէմալ փաշային՝ պաշտօնով Անատոլու վրկուած ժամանակ, գաղտնապէս անոր տրուած այս թագաւորական հրովարտակը, այն ատեն թէեւ տարածայնուած էր, սակայն թէ՛ պալատական շրջանակին եւ թէ՛ Մուսթաֆա Քէմալ փաշային եւ բարեկամներուն միջեւ այս մասին խիստ գաղաւննապահութիւն տիրելուն, այս տարածայնութեան ստոյգ կամ սուտ ըլլալը որեւէ ձեւով չէր հասկցուած եւ նոյնիսկ Մուսթաֆա Քէմալ փաշային հանրապետութեան «Հալք» կուսակցութեան ակումբին մէջ արտասանած եւ ապա գրքոյկի ձեւով հրատարակուած երկար ճառերու մէջ, այս գրութեան մասին ակնարկութիւն չէր եղած:

Հանգուցեալ Սուլթան Մուհամմէտ Վահիտետտին Խան Զ., իր մահէն քանի մը ամիս առաջ, Սան Րէմոյէն այս հրովարտակին պատճէնը եւ կարգ մը այլ փաստաթուղթեր հրատարակութեան համար՝ Հալէպ գտնուող Գատր-Քէօյի քաղաքապետութեան դիւանատան նախկին տնօրէն եւ յարգելի բարեկամներէս Րատի Ազմի պէյին դրկած ըլլալուն, ուղեցի նոյնութեամբ արձանագրել եւ պատմութեան կարեւոր փաստաթուղթ մը նուիրած ըլլալ:

Ցարդ թերթերու էջերուն չյանձնուած այս կարեւոր պատմական փաստաթուղթը, որոշ կերպով ցոյց կու տայ, թէ Անատոլուի պաշտպանութեան կազմակերպութեան պատրաստութեան պատիւը որո՞ւն կը վերաբերի:

\* \* \*

Գնդապետ Մուսթաֆա Քէմալ փաշա, Պոլիս գտնուող յայլթական տէրութեանց գրաւման բանակներուն առանց



զղացնելու՝ 14 Մայիս 1919ին Պոլսէն դէպի Սամսոն ճամբայ ելած էր:

Գնդապետ Մուսթաֆա Բէմալ փաշային այսպէսով Պոլսէն մեկնելուն երկրորդ օրը, 15 Մայիս 1919ին Դշ. առաւօտուն, Համաձայնական տէրութեանց ներկայացուցիչները Բ. Դրան յուշագիր մը կու տային, որով կը տեղեկացուէր, թէ Իզմիրը Համաձայնականներուն մաս կազմող Յունաստանի կողմէ պիտի գրաւուի. նոյն ժամանակ Յունական զինուորներ փոխադրուլ նաւեր՝ Յունական եւ Համաձայնական մարտանաւերու պաշտպանութեան տակ Իզմիրը հասնելով, ցամաքահանումի սկսած էին:

Յոյները՝ Իզմիրի զինուորական գրաւման շրջանին՝ շատ աղեկ եւ կոշտ ծայրայեղութիւններ բրին: Անոնք կուսակալ Իզզէթ պէյը անարգած եւ քանի մը սպաներ նահատակած էին:

Յունաստանի կողմէն Իզմիր իրը Բարձր Դամիսէր զրկուած Իսթէրկիատիս՝ վարչական գործերու մէջ խիստ, դիւանապիտութեան մէջ ճկուն եւ ճարպիկ պետական մարդ մըն էր: Կուսակալ Իզզէթ պէյը անարգողները եւ քանի մը սպաները նահատակողները խիստ կերպով սրտոժած եւ կուսակալ Իզզէթ պէյին կուսակալութեան հանդամանքը ճանչնալով յայտարարած էր, թէ գրաւումը առժամակալ է. Այսպիսով մտքերը հանդարտեցնել յաջողած էր:

Պր. Իսթէրկիատիսին այս ընթացքը արտաքին ցոյց մըն էր. իրականութեան մէջ յոյները Իզմիրը եւ շրջակայքը իւրացնել կ'ուզէին:

Իզմիրի գրաւման դէմ բողոքող Տամատ Փէրիտ փաշայի դահլիճը, բողոքը ներկայացնելէն անմիջապէս ետք, հրատարած էր:

Սուլթան Մուհամմէտ Վահիտետտին Սան Ձ., յաղթական տէրութեանց Պոլսոյ ներկայացուցիչներուն Իզմիրի գրաւման առժամեայ ըլլալու մասին տուած բերանացի հաւաստիքներով գոհանալով, ծրագրուած Անատոլի շարժումը չձախողեցնելու համար, նոր դահլիճի կազմութիւնը կրկին Տամատ Փէրիտ փաշայի յանձնած էր:

Տամատ Փէրիտ փաշա, այս անգամուան դահլիճը կատարելապէս համերաշխ ցոյց տալու եւ կամաց կամաց Իթթիհատի մարդիկը պալատին մօտեցնելու համար, որտեղ որ ծանօթ դէմքեր կային, ամբողջն ալ իր դահլիճին մէջ առած էր:

Տամատ Փէրիտ փաշային այս 24 հոգինոց դահլիճին մէջ մտած անպաշտօն նախարարներ՝ ծանօթ բարձրաստի-

ճան անձնաւորութիւններ ըլլալով, դահլիճին մէջ խռովարարներ դարձած էին:

Բ. Դուռը Վէրսայլ հրաւիրուած ըլլալուն, Ֆէրիտ փաշա մէկ կողմէն հաշտութեան համար իր պայմանները դասաւորելու եւ տեղեկացնելու խնդիրներով, իսկ միւս կողմէն այս մեծ դահլիճին մէջ սկսած պառակտումները մեղմելու գործով զբաղած էր:



ՍԱԻՏ ՀԱԼԻՄ ՓԱՇԱ

\* \* \*

Մուսթաֆա Քէմալ փաշային Սամսոնի ճամբով Անատոլու զրկուելը, անոր մեկնումը օր մը ետք տեղեկացող Համաձայնական տէրութեանց ընդհ. հրամանատարութիւնը, անմիջապէս զայն հետապնդելու համար մարտանաւ մը զրկած էր զայն վերադարձնելու համար: Իր Սամսոնի ներկայացուցչին ալ, այդ գծով հրահանգած էր: Քէմալը ո՛չ ճամբէն եւ ո՛չ ալ սահմանէն վերադարձնել կարելի եղած էր:

Մուսթաֆա Քէմալ փաշա՝ Իզմիրի յոյներուն կողմէ զբաւուելը եւ իր դէմ ձեռնարկուած հետապնդումի մասին Սամսոնի մէջ տեղեկանալով, հոն բնակութիւնը վտանգա-

ւոր գտած եւ 25 Մայիս 1919ին իր 20ի մօտ ընկերներով  
Հանգէ փախած էր:

Իր ընկերներուն մէջ կը գտնուէին Տոքթ. Բէֆիզ,  
Իսրահիմ Թալի, Սիւրիյյա եւ Խուստիֆ պէյերը:

Իզմիրի յոյներու կողմէ գրաւումը եւ գրաւման մի-  
ջոցին յոյներու կողմէ գործուած ծայրայեղութիւնը Անա-  
տուլի ժողովուրդը յուզած էր:

Գնդապետ Մուսթաֆա Քէմալ փաշա, իր պաշտօնա-  
կան պարտականութիւնը մոռնալով՝ ժողովուրդին այս  
յուզումէն՝ իր անձնական եւ պատկանած կուսակցութեան  
հաշտոյն օգտուելու փոյթ կը տանէր:

Իր մօտ եղող Թազաւորական հրովարտակը եւ Բ.  
Դոնէն առած լայն իրաւասութիւնները Հանգէի երեւելի-  
ներուն ցոյց տալով՝ ասոնցմէ ստացած քաջալերութեամբ,  
28 Մայիս 1919ին, Հանգէի բոլոր խանութները դոցել տը-  
ւած եւ շրջակայ գիւղացիներն ալ հրաւիրելով դպրոցի շէն-  
քին առջեւ, մեծ միթինկ մը գումարած եւ իր արտասանած  
ճառին մէջ րոտած է.

«Թէ ազգային կազմակերպութիւն մը Թազաւորին  
կողմէն փափաքելի է եւ ինք Թազաւորին եւ Բ. Դրան կող-  
մէ այդ կազմակերպութիւնը յաջողցնելու պաշտօնով զրը-  
կուած է»:

Միթինկին վերջաւորութեան, տեղւոյն քաղաքապե-  
տին բնակարանին մէջ մասնաւոր նիստ մը գումարել տա-  
լով, «Իրաւանց Պաշտպան Միութեան» մասնաձիւղ մը  
հիմնելով, շրջակայքին իմաց տուած էր:

Զէպիր զատէ Ծուատ պէյի միջոցաւ ալ յայտարարել  
տուած էր, թէ բոլոր Թուրքերը, ամէն դնով իրենց հայ-  
րենիքը եւ ազգը, մասնաւորապէս օտար ազդեցութեան եւ  
դերութեան տակ ինկած Թազաւորը եւ մարդարէին փո-  
խանորդը փրկելը, ազգային եւ կրօնական պարտականու-  
թիւն մը ըլլալուն, զինուելով հրամանի պէտք է սպասեն:

Արտասանուած ճառերուն մէջ յազթական տէրու-  
թեանց հասցէին խիստ անարգական բառեր խօսուած էին:

Զինուորական միտրանոցները բացուելով, պատրաստ  
զէնքերը ժողովուրդին եւ գիւղացիներուն բաժնուած էր:  
Նոյնիսկ 7 Յունիս 1919ին, Տիզրանակերտի մէջ անգլիա-  
ցիներու հսկողութեան տակ դրուելու սահմանուած հա-  
զարաւոր զէնքեր գրաւուած էին:

Պուլիս գտնուող յազթական տէրութեանց ներկայա-  
ցուցիչները, Հանգէի անցուղարձերը բոլոր մանրամասնու-  
թեամբ տեղեկացած եւ Բ. Դրան ազդարարած էին որ, եթէ

այս ընթացքը շարունակուի, այդ շրջանն ալ զինուորական գրաման տակ պիտի առնուի:

Բ. Դուռը մէկ կողմէն Համաձայնական տէրութեանց ներկայացուցիչները համոզելու եւ քննարկելու կ'աշխատէր, միւս կողմէ ալ Մուսթաֆա Բէմալ փաշային կը գրէր. —

«Պաշտպանութեան վերաբերեալ պատրաստութեանց սկիզբին իսկ, յայթական տէրութիւններուն կաակած ներշնչելիք ծայրայեղ արարքներէն պէտք է խուսափել, թէ կառավարութեան պաշտօնական զինուորական քննիչին հրապարակային ելոյթներն ու արարքները Բ. Դուռը գրծուարին կացութեան կրնայ մասնել, եւ թէ հեռատեսութեամբ պէտք է շարժիլ: Սակայն Մուսթաֆա Բէմալ փաշա չէր պատասխանած եւ ծայրայեղութիւնները ծանր աստիճանին հասցուցած էր:

Յայթական տէրութեանց ներկայացուցիչները, երբ Բ. Դրան տեղեկացուցին, թէ այդ շրջանը զինուորական գրաման տակ առնելու պիտի ստիպուին, վարչապետ Տամաա Ֆէրիտ փաշա՝ Մուսթաֆա Բէմալ փաշային հեռագրած էր որ Պոլիս վերադառնայ, սակայն այս հեռագրին ալ պատասխան չէր ստացուած:

Մուսթաֆա Բէմալ փաշա կացութեան փափկութիւնը բարձնելով՝ 13 Յունիս 1919ին Հանդէն լքելով Ամասիա եկած էր: Ամասիոյ մէջ, յետագային Բաֆէթ փաշայի կողմէ հրապարակուածին համաձայն՝ գնդապետ Փէրթիվ պէյին բնակարանին մութ սենեակին մէջ ընկերներով ժողով մը գումարած է եւ 1909ին Սեյանիկի Համաժողովին Իթթիհատ եւ Թէրապզըին Կողմէ լուրացուած ՈՒՆՏԻ հիման վրայ, Անատոլիոյ մէջ նոր եւ անկախ թրքական կառավարութեան մը ստեղծումին համար հետապնդուելիք ընդհ. գիծերը որոշելէն ետք, Կարին գումարուելիք Արեւելեան Նահանգներու համագումարին ներկայ գտնուելու համար Սերասիոյ ճամբով մեկնած էր:

Բ. Դուռն ալ Մուսթաֆա Բէմալ փաշային այս ծայրայեղութիւններուն հետևանքով դժուարին կացութեան մատնուած էր: Անոր զրկուած հեռագիրներուն պատասխանը ստացած չրոյալուն՝ վստահութիւնը խախտած էր: Անոր ուր գտնուելն չգիտնայնուն համար, այդ միջոցին Ներքին Գործոց Նախարարութեան պաշտօնը վարող Ալի Բէմալ պէյին կողմէ, 23 Յուլիս 1919-ին Սերասիոյ, Կարնոյ, եւ շրջակայ նահանգներուն կը հրահանգուէր, թէ Մուսթաֆա Բէմալ փաշա պաշտօնանկ եղած է եւ ամէն գնով պէտք է գայն Պոլիս վերադարձնել:

ՆԱՀԱՏԱԿ ՀԱՅ ԳՐԱԳԻՏՆԵՐ



ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ



ՍԻԱՄԱՆԹՕ



ՄԵԼԿՈՆ ԿԻՒՐՃԵԱՆ (ՀՐԱՆԴ)



ՌՈՒԲԷՆ ՍԵԻԱԿ

\* \* \*

Մուսթաֆա Քէմալ փաշա այս պատմական օրերու անցուգարձերուն մասին տարօրինակ դէպք մը կը հրապարակէ: Օրուան կացութիւնը կարենալ հասկցնելու համար, իր խօսքերը նոյնութեամբ արձանագրել հարկ տեսանք. Մուսթաֆա Քէմալ փաշա կ'ըսէ. —

«Ներքին Նախարար Ալի Քէմալ պէյին տուած հրամանին օրը՝ 13 Յունիսին, Ալի Ղալիպ պէյ անուն անձ մը 10ի չափ ընկերներով Սերաստիա կը գտնուի եղեր: Այս անձը Կ. Պոլսէն իբր Խարբերդի կուսակալ զրկուած գնդապետ Ալի Ղալիպ պէյն է, որ իբր նահանգապետ՝ քաղաքային պաշտօնները իր հետ կը տանէր:

«Ալի Ղալիպ իր ճամբուն վրայ Սերաստիա կանգ առած, (անոր մասնաւոր պաշտօն մը ունեցած ըլլալուն պէտք չէր կասկածիլ), հոն անմիջապէս զօրաւոր համակիրներ գտած եւ իր պաշտօնը կիրարկելու համար միջոցներ ձեռք առնելով՝ Սերաստիոյ փողոցներուն մէջ իմ դաւաճան, ըմբոստ եւ վնասակար մէկը ըլլալու մասին պատերուն վրայ յայտարարութիւններ փակցուցած էր: Ան օր մըն ալ Սերաստիոյ կուսակալ Բէշիտ փաշային մօտ երթալով ներքին նախարարութեան հրահանգին մասին խօսք բանալով հարցուցած է թէ, եթէ Քէմալ Սերաստիա դայ, հետս ի՞նչպէս պիտի վարուի:

«Բէշիտ փաշա հարցուցած էր, թէ ի՞նչ կերպ պէտք է վարուի: Ալի Ղալիպ պատասխանած է թէ՝

«— Եթէ ես Ձեր տեղը ըլլայի, անմիջապէս ձերբակալելով կը բանտարկէի, պէտք է որ դուք ալ այսպէս ընէք:

«Բէշիտ փաշա ասոր այսչափ պարզ գործ մը ըլլալուն չհաւատալով, խորհրդակցութիւնը երկար ժամանակ շարունակած, խորհրդակցութեան մասնակցողներ շատցած եւ նոյնիսկ կարգ մը մարդիկ արուելիք որոշումը հասկնալու համար հոն հաւաքուած են:

«Այսօր Յունիսին 27րդ օրն է. ակնարկնիս ժամանակի մը համար այս էջէն վերցնելով Ամասիա դարձնենք:

«Ամսոյն 23-ին, Սերաստիոյ մէջ իմ անձիս մասին աննպաստ եւ կտակածելի վիճակ մը ստեղծուած ըլլալը տեղեկացայ: 25-26 Յունիսի երեկոյեան, թիկնապահս Ճէփատ Ապպաս պէյը կանչեցի եւ ըսի, որ առտու շատ կանուխ Ամասիայէն դէպի հարաւ պիտի մեկնինք, եւ մեր այս մեկնումը գաղտնի պահելու պայմանաւ, հրամայեցի պատրաստութիւններ տեսնել:

«Միւս կողմէ Ծրդ՝ զօրաբաժնի հրամանատարին եւ իմ սպայակոյտի՝ հետ հետեւեալ գաղտնի միջոցառումները որոշեցինք Ծրդ զօրաբաժնի հրամանատարը, անմիջապէս իր զօրաբաժնէն ընտրուած սպաներէ եւ զինուորներէ զօրաւոր հեծեալ զօրախումբ պիտի պատրաստէր:

«Ես, 26 Յունիսին, առտու կանուխ, ընկերներովս եւ ինքնաշարժերով Թոգատ պիտի մեկնէի, իսկ զօրախումբը պատրաստուելուն՝ Թոգատի վրայով Ամասիա պիտի դըրկուէր եւ հետս յարաբերութեան պիտի մտնէր: Մեր մեկնումը ո՛չ մէկ տեղ պիտի հեռագրուէր եւ կարելի եղածին չափ Ամասիոյ մէջ իսկ պիտի չտարածայնուէր:

«26-27ի գիշերը հոն անցուցի, 27-ին Սերաստիա մեկնեցայ: Ինքնաշարժով Թոգատէն Սերաստիա մօտաւորապէս 6 ժամ է:

«Թոգատէն մեկնումս Սերաստիոյ կուսակալին հեռագրեցի եւ ստորագրութեանս տակ «բանակի քննիչ» տիտղոսը դրի:

«Հեռագրիս մէջ մեկնումիս ժամը յիշած էի. սակայն այնպէս մը կարգադրեցի, որ հեռագիրս մեկնումէն վեց ժամ վերջ պիտի տրուէր եւ մինչ այդ ո՛չ մէկ կերպով Սերաստիա պիտի տեղեկացուէր:

Հիմա մեր ակնարկը նորէն Քէմալի Սերաստիա ձգած էջին վրայ դարձնենք:

«Ալի Ղալիպ պէյի եւ Բէշիտ փաշայի միջև ինձի հանդէպ որդեգրուելիք հարցին շուրջ վիճաբանութեան տաք շրջանին՝ Թոգատէն տուած հեռագիրս Բէշիտ փաշային կը յանձնեն: Բէշիտ փաշան ալ անմիջապէս Ալի Ղալիպ պէյին կու տայ եւ կ'ըսէ՝

«— Ահաւասիկ ինքը կու գայ, հրամմեցէք, ձերբակալեցէ՛ք:

«Բէշիտ փաշա հեռագրին մէջ նշանակուած ժամը տեսնելուն իր ժամացոյցը կը հանէ եւ կ'աւելցնէ.

«— Ոչ թէ կու գայ, այլ եկած պէտք է ըլլայ:

«Ասոր վրայ Ալի Ղալիպ պէյ ըսած էր որ՝

«— Ես ըսել ուզեցի որ, եթէ իմ նահանգիս շրջանակին մէջ ըլլար, կը ձերբակալէի:

«Ասոր վրայ ժողովականները յանկարծակիի գալով ամէնքը միաբերան՝

«— Ուրեմն դիմաւորելու երթանք, ըսելով ժողովը կը վերջացնեն եւ նկատի առնելով որ Երեւելիներով, ժողովուրդով եւ զինուորներով փայլուն ընդունելութիւն մը ընելու համար ժամանակ պէտք է եւ սակայն իմ Սերաստիոյ

դռներուն առջեւ հասնիլս հաշուելով գոնէ քաղաքին մօտ երկրագործական տիպար Ագարակին մէջ քիչ մը հանդարտեցնել կը խորհին, կուսակալը բանակատեղիին առողջապահական տնօրէնը եղող եւ նախապէս կազմակերպութեան համար Սերաստիա զրկուած Թալի պէյը հրաւիրելով՝ ղուդունելութեան համար կարգադրութիւն ընել խնդրած էր եւ աւելցուցած, թէ ինքն ալ յետոյ պիտի գայ եւ միանայ:

«Արդարեւ, ճիշդ տիպար ագարակին մօտ Թալի պէյ ինքնաշարժով երեւցաւ. ինքնաշարժերէն իջանք եւ ագարակին բակին մէջ նստանք. Թալի պէյ գրածներս մանրամասնօրէն պատմելէ վերջ ըսաւ, որ իր պարտականութիւնն էր զիս հոս քիչ մը զբաղեցնելը: Ասոր վրայ անմիջապէս ինքնաշարժերը նստիլ եւ դէպի Սերաստիա քշել հրամայեցի:

«Ասոր պատճառն ալ պարզեմ. այդ պահուն խորհեցայ, թէ կրնայ ըլլալ, որ ընդունելութիւն պիտի ընենք, ըսելով, Թալի պէյը խաբած ըլլան եւ իրականութեան մէջ տարբեր նպատակ մը ունենան եւ ասոր գործադրութեան համար ժամանակ չահիլ ուզեն: Ինքնաշարժ նստելու վրայ էինք եւ ահա Սերաստիոյ կողմէն ուրիշ ինքնաշարժ մը մեզի մօտեցաւ, կուսակալ Րէշատ փաշան էր եւ հարցուց.

«— Տէր իմ, քանի մը վայրկեան հանգիստ ընել կարելի չէ՞: Ես պատասխանեցի.

«— Կէս վայրկեան իսկ հանգիստի պէտք չունիմ, անմիջապէս պիտի մեկնինք, դուք քովս եկէք:

«— Տէր իմ, ըսաւ, Ձեր քով Րէուֆ պէյը թող նստի, ես երկրորդ ինքնաշարժով կու գամ:


«— Ո՛չ, ո՛չ, ըսի, դուք իմ քովս պէտք է նստիք:

«Այս պարզ զգուշութեան նպատակը բացատրութեան կարօտ չէ: Սերաստիոյ ճամբու մուտքին երկու կողմերը ահագին բազմութիւն լեցուած, զինուորական ջոկատները դիրք բռնած էին: Ինքնաշարժերէն իջանք: Ես քալելով, զինուորները եւ ժողովուրդը բարեւեցի:

«Այս ընդունելութիւնը փայլուն փաստ մըն էր, թէ Սերաստիոյ յարգելի ժողովուրդը եւ Սերաստիա գտնուող հերոս սպաները եւ զինուորները ի՞նչ աստիճան սիրով կապուած էին հետս:

«Ուստի ուղղակի զինուորական հրամանատարութեան պաշտօնատունը գացի եւ անմիջապէս Ալի Ղալիպը եւ անոր համախոհները եւ այս դաւին մէջ անոր գործակից ըլլալիք խռովարարները կանչել տուի եւ անոնց նպատակս





### Կախաղանները կը գործեն

պարզեցի, որուն մանրամասնութիւնները տալ աւելորդ կը նկատեմ :

«Միայն մէկ կէտր արձանագրելով տիտի գոհանամ :

«— Պարոննե՛ր, այս Ալի Ղալիպը՝ իր հանդիպած պալ վերաբերումէն ետք, գաղտնի բաւելիք ունենալը յայտնելով՝ քիչերը առանձին քովս գալ ուզեց, ընդունեցի. իր ունեցած ընթացքին կարեւորութիւն չտրուելը խնդրելով ըսաւ, որ Սարրերդի նահանգը գալուն նպատակը, ինծի ծառայելու եւ Սերաստիոյ մէջ կանգ առնելը ինծի հանդիպելով ուղղակի հրահանգ առնելու համար էր եւ կարգ մը բացատրութիւններով զիս համոզել աշխատեցաւ եւ կը խոստովանիմ, որ մինչեւ առտու զիս դրաղեցնելով, յաջողեցաւ ալ :

\* \* \*

Բ. Դրան Մուսթաֆա Քէմալը Պոլիս չկարենալ վերադարձնելուն իբր հետեւանք՝ անգլիացիները Սամսոն գինուոր ցամաք հանած էին : Տակաւին Իզմիրի յոյներուն կողմէ գրաւման ցաւը չմոռցուած եւ դարման մը որոնելու վրայ եղած պահուն՝ Սամսոնն ալ գրաւելու առիթ չտալու համար, Բ. Դուռը Սամսոնի հեռագրատան միջոցաւ Սերաստիոյ զօրաբաժնի հրամանատար գնդապետ Բաֆէթ պէյը փնտռելու սկսած եւ զայն գտնելով յետագայ հեռագրական խօսակցութիւնը տեղի ունեցած է :

Ձեռք անցուցած այս պատմական փաստը նոյնութեամբ կ'արձանագրեմ :

Բ. Դրան հեռագրատունը Սամսոնի հեռագրատան՝ կը հարցնէ.

«— Սերաստիոյ զօրաբաժինի հրամանատարը Բաֆէթ պէյ հոն ժամանած է :

Սամսոնի հեռագրատունը կը պատասխանէ.

«— Անգամ մը հարցնեմ, եթէ ժամանած է հոս թող գա՞յ եւ ո՞վ կ'ուզէ, ըսեմ» :

Բ. Դրան հեռագրատունը. — Նախարարաց Խորհուրդէն կ'ուզեն, պիտի խօսակցին :

Սամսոնի հեռագրատունը. — Ասկից երկու ժամ հեռու Գատամութի գիւղը կը գտնուի, ինքնաշարժով Սամսոն քառորդ ժամ է եղեր :

Բ. Դրան հեռագրատունը. — Անմիջապէս թող Սամսոն գայ, Նախարարաց Խորհուրդը տեսակցիլ կ'ուզէ, Սամսոն հասնիլը մեզի տեղեկացուցէք :

Սամսոնի հեռագրատունը. — Պատասխան ստացանք, կ'ըսէ որ մեր մէջ հեռաձայն կայ, ի՞նչ հրաման որ ունին գրեցէք եւ եթէ գալս ստիպողական է, տեղեկացուցէք :

Բ. Դրան հեռագրատունը. — Հիմա լուր առինք որ անգլիացիներուն Սամսոն զինուոր հանելուն վրայ պաշտպանողական միջոցներու դիմած էք. կ'երեւի այս հրամանը Մուսթաֆա Քէմալ փաշայէն ստացաք : Նախ անգլիական ներկայացուցչութիւնը պաշտօնապէս կը յայտարարէ եւ կը վստահեցնէ, թէ Սամսոն զինուոր հանուիլը երբեք գրաւման նպատակ չունի, այլ Մուսթաֆա Քէմալ փաշային տեղւոյն անդորրութիւնը խանգարելու ձգտող ընթացքին հետեւանքն է : Աշխարհագրական դիրքի տեսակէտով եւ Մուսթաֆա Քէմալի խնդրոյն պատճառաւ՝ ասոր հաւատալ պէտք է. երկրորդ՝ անգլիացիներու դէմ պաշտպանուելէ ի՞նչ օգուտ կրնայ ըլլալ : Անոնք կը յայտարարեն որ, եթէ տեղւոյն մէջ խանգարուած ապահովութիւնը դէպքի տեղի տայ, անմիջապէս պիտի գրաւուի. մեր դիմադրութիւնը անոնք անմիջապէս այս ձեւ պիտի մեկնեն եւ հետեւանքը այն պիտի ըլլայ, որ անկուշտ կառավարութիւնները զայն պիտի գրաւեն, հետեւաբար Նախարարաց Խորհուրդի որոշումով Չեզի կը հաղորդեմ անգլիացիներուն զինուոր ցամաքահանման եւ յառաջացման երբեք մի դիմադրէք, օգուտ չունի, իսկ վնասը ակնհայտ է :

«Գալով Մուսթաֆա Քէմալ փաշայի խնդրին, այս խնդիրը շատ փտանգաւոր ձեւ մը առաւ : Մուսթաֆա Քէմալ փաշայի մզկիթներուն մէջ բացէ ի բաց ժողովուրդը գրգռելուն համար՝ անգլիացիները անոր ետ կանչուիլը կը

պահանջեն: Դուք ալ կ'ընդունիք որ մզկիթներու մէջ բացի ի բաց ժողովուրդը գրգռել անտեղի է. ուստի զինքը կանչեցինք, չեկաւ, չի գար. բայց շատ գէշ կ'ընէ, որովհետեւ անգլիացիները ամէն բան ձգած անոր կանչուելուն կը պընդեն: Փա՛ռք Աստուծոյ, բանակին մէջ իրմէ զատ հայրենիքին ծառայելիք հրամանատարներ անպակաս չեն. քանի որ իր վերադարձը քաղաքական խնդիր մը դարձաւ, ուրիշ փոխանորդ մը նշանակելով պէտք է դառնայ. մանաւանդ որ, անգլիացիները պաշտօնապէս խոստացան որ վերադարձին իրեն բան մը պիտի չընեն: Հետեւաբար, եթէ այսպէս յամառի՝ Կեդրոնի եւ Արեւելեան գաւառներուն իրարմէ բաժանուած ըլլալու իմաստ պիտի տրուի եւ այս Ձեր ալ չփափաքած բաժանման վտանգը պիտի յառաջացնէ: Ի՞նչէն կը վախնայ, բաժանումէն չէ՞: Մինչդեռ այս յամառութեամբ, Աստուած հեռու ընէ, ինքը այս բաժանման առիթ տուած պիտի ըլլայ: Ինք պիտի չգայ: Անգլիացիներ զինուոր զրկելով զինք բերել պիտի ուզեն եւ իրենց մտած տեղերէն պիտի չելլեն, մինչդեռ, ցարգ բաժանումը որոշ չէ: Արեւելեան խնդիրներու լուծումը յետաձգուեցաւ եւ մենք այս յետաձգումէն ո՛չ թէ վնաս, այլ օգուտ կ'ակնկալենք. ուստի եթէ Մուսթաֆա Բէմալ իր հայրենիքը կը սիրէ, անոր սիրոյն անմիջապէս պէտք է վերադառնայ: Դուք ալ, ինչպէս նախապէս յիշեցի, երբեք անգլիացիներուն դէմ մի՛ շարժիք եւ այդ տեղերուն գրաման պատճառ մի ստեղծէք, Ձեր կարողութեան եւ խոհամութեան կը վստահինք:

Բաֆէթ փաշա կը պատասխանէր.

«— Կր ստիպու իմ այն համոզումը ունենայ, որ երեք օրէ ի վեր կանոնաւոր կերպով Պատերազմական Նախարարութեան ներկայացուցած ընդարձակ տեղեկագիրներս չեն ստացուած, Մուսթաֆա Բէմալ փաշա 10 օր առաջ Սերաստիայէն դէպի Կարին մեկնեցաւ, բանակատեղիէն Սերաստիա մնացած մարմնին տուած հեռագիրէն տեղեկացայ, որ հազիւ 5 օրուան մէջ հոն հասած է, գրաման հաւանականութեան գէմ պաշտպանուելու համար իրմէ սեւէ հրահանգ չստացայ. միայն ինչորին տեղեկանայուս՝ առաջին գործս եղաւ Ճանիկ գտնուող տեղական կառավարութեան եւ զինուորականութեան միջոցաւ անգլիական ներկայացուցչին հաղորդել, թէ առանց լուր տալու զինուորացամաքահանելու պատճառ մը չեմ տեսներ, թէ տակաւին իր գոյութիւնը պահող զօրարածնիս շրջանակին մէջ կաթիլներ կընայ խանգարուիլ եւ ասոր պատասխանա-

տուութիւնը պիտի չկրնամ ընդունիլ: Եթէ այս ցամաքահանումը եւ յառաջխաղացումը տեղի չունենայ, տեղական անդորրութեան համար Կեդրոնական կառավարութեան հանդէպ անձնապէս պատասխանատու կրնամ ըլլալ, թէ ստիպողական պարագաներու տակ խաթարուած խաղաղութեան համար պատասխանատուութիւն չեմ ստանձներ, թէ առանց Կեդրոնական կառավարութեան հաւանութեան ցամաք հանուած զինուորներուն յառաջխաղացումը արգելելու պիտի ստիպուիմ եւ թէ նոյն պատճառներու հիման վերայ նոր ցամաքահանումին պիտի հակառակիմ: Ասոնք անմիջապէս պատերազմական նախարարութեան տեղեկացուցի: Ինչպէս յաջորդական տեղեկագիրներովս ներկայացուցի, ընթացքիս ուղղութիւնը եւ ձեռնարկներուս անկողմնակալութիւնը անգլ. սպաներու վստահութիւն ներշնչելով, ըսածներուս օրինականութիւնը եւ անկեղծութիւնը ընդունած են, եւ այսօր խնդիրը լուծուած: Անգլիացիները ինծի տեղեկացուցին, թէ չեն կարծեր որ ցամաք հանուող մէկ վաշտէն ուրիշ զինուոր գայ, թէ եկող մէկ վաշտն ալ առաջուրնէ Սամսոն եւ մասամբ Մերգիֆոն գտնուող զինուորները փոխարինելու համար բերած են, թէ հին զինուորները այն պահուս նաւ կը դրուին եւ թէ խաղաղութիւնը անվթար պահելու համար Մերգիֆոնի մէջ առաջ քանի զինուոր որ կար՝ միայն այնչափ պիտի զրկուի եւ մնացեալը Սամսոն պիտի պահուի: Առած տեղեկութիւններուս վերայ խնդիրը լրջութեամբ լուծելու է: Իզմիրի գրաւումէն եւ հոն տեղի ունեցած սպաննութիւններէն քաջալերուող հայերու եւ յոյներուն մօտ օրէն ներքին գաւառներն ալ գրաւուելուն մասին կատարած դիտումնաւոր տարածայնութիւնները ժողովուրդին վախ ներշնչած ըլլալուն, ասոր հետեւանքով խաղաղութեան խաթարուելու վտանդը այստեղի Անգլիոյ ներկայացուցիչին պարզեցի եւ խնդիրը հարթել յաջողեցայ: Կը կարծեմ, որ շրջանի մը ապահովութեան պատասխանատու եւ այդ պատասխանատուութեան գիտակցութիւնը ունենալը՝ զայն ստանձնել պատիւ համարող զօրաբաժնի մը հրամանատարին ամենակարեւոր պարտականութիւնն է: Ես երբեք հոսանքներէն տարուելով դէպքի տեղի տալու նպատակով չգործեցի. ասկէ զատ, առանց Կեդր. կառավարութեան հաւանութեան գրաւումներու արգելք ըլլալն ալ, Նախ. Խորհուրդին որոշման համաձայն զինուորական պարտականութիւն մըն էր: Իբրեւ զինուոր՝ եւ ան ալ ընդհ. ապահովութենէն պատասխանատու բարձրաստիճան պաշտօնեայ՝ ասոնք խորհելու եւ ըստ

այնմ գործելու պարտաւորուած էի: Միայն Ձեր Վսեմութենէն կը խնդրեմ, որ այսօրուան ստեղծուած կացութեան պահպանութիւնը կեդրոնական կառավարութեան մտահոգութիւնը դառնայ: Շրջանակիս ապահովութենէն թագաւորիս եւ կառավարութեանս հանդէպ պատասխանատուն Մուսթաֆա Քէմալ փաշան եւ ես ենք: Պատասխանատուութիւնը ընդունելու կեդրոնական կառավարութիւնն ալ վկայ ցոյց տալով անգլիացի ներկայացուցիչին կը կրկնեմ: Իբրեւ Ձեր մէկ հին ընկերը՝ կ'ընդունի՞ք որ անկախութեան նպատակին ազդեցութեան տակ չեմ իյնար, նախապէս այդ շրջանակին ապահովութիւնը շատ խանգարուած էր: Անգլիացի սպաներ կը վկայեն, թէ խանգարուած խաղաղութիւնը շատ կարճ ժամանակի մէջ անբաւարար ուժով մը ինչպէս ես ապահովեցի: Յաջողութիւնը ուժէն աւելի անձնական հեղինակութեան արդիւնք է: Կրկին խանգարել մեղք է: Այս խանգարման պատճառներուն արգելք ըլլալը յանցանք պէտք չէ նկատուի. դուք պէտք է նկատի առնէք, որ եթէ ներկայ խաղաղ վիճակը չպահպանուի եւ նոր ուժեր բերուին՝ պատասխանատուն ո՞վ պիտի ըլլայ: Եթէ պէտք տեսնեմ, իրաւատուութեանս սահմանին մէջ եւ ի վերջոյ թագաւորական հասանութեան ենթարկելու պայմանաւ՝ Սերասիոյ կարգ մը տեղերու մէջ պատերազմական վիճակ յայտարարել կը խորհիմ:

«Գալով Մուսթաֆա Քէմալ փաշայի խնդրոյն, այս մասին ունեցած տեղեկութիւնս այն է, որ յիշեալը ժամանակ մը առաջ կարգ մը կարեւոր խնդիրներու շուրջ խորհրդակցութեան համար Պոլիս կանչուած է եւ հոն այդ խնդիրներուն ի՞նչ ըլլալը հարցուցած է: Այս պատմութիւնը բաւական հին է եւ յիշեալին իմ շրջանակիս մէջ գրտնուած պահուն կը վերարերի: Չեմ գիտեր թէ Մուսթաֆա Քէմալ փաշա կարնոյ մէջ ի՞նչ կ'ընէ: Իմ շրջանակիս մէջ գտնուած ատեն իր գործունէութենէն եւ մղկիթներու մէջ քարոզելէն տեղեակ չեմ: Ան ո՛չ թէ գրգռելու, այլ խաղաղեցնելու աշխատեցաւ: Պատահամբ ան Իզմիրի գրաւման միջոցին հոս գտնուեցաւ եւ ժողովուրդը արդէն գրգռուած էր: Մուսթաֆա Քէմալ միշտ միտքերը հանդարտեցնելու աշխատած եւ յաջողած էր: Վարչական սխալ կարգադրութեամբ մը միթիւնկին առած հեռագիրներուն Պոլիս չընդունուիլը՝ ժողովուրդը աւելի գրգռած էր. եւ սակէ ազդուող Մուսթաֆա Քէմալ միտքերը հանդարտեցնելու նրպատակաւ եւ սակայն ճարպիկութեան եւ քաղաքաւարութեան հակառակ՝ դառն խօսքերով ժողովուրդին հետա-

գիրներուն մերժուիլը ամէն կողմ յայտարարեց: Մուսթաֆա Քէմալ փաշային սխալ քայլը այս է. եւ այս, ըստ իս, ժողովուրդը խաղաղեցնելու համար էր. ուրեմն իմ առած քայլերս Մուսթաֆա Քէմալէն հրահանգուած չեն եւ անոր հետ ո՛չ մէկ կապ ունին: Առած տեղեկութիւններէս կացութիւնը շատ փափուկ գտայ եւ ոչ մէկէն հրահանգ խնդրելով շուտով որոշեցի եւ գործադրեցի. նախապէս ալ յիշեցի, որ յիշեալը 10 օրէ ի վեր Սերաստիա չի գտնուիր:

#### Գ. Զօրաբաժնի հրամանատար ՐԱՖԷԹ

Բ. ԴՈՆԷՆ տրուած պատասխանը.—

«Յամաքահանման լուրը առնուելուն պէս, հոս ալ անդլիացի ներկայացուցչին դիմուելով հաղորդուեցաւ, որ դրկուած ուժերը ոչ թէ խաղաղութիւնը ապահովելու, այլ խանգարելու պիտի ծառայեն եւ խնդրուեցաւ որ այդ ծրարագրէն հրաժարին: Մեզի ըսին թէ խնդիրը բարեացակամօրէն թող կարգադրուի, պատերազմական վիճակ յայտարարելու խնդիրը վաղը Նախարարաց Խորհուրդին մէջ կր քննենք եւ արդիւնքը Ձեզի կը տեղեկացնեմ: Պէտք է ընդունիլ որ Սամսոնի մէջ անգլիացիներուն հակառակիլ վերջին ծայր վնասակար է. ասկէ բացարձակապէս խուսափիլ պէտք է: Եթէ կարելի է մեր նախորդ հեռագիրներուն պարունակութիւնը Մուսթաֆա Քէմալ փաշային հաղորդեցէք եւ հոս վերադառնալը յանձնարարեցէք եւ վստահեցուցէք, թէ երկրին ներկայ եւ ապագայ խաղաղութեան համար վերադառնալը անհրաժեշտ է. աչքերնիդ կը համբուրեմ, եթէ ինձի ըսելիք ունենաք անմիջապէս կանչեցէք:


Պատերազմական Նախարար  
ՖԷՐԻՏ

\* \* \*

Գնդապետ Մուսթաֆա Քէմալ փաշա Սերաստիայէն կարին մեկնած եւ հոն հասնելուն «Արեւելեան Նահանգներու Իրաւանց Պաշտպան» միութեան համաժողովը գումարած էր:

Մուսթաֆա Քէմալ փաշա իր ձեռքին թագաւորական հրովարտակը եւ Նախարարաց Խորհուրդին տուած լայն իրաւասութեան հրամանագիրը ցոյց տալով՝ ժողովին նախագահութեան մաս կազմած էր:

Համաժողովը իր օրակարգը պատրաստած եւ անոնց



Հայ տեղահաններ՝ ձիու մը դիակից շուրջ

յուծման համար յանձնախումբեր նշանակած էր: Մուսթաֆա Քէմալ փաշա ալ ազգային պաշտպանութեան յանձնախումբին կը նախագահէր:

Համաժողովին ազգային պաշտպանութեան յանձնախումբը՝ Սուլթան Մուհամմէտ Վահիտետտին Պան Զ. ի Մուսթաֆա Քէմալ փաշային տուած հրովարտակէն եւ նախարարաց Խորհուրդին լայն իրաւասութեան հրամանագրէն ներշնչուելով, ի հարկին Արեւելեան նահանգներու պաշտպանութեան համար անհրաժեշտ եղող քաղաքային կազմակերպութեան մը պէտքը զգացած եւ յանձնախումբին անդամներէն Տրապիզոնի պատուիրակ Օմար Ֆէվզի պէյն ալ այս թեզը պաշտպանելով առաջարկած էր, որ այս կազմակերպութիւնը բանակին հետ առնչութիւն չունենայ եւ հրամանատարները զինուորականութենէ հրաժարած Արեւելեան նահանգներու սպաներէն ընտրուին:

Մուսթաֆա Քէմայ փաշա, Օմար Ֆէվզի պէյին այս առաջարկը չէր հաւնած եւ կազմակերպութեան բանակի Գատրին մէջ ընդունուելուն վրայ պնդած եւ մեծամասնութեամբ որոշում առնել տուած էր:

Բ. Դուռը այս որոշման տեղեկանալուն, Մուսթաֆա Քէմալ փաշային հանդէպ Հանգէյէն սկսեալ ստեղծուած

իր անվստահութիւնը աւելցուցած էր, մանաւանդ որ «Ազգութիւն» անունով համաժողովին վաւերացման ենթարկուած եւ մերժուած ծրագրին համար թագաւորն ալ ցաւ զգացած էր:

Այս դէպքերուն վրայ Պատերազմական Նախարար Ֆէրիտ փաշա, Մուսթաֆա Քէմալ փաշան հեռագրական մեքենային մօտ հրաւիրելով, տեղը փոխանորդ մը նշանակելով վերադարձը խնդրած էր, զայն վստահեցնելով, թէ անգլիացիներուն կողմէ իրեն հանդէպ վատ վերաբերում պիտի չըլլայ:

Մուսթաֆա Քէմալ փաշա, Ֆէրիտ փաշային խնդրանքէն հասկցած էր, թէ Կեդրոնական Կառավարութիւնը տըռկար եւ անկարողութեան մատնուած էր եւ իր տուած պատասխան հեռագրին մէջ ըսած էր.

«Կատարելապէս վստահ եղէք որ, եթէ հայրենիքին փրկութիւնը եւ ապահովութիւնը իմ գործէ քաշուելովս կարելի է, առանց ոեւէ պայմանի եւ մարդկութենէն առանց ոեւէ ակնկալութեան զիջանելու եւ ինքզինքս զոհելու չափ պարզ գործ մը չկրնար գտնուիլ, հետեւաբար մեր մէջ եղած տարակարծութիւնը իրական կացութեան Ձեր կողմէն չըմբռնուիլէն կը ծագի, եւ կ'աւելցնեմ որ, իմ կարծիքիս եւ համոզումիս կասարեալ ճշմարտութիւն ըլլալուն վճայ երեք չեմ կասկածիր. եւ խօսքը Պատերազմական Նախարար Ֆէրիտ փաշային ուղղելով շեշտած էր. «Պատմութեան անաչառ էջերէն պատուարեր կերպով դուրս գալու համար ձեր աթոռէն հրաժարելուն կը սպասեմ»:

Սակայն Պատերազմական Նախարար Ֆէրիտ փաշա, Մուսթաֆա Քէմալ փաշայի այս խօսքերը չլսել ձեւացնելով, միշտ կը կրկնէր եւ կը խնդրէր որ տեղը փոխանորդ մը նշանակէ եւ Պոլիս վերադառնայ եւ համոզել կը ջանար, թէ անգլիացիներուն կողմէ իրեն վնաս մը պիտի չհասնի:

Ասոր վրայ Մուսթաֆա Քէմալ փաշա Ներքին Նախարար Ալի Քէմալ պէյին եւ Փոսթ-հեռագրատան ընդհ. Տնօրէն Րէֆիգ Սալիտ պէյին պատժուիլը խնդրած էր, որովհետեւ կը կարծէր, որ իր պաշտօնագրկման հեռագիրը ասոնց կողմէն յերիւրուած էր, եւ ըսած էր, «Եթէ այս պահանջս ընդունուի եւ այս մասին ինձի տեղեկութիւն տրուի, առողջական վիճակիս մասին տեղւոյն բժիշկներէն առնուելիք տեղեկագիրը անմիջապէս Ձեզի պիտի հաղորդեմ, ջերմապէս յաջողութիւն կը մաղթեմ»:

Այս հեռագրական խօսակցութիւնը ժամերով շարու-



նակած եւ վերջապէս Մուսթաֆա Քէմալ փաշային կըտրուկ պատասխանին վրայ ընդհատուած էր:

Իոյր այս դէպքերը, վարչապետ Տամատ Ֆէրիտ փաշային Փարիզ գտնուած եւ Շէյխ-Իւլ-Իսլամ Մուսթաֆա Սապրի էֆէնտիէն անոր փոխանորդած ժամանակ կը կատարուէր:

\* \* \*

Երբ Մուսթաֆա Քէմալ փաշա այսպիսի դժուար կացութեան մատնուած էր, Իթթիհատ եւ Թէրագզըի մարդիկն ալ Իզմիրի յոյներուն կողմէ գրաւման դէմ բրորականտ կը մղէին եւ հրապարակը կ'աղմկէին, թէ «զինադադարի պայմաններուն գործադրութեան մէջ կառավարութիւնը տկարութիւն ցոյց կու տայ եւ կը վախնայ, երկիրը անգլիացիներուն քմահաճոյքին կը յանձնէ. ազգը ինքզինքը պէտք է պաշտպանէ»։ Եւ «Թրակիա-Փաշա էլի» ու «Իզմիրի վերագրաւում եւ կցում» միութիւնները հիմնելով Սալճըլըի մէջ Չէրքէզ էտհէմ պէյին, Տէմիրճի լեռներուն մէջ Տէմիրճիլի էֆէ Մուհամմէտին, Ագ-Հիսարի մէջ ալ Սարը էֆէյին ղեկավարած չէթէական խումբերը, «Իզմիրի վերագրաւում եւ կցում» միութեան անունով գործի մղած եւ յոյն յառաջապահներու հետ ընդհարումի սկսիլ տուած էին: Իսկ Սերաստիոյ մէջ մեծ Համաժողովի մը գումարման ձեռնարկած եւ խնդիրը կարին գտնուող «Արեւելեան Նահանգներու Իրաւանց Պաշտպան» միութեան պատուիրակներուն ալ տեղեկացնելով Սերաստիա հրաւիրած էին:

«Արեւելեան Նահանգներու Իրաւանց Պաշտպան» միութեան անունով կարնոյ Համաժողովին մասնակցելու իրաւասութիւն ունեցող պատուիրակները, Սերաստիոյ մէջ աւելի ընդհանուր նպատակի մը համար գումարուելիք Համաժողովին մասնակցելու իրաւասութիւն չունէին. միայն նոր պատուիրակներ նշանակելը ժամանակի կորուստ նրկատելուն եւ միեւնոյն ժամանակ Մուսթաֆա Քէմալ փաշային կողմէ ալ անգործնական նկատուելուն, կարնոյ համաժողովը կազմող մարմինը որոշած էր որ Մուսթաֆա Քէմալ փաշային նախագահութեամբ՝ նախկին ծովային նախարար՝ Բէուֆ պէյ, կարնոյ նախկին երեսփոխան՝ Խոճա Բաիֆ էֆէնտի, Տրապիզոնի նախկին երեսփոխան՝ Իզգէթ եւ Սերվէթ պէյերը, Պիթլիսի նախկին երեսփոխան՝ Սաուտալլահ էֆէնտի, Մութքի ցեղախումբին պետ՝ Հաճի Մուսա պէյ, Երզնկայէն՝ Շէյխ Ֆէվզի էֆէնտի եւ նախկին կուսակալներէն՝ Չէրքէզ Մուսա զատէ, Պէքիր Սամի

Գունտուխ պէյ պատուիրակ նշանակելով Սերաստիա զրրկուին:

Այս որոշման վրայ Մուսթաֆա Քէմալ փաշա իր կարգ մը ընկերներովը Սերաստիա երթալու համար կարինը լքելով Երզնկա մեկնած էր:

\* \* \*

Բ. Դուռը Մուսթաֆա Քէմալ փաշային Սերաստիա երթալու համար Երզնկա հասնիլը տեղեկացած եւ ասոր վրայ պալատի սւազ քարտուղարը պաշտօնանկութեան վերաբերեալ թաղաւորական հետեւեալ հրաման հեռագրով անոր հաղորդած էր:

Հեռագրին պատճէնը:

Գնդապետ Մուսթաֆա Քէմալ փաշային

Երզնկա

Գործերու բերումով Ձեր բարձր պաշտօնին վերջ տրուած ըլլալուն, առանց յապաղումի Ձեր Պոլիս վերադարձը թագաւորին հրամանն է:

Աւագ Քարտուղար  
ԱԼԻ ՖՈՒԱՏ

Մուսթաֆա Քէմալ փաշա պաշտօնանկութեան այս հեռագրին վրայ Աւագ քարտուղարին միջոցաւ թաղաւորին տեղեկացուցած էր, թէ զինուորական ասպարէզէն կը հրաժարի: Ասոր վրայ տարակարծութիւնը սուր հանգամանք եւ ըմբոստութեան բնոյթ առած էր:

Հեռագրին պատճէնը

«Պոլիս Աւագ քարտուղարութեան միջոցաւ նորին կայսերական բարձրութեան՝

«Մինչեւ այսօր թէ Ձերզ կայսերական բարձրութեան եւ թէ Պատերազմական Նախարարութեան ուղղած խընդրանքներուն մէջ հայրենիքին եւ ազգին, ինչպէս նաեւ Ձեր բարձր գահուն ենթարկուած ցաւալի փորձանքներուն առթիւ ազգին ցաւն ու վիշտը մանրամասնօրէն պարզեցի: Այս ընելով խղճին թելադրած ամենէն բարձր պարտականութիւններէն մին կատարած եղայ:

«Կը տեղեկացուի թէ գործունէութիւնս անգլիացիներուն կողմէ տարբեր մեկնուելուն՝ կառավարութիւնը նեղ դրութեան մը մատնուած է. ծառանիդ եւ ամբողջ ազգը լաւ գիտենք, թէ Ձեր կառավարութիւնը եւ բարձր գահը արդէն ի՛նչ տեսակ ճնշում եւ ցաւալի պայմաններու

տակ կը գտնուի. ուստի այս ճնշումին աւելի սաստկանալուն, մանաւանդ կատարեալ հաւատարմութիւն եւ երախտագիտութիւն սնուցած Ձեր բարձր անձին այսպէսով ստրկանալուն երբեք չեմ կրնար համակերպիլ: Ուրեմն ո՛չ թէ միայն պաշտօնէս, այլ եւ ազգին եւ հայրենիքին պաշտպան եւ իմ աւելի սիրած զինուորական ասպարէզէն հրաժարելով զոհողութիւնս ցոյց կու տամ, եւ Ձեզ կը վստահեցնեմ, թէ մինչեւ վերջին շունչս, թէ Ձեր բարձր դահուն եւ թէ ազնիւ ազգին իբր հաւատարիմ զաւակը պիտի մնամ: Զինուորականութենէն հրաժարիլս Պատերազմական Նախարարութեան ալ տեղեկացուցի:

«Կը խնդրեմ Բարձրեալէն որ Ձեզ արեւչատութիւն պարզեւէ եւ ամէն փորձանքներէն փրկէ:

Ծառանիդ

ՄՈՒՍԹԱՖԱ ՔԷՄԱԼ»

Տամատ Ֆէրիտ փաշային Փարիզ գտնուած պահուն Ազատականներու ղեկավարներուն մէջ խոր անհամաձայնութիւններ սկսած էին: Ասոնք իրարու դէմ լարուած եւ կուսակցութիւնը երկու մասի բաժնուած ըլլալուն, վարկն ու հեղինակութիւնը կորսնցուցած էին:

Յառաջիկային նկարագրուելիք դէպքերը լաւապէս ըմբռնելու համար՝ այս անհամաձայնութիւններուն ներքին ծալքերն ալ ներկայացնել հարկ է:

Տեղակալ-վարչապետ նշանակուած Շէյխ-Իւլ-Իսլամ Սոճա Մուսթաֆա Սապրի էֆէնտի՝ Ֆէրիտ փաշային բացակայութենէն օգտուելով, թաղաւորական պալատին հանդէպ իր անհամակրութիւնը աւելցուցած եւ միայն վարչապետ ըլլալու, «Սոճա փաշա» յորջորջուելու փափաքը կը սնուցանէր:

Այս միջոցին Ազատական կուսակցութեան բուն հիմնադիրը եւ հանդստեան կոչուած զնդապետ Սատրզ պէյ Եգիպտոսէն վերադարձած եւ հին ու նոր ընկերներուն զինք մոռացութեան տուած ըլլալը տեսնելով վշտացած՝ վրէժ լուծել կ'ուզէր, որովհետեւ Սոճա Մուսթաֆա Սապրի էֆէնտի եւ Շէյխ Չէյն էլ Ապիտին էֆէնտի համաձայնելով եւ Սատրզ պէյին Պոլիս ներկայութիւնը շահագործելով՝ թաղաւորին իմաց տուած էին, որ կուսակցութիւնը իրենց անուան հիմնած են:

Սուլթան Վահիտեատին, դիտական, դրական եւ բանախօսութեան մէջ հռչակ հանած եւ նախապէս Սուլթան Ապտիւլ Համիտի շրջանին պալատին բարիքներովը սնած

Մուսթաֆա Սապրի էֆէնտին հանդէպ մեծ համարում եւ վստահութիւն ունէր: Անոր յանձնարարութեան վրայ նախապէս նպարտածառութեամբ զբաղող եւ դիպուածով իր կարգ մը նմաններուն պէս, Գոնեայէն երեսփոխան ընտրուած եւ ապա սահմանադրութեան ՅԾրդ յօդուածին սրամաղրութեամբ Երեսփոխանական Ժողովին լուծուելէն ետք, կրկին Իթթիհատ եւ Թէրազզը կուսակցութեան կամքին հակառակ իբր չէզոք երեսփոխան ընտրուած էր: Շէյխ Չէյն էլ Ապիտին էֆէնտի՝ Սուլթան Մուհամմէտ Վահիտետինի կողմէ իբր պատուաւոր մէկը ճանչցուած էր:

Շէյխ Չէյն էլ Ապիտին էֆէնտի իր դերը շատ լաւ խաղցած էր: Սուլթան Ապտիւլ Համիտի շրջանին Շէյխ Չաֆէրիյէն եւ անոր նմաններէն աւելի յաջողութիւն դրտած, Ռուսիոյ ցար Նիկոլային ժամանակի Ռասրութինի ստաիճանին հասած էր եւ այս տաղնապալի օրերուն կառավարութեան քաղաքականութեան միջամուխ ըլլալով՝ կարգ մը ազէտ եւ յիմարները պետական պաշտօններու նըշանակել տուած էր:

Տամատ Ֆէրիտ փաշա վարչապետական աթուր զբաւելուն, Իթթիհատ եւ Թէրազզրի դէմ ուժ մը ապահովելու նպատակով Խոճա Մուսթաֆա Սապրի եւ Շէյխ Չէյն էլ Ապիտին էֆէնտիներու ազդեցութեամբ չէյխերէն եւ հոճաներէն կարգ մը անձեր Մերակոյտի անդամութեան բարձրացուցած էր:

Այս կերպով ծերակուտական նշանակուած չէյխերն եւ հոճաները հետեւեալներն էին՝ Խոճա Մուսթաֆա Սապրի էֆէնտի, Շէյխ Չէյն էլ Ապիտին էֆէնտի, Խոճա Վասֆի էֆէնտի, Նըսուսի Չատէ, Խոճա Մուսթաֆա Ասրմ էֆէնտի, Էլմալուցի Խոճա Համաի էֆէնտի:

\* \* \*

Գնդապետ Սատրղ պէյ Եդիպտոսէն վերադարձին՝ տեսնելով որ իր հին ու նոր ընկերները զինք պարարտ պատաներէն զրկած են, ցաւած էր: Երբ կուսակցութեան նախադահութիւնը ստանձնելով ընտանեօք կուսակցութեան Կեդրոնատեղին կը հաստատուի եւ կը տեսնէ որ Վարչական Ժողովը առանց քուէարկութեան եւ առանց համագումարի որոշման կազմուած է եւ նոր համագումարի ալ կացութիւնը եւ ժամանակը աննպաստ է, իր պանդըխտութեան եւ քաղաքականութեան ընկեր Կիւմիւլճինացի Իոմայել պէյին թելադրութեամբ Ազատական կուսակցութեան մասնաճիւղերուն նամակներ կը գրէ եւ կ'առաջար-



Մայր մը կ'ընկալի իր երեխաները

կէ, մինչեւ նոր Համագումարի համար կացութիւնը եւ պայմանները ձեռնառու ըլլան, կուսակցութիւնը իր ուզածին սէս կատարելու եւ ընդհ. կեդրոնի դործերը հարթելու համար զինք ղեկավար նշանակելով, իրաւասութիւն տան:

Սատրգ պէյին այս պահանջը՝ Պոլսոյ եւ Անատոլուի մասնաճիւղերը ընդունած ըլլալով՝ Սատրգ պէյ կուսակցութեան ղեկավար դարձած էր:

Սատրգ պէյ ղեկավար դառնալուն պէս, զինք ծերակուտական նշանակել շտուոյ իր ընկերներէն վրէժ լուծելու նպատակով, մասնաւոր որոշումով մը Ազատական նախարարներուն հաղորդած էր, որ կա'մ պետական դործերէն քաշուին եւ կա'մ կուսակցութենէն հրաժարին:

Այս որոշումը ստացող նախարարներ տագնապի մատնուելով եւ Սիւլէյմանիյէ Շէյխ Իւլ Իսլամութեան շէքին մէջ բնակող վարչապետական տեղակալ՝ Շէյխ Իւլ Իսլամ Մուսթաֆա Սապրի էֆ.ին քով դումարուելով այս կացութեան դէմ ձեռք առնուելիք միջոցներու շուրջ խորհրդակցած նախարարներուն կուսակցութեան որոշումին հպատակելով հրաժարիլը յարմար դատած էին: Սակայն Շէյխ Իւլ Իսլամ Սապրի էֆէնտի ուրիշ նպատակներ հետապնդելուն, Պօճա Փաշա ըլլալ փափաքելուն, հրաժարումը անյարմար գտած եւ վարչասլետին բացակայութեան ինք տեղակալ ըլլալով հրաժարելու սլարագային նախարարական տագնապը անխուսափելի ըլլալը եւ թէ Սատրգ պէյին դահլիճին մէջ պաշտօն մը տրուելուն սոյն որոշման յետս կոչման հաւանականութիւնը բացատրելով՝ սոյն առաջարկը ընկերներուն ալ ընդունիլ տալէ ետք՝ Սատրգ պէյին հետ համաձայնելու համար կեսարացի Շապան էֆէնտիին պաշտօն տուած էր:

Սատրգ պէյ իր պատասխան առաջարկին մէջ յայտնած էր, որ նախարարաց Պորհուրդին մէջ իրեն տրուելիք պաշտօնը՝ ծերակուտական դառնալէ յետոյ կրնայ ընդունիլ, սակայն Շապան էֆէնտի տեղեկացուցած էր, թէ զինուորականներէն միայն բանակի հրամանատարութիւն ընողներ կրնային ծերակուտին անդամակցիլ եւ թէ գնդապետներէն ծերակուտական նշանակելը նախընթաց չունի, թէ առ այժմ նախարարաց Պորհուրդին մէջ իրեն տրուելիք պաշտօնը ընդունելով դահլիճին մէջ ընդունուած կը նկատուի եւ ծերակուտական նշանակուելը կը դիւրանայ: Հետեւարար յարմար է որ իր առաջարկը առ այժմ յետաձգէ: Այս դադափարը ընդունիլ տալէ ետք, Սատրգ պէյին

տրուելիք պաշտօնը թագաւորին հաւանութեան ներկայացուած եւ վաւերացման արժանացած էր:

Այս միջոցին իր մասին քննութիւն կատարուելու համար Պոլիս կանչուած Խիւտա Վէնտիկեարի կուսակալ կիւմիւլճինացի Իսմայիլ պէյ, իր օձիքը ազատելու համար նախարարաց Խորհուրդին մէջ տագնապ մը ստեղծել կ'ուզէր, հետեւաբար Սատրղ պէյին միամտութենէն օգտուելով անոր ըսած էր. —

«Քաղաքական կուսակցութեան մը ղեկավար որպէս, գոյնը եւ ձեւը անյայտ դահլիճի մը մէջ եւ այն ալ անաթոռ նախարարի մը հանգամանքով մտնելը Ձեզի համար մեծ անպատուութիւն է. կա՛մ կառավարութիւնը ամբողջութեամբ Ձեր կուսակցութենէն կազմելով դուք վարչապետ պէտք էր ըլլայիք եւ կամ կուսակցութիւնը կառավարութենէն քաշուելով ընդդիմադիր դիրք մը պէտք էր բռնէր. այլ ձեւ չկայ»:

Այս արտայայտութիւնը Սատրղ պէյին մօտ վարչապետ ըլլալու փափաքը արթնցուցած եւ իր նախարարական պաշտօնին վերաբերեալ հրամանագիրը իրեն հաղորդուելուն պէս՝ ուղղակի թագաւորական պալատ դացած եւ Ա. Յենեկապետ Օմար Եավէր փաշայի միջոցաւ այդ պաշտօնէն հրաժարիլը թագաւորին ներկայացուցած էր:

Սատրղ պէյ իր հրաժարականը թագաւորին ներկայացնելով վարչապետարանն ալ տեղեակ պահած էր: Ասոր վրայ թագաւորը բարկանալով վարչապետական տեղակալ Շէյխ Իւլ Իսլամ Մուսթաֆա Սապրի էֆէնտին կանչել տալով անոր ըսած է. —

«Ինչպէ՞ս կ'ըլլայ որ մէկու մը հաւանութիւնը չառած զայն նախարարաց Խորհուրդին մէջ պաշտօնի նշանակել կու տաք. Սատրղ պէյին այս կերպ նշանակումէն եւ հրաժարականէն ցաւ զգացի:

Մուսթաֆա Սապրի էֆէնտի, թագաւորին այս կերպ յանդիմանութենէն եւ Սատրղ պէյին առանց նախապէս իրեն տեղեկացնելու հրաժարականը ուղղակի թագաւորին ներկայացնելէն շատ զգացուած էր: Այս զգացման ջերմ մէկ պահուն «Իտրաք» թերթի տնօրէն ընկերվարական Հիւսէյս Հիւմի էֆէնտի այցելութեան եկած էր:

Մուսթաֆա Սապրի էֆէնտի խօսակցութեան միջոցին Սատրղ պէյի հասցէին ծանր արտայայտութեան «Իտրաք» թերթի մէջ հրատարակումը խնդրած եւ թերթն ալ հետեւեալ օր հրատարակած էր:

«Իտրաք» թերթի մէջ լոյս տեսած այս արտայայտու-

Թիւնը Ազատական կուսակցութեան շրջանակը ջղայնացուցած էր: Սատրգ եւ Կիւմիւլիւճիւնացի Իսմայիլ պէյերուն համակիրները կուսակցութեան Փարմազ Գարուի մէջ գրտնուող կեդրոնը գումարուելով երկար խորհրդակցութենէ ետք, Կիւմիւլիւճիւնացի Իսմայիլ պէյին գրի առած մէկ յայտարարութիւնը իբր փոխադարձութիւն հետեւեալ օր բոլոր թերթերու մէջ լոյս տեսած էր:

Սատրգ պէյ սոյն յայտարարութեամբ՝ Մուսթաֆա Սապրի էֆէնտին փառասիրութեամբ կ'ամբաստանէր եւ վարչապետական աթոռը գրաւելու համար խաղացած դերերը կը թուէր եւ զայն Կարտինալ Ռիչիոյի կը նմանցնէր:

Ազատականներու անձնաւորութիւնները այսպէսով աթոռի համար զիրար խծրծելու ժամանակ, Իթթիհատ եւ Թէրազգըին դարան մտած անձնաւորութիւններն ալ կամայ կամայ Անատոլուի եւ Պոլսոյ մէջ իրենք զիրենք ցոյց տալ սկսած էին:

\* \* \*

Սոյն գիրքին առաջին մասին մէջ Իթթիհատ եւ Թէրազգըի կազմութենէն, որոնցմէ բաղկացած ըլլալէն եւ ծրագրէն, նոյնպէս Ազատական կուսակցութեան Սատրգ պէյի կողմէն հիմնուելով տարրերու համերաշխութեան հիման վրայ կազմած ծրագրին մասին բացատրութիւն տուած եւ յարգոյ ընթերցողները լուսաբանած էի:

Սոյն Ազատական կուսակցութիւնը(\*) Արնաւուտներուն «Պաշգիմ», Յոյներուն՝ «Սահմանադրութիւն» եւ հայերուն Հնչակեան կուսակցութիւններուն հետ համաձայնելով Իթթիհատ եւ Թէրազգըն տապալելու եւ կառավարութեան ղեկը ձեռք առնելու կ'աշխատէին:

Նոյնպէս բացատրած էի, որ Բ. Դրան վրայ կատարուած յարձակումին եւ Նազըմ փաշայի սպաննութեան վրայ կազմը լուծուելով երեք խումբերու, Իշխան Սապահետին պէյի, Քէմալ փաշայի եւ Սատրգ պէյի խումբերուն բաժնուելով տկարացած եւ Մահմուտ Շէվքէթ փաշայի սպաննութեան սլատճառաւ ալ, անդամներէն ոմանց աքսորուելուն, ոմանց փախուստին վրայ բոլորովին լուծուած էր:

Այս մասին մէջ, նոյն շէյխերու եւ հոճաններուն կողմէ զինադադարի շրջանին վերակազմուած եւ ապա Սատրգ պէյին ղեկավարուած ի վերջոյ ղեկավարներուն մէջ ծագած

(\*) «Իթիլաֆ եւ Հիւրրիէթ» կուսակցութիւնն է.



անհամաձայնութեան պատճառաւ չափաւոր եւ ծայրայեղ երկու մասի բաժնուած եւ իր վարկն ու հեղինակութիւնը կորսնցնելով Օսմանեան գահակալներուն հետ պատմութեան սեփականութիւնը դարձած Ազատական կուսակցութեան մասին պիտի խօսիմ :

\* \* \*

Յարգելի ընթերցողներուն ծանօթ է որ Օսմանեան հայրենիքին մաս կազմող Մակեդոնիան եւ Արարիան, Պալքանեան եւ ընդհ. պատերազմէն ետք, անկախութիւն ստացած եւ թուրք կառավարութեան հետ յարաբերութիւննին խզած էին: Քրիստոնեայ տարրերն ալ յաղթական տէրութեանց պաշտպանութեան ապաւինելով՝ իւրաքանչիւրը զատ զատ նպատակներ կը հետապնդէին:

Յոյները Սեւ ծովուն եզերքը Պոնտոսի անկախութեան, հայերն ալ՝ Քիւրտիստանը եւ Կիլիկիան ալ պարունակելու պայմանաւ ընդարձակ Հայաստանի մը ստեղծման մասին կը խորհէին եւ կ'աշխատէին:

Հետեւաբար, պատերազմէն առաջ զանազան տարրերու համաձայնութեան հիման վրայ կազմուած Ազատական կուսակցութեան ծրագիրը անգործադրելի դարձած էր:

Պատերազմէն ետք, զինադադարի ընթացքին չէյխերու եւ հոճաներու կողմէ վերակենդանացուած Ազատական կուսակցութիւնը՝ փոխանակ կացութիւնը ըմբռնելով գործադրելի ծրագրով մը հրապարակ գալու եւ չէզոք դիրք որդեգրող Թէվֆիգ փաշայի կառավարութեան օժանդակելու՝ հակառակ ուղիով շարժած էր:

Շէյխերը եւ հոճաները Ազատական անունէն եւ այս անունն ընդդիմադիր ճանչցուելէն օգտուիլ ուզած եւ իրենց շուրջ համախմբած մտային եւ քաղաքական ըմբռնումներով իրարու հակառակ ընկերներով, աթուռի եւ շահու ետեւէն ինկած էին:

Զինադադարէն ետք, չէյխերու եւ հոճաներուն հին մտայնութեամբ կազմուած Ազատական կուսակցութեան քաղաքական գոյն չէր կրնար տրուիլ, եւ սակէ կառավարութեան եւ ազգին համար օգուտ եւ շահ չէր կրնար սպասուիլ:

Ազատական խառնարանին զինադադարի ընթացքին ներկայացուցած վիճակը շատ զարմանալի եւ բառին բուն նշանակութեամբ ցաւալի էր:

Ծայրայեղ ազատականներ, խիստ պահպանողականներ, անկախութեան, սահմանադրութեան եւ հանրապետութեան կողմնակիցներ եւ յետադիմականներ մէկ տեղ



Վրացական զորքերը

եկած եւ հանրային կարծիքը պղտորող եւ իթթիհատ եւ թէրագզըն ամրապնդելու կարծէք անուղղակի ուժ կու տային:

Ասոնցմէ մէկը՝ շէյխերու եւ հոճաներու համակրութիւնը շահելու համար՝ Սուլթան Իպրահիմի շրջանին դէպքերը կը պատմէր եւ կը գնահատէր. միւսը՝ գահի եւ թագաւորի ի՞նչ պէտք կայ, հանրապետութիւնը մեզի աւելի յարմար է, կ'ըսէր. երկրորդը՝ Անգլիան կայսրութիւն է եւ սակայն սահմանադրութեամբ շատ մը երկիրներէն աւելի լաւ կը կառավարուի, խնդիրը ձեւի վրայ չէ, այլ կառավարելու մէջն է, կը պատասխանէր. ուրիշ մըն ալ՝ եթէ տէրութիւնը երկու նահանգ իսկ ունենայ, ապակեդրոնացման դրութեամբ պէտք է կառավարուի, կ'ըսէր:

Վերջապէս զինադադարէն ետք համախմբուած Ազատական կուսակցութիւնը բռնելիք ուղին չգիտցող, հետապընդելիք քաղաքականութիւնը չկարենալ որոշող մարդոց զարմանալի խառնուրդ մըն էր:

Բնական է, որ այս ձեւով եւ անձերով կառավարուող կուսակցութենէ մը տէրութեան եւ ազգին համար օգուտ չէր ակնկալուեր:

Ընդդիմադիրի դիրքով եւ հանգամանքով իրենք իրենց կառավարութիւնը ձեռք ձգելու իրաւունքը տուող այս խառնուրդը՝ յարգելի ընթերցողներուն աւելի լաւ ճանչցնելու համար զանոնք երեք մասի բաժնել կարելոր է:

1.— Իրական Ազատասէրներ եւ Սահմանադրասէրներ.

2.— Պնակալէզներ.

3.— Յետադիմականներ:

Զինադադարի ընթացքին շէյխերու եւ հոճաներու կողմէ վերակազմուած Ազատական խառնուրդին մէջ իրական սահմանադրասէրները շատ քիչ էին: Այս հատուածը պատահաբար հոն մուտք գտած կարգ մը լուսամիտներէն կը բաղկանար, ասոնք ալ յետադիմականներուն ազդեցութեան ենթարկուած, իրենց խօսքը եւ արժէքը չկարենալով արժեցնել, կորսուած էին:

Պնակալէզները.—

Անկախութենէն, Սահմանադրութենէն եւ հանրապետութենէն բան մը չհասկցող, վերին հրամանները գործադրելու աշխատող, իրենց ապրուստը միայն կառավարութենէն ստանալիք քանի մը ղուրուշով ապահովող պաշտօնեաներ, պաշտօնէ դուրս գործ տեսնելէ եւ ապրուստը ապահովելու անկարող, անձնական ձեռնարկէ, քաղաքա-

կըրթութեան համարձակութեան ոգիէն զուրկ խեղճեր էին :

Ասոնք Իթթիհատ եւ Թէրազզըի կառավարութեան կատարած մաքրագործումի ժամանակ անպաշտպան ըլլալնուն համար՝ գործէ հանուած պաշտօնեաներ էին : Ասոնք այն մտքով, թէ յառաջիկային Ազատական կուսակցութիւնը նորէն դիրքի կը տիրանայ եւ իրենց պաշտօն կը տրուի, չէյխերուն եւ հոճաներուն շուրջը խմբուած, լոյսին շուրջ դարձող մժեղներու նման կը դառնային եւ միայն անոնց դիրքը զօրացնելու կը ծառայէին :

Յետադիմականներ. —

Ասոնք հանգուցեալ Սուլթան Ապտիւլ Համիտի ժամանակ պալատին մէջ մուտք գտած, իրենց կարողութենէն շատ բարձր լրտեսութիւն ընելով դիրքերու տիրացած եւ նոյնիսկ իրենց օրօրոցի մանուկներուն համար տիտղոսներ առած անկարող տգէտներն ու անոնց զաւակներն էին :

Ասոնք սահմանադրութեան հռչակումով իւզոտ եւ խոշոր պատառներէն զրկուած, իրենց արտաքին վարկը կորսնցուցած մարդիկ ըլլալով, սահմանադրութիւնը հռչակող Իթթիհատ եւ Թէրազզըին հակառակորդ նկատուող Ազատական կուսակցութեան մէջ զադտագողի մուտք գործած եւ նիւթականով ծառայութիւն մատուցանելու ձեւով խոճաներու եւ չէյխերուն մօտ համակրութիւն շահող անձեր էին :

\* \* \*

Զինադադարին չէյխերու եւ հոճաներու կողմէ վերակազմուած Ազատական խառնուրդը այսպիսով տակն ու վրայ ըլլալով միութիւն մը չէր կրցած կազմել եւ կարճ ժամանակի մէջ առանձինն առանձինն խմբակներու բաժնուած էր. —

1. — Գնդապետ Սատրգ պէյի խումբը.

2. — Կիւմիւլճինացի Իսմայել պէյի խումբը.

3. — Խոճա Մուսթաֆա Սապրի էֆէնտիի խումբը.

4. — Շէյխ Ջէյն էլ Ապիտին էֆէնտիի խումբը :

Արտաքնապէս գնդապետ Սատրգ պէյի հետ՝ Կիւմիւլճինացի Իսմայել պէյ եւ Խոճա Սապրի էֆէնտիի հետ՝ Շէյխ Ջէյն էլ Ապիտին էֆէնտի միացած կը թուէին, սակայն ներքնապէս խնդիրը տարբեր էր : Ասոնցմէ իւրաքանչիւրը ընկերութեան եւ համաձայնութեան դիմակին տակ խաբելու եւ խոշոր պատառները ինքը կլլելու կ'աշխատէր :

Օսմանեան կայսրութեան հետ մարած եւ պատմութեան անցած սոյն կուսակցութեան այս չորս պարագլուխ-

ներն ալ ընթերցողներուն ծանօթացնելու պէտքը կը զգանք:

Ո՞վ էր գնդապետութենէ հանգստեան կոչուած Սատրգ պէյ:

Սատրգ պէյ զինուորական վարժարանէն հեծեալ զօրաց սպայի աստիճանով ելած էր: 1907ին Մանասթր գրտնուող հեծեալ զօրաց զօրարածնին մէջ տեղակալ էր, եւ այդ միջոցներուն կազմուած Իթթիհատ եւ Թէրազըր յեղափոխական կուսակցութեան անդամագրուելով իբր բարձրաստիճան սպայ Մանասթրի մասնաճիւղին նախագահ ընտրուած էր: Սատրգ պէյ Իթթիհատ եւ Թէրազըրին այն ժամանակ բանակին մէջ գտնուող կարեւոր դէմքերէն մէկն էր:

Սատրգ պէյ, հեծեալ զօրաց ենթասայայ Աթըզ էֆէնտին Շէմսի փաշան սպաննելու մղած եւ ոճիրէն վերջ զայն պաշտպանած ըլլալուն համար՝ Իթթիհատ եւ Թէրազըր կուսակցութեան կողմէ իբր գործունեայ եւ անվախ մէկը ճանչցուած էր:

Սահմանադրութեան հռչակումէն ետք, Իթթիհատ եւ Թէրազըր կուսակցութիւնը զնդապետ Սատրգ պէյին կարգ մը պաշտօններ տուած եւ սակայն ապիկարութեան երեսէն Մանասթրի մէջ շահած անունը եւ դեռ, կամաց կամաց կուսակցութեան մօտ ունեցած վարկը կորսնցուցած էր:

Ասկէ վերաւորուող Սատրգ պէյ Իթթիհատ եւ Թէրազըրէն հեռացած էր եւ հանգստեան կոչուած էր:

Սատրգ պէյ Եմէնի ապստամբութեան եւ Ափրիկեան Տրիպոլիտոյ գրաւման ժամանակ առիթը գտնելով՝ Իթթիհատ եւ Թէրազըրին իբր բնդդիմադիր Աղատական կուսակցութիւնը հիմնել յաջողած էր:

Սատրգ պէյ միջակ դասուն սլատկանող ընտանիքի մը զաւակը՝ հին մտայնութեան տէր էր եւ ո՛չ մէկ հարստական լեզու գիտէր:

Աղատական կուսակցութեան առաջնորդ եղող Սատրգ պէյ, միջակ կրթութիւն եւ ուսում առած ըլլալով, բարձր ժողովներ կառավարելու եւ զիւանագէտ մարդոց հետ յարաբերուելու ձեւերը չէր գիտեր. Սատրգ պէյ պետական մարդ չէր կրնար ըլլալ:

Մահմուտ Շէվքէթ փաշայի սպանութեան վրայ Պոլիսը լքելու ստիսլուած Սատրգ պէյ, ցաւալի է որ Փարիզի եւ Յունաստանի մէջ քիւրտ Շէրիֆ փաշայի եւ այլ քաղաքական փախստականներու հետ գործի խառնուելով իր պատիւը եւ վարկը սրատաւորած էր: Ընդհ. սլատերազմի



ժամանակ ալ Եգիպտոս գտնուելով ի վնաս իր հայրենիքին պաշտօններ ստանալու ստորնութիւնն ալ գործած էր:

Ո՞վ էր Կիւմիւլինացի Իսմայել պէյ:

Այսօր Փարիզ գտնուող Կիւմիւլինացի Իսմայել պէյ իրաւարանական վարժարանէն շրջանաւարտ էր. առաջին երեսփոխանական ժողովին մէջ Իթթիհատ եւ Թէրազզըի Կիւմիւլինայի երեսփոխան էր:

Կիւմիւլինացի Իսմայել պէյ շատ նախանձոտ, շատ ստախօս, պառակտիչ եւ նոյն ստեն երեւակայութենէ դուրս վախկոտ էր:

Կառավարութեան մէջ իրեն աթոռ մը չարուելուն համար ցաւած, Իթթիհատ եւ Թէրազզըի մէջ պառակտումի սկսած եւ ասոր համար Իթթիհատ եւ Թէրազզըն զինք կուսակցութենէն եւ երեսփոխանութենէն դուրս հանած էր:

Իսմայել պէյ ապա Ազատական կուսակցութեան յարելով, Սասըզ պէյի միամտութենէն օգտուելով, կուսակցութեան փոխ նախագահը եղած էր:

Մահմուտ Շէվքէթ փաշայի դէպքին վրայ փախուստ տուող Կիւմիւլինացի Իսմայել պէյ Ֆրանսայի, Յունաստանի եւ Եգիպտոսի մէջ Սասըզ պէյի հետ թափառելով ամէն էնթրիկներու մէջ մտած եւ միշտ Սասըզ պէյը խարելով իբր քաղաքական խարերայ սողրած էր.

Զինադադարի պահուն համառ Ֆէրիա փաշայի կառավարութեան ժամանակ Պրուսայի նահանգին կուսակալ նշանակուած եւ սակայն իր գործերը զինք նշանակող կառավարութեան հակառակ տեսնուելուն պաշտօնազրկուած եւ իր մասին քննութեան ձեռնարկուած էր: Ի վերջոյ Տամատ Ֆէրիա փաշան տապալելու համար Քեաղըտ խանէի մէջ Չէրքէղ Պէքիբ պէյը համոզելով խաղցած կատակերգութեան եւ ազգային շարժումի պետերուն հետ գաղտնօրէն թղթակցելուն համար արգելափակուած եւ Սասըզ պէյին միջնորդութեան շնորհիւ ապառ արձակուած էր.

«Փէյսամ-Սապահ» թերթի խմբակին եւ նախկին Ներքին Նախարար Ալի Քէմալ պէյին առեւտնոյման եւ սպաննութեան վրայ Պոլիսը լքող Կիւմիւլինացի Իսմայել պէյ Ռումանիա ապաստանած էր: Հոն ալ հանդիտ շնտեղով, հոն գտնուող փախստականները իրարու դէմ լարած էր:

Վերջապէս Սան-Րէմօ, Կիւմիւլինացի Իսմայել պէյ հանգուցեալ Սուլթան Մուհամմէտ Վահիտետափին Սան Զ.ն եւ շէյխ իւլ Իսլամ Մուսթաֆա Սապրի Էֆէնտին, գնդապետ Սասըզ պէյը, Մարաշախա Վէհիպ փաշան եւ այլ ընդդիմադիր պէյերը համոզելով իրաւագրկուած եւ ան-

բաղդ թագաւորին վերջին ապրուստէն 500 ոսկի շորթած էր:

Ստացուած վերջին տեղեկութիւններու համաձայն, այս վերջին պահերուն ճերմակ ուսերուն եւ անոնց դուքսերուն եւ հայ յեղափոխական կուսակցութիւններէն մէկուն հետ քաղաքական փոփէր մը խաղցած եւ պլոֆ ընեյով խոշոր գումարներ կորցած էր:

Այս վերջին ժամանակներուն ալ Նիս գտնուող Ապտիւլ Մէճիտ էֆէնտին խարելու աշխատած, հոն մահափորձի մը ենթարկուած եւ սակայն չէ մեռած:

Ո՞վ է ետեա Մուսթաֆա Սապրի էֆէնտի:

Այսօր Յունաստանի Կիւմիւճինա գաւառակին մէջ բնակող եւ հոն իր զաւկին Իպրահիմ պէյի հետ «Շարըն» (Վաղը) անունով թերթ մը հրատարակող Խոճա Մուսթաֆա Սապրի էֆէնտի Գաթաի Ահմէտ էֆէնտիի զաւակն է: Կրօնական գիտնականներու մօտ Թոգատի Մուսթաֆա էֆէնտի անունով ծանօթ է: Նախնական կրթութիւնը Թոգատի մէջ առնելէ ետք, Կեսարիա գացած եւ հոն կրօնական գիտութիւնները սորվելով Պոլլիս եկած եւ Փաթենի մէջ ուսուցիչ հանդուցեալ Խալիս էֆէնտիէն վկայական ստացած էր:

Միապետութեան ժամանակ աները ուսուցիչ Խալիս էֆէնտիի ազդեցութեան շնորհիւ պալատէն ներս մուտք գործած էր: Սահմանադրութեան ժամանակ Թոգատէն Երեսփոխան ընտրուած եւ Երեսփոխանական ժողովին մէջ 35րդ յօդուածին վրայ 7 ժամ տեւող ճառով իր հռչակը աւելցած էր:

Մուսթաֆա Սապրի էֆէնտի կրօնագէտներու մէջ հաղուսդիւտ եւ լաւ գրող ու լաւ բանախօս էր: Օր մը Երեսփոխանական ժողովին մէջ բանախօսած ժամանակ Իթթիհատ եւ Թէրազըրի հասցէին աննպաստ խօսած ատեն՝ Թալաթ. «Պարոն, պարոն, Ձեզ Շէյխ Իւլ Իսլամ չնչանակելու համար մեր հասցէին կը խօսիս» երբ ըսած է, ինք պատասխանած է. —

«Եթէ կարողութեան հաւասար դիրք պահանջելը ո՞ճիր է, Ձեզ նոյն ո՞ճիրին վրայ կը բռնեմ»:

Գրելու եւ խօսելու մէջ բարձր կարողութիւն ունեցող Խոճա Մուսթաֆա Սապրի էֆէնտի՝ դիւանագիտութեան մէջ զէրոյի կը հաւասարէր եւ իր տարագրութեան միջոցին ունեցած գործունէութեամբ ցոյց տուած էր, որ պետական մարդ չէր եւ չէր կրնար ըլլալ:

Մուսթաֆա Սապրի էֆէնտի զինադադարէն վերջ իր



տարագրավայրը եղող Պէլէճիկէն վերադառնալուն՝ Շէյխ Չէյն էլ Ապիտին էֆէնտի հետ Ազատական կուսակցութիւնը վերակազմած եւ իբր Շէյխ Իւլ Իսլամ՝ Տամատ Ֆէրիտ փաշայի դահլիճին անդամակցած եւ արդէն սնանկ վիճակ ունեցող պետական գանձէն իբր վնասուց հատուցում 15 հազար ոսկիի մօտ գումար մը քաշած էր:

Տամատ Ֆէրիտ փաշային Վերսայլի հաշտութեան վեհաժողովին Երթալուն վրայ՝ վարչապետական տեղակալի պաշտօնը ստանձնող Մուսթաֆա Սապրի էֆէնտի՝ վարչապետ դառնալու փափաքով, Տամատ Ֆէրիտ փաշային դէմ դաւել, Խոճա-Փաշա ըլլալ եւ կարենալ Բիշլիոյի դերը խաղալ ուղած էր:

Տամատ Ֆէրիտ փաշա Փարիզէն վերադարձին հրաժարած եւ նոր դահլիճը կազմելու պաշտօնը կրկին անոր տրուելուն վրայ, բախտախնդիր Մուսթաֆա Սապրի էֆէնտի նոր դահլիճէն դուրս ձգուած եւ այսպէսով շուքի կտակէն վաղելով բերնի ոսկորը կորսնցուցած էր:

Մուսթաֆա Սապրի էֆէնտի վարչապետական տեղակալ եղած միջոցին Եգիպտոսէն եկող եւ Ազատական կուսակցութեան ղեկավար դարձող Սատրգ պէյի հետ ունեցած վէճերը համակիր եւ հակակիր թերթերու մէջ ըսի ըսաներու տեղի տուած եւ կուսակցութիւնն ալ չափաւոր եւ ծայրայեղ թևերու շաժնելով, ուժը եւ ազդեցութիւնը կորսնցուցած էր:

Մուսթաֆա Սապրի էֆէնտի քաղաքականութեան մէջ եւ ո՛չ մէկ ատեն գիտակցութեամբ քայած էր: Իր փեսին Պերկամցի Չէքի խոճային եւ անոր որդւոյն Իսրահիմ պէյին ցոյց տուած ուղղութեամբ եւ թելադրութեամբ քայած եւ միշտ ալ պարտուած էր:

Հետեւանքը այն եղած էր, որ ընդհանուր միւլֆթի Մուսթաֆա Սապրի էֆէնտին, Թոգատի երեսփոխանի հանգամանքով երեսփոխանական 35րդ յօդուածի պաշտպան Մուսթաֆա Սապրի էֆէնտի շատո՛նց մեռած էր...

Հիճազի եւ Եգիպտոսի, Ռումանիոյ եւ Իտալիոյ մէջ զանազան գոյն առնող, Յունաստանի Կիւմիւլճինա գաւառակին մէջ «Եարըն» (Վաղը) անունով թերթ հրատարակելով կործանած Օսմանեան կայսրութեան դամբանականը խօսելու տեղ, երբեմն Օսմանեան դահակալներուն եւ երբեմն կեանքի նշան ցոյց տալու աշխատող ընդդիմադիրներուն դէմ առնող-տուող Մուսթաֆա Սապրի էֆէնտի, գինադադարէն վերջ ընդհ. միւլֆթի նշանակուող փառատենչ Մուսթաֆա Սապրի էֆէնտին չկա՛ր արդէն...

Ո՞վ էր Շէյխ Ջէյն էլ Ապիտին եֆէնտի:

Այսօր Սուրիա գտնուող Շէյխ Ջէյն էլ Ապիտին է—  
Ֆէնտի Գոնիացի է եւ մէլլավի աղանդին պատկանելով Գո—  
նիայի մէջ Շէյխ Չատէ անունով ծանօթ է:

Մահմանադրութեան սկիզբը Գոնիայէն երեսփոխան  
ընտրուած եւ ժամանակ մը ետք Իթթիհատ եւ Թէրազզըին  
դէմ հակառակելով նոր կազմուած «Էհալի» (ժողովուրդ)  
կուսակցութեան յարած եւ ի վերջոյ նոյն կուսակցութեան  
հետ Ազատական կուսակցութեան միացած էր:

Շէյխ Ջէյն էլ Ապիտին էֆէնտի, ուսումով միջակ եւ  
վերջին ծայր յամառ մէկն էր: Յճրդ յօդուածին պատճա—  
ռաւ առաջին երեսփոխանական ժողովին լուծումէն ետք,  
երկրորդի ընտրութեան միջոցին հակառակ Իթթիհատ եւ  
Թէրազզըի կառավարութեան ընդդիմութեան՝ կրկին ե—  
րեսփոխան ընտրուելը՝ ընդդիմադիրներու մէջ իրեն վարկ  
չահեցուցած եւ սակայն յիշուելու արժանի գործ մը չէր  
կրցած տեսնել:

Մահմուտ Շէվքէթ փաշայի սպանութեան ժամանակ  
Պոլիս չգտնուելուն համար ուրիշ ընդդիմադիրներու նման  
չէր հետապնդուած, սակայն Կէմլիտիկ աքսորուած եւ  
մինչեւ պատերազմին վերջանալը հոն նպարավաճառու—  
թեամբ զբաղած էր:

Զինադադարէն ետք մախազը ուսին Պոլիս եկող Շէյխ  
Ջէյն էլ Ապիտին էֆէնտի, խոճա Մուսթաֆա Սապրիի  
հետ Ազատական կուսակցութիւնը վերակազմած եւ պալա—  
տական շրջանակին մէջ մտնելով, այդ խառնակ շրջանին  
րուն նշանակութեամբ ազդեցութեան տէր միապետ մը ե—  
ղած էր:

Կուսակցութեան կեդրոնատեղին նստելով կլկլակը  
քաշելը, ահնոցին վրայէն դիմացինը դիտելը, կառավա—  
րութեան քաղաքականութեան միջամուխ ըլլալով կարգ մը  
յիմարներ եւ տգէտներ կառավարական կազմին մէջ մըտ—  
ցընելը եւ վերջապէս ինքզինքը ծերակոյտի անդամ նշանա—  
կել տալով պետական գործերով զբաղելը, Օսմանեան կա—  
ռավարութեան մէջ Ռասիփութին մը ըլլալու կարողութիւ—  
նը ցոյց տուած էր:

Ահաւասիկ այս չորս անձերուն գործունէութիւնն էր,  
որ Ազատական կուսակցութիւնը անգամ մըն ալ չվերակեն—  
դանանայու պայմանաւ կործանած եւ վեց հարիւր տար—  
ուան Օսմանեան կայսրութիւնը մարած էր:

Ազատական կուսակցութիւնը իրենց ձեռքին մէջ բրո—  
նող այս խոճաներուն եւ շէյխերուն հետապնդած քաղաքա—

կանութիւնը Եզիպտոս հրատարակուող «Միւսավաթ» թերթի տնօրէն Իզմիրցի Հաֆըզ Իսմայէլ էֆէնտի քանի մը բառերով բացատրելուն, այս խօսքերը ապագային զէպքերու մասին հիմակուրնէ՛ պաղափար մը կազմելու համար ստորեւ կ'արտագրենք.

Յարգելի խմբագիրը կ'ըսէ. —

«Զինպագարի միջոցին Բ. Դուռը մեռելատան վերածող Զէյն էլ Ապիտիներ, Վասֆիներ, Համիտիներ, Մուսթաֆա Ասրմ եւ Սապրիներ ի՞նչ գործ տեսան: Այս սեւ օրերուն չէ՞ր որ բոլոր ամօթալի սխալները, դաւերը, Շէյխ Իւլ Իսլամութեան սրահներուն մէջ որոշուեցան: Նըպարավաճառի խանութ մը կառավարելու անկարող, դաւով եւ կեղծիքով կառավարութիւն կործանող այս մարդոց քաղաքականութեամբ զբաղուելովը իսլամութիւնը պիտի տիրապետէր: Դիրքի տիրացող Սոճա Սապրինն առաջին գործը եղաւ, իր անձնականին՝ 15-20 հազար ոսկի վնասուց հատուցում առնելը, Մուսթաֆա Քոթէզա կոչուող անարգելին Սնայողութեան Դրամատան մէջ տեղաւորել, իր գիրքը ամբացնելու համար դահլիճին մէջ հանգուցեալ Ալի Քէմալի գէմ Իթթիհատականներու՝ Իզզէթ եւ Րէշիտ Արիֆ փաշաներու հետ միանալ եւ այսօր Անգարայի եւ Պոլսոյ մէջ պնակալէզութիւն ընող բոլոր Իթթիհատ եւ Թէրագըրի ծառայողները իր շուրջը խմբելը, եւ զեռ՝ Ազատական կուսակցութիւնը բաժան բաժան ընելով երկրին երիտասարդութեան եւ զինուորականութեան երես գարձընող, ատելութիւն ցոյց տուող եւ Անատոլուի շարժումը Իթթիհատականներուն ձեռքը յանձնող, ընդգիծագիրները անօթի ծարաւ ձգող ու ստորնացնողը նոյն ինքն եւ իր խոճանները չեղա՞ն:

\* \* \*

Վարչապետ Տամատ Ծէրիտ փաշա՝ Փարիզէն վերադարձին երկու կարեւոր խնդիրներու գէմ առ գէմ կը գրանուէր: Մէկը վարչապետական տեղակալ Շէյխ Իւլ Իսլամ Մուսթաֆա Սապրի էֆէնտիին խոճափաշա ըլլալու համար տարած խլրդային աշխատանքներուն վերջ տալն էր, միւսը Արեւելեան նահանգներու մէջ հայերու գէմ Ազգային կազմակերպութիւն մը ստեղծելու պաշտօնով զրկուած գնդապետ Մուսթաֆա Քէմալ փաշային Իթթիհատ եւ Թէրագըր կուսակցութիւնը վերակենդանացնելու նպատակով ըստեղծած հոսանքը կապիցնելը:

Տամատ Ծէրիտ փաշա Պոլիս հասնելէն քիչ ետք հրատարած էր: Նոր դահլիճը կազմելու պաշտօնը կրկին իրեն

տրուեցաւ, ան Ազատական կուսակցութեան պատկանող նախարարներուն հետ Մուսթաֆա Սապրի էֆէնտին ալ դուրս ձգելով, անոր սադրանքներուն վերջ առած էր: Ազատական կուսակցութիւնը զրկուածի վիճակի մէջ էր: Խեղճ Մուսթաֆա Սապրի էֆէնտի որ վարչապետ, խոճափաշա ըլլալու երեսակաշու թեամբ կը տարուէր, մինչ Շէյխ Իւլ Իսլամութիւնն ալ ձեռքէ փախցուցած էր:

Սակայն զնդապետ Մուսթաֆա Բէմալ փաշային ըստեղծած հոտանքը կասեցնել՝ Տամատ Ծէրիտ փաշայի համար կարելի չէր: Այս մասին ձեռք առնուած յոռի միջոցառումները՝ խնդիրը բոյորովին հունկն շեղած շարժումին լմբոտու թեան զոյն տուած և վերջապէս վեց հարիւր տարւած կայսրութիւնը պամմութեան յանձնած էր:

\* \* \*

Գնդապետ Մուսթաֆա Բէմալ փաշա, «Արեւելեան Նահանգներու Իրաւանց Պաշտպան» միութեան համաժողովին որոշումով, Սերասարոյ մէջ «Թրակիա-Փաշա էլի» և «Իզմիրի Վերադարձման Միութեանց» մասնակցութեամբ և ամբողջ Օսմանեան երկիրը ներկայացնելու պայմանաւ գումարուելիք մեծ խորհրդաժողովը կառավարելու համար, առանց Բ. Դրան տեղեկացնելու, 29 Օգոստոս 1919 կարխնէն Սերասարի մեկնած էր:

Մուսթան Վահիտեատին Խան Զ. Ի և Բ. Դրան որոշումով զնդապետ Մուսթաֆա Բէմալ փաշան թաղաւորական հրովարտակով և լայն իրաւասութիւններով Անատոլու զրկուելը և կարնոյ մէջ դումարուող «Արեւելեան Նահանգներու Իրաւանց Պաշտպան» միութեան համաժողովը կառավարելու պաշտօնը Բէմալին յանձնելուն նպատակն էր, մինչև հաշտութեան ստորագրումը բանակէն դուրս ազգային ուժի մը պատրաստութիւնը ապահովել՝ եթէ կառավարութիւնը պարտաւորուէր Արեւելեան Նահանգները Հայաստանին ձգող դաշնագիր մը ստորագրել: 1878ին ուսթուրք պատերազմէն Սան Սթեֆանոյի դաշնագիրը սրբագրելէ ետք, Պէրլինի մէջ ստորագրուած դաշնագրով՝ Գարատաղի կառավարութեան ձգուած Մերտիդացիները՝ (Գարատաղի կառավարութիւնը չճանչնալով, Օսմ. տիրապետութեան տակ մնալու համար զէնքի դիմելով հայրենիքը պաշտպանած էին): Պէրլինի 6երը Մերտիդացիներուն Օսմանեան տիրապետութեան տակ մնալը ընդունիլ ստիպուած էին, նոյնպէս Արեւելեան Նահանգներու մէջ պամմութեան այս օրինակէն օգտուելի խորհուած էր և հերոսութեամբ և Օսմանեան գահուն հաւատարմութեամբը

հռչակ հանած Արեւելեան նահանգներու ժողովուրդէն կազմակերպութիւն մը ստեղծել փափաքուած էր: Այս գործը կազմակերպելու եւ կառավարելու համար գնդապետ Մուսթաֆա Բէմալ փաշա Անատոլու ղրկուած էր:

Գնդապետ Մուսթաֆա Բէմալ փաշայի եւ թագաւորին եւ Բ. Իրան գծած ծրագրէն տարրեր, Իթթիհատ եւ Թէրագզըի Օսմանեան կառավարութիւնը ուրիշ անուան տակ ձեռք ձգելու միտքը հասկցուած եւ արգելելու միջոցներ խորհուած էր. եւ իբրեւ առաջին միջոց՝ Նախարարաց Սորհուրդը որոշած էր, որ ան պաշտօնանկ ըլլայ եւ Սերաստիոյ մէջ գումարուելիք Ընդհ. Համաժողովին բռնի ուժով իր մուտքը արգելուի եւ պաշտօնանկութեան վերաբերեալ թագաւորական հրամանին պատճէնը Երզնկայի կուսակալութեան հաղորդուի:

Միայն թէ Պոլսոյ ամէն օր փոփոխուող եւ իրարու հետեւած քաղաքականութենէն անտեղեակ ներքին նախարարները, այս որոշման գործադրութեան մէջ շատ գէշ վարուած եւ խնդիրը գծէն գուրս հանելով մեծ ըմբոստութեան գոյն տուած էին:

Տամատ Ֆէրիտ փաշայի կառավարութիւնը, իրականին մէջ չէ՛ր կրցած Իթթիհատ եւ Թէրագզըին պատկանող պաշտօնեաները պետական կազմէն արմատախիլ ընել եւ ո՛չ ալ ընդդիմադիրներուն հարկ եղած դիրքերը տալ եւ բառին բուն նշանակութեամբ աններդաշնակ պետական կազմ մը ունէր իր տրամադրութեան տակ:

Իրերու այս դրութենէն գնդապետ Մուսթաֆա Բէմալ փաշա եւ իր համախոհները առաւելագոյն չափով օգտուած եւ իրենց ուզած կազմակերպութիւնը շատ դիւրութեամբ մէջտեղ բերած էին:

Գոճապըյըզ անունով ծանօթ Սերաստիոյ կուսակալ Րէշիտ փաշա, գնդապետ Մուսթաֆա Բէմալ փաշային կարինէն դէպի Սերաստիա մեկնումի լուրը առնելուն՝ անմիջապէս ներքին նախարարութեան հետեւեալ հեռագիրը տուած էր. —

«Կը տեղեկանամ որ բանակի քննիչութենէն պաշտօնազրկուած գնդապետ Մուսթաֆա Բէմալ փաշա իր քանի մը ընկերներով Համաժողովը գումարելու համար Կարինէն Սերաստիա կու գայ. ի՞նչ դիրք պէտք է բռնել. հրամանի կը սպասենք»:

Իթթիհատ Թէրագզըի ղեկավարներուն պատճառաւ Օսմանեան կայսրութեան ենթարկուած պատուհասներէն ցաւ զգացող Սերաստիոյ կուսակալ Րէշիտ փաշայէն

սոյն հեռադիրը, Արտադրութեան Նախարար և Ներքին Նախարարութեան փոխանորդութիւնը ստանձնող (Նախարարաց Խորհուրդին որոշումէն տեղեակ) Խոճա Վասֆի Էֆէնտիին տրուած էր:

Խոճա Վասֆիին այ գիտնապետ Իհսան պէյի փոխանցած էր որ զնդապետ Մուսթաֆա Քէմալ փաշային և ընկերներուն ձերբակալման և հսկողութեան տակ Պոլիս դրոհուելուն համար հարկ եղած հրաման-պատասխանը գրէ:

Նախարարաց Խորհուրդին Մուսթաֆա Քէմալի և Սերաստիոյ Համաժողովին մասին տուած որոշումէն անտեղեակ՝ Էտհէմ պէյ ներքին նախարարութեան փոխանորդութեան նշանակուած էր:

Էտհէմ պէյ, Խոճա Վասֆի Էֆէնտիին հրամանով գլխանապետին կողմէ սեւադրուած պատասխանադիրը տեսնելուն զարմացած և իր ձեռքով Սերաստիոյ կուսակալ Բէշիտ փաշային հետեւեալ պատասխանը գրած և գրկած էր:

#### Պատասխանին Պատճէնը

«Պաշտօնադրկուած բանակի քննիչի մը հանդէսը՝ օրէնքի թույլատրած եղանակով բնուճեցուցութիւն կատարելիք յանձնարարութիւն»:

Տամատ Փէրիտ փաշայի՝ Շէյխ Իւլ Իսլամ Մուսթաֆա Սապրի Էֆէնտիին և Ազատական կուսակցութեան պատկանող նախարարները կառավարութենէն դուրս ձգելու նըպատակաւ հրաժարելը և նոր դահլիճ կաղմելը այս պահուն կը զուգադիպէր:

Նոր կազմուած դահլիճին մէջ պալատական կրթութիւն ստացած և արժանապէս Բ. Իրան վայելող Ատիլ պէյ, Ներքին Նախարար եղած էր:

Տամատ Փէրիտ փաշա վայելչութեանց և ձեւակերպութիւններու սիրահար էր: Ատիլ պէյի յատուկ խնամքով սափրուած մօրուքը, ճերմակ շապիկի վերեւ լաւ կելպով կապուած փողկապը, վարպետ դերձակի մը կնոզէ պատրաստուած բէտէնկոթը, մանաւանդ գետնաքարչ յարդանքները՝ Փէրիտ փաշա հաւնած և ասոր համար կարծես, զայն իր դահլիճին մէջ իբր Ներքին Նախարար ընդունած էր:

Ատիլ պէյ, թէ՛ թագաւորին, թէ՛ վարչապետ Տամատ Փէրիտ փաշային խոստացած էր, որ իր լարեկամին՝ Նարբերդի կուսակալ և զինուորական տեղակալ Կեսարացի Ղալիպ պէյի միջոցաւ Մուսթաֆա Քէմալ փաշայի խնդիրը քանի մը օրուան մէջ կրնայ լուծել: Անոր առաջին որոշումը Ղալիպ պէյը Սերաստիոյ կուսակալ նշանակել և զինուորական աստիճանը բարձրացնելով փոխ-հրամանատար

նշանակել տալ, իսկ առաջին հրամանը՝ անմիջապէս Աերաստիա մեկնելու եւ Մուսթաֆա Քէմալ փաշան եւ անոր ընկերները ձերբակալելով Պոլիս դրկել եւ Աերաստիոյ մէջ գումարուելիք Համաժողովը արդիւնք տալ եղած էր:

Ներքին նախարար Ատիլ պէյին, հեռագրի վրայ Խարբերդի կուսակալ Ղալիպ պէյի հետ խօսակցութեան ժամանակ, Փոսթ-հեռագրական ընդհ. Տնօրէն Բէֆիդ Խալիտ պէյ իրեն բսած էր, որ Խարբերդի եւ Պոլսոյ մէջ բլլալիք խօսակցութիւնը Աերաստիոյ Կեդրոնէն պիտի անցնի եւ տրուած հրահանգներուն՝ Աերաստիոյ Կեդրոնը եւ անուղղակի կերպով կուսակալը, հրամանատարը եւ նոյնիսկ Մուսթաֆա Քէմալ փաշա պիտի տեղեկանան, սակայն Ատիլ պէյ կարեւորութիւն չէր ընծայած եւ Բ. Դրան հեռագրի մեքենային վրայ Ղալիպ պէյի հետ օրերով խօսակցած էր:

Խարբերդի կուսակալ՝ Կեսարացի Ալի Ղալիպ պէյ, այս գործը դիւրիս հանելու կարող մէկը չէր: Ան շատախօս, ինքնահաւան եւ գործ չտեսնող պոռոտախօս մըն էր: Ատիլ պէյի կողմէ տրուած հրահանգներուն դէմ կարգ մը երկուակայական եւ անտեղի կարծիքներ յայտնելով, խօսակցութիւնը օրերով երկարած էր եւ բոլոր այն խօսակցութիւններուն Աերաստիոյ կուսակալ Բէշիտ փաշա եւ հրամանատար Սալահէտտին պէյ տեղեկացած էին: Անոնք սոռանց բանաւոր պատճառի՝ իրենց պաշտօնադրկումէն վըշտացած՝ խնդիրը Մուսթաֆա Քէմալ փաշային տեղեկացնելով զայն պաշտպանել որոշած էին:

Ներքին նախարար Ատիլ պէյին առաջին առթիւ գործած սխալը Մուսթաֆա Քէմալ փաշայի մղձաւանջը սաստկացուցած էր. կեղծ ոսկիի նմանող եւ սակայն անարժէք իշխան մը եղող Տամատ Փէրիտ փաշայի պետական մարդկիւր ընտրելու մէջ ունեցած ապիկարութիւնը այս մղձաւանջը ծնած էր:

Գնդապետ Մուսթաֆա Քէմալ, Բ. Դրան սխալներէն առաւելագոյն չափով օգտուած եւ Կեդրոնական Կառավարութեան համակիր կուսակալ Բէշիտ փաշան եւ հրամանատար Սալահէտտին պէյը սիրաշահելով՝ Աերաստիոյ մէջ անոնցմէ մեծ աջակցութիւն գտած էր:

\* \* \*

Ներքին նախարար Ատիլ պէյի Խարբերդի կուսակալ Ղալիպ պէյի դրկած հրահանգները, իրենց անպէտք եւ ոչտրամաբանական մանրամասնութիւններով ցոյց կու տան, թէ օրուան Կառավարութիւնը ինչպիսի ձեռքերու մէջ կը

գանուէր: Ասոր համար արձանագրել հարկ կը տեսնենք:

Ատիլ պէյ հեռագրով Ղալիպ պէյին կ'ըսէր. «Մանօթ է Ձեզի, որ Կարնոյ մէջ Համաժողով անուան տակ քանի մը հոգի գումարուելով կարգ մը որոշումներ առին. գումարուողները եւ տրուած որոշումները թէեւ պաշտօնականութենէ զուրկ են, սակայն ասոնք երկրին մէջ կարգ մը ըսիրասաներու տեղի կու տան որոնք չափազանցեալ կերպով Եւրոպայի մէջ կ'արձանագրուին եւ գէշ արամադրութիւն կը ստեղծեն: Առ այժմ կարեւորութիւն ունեցող ո՛չ ուժ եւ ոչ խնդիր կայ, սակայն այս չափազանցութիւններուն եւ դիմադրութիւններու ազդեցութեան տակ, Անգլիացիներ մօտ օրէն Սամսոն կարեւոր ուժ պիտի հանեն ելեր: Եթէ կառավարութեան ի շարս այլոց Ձեզի ալ տրուած հրահանգներուն հակառակ՝ շարժումը շարունակուի, շատ հաւանական է որ Սամսոն հանուելիք օտար ուժերը մինչեւ Սերաստիա եւ աւելի ներսերը յառաջանալով գրաւեն եւ այս՝ բնականաբար երկրին չահերուն դէմ է:

«Մեզի կը հաղորդուի, որ Կարնոյ մէջ գումարուող անձերը ի մօտոյ Սերաստիա երթալով հոն ալ համաժողով պիտի գումարեն եղեր: Կառավարութիւնը գիտէր, որ հոն 5-10 հոգիի գումարումը արդիւնք պիտի չտար, սակայն ստիկա Եւրոպային հասկցնել կարելի չէ: Ասոր համար նոր գումարումը արգիլել հարկ կը տեսնուի: Սերաստիոյ մէջ Կառավարութեան կատարեալ վստահութիւնը վայելող եւ երկրին ապահովութեան համար տրուած հրահանգները նոյնութեամբ գործադրելու կարող կուսակալ մը նշանակել յարմար նկատելով, Ձեր վսեմութիւնը հոն կը ղրկենք, թէեւ Սերաստիոյ մէջ համաժողով գումարել փափաքող քանի մը հոգիին արգելք հանդիսանալ դժուար գործ մը չէ, սակայն կը տեղեկանանք, որ կարգ մը բարձրաստիճան զինուորականներ ասոնց հետ գաղափարակից ըլլալով՝ Կառավարութեան ձեռք առնելիք միջոցները դժուարութեան բաղխեցնել եւ այդ ծանօթ անձերը ըստ կարելւոյն պաշտպանել պիտի ուզեն: Այս նկատումով եւ գործի յաջողութեան համար յարմար է, որ Ձեր հետ ձեր վստահութիւնը վայելող 100-200 հոգի գանուի:

«Հետեւաբար՝ Քիւրտերէն վստահելի 100-150 ձիււոր առնելով եւ ո՞ւր եւ ինչո՞ւ ձեզի ընկերանալին առանց յայտնելու՝ չակնկալուած մէկ պահուն Սերաստիա կը հասնիք եւ կուսակալութիւնն ու հրամանատարութիւնը ձեռք կ'առնէք: Հոն զինուորներուն եւ ոստիկան-զինուորներուն թիւը քիչ է. դուք ալ եթէ քիչ մը ճարպիկ շարժիք՝ Ձեր



դէմը ուրիշ ուժ պիտի չգտնէք եւ անմիջապէս հեղինակութիւն ստեղծելով Համաժողովի գումարման առիթ պիտի չտաք: Եթէ այդ անձերէն հոն գտնուողներ ըլլան, անմիջապէս ձերբակալելով հսկողութեան տակ Պոլիս կը դրկէք:

«Այս կերպով կառավարութեան ազդեցութիւնը կ'անելնայ եւ արկածախնդրութեամբ զբաղողները կը բարոյալքուին եւ վնասաբեր արարքներ չեն կրկնուիր: Իուրան ալ ազդեցութիւն կը գործէ, կառավարութեան առիթ կու տայ, որպէսզի եւրոպացիներուն այս շրջանը գրաւելու նրպատակը ջուրը ձգել տայ: Արդէն Սերաստիոյ երեւելիները այդ մարդոց գործերէն եւ դրամ հաւաքելու համար գործադրած ճնշումներէն ցաւած եւ արգիլելու համար՝ Կառավարութեան ուժ տալու պատրաստ են: Հոն ոստիկանգորաց հրամանատարութեան պիտի գրուի եւ հարկ եղած չափով ուժ պիտի տրամադրուի եւ ազդեցիկ մարդոց կողմէ ալ՝ մասնաւոր օգնութիւն պիտի ըլլայ: Ապա Կառավարութեան հաւատարիմ ոստիկան-զինուորներէն ուժ պատրաստելէ ետք, միասին տարած հեծելազօրքը հետզհետէ տեղերնին կը վերադարձնէք: Գործին յաջողութեան համար վերջին ծայր գաղտնապահութեամբ գործելու է:

«Սերաստիոյ մէջ կատարելիք գործիդ եւ նոյնիսկ այդ կողմերը երթալուդ մասին Ձեր ընտանիքի ամենալստահելի մէկ անդամին պիտի չյայտնէք: Սերաստիա ժամանելնիդ՝ Ձեզի ընկերացողներէն ալ պիտի զգուշանաք: Ասիկա յաջողութեան հիմն է:

«Առ այժմ ընտանիքնիդ հոն կը ձգէք եւ լուր կը տարածէք, թէ շրջակայ ցեղախումբերու կացութիւնը քննելու համար քանի մը օր պիտի բացակայիք: Յանկարծակի Սերաստիա հասնելնուդ՝ ստորեւ ձեզ լիազօրող հեռագիրը առ որ անկ է կը ներկայացնէք եւ կուսակալութիւնն ու հրամանատարութիւնը խսկոյն ձեռք առնել կ'աշխատիք: Գործերու մասին հեռագրով Նախարարութեան տեղեկութիւն կու տաք եւ առ այդ հարկ եղած հրահանգը կը ստանաք: Գործի սկսելէ ետք, յարմար ժամանակին ընտանիքնիդ ալ բերել կու տաք: Սերաստիոյ ներկայ կուսակալ Րէչիստ փաշան իր պաշտօնանկութիւնը, տեղը ուրիշի մը նշանակուիլը եւ Ձեզի ծանօթ մարդոց ի մօտոյ Սերաստիոյ մէջ գումարումէն տեղեակ ըլլալուն՝ առանց վայրկեան կորսնցնելու Ձեր պաշտօնատեղին մեկնելու էք:

«Փութով մեզի տեղեկացուցէք, թէ ե՞րբ պիտի մեկնիք եւ ե՞րբ կրնաք հոն հասնիլ: Սերաստիոյ մէջ ներկայացուելիք Ձեր հեռագիրը հետեւեալն է.—

«Ձեր վսեմութեան Սերաստիոյ կուսակալ եւ հրամանատարութեան նշանակումը Նախարարաց Խորհուրդին կողմէ որոշուած եւ Նորին Կայսերական բարձրութեան կողմէ վաւերացուած ըլլալուն՝ անմիջապէս մեկնելով՝ սոյն հեռագիրը Սերաստիոյ գինուորական եւ ֆաղափային պաշտօնեաներէն հարկ եղածներուն կը ներկայացնէ՛ք եւ կուսակալութիւնն ու հրամանատարութիւնը ձեռք առնելով գործի կը սկսիք եւ փութով կը տեղեկացնէք:

Պատերազմական նախարար Ներքին Գործոց նախարար

Սիւլէյման Շէֆիք

Ատիլ»:

3-9-1335

\* \* \*

Գնդապետ Մուսթաֆա Բէմալ փաշա՝ Բ. Դրան Խարբերդի կուսակալ Ալի Ղալիպ պէյին տուած բոլոր հրահանգներուն եւ հրամաններուն տեղեկացած ըլլալով՝ մտահոգ էր, որովհետեւ տակաւին չըջանին իշխելու չափ ուժ չունէր:

Տամատ Ֆէրիտ Փաշայի կառավարութեան գործած սխալները շատ մեծ են: Խնդիրը փոխանակ Խարբերդի կուսակալին նման յիմար պոռոտախօսի մը յանձնելու, եթէ ուղղակի Սերաստիոյ կուսակալ Բէշիտ փաշային (որը այս մասին հրահանգ ալ խնդրած էր) եւ հրամանատար Մալահէտտին պէյին յանձնէր — այսինքն հանգուցեալ Խոճա Վասֆի էֆէնտիին բռնած ճամբուն հետեւէր — հարիւրին հարիւր այն տազնապին վերջ տրուած կ'ըլլար:

Սերաստիոյ կուսակալ Բէշիտ փաշան եւ հրամանատար Մալահէտտին պէյ՝ Պոլսոյ կառավարութեան կատարելապէս հաւատարիմ էին եւ տրուելիք հրահանգները գործադրելու ուժն ու կարողութիւնը ունէին: Պոլսոյ Ֆէրիտ փաշայի կառավարութիւնը՝ միշտ փոփոխութեան ենթարկուելուն, այս կէտը չէր կրցած խորհիլ եւ այսպէսով Մուսթաֆա Բէմալ փաշայի բաղդը ժպտած էր:

Մուսթաֆա Բէմալ փաշայի այս չըջանին մտավախութեան աստիճանը հասկնալու եւ դատելու համար «Երզնկայի կիրճին դէպքը» պատմել կը բաւէ:

Երզնկայի կիրճին դէպքին գնդապետ Մուսթաֆա Բէմալ փաշային վրայ գործած ազդեցութիւնը այնչափ զօրաւոր եղած է որ ցարդ չէ կրցած մտնալ եւ «Հալք» կուսակցութեան առջեւ արատասանած եւ ասպա գրքոյկի ձեռով հրատարակուած ճառին մէջ էջեր գրաւելու չափ կարեւորութիւն ստացած է:

Տեսէ՛ք, Մուսթաֆա Քէմալ փաշա այս պարզ դէպքը որչա՞փ կը չափազանցէ. —

«Երզնկայի կիրճը հասնելուս, հոն հսկողութիւն կատարող ոստիկան-զինուորները եւ սպաները մտահոգ վիճակի մէջ մեր ինքնաշարժը կեցնելով ըսին.

«— Տէրսիմի քիւրտերը կիրճը բռնած են, վտանգ կայ, չէք կրնար անցնիլ: Կեդրոն տեղեկացուցինք, որ օգնական ուժ չըկեն, մինչեւ որ հասնին՝ սպասել պէտք է—:

«Ըսել է Ալի Ղալիպ պէյ գործի կը սկսէր: Երբ ըսուեցաւ, որ Երզնկայի կիրճը Քիւրտ յելուզակներու կողմէ բռնուած է, կասկած չկար որ Ալի Ղալիպ պէյի կողմէ ճարուած քանի մը յելուզակներու կողմէ բռնուած էր: Արդեօք ասոնք ի՞նչ ուժ կը ներկայացնէին, կիրճին կողմը ի՞նչքան ուժով բռնած էին: Ասոնք ցրուելու համար Կեդրոնէն ուղուած օգնական ուժը ե՞րբ պիտի հասնէր»:

Ահա այս խօսքերը Մուսթաֆա Քէմալ փաշային մտավախութեան չափը որոշելու կը բաւէ. Ալի Ղալիպ պէյ, եթէ ճարպիկ մէկը ըլլար, անկասկած փոքր ուժով մը քէմալական վտանգը կը փարատէր եւ հսկայ Օսմանեան կայսրութիւնը փլուզումէ կ'ազատէր, եւ ամէն օր զոյն եւ ձեւ փոխող այս բռնադատեալ եւ անբնական հանրապետութեան ստեղծուելուն եւ Անատոլուի ժողովուրդին պատիւը եւ նրա իրապետութիւնը արատաւորելու առիթ չէր տրուեր:

Այս պարզ դէպքի մասին Մուսթաֆա Քէմալ փաշայի չափազանցութիւնները լսեցէք. —

«Մինչեւ այս դրութեան վերջ գտնելը Երզնկա վերադառնալ եւ ո՛վ գիտէ քանի՞ օրեր սպասել պէտք էր: Մինչդեռ մենք կ'աճապարէինք: Եթէ Կարինէն Սերաստիա երկարաձգուող ճամբան սովորականին պէս կտրելով որոշուած օր Սերաստիա չգտնուէի, վախնալով հոն կանդ առած ըլլալս Սերաստիոյ եւ այլ վայրերու մէջ պիտի տարածայնուէր եւ գործը տակն ու վրայ պիտի ըլլար»:

Որչա՞փ մտավախութիւն: Այս ու այն կերպով եւ հում դերձանով իրեն կապուած կարգ մը մարդոց հետանային վախնա՛լ...

Տեսէ՛ք տակաւին ինչե՛ր կ'ըսէ. —

«Այդ պարագային ամէն վտանգ արհամարհելով՝ ճամբան շարունակել պէտք էր: Ուրիշ ճար չունէինք: Թեթեւ գնդացիներով զինուած ընկերներէս քանի մը հատը՝ այսօր զօրաբաժնի հրամանատար Թօֆան պէյ անունով ծանօթ՝ Օսման պէյի հրամանատարութեամբ ինքնաշարժով մը մեր ինքնաշարժին առջև անցաւ: Աջէն ու ձախէն

արձակուելիք գնդակներուն առանց կարեւորութիւն տալու՝ ինքնաշարժերը վերջին արագութեամբ խճուղիէն պիտի սուրային: Եթէ վիրաւորուող կամ մեռնող ըլլար՝ անոնցմով պիտի չզբաղուէինք. բոլորս ինքնաշարժէն պիտի իջնէինք եւ անոնց վրայ յարձակելով ճամբան պիտի բանայինք: Իսկ ողջ մնացածներս կրկին գործածելի ինքնաշարժերը նստելով, փութով ճամբանիս պիտի շարունակէինք. տրուած հրամանը այս էր:

«Այս կերպ շարժիլը շիտակ եւ ապահով չնկատողներ կրնան գտնուիլ: Թէեւ այդ պահուն՝ Սարբերդի կուսակալ Ալի Ղալիպ պէյին Տէրսիմ երթալը եւ ինծի դէմ կարգ մը միջոցներ ձեռք առնելը որոշ էր, սակայն ըսեմ, որ կիրճին իրապէս գրաւուելուն չհաւատացի»:

Ան կը շարունակէ եւ կ'ըսէ.—

«Կ'ենթադրէի որ, ասիկա՝ զիս չէզոքացնելու նպատակաւ Կեդրոնական Կառավարութեան խրտուիլակը եղող կարգ մը մարդոց կողմէ պատրաստուած ծրագիր մըն էր. երկրորդ՝ շատ հաւանական է որ, եթէ Տէրսիմի Քիւրտերը կիրճը բռնած ըլլային, ասոնց ընելիքը միայն հեռու դիւրքերէն մեր վրայ կրակելը պիտի ըլլար»:

Մուսթաֆա Քէմալ փաշայի Երզնկայի կիրճի դէպքի մասին տուած բացատրութիւններուն վրայ Պոլիս հըրատարակուող «Միլլէյէթ» թերթն ալ խնդիրը այսպէս կը մեկնէ.—

«Ղազի փաշային վերեւ յիշած կէտը շատ կարեւոր է. եթէ ինք որոշուած օրը Սեբաստիա չգտնուէր եւ վախնալով հոս հոն սպասելը տարածայնուէր, «բերնէ բերան» գերան» ըլլալով, ամբողջ ժողովուրդը պիտի լսէր եւ ներքին գաւառներու մէջ վախը պիտի տարածուէր եւ դուրսն ալ՝ մեր թշնամիները պիտի ուրախանային»:

Երզնկայի կիրճը ազատ էր, ոեւէ մէկու կողմէն գըրաւուած չըլլալուն՝ ապահով անցած եւ 2 Սեպտ. 1919-ին Սեբաստիա հասած էին:

Կուսակալ Բէշիտ փաշայի եւ հրամանատար Սալահէտին պէյի կողմէ ընծայուած դիւրութեան շնորհիւ՝ Սեբաստիոյ Համաժողովը 4 Սեպտ. 1919-ին, Երկուշաբթի օր գումարուած էր: Մուսթաֆա Քէմալ նախագահ ընտրուած եւ չորրորդ օրը Կարնոյ Համաժողովին ընդունուած կանոնագրին կարգ մը յօդուածները սրբագրուելով՝ ընդունուած էր: Յօդուածները հետեւեալ ձեւով բարեփոխուած են.—

Ա.— Միութեան անունը «Արեւելեան Անատոլուի Իրաւանց Պաշտպան Միութեան» փոխուած էր:

Բ.— Պատուիրակները «ամբողջ Արեւելեան Անատոլուն կը ներկայացնեն» արձանագրութեան տեղ՝ «Պատուիրակները ամբողջ հայրենիքը կը ներկայացնեն» արձանագրուած եւ ներկայ եղող անդամներուն վրայ 6 հոգի եւս աւելցուած էր:

Գ.— «Ամէն կարգի գրաւում եւ միջամտութիւն Յունական կամ Հայկական կառավարութեան մը հիմնումին ի նպաստ ըլլալուն, միակամ պիտի ընդդիմանանք» արձանագրութեան տեղ, «ամէն կարգի գրաւում կամ միջամտութիւն, մասնաւորաբար յունական կամ հայկական կառավարութիւն մը հիմնելու նպատակաւ եղածները, մերժելու համար միակամ պիտի ընդդիմանանք» ձեւին փոխուած էր:

Դ.— «Եթէ Օսմանեան կառավարութեան, օտար տէրութեանց ճնշումին տակ այս կողմերը՝ այսինքն Արեւելեան նահանգները լքելու ստիպման տակ գտնուելը հասկըցուի, ձեռք առնուելիք վարչական, քաղաքական եւ ղինուորական միջոցները սրոշելու, այսինքն առժամեայ կառավարութիւն մը հիմնելու խնդիրը» նախադասութիւնը՝ «այս կողմերը» արձանագրութեան տեղ՝ «մեր հայրենիքի ունէ մէկ մասը լքել» արձանագրուած եւ ընդհանուր կէտերը ամփոփող արձանագրութիւն մը ձգուած էր:

\* \* \*

Համաժողովի Կանոնագրութիւնը վերեւ յիշուածին պէս սրբագրուելով՝ Մուսթաֆա փաշայի կողմէ հետեւեալ հեռագրով Անատոլուի եւ Մակեդոնիոյ բոլոր կողմերը հաղորդուած էր:

### Հեռագրին պատնէնը

«Համաժողովի կողմէ ձեռք առնուելիք միջոցները պարունակող յօդուածները հետեւեալ կերպով կը ներկայացուի: Այս մասին Ձեր կարծիքը եւ թելադրութիւնները ստացուելէն ետք՝ ընդհանուր ժողովի կողմէ խորհրդակցելով պիտի գործադրուի մինչեւ 15-9-1919 պատասխանի կը սպասեմ.

«Ազգին փափաքները իրր դաւաճանութիւն մեկնելով մեր ազգային ձեռնարկները եւ շարժումները ապօրինի նկատող եւ Օսմանեան դահուն հանդէպ մեր յաւիանական հաւատարմութիւնը օրինաւոր միջոցներով յայտնելը սխալ մեկնող, թագաւորին եւ ազգին միջեւ պատուար քաշող եւ

Ժողովուրդը իրարու ղէմ լարելով եւ զինելով զիրար սպաննելու մողղ կեդրոնական կառավարութեան հետ յարարութիւնը խզելու ստիպման տակ գտնուող Ընդհ. Համաժողովին հետեւեալ որոշումները Ձեզի հաղորդելու պարտք կ'զգամ. —

Ա. — Պետական գործերը ըստ առաջնոյն յանուն թագաւորին եւ ի զօրու եղող օրէնքներու սահմանին մէջ վարել պիտի շարունակուի՝ առանց ցեղի, կրօնի խտրութեան, ժողովուրդին կեանքը, ինչքը, պատիւը եւ բոլոր իրաւունքները պիտի պաշտպանուին:

Բ. — Պետական պաշտօնեաները իրենց ստանձնած պարտականութիւնները ազգին օրինաւոր փափաքներուն համաձայն պիտի կատարեն, հակառակ շարժողներուն եւ թերացողներուն պարտազանցութիւնները հրաժարական նկատելով տեղերնին յարմար անձեր պիտի նշանակուին:

Գ. — Պաշտօնավարութեան ընթացքին ազգին փափաքներուն հակառակ շարժողներուն ընթացքը փաստուելէ ետք՝ յանուն կրօնի եւ ազգին ապահովութեան՝ խստիւ պիտի պատժուին:

Դ. — Հրաժարեցուած պաշտօնեաներէն եւ ժողովուրդէն — ովքեր ալ ըլլան — եթէ ազգային որոշումներուն հակառակ շարժելով խառնակութիւններ հանեն, ասոնք ալ խստիւ պիտի պատժուին:

Ե. — Հայրենիքին եւ ազգին ապահովութիւնը եւ բարօրութիւնը, արդարութեան եւ իրաւունքի պաշտպանութիւնը, երկրին մէջ ընդհ. ապահովութեան կայունացումով կարելի է: Այս մասին հարկ եղած բոլոր միջոցներուն գործադրութիւնը զօրաբանակներուն հրամանատարներուն, կուսակալներուն եւ կառավարիչներուն պարտականութիւնն է:

Զ. — Ազգին սոյն խնդրանքները թագաւորին ներկայացուելով մինչեւ ազգին վստահութիւնը վայելող օրինաւոր կառավարութեան մը գործի գլուխ գալը՝ բոլոր դիմումները Սերաստիոյ մէջ ընդհ. Համաժողովի վարչութեան պիտի ուղղուին:

Է. — Սոյն որոշումները բոլոր Ազգ. շարժման կեդրոններուն պիտի հաղորդուի»:

\* \* \*

Մուսթաֆա Քէմալ փաշա՝ Պատգամաւորական Ժողովի Նախագահի հանգամանքով Սերաստիոյ Համաժողովին որոշումով Օսմանեան կայսրութեան վերջակէտը կը

դնէր: Որոչ կերպով կը տեսնուի, որ այդ Կայսրութեան տեղ՝ Անատոլուի մէջ Իթթիհատ եւ Թէրազզըի ծրագիրները տեղ կը բռնեն:

Հիմա հարց կուտամ. — Աշխարհի ոեւէ քաղաքակրթութեամբ տէրութեան զօրաբանակի հրամանատարը, կուսակալը կամ կառավարիչը, եթէ տէրութեան օրէնքով՝ ապրտամբ նկատուի իր կառավարութեան հրամաններուն անսաստելուն կանչուի, եւ հրահանգին չանսայ՝ պաշտօնագրկուի եւ այս զրկումին վրայ՝ սպառնական ոճով զինուորական ասպարէզէն քաշուիլը տեղեկացնէ եւ պաշտօնական ոեւէ հանգամանք չունեցողէ հրաման ստանայ, թէ «այլեւս կեդրոնական կառավարութիւնը պիտի չճանչնանք եւ ձեր դիմումները համաժողովին նշանակած եւ իմ Նախագահութեանս յանձնած ներկայացուցչական ժողովին պիտի կատարէք», բնական է, զայն յիմար կամ պետական հարուած պատրաստող մը նկատելով՝ Ներկայացուցչական ժողովի անդամներուն հետ՝ համաժողովին մասնակցողներն այնամիջապէս ձերբակալելով՝ յետ դատավարութեան պիտի պատժէին. . . :

Երբ աշխարհի վրայ գտնուող քաղաքակրթութեամբ տէրութիւններու օրէնքը այսպէս կը տրամադրէ, ինչո՞ւ ուրեմն Անատոլու գտնուող զօրաբանակի հրամանատարներուն, կուսակալներուն եւ կառավարիչներուն մէկ մասը իրենց այս պարտականութիւնը չկատարեցին եւ ինչո՞ւ հակառակը գործելով՝ Մուսթաֆա Քէմալ փաշային ուժ տուին եւ իրենց հպատակած օրինաւոր կառավարութեան դաւաճանեցին. . . :

Ի՞նչպէքերու ընթացքը դասաւորելէ առաջ, այս մասին յարգելի ընթերցողները քիչ մը լուսարանել պէտք է. —

Այս գիրքին Ա. մասին մէջ նկարագրուած եւ մահմուտ Շէվքէթ փաշայի սպանութենէն վերջ առանց մըրցորդի Օսմանեան կառավարութեան տիրացող եւ ապա այդ կառավարութիւնը ի նպաստ Գերմանիոյ պատերազմի մըրդող եւ պարտուող Իթթիհատ եւ Թէրազզըին պատերազմի սլատասխանատուները՝ պատերազմի մէջ ոճրագործութիւններու հեղինակները որպէս, անկասկած հաշիւ տալու պիտի հրաւիրուէին:

Ասիկա կառավարութեան եւ ազգին անժխտելի իրատունքն էր: Ասիկա հասկցող Իթթիհատ եւ Թէրազզըն՝ պատասխանատուութենէ ազատելու եւ իշխանութիւնը շարունակելու համար, զինադադար կնքելու հարկ զգացուած ժամանակ, Անատոլուի ներքին մասերուն մէջ — ուր յաղ-

Թական տէրութիւնները պիտի չկրնային զինուորական ուժ ղրկել — նոր կառավարութիւն մը հիմնել խորհած եւ որոշումը ի հարկին գործադրելու համար՝ միջոցներ ձեռք առած էին:

Արդէն նկարագրեցինք, թէ Իթթիհատ եւ Թէրազզըն բանակը յենարան ունենալով, Հրէական հանճարէն ծնած յեղափոխական կուսակցութիւն մըն էր, եւ նպատակ ունէր Օսմանեան կայսրութիւնը տապալել եւ հանրապետութիւն հռչակել:

Իթթիհատ եւ Թէրազզըն երբ սահմանադրութիւնը հռչակելու յաջողեցաւ, շատ ջնջին բացառութեամբ սպաները իր շարքերուն մէջ առած, դուրս մնացողներն ալ հանգրստեան կոչած էր:

Գիտէք որ բանակի կրթութեան աստիճանը տրուած հրամաններուն առանց առարկութեան հնազանդելու մէջ կը կայանայ. ուստի կուսակցութեան մէջ մտնող եւ կուսակցութիւնը վերին հրամանատար նկատող սպաները, տրուած հրամանները առանց սեւէ առարկութեան կը կատարէին:

Քաղաքային պաշտօնեաները, կուսակալէն մինչեւ յետին դռնապանը, նոյնպէս այս կուսակցութեան մէջ մտած էին: Վերջապէս կուսակցութեան չպատկանողներուն, ո՛չ բանակի եւ ո՛չ ալ կառավարութեան մէջ պաշտօն կը տրուէր: Այս դրութիւնը այս ձեւով տասը տարի շարունակած էր:

Պատերազմէն պարտուած եւ հողերը բաժանման ենթարկուած Օսմանեան կառավարութիւնը, Զինադադարին տազնապի մէջ էր. եւ ժողովուրդը Իթթիհատ եւ Թէրազզընին հանդէպ ատելութիւն ունէր: Միայն թէ զինադադարի շրջանին իրար յաջորդող կառավարութիւնները անկարող ըլլալնուն, այս ընդհ. տազնապէն, Իթթիհատ եւ Թէրազզընին շուարումէն օգտուիլ, եւ Իթթիհատ եւ Թէրազզըն անուան տակ այս փորձանքները ծնող կուսակցութիւնը ցրուել, մէջտեղէն վերցնել չկրցան: Ամէն բան, նոյնիսկ իրենց ազգային պարտականութիւնը գործադրելու հրամանն անգամ յաղթական տէրութեանց բարեացակամութենէն կը սպասէին:

Նոյն ատեն որոշ էր, որ զինադադարի ընթացքին իբր Իթթիհատ եւ Թէրազզընի ընդդիմադիր, խոճաներու եւ շէյխերու կողմէ վերակազմուած Ազատական կուսակցութիւնն ալ՝ առանց ծրագրի, պատուոյ եւ դիրքի շուրջ հա-



ւաքուող բազմութիւն մըն էր. և ասոնք ալ պիտի չկարողանային բան մը ընել:

Պարտութեան մասնուած Օսմանեան բանակին սպաներն ալ անգործ մնացած էին: Իթթիհատ և Թէրապզրին իրր բնագլխազիր և կող կասափարութիւններն ալ՝ այս սպաները բանակէն դուրս յարմար գործերու նշանակելով՝ ապրուստի հոգէն չէին կրցած ազատել:

Դուրս մնացած, գործ չգտնող սպան ի՞նչ կրնայ խորհել. — Չէր էութիւն:

Ասոր վրայ եթէ «Ազգային պաշտպանութիւն» բառին հրապուրանքը աւելնայ և զրամ ու զէնք տրուելով գործի հրաւիրուի, այդ սպան կարելի կ'ըլլա՞յ զսպել:

Իթթիհատ և Թէրապզրն՝ Անատոլի մէջ իր հիմնել որոշած իշխանութեան համար լաւ խորհած և միջոցներ ձեռք առած էր: Նախապէս Պոլսոյ մէջ Մուսթաֆա Բէմայ փաշայի նախապահութեամբ «Մահիկ-Աստղ» զինուորական կազմակերպութիւնը ստեղծած և ցոյց տուած էր, որ անպաշտօն սպաները չէր մոռցած (\*): Իզմիրի մէջ «Հակա-գրաւում», Թրակիայ մէջ «Փաշա էլի» միութիւնները հիմնած և գործելու պատրաստուած էր: Մուսթաֆա Բէմայ փաշան ալ, Երբ պաշտօնապէս Անատոլի մէջ ազգային կազմակերպութեան համար զրկուեցաւ հոն, «Գարապոլ» (Պահակ) տերորի կոմիտէն հիմնած և ռեւէ մէկու վրայ արգելք հանգիստանայու համարձակութիւն չէր ձգած:

Սոսակցութեան պահուն, այսօր Հայէպ գանուող

(\*) «Գարապոլ» տերորի կոմիտէն սարսափելի կազմակերպութիւն մըն էր և Անատոլի «Մահիկ-Աստղ» զինուորական միութեան կազմալուծումէն ետ ծնունդ առած էր

Ընդհանուր կազմակերպութեան կանոնադրին մէջ հետեւեալ յօդուածը կար «Կեդրոնական վարչութեան անդամները անոնց թիւր, ժողովատեղիներն ընտրութեան ձեւը և պաշտօններն բացարձակ զազանի պէտք է կատարուի. Ամենափոքր տարածայնութիւն, միութեան վտանգ, նոյնիսկ փոքր կասկած մը կրաւրողներ՝ մահուամբ պիտի պատժուին»: Պարտականութեան բաժնին մէջ ալ ըսուած էր «Ազգային բանակ մը, անոր ընդհանուր հրամանատարը և սպայակոյտը զօրաբանակի և զօրաբաժիններու հրամանատարները և սպայակոյտերը ընտրուած, պաշտօններն նշանակուած և սակայն գաղտնի պահուած են Ասոնք իրենց պարտականութիւնները բացարձակ զազանի պիտի կատարեն »

«Գարապոլ» տերորի կոմիտէին պաշտօն տրուած էր, որ հետապնդուած նպատակին արգելք հանգիստացող բոլոր սպաները և ուրիշները, առանց միջոցներու մէջ խտիր դնելու սպաններն և կամ անհետացնեն

«Գարապոլ» տերորի կոմիտէն վտանգաւոր էր և բանակի մը կարգապահութեան և կամ պետականօրէն ըմբռնած ձեւին հակառակ էր Ասիկա հին ժամանակներուն Խտալիոյ մէջ հիմնուած «Գարապոնար» սարսափելի կուսակցութիւնը կը յիշեցնէր

նախկին Փոսթ-Հեռագրական Ընդհանուր Տնօրէն Րէֆիզ Սալիտ պէյին այս մասին գաղափարներս յայտնած էի: Յարգելի բարեկամս ըսաւ, որ զինադադարէն առաջ Շիւքրի պէյի(\*) կողմէ հրատարակուող «Ձէման» (Ժամանակ) թերթին կը գրէի.— Շիւքրի պէյը անձամբ չէի ճանչնար, զինադադարի օրերուն յիշեալին հետ ծանօթացայ: Սօսակցութիւնը ընդհանուր պատերազմին եւ անոր հետեւանքներուն վրայ դարձաւ: Երբ ես՝ այս ողբալի վերջաւորութեան շուրջ սրտի ցաւով կը խօսէի, Շիւքրի պէյ ըսաւ.—

«Կացութիւնը արտաքինով ողբալի է, սակայն իրականութեան մէջ այդպէս չէ: Այս վերջաւորութիւնը, պարտուելու հաւանականութիւնը շատոնց նկատի առնուած եւ հարկ եղած միջոցները խորհուած են: Անատուլուի մէջ գտնուող զէնքերն ու ռազմամթերքը հարկ եղած տեղեր պահուած են, ի հարկին Անատուլուի մէջ անկախ թուրք պետութիւն մը պիտի հիմնուի»:

Յարգելի Րէֆիզ Սալիտ պէյին Շիւքրի պէյի հետ ունեցած խօսակցութենէն եւ անոր յայտնութիւններէն որոշ կերպով կը հասկցուի, որ այսօր Անատուլուի մէջ տեսնուող կազմակերպութիւնը՝ շատոնց իթթիհատ-թէրազզրի կողմէ յղացուած ծրագրի մը ծնունդն է:

Նոյնիսկ այս գործը՝ զինադադարի վաղորդայնին՝ Ռուսիա ապաստանած էնվէր փաշային յանձնուած եւ Ռուսիոյ համայնավար հրէական կառավարութեան օժանդակութիւնն ալ ապահովուած էր, միայն թէ Մուսթաֆա Քէմալ փաշային լայն իրաւասութիւններով, թագաւորական հրամանագրով ու Գ. բանակի քննիչի հանգամանքով եւ Աղզային պաշտպանութեան կազմակերպիչի պաշտօնով Անատուլու ղրկուելուն վրայ, մինչեւ Տրապիզոն եկած էնվէր փաշա՝ կրկին Ռուսիա վերադարձած էր(\*):

Մուսթաֆա Քէմալ փաշային բաղդը էնվէր փաշային բաղդին յաղթած եւ Ռուս համայնավար կառավարու-

(\*) Այս Շիւքրի պէյը Գաւթեմուսի երեսփոխան էր, ընդհանուր պատերազմին թալաք փաշայի դահլիճին մէջ կրթական նախարար եւ հայկական տարագրութեան եւ սպանդին ժամանակ Գործադիր Մարմնի անդամներէն էր. Զինադադարէն քիչ առաջ հրաժարելով, տեղը իր ընկերոջ՝ Տօֆ Նազըմ պէյին ձգած եւ ինքը «Ձէման» (Ժամանակ) ամուսն քերթ մը հրատարակել սկսած էր.

Իզմիրի մէջ Մուսթաֆա Քէմալ փաշայի դէմ կատարուած մահափորձին մէջ նշանաւոր Ալիներու հետ մեղսակցութիւնը փաստուելով՝ անկախութեան դատարանին կողմէ Տօֆ Նազըմի, ձախտի եւ ուրիշներու հետ Անգարայի մէջ կախազան հանուած էր:

Ծ. Թ.— Էնվէր՝ Թուրքեստանը համայնավար Ռուսաստանի դէմ պատերազմի մղած եւ այդ առթիւ կարմիր բանակային հայ զինուորի մը կողմէ սպաննուած է.

Թիւնը էնվէրին խոստացած գիւրութիւնները եւ նիւթական օգնութիւնները Մուսթաֆա Քէմալ փաշային ընծայած էր:

\* \* \*

Իթթիհատ եւ Թէրազզըն՝ տարբեր անուններով, Օսմ. կառավարութիւնը Ռուսիոյ պէս տակն ու վրայ ընելիք մեծ յեղափոխութեան մը կ'առաջնորդէր:

Յեղափոխութեան իբր կեդրոն Անատոլուն, իսկ մեծ տէրութիւններուն զինուորական ուժ ղրկելով շարժումը զսպելու անկարող գտնուած վայրը՝ Սերաստիան ընտրուած էր:

Ծրագրուած յեղափոխութեան առաջին քայլը առնելուն համար ալ՝ Սերաստիոյ մէջ ընդհանուր ժողովի մը գումարումը որոշուած եւ պատրաստութեան ձեռնարկուած էր:

Այս համաժողովին Վարչութիւնը, ծրագրուած՝ յեղափոխութեան յաջողութեան համար, գործը զնդապետ Մուսթաֆա Քէմալ փաշայի նախագահութեամբ Ներկայացուցչական ժողովի մը յանձնելը յարմար նկատած էր: Կարին գտնուող Մուսթաֆա Քէմալ փաշան եւ ընկերները այս մտքով Սերաստիա հրաւիրուած էին:

Ասիկա տեղեկացող Բ. Դուռը՝ Մուսթաֆա Քէմալ փաշան պաշտօնանկ ընելով՝ Պոլիս վերադառնալը հրահանգած էր, իսկ Մուսթաֆա Քէմալ փաշա հրաւերին չանսալով՝ սպառնական ձեւով տեղեկացուցած էր որ զինուորական ասպարէզէն կը հրաժարի եւ Սերաստիա մեկնած էր:

Բ. Դուռը նեղ կացութեան մը մատնուած՝ Անատոլուի մէջ ապստամբութեան մը հաւանականութիւնը արգիլելու համար, ներքին նախարար Ատիլ պէյի յանձնարարութեամբ Մուսթաֆա Քէմալ փաշան եւ ընկերները ձերբակալելու եւ Պոլիս ղրկելու եւ Սերաստիոյ մէջ գումարումը ծրագրուած համաժողովը բռնի արգիլելու համար Խարբերդի կուսակալ Ալի Ղալիպ պէյին պաշտօն տուած էր:

Ալի Ղալիպ պէյ այս կարեւոր գործը յաջողցնելու համար ձախութիւն եւ կարողութիւն չունէր. շատ խօսող՝ քիչ գործող, պոռոտախօս, դրամասէր եւ վախկոտ մէկն էր:

Վերեւ յիշուածին պէս, անմիջապէս ճամբայ ելլել չհամարձակելով՝ աւելորդ բանակցութիւններով ժամանակ անցնելու եւ այս առիթով Բ. Դունէն դրամ կորզելու աշխատած էր: Վերջապէս Բ. Դրան ստիպումին վրայ մին-

չեւ Մալաթիա եկած եւ այն ժամանակ Մալաթիոյ կառավարիչը եղող Պետիր խանի խալիլ Բամի պէյի եւ Քիւրտցեղապետներէն Պէտիր աղայի օժանդակութեամբ ոստիկան զինուոր արձանագրել ձեւացնելով՝ կրկին Բ. Դոնէն դրամ ուզած էր:

Զինադադարէն յառաջացած կացութիւնը Բ. Դոնը նեղ դրութեան մատնած էր եւ Ալի Ղալիպ պէյին դրամ զրկելու հնարաւորութիւն չէր ձգած:

Եթէ Ալի Ղալիպ պէյ ձեռներեց, զործունեայ եւ կացութիւնը ըմբռնող պետական անձ մը ըլլար, Բ. Դոնէն դրամ ուզելու պէտքը չէր տեսներ: Թանկագին ժամերը կորսնցնելով համաժողովի գումարման առիթ չէր տար եւ հարկ եղած դրամը տեղւոյն մէջ կրնար հայթայթել իր պատասխանատուութեան սակ, ըլլա՛յ պետական սնտուկէն, ըլլա՛յ Հանրային պարտուց, ըլլա՛յ Բէժիի, ըլլա՛յ պաշտօնատուներու սնտուկներէն կրնար առնել:

Բ. Դրան՝ բացառիկ միջոցներու դիմելու կարողութիւն չունեցող մարդոց դիմելն ու անհրաժեշտ վճռակամութիւնը չկարենալ ցոյց տալը՝ զարմանալի թող չըթուի. ասիկա ցոյց կու տայ, որ այն ժամանակ Բ. Դրան մէջ ալ պետական մարդ գոյութիւն չունէր:

Ասով հանդերձ, ներքին նախարար Ատիլ պէյ, նախարարաց խորհուրդին որոշումով եւ հեռագրով Ալի Ղալիպ պէյին տեղեկացուցած էր դրամական խնդիրը լուծելու մասին:

### Հեռագրին պատճէնը

«Սիստ ստիպողական,

«Մալաթիա-Խարբերդի կուսակալ Ալի Ղալիպ պէյին, պատասխան 6 Սեպտ. 335 հեռագրին:

«Յելուզակներու հետապնդման համար զրկուելիք ուժերու ծախքերուն, ոստիկան զինուորներու լատկացումներու հաշույն՝ պետական սնտուկէն առնուելը հարկ է: Ծախքերուն գումարը, զրկուելիք ուժերուն թիւը եւ մեկնումի օրը փութով տեղեկացուցէք:

Ներքին Գործոց նախարար  
Ատիլ

Թէեւ որոշ չէ, թէ ներքին նախարար Ատիլ պէյի հրամանին վրայ ո՞րչափ դրամ առնուեցաւ, սակայն այդ միջոցներուն «Մատօր Նօէլի» դէպքը ծագելուն, Խարբերդի կուսակալ Ալի Ղալիպ եւ Մալաթիոյ կառավարիչ խալիլ

Բամի պէյերը փոխանակ Սերաստիա մեկնելու, Անգլիական գրաւման տակ գտնուող Հալէպ փախած եւ Բ. Դրան այս ձեռնարկն ալ ջուրը ձգած էին:

\* \* \*

«Մաժոր Նոէլի» դէպքը շատ հասարակ դէպք մըն էր, սակայն Սարբերդի կուսակալին դէպի Սերաստիա մեկնելու համար Բ. Դրան կողմէ տրուած եւ Մուսթաֆա Քէմալ փաշային տեղեկացած հրամանին զուգադիպելուն, Մուսթաֆա Քէմալ փաշայի կողմէ մեծապէս չափազանցուած էր:

Մուսթաֆա Քէմալ փաշայի այս դէպքին համար ձեռք առած միջոցները՝ անոր տկարութիւնը եւ կացութեան տիրացած չըլլալը ցոյց կու տայ, իսկ Սարբերդի կուսակալին առիթներէն օգտուելի չգիտցող ապիկար մը եւ անտեղի առարկութիւններով թանկագին ժամանակ կորսնցնող յիմար մը ըլլալը կը հաստատէ:

Պատմութեան մէջ սխալ մը չսպրթեցնելու համար, այս դէպքը նկարագրելէ առաջ, Մուսթաֆա Քէմալ փաշային ձեռք առած միջոցները ներկայացնել կարեւոր է:

Սերաստիոյ Համաժողովը 11 Սեպտեմբերին թէեւ իր աշխատութեան վերջ տուած էր, սակայն 12-ին՝ ժողովուրդէն կարգ մը անձնաւորութիւններ հրաւիրուելով՝ դռնբաց նիստ մը գումարել հարկ տեսնուած էր:

Այս ժողովին մէջ արտանանաձ ճառով Կեդր. Կառավարութեան դաւաճանութիւնը եւ այդ կառավարութեան հանդէպ անվատահուստեան պէտքը եւ կառավարութեան մինչեւ օրինաւոր ձեւ մը ստանալը՝ իշխանութեան Համաժողովէն ընտրուած ներկայացուցչական ժողովին տրուելը հասկցնել կ'ուզէր: Միւս կողմէ ալ՝ հովանաւորութեան խնդիրը վիճարանութեան նիւթ կը դառնար:

Ամերիկեան հովանաւորութիւնը ընդունելու շուրջ ճառեր խօսուած էին: Այս ճառախօսներուն գլուխը կը գտնուէր նախկին Մովային նախարար, Մուտրոսի գինադադարը ստորագրող եւ «Համիտիէ» գրահաւորին հրամանատար Բէուֆ պէյ:

Բէուֆ պէյին հովանաւորութեան մասին խօսած ճառը, Համաժողովի ներկայացուցչական ժողովին հոգեբանութիւնը ցոյց տալուն՝ մէկ մասը հոս ամփոփել հարկ տեսայ:

Բէուֆ պէյ կ'ըսէ. —

«Զինադադարի սկիզբը երբ կը կարծուէր, թէ Գերմանները հաշտութեան դաշնագիրը պիտի չստորագրեն,

անգլիական թերթեր կարգ մը հրապարակումներ ըրին: Անոր առաջին մասը Գերմանիոյ հաշտութեան դաշնագիրը ստորագրելուն կը վերաբերէր: Ասիկա իրականացաւ: Երկրորդ մասն ալ Թուրքիոյ բաժանման մասին էր: Փա՛ռք Աստուծոյ, ասիկա չիրականացաւ. այս մասին մէջ Հաշտութեան Ժողովին սրոշման համաձայն, Կարմիր գետին Արեւելեան կողմը Հայաստան նկատուելով՝ Ամերիկեան հովանաւորութեան կը յանձնուէր: Թերեւս Վրաստանն ու Ատրպէյճանն ալ Ամերիկային ձգուի, կ'ըսուէր: Կարմիր գետին Արեւմտակողմը գտնուող տարածութիւնն ալ — Իզմիր եւ Պոլիսը բացառութիւն ըլլալով եւ Անտիոքը եւ Քունենալով — Թուրքիան պիտի կազմէր: Այս տարածութեան շիւսիսը՝ Իտալիոյ եւ Ֆրանսայի, իսկ Հարաւը՝ Անգլիոյ հովանաւորութեան կը տրուէր: Իզմիրի գրաւումը ցոյց տուաւ, որ այս հրապարակումները չիտակ են. հետեւաբար այս վտանգին դէմ մեր երկրին հանդէպ չէզոք դիրք բռնող Ամերիկայի պաշտպանութիւնը ընդունելու պարտաւոր ենք: Ես այս համոզումը ունիմ»:

Մուսթաֆա Բէմալ փաշա Բէուֆ պէյին կ'ըսէր.—

«Ասիկա առ այժմ կենսական հարց չէ, առաջին անգամ մեր դիրքը զօրացնել հարկ է, ամէն բանէ առաջ ըստացուած կարգ մը կարեւոր տեղեկութիւնները հաղորդելու եւ հարկ եղած միջոցները ձեռք առնելու պարտաւորուած ենք:

«Արդեօք տեղեկացա՞ծ էք որ էսկի Շէհիր եւ Աֆիոն Գարահիսար գտնուող անգլիական ուժերուն մէկ մասը ետ կանչուած է: Զօրավար Միլըն Գոնիա եկած է: Գոնիայի կուսակալ Ճէմալ պէյ եւ Անգարայի կուսակալ Մուհիտտին փաշա կեդր. կառավարութեան դէմ շարժելու կ'երկմտին: Գասթէմունիի նոր կուսակալ Ալի Բիգա պէյին ալ Ճէմալ փաշային տիպարով մարդ մը ըլլալը կը հասկցուի՝ քաջ գիտնալով որ յարգելի ընկերներս այս կացութեան հանդէպ խտրութեամբ պիտի վարուին՝ Ալի Ֆուատ փաշայէն խնդրեցի, որ արագ եւ խիստ միջոցներ ձեռք առնէ: Ալի Ֆուատ փաշա Համաժողովին իրեն հանդէպ ունեցած վրատահութեան յենելով, յանուն Համաժողովին հարկ եղածը կատարած եւ միջոցներ ձեռք առած է, եւ կը խնդրէ որ շարժումը պատկառելի ժողովիդ կողմէ իւրացուի: Ալի Ֆուատ փաշա այս կուսակալներուն խիստ ազդարարութիւններ ըրած է, եւ կ'ըսէ, որ այս շրջանակներուն մէջ զինուորական բարձրաստիճան սպաներէն Ազգ. հրամանատարներ նշանակած եւ այդ հրամանատարներուն յանուն

ազգին ամէն տեսակ իրաւասութիւններ տուած է, ի՞նչ կ'ըսէք»:

Բէռֆ պէյ կը լսէր, իսկ ժողովը միաձայնութեամբ կ'ըսէր. «Շատ ազէկ ըրած է, յարմար է»: Մուսթաֆա Քէմալ փաշա կը շարունակէր.

«— Պարոններ, Սերաստիոյ համար Ղալիպ անունով կուսակալ մը նշանակուած է եւ կու գայ եղեր: Յարգ չհասկըցուեցաւ, թէ այս մարդը Խարբերդի կուսակալ Ալի Ղալիպ պէ՞յն է, թէ ոչ Տրապիզոնի կուսակալ Մուհամմէտ Ղալիպ պէյն է: Ուրիշ տեղեկութիւն մըն ալ առինք, որ շատ կարեւոր է: Մըսթրը Նոէլ անունով անգլիացի հազարապետ մը՝ Պէտիր Խանիներէն Քիամիւրան, ձէլատէթ եւ ձէմիլ պէյերու եւ 15ի մօտ քիւրտ ձիաւորներու հետ Մալաթիա եկած եւ կառավարիչ Պէտիրխանի՝ Խալիլ պէյի կողմէ ընդունուած է: Խարբերդի կուսակալն ալ՝ երեւութապէս փոսթայի կողոպտիչները հետապնդելու պատրուակին տակ ինքնաշարժով Մալաթիա եկած եւ Հիւսնի Մանսուրի ջոկատն ալ ասոնց միացուցած է: Նպատակը Քիւրտիստան կազմելու իրոստումով՝ քիւրտերը մեզի դէմ դարձնել եւ մահափորձ մը կատարելու մղել ըլլալը հասկցայ եւ փոխադարձ միջոցներու դիմեցի: Կուսակալը եւ միւսները ձերբակալել տալ կ'ուզեմ: 13րդ զօրաբաժնի շրջանակին մէջ գործի անցանք եւ հարկ եղած միջոցները ձեռք առինք: Խարբերդէն դրկուած գինուորական ջոկատ մը՝ վաղը իրիկուն այդ դաւաճանները պիտի փճացնէ. այդ տեղի զօրաբաժնի հրամանատարն ալ հարկ եղած միջոցներուն դիմած է: Մալաթիա եւ այլ տեղեր պէտք եղած հրամանները տրուած են, ի՞նչ կ'ըսէք.—

Համաժողովը միաձայնութեամբ պատասխանած էր.

«— Շատ լաւ, արդէն միաձայնութեամբ որոշած եւ ամէն կարգի միջոցառումներու համար Ձեզի լիազօրած էին»:

\* \* \*

Մուսթաֆա Քէմալ փաշա այս խնդիրը հետեւեալ կերպով կը նկարագրէ.—

«Մեր ազգային պաշտպանութեան պատմութեան մէջ կարեւոր տեղ գրաւող Ալի Ղալիպի խնդրին շուքը, քիչ մը մանրամասնութիւն տամ.—

«Տակաւին Յուլիսի սկիզբներուն, Կարին գտնուած միջոցիս՝ տեղեկացայ, որ ձէլատէթ եւ Քիամիւրան Ալի անունով երկու հոգի օտարներու կողմէ վարձուած եւ կարեւոր գումարներով Պոլսէն Քիւրտիստան պիտի դրկուին:

Անոնց պաշտօնն էր դժուարութիւններ հանել և և մեզի դէմ հակառակ շարժում ստեղծել: Ասոնք մէկ օրուան մէջ ճամբայ պիտի հանուէին:

«Այս տեղեկութեան վրայ՝ այս մարդոց առանց աղմուկի հետապնդումին և ձերբակալման պէտքը, 3 Յուլիսին Տիգրանակերտի 13րդ զօրաբաժնի հրամանատարութեան և առանձինն ալ սպայակոյտի պետ Սալիտ պէյին եւ Ճանիկի կառավարիչին տեղեկացուցի: 20 Յուլիսին 13րդ զօրաբաժնի հրամանատարին տուած հրամանիս մէջ գրեցի՝ որ խնդրոյ առարկայ անձերուն Պոյսէն մեկնումը կը տեղեկացուի եւ ձեռք առնուելիք միջոցներու շարքին, Մարտինի կայարանին մէջ խիստ հսկողութիւն մը կատարել յարմար է:

«13րդ զօրաբաժնի հրամանատարութեան տեղեկատուութենէն կը հասկցուի, որ Սեբաստիոյ Համաժողովին երկրորդ օրը, այսինքն 6 Սեպտեմբերին՝ Պէտիր խանի գերդաստանէն ձէլատէթ եւ Քիամիրան եւ Տիգրանակերտի ձէմիլ փաշա Չատէ էքրէմ անունով երեք անձեր, ժամանակին Տիգրանակերտի նահանգին մէջ մեզի դէմ բրոբականտ մղող օտար սպայ մը իրենց հետ ունենալով եւ կարգ մը զինուած քիւրտերու պաշտպանութեամբ՝ Ալպիսթանի եւ Արղայի ճամբով Մալաթիա եկած և կառավարչին ու քաղաքապետին կողմէ ընդունուած են: 15րդ զօրաբաժնի հրամանատար Քեազիմ Գարա Պէքիր փաշա՝ այս մասին Գ. զօրաբանակի հրամանատարին ուղղած 6 Սեպտ. 335 եւ 529 թիւ ծածկագիր հեռագրով կը տեղեկացնէ՝ թէ 13րդ զօրաբանակին տեղեկագրին համաձայն, այդ օտար սպան թուրքերու, քիւրտերու եւ հայերու թիւը ճշդելու համար կեդր. կառավարութեան արտօնութեամբ կը շրջագայի, թէ Մալաթիոյ մէջ գտնուած հեծելազունդի պատրաստի թիւը քիչ ըլլալուն չէ՝ համարձակած զանոնք ձերբակալել. այսուհանդերձ անոնց ձերբակալման մասին Պոլիս դիմուած է: Սարբերդի կուսակալին հարցուցի թէ այս մարդիկը ի՞նչ պաշտօնով եւ նպատակով եւ ո՞ր վայրերը կը շրջագային: Սարբերդի կուսակալը Ալի Ղալիպ պէյն է: 3 Յուլիսէն ի վեր մեզի ծանօթ է, որ այս մարդիկը ի՞նչ նպատակով եկած են եւ ամենէն զարմանալի կէտը այն է, որ 5-10 ղինեալ քիւրտերու դէմ հեծելազունդի մը պատրաստած ուժը անբաւարար կը նկատուի եւ չեն համարձակիր զանոնք ձերբակալել եւ ասոր համար Պոլիս կը դիմուի»:

Այս աննշան եւ անկարեւոր նկատուող մանրամաս-



նութիւնները այն ժամանակուան դէպքերը եւ մտայնութիւնները ցոյց տալուն համար կ'արձանագրեմ:

«Տիգրանակերտ գտնուող 13րդ զօրաբանակի հրամանատարին ստորագրութեամբ, 7 Սեպտեմբերին, ուղղակի 13րդ զօրաբանակի սպայակոյտի պետին ուղղուած ծածկագրով տեղեկացուեցաւ, թէ կուսակալ Ղալիպին, Մալաթիոյ կառավարիչ Սալիլին եւ Քիամիւրան Ճէլատէթ եւ էքրէմ պէյերուն հետ անգլիացի հազարապետին անպայժանօրէն ձերբակալման եւ Սերաստիա զրկուելուն համար էլ Ազիզ գտնուող 15րդ զօրագունդի հրամանատար էլիաս պէյին ուղղակի հրահանգ տրուած է, որ 60ի մօտ հեծեալ զինուորներ առնելով ամենաուշը 9 Սեպտեմբերին անձամբ Սարբերդէն Մալաթիա մեկնի: Նոյնպէս խնդրուած է, որ ասոնց մեկնումը փութացուի եւ տեղեկացուեցաւ նաեւ, որ 8 Սեպտեմբերին Սերաստիայէն ինքնաշարժով կարգ մը սպաներ պիտի զրկուին:

«Տիգրանակերտի սպայակոյտի պետ Սալիտ պէյ, ինծի ուղղած 7-8 Սեպտեմբեր թուակիր ծածկագիրով կ'ըսէ. — «Ձերբակալման մասին ձեր փափաքը իմացայ: Երբեք չեմ կարծեր որ այս մասին հրամանատարը հրաման տայ, որովհետեւ անոր զինուորական արժանիքներուն կատարելապէս տեղեակ եմ: Իմ կողմէն ըլլալիք թելադրութիւններն ալ ընդունելու պիտի վարանի: Այս մասին Պոլսոյ հետ կը բանակցինք: Ներկայ կացութեան մէջ հարկ եղածը կարգադրել Ձեզմէ կախում ունի:

«Էլ Ազիզ գտնուող զօրագունդի հրամանատար էլիաս պէյ, 13րդ զօրաբանակի հրամանատարին հեռագրին ի պատասխան՝ 8 թուակիր հեռագիրով կ'ըսէր. «Զօրաբանակի հրամանատարութենէն ստացուած հրահանգին վրայ մեկնումս յետաձգուած է. առանց զօրաբանակի համատեղութեան այս տեղէն մեկնումս անյարմար ըլլալուն՝ կը խնդրեմ որ այդ հրամանը այդ խողովակով տրուի:

«Սալիտ պէյին անմիջապէս տրուած պատասխանը հետեւեալն է. «Մանօթ անձնաւորութեանց դաւաճանութիւնը փաստուած է. կեդր. կառավարութիւնն ալ այդ դաւաճանութեան մեղսակից է: Այն տեղէն հրամանի սպասել՝ թշնամիներուն առիթ տալ է. այս մասին ոեւէ մէկու կասկած չներշնչելու պայժմանաւ, անմիջապէս հրաման տալ եւ ժամանակ չկորսնցնել պէտք է: Հաւանական կը նրկատէք որ հրամանատարը պիտի վարանի. դուք մեր կողմէն էլ-Ազիզի եւ Մալաթիոյ զօրագունդի հրամանատարներուն տրուած հրամաններուն գործադրութիւնը հրահան-

գեցէք: Եթէ հարկ տեսնուի՝ հրամանատարութիւնը զօրաբանակի հրամանատարներէն Ձեր յարմար տեսած մէկը թող ստանձնէ. զգուշութեամբ շարժելու ժամանակը անցած է. Ձեր գործի սկսելու լուրին կը սպասեմ:

«Չօրագունդի հրամանատար Էլիաս պէյին ալ նոյն թուականին անձամբ հետեւեալ հրամանը տուի.—

«Ծանօթ անձնաւորութեանց դաւաճանութիւնը երեւան հանուած է. Պոլսոյ Կեդր. Կառավարութիւնն ալ ասոնց գործակից է. հաւանական է որ ձեր զօրաբաժնի հրամանատարը իր դիմումին պատասխան չստանայ, հետեւաբար խնդրոյն կարգադրութիւնը եւ յաջողութիւնը ձեզմէ կը սպասեմ. պատասխանը փութացուցէք. Մալաթիոյ մէջ ձեր գործը լրացնելէ յետոյ՝ եթէ հարկ տեսնուի Սերաստիա եկէք եւ մեզի միացէք»: Ստորագրութիւնս ծածկագիր գրի. իսկ բաց ստորագրութիւնը Յրդ զօրաբանակի սպայակոյտի պետ Ջէքի պէյին էր:

«Մալաթիա գտնուող ԱՅրդ հեծելագունդի հրամանատարի հետ 7-8 Սեպտ. ի գիշերը հեռագրով խօսեցանք. զօրագունդի հրամանատար ձէմալ պէյին կացութեան եւ իր ուժին մասին տեղեկութիւն առի: Ան ըսաւ որ եկողները իրենց հետ 15-20 զինեալ քիւրտեր ունին, իսկ զօրագունդի Կեդրոնին մէջ հազիւ այդ թիւով պատրաստ զինուոր ունի: Ես այդ ուժը բաւարար գտայ. նոյնիսկ, հեծեալ եւ թնդանօթաձիգ զօրագունդերու սպաները պիտի բաւէին: Ես կացութեան եւ ոմանց հոգեբանութեան տեղեկանալ կ'ուզէի. ասոր վրայ հեռագրային խօսակցութիւնը շարունակուեցաւ.

«Ես.— Կուսակալ Ղալիպ պէյին, անգլիացի հազարապետին եւ Քիամիրան ձէլատէթ եւ Էքրէմ պէյերուն լուրջ կարգադրութեամբ մը այս գիշեր ձերբակալումը եւ Սերաստիա զրկուիլը հարկ է. ասոր համար Ձեր կացութիւնը նպաստաւոր է. այս տեղէն եւ Խարրերդէն Ձեզի օգնական ուժ ալ պիտի զրկուի:

«Ձէմալ պէյ.— Կուսակալն ալ միասի՞ն:

«Ես.— Մասնաւորաբար, այո՛:

«Ձէմալ պէյ.— Ենչպէս պարզեցի, կացութիւնս եւ ուժս ասոր համար աննպաստ է: Քիամիրան, ձէլատէթ եւ Էքրէմ պէյերուն ձերբակալման համար ԱՅրդ զօրաբանակի հրամանատարութեան հետ խօսակցեցանք: Հրաման ստացայ, որ կացութեան փափկութեան պատճառաւ, ներկայիս ասոնց ձերբակալումը անյարմար է:

«Այլեւս այդ մարդուն վրայ աւելի չէի կրնար ծանրանալ:

«Ես. — Առանց իրենց զգացնելու, խի՛ստ հսկողութեան տակ առէք:

«Ձեր զօրաբանակէն հրաման պիտի ստանաք, եթէ մեկնելու ըլլան, ի՞նչ ուղղութեամբ եւ ի՞նչ միջոցաւ մեկնելնին անմիջապէս տեղեկացուցէք:

«Հրահանգը տալով բաւականացայ. իսկ 8 Սեպտեմբերին ձէմալ պէյին ծածկագիրով հարցուցի, թէ ծանօթ անձնաւորութիւնները տակաւին հո՞ն են եւ հսկողութեան ի՞նչ միջոցներ ձեռք առնուած են եւ հրամայեցի որ օրական երկու անգամ տեղեկագրէ:

«Ուայիտ պէյ, ի պատասխան հեռագրիս՝ հետեւեալ օր 8 Սեպտեմբերին տեղեկացուց, թէ Սարբերդի, զօրագունդի հրամանատար Էլիաս պէյին հարկ ևղած հրամանը տրուած է եւ այդ հրամանին պատճէնն ալ ներփակուած: Նոյնպէս զօրաբանակի հրամանատար ձէւտէթ պէյն ալ տեղեկացոյց, որ Էլիաս պէյ 52 հեծեալ զինուորներով եւ երկու գնդացիներով 9 Սեպտեմբերի առտուն ճամբայ ելած է եւ 10 Սեպտեմբերի Երեկոյեան Մալաթիա պիտի գտնուի: Մոյն ծածկագրով ներողութիւն կը խնդրէր՝ որ ասանկ խառնակ ժամանակի մը մէջ ասկէ աւելին չէր կըրցած ընել:

«9 Սեպտեմբերին Էլիաս պէյի ջոկատէն զատ Ազիզիէյէն երկու հեծեալ ջոկատներ, իսկ Սեւերեկէն ալ Մալաթիոյ զօրագունդին պատկանող ջոկատ մը դէպի Մալաթիա ճամբայ հանուած էր:

«Կուսակալ Ալի Ղալիպին, Պէտիրխանիննրուն եւ ձէմալ փաշա Չատէյին ըրած բրոբականտի ազդեցութիւնը չէզոքացնելու համար՝ Սարբերդի եւ Տէրսիմի շրջաններուն հետ յարաբերութիւն ունեցող եւ Քէմալի գտնուող Հալէթ պէյին 9 Սեպտեմբերին գրեցի՝ որ Սարբերդ մեկնի եւ Հայտար պէյի՞ հետ խօսակցի:

«Վանայ կուսակալ Հայտար պէյն ալ, Սարբերդի կուսակալութիւնը ձեռք առնելու համար Կարինէն ճամբայ հանուած էր:

«Հայտար պէյ 15րդ զօրաբանակին պատկանող եւ Մամախաթուն գտնուող հեծելագունդի մը հետ ալ յարաբերութիւն հաստատելով, ի հարկին այս զօրագունդն ալ Մալաթիոյ ուղղութեամբ ճամբայ պիտի հանէր: Նոյնպէս կը յիշեցուէր, թէ կարգ մը սպաններ ինքնաշարժով Մալաթիա պիտի ղրկուէին:

«Արդարեւ, մեր ընկերներէն Րէճէպ Չիւհրի պէյ, Յրդ զօրարանակի թիկնապահն էր եւ երեւութապէս ինձմէ ստացած մասնաւոր հրահանգներով եւ կարգ մը մարդոց ընկերակցութեամբ 9 Սեպտեմբերին ինքնաշարժով Մալաթիա մեկնեցաւ, գժբախտաբար ճամբաներուն աւրուած եւ ցեխոտ ըլլալուն պատճառաւ ինքնաշարժը Գանկալի մօտերը կոտրած եւ ան ժամանակին չէր կրցած Մալաթիա հասնիլ: Գանկալէն կառքով եւ ձիով գիշեր-ցերեկ ճամբորդելով՝ Սեբաստիայէն մեկնելուն չորրորդ օրը, կէսօրէն ետք կրցած էր Մալաթիա հասնիլ:

«Րէճիպ Չիւհրի պէյին տուած տեղեկագիրները կացութիւնը պարզելու ծառայած էր:

«10 Սեպտեմբերին ուշ ժամանակ հետեւեալ հեռագիրը ստացայ:

Ա.— 10-9-335(1) ժամը երկուքին առանց միջադէպի Մալաթիա հասանք:

Բ.— Դժբախտաբար ծանօթ անձնաւորութիւններուն ամբողջն ալ Քախթէի ուղղութեամբ փախուստ տուած են, մանրամասնութիւնները յաջորդիւ պիտի տեղեկացուի:

Որոչ էր որ Ղալիպ պէյին ձեռնարկին՝ թագաւորը, Տամատ Ֆէրիտ փաշայի կառավարութիւնը եւ օտարները մեղսակից էին: Այս դաւաճանութեան գործակիցներուն հանդէպ բռնուելիք դիրքը պարզ էր: Միայն փոխադարձութեան մէջ ուղղակի ճակատ կազմելէն կարելի եղածին չափ զգուշանալը օրուան պահանջքը ըլլալուն՝ այս ճակատումը զանազան կէտերու չուղղել եւ միայն մէկ կէտի վրայ կեդրոնացնել ամենէն յարմարն էր: Մենք այդ ճակատումը միայն Ֆէրիտ փաշայի դահլիճին ուղղեցինք: Թագաւորին մեղսակցութիւնը անտեսեցինք, այնպէս ձեւացուցինք, որ իբր թէ Ֆէրիտ փաշայի դահլիճը իրականութիւնը թագաւորէն պահելով զայն կը խաբէ: Այնպէս տարածայնեցինք որ, եթէ թագաւորը իրականութեան տեղեկանայ, անմիջապէս զինք խաբողները պիտի պատժէր: Բնական է որ կառավարութեան դաւաճանութիւնը փաստուելէ ետք, մեր վստահութիւնը պիտի խախտէր եւ միայն իրականութեան ուղղակի թագաւորին տեղեկացուելով պիտի բարելաւուէր կացութիւնը: Այս խորհրդածութեամբ Սեպտեմբեր 11ին, թագաւորին ուղղեալ հեռագիր մը խմբագրուեցաւ եւ ի մէջ այլոց ըսուեցաւ՝ որ «փաստերով հաստատուեցաւ որ կառավարութիւնը կաշառքով Համաժողովը ցրուելու, իսլամ-

(1) Խալաֆական բուականով. մեր բուականով 1919 Սեպտ 10:

ներու մէջ արիւն թափելու եւ Քիւրտիստանը ոտքի հանելով հայրենիքը բաժնելու պաշտօնը ստանձնած է: Ասոր համար կառավարութեան գործակիցները փախուստի մատնուած են եւ ձեռք անցուելնուն՝ արդարութեան պիտի յանձնուին եւ այս ոճրագործութիւնները ներքին եւ Պատերազմական նախարարներուն թելադրութեամբ գործող կեդր. կառավարութեան հանդէպ ազգին վստահութիւնը խախտած է, եւ խնդրեցինք որ պատուաւոր անձերէ բաղկացած նոր կեդր. կառավարութիւն մը կազմուի եւ այս լրտեսներու ցանցը արդարութեամբ պատժուի. իսկ մինչ այդ, ներկայ կառավարութեան հետ բոլոր յարաբերութիւնները խզել ազգին որոշումն է»:

«Յարմար տեսնուեցաւ, որ սոյն հեռագիրը բոլոր զօրաբանակներու կողմէ Պոլիս ղրկուի:

«Սեպտեմբեր 11ին՝ հեռագրով բոլոր զօրաբանակի հրամանատարներուն հետեւեալ հրահանգը տուի.

«— Հիմա պատճէն մը պիտի տանք. այս պատճէնին Յրդ, 15րդ, 20րդ, 13րդ եւ 12րդ զօրաբանակներուն հրամանատարներուն հաւաքական ստորագրութեամբ տրուիլը յարմար տեսանք, կարդայէ յետոյ միւս հրամանատարներուն հետ՝ միեւնոյն ժամուն հեռագրելու համար սպասեցէք»:

\* \* \*

Մաժոր Նոէլին Քիւրտիստան ճամբորդութենէն նըպատակը հոս բացատրել անհրաժեշտ է:

Վերի մասերուն մէջ գրուածին պէս՝ Եւրոպա եւ Ամերիկա գտնուող հայկական կոմիտէներ, մասնաւորաբար Դաշնակցութեան կոմիտէն, Քիւրտիստանն ալ մէջը ունենալով ընդարձակ Հայաստանի մը կազմութիւնը կէտ նըպատակ ունենալով, ընդարձակ գետնի վրայ բրորականտի եւ Փարիզ գումարուող հաշտութեան Վեհաժողովին կըրկնակի դիմումներ կատարել սկսած էր: Կարգ մը քաղաքական շրջանակներ, մասնաւորապէս Ամերիկա, ասոնց պաշտպան կը հանդիսանար:

Փարիզի Վէրսալի դղեակին մէջ գումարուող հաշտութեան Վեհաժողովը, հետզհետէ կըկնուող եւ համաշխարհային մամուլին կողմէ պաշտպանուող հայկական պահանջներուն հանդէպ դժուար կացութեան մը մատնուած էր:

Արեւելեան նահանգներ անունով ծանօթ հիւսիսային Քիւրտիստանի նահանգներուն մէջ բնակող քիւրտ, թուրք եւ հայերուն ճշգրիտ մէկ վիճակադրութիւնը չգտնուելուն,

սոնց թիւը եւ գրաւած տարածութիւնները քննել հարկ տեսնուած եւ Քիւրտերէն լեզուին տեղեակ Մաժոր Նոէլ ինուսով անգլիացի հազարապետի մը խնդիրը տեղւոյն ըստ քննելու պաշտօն տրուած էր:

Մաժոր Նոէլի քննութեան արդիւնքը անկասկած ի պատ Օսմանեան կառավարութեան պիտի ըլլար, որովհետեւ Արեւելեան նահանգներուն մէջ բնակող հայերը շատ նշին փոքրամասնութիւն մը ըլլալով, Չախճախիչ մեծամասնութիւնը Քիւրտերէն կը բաղկանար:

Փարիզէն Պոլիս եկող Մաժոր Նոէլ՝ Բ. Դրան կողմէ ամէն կարգի դիւրութեան արժանացած էր:

Հաշտութեան վեհաժողովին որոշումով Քիւրտիստանի մէջ քննութիւն կատարելու նշանակուող Մաժոր Նոէլ, իր կատարելիք քննութեան իբր հիմ, առաջին անգամ Կեդրոնը Պոլիս գտնուող «Քիւրտիստանի Բարձրացման Միութեան» հետ շփման մէջ մտած էր: Միութեան ղեկավարներուն հետ ունեցած շփումէն ստացած տպաւորութեան լրաց, այս քննական պտոյտի միջոցին միութեան առաջտորդը եղող Ծերակուտական Սէյիտ Ապտիւլ Գատիր էֆէն-ոին եւ Կեդր. Վարչութեան անդամներէն զիս՝ Մէվլան Չատէ Բիֆաթը(1) միասին ունենալ փափաքած եւ այս փափաքն ալ Պոլսոյ անգլիական դեսպանատան միջոցաւ հաղորդած էր: Այս առաջարկը ո՛չ ես եւ ո՛չ ալ նահատակ Ապտիւլ Գատիր էֆէնտին ընդունեցինք. այսու հանդերձ սոյն ճամբորդութեան միջոցին Մաժոր Նոէլը առանձին ձգել յարմար չտեսանք: Կեդրոնի մէջ գումարուող մէկ նիստին, միութեան Բ. Նախագահը եղող Պէտիր խան Չատէ, հանգուցեալ էմին Ալի պէյին զաւակներէն ձէլատէթ եւ Քիամիրան Ալի պէյերը՝ բոլորս այս ճամբորդութեան Մաժոր Նոէլին ընկերանալ որոշեցինք:

Բ. Դուռը Մաժոր Նոէլին ճամբորդութեան նպատակին տեղեակ էր. վստահ էր որ այս քննութեամբ Արեւելեան նահանգներու մէջ հայոց փոքրամասնութիւնը եւ Ժուրքերու եւ քիւրտերու մեծամասնութիւնը երեւան պիտի գար եւ այսպէսով Հաշտութեան Վեհաժողովը պիտի ուսարանուէր եւ հայ յեղափոխականներուն երեւակայան պահանջները ջուրը պիտի իյնային. եւ արդէն ինչպէս նախապէս ալ բացատրեցինք՝ Մուսթաֆա Քէմալ փաշային Անատոլու զրկուելուն շարժառիթը այս ըլլալուն, Մաժոր Նոէլին ամէն կարգի դիւրութիւն ընծայելու հա-

(1) Այս գիրքին հեղինակը

մար նահանգներուն հրահանգ տրուած եւ իրեն ալ բաց ընդհանուր յանձնարարական մը տրուած էր:

Մաժոր Նոէլ ձէլատէթ եւ Քիամիրան Ալի պէյերու եւ Ապտիւլ Րահիմ էֆէնտիի ընկերակցութեամբ շոգեկառքով Հայտար փաշայէն մեկնելով, անգլիական զրաման տակ գտնուող Հալէպ եկած էր:

Քանի մը օր Հալէպ մնալէ եւ Մաժոր Նոէլի օդանաւով Պաղտատ երթ ու դարձէն յետոյ, հոն հանդիպած եւ Քիւրտիստանի Բարձրացման Միութեան պատկանող Տիգրանակերտի ձէմիլ փաշա Չատէ էքրէմ պէյն ալ միասին առնելով Ալպիստան, ապա Արղայի ճամբով Մալաթիա մեկնած էին:

Հիմա պատմութեան պատկանող Մաժոր Նոէլի ճամբորդութեան մասին Մուսթաֆա Քէմալ փաշայի «Հալք» կուսակցութեան Համաժողովին մէջ արտասանած եւ ապա դրքոյկի վերածուած ճառին մէջ «Քիւրտիստան մը պիտի ստեղծուէր» վերագրումը եւ ատոր տրուած կարեւորութիւնը՝ այն ժամանակի համար երբեք մտաբերելի չէլ կրնար ըլլալ:

Կեդրոնը Պոլիս գտնուող՝ «Քիւրտիստանի Բարձրացման Միութեան» միակ նպատակը, մեծամասնութիւնը քիւրտերով բնակուած այս վայրերուն, ջնջին փոքրամասնութիւն եղող հայերուն տիրապետութեան ենթարկուելուն ամէն գնով արգելք ըլլալ եւ քիւրտերու մէջ արթնութիւն եւ յառաջդիմութիւն ստեղծել էր: Արդէն «Քիւրտիստանի Բարձրացման Միութեան» աշխատութեան արդիւնքներն ալ Հաշտութեան Վեհաժողովի Արեւելեան նահանգներու մէջ քննութիւն կատարել ստիպած էր: Այս մասին Սաիս փաշազատէ քիւրտ Շէրիֆ փաշա գնահատելի ծառայութիւն մատուցած էր:

\* \* \*

Ահա այս շրջանին էր, որ Բ. Դուռը Մուսթաֆա Քէմալ փաշային Անատոլուի մէջ Իթթիհատ եւ Թէրազզըի իշխանութիւնը վերականգնելու ձգտող ձեռնարկները արգիլելու եւ Սերաստիոյ մէջ գումարումը ծրագրուած Համաժողովը ցրուելու համար Խարբերդի կուսակալ Կեսարացի Ալի Ղալիպ պէյին հրաման տուած էր:

Ալի Ղալիպ պէյ Բ. Դունէն ստացած հրամանին վրայ հարկ եղած ուժը պատրաստելու համար Մալաթիա եկած էր: Ասոր զուգադիպում մը ըլլալուն հաւատ չընծայող Մուսթաֆա Քէմալ փաշա, խնդրոյն մէջ անգլիական մատ

կայ կարծելով, այդ շրջանակի հրամանատարը եղող Քեազիմ Գարա Պէքիր փաշայէն պահանջած էր որ Մաժոր Նոէլը եւ ընկերները ձերբակալէ:

Քեազիմ Գարապէքիր փաշա խնդիրը քննելով փափկութիւնը հասկնալուն՝ Մուսթաֆա Քէմալ փաշային ուղղած հեռագիրով ըսած էր. —

«Հասկցուած է որ անգլիացի սպան կեդր. կառավարութեան թոյլտուութեամբ, թուրքերու, քիւրտերու եւ հայերու թիւը քննելու համար կը ճամբորդէ, ձերբակալման համար Պոլիս հարցուեցաւ եւ ո՞ր կողմերը այցելելու մըտադրութեան մասին ալ Պարբերդի կուսակալին տեղեկութիւն պահանջուեցաւ»:

Քեազիմ Գարապէքիր փաշային ճշմարտութիւնը յայտնող սոյն հեռագիրը, Սերաստիոյ մէջ մտահոգութեան մատնուած Մուսթաֆա Քէմալ փաշան չէր վստահեցուցած. եւ անպայման Մաժոր Նոէլին ձերբակալումը եւ Սերաստիա դրկուիլը կը պահանջէր:

Քեազիմ Գարապէքիր փաշայէն գոհացուցիչ պատասխան չստացող Մուսթաֆա Քէմալ փաշա, Մալաթիա գրտնուող հեծելազունդի հրամանատար ձէմալ պէյը հեռագրի վրայ հրաւիրելով՝ Մաժոր Նոէլի եւ ընկերներուն ձերբակալումը հրամայած եւ ասկէ ալ Քեազիմ Գարապէքիր փաշային նման պատասխան ստանալուն՝ կասկածը աւելցած եւ վերջապէս Մաժոր Նոէլի դէմ Տիգրանակերտի կողմէն 18-20 հոգինոց հեծեալ ջոկատ մը հանելու յաջողած էր: Ենթասպայի մը հրամանատարութեան տակ գտնուող այս ջոկատը՝ Մաժոր Նոէլին պաշտօնին եւ դիրքին անտեղեակ էր. անոր հանդիպելուն եւ անոր դիրքն ու Պոլսոյ կառավարութեան կողմէ տրուած բաց հրամանը տեսնելուն՝ ձերբակալել չէր համարձակած:

Մաժոր Նոէլ՝ Անատոլուի կացութիւնը անանկ խառնակ տեսնելուն, իր պատճառաւ քաղաքական խնդիր մը ծագելուն առիթ չտալու համար, իր ճամբորդութենէն հըրաժարած եւ ընկերներով 10 Սեպտեմբեր 1919-ին ազատ կամքովը Մալաթիան ձգած եւ Հալէպ վերադարձած էր:

Մալաթիոյ կառավարիչ Պէտիր խանի զատէ Պալիլ Բամի պէյն ալ առանց Բ. Իրան տեղեկացնելու եղբորորդիներով Հալէպ եւ անկէ ալ Պոլիս եկած էր:

Երբ Մաժոր Նոէլի խնդիրը քննենք, կը հասկցուի, թէ Մուսթաֆա Քէմալ փաշա տակաւին կացութեան չէր կըրցած իշխել. միեւնոյն ժամանակ Պարբերդի կուսակալ Ալի Ղալիպ պէյին ալ անկարողութիւնը կը հաստատուի:



Պոլիս հրատարակուող «Միլլիյէթ» թերթն ալ նոյն դէպքը հետեւեալ կերպով կը նկարագրէ եւ կ'ըսէ՝

«Անգլիական «մասնաւոր կազմակերպութեան» արհմիակերպ շարունակ թափած ջանքերով հասցուցած եւ երբեմն հոս հոն գրկելով խառնակութիւններ հանել տուած մարդերէն մէկը կայ:

«Հազարապետ Նօէլ երիտասարդ նկատուելու տարիքն ունի. կ'ըսուի որ քրտերէն բանաստեղծութիւններ կը գրէ. այն ժամանակ Պոլիս հաւաքուող «Քիւրտ Բարձրացման Միութեան» Քիւրտիստանի անկախութեան երեւակայութեամբ միտքերը եւ խիղճերը կուրացած անդամներուն կողմէ, իբր երկինքէն իջած կուռք մը նկատուող այս Անգլիացի սպան, ժամանակին Տիգրանակերտ ալ եկած եւ թուրքերու դէմ բրոքականա մղող մարդ մըն էր: Ահաւասիկ 1919 տարուան Օգոստոս Սեպտեմբեր ամիսներուն՝ մենք զինք կրկին Անատոլու կը տեսնենք. Պէտիրխանի գերդաստանէն Քիւրտիւրան եւ Ճէլատէթ անուն երկու եղբայրներ՝ Մսթըր Նօէլի ճամբորդութեամբ Ալպիսթան եւ Արդայի վրայով Մալաթիա գացած են: Ասոնց կը միանայ նաեւ Տիգրանակերտի Ճէմալ փաշա զատէ էքրէմ պէյ: Ասոնք զինուած Քիւրտերուն պաշտպանութեամբ՝ իրենց ճամբորդութիւնը կը շարունակէին: Նպատակնին երեւութապէս շատ բնական կը տեսնուէր. թուրքերու, Քիւրտերու եւ Հայերու թիւը պիտի ճշդէին: Ասոր համար ալ Կեդր. Կառավարութեան, այսինքն Տամատ Ֆէրիտ փաշայի կառավարութեան մասնաւոր արտօնութիւնը առած էին: Հարկ է ըսել, որ Տամատ Ֆէրիտ Անգլիական խառնակիչ կազմակերպութեան մը Անատոլուն խառնակելու համար արտօնութիւն տալու պիտի չուշանար: Այսպէսով քրտախօս Անգլիացի հազարապետը, իր ընկերներով ազատ համարձակ իրենց ճամբան շարունակելով Մալաթիա հասած ժամանակնին՝ կառավարիչին եւ քաղաքապետին կողմէ ընդունուիլը տեսնուած է:

«Կացութեան ի՞նչ աստիճան փափուկ ըլլալը կը տեսնուի, չէ՞: Այս մարդիկը գացած տեղերնին, իրենց ուղածին պէս ժողովուրդը թունաւորելով, «քրտական խնդիք» պիտի հանէին: Ազգ. Կառավարութիւնը՝ տակաւին իր նախաքայլին, մեծ հոգերով զբաղեցնելով, թուրք ազգին ազատութեան բոլոր յոյսերը մարելու պիտի աշխատէին. անմիջապէս որոշել եւ գործադրել հարկ էր: Մալաթիա գտնուող զինուորական ուժերը Քեազիմ Գարապէքիւր փաշայի հրամանատարութեան տակ էր: Կատարուելիք առա-

Չին գործը՝ Նոէլ եւ ընկերներուն գործունէութիւնը արգիլելու համար՝ անմիջապէս զանոնք ձերբակալել էր. սակայն երբ այս կէտը Քեազիմ Գարապէքիւր փաշային հաղորդուեցաւ, ի՞նչ պատասխան տայ կը հաւնիք:

«Կ'ըսէ, թէ անգլիացի սպային թուրքերու, քիւրտերու եւ հայերու թիւը ճշդելու համար կեդր. կառավարութեան արտօնութեամբ ճամբորդելը կը զրուցուի, թէ Մալաթիա դռնուող հեծելազունդի պատրաստ ուժը քիչ ըլլալուն՝ ձերբակալելու չի համարձակիր, թէ ասոնց ձերբակալման համար Պոլսէն հրահանգ խնդրած է, եւ թէ ասոնց ճամբորդութեան նպատակին եւ այցելելիք վայրերու մասին Խարբերդի կուսակալէն հարցուած է:

«Պէտք չէ մոռնալ, որ Խարբերդի կուսակալը Տամատ Ֆէրիտին աջ բազուկը Ալի Ղալիպն է: Մալաթիոյ մէջ անգլիացի սպան դիմաւորող կառավարիչն ալ Պէտիրխանիներէն Խալիլ Րամին է: Պէտք է ըսել, որ այդ մարզիկը անգլիացի սպային մասին ի՞նչ պիտի խորհին եւ ի՞նչ տեղեկութիւն պիտի տան: Ոճիւրի ցանցին բոլոր անգամները իբարու մօտ եկած են ըսել է: Քեազիմ Գարապէքիւր փաշային հեռագիրը ի՞նչպէս պէտք է մեկնել... Այս մարդոց ճամբորդութեան նպատակը հասկցուած ըլլալով հանգերձ, Պոլսէն՝ Տամատ Ֆէրիտի կառավարութենէն հարցրնել ի՞նչ կը նշանակէ: Աւելի զարմանալին, Նոէլի պաշտպանութեան համար տրուած 5-10 գինեալ քիւրտերու դէմ հոն գտնուող հեծելազունդի պատրաստ ուժին քիչ նկատելն է: Հեծելազունդ մը քանի մը քիւրտեր չկարենայ ձերբակալել, այս ինչպէ՞ս կարելի է»:

«Ըսել է որ, տակաւին կացութեան կարելորութիւնը չըմբռնողներ կային: Մուսթաֆա Քէմալ փաշա ըմբռնած էր, որ այլեւս զգուշութեան ժամանակը անցած է եւ հարկ եղած հրամանը տալու չէր ուշացած: Այս միջոցին Մալաթիա դռնուող հեծելազունդի հրամանատար ձէմալ պէյը անձամբ հեռագրի վրայ հրաւիրած եւ Նոէլի, անոր ընկերներուն եւ 15-20 գինեալ քիւրտերու մասին տեղեկութիւն առած է: Այս խօսակցութենէն հասկցուած է, որ Մալաթիա դռնուող հեծեալ եւ թնդանօթածիդ զօրագունդին միայն սպաներն իսկ կրնային այս մարզիկը ձերբակալել: Ո՛ւր մնաց որ ամբողջ զօրագունդ մը՝ սահմանափակ թիւով քանի մը հողիներ ձերբակալելու չհամարձակի: Մուսթաֆա Քէմալ փաշան ատոր համոզուելէն ետք, գործի անցնիլ հրամայած է: Հարկ եղած միջոցները ձեռք առնելով Խարբերդի կուսակալ Ալի Ղալիպ պէյը, անգլիացի

հազարապետը, Քիամիրան Ճէլատէթ եւ Էքրէմը ձերբակալելով Սերաստիա զրկուիլը հրահանգած եւ անոր համար օգնական ուժ ալ զրկելը աւելցուցած է: Սակայն երբ հրամանատար Ճէմալ պէյ տեղեկացուցած է, որ կացութիւնը եւ իր պատրաստի ուժը ասոր համար նպաստաւոր չէ, աւելի ստիպելու հարկ չէ տեսած. միայն այս մարդիկը հրահողութեան տակ առնել եւ օրական երկու անգամ տեղեկադրել հրահանգելով գոհացած է:

«Միեւնոյն ժամանակ Մուսթաֆա Քէմալ փաշա՝ Մալաթիա զինուոր առաքումը ապահոված էր. ոեւէ մէկուն չկարենալ ձեռք ձգած արդիւնքը՝ այս ձեւով ինք ապահոված էր, եւ դաւաճաններուն հետապնդած նպատակը արդիւնք չէր սուած: Նոէլ եւ անոր ընկերացող մարդիկը՝ Սեպտեմբեր 10ի առաւօտուն՝ Մալաթիայէն փախած են: Ասոր վրայ զանոնք հետապնդել հրամայուած է: Իսկ Ալի Ղալիպ, Խալիլ Բամի վերջին ճիգով մը քիւրտերը ոտքի հանել փորձած եւ սակայն ձեռք առնուած միջոցներուն, եւ ցոյց տրուած խստութեան շնորհիւ, ասոնց համոզել փորձած ցեղախումբերը ցրուած էին: Յուսահատութեան մատնուած Ալի Ղալիպն ալ Ուրֆա եւ այնտեղէն Հալէպ փախած է: Իսկ Նոէլ՝ հսկողութեան տակ Ալպիսթանի ճամբով մեկնած է. իր ընկերներն ալ միասին փախած են»:

\* \* \*

Բ. Դուռը Մուսթաֆա Քէմալ փաշային ձերբակալումը եւ բանտարկուիլը, Սերաստիոյ մէջ գումարումը ծրագրուած Համաժողովին արգիլումը Խարբերդի կուսակալ Կեսարացի Ալի Ղալիպ պէյին յանձնած էր: Ալի Ղալիպ պէյ՝ Ներքին Նախարար Ատիլ պէյէն ստացած հրահանգներուն համաձայն, առանց ոեւէ մէկուն յայտնելու Մալաթիա եկած, Աղճա Տաղըի եւ Պէյ Տաղըի ցեղախումբերէն կամաւորներու արձանագրութեամբ զբաղած էր: Ան Բ. Դռնէն գրամ պահանջելով գործը ուղացուցած էր: Բ. Դուռը գրամական խնդիրը լուծելով՝ հետեւեալ հեռագիրը ուղղած էր:

Հեռագրին պատճէնը

«Խարբերդի Ալի Ղալիպ պէյին,

«Յելուզակներու հետապնդման համար զրկուելիք զինուորներու ծախքերը, ելեւմտական սնտուկէն պէտք է հայթայթուին: Մախսուելիք գումարը եւ զրկուելիք զինուորներուն թիւն ու առաքման օրը տեղեկացուցէք:

Ն. Գ. Նախարար՝ ԱՏԻԼ»

Թէեւ յայտնի չէ, թէ Ատիլ պէյի սոյն հեռագրին վրայ Ղալիպ պէյ սնտուկէն որչա՞փ դրամ գանձուած է, սակայն Ներքին Նախարարութեան ուղղած հետեւեալ հեռագիրով ան Բ. Գուռր ապահոված էր:

### Հեռագրին պատճէնը

«Խիստ ծածուկ, ստիպողական եւ անձնական,

«Յելուզակներու հետապնդման համար ամսոյն 14ին բաւարար ուժով մեկնելու համար հարկ եղած միջոցները ձեռք առնուած են: Կրնաք վստահ ըլլալ, որ արդիւնքը յաջողութիւն պիտի ըլլայ, միայն պատասխանները եւ հարկ եղածները մի յապաղեցնէք:

Խարբերդի Կուսակալ

ԱԼԻ ՂԱԼԻՊ

Ալի Ղալիպ պէյ սոյն հեռագիրը տալէն ետք, Մալաթիոյ կողմերը կամաւոր արձանագրելով զբաղած միջոցին, Մուսթաֆա Քէմալ փաշա հազարապետ Նոէլին ձերբակալման համար Տիգրանակերտի կողմերէն ղրկուած հեծեալ ջոկատին հանդիպած եւ եղելութեան տեղեակ էր: Ալի Ղալիպ պէյ, չքջանին կուսակալը ըլլալուն հանգամանքով, շարժումը արգիլել չէր համարձակած եւ դէպքերու վախճանին սպասած էր:

Մուսթաֆա Քէմալ փաշային հազարապետ Նոէլի դէմ ղրկած ջոկատը՝ Նոէլին հանդիպելով, Պոլսոյ կառավարութեան տուած յանձնարարականը տեսնելով չէր համարձակած ձերբակալել, Նոէլ՝ կացութիւնը շատ խառնակ տեսնելուն, քաղաքական միջադէպի տեղի չտալու համար, ճամբորդութիւնը շարունակելը անյարմար գտած եւ ընկերներով Հալէպ վերադարձած էր: Ասոնց միացած էր նաեւ Մալաթիոյ կառավարիչ Պէտիր Խանի Խալիլ Բամի պէյ:

Իսկ Ալի Ղալիպ պէյ՝ այս դէպքէն վախնալով եւ կեանքը վտանգի տակ կարծելով, առանց Խարբերդ գլտնուող ընտանիքին մասին խորհելու՝ լեռնէ լեռ, գաղտագողի ճամբաներէ անցնելով՝ անգլիական գրաւման տակ գտնուող Հալէպ ապաստանած էր:

Այսօր պարզուող այդ ժամանակուան դէպքերէն կը հասկցուի, որ վախը Մուսթաֆա Քէմալ փաշայէն աւելի՛ Խարբերդի կուսակալ Ալի Ղալիպ պէյը պարուրած էր:

Մնդրին ներքին ծալքերուն անտեղեակ եղող Բ. Դուռը, փախուստին պատճառաւ Ալի Ղալիպ պէյէն քանի մը օր չէր կրցած տեղեկութիւն առնել եւ կարծելով որ ան հրահանգին համաձայն գաղտագողի Սերաստիա մեկնած է, անհամբեր, Սերաստիայէն գալիք յաջողութեան լուրին կը սպասէր:

Ալի Ղալիպ պէյ անգլիական գրաւման տակ գտնուող Հալէպ ապաստանելով՝ ինքզինքը ապահով զգալէ ետք, բարի սովորութեանը համաձայն կացութիւնը որպէս շատ բարդ Բ. Դրան տեղեկացնելով, նորէն պահանջներ ներկայացուցած էր:

Վարչապետ Տամատ Ֆէրիտ փաշա եւ Ներքին Նախարար Ատիլ պէյ՝ Մալաթիայէն ստացուած վերջին հեռագրին վրայ, Ալի Ղալիպ պէյի յաջողութեան լուրը Սերաստիայէն կը սպասէին եւ երբ տեղեկացան, որ առանց պատճառի Հալէպ փախած է ան, ապշած մնացին:

\* \* \*

Մուսթաֆա Քէմալ փաշա, հազարապետ Նոէլին քրնական ճամբորդութենէն հրաժարելով Հալէպ մեկնումը եւ Պարբերդի կուսակալ Ալի Ղալիպ պէյին փախուստը տեղեկանալուն, լայն շունչ մը առած եւ Բ. Դուռը շփոթեցնելու նպատակով Ներքին Նախարար Ատիլ պէյին հետեւեալ հեռագիրը ուղղած էր:

### Հեռագրին պատմէնը

«Թոյլ չէք տար որ ազգը իր խնդրանքները թագաւորին ներկայացնէ: Ստրուկներու, դաւաճաններու եւ թըշնամիներու հետ ի վնաս ազգին դաւեր կը նիւթէք: Կասկած չունիմ, որ ազգին զօրութիւնը գնահատելու անկարող էք: Հայրենիքին վնասող օտարներուն խիղճերնիդ ծախելով՝ գործած դաւաճանութիւննիդ աչքի կը զարնէ: Ձեր վստահած մարդոց եւ ուժին վախճանը տեղեկացած ժամանակնիդ՝ Ձեր վախճանին մասին ալ խորհիլ մի մոռնաք»:

Մուսթաֆա Քէմալ փաշա հեռագրով չէր գոհացած: Ան իր կազմակերպութեան ենթակայ զօրաբանակի հրամանատարներու, կուսակալներու եւ անկախ կառավարիչներու կողմէ ալ հեռագրի պատճէն մը ղրկելով՝ Բ. Դուռը կատարելապէս բարոյալքած էր:

Մուսթաֆա Քէմալ փաշա իր գործունէութեան շրջանակը ընդարձակած էր: Անգարա գտնուող 20րդ զօրա-

բանակի հրամանատար Ալի Ծուատ փաշային՝ Համաժողովի որոշումով Արեւմտեան Անատոլիոյի ազգային բանակի հրամանատարի աստիճանը տուած եւ հակառակորդ կուսակալները եւ կառավարիչները ձերբակալելով՝ Սերաստիա ղրկել հրամայած էր:

Ալի Ծուատ փաշա իրեն տրուած լայն իրաւասութեան վրայ, էսկի Շէհիրը եւ չըջակայքը վստահելի նկատելով՝ հրամանատարութեան հեծելագորաց տեղակալ՝ Աթըֆ պէյը, իսկ Աֆիոն Գարահիսարի չըջանն այ առանձինն չըջանակ մը նկատելով՝ հրամանատարութեան Չըրղ գորարաժնի հրամանատար՝ Օմար Լուսթի պէյը նշանակած եւ յաջորդարար՝ Անդարայի կուսակալ Մուհիտտին փաշան, Չորումի կառավարիչ՝ Սամիհ Ծէթնի պէյը, Նիյտէի կառավարիչ՝ Մէճիտ պէյը եւ ուրիշները մէյ մէկ դաւերով ձերբակալած եւ Սերաստիա ղրկած էր:

Մուսթաֆա Քէմալ փաշան, երբ այս կերպով Անատոլիոյ մէջ իր իշխանութիւնը զօրացնելու կ'աշխատէր, միւս կողմէ Պոլիս գտնուող Տամաս Ծէրիտ փաշայի կառավարութիւնը տակաւ կը տկարանար եւ անոր իշխանութեան չըջանակը կը նեղնար:

Այս միջոցին՝ անգլիացիներ էսկի Շէհիրի չըջանակին Ազգ. ուժերու հրամանատար Աթըֆ պէյը ձերբակալելով Պոլիս ղրկած էին: Այս դէպքին վրայ՝ Ալի Ծուատ փաշա իր ժողուած զինուորներով էսկի Շէհիրի մօտ գլտնուող ձամչիտ գալով՝ էսկի Շէհիրը հետուէն պաշարած էր:

էսկի Շէհիր գտնուող Համաձայնական ուժերու հրամանատար Զօրավար Սէլի Գլեր՝ Ալի Ծուատ փաշային նամակ մը գրելով անոր ազդարարած էր, որ այս շարժումը զինք խիստ պատասխանատուութեան կ'ենթարկէ:

Անգլիացիներու եւ Ալի Ծուատ փաշային միջեւ ծագած այս միջադէպին վրայ, Տամատ Ծէրիտ փաշա՝ Ալի Ծուատ փաշան պաշտօնանկ ըրած եւ անոր տեղ Պոլիս գլտնուող Ահմէտ Համտի փաշան նշանակելով՝ փութով Անդարա ղրկած էր:

Ահմէտ Համտի փաշա իր հետ կարգ մը վստահելի սպաներ առնելով՝ Անգարա մեկնած եւ էսկի Շէհիր հասնելուն՝ տեղեկանալով որ Ալի Ծուատ փաշա մաս մը զինուորական ուժերով Սարը Քէոյին կողմերը եկած եւ Սարը Քէոյին շոգեկառքի կամուրջը օդը հանած է, էսկի Շէհիր կանգ առած եւ եղելութիւնը Բ. Գուռ տեղեկացնելով հրահանգ խնդրած էր:

Այս կացութեան հանդէպ Բ. Դուռը Ահմէտ Համտի փաշային հրամայած էր՝ որ զօրաբաժնի կեդրոնը առժամայէս էշկի Շէհիրը եւ բանակատեղին ալ հոն հաստատէ :

Ահմէտ Համտի փաշա՝ էսկի Շէհիրը բանակատեղի ընելով, այն ժամանակ քաղաքին կառավարիչը եղող Սերոզցի Հիւմի պէյին օժանդակութեամբ, այդ շրջանի ժողովուրդէն եւ այդ շրջանին մէջ բնակող Չէրքէզներէն կամաւոր զինուորներ հաւաքած էր :

Մուսթաֆա Քէմալ փաշա, էսկի Շէհիրի շրջանակի Ազգ. ուժերու հրամանատար Աթրք պէյին անգլիացիներուն կողմէ ձերբակալուելով Պոլիս զրկուելուն, Ալի Ֆուատ փաշային ալ էսկի Շէհիրը պաշարելուն համար հոն գլուխ անգլիացի հրամանատար Զօրավար Սէլի Գլէրին Ալի Ֆուատ փաշային սպանալուն վրայ, Սեբաստիոյ ներկայացուցչական ժողովին անունով Պոլիս՝ Համաձայնական տէրութեանց ներկայացուցիչներուն բողոքագիր մը զրկելով՝ Զօրավար Սէլի Գլէրը ներքին գործերու խառնուելու յանցանքով ամբաստանած էր : Մուսթաֆա Քէմալ փաշային սոյն բողոքագիրը նկատի առնելով, 25 Սեպտ. ին Զօրավար Սէլի Գլէր, իր ստացած հրահանգին՝ վրայ Ալի Ֆուատ փաշային մօտ պատուիրակութիւն մը կրկած էր : Սոյն պատուիրակութիւնը հազարապետէ մը եւ քննիչ ըսպայէ մը կը բաղկանար : Ասոնք Ալի Ֆուատ փաշային հաղորդած էին որ անգլիացիները ներքին խնդիրներու եւ Ազգ. ուժերու գործերուն պիտի չմիջամտեն : Եւ ժամանակ մը ետք, էսկի Շէհիր գտնուող անգլիական ուժերը իրենց բոլոր գոյքերով Պոլիս քաշուած էին :

Այս միջոցին տարաձայնուեցաւ, թէ զօրաբանակի հրամանատարութենէն պաշտօնանկ Ալի Ֆուատ փաշա՝ կարեւոր ուժերով, էսկի Շէհիրի մօտակայ Մաթլապ գիւղը եկած էր :

Ալի Ֆուատ փաշային տեղ նշանակուող Ահմէտ Համտի փաշա այս լուրին վրայ մտահոգուելով՝ իրականութիւնը հասկնալու համար անմիջապէս յառաջապահ գունդ մը ոտքի հանած էր : Այս գունդին Համտի փաշային բերած լուրերը շատ չափազանցուած եւ իրապէս մտահոգիչ էին :

Ահմէտ Համտի փաշա՝ յառաջապահ գունդին բերած չափազանցուած լուրերէն վախ զգալով, առանց խորքը քննելու, գործին մէջէն դուրս գալ ուզած եւ խնդիրը անձամբ տեղեկացնելու եւ նոր հրահանգ ստանալու համար Պոլիս մեկնելու թոյլտուութիւն խնդրած էր :

Նոյն օրը կառավարիչ Հիւմի պէյ՝ տուն երթալու

Ժամանակ անծանօթի մը կողմէ գնդակով եւ վտանգաւոր կերպով վիրաւորուած էր:

Սոյն մահափորձը տեղեկացող ԱՏՄէտ Համտի փաշա՝ կառավարչին տունը փութացած, զայն անյոյս եւ վերջին շունչի վրայ տեսած եւ քանի մը ժամ վերջ անոր մեռնիլը տեսնելով, իր բարոյական ուժը բոլորովին կտարած էր:

Համտի փաշա կառավարչին տունէն իր բնակարանը վերադարձին, անծանօթի մը կողմէ իր հասցէին ձգուած երկտող մը գտած էր, ուր կ'ազդարարուէր թէ, եթէ անմիջապէս Էսկի Շէհիրը լքելով Պոլիս չվերադառնայ, ինքն ալ կառավարիչ Հիւմի պէյին բաղդին պիտի արժանանայ:

Սոյն երկտողը, կառավարչին մահը եւ Մաթլապ գիւղը զրկուած յառաջապահ գունդին բերած չափազանցուած լուրերը՝ ԱՏՄէտ Համտի փաշան բարոյալքած եւ առանց Պոլսոյ պատասխանին սպասելու՝ նոյն իրիկունն իսկ սպա-յակոյտով Պոլիս վերադարձած էր:

ԱՏՄէտ Համտի փաշայի Էսկի Շէհիրը լքելուն վրայ՝ Ալի Փուլատ փաշայի ուժերէն գունդ մը Էսկի Շէհիր մըտնելով Ազգային բանակի անունով իշխել սկսած էր:

Յետագային ստացուած ստոյգ լուրերուն համաձայն՝ Մաթլապ գիւղը գտնուող Ալի Փուլատ փաշային բոլոր ուժը ասդիէն անդիէն բերուած 100-150 հոգիէ կը բաղկանար եւ գիւղին շրջակայքը փորուած դիրքերուն մէջ տեղաւորուած էր: ԱՏՄէտ Համտի փաշային յառաջապահ գունդին կողմէ Թնդանօթ կարծուածը, գիւղերէն բերուած վառարանի խողովակներ էին...:

Վերջապէս ԱՏՄէտ Համտի փաշա, Մալաթիոյ մէջ փոքր դէպքէ մը խորտչող Խարբերդի կուսակալին հետեւելուն, գնդապետ Մուսթաֆա Քէմալ փաշային անունը Անատոլուի մէջ հռչակ առած էր:

Այս եւ նման դէպքերը Մուսթաֆա Քէմալ փաշան քաջալերած էր, իսկ կառավարութեան իշխանութեան շրջանակը միայն Պոլսոյ եւ Իզմիրի շրջանն էր:

Մուսթաֆա Քէմալ փաշա այս անցուդարձերուն ակնարկելով, կ'ըսէ. —

«Կեդրոնական կառավարութեան հետ մեր յարաբերութեան ձգտումէն յետոյ, Ազգային որոշումներու դէմ հակառակ դիրք բռնող կարգ մը վայրեր, մեզի հպատակելու ստիպուեցան: Կեդր. կառավարութեան ծառայող կարգ մը պաշտօնեաներ կա'մ փախան եւ կա'մ կացութեան հետ հաշտուեցան»:



\* \* \*

Պոլսէն եւ չրջաններէն ամէն օր Կեդր. կառավարութեան անկումը պահանջող հազարաւոր հեռագիրներ տեղալ սկսած էր: Համաձայնական տէրութեանց Անատոլուի մէջ չրջող սպաները եւ պաշտօնեաները կը յայտարարէին, թէ Ազգ. Շարժման հանդէպ իրենք չէզոք են եւ ներքին խնդիրներու չեն միջամտեր:

Այս կացութեան մէջ թագաւորը եւ փեսան՝ Ֆէրիտ փաշա, ըմբռնելով որ Ազգ. կառավարութեան ղեկավարներուն հետ համաձայնելէ ուրիշ ճար չէ մնացած, իրենց դիրքը բարձր պահելու պայմանաւ համաձայնութեան համար ճամբայ մը կ'որոնէին:

Վերջապէս Մուսթաֆա Քէմալ փաշայի եւ գնդապետ Ապտիւլ Քէրիմ փաշայի միջեւ 27-28 Սեպտեմբերի գիշերը ժամը 11էն (ը. ե.) սկսելով 8.30 ժամ տեւող հեռագրային խօսակցութիւն տեղի ունեցած էր:

Մուսթաֆա Քէմալ փաշա «Ազգային տան» մէջ խօսած ընդարձակ ճառով՝ Ապտիւլ Քէրիմ փաշան այսպէս կը նկարագրէ եւ կ'ըսէ. «Ապտիւլ Քէրիմ փաշա իմ վաղեմի բարեկամս, շատ պատուաւոր, անձնուէր եւ մաքուր սրտով հայրենասէր մըն էր: Սելանիկի մէջ երկուքս ալ հազարապետ ըլլալով՝ միեւնոյն գրասենեակին մէջ կ'աշխատէինք եւ հինէն մտերիմ էինք: Հանգուցեալին ընթացքէն եւ խօսքերէն կը հասկցուէր, որ ան Մէվլաւի աղանդին հետեւորդ, մերթ անոնց աղօթատեղիները կը յաճախէր: Սակայն չեմ գիտեր, թէ ո՞ր մէկ շէյխը կը պաշտէր:

«Քէրիմ փաշան իրեն յատուկ գրութեան ձեւ եւ ոճ ունէր: Շատ ձեւակերպութիւններով կ'արտայայտուէր: Մեր Սելանիկ գտնուած չրջանին, հոն բանակի հրամանատար եւ Քննիչի պաշտօնով գտնուող Հատի փաշա՝ Քէրիմ փաշան իմ նկարագրածիս պէս յարգելի եւ համակրելի գտած էր:

«Փարիտ փաշայի դահլիճին պաշտպանը եղող Հատի փաշա՝ նեղը մնացած թագաւորին եւ Ֆէրիտ փաշային օգնութեան այս միջոցաւ կը հասնէր: Քէրիմ փաշան ալ Ալի Ֆուատ փաշան Սելանիկէն կը ճանչնար:

«Սեպտեմբեր 25ի երեկոյեան Անգարա գտնուող 20րդ զօրաբանակի փոխ հրամանատար Մահմուտ պէյէն ստացած ծածկագիր հեռագրին ամփոփումը հետեւեալն էր.

«Այս գիշեր Պոլսոյ հեռագրատունէն Ալի Ֆուատ փաշան կանչեցին. ներքին նախարարութեան նահանգներու յատուկ ծածկագիր մը գրել տուին: Ասոր ամփոփումն այն

էր, թէ հայրենիքի փրկութեան միակ միջոցը թագաւորին յայտարարութեամբ ցոյց տրուած ճամբան է: Ազգային շարժումը քաղաքակիրթ աշխարհի մէջ շատ աննպաստ կերպով նկարագրուեցաւ, կառավարութեան եւ ազգին մէջ եղած լարուածութիւնը օտար միջամտութիւններու տեղի պիտի տայ: Այս լաւ հետեւանք պիտի չունենայ: Ի վերջոյ կ'ըսէին, թէ շարժման ղեկավարներուն հետ բանակցութիւն մը ունենալ ստիպողական դարձած է եւ ժամանակի սղութեան պատճառաւ պատասխանի կը սպասէին՝ աւելցրնելով, թէ գաղափարի ազատութիւնը եւ անձնական արժանապատուութիւնը պիտի յարգուի: Սոյն հեռագիրը գրողը գնդապետ Ապտիւլ Քէրիմ փաշան է եւ ատոր պատասխանը Առեւտրական եւ Երկրագործական Նախարար Հատի փաշային միջոցաւ եւ նոյն ծածկագիրով կը սպասէ: Յիշեալը այս ձեւով կ'ուզէր տարածայնել, թէ դիմումը մեր կողմէ կը կատարուի. հեռագրի վրայ սպասելուն, վայրկեան առաջ տրուելիք պատասխանը տեղեկացնելիդ կը խնդրուի:

Ալի Ծուատ փաշային ալ գրեցի:

Նոյն օրը ժամը 7ին Մահմուտ պէյին հետեւեալը տեղեկացուցի.—

«Քէրիմ եւ Հատի փաշաներուն պատասխանեցէք, թէ Ալի Ծուատ փաշան Անգարայէն կը բացակայի եւ գրադուած է: Եթէ խօսակցիլ կը փափաքին՝ Սերաստիա գրտնուող Ներկայացուցչական Ժողովին եւ սոյն Ժողովին մէջ գտնուող Մուսթաֆա Քէմալ փաշային հետ ուզած ժամանակնին հեռագրային խօսակցութիւն կարելի է: Եթէ անոնք բանակցիլ կ'ուզեն, պէտք է խոհեմութեամբ շարժիլ:

\* \* \*

17-18 Սեպտեմբերի կէս գիշերուան մէկ ժամ մնացած, հեռագրի վրայ Ապտիւլ Քէրիմ փաշայի եւ Մուսթաֆա Քէմալ փաշայի միջեւ հետեւեալ խօսակցութիւնը տեղի ունեցած էր:

Սերաստիոյ հեռագրատունը Պոլսոյ հեռագրատան:

«— Մուսթաֆա Քէմալ փաշա հեռագրի վրայ է, Ապտիւլ Քէրիմ փաշային ըսէք թող հրամմեն:

Պոլսոյ հեռագրատունէն Ապտիւլ Քէրիմ փաշա կը պատասխանէ.

«— Մուսթաֆա Քէմալ փաշա՞ն էք, հոգիս.

Մուսթաֆա Քէմալ փաշա.

«— Այո, յարգելի Քէրիմ փաշա.

## Ապտիւլ Քէրիմ փաշա.

«— Եղբայրս, կը յուսամ համալիսա էք. հայրենիքի փրկութեան համար մեծ հայրենասէր եղբօրս եւ ներկայացուցիչ եղբայրներուն հետ դադափարի փոխանակութիւն ունենալ կ'ուզեմ: Ձեզի ներկայացնելու համար Ալի Ծուատ փաշայի միջոցաւ հեռագիր մը ղրկած էի: Այդ հեռագրի հիման վրայ լաւ ելք մը կրնանք գտնել եւ կը յուսամ որ հայրենիքը ներկայ տառնապալի վիճակէն փրկել խորհելով, մեր նպատակին հասնինք, չէ՞ք խորհիր: Շատ ուշիմ եւ խոհեմ եղբայրս, մեր սիրելի հայրենիքին աչք անկող շարադործներուն շար նպատակները ջուրը ձգենք եւ զանոնք յուսախար ընենք. եւ միայն հայրենիքին եւ ազգին փրկութեան համար ձեռք առնելիք միջոցները փնտռենք. ասոր համար փափաքնիս միեւնոյնն է ի սէր հայրենիքի ցոյց տրուած այսչափ ազնիւ զգացումները եւ քաղաքակիրթ աշխարհի առջեւ սուրբ նկատուող մեր երկրին պաշտպանութեան համար մեր կարողութիւնը ի սպաս զնելով, այս դժուարութիւնները բառնանք եւ ասոր ճար մը ղրտնելու համար դադափարի փոխանակութեան սկսինք: Աւելցնեմ որ այս ձեռնարկին հանդէպ կառավարութիւնն ալ շատ բարեացակամ է:

«Մուսթաֆա Քէմալ.— Սիրելի եւ ազնուասիրտ եղբայրս Ապտիւլ Քէրիմ փաշա, փա՛ռք Աստուծոյ առողջ եմ. մեծ եւ ազնիւ ազգին օրինաւոր իրաւունքներուն պաշտպանութեան համար բոլոր ուժով ջանք թափուելը տեսնելով ուրախ եմ: Գադափարի փոխանակութեան փափաքին համար բոլոր սրտովս շնորհակալ եմ: Ծուատ փաշայի միջոցաւ ղրկուած հեռագրին պարունակութեան տեղեակ եմ: Թագաւորին խորունկ ցաւ ազդող պատճառները ազգին կողմէ չէ: Ֆէրիտ փաշան, Ներքին Նախարար Ատիլ պէյր, Պատերազմական Նախարար Սիւլէյման Եէֆիլ փաշան եւ ասոնց գործակիցները՝ Խարբերդի կուսակալ Այի Ղայիպ պէյր, Անդարայի կուսակալ Մուհիտտին փաշան, Տրապիզոնի կուսակալ Ղայիպ պէյր, Գասթէմունի կուսակալ Րիզա պէյր, Գոնիայի կուսակալ՝ Ճէմալ պէյր ստեղծած են: Մալաթիոյ, Չորուսի եւ Գոնիայի դաւերը եթէ իրենց բոլոր մանրամասնութիւններով Ձեզի ծանօթ չեն՝ ձեր այդ ենթադրութեան համար, թէ ասիկա զուգադիպութիւն է չեմ մեղադրեր: Օտարներուն կարծիքին ի նպաստ մեզի դասաւորուելը իրականութիւնն է: Միայն թէ այս փոփոխութիւնը, Էրբ եւ իցէ Ֆէրիտ փաշայի կառավարութեան հետեւած քաղաքականութեան արդիւնքը չէ: Այս արդիւն-

քը մեր ազգին ցոյց տուած գոյութեան պայքարին պտուղն է: Ահա այս մասին է որ թագաւորը կը խարեն: Մեր գոյութեան եւ յաջողութեան միջոցը միայն ազգային ուժին եւ ազգային փափաքին մէջ է: Այս օրինաւոր հիմէն կէտ մը իսկ շեղիլ — Աստուած հեռու ընէ — տէրութեան, ազգին եւ հայրենիքին մեծ կորուստ պիտի պատճառէ: Մեր ազնիւ ազգին սոյն շարժումը սխալ մեկնելէ չքաշուող դաւաճանները բաւական շատ են: Սակայն շատ ցաւալի է, որ այս անիծեալներու գլուխը՝ կառավարութեան պետ Ֆէրիտ փաշայի եւ նախարարական աթոռ գրաւող Ատիլ պէյի, Սիւլէյման Շէֆիզ փաշայի նման պետական մարդիկ կը գտնուին: Այս թշուառականներն են որ կը տարածայեն, թէ մեծ թիւով համայնավարներ ամէն օր մեր երկիրը կը մտնեն եւ այս շարժումը ասոնց գործն է:

«Ասոնք են, որ պաշտօնապէս թերթերուն եւ աշխարհի կը տեղեկացնեն, թէ մեր այս շարժումը Իթթիհատի կողմէ եւ Իթթիհատի դրամով կը դեկավարուի: Ասոնք են, որ պաշտօնապէս կը յայտարարեն, թէ Անատոլուի մէջ խառնակութիւններ ծագած են եւ մեր սրբազան հայրենիքը օտարներուն գրաւել կու տան: Այս թշուառներն են, որ Մալաթիոյ եւ Սերաստիոյ ժողովուրդը գիրար սպաննելու մղած են: Այս տգէտներն են որ ազգային շարժումը կանխելու համար Սերաստիան եւ այս շարժման զգացուած վայրերուն օտարներուն կողմէ գրաւուիլը կ'ուզեն: Չերինին պէս մեր ալ ջերմ փափաքն այն է, որ մեր սիրելի հայրենիքին վրայ չար աչք տնկող վատերուն հետապնդած նպատակը ջուրը ձգելով եւ զանոնք յուսախար ընելով, կառավարութեան՝ ազգին ջանքերը միայն հայրենիքին բարօրութեան յատուկ գործերու վրայ կեդրոնացնենք: Փա՛ռք Աստուծոյ, այս նպատակին հասնելու համար՝ ազգը այս շարամիտներուն ամէն տեսակ գործունէութիւնը արգիլած եւ իր կամքը պարտադրած եւ միեւնոյն ժամանակ հասկրցած է, որ Կեդր. կառավարութիւնը ի՛նչ աստիճանի կաշկանդուած եւ անկարող կազմ մը ունի: Մերզիֆունը պարպեցին, Սամսոնն ալ պարպել սկսան եւ կը յայտարարեն, թէ ներքին գործերուն եւ Ազգ. Շարժման հանդէպ չէզոք պիտի մնան: Մեր շարժումը Պոլսոյ մէջ Սահմանադրութեան գործադրութեամբը պիտի վերջանայ: Ներեցէք ինձի ըսելու, որ ներկայ կառավարութեան մեր շարժման հանդէպ բարեացակամ գտնուելու կարծիքնիզ սխալ է: Ես տակաւին կարին գտնուած պահուս իրական կացութիւնը Ֆէրիտ փաշային պարզելով տեղեկացուցած էի, որ ազգին

կամքին հակառակ շարժելիք ո՛չ մէկ ուժ մնացած է եւ ազդարարած՝ որ մեզի արգելք եւ հակառակ գիրք չորգեզրէ: Այս մարդուկը չպատասխանելէ զատ յայտարարեց՝ թէ Ազգ. Շարժումը քանի մը հոգիի դրդումին արդիւնքն է: Ան քանի մը փառասէր, շահասէր եւ իրենց գիրքը պահելու համար երկու կողմերուն ժպտող, տգէտ եւ կոյր կուսակալներուն տեղեկագիրները, իմ հայրենասիրական ցուցումներէս նախընտրեց: Այսօր, ան երբ ամէն տեսակ դաւաճանական եւ ազգակործան գործունէութեան մէջ մխրճուիցաւ, ազգն ալ բոլոր ճշմարտութիւններուն տեղեկացաւ: Մեր պարտականութիւնը՝ արագ շարժումով մը ազգին փափաքներուն ընդաւաճող նոր դահլիճի մը կազմութիւնը ապահովել է: Եթէ դահլիճին անձերուն եւ ապահովութեանը մասին վախ կը զգան՝ նման գործերով զբաղելու ստորնութենէն շատ բարձր եղող ազգին անունով իրենց հարկ եղած խոստում եւ ապահովութիւնը տալ ազգին շահերուն պահանջն է. և եթէ իրենց բռնած շեղ ճամբան շարունակելու ըլլան, յառաջիկային ծագելիք դէպքերուն պատասխանատուն իրենք պիտի նկատուին:

«Ահաւասիկ ձեր բարենպատակ միջամտութեան բերումով, ձեզի պէս սիրտը հայրենիքին եւ ազգին սիրով տրուիող եւ թագաւորին հանդէպ հաւատարմութեամբ առյրցուն եղբօրս՝ Ապտիւլ Քէրիմ փաշային վերջին անգամ հաղորդել պատիւ եւ պարտականութիւնը կը համարեմ: Ազգ. Շարժումը իր բոլոր թափով դէպի Պոլիս կը յառաջանայ: Ծէրիտ փաշան եւ ընկերները ասոր տեղեկ եւ: Խնդրե՛մ, դուք ալ այս տեղեկութիւնները հաղորդեցէք, հարցին լուծումը մէկ ձեւով հնարաւոր է, վարչապետութիւնը բառին բուն նշանակութեամբ ազգին փափաքներուն հպատակող մէկու մը յանձնել եւ այդ անձն ալ ըստ այնմ շարժի: Այս բացատրութիւններուն մասին Եթէ կարծիք յայտնել կ'ուզէք, խնդրեմ տեղեկացուցէք:

Ապտիւլ Քէրիմ փաշա. — Խնդրեմ, հաճեցէք նախ Ձեր վսեմութեան հետ գտնուող յարգելի անձերուն բոլորին բարեւներս հաղորդել: Խնդրին բոլոր փուլերը դուք պարզեցիք... Թէեւ առանց մանրամասնութեանց տեղեկանալու՝ խնդրի մը համար վճիռ տալ զժուար է, սակայն կ'ուզէի պարզել, որ հայրենիքին ճակատադրին տիրանալու այս վայրկեանին, ազգին և կառավարութեան համերաշխաբար տեսնելիք գործին բարիքները նկատի առնելով այս ուղղութեամբ շարժիլ լաւ կ'ըլլար: Ի՞նչ կ'ըսէք, կարելի է որ թագաւորական գրութեան մեկնութեան մէջ սխալած

ըլլամ, ներեցէք որ բուն խնդրին լուծման ծառայելիք սոյն թագաւորական գրութեան ընդհանուր գիծերը բացատրելով կը կարծեմ որ մեր թագաւորը . . . :

Մուսթաֆա Քէմալ (Ապտիւլ Քէրիմ փաշային խօսքը ընդմիջելով) .— Քէրիմ փաշա, աւելորդ մանրամասնութիւնները մեր նպատակէն կը հեռացնէ, եւ թագաւորական գրութեան բացատրութիւններով զբաղիլ անօգուտ է, խնդրեմ, բուն խնդրին մասին խօսինք :

Ապտիւլ Քէրիմ .— Բուն խնդրին մասին պիտի խօսինք, ներեցէք որ շարունակեմ :

Մուսթաֆա Քէմալ .— Խնդրեմ, վերջին խօսքի եւ առաջարկի մասին խօսինք :

Ապտիւլ Քէրիմ .— Այո, հոն պիտի գանք :

Մուսթաֆա Քէմալ .— Քէրիմ փաշա, չենք կրնար թոյլ տալ որ մեր օրինաւոր պահանջները եւ ազգային բաղձանքները սխալ մեկնուին եւ սրբագրութեան կարօտ նրկատուին : Եւ այս սրբագրութեան եւ բարեփոխման համար ալ՝ դաւաճանութիւնը ակներեւ դահլիճի մը անդամներուն ապօրինի փաստարկութիւնները իբր հիմ ծառայեն : Մենք վերջին կացութիւնը պարզելով ազգին մէկին պահանջները ներկայացուցինք : Չեմ գիտեր որ կրկնել հա՞րկ է : Եթէ դուք գոհացում տրուելիք սոյն ազգային բաղձանքներուն դէմ տակաւին Փէրիտ փաշայի դահլիճին նախարարական աթոռները աղտոտելուն շարունակման համար միջնորդել կ'ուզէք, ձեր այս ջանքերը ապարդիւն մնալէ զատ՝ կը վախնամ որ ձեր մասին ունեցած շատ հին եղբայրական զգացումներս ալ պիտի տկարանան :

«Հիմա եթէ վստահ էք, որ Փէրիտ փաշա առանց վայրկեան մը իսկ կորսնցնելու իր աթոռը պատուաւոր մէկու մը պիտի թողու, լուծուելիք ո՛չ մէկ կէտ կը մնայ : Հակառակ պարագային՝ ձեր միջնորդութիւնը Ձեզի ցաւ եւ յոգնութիւն պատճառելէ զատ ոչ մէկ բանի պիտի ծառայէ : Փէրիտ փաշա եթէ իր դիրքը պահել շարունակէ, ինքզինքը ցաւալի վերջաւորութեան մը պիտի ենթարկէ : Մեր վերջին եւ կտրուկ խօսքը այս է : Մեր նպատակը այս անշեղ ճշմարտութիւնը թագաւորին հասկցնել է : Եթէ այս պաշտօնը դուք ստանձնէք, հայրենիքին եւ ազգին Ձեզմէ ակնկալած կրօնական եւ ազգային պարտականութեան ամենամեծը կատարած կ'ըլլաք :

Ապտիւլ Քէրիմ .— Մեր բուն նպատակը խօսքը երկարել չէ, հայրենիքի սիրոյն կատարած սոյն միջնորդութիւնս, բնական է Աստուծոյ եւ ազգին կողմէ կը զնահատ-

ուի, եւ խնդրին իրական տէրը եղող Ամենակարողը ազգին եւ հայրենիքին բարօրութիւնը ապահովելիք միջոցները կը շնորհէ. Բարձրեալը դժուարութիւնները կը լուծէ չէ, ա- նուշս:

Մուսթաֆա Քէմալ. — Մեր եւ Ձեզի նման անձնուէր հայրենասէրներուն ջանքերուն նպատակը ի՞նչ պէտք է ըլ- լայ: Պաշտօնավարութեան ամէն վայրկեանին ազգին հա- մար, մեր ճակատադրին համար նոր փորձանքներու պատ- ճառներ ստեղծելէ զատ ծառայութիւն չակնկալուող Ֆէ- րիտ փաշայի դահլիճին եւ ազգին միջեւ հաշտութիւն գո- յացնելու պարապ աշխատանքներո՞վ զբաղիլ, թէ ոչ անմի- ջապէս, ապօրինի կառավարութեան տեղ՝ հայրենիքին եւ ազգին պահանջներուն գոհացում տալիք իշխանութեան մը դործի հրաւիրուելուն պէտքը թազաւորին հազորդելու մի- ջոցները փնտռել: Եթէ այս երկու կէտերէն ռեւէ մէկուն համար այս կամ ոչ պատասխանէք, Աստուծոյ եւ ազգին կողմէ մեծապէս գնահատուելիք Ձեր ծառայութեան մեզի վերաբերեալ մասը վերջացուցած կ'ըլլաք:

Ապտիւլ Քէրիմ. — Թազաւորական գահը օրինաւոր կառավարութեան մը մէջ ազգին բոլոր անհատներուն հա- մար մատչելի է: Ինծի ըսին, որ Անատոլուի բոլոր դէպքե- րը եւ պահանջները թազաւորին ներկայացուած են: Ուրեմն թազաւորը բոլոր անցուդարձերուն տեղեակ է: Բարձրեալն Աստուած պատճառներ ստեղծելով այս դժուար հանգոյցը պիտի լուծէ: Բնական է որ Աստուած միշտ բարին կը կամի- անոր ձեռքը ամենաբարձր է: Մեր ապագան անոր օգնու- թեամբ փայլուն պիտի ըլլայ, սիրելիս:

Մուսթաֆա Քէմալ. — Թազաւորական գահուն ամե- նուս համար մատչելի ըլլալու գաղափարին հետեւանքն էր, որ ազգին փափաքները ներկայացնելէ չի դադրեցանք: Մի- այն Ձեզ մեծ սխալէ մը փրկելու համար ըսեմ, որ տակա- ւին ազգը չէ համոզուած որ Անատոլուի բոլոր անցուդար- ձերը եւ մեր խնդրանքները թազաւորին ներկայացուած ըլ- լան, որովհետեւ ազգը վստահ է, որ թազաւորը դաւաճա- նութիւննին փաստուած այս քանի մը անձերը ռեւէ ժամանակ ազգէն վեր չի դասեր. կը սպասենք որ Ամենա- կարողը մօտ ատենէն մեր խեղճ ազգին փրկութիւն եւ Պո- լիս գտնուող քանի մը անհեռատես մարդոց գործերուն վերջ տայ: Ազնիւ ազգը այսպէս կը յուսայ. ներեցէք որ կրկնեմ, թէ այս կամ ոչ պատասխանելու մեր խնդրանքը անպատասխանի մնայ: Այո՛, բարեկամս, Աստուծոյ ձեռքը ամենազօր է, սակայն դժուարութիւններ լուծել փափա-

քողներն ալ որոշ նպատակակէտ մը ունենալու են: Ազգը Աստուծոյ կամքը կատարելու պատրաստ է: Եւ մենք ալ Ձեզի պէս վստահ ենք որ մեր ապագան փայլուն պիտի ըլլայ. աշխատութիւնը մեզմէ՝ իսկ յաջողութիւնը Աստուծմէ է:

Ապտիւլ Քէրիմ.— Վերջին երկու խօսք, ազգին պահանջներուն հիմերը գնահատելով կ'ազօթեմ որ Տէրը յաջողութիւն պարգեւէ:

«Առ այժմ մնաք բարով, կրկին պիտի տեսնուինք:

Մուսթաֆա Քէմալ.— Ձեզի վերջին խօսք մ'ալ յիշեմ. ազգը զօրաւոր, ըմբռնող եւ իր կամքին մէջ անյողդող է: Ազգային Շարժումը իր ուժգին թափը ստացած է: Ժամանակը եկած է, որ նորին Վեհափառութիւնը իր որոշումը տայ եւ խնդիրը լուծէ»:

Ապտիւլ Քէրիմ եւ Մուսթաֆա Քէմալ փաշաներու միջեւ կատարուած այս խօսակցութիւնը նոյնութեամբ Սուլթան Վահիտետինի տեղեկացուած եւ երրորդ օրը թագաւորը Տամատ Ֆէրիտ փաշային հասկցուցած է՝ որ իր դահլիճին հրատարիլը անհրաժեշտ է: Ասոր վրայ Ֆէրիտ փաշա հրատարած եւ նոր դահլիճի կազմութիւնը ծերակուտական Ալի Րիզա փաշային յանձնուած էր:

\* \* \*

Մուսթաֆա Քէմալ եւ Ապտիւլ Քէրիմ փաշաներու միջեւ կատարուած եւ նոյնութեամբ վերեւ արձանագրուած հեռագրային խօսակցութեան վրայ՝ Սուլթան Վահիտետինի Խան, կը կարծէր՝ որ Անատոլուի մէջ ծայր տուած եւ իշխանութիւնը նորէն գրաւելու նպատակ ունեցող Իթթիհատ եւ Թէրազգրի ապստամբութիւնը դահլիճին փոփոխութեամբ կասեցնել կարելի պիտի ըլլայ: Ան նոր դահլիճը կազմելու համար՝ 3 Հոկտ. 1919ին, ծերակուտական Ալի Րիզա փաշային պաշտօն յանձնած էր:

Պոլսոյ մէջ կատարուած այս փոփոխութիւնը հեռագրական պաշտօնեաներու կողմէ անմիջապէս Մուսթաֆա Քէմալ փաշային տեղեկացուած էր:

Մուսթաֆա Քէմալ փաշա սոյն լուրը Պոլսոյ կառավարութեան դէմ յաղթանակ նկատելով՝ Ալի Րիզա փաշային ուղղած եւ պատճէնը ստորեւ արձանագրուած հեռագրով՝ զայն շփոթեցնել ուղած էր:

Ալի Րիզա փաշա իր աթուրը գրաւելով տակաւին պաշտօնեաներուն շնորհաւորութիւնները ընդունելով գրադած պահուն՝ Մուսթաֆա Քէմալ փաշային ուղղած հեռագիրը իրեն յանձնուած էր:



## Հեռագրին պատճենը

«Ազգը մինչեւ այսօր իշխանութեան գլուխ անցնողներուն հակա-սահմանադրական եւ Ազգ. բաղձանքներուն հակառակ ընթացքէն ցուեցաւ եւ ասոր համար իր օրինաւոր իրաւունքները ճանչցնել տալու եւ իր ճակատագիրը կարող եւ վստահելի ձեռքերու յանձնելու որոշումը տուաւ եւ հարկ եղած միջոցներու դիմեց եւ կանոնաւոր կազմակերպութեան ենթակայ Ազգ. Բանակը ազգին կամքը պարտադրելու կարողութիւնը ցոյց տուաւ:

Ազգը, թագաւորին վստահութիւնը վայելող Ձեր Վրսեմութիւնը եւ յարգելի ընկերները գթուարին կացութեան մը մատնել չի փափաքիր. ընդհակառակը՝ անկեղծօրէն թիկունք կենալու պատրաստ է: Միայն թէ, ներկայ դահլիճին մէջ Ճէրիտ փաշային դահլիճին անդամակցող նախարարներուն ներկայութեան մասին Ձեր եւ մեր կարծիքին միջեւ եղած տարբերութիւնը հասկնալ, ազգին վրստահութիւնը չգոյացած՝ առնուած առաջին բարեփոխութեան մասին ցարդ թերի է եւ գոհացուցիչ չէ՛: Հետեւաբար որոշ կերպով գիտնալ կ'ուզենք, թէ հետեւեալ կէտերը ըստ Ձեզի ընդունելի՞ են թէ ոչ:

Ա.— Եթէ նոր դահլիճը կարնոյ եւ Սերաստիոյ Համագումարներուն որոշումները ընդունի, ազգային բանակն ալ իրեն թիկունք պիտի կանգնի:

Բ.— Նոր դահլիճը՝ մինչեւ Ազգ. ժողովին բացումը եւ գործկրուն հսկելը, ազգին ճակատագրին հետ կապ ունեցող սեւէ յանձնառութիւն պիտի չվերցնէ:

Գ.— Հաշտութեան ժողովին համար նշանակուելիք պատուիրակները, ազգին բաղձանքները իրապէս ըմբռնող եւ վստահութիւնը վայելող կարող անձերէն պէտք է ընտրուին»:

Մուսթաֆա Բէմալ փաշա սոյն հեռագրով ո՛չ թէ Պոլսոյ կառավարութեան ենթարկուել, ալ զայն իրեն ենթարկել կ'ուզէր:

Իսկ Ալի Րիզա փաշա, իր դիրքին եւ արժանապատւութեան վայել լրջութենէն չհրաժարելով՝ սոյն հեռագրին միայն հետեւեալ օր կարճ պատասխան մը տուած էր.

### Պատասխանի պատճենը

«Դահլիճը՝ կարնոյ եւ Սերաստիոյ Համագումարներուն տուած որոշումներուն եւ ճշգրտ կէտերուն մասին ծանօթ չէ. ուստի առ ի քննութիւն առաջին առթիւ սոյն Համագումարներուն որոշումներուն տեղեկացուիլը կը խնդրուի»:

Մուսթաֆա Քէմալ փաշա, միեւնոյն օրը Ազգ. Բանակին ենթակայ բոլոր զօրաբանակներու հրամանատարներուն, կուսակալներուն եւ կառավարիչներուն շրջաբերական մը զրկելով ըսած էր.—

«Մինչեւ Կեդր. Կառավարութեան եւ Ազգին միջեւ կատարեալ համաձայնութիւն գոյանալուն շրջաբերականով տեղեկացուիլը, ըստ առաջնոյն, Պոլսոյ կառավարութեան հետ հաղորդակցութիւնը խզուած պէտք է մնայ»:

Բոլոր իրեն ենթակայ զօրաբանակներու հրամանատարներուն եւ Ազգ. Շարժման համակիր կուսակալներուն, Քէմալ, Պատերազմական եւ Ներքին Գործոց Նախարարները վարկարեկելու նպատակով՝ թելադրած էր հետեւեալ բովանդակութեամբ հեռագիր զրկել առ որ անկ է:

#### Պատճէն

«Ներքին Նախարարին դաւաճանութեան գործիք դառնալով ժողովուրդը գործնականապէս զինող եւ զիրար սպաննելու մզող Գոնիայի կուսակալ՝ Ճէմալ, Պարբերդի կուսակալ՝ Ալի Ղալիպ, Մալաթիոյ կառավարիչ՝ Պալիլ Բամի պէյերուն ձերբակալումը եւ զինուորական Ատեանին յանձնումը եւ Տրապիզոնի կուսակալ Ղալիպ Գասթէմունիի, նախորդ կուսակալներէն՝ Իպրահիմ եւ Ալի Րիզա պէյերուն եւ Անգարայի կուսակալ Մուհիտտին փաշային պաշտօնէ հեռացումը, իսկ Ազգային Իրաւանց եւ Ազգ. Շարժման համակիր գանուելնուն համար պաշտօնանկ եղած Սերաստիոյ կուսակալ Րէշիտ փաշային իր նախկին պաշտօնին, Պիթլիսի նախկին կուսակալ Մազհար Մուճիաի եւ Վանայ նախկին կուսակալ Հայտար պէյերուն անմիջապէս նոր նահանգապետ նշանակումը կը խնդրուի»:

Իսկ Վարչապետին ուղղելու համար ալ հետեւեալ պատճէնը թելադրած էր.

#### Պատճէն

«Իսլամ ժողովուրդը զիրար սպաննելու մզող եւ բանակը կազմալուծելով հայրենիքը անպաշտպան ձգել հրամայող եւ բանակին գաղտնիքներն ու ծածկագիրները գողցող եւ հրապարակող եւ Սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն հետապնդումէ զերծ մասնաւոր թղթակցութիւնները արգիլող նախկին նախարարներէն՝ Ալի Քէմալ պէյին, Սուլէյման Շէֆիզ փաշային, Ներքին Նախարար Ատիլ պէյին, Երեսփոխանական Ժողովին բացումին Բարձրագոյն Ատեանին յանձնելու համար՝ ռեւէ փախուստի առիթ չտրուիլը եւ հեռագրական ընդհ. Տնօրէն Րէֆիզ

Խալիտ պէյին ալ նոյն պատճառներով անմիջապէս ձերբակալու՞մը եւ պատկան դատարանին յանձնու՞մը յանուն օրէնքի կը խնդրենք»:

Պատերազմական Նախարարութեան նշանակուող ձեւալ փաշային ալ, ըստ օրէնքի բանակին ուղղելիք պաշտօնական հաղորդագրութեան համար հետեւեալ պատասխանը խմբագրուած եւ պատճէնը 3, 20, 12, 15, 13րդ զօրաբանակներու հրամանատարներուն եւ նոյնպէս 20րդ զօրաբաժնի հրամանատար Ֆուատ փաշային եւ Գոնիա գտնուող Բաֆէթ պէյին ղրկուած էր:

Տրուելիք պատասխանին պատճէնը

«Ձեր վսեմութեան Ազգ. Շարժման հանդէպ սկիզբէն ունեցած համակրութեան տեղեակ ենք: Ձեր Պատերազմական Նախարարութեան պաշտօնին նշանակու՞մը գոհունակութեամբ ընդունուած է. ձեր յաջողութեան համար բոլոր բանակը եւ Ազգ. Ուժերը թիկունք պիտի կանգնին, սակայն այդ յաջողութեան համար հետեւեալ խնդիրներուն շուտափոյթ կարգադրութիւնը կը խնդրենք՝

Ա.— Ճէւատ փաշային եւ կամ նախկին Ա. բանակի քրննիչ Ֆիվզի փաշային՝ ընդհանուր սպայակոյտի նախագահութիւն տալ:

Բ.— Կալաթացի գնդապետ Շէվքէթ պէյին եւ կամ Եուսուֆ Իզզէթ փաշային Պոլիս գտնուող զօրաբանակի հրամանատարութիւն, իսկ Պոլսոյ կառավարիչ Եուսուֆ Իզզէթ փաշային նորէն Պոլսոյ կառավարչութիւն եւ Կալաթացի Շէվքէթ պէյին 25րդ զօրաբանակի հրամանատարութիւնը տալ:

Գ.— Գնդապետ Իսմէթ պէյին՝ Պատերազմական Նախարարութեան խորհրդականի պաշտօնը:

Դ.— Չօրաբաժնի հրամանատար դեր-գնդապետ Քէմալ պէյին ոստիկանական ընդհ. տնօրէնութեան նշանակու՞մը:

Ե.— Կրկին չէզոքացու՞մը՝ նախապէս հանդստեան կոչուած պաշտօնեաներուն՝ որոնց պաշտօնի կոչուիլը՝ բանակին վրայ գէշ տպաւորութիւն ձգած եւ պատերազմական նախարարութիւնը անկանոն եւ անել վիճակի մը մատնած են, եւ որոնք առանց Երեսփոխանական Ժողովի հաւանութեան պաշտօնի կոչուած եւ մասնաւոր քաղաքական նպատակներով գործի հրաւիրուած են: Կարեւոր բարձր պաշտօններուն՝ վստահելի անձերու յանձնու՞մը անհրաժեշտ է:

Զ.— Գ. րդ զօրաբանակի նախկին հրամանատար գըն-

դապետ Բաֆէթ պէյ առանց պատճառի հրաժարեցուած ըլլալուն, այս որոշման սրբազրումը եւ յիշեալին Գոնիա գտնուող 12րդ զօրաբանակի հրամանատարութեան նշանակումը, իսկ Ֆուատ փաշային մասին տրուած որոշումը բարեփոխելով՝ կրկին 20րդ զօրաբանակի հրամանատարութեան պաշտօնին վրայ մնալը կարեւոր է:

Է.— Ալի Ֆուատ փաշային տեղ նշանակուող Ահմէտ Համաթի եւ 12րդ զօրաբանակի հրամանատարութեան նշանակուող Սաիտ փաշաներուն անմիջապէս ետ կանչուելը յարմար է:

Ը.— Առաջին առթիւ քննիչութեան պաշտօններուն վերստեղծումը եւ Արեւելեան Անատոլու գտնուող զօրաբանակներուն (13րդ զօրաբանակն ալ մէջը) քննիչի պաշտօնը Քեազիմ Գարապէքիր փաշային, եւ Արեւմտեան Անատոլու գտնուող զօրաբանակներուն (Պոլիս եւ Էտիրնէն ալ մէջն ունենալով), քննիչի պաշտօնը Ալի Ֆուատ փաշային յանձնել եւ առ այժմ երկու քննիչով բաւականանալ յարմար տեսած ենք»:

\* \* \*

Իրարու յաջորդող նման պահանջներուն եւ միջամտութիւններուն վրայ վարչապետ Ալի Բիզա փաշա, Սեբաստիա գտնուող Ներկայացուցչական Ժողովին հետեւեալ հեռագիրը հարկադրուած էր ղրկել.—

«Նախագահութեանս տակ կազմուած Նախարարաց Խորհուրդը, ազգին բաղձանքներուն համաձայն, հայրենիքի եւ ժողովուրդի բարօրութիւնը եւ անկախութիւնը ապահովելու համար կորովի կամքով աշխատելու մէջ՝ միաձայն եւ միակամ է: Անկասկած որ Օսմանեան կայսրութեան ամբողջականութեան ապահովութիւնը, Ազգ. անկախութեան պաշտպանութիւնը եւ Արքայական Գահուն յարատեւութիւնն ու անձեռնմխելիութիւնը ըստ սահմանադրութեան, ամբողջ ազգին ուժով եւ կամքով, կարելի է: Ներկայ կառավարութեան ալ հիմնական նպատակն է՝ զինադադարի ժամանակ մեր սահմաններուն մէջ մնացող Օսմանեան հողը (զինադադարի սկզբունքը եղող Ուիլսոնեան ծրագրի համաձայն) ուղղակի արքայական կառավարութեան իշխանութեան ներքեւ պահել եւ մեր սահմաններուն մէջ մեծամասնութեամբ իսլամներէ բնակուող հողին ամբողջականութիւնը բաժանումէ զերծ պահելով՝ այս հողերուն վրայ մեր ունեցած պատմական, ազգագրական, կրօնական եւ աշխարհագրական իրաւունքներուն պաշտպանութեան համար, մինչեւ Ազգ. Ժողովին բացումը, ազգին

ճակատագրին հետ կապ ունեցող ոեւէ ինքնագլուխ յանձնառութիւն չկատարել եւ Հաշտութեան Ժողովին ղրկուելիք պատուիրակները, ազգին բաղձանքները ըմբռնող, վստահելի եւ կարող անձերէ ընտրել:

«Մեր երկրի մէջ, ըստ Սահմանադրութեան, իշխանութիւնը ազգին կը պատկանի. ուստի իր պարտականութեան գիտակից ներկայ կառավարութիւնը, առանց ազգին որոշման պիտի չկրնայ հայրենիքին ճակատագրին հետ կապ ունեցող ոեւէ խնդրոյ մասին որոշում տալ՝ հետեւաբար ընտրութեանց օր առաջ կատարուելուն համար հարկ եղած միջոցները ձեռք առած եւ Ազգ. Ժողովին շուտով գումարման համար ալ հարկ եղած դիւրութիւնները ընծայել կը ջանայ: Սակայն ներկայ կառավարութեան ուղեգիծը, օրէնքի տրամադրութիւնները յարգելով՝ զայն չէզոքացնող ազդակները բառնալ ըլլալուն, սոյն ապօրինի եւ անբնական վիճակին շարունակութիւնը Օսմանեան տէրութեան Կեդրոնին եւ Անատոլուին իրարմէ բաժանումը յառաջացնելով՝ դժբախտութիւններ պիտի ծնին եւ Աստուած հեռու ընէ մայրաքաղաքը վտանգի տակ, իսկ հետեւանքը՝ երկիրը գրաւման տակ պիտի առնուի եւ հողային ամբողջականութիւնը պիտի կորսնցնէ. ուստի ներկայ կառավարութիւնը կը պահանջէ, որ ձեր գրաւած պաշտօնատեղիները պարպէք եւ կառավարական գործերուն յաջողութեան արգելքները բառնաք եւ անոր հեղինակութիւնը բարձրացնէք, օտարներուն հետ դիւանագիտական յարաբերութիւն չմշակէք եւ ընտրութեանց միջոցին ժողովուրդին ազատութիւնը չբռնաբարէք»:

\* \* \*

Մուսթաֆա Բէմալ փաշա, Վարչապետ Ալի Րիզա փաշային խիստ պատասխանէն նեղուած էր: Ծ Նոկտեմբերին Անատոլուի եւ Բուլկերի «Իրաւանց Պաշտպան Միութեանց Ներկայացուցչական Ժողովին» անունով տուած պատասխանին կարեւոր կէտերը կ'արձանագրենք.—

### Պատասխանին պատճենը

«Ապօրէն եւ անբնական վիճակին ստեղծիչը եւ պատճառը Տէրիս փաշայի դահլիճն էր: Եթէ դուք անոր կողմէ ստեղծուած կացութիւնը բառնալու համար միջոցներ ձեռք առնէք, դրութիւնը ինքնին կը բարելաւուի:

«Մեր միութեան ներկայ դահլիճին կարենալ թիկունք կանգնելուն համար, պայման է, որ նախ կառավարութիւնը մեր Ազգ. Կազմակերպութիւն ըլլալը յայտարարէ, հա-

կասակ պարագային փոխադարձ վտահու թեան եւ անկեղծութեան գոյացումը կասկածելի պիտի մնայ եւ իրարու հակառակ գործերը պիտի շարունակուին:

«Սահմանադրութիւնը որոշ կերպով կը տրամադրէ, որ Երեսփոխանական Ժողովը իր լուծումէն 4 ամիս ետք պէտք է վերընտրուի եւ վերաբացուի. սակայն ցարդ ընտրական ցանկերը չեն պատրաստուած: Այս թերացումը Ծէֆիտ փաշայի դահլիճին Սահմանադրութեան տուած մէկ հարուածը կը նկատենք: Պատժական օրէնքի մասնաւոր տրամադրութեան համաձայն՝ այս բնթացքը ոճիր կը նրկատուի. ուստի Ազգ. գերիշխանութիւնը ճանչցող եւ օրէնքի տրամադրութիւնները գործադրելու ղեկավար ընդունող ամէն օրինաւոր կառավարութեան առաջին նուիրական պարտականութիւնն է, ասոնց մասին օրէնքի տրամադրութիւնները գործադրել:

«Հետեւաբար կը խնդրենք որ հետեւեալ առաջարկները ընդունիք.

Ա. — Պաշտօնական գրութեամբ մը յայտարարէք, թէ երկրին մէջ կատարեալ ապահովութիւն կը տիրէ, թէ Ազգ. Բաղձանքները կատարելապէս օրինական են եւ ցոյց տաք, թէ կառավարութիւնն ալ սոյն Ազգ. միութեան կը յարի:

Բ. — Անկեալ կառավարութեան պաւադրութիւններուն գործիք եղող կարգ մը բարձրաստիճան պաշտօնեաները պատկան դատարաններուն յանձնէք եւ Ազգ. Շարժումին արգելք հանդիսացող կարգ մը նախկին կուսակալներուն ալ՝ յետ այսու պետական պաշտօններու չհրաւիրուելուն համար հարկ եղածը կարգադրէք եւ Ազգ. Շարժման ծառայելուն համար պաշտօնանկ եղածներն ալ իրենց պաշտօնին վերադարձնէք:

Գ. — Նախապէս հանգստեան կոչուածներուն կրկին վերադարձուիլը՝ Երեսփոխանական Ժողովին հաւանութեան չենթարկուած, անմարտելի է: Միայն քաղաքական նպատակով դիրքի հասած պաշտօնեաներու նորէն հանգրստեան վերադարձուցէք եւ զինուորական կարեւոր դիրքերը՝ կարող ձեռքերու յանձնեցէք:

Դ. — Յանուն օրէնքի եւ Ազգ. նուիրական իրաւունքի կը պահանջենք, որ Երեսփ. Ժողովին վերաբացումին բարձրագոյն Ատեանին յանձնուելու համար նախկին նախարարներէն՝ Ալի Քէմալ եւ Ատիլ պէյերուն եւ Սիւլէյման Շէֆիզ փաշային փախուստին տեղի չտաք եւ Փոստ-Հեռագրական ընդհ. տնօրէն Բէֆիզ Սալիլ պէյը անմիջապէս ձերբակալելով պատկան դատարանին յանձնէք:

Ե.— Ազգ. շարժման մասնակցող եւ կամ համակրողներու հանդէպ սկսուած դատական հետապնդումներուն վերջ տալ:

Զ.— Մամուլը օտար գրաքննութենէ ազատեցէք: Արդ, բոլոր նահանգներէ եւ շրջաններէ ստացուած որոշումներու վրայ յենլով, որոշ կերպով կը յայտարարենք, որ մինչեւ վերոյիշեալ առաջարկներուն մասին ազգին վրաստահութիւն ներշնչող պատասխանի մը տրուիլը, Ազգ. նըպատակներուն իրագործման համար ամէն գծով աշխատանք տանիլ ստիպուած եմ»:

\* \* \*

Ալի Րիզա փաշա սոյն հեռագրին չէր պատասխանած եւ ժամանակի ու կացութեան փափկութիւնը նկատի առնելով, մեղմ միջոցներու դիմել նախընտրած էր: Նոյնիսկ՝ Սերաստիա գտնուող եւ իրենք իրենց Անատոլուի եւ Բուսթիլի Իրաւանց Պաշտպան Միութեան Ներկայացուցչական ժողով մակդիրը տուող անձերու հետ: Ան միասնաբար գործակցելու հնարաւորութիւններու եւ պայմաններու շուրջ խորհրդակցելու համար ալ Ծովային նախարար Սալէհ փաշայի նախագահութեան տակ պատուիրակութիւն մը մինչեւ Ամասիա ղրկած էր:

Մուսթաֆա Քէմալ փաշա ալ ներկայացուցչական ժողովի կողմէ՝ Պէքիբ Սամին, «Համիտիէ» զրահաւորին հրամանատար Րէուֆը եւ գնդապետ Գարա Վասըֆ պէյերը միասին առնելով Ամասիա եկած էր:

Սոյն պատուիրակութիւնները Ամասիոյ մէջ երկու օր խորհրդակցելէ ետք հետեւեալ կէտերու շուրջ համաձայնած էին.—

Ա.— Բ. Դուռը անմիջապէս Երեսփոխանական ժողովի ընտրութեանց պիտի ձեռնարկէ:

Բ.— Նշանակուելիք կուսակալ, կառավարիչ, տեղակալ եւ ասոնց նման բարձր պաշտօնեաները Ներկայացուցչական ժողովին հակակիբ չեզոզներէն պիտի ընտրուի եւ նախքան ասոնց նշանակումը անունները Իրաւանց Պաշտպան Միութեան ներկայացուցչական ժողովին պիտի տեղեկացուի եւ անոք հաւանութիւնը պիտի առնուի:

Այս կէտերու շուրջ Բ. Դուռը եւ Սերաստիա գտնուող Ներկայացուցչական ժողովը համաձայնած, յարաբերութիւնները բարելաւուած եւ Ազգ. Շարժման հակառակ գրտնուելու ամբաստանութեամբ իրենց պաշտօնէն հեռացուելով Սերաստիա արգելափակուած Տրապիզոնի Կուսակալ

Ի պրահիմ եւ Ալի Րիզա պէյերուն եւ Անգարայի կուսակալ Մուհիտտին փաշային, պաշտօն չստանձնելու պայմանաւ, Պոլիս վերադառնալը թոյլատրուած էր:

\* \* \*

Սալէհ փաշայի պատուիրակութեան եւ Մուսթաֆա Քէմալ փաշայի եւ անոր պատուիրակութեան միջեւ Ամասիոյ մէջ բանակցութիւն կատարուած միջոցին՝ Սերաստիոյ երեւելիներէն յանձնախումբ մը՝ Մուսթաֆա Քէմալ փաշային գործունէութեան դէմ Սուլթան Վահիտտին Սանին բողոքելով հետեւեալ հեռագիրները ուղղած էր.—

#### Հեռագրի Պատճէն

«Պոլսոյ Կեդրոնական Տնօրէնութեան,

«Ընդհանուրի կողմէն հայրենիքին եւ ազգին փրկութեան համար ներկայացուած հեռագիրները արգելողը՝ Տէրութեան եւ կրօնին թշնամին է եւ արիւն թափուելուն պատճառ պիտի ըլլայ: Թագաւորին հետեւիլ ուխտած ենք. պատասխանի կը սպասենք»:

#### Հեռագրի Պատճէն

«Կայսերական դիւանի պետին.

«Զեր միջոցաւ ներկայացուած մեր խնդրանքին պատասխանը հայրենիքի եւ ազգին փրկութեան սիրոյն հեռագրի վրայ կը սպասենք»:

#### Հեռագրի Պատճէն

«Մեր քաղաքին մէջ Անատոլուի եւ Րումէլիի Իրաւանց Պաշտպան Միութեան անունով գումարուած Համաժողովի նախագահը Մուսթաֆա Քէմալ փաշա, Չեր վստահութիւնը վայելող գրութիւնը ի ձեռին ունենալը տարածայնելով՝ Սերաստիոյ մէջ անիշխանութիւն ստեղծել ուղող աննշան կուսակցութեան մը հետ համաձայնելով, ինքզինքնին ազգին ներկայացուցիչը ցոյց կու տան: Մինչդեռ մեր սիրելի թագաւորին ամէն կերպով հնազանդիլ՝ մեր կրօնական պարտականութիւնն է: Տեղեկացանք որ Մովային նախարար Սալէհ փաշա եւ առաջին թիկնապահ Հաճի պէյ Ամասիա ղրկուած են: Ժողովուրդին մօտ առաջ եկած գրգռութիւնը մեղմելու համար՝ գիտնականներէ, երեւելիներէ եւ վաճառականներէ 200է աւելի ստորագրութեամբ ղրկուած մեր հրաւիրագիր-հեռագրին պատասխան չկըրցանք ստանալ: Հանրային կարծիքին նպաստաւոր ըլլալը հասկնալու համար, անոնց Սերաստիա ղրկուելը ջերմապէս կը խնդրենք»:



### Հեռագրի Պատճէն

«Ժամանակէ մը ասդին մեր քաղաքին մէջ տեղի ունեցող անցուղարձերուն եւ իրական կացութեան տեղեկանալու համար հայրենիքին եւ ազգին սիրոյն, կը խնդրենք որ Սերաստիա գալ հաճիք: Նոյնպէս կը խնդրենք որ հեռագրի վրայ գտնուիլ հաճիք:

Էլիաս Զատէ      Զարացի՝      Սերաստացի՝ Շէմսէտտին  
Ահմէտ Քէմալ      Ճէլալ      գերդաստանէն՝  
   Բէնէպ Քեամիլ»

### Հեռագրի Պատճէն

«Ամասիա, Մուսթաֆա Քէմալ փաշային.

«Մինչեւ որ թագաւորին եւ կառավարութեան նպատակը Մալէհ փաշային կամ վստահելի բերնէ մը չլսենք, տարակարծութիւնները լուծուած չեն, կրնար համարուիլ. հետեւաբար երկու եզրերէն մին ընտրելու պարտաւոր էք:

Էլիաս Զատէ      Զարացի՝      Շէմսէտտին գերդաստանէն՝  
Ահմէտ Քէմալ      Ճէլալ      Բէնէպ Քեամիլ

Սերաստիա այս կացութեան մեկնութիւնը Մուսթաֆա Քէմալ փաշայի բերնէն լսենք.—

Մուսթաֆա Քէմալ փաշա այս դէպքը հետեւեալ կերպով կը մեկնէ. «Մենք հայրենիքը առաջնորդելու եւ լուսաւորելու համար կ'աշխատինք, սակայն մեր թշնամիները մեզի դէմ ամէն կողմ, նոյնիսկ մեր իշխանութեան տակ գտնուող Սերաստիոյ մէջ անգամ իրենց դաւերը գործադրելու ստորին միջոցներ կը խորհին:

«Բոլոր մեր զգուշութիւններուն եւ ազդարարութիւններուն հակառակ եւ մեր հնազանդութիւն յայտնելովը հանդերձ, Սերաստիա գտնուող անճնաւորութիւններուն ելոյթը ամէն կողմ կատարուող պետական կողմնակցութիւններուն օրինակ մըն է: 19 Հոկտեմբերին Սերաստիա գտնուող մեր ընկերները՝ Ներկայացուցչական Ժողովի անունով ինծի հետեւեալը կը հեռագրէին.—

### Հեռագրի Պատճէն

«Ամասիա, Մուսթաֆա Քէմալ փաշային.

«Շէյխ Բէնէպի եւ ընկերներուն Ձեր վստմութեան ուղղեալ եւ հիմա հեռագրատան բերած հեռագիրներուն պատճէնները կը ներփակենք»:

Սերաստիոյ հեռագրատան տնօրէնն ալ միեւնոյն օրը հետեւեալը կը հեռագրէ.—

«Մուսթաֆա Քէմալ փաշային.

«Սերաստացի Շէմսէտտին գերդաստանին կողմէ՝ Րէճիպ, Էլիաս Զատէ, Ահմէտ Քէմալ եւ Զարացի Ճէլալ ստորագրութեամբ գրուած հեռագիրները կը ներկայացընեմ:

«Ամէն մարդ օրէնքի սահմանին մէջ հեռագրելու իրաւունք ունի, սակայն հեռագրի սենեակը մտնելը արգելուած ըլլալով՝ պաշտօնեաներուն սպառնալը եւ Պետական հեղինակութիւնը անսաստելը՝ օրէնքը անարգել ըսել է:

«Խնդիրը կուսակալութեան տեղեկացուցի, երկիրը բարեկարգելու աշխատող Ձեր վսեմութեան ալ կը ներկայացնեմ:

«Հաճեցէք անկեղծ յարգանքներս ընդունիլ:

Տնօրէն՝ Լուսթի»

Այս գէպը պատմած միջոցին Մուսթաֆա Քէմալ փաշա կ'ըսէ. —

«Ամբողջ ազգին միութենէն եւ Աղզ. Կազմակերպութեան երկրին ամէն անկիւնը տարածուած ըլլալէն ճառող եւ ազգին հաւաքական բաղձանքին գէմ դիրք բռնող պատուիրակութեան մը նախագահին մասին, նոր Գահլիճի ներկայացուցչին հետ բազակցութեան սկսուած պահուն եւ այս նպատակով Սերաստիայէն մեկնումին վաղորդայնին, ամբողջ Սերաստիոյ ժողովուրդին անունով ըմբոստութեան գոյն ունեցող սոյն հեռագիրներուն պաշտօնեաներուն ըսպառնալով գրուելը՝ բնականաբար նկատելի կէտ մըն է:

«Երբ նման պատուիրակութեան մը մասին, նոյնիսկ իր իշխանութեան տակ գտնուող Սերաստիոյ ժողովուրդին կողմէ բողոք կը յայանուի, բոլոր աղգին միեւնոյն զգացում եւ նպատակ չունենալը փաստել գժուար է. ինչո՞ւ չբարձուի որ Ներկայացուցչական ժողովի մը նախագահին յենած ուժը խախտու է»:

Մուսթաֆա Քէմալ փաշա այս գէպին վրայ Սերաստիոյ հեռագրատունը գտնուող ներկայացուցչական ժողովի անգամներուն հարցուցած է. —

Ա. — Շէյխ Րէճէպ, Ահմէտ Քէմալ եւ Ճէլալ ստորագրութեամբ կայսերական դիւանատան ուղղուած հեռագիրները տեսա՞ք:

Բ. — Հեռագրատան մէջ պահակ սպայ չկա՞յ:

Գ. — Ձեր ամբողջին ներկայութեան հակառակ նման համարձակութիւն մը ինչպէ՞ս կարելի կ'ըլլայ:

Սոյն հարցումներէն վերջ հետեւեալը հրամայած է. —

Ա. — Հեռագրատունը կատարեալ հսկողութեան տակ

առնուելու է. սպայի մը հրամանատարութեամբ հոն ջոկատ մը զինուոր դրուելու է. դէպք մը պատահելուն՝ հեռագրատունը դրաւող եւ պաշտօնեաներուն վրայ ճնշում բանեցնելով Ազգ. Ընդհանուր Միութեան մասին մտքերը պղտորող եւ Ընդհանուր Ապահովութիւնը խանգարել փորձող դաւաճանները պէտք է չէզոքացուին. նման դէպքի մը պահուն, երբ օրէնքի սահմանէն դուրս ելլելով զինուորներու վրայ յարձակում գործուի, առանց մտմտալու հարկ է զէնքի դիմել:

\* \* \*

Սալէհ փաշայի պատուիրակութիւնը, Ազգ. բանակին ներկայացուցչի հանգամանքով գնդապետ Գարա Վասրֆ պէյը Ամասիայէն Պոլիս բերած էր:

Ազգ. բանակին այս նոր ներկայացուցչէն զատ՝ Դահլիճին մաս կազմող Պատերազմական նախարար Մերսինցի Ճէմալ փաշան ալ ներկայացուցչական ժողովին պատուիրակի հանգամանքը ունէր:

Ներքին նախարար Տամատ Շէրիֆ փաշա, Սերաստիոյ մէջ ներկայացուցչական ժողով անունով գումարուող այս մարդոց պետական գործերուն բացէն միջամտելուն չէր կրնար հանգուրժել: Սերաստիա գումարուողները նախկին Իթթիհատ եւ Թէրազզրի Ընդհանուր Կեդրոնին պետական գործերուն միջամտելէն շատ աւելի միջամտել սկսած էին եւ այսպէսով պետութեան մէջ պետութիւն մը ստեղծուած էր:

Այս խառնակ կացութեան մէջ կառավարութիւնը իր օրինաւոր ձեւը գտնելու եւ Անատոլուի միջամտութեանց վերջ տալու համար ընտրութիւնը փութացնելու սկսած էր:

Ներքին նախարար Շէրիֆ փաշա այս առթիւ հրատարակած յայտարարութեան մէջ կ'ըսէր:

«— Ներկայ դահլիճը խառն է. Ընդհանուր գիծերու մէջ համախոհ է, ո՛չ մէկ կուսակցութեան կը պատկանի. ո՛չ մէկուն կը միտի. բոլորէն ալ բարոյական աջակցութիւն կը սպասէ: Անոր ջերմ փափաքն է հայրենիքին ճակատագիրը ազգին ներկայացուցիչներուն միջոցաւ վարել»:

Այս պարբերութիւնը Մուսթաֆա Բէմալ փաշան կատղեցուցած էր: Ան կ'ըսէր.—

«Այս պարբերութեան նշանակութիւնը որոշ է. կառավարութիւնը Ազգ. Կազմակերպութեան եւ զայն վարող ներկայացուցչական ժողովին հետ չի քալեր, նոյնիսկ չի նախընտրեր մեզ՝ Ազատական կուսակցութենէն, Անգլիասէրներու միութենէն, Կարմիր Դաշոյնի պատկանողներէն

եւ ուրիշներէն, որչափ աջակցութիւն որ կը սպասէ՝ մենք ալ այնչափ կու տանք», եւ յետոյ կ'աւելցնէ. —

«Մեր ջերմ փափաքն է, որ երկրին ճակատագիրը ազգին ներկայացուցիչներուն միջոցաւ առաջնորդուի»:

«Ասկէ սա կը հետեւցուի թէ՛

«Սերաստիոյ մէջ քանի մը հոգի ժողուած՝ ազգին անունով կը խօսին եւ ազգային գործերով կը զբաղին. եւ ներկայացուցչական ժողով անունը կրելով, իրենց պարտականութենէն դուրս, անոր գործերուն կը խառնուին, ասոնց մի հետեւիք, որովհետեւ ասոնք ազգին ներկայացուցիչները չեն»:

Մուսթաֆա Քէմալ փաշա խօսքը շարունակելով կ'ըսէ. —

«Ալի Րիզա փաշային դահլիճը, ընտրութեան միջոցին իր բռնելիք ընթացքը չէզոք ցոյց տալ կ'ուզէր, սակայն երբ հետաքրքրուիք, այն խօսքին ի՞նչ նպատակով հետապնդելը պիտի հասկնաք: Ալի Րիզա փաշայի դահլիճը Ազգ. կազմակերպութեան հակառակորդներուն հանդէպ, նոյնիսկ ասոնց ազգին բաղձանքները մարելու համար Անատոլուի մէջ դիմելիք տեսակ տեսակ սադրանքներու հանդէպ չէզոք պիտի մնար: Հա՞րկ է ըսել, որ այս չէզոքութենէն որո՞նք պիտի օգտուին: Երբ կառավարութիւնը դիտողի դիրքին մէջ մնայ, անոր տկարութենէն առաջին օգտուողները Անգլիասէրները եւ Ազատականները պիտի ըլլային. Ալի Րիզա փաշայի դահլիճը չէր ընդուներ, որ Ազատականները եւ Անգլիասէրները հայրենիքի թշնամիներն են»:

\* \* \*

Պատերազմական նախարար Մերսինցի Ճէմալ փաշա՝ Պոլսոյ կառավարութեան մօտ Ազգ. բանակի ներկայացուցիչը ըլլալով հանդերձ, Ազգ. Շարժման անունով կատարուած ներքին եւ արտաքին միջամտութիւններուն եւ ծայրայեղութիւններուն չէր կրնար հանդուրժել եւ Նախարարաց Սորհուրդին որոշման հետեւելով՝ ստորեւ արձանագրուած հեռագիրը Մուսթաֆա Քէմալ փաշային դըրկել պարտք համարած էր:

### Հեռագրի պատճենը

«Ինչպէս ծանօթ է, կառավարութիւնը հաշտութեան ժողովին հրաւիրուելու համար պահանջ ներկայացուցած է. հաշտութեան նպաստաւոր կերպով գոյացումը, ղրկուելիք պատուիրակութեան ազգին վստահութիւնը վայելող եւ

ներքին գործերու մէջ հեղինակութիւն ունեցող կառավարութիւն մը ներկայացնելով կարելի կ'ըլլայ: Օտար ներկայացուցիչները ջերմապէս կը յանձնարարեն, որ գաւառներու մէջ ապահովութիւնը եւ խաղաղութիւնը վերահաստատուի, խիստ եւ նկատի առնուելիք լեզուով մը կը տարածայնուի որ Անատոլուի մէջ ընդհ. ջարդէն վախցող քրիստոնեայ ժողովուրդը՝ խումբ խումբ գրաւուած վայրեր կ'ապաստանին:

Թէեւ իրականութեան մէջ գրաւուած վայրեր՝ մասնաւորապէս Ատանայի կողմերը գացողներ, այդ կողմերը հայ տարրը ստուարացնելու նպատակով կ'երթան, սակայն ասիկա Անատոլուի մէջ ապահովութեան մթնոլորտին խանգարուելուն կը վերագրուի, եւ կառավարութեան կողմէ տրուած հերքումները ազդեցութիւն չեն ունենար: Ներկայացուցչական ժողովին տուած հաւաստիքներուն հակառակ, գաւառներու մէջ, կարգ մը մարդոց իրենց վստահելի չթուող պաշտօնեաները՝ ըստ կամս պաշտօնանկ ընելուն, փոխելուն եւ պետական գործերը կաղացնելուն — ինչպէս եւ բռնութեամբ հանդանակութիւն կամ տուրք գանձելու նման գործեր քանի շարունակուին, — մեր Ցամաքային եւ Ծովային ուժերու ներկայ դրութեամբ, կառավարութեան մեր ճակատագիրը որոշելիք տէրութեանց դէմ ըստպառնական դիրք մը որդեգրելը վնասակար է: Ասկէ գատ, Ֆրանսական ներկայացուցիչը որոշ կերպով յայտարարեց, թէ Ներկայացուցչական ժողովի անունով օտար ներկայացուցիչներուն հեռադիրներ տրուելը ցոյց կու տայ, թէ երկրին մէջ երկու կառավարութիւն գոյութիւն ունի: Աստոնցմէ ոեւէ մէկուն դէմ անարգական խօսք՝ լուրջ եւ քաղաքավար մարդոց չի վայլեր: Վտանգաւոր ժամանակներուն մեր լրջութիւնը եւ պաշարիւնը պահել եւ վիշտերուն առթած ծայրայեղ զգացումները, հայրենիքի բարձր շահուն զոհել պէտք է: Ներկայ քաղաքական կացութեան մէջ յարմար թաքթիքով մը կրնանք պաշտպանուիլ: Թէեւ այս խորհրդածութիւններս Ձեզի ալ ծանօթ է, սակայն պէտք է որ ասոնք ձեր ընկերներուն եւ մասնաձիւղերուն ալ հայրենասիրական յանձնարարութեամբ հաղորդէք: Կր սպասենք որ, մօտ ատենէն դումարուելիք երեսփոխանական ժողովին, մեր սուրբ հայրենիքին փրկութեան եւ բարօրութեան համար ձեռք առնուելիք միջոցները պահանջուելով, այս բարձր նպատակին իրադրութուելուն համար դուք ալ աշխատիք:

Պատերազմական Նախարար  
ՄԵՐՍԻՆՑԻ ՃԷՄԱԼ

Մոյն հեռագրին Մուսթաֆա Բէմալ փաշա հետեւեալ հեռագրով պատասխանած էր.

### Հեռագրին պատճենը

«Ի դիմաց դահլիճին մէջ տրուած 9 Դեկտ. 35 թուակիր(1) հեռագիրը մեր Ժողովին մէջ կարդացուեցաւ: Մոյն հեռագրին պարունակութիւնը, հակառակ մեր կողմէ տրուած լուսաբանութեան եւ բացատրութիւններուն, նախորդ հեռագրի թելադրութիւններուն կրկնութիւնն է: Մեր Ներկայացուցչական Ժողովին հետապնդած նպատակը, կառավարութեան հեղինակութիւնը բարձրացնել եւ ազգային վստահութեան արժանացնել ըլլալը բազմիցս տեղեկացուցինք: Յաւով կը յայտնենք, որ այն համոզումը կ'ունենանք, թէ մեր բռածները ըստ արժանւոյն նկատի չեն առնուիր:

Ա.— Եիտակ չէ որ Անատոլուի մէջ ապահովութիւնը խախտած է, միայն թէ Ներքին Նախարարութիւնը ազգային շարժման դէմ հակառակ դիրք բռնած է, անկեալ Դահլիճն ալ անունները բոլորին ծանօթ պաշտօնեաներուն նշանակումին մէջ յամառելով՝ կասկածելի ընթացք մը որդեգրեց: Ազգը շատ իրաւամբ կ'զգայ, թէ Ներքին Նախարար Ատիլ պէյին հոգին տակաւին Ներքին Նախարարութեան մէջ կ'ապրի: Նոյն խորհրդականին նոյն գործունէութեան մէջ, նոյն պաշտօնեաներուն իրենց պաշտօնին վրայ մնալը, թէ՛ Ձեզի եւ թէ՛ ազգին հանդէպ պարտականութիւն ստանձնող մեր Ներկայացուցչական Ժողովը գրծուարին գիրքի մը մէջ կը ձգէ: Նախապէս մեր հեռագրով ներկայացուցած Տէրսիմի կառավարիչին խնդիրը ուշադրաւ է, այլեւս մեր կողմէ կատարուելիք գործ չէ մնացած եւ յետ այսու ալ Ներքին Նախարարին բռնած ընթացքէն ծաղելիք անպատեհութիւնները բառնալու համար ոեւէ խնդրանք պիտի չներկայացնենք, որովհետեւ ընդունելութիւն պիտի չդանէ:

Բ.— Վերջին անգամ ըլլալով յիշենք, որ ձեր Վսեմութեանց կառավարութիւնը, եթէ կը փափաքի ազգին վստահութիւնը շահիլ եւ հայրենիքին օգտակար ըլլալ, — որուն համար կասկած չունինք — ազգային զգացումի եւ կացութեան փափկութեան համապատասխան ընթացք մը որդեգրելու է: Դարձանք ինքն իր մէջ ընելու է: Եթէ ոչ, Ներկայացուցչական Ժողովը նշանակէտ բռնելով եւ հին դը-

(1) 1919 մեր թուականով:

րութեամբ գրել շարունակելով՝ նպատակը չիրագործուիր:

Գ.— Կրնայ ըլլալ, որ անկեալ Կառավարութեան ազգին թշնամիներուն բարեկամ ձեւանալով հետապնդած դաւաճանական քաղաքականութեան հետեւանքն ըլլայ Այտընի կողմերը դրամական գանձումներու միջոցին պատահած անկարգութիւնները... սակայն ատիկա Սերաստիոյ համաժողովին մէջ որդեգրուած Ազգային Միութեան եւ Պատերազմական Նախարարութեան ընծայած աջակցութեան շնորհիւ բարւոքած է:

Գ.— Ազգը զինադադար կնքած թշնամի Տէրութեանց տեւէ մէկուն դէմ սպառնական դիրք չէ բռնած. միայն թէ, ի պահանջել հարկին, իր օրինաւոր իրաւունքներուն դէմ եղած միջամտութեան պարագային՝ գէնքով արգիլել ուխտած է:

Ե.— Գալով Ներկայացուցչական Ժողովին օտար Ներկայացուցիչներուն հեռագրելու խնդրին, ասոնք միայն բողոքագիրներ էին, ինչ որ ձեր բարձր Դահլիճին հաւանութեան ալ արժանացած է:

«Իրականութեան մէջ, Ազգային Միութեան Ներկայացուցչի հանդամանքով, Ներկայացուցչական Ժողովին յանուն ազգին նման դիմումներ կատարելը օրինաւոր իրաւունք մըն է:

«Եթէ Կառավարութիւնն ալ նոյն զգացումը եւ նման պատեհութիւններուն ազգին հեա գաղափարակից ըլլալը ցոյց տալ փութայ, անկասկած որ ո՛չ թէ քաղաքական վրնաս, այլ մեծ օգուտներ ձեռք կրնայ բերուիլ:

«Մինչդեռ Ֆրանսացիները կը խօսին, որ Ատանայի դրաւումին նման ակներեւ անիրաւութեան մը դէմ Պոլսոյ Կառավարութիւնը չկրցաւ բողոքել... հետեւաբար Ֆրանսական Ներկայացուցչին նախորդ յայտարարութեան նշանակութիւնը հող փնտռելու է: Աւելցնենք, որ Ներկայացուցչական Ժողովը ո՛չ յուսահատած է եւ ո՛չ ալ նուիրական պարտականութեան մէջ ազգին փրկութեան եւ հայրենիքին համար հարկ եղածները չհասկնալու չափ յիմար է: Ազգին փրկութեան համար ձեռք առած միջոցներուն եւ իր բոլոր գործունէութեան մէջ արժանապատուութիւնը նախընտրել ստորնութենէն, իրեն համար սկզբունք ընդունած եւ հաստատած է, քանի որ միայն այս կերպով կարելի է յաջողիլ: Հետեւաբար ներկայ ցաւալի իրականութեան հանդէպ հեռատես ազգին հողիէն քաղած այս սկզբունքներէն չի կրնար շեղիլ եւ հաստատ յոյս ունի, որ մօտերս

գումարուելիք երեսփոխանական ժողովն ալ նոյն ողիով եւ զգացումով վարակուած պիտի ըլլայ :

Չ.— Մեր Ներկայացուցչական ժողովին նպատակակէտը վերեւ պարզեցինք եւ իբր մեր Պոլսոյ ներկայացուցիչը՝ Չեր վսեմութենէն կը խնդրենք, որ Իուք ալ Նախարարական Սորհուրդը լուսարանէք եւ խնդիրը բացատրէք» :

Մուսթաֆա Քէմալ փաշային վերեւ արձանագրուած հեռագրի պատճէնը կրկին կարդալ եւ վերլուծել հարկ է :

Ինքնիրեն Ներկայացուցչական ժողովի Նախագահի տիտղոսը տուող Մուսթաֆա Քէմալ փաշա՝ յանուն ազգին խօսելու եւ գործելու իրաւասութիւնը ուրկէ՞, ի՞նչ ձեւով եւ ի՞նչ միջոցաւ առած է : Հայրենիքին եւ ազգին անուան եւ հաշտոյն գործելնին յայտարարող Ներկայացուցչական ժողովը, արդեօք ազգին 100ի 1ի անունով խօսելու իրաւունք ունի՞ : Այս հեռագրով թէ կը յայտարարեն, թէ պետական գործերուն չեն միջամտեր եւ թէ ալ Ազգային Շարժման, (այսինքն իրենց եւ իրենց փափաքներուն եւ հրամաններուն կարեւորութիւն չընծայուելուն համար), կառավարութիւնը կը քննադատեն : Այս հեռագրին նման, առաջին պարբերութիւնը երկրորդով հերքող հակասութեան հաւաքածոյ մ'ոչ կ'ընար տեսնուիլ . . . :

Պատերազմական Նախարար Ճէմալ փաշա՝ Մուսթաֆա Քէմալ փաշային սոյն հեռագրին հետեւեալ կարճ հեռագրով պատասխանել հարկադրուած էր :

### Հեռագրին պատճէնը

«Կառավարութեան ներքին գործերուն մի՛ խառնուիք, յետոյ մենք կը քաշուինք կ'երթանք, հետեւանքը դուք խորհեցէք» :

Մուսթաֆա Քէմալ փաշային շափը անցնող հեռագրին դէմ Պատերազմական Նախարար Մերսինցի Ճէմալ փաշային տուած այս պատասխանը թէեւ շատ կարճ, սակայն շատ իմաստալից է :

\* \* \*

Ընտրութիւնները սկսած էին. Պոլսոյ ընտրութիւնը ատամնաբոյժ Էսատ փաշային նախագահութեան տակ «պին պիր տիրէկ» հաւաքուած եւ նախկին Իթթիհատականներէն բաղկացած Ազգային Պլոքը կը կառավարէր : Գաւառներուն մէջ ալ Ներկայացուցչական ժողովի կողմէ կառավարուելով «Ազգային Բանակ»ի անուան տակ Իթթիհատ եւ Թէրազգրի թեկնածուները շահած էին : Մուսթա-



Փա Քէմալ փաշա եւ Բէուֆ պէյ Սերաստիոյ Երեսփոխան ընտրուած էին:

Ընտրութեան այս տաք շրջանին՝ Մուսթաֆա Քէմալ փաշա եւ ընկերները Սերաստիան լքելով Անգարան կեդրոն ընտրած էին, որովհետեւ Պոլսոյ Կառավարութիւնը, Անգարայէն աւելի լաւ հսկողութեան տակ պիտի կրնային առնել:

Մուսթաֆա Քէմալ փաշա՝ Անգարա հասնելուն, Ժողովին հոն գումարուժը փափաքած էր: Բ. Դուռը Սահմանադրութեան հակառակ այս պահանջը, պատճառարանութեամբ մերժած էր:

Ներկայացուցչական Ժողովին Անգարա փոխադրութիւնը նոր ծրագիր մը չէր: Շատ առաջ խորհուած, սակայն այս ծրագրին դէմ կարգ մը անձնաւորութիւններ առարկած էին: Առարկողներու գլուխը կը գտնուէր Քեաղիմ Գարապէքի փաշա. նոյնիսկ երբ այս խնդրոյն մասին իր կարծիքը հարցուեցաւ, հետեւեալ հեռագրով պատասխանած էր:

#### Հեռագրին պատճէնը

«Ազգային իրանակը ներկայացնող Բարձր Ժողովիդ ոչ թէ Անգարա, նոյնիսկ Սերաստիոյ Արեւմտակողմը փոխադրութեան հակառակ եմ, որովհետեւ Արեւելեան նահանգներէն Ազգային իրանակը ներկայացնող Մարմնի հեռանալը, այս նահանգներուն մէջ կազմալուծում պիտի յառաջացնէ եւ շատ կանոնաւոր կերպով կառավարուող Ազգային Շարժման ամէն ձեռնարկ չարափոխուած ցոյց տալու ձգտող մեր թշնամիներուն առիթ տուած կ'ըլլանք. հետեւաբար Ներկայացուցչական Ժողովին Սերաստիոյ Արեւմտակողմը անգամ անցնելուն հակառակ ըլլալս կը տեղեկացնեմ»:

Մուսթաֆա Քէմալ փաշա, այս մասին հետեւեալ խորհրդածութիւնը կ'ընէ. —

«Ներկայացուցչական Ժողովին Արեւելեան նահանգներէն աւելի Արեւմտեան նահանգներուն (Պոլսոյ մօտ ըլլալը) յարմար եւ արդար տեսնող խելահասներ արդարեւ շատ էին: Նախ, Արեւմտեան եւ հարաւ Արեւմտեան նահանգներէն շատերը գործնականապէս գրաւման տակ առնուած էին: Այս նահանգները գրաւող թշնամիներուն դէմ պաշտպանողական դիրքեր բռնել եւ անոնց վրայ հակել պէտք էր. մինչեւ Արեւելեան նահանգներուն մէջ նման պարագայ գոյութիւն չունէր եւ մօտալուտ վտանգ մըն ալ հաւանական չէր նկատուեր:

«Ննթադրենք որ Արեւելեան կողմէն հայերուն յարձակումը կարելի նկատուի, ասոր դէմ ալ ազգային բանակի 15րդ զօրաբանակը կազմ ու պատրաստ էր:

«Մինչդեռ Իզմիրի ճակատներուն վրայ զանազան հրամանատարներ, զանազան ոչ միասնական զինուորական ուժեր կային: Ատանայի գրաւման դէմ ալ տակաւին ճակատ չէր կազմուած:

«Արդ, օրէնքը եւ կանոնը կը պահանջէ, որ ընդհանուր կացութիւնը կառավարելու պատասխանատուութիւնը ըստանձնողներ, ամենէն կարելոր նշանակակէտին, ամենէն մեծ վտանգին կարելի եղածին չափ մօտ գտնուին, որպէսզի կարենան ընդհանուր կացութեան մօտէն հսկել: Անգարան այս պայմանները լրացնող կեդրոն մըն էր. անպայման ճակատներով պիտի զբաղինք, ըսելով, Պալքէսէր, Նազէլի կամ Գարա Հիսար պիտի չերթայինք, այլ ճակատներուն եւ Պոլսոյ երկաթուղիով կապուած եւ ընդհանուր կացութիւնը կառավարելու տեսակէտէն՝ Սերաստիայէն շատ չտարբերող Անգարա պիտի գայինք: Երեսփոխանական Ժողովին Պոլսոյ մէջ գումարումը ստիպողական տեսնուելուն վրայ Անգարա փոխադրուիլ ի՞նչ աստիճան օգտակար պիտի ըլլար. ասիկա բացատրել հարկ չեմ տեսներ:

«Ներկայացուցչական Ժողովին Անգարա փոխադրութեան մասին ցոյց տրուած պատճառներու շարքին «մեր բոլոր ձեռնարկները միշտ վատ տեսնող եւ ցոյց տուող թշնամիներէն» ճառելը, չկրցայ մեկնել: Արդարեւ անոր ըսածին պէս թշնամիները մեր ո՞ր ձեռնարկը, ո՞ր ընթացքը լաւ տեսած էին եւ կամ կրնային տեսնել, որ անոր համեմատ շարժէինք: Եթէ այս գաղափարը յզացողը ըսէր, թէ «Պոլսոյ մէջ Ազգային բաղձանքներու համամիտ Ալի Բիզա փաշային կառավարութիւնը կայ: Երեսփոխանական Ժողովն ալ հոն գումարելով, ազգին եւ հայրենիքին ճակատազրին վրայ հսկելէն յետոյ, Ներկայացուցչական Ժողովին Արեւմտեան ճակատներով զբաղուելուն եւ Երեսփոխանական Ժողովին հետ յարաբերուելուն ի՞նչ հարկ կը մնայ: Այս պարագային օգտակար չըլլա՞ր, որ Ներկայացուցչական Ժողովը միմիայն Արեւելեան նահանգներու կազմակերպութեամբ զբաղուելով բաւականանայ»: Թերեւս այս առաջարկը մասամբ արդարացի ըլլար, սակայն պէտք է ընդունիլ, որ ընդհանուր եւ իրական կացութիւնը եւ պայմանները տեսնելու եւ ըմբռնելու մէջ Ներկայացուցչական Ժողովին եւ Քեազիմ Գարապէքիրի թեզերուն միջեւ մեծ տարբերութիւն կայ»:

Նախապէս նկարագրուած ին պէս՝ դարձուած քով մը Տամատ Ծէրիտ փաշայի դահլիճը տապալող եւ Ալի Րիզա փաշային դահլիճը իրենց համակիր տեսնող եւ Ընդդիմադրութիւնը ներկայացնող Ազատական կուսակցութեան ընտրութեան չմասնակցելուն՝ հրապարակը կատարելապէս ազատ տեսնող եւ երեսփոխանները իր ուզածին պէս ընտրել տուող Մուսթաֆա Քէմալ փաշա, ինքն ալ երեսփոխան ըլլալով հանդերձ, Պոլսոյ մէջ գումարուելիք երեսփոխանական ժողովին չէր մասնակցած եւ սակայն իր ուզած դերը խաղալու համար, Պոլսոյ մօտ եւ անոր երկաթուղիով կապուած Անգարա հաստատուիլը նախընտրած էր:

Անոր նպատակն էր Անգարայէն՝ պետական գործերուն միջամտել, Բ. Դրան իր ուզած ձեւը տալ եւ Պոլսոյ մէջ պետական տազնապ ստեղծել եւ ասկէ օգտուելով Երեսփոխանական ժողովը ցրուել եւ Անգարա փոխադրել եւ այսօր իր նախագահութեան տակ հիմնելու յաջողած դինուորական Հանրապետութեան հիմը Անգարայի մէջ դնել:

\* \* \*

Իրիք եւ բաժին հետապնդող Ազատական կուսակցութիւնը կազմալուծուած ըլլալուն՝ ընտրութեան չէր մասնակցած: Կառավարութեան տուած յայտարարութեան մէջ հետեւեալ պատճառաբանութիւնը ցոյց տուած էր. —

«Անատոլուի մէջ կարգ մը բարձրաստիճան գինուորականներուն ապստամբութեան դրօշ պարզելով պետական ղեկը ձեռք առած եւ Բ. Դրան ալ ասոնք արգիլելու անկարող գտնուելուն եւ այս պայմաններու մէջ ազատ ընտրութիւն մը կատարելը անկարելի ըլլալուն՝ պիտի չկրնային ընտրութեան մասնակցիլ»:

Այս յուշագիրը կուսակցութեան ղեկավարը եղող Սատրգ պէյի կողմէ վարչապետ Ալի Րիզա փաշայի յանձնուած էր:

Վարչապետ Ալի Րիզա փաշա, թէեւ յայտարարած էր, թէ Ազատական կուսակցութեան ընտրութեան չմասնակցիլը պետական շահերուն հակառակ է, եւ թէ անսլայման պէտք է մասնակցիլ, սակայն Սատրգ պէյ ընտրութեան չմասնակցելու համար տուած որոշման վրայ պնդելով՝ Բ. Դունէն մեկնած էր:

Ազատական կուսակցութեան ընտրութեան չմասնակցիլը անոր յետաձգման պատճառ չէր կրցած դառնալ: Ընտրութիւնները ամէն կողմ կատարուած էին:

Ընտրութեան արդիւնքը այն եղած էր, որ գրեթէ ամէն կողմ Ներկայացուցչական ժողովին թեկնածուները

մեծամասնութիւն շահած էին: Միայն Արեւելեան Գարա Հիսարի երկու երեսփոխաններէն մէկը՝ ընդդիմադրութեամբ ծանօթ Ազատական կուսակցութեան կեդր. Ժողովի անդամներէն՝ Օմար Ֆէվզի էֆէնտի եւ Քէոթասիոյ Ազատական կուսակցութեան մասնաճիւղի նախագահ՝ Սոճա Չատէ Բասրի էֆէնտի՝ իրենց անձնական ազդեցութեամբ ընտրուած էին: Քէոթասիոյ երեսփոխան Սոճա Բասրի էֆէնտի թէեւ քաղաքին մէջ ազդեցիկ մէկն էր, սակայն զարգացած չէր: Իսկ Արեւելեան Գարա Հիսարի երեսփոխան Օմար Ֆէվզի էֆէնտի՝ քաղաքին մէջ իրաւագէտ եւ նշանաւոր մէկն էր: Ճիշդ կը խորհէր. լաւ խօսող, համարձակ մէկն էր:

Պոլսոյ Ներկայացուցչական Ժողովի մէջ Օմար Ֆէվզի էֆէնտի միակ ընդդիմադիրը ըլլալով հանդերձ՝ բանախօսութեան եւ քաղաքական համարձակութեան շնորհիւ երեսփոխանները շուարեցնելու աստիճան խորհրդարանական խաղեր խաղցած եւ նոյնիսկ Ալի Ռիզա փաշային Սահմանադրութեան տրամադրութեան հակառակ ըլլալով նախահաշիւը իր օրինական շրջանին ներկայացուցած չըլլալուն համար՝ Բարձրագոյն Ատեան ղրկուելը պահանջող շատ օրինաւոր պահանջ մը ներկայացուցած էր: Օմար Ֆէվզի էֆէնտիին համարձակութիւնը ցոյց կու տար, որ Ազատական կուսակցութեան ընտրութեան չմասնակցիլը, հայրենիքին մինչեւ այսօր գինուորական բռնատիրութեան տակ մնալուն եւ կայսրութեան տապալելուն պատճառ եղած էր:

Ընտրութիւնները վերջացած եւ Ժողովը գումարուելու հրաւիրուած էր: Այս հրաւերին վրայ, Մուսթաֆա Քէմալ փաշա երեսփոխաններուն առանձինն առանձինն հեռագրելով Պոլիս մեկնելու ատեն Անգարա հանդիպելին խնդրած էր:

Երեսփոխաններէն մէկ մասը այս հրաւերին պատասխանելով Անգարա հանդիպած, սակայն շատերը կարեւորութիւն չտալով՝ ուղղակի Պոլիս գացած էին:

Մուսթաֆա Քէմալ փաշա Անգարա եկող երեսփոխաններուն, Ժողովին Պոլսոյ մէջ գումարումը վտանգաւոր ըլլալը պատճառաբանելով, Անգարայի մէջ գումարման համար Բ. Իռնէն արտօնութիւն խնդրել տուած էր, սակայն Բ. Իռնը խստօրէն մերժած էր այդ առաջարկը:

Ժողովին Անատոլուի մէջ գումարումը անկարելի տեսնող Մուսթաֆա Քէմալ փաշա, այս անգամ Իրաւանց Պաշտպան Միութեան Ներկայացուցչական Ժողովի նախա-

գահի հանգամանքով՝ Պոլիս գումարուելիք ժողովին նախագահ ընտրուելը ուղած էր:

Մուսթաֆա Քէմալ փաշային այս փափաքն ալ նկատի չէր առնուած: Պոլիս Ծընտրելը ապարանքին մէջ գումարուող ժողովը, Պոլսոյ երեսփոխան Րէշատ պէյը նախագահ ընտրած էր:

Պոլսոյ երեսփոխան Րէշատ Հիքմէթ պէյին նախագահ ընտրուելուն վրայ՝ այդ միջոցին Մուսթաֆա Քէմալ փաշային թեւ ու թիկունք եղող «Համիտիյէ» ղրահաւորին հերոս Րէուֆ պէյ՝ Մուսթաֆա Քէմալ փաշային հետեւեալ միւլթարական հեռագիրը արուած էր:

#### Հեռագրին պատճենը

«Ձեր Վսեմութեան նախագահ ընտրուելու մասին յայտնուած փափաքներուն դէմ, երբ յայտարարեցի, թէ ազգին գլուխը մնալով ժողովին պաշտպան ըլլալ կը նախընտրէք, բուն ծափահարութիւններով համակրական խօսքեր եղան: Ընդհանուր ժողովին մէջ Րէշատ Հիքմէթ պէյ՝ Ա. նախագահ, Հիւսէյն Քիաղիմ՝ Ա. օգնական եւ Սոճա Ապտիւլ Ազիզ Մէհտի էֆէնտին ալ Բ. օգնական ընտրուեցան»:

\* \* \*

Ալի Րիզա փաշա ժողովին ներկայացած եւ վստահութեան քուէ խնդրած էր: Մէկ հողի ձեռնպահ եւ մէկ հողի դէմ քուէ տուած էր, մնացեալները կառավարութեան վստահութիւն յայտնած էին:

Ալի Րիզա փաշայի կառավարութիւնը այս կերպով ժողովին վստահութեան արժանանալէն քաջալերուելով՝ նահանգներուն հետեւեալ շրջարերականը ղրկած էր:

#### Շրջարերականի պատճենը

«Այս անգամ երեսփոխանական ժողովին մէջ կարգացուած եւ ջախջախիչ մեծամասնութեամբ յարմար տեսնուելով կառավարութեան վստահութիւն յայտնուած ծրագրին կարեւոր կէտերէն մէկը Ընդհանուր ժողովը գումարուելով աղգային բոլոր բաղձանքներուն միակ դիմումնաւայրը, փա՛ռք Աստուծոյ, գործի սկսած ըլլալուն՝ անոր գործադրութիւնը ներքին գաւառներու մէջ երեսփոխանական ժողովէն զատ, ինչպէս նաեւ Ազգային կամքի անունով խօսելու եւ գործի խառնուելու անհրաժեշտութիւնը մնացած չըլլալուն, պետական գործերու միջամտելու ձեւով ամէն տեսակի գործ եւ շարժում՝ պատի-

Ժի Լեւթակայ ըլլալուն, ներկայ շրջաբերականով կը յայտարարուի»:

Ալի Րիզա փաշային այս շրջաբերականը՝ ժամանակի համեմատ խիստ էր: Մուսթաֆա Քէմալ փաշա այս խնդիրը բացատրելու ժամանակ կ'ըսէր.—

«Նման շրջաբերականի մը ի՞նչ պէտք կար. Ներկայացուցչական ժողովը յաշս ժողովուրդին ստորնացնել եւ անոր պատժուելէ՛ն ճառել: Եթէ երբեք Ներկայացուցչական ժողովը երբեմն կառավարութեան ուշադրութիւնը գրաւելու հարկ կը տեսնէր, այս ընթացքին մաքուր, բարձր նրպատակներով եւ ստիպողականութեան մը բերումով ըլլալուն, ինչո՞ւ կը կասկածէին: Ներկայացուցչական ժողովը եւ անուղղակի կերպով Ազգային Միութիւնը չէզոքացնելու նպատակ ունեցող կառավարութիւնը՝ Այտըն, Ատանա, Մարաշ, Ուրֆա եւ Այնթապի կողմերը պատահած ընդհարումներէն ալ երբեք աղբուած չէր երեւար: Օտար տէրութիւններուն ուղղակի դահլիճին դէմ կատարած միջամատութիւններէն ալ չէր զգացուէր: Ազգային բաղձանքներուն միակ դիմումնաւայրը եղող Ազգային ժողովն ալ, ինչպէս Վարչապետ փաշան փառաբանութեամբ կ'ըսէ, տակաւին գործի չէր սկսած:

\* \* \*

Ալի Րիզա փաշայի կառավարութիւնը՝ ժողովէն վրասահութեան քուէ առնելէն յետոյ, նահանգներու մէջ խաղաղութիւնը ապահովելու եւ իր դէրժքը զօրացնելու աշխատած էր, սակայն չէր յաջողած եւ ամէն քայլին Մուսթաֆա Քէմալ փաշային կողմէ յարուցուած դժուարութիւններուն հանդիպած էր: Անատոյուի մէջ Ազգային բանակ անունով ծնած չէթէներուն եւ անոնց ծախքերուն համար ժողովուրդին պարտադրուած տուրքերուն գանձման ժամանակ ամէն տեսակ բռնութիւն՝ ժողովուրդին բողոքին տեղի տուած եւ Պոլսոյ կառավարութիւնը ձանձրացուցած էր:

Պետութեան ներքին գործերուն ուղղակի պատասխանատու եղող ներքին նախարար Տամատ Շէրիֆ փաշա, նահանգներու մէջ ազգային բանակ անունով ծնած այս կողոպտիչներուն դէմ բան մը չէր կրնար ընել, նոյնիսկ ուղած պաշտօնեաները նշանակելու եւ գործի լծելու մէջ անկարող կը մնար:

Ներքին նախարար Շէրիֆ փաշան խորապէս վիրաւորուած էր Մուսթաֆա Քէմալ փաշայի ճէմալին զրկած զինք վիրաւորող հետեւեալ հեռագրէն.—

«Պատերազմական նախարար Ճէմալ փաշային.

«Ներքին նախարարին կասկած արթնցնող ընթացքէն եւ գործերէն հետեւեալները կը ներկայացնեմ.—

Ա.— Անգարայի նման կարգ մը նահանգներու մէջ, քաղաքային գլխաւոր պաշտօնեաները հեռագրի գլուխ հըրաւիրելով սպառնական ձևով կը հարցնէ, թէ Ֆէրիտ փաշայի դահլիճին հանդէպ բռնուած դիրքին պատասխանատուններուն վիճակը եւ եղած ամբաստանութեան շարժառիթները ի՞նչ են եւ օրէնքի տրամադրութեանց կը համաձայնի՞ն:

Բ.— Երկար ժամանակ անկողնի ծառայող եւ ապա թիֆլիսէն մեռնող Թոգատի կառավարիչին մահը խորհրդաւոր նկատելով՝ ծածկագիրով Սերաստիոյ կուսակալութենէն կը հարցնէ պատճառը:

Գ.— Դատական նախարարին հետ միասին Պալլըքէսէրի կողմը եկող Ազգային Պատուիրակներու հետ գաղտնի տեսակցութեան միջոցին յիշեալին կը հարցնէ, թէ ազգային շարժման դէմ գործելու հնարանորութիւն ունի՞:

Դ.— Հայրենիքին հանդէպ դաւաճանութիւնը գործնականապէս հաստատուած նախկին ներքին նախարար Ատիլ պէյին մտերիմը եւ գործակիցը եղող ներքին խորհրդական Քէչքի պէյը՝ նախարարութիւնը ստանձնած պահուն իսկ պաշտօնէն պէտք էր հեռացնել: Սակայն մինչեւ հիմա զայն պաշտօնի վրայ կը պահեն: Ուստի անոր թելադրութեամբ նշանակուած պաշտօնեաները չեն կրնար ազգին վստահութեան արժանանալ: Օրինակի համար Ազգային Շարժման հանդէպ սկիզբէն հակառակ դիրք բռնող եւ վերջապէս ժողովուրդին կողմէ պաշտօնէ հեռացուող եւ հիւանդ ըլլալուն պատճառաւ ձերբակալուող Կեսարիոյ նախկին կառավարիչը Ալի Ուլլի պէյը՝ հակառակ անվարչագէտ մէկը ըլլալուն, Պորտու պաշտօնի նշանակումը ինչպէ՞ս բացատրել:

«Նոյնպէս ապիկար եւ Ճանիկի նահանգին համար անյարմար տեսնուող եւ իր իսկ հաւանութեամբ Պոլիս զրրկուող Էտհէմ պէյ՝ Մէնթէչէ նշանակուած էր: Այսուրի համար ալ Նիյտէի նախկին կառավարիչ ըլլալով Սերաստիա բերուած Ճաւիտ պէյ նշանակուած է, միւս կողմէն ալ Գոնիայի նախկին կուսակալ և հայրենադատ Ճէմալ փաշային գործակիցը եղող Անթալիացի կառավարիչը՝ հակառակ մեր կրկնակի դիմումներուն եւ ժողովուրդին բողոքներուն տակաւին գործի վրայ կը մնայ:

Ե.— Պաշտօնեաներու անօրէնութեան նման կարեւոր պաշտօն մը հայու մը ձեռք կը գտնուի:

Զ. — Մամուլի տնօրէնութեան մէջ ոչ մէկ փոփոխութիւն կը տեսնուի:

Է. — Որոչ է, որ հայրենիքին ճակատագիրը վճռելիք միակ ուժը Ազգային Միութիւնն է եւ այս իրագործողը միայն ազգային կազմակերպութիւնն է: Այս միութեան եւ կազմակերպութեան, հայրենիքը բաժանում է փրկելու եւ ազգին ու պետութեան անկախութիւնը ապահովելու նման նուիրական ծրագիրը ջուրը ձգելու աշխատողներն ալ Պոլսոյ խառնակիչներն են: Ասոնց չէզոքացումը միայն զօրաւոր եւ իրական կարգապահութեամբ կարելի է: Ասոր ալ առաջին միջոցը պէտք է որ ոստիկանական տնօրէնութիւնը պատուաւոր, հայրենասէր եւ կարող անձերէն ընտրուի եւ նշանակուի: Մինչդեռ ձեր վսեմութեան ծանօթ է, որ ներկայ ոստիկանական ընդհանուր տնօրէնը հայրենազաւզահիճին եւ անոր արբանեակներուն միակ նեցուկն է: Սաիտ Մուլլային Մըսթըր Ծրոյցին գրած նամակներուն պարունակութենէն կը հասկցուի, որ այս մարդը ընդդիմադիրներուն, այսինքն ազգին թշնամի եղողներուն պաշտպան կը հանդիսանայ: Ամասիոյ մէջ Սալէհ փաշան եւս այս պարագան հաստատած էր. մինչդեռ ներքին նախարարը հայրենիքին եւ ազգին ճակատագիրը այս մարդուն ձեռքը պահելուն մէջ անպատեհութիւն մը չի տեսներ: Ոստիկան զինուորներու հրամանատարը Քէմալ փաշային թէ՛ ազգային բաղձանքներուն եւ թէ՛ Ձեզի համար վնասակար ըլլալը ակներեւ ըլլալովը հանդերձ՝ ցարդ իր պաշտօնին վրայ մնալը ներքին նախարարութեան բարեացակամութեան վերագրելու է...»:

Մուսթաֆա Քէմալ փաշային սոյն պատասխանագիրը, անոր Պոլսոյ կառավարութեան գործերուն միջամտելու աստիճանը ցոյց տուող պատմական փաստ մըն է: Ասկէ կը հետեւցուի, որ Ալի Րիզա փաշայի դահլիճը՝ տիրող անիշխանութիւնը բառնալու աշխատած, սակայն չէր յաջողած:

Պետութեան հեղինակութիւնը զօրացնելու եւ տիրող անիշխանութիւնը բառնալու նպատակով ներքին նախարարութիւնը ստանձնած Տամատ Շէրիֆ փաշա, այս միջամտութիւններուն չհանդուրժելով՝ հրաժարած էր:

\* \* \*

Ազգային բանակին լիազօր պատուիրակի հանգամանքով՝ Ալի Րիզա փաշայի դահլիճին մէջ պատերազմական նախարար եղող Մերսինցի Կիւչիւք ձէմալ փաշան ալ այս միջոցին հրաժարեցուած էր:



Ճէմալ փաշա Չանազ Գալէի մէջ Աղթաշ կոչուած վայրը գտնուող եւ Մուտրոսի զինադադարին պայմանագրութեան տրամադրութեան համաձայն Համաձայնական տէրութեանց (մասնաւորապէս Անգլիոյ եւ Ֆրանսոյի հըսկողութեան եւ պաշտպանութեան յանձնուած) մթերանոցին մէջ գտնուող բոլոր զինամթերքը Անատոլու փախցընելու ձեռնարկած էր: Գրաւուած զէնքերուն քանակը հետեւեալն էր.—

8000 Ռուսական հրացան, 20 Ռուսական գնդացիք եւ 20,000 սնտուկ փամփուշտ:

Ճէմալ փաշա բանակային սպաներուն եւ զիւորներուն գաղտնի հրաման տուած էր, որ մթերանոցին վրայ յարձակին, իսկ Համաձայնականները այս գաղտնի հրահանգէն լուր ունէին:

Այս դէպքին ընթացքին մաս մը Անգլիացի եւ Ֆրանսացի զինուորներ սպաննուած ըլլալուն՝ Պոլիս գտնուող Համաձայնական Տէրութեանց ներկայացուցիչները՝ հաւաքաբար Բ. Դրան բողոքած եւ վերջնագիր տուած էին:

Տրուած այս հաւաքական վերջնագրով՝ պատերազմական նախարար Ճէմալ փաշային եւ ընդհանուր սպայակոյտի Նախագահ Ճէւատ փաշային պաշտօնանկութիւնը պահանջուած եւ հետեւեալ պատճառաբանութիւնը ցոյց տրուած էր:

Ա.— Մասնաւոր կերպով ընտրուած սպաներուն Ազգ. բանակի սպայակոյտին մօտ առաքումը:

Բ.— Արձակման պատրուակին տակ 14րդ զօրաբանակէն Ազգ. բանակին (Քէմալական) զինուոր առաքումը:

Գ.— Չէնքի եւ Թնդանօթի գործիքներու փախցուիլը (Համաձայնականներու պատկանող):

Դ.— Զոնկուլտագէն Պոլիս եկող վաշտին վերադարձին յապաղումը:

Ե.— Աֆիոն Գարահիսարէն՝ Ազ Շէքիք զինուորական փոխադրութիւնները:

Այս պատճառներով եւ Պատերազմական նախարարին եւ ընդհանուր սպայակոյտի նախագահին անձնապէս մեղսակից ըլլալուն՝ 48 Ժամուան ընթացքին անոնց պաշտօնէ հեռացուիլը պահանջուած էր:

Խնդրին փափկութիւնը եւ իր դահլիճին մէջ մնալու պարագային կառավարութեան համար փոանդաւոր կացութիւն ստեղծուելուն պատճառը հասկցող Մերսինցի Ճէմալ փաշա, արդէն Պորտուէն երեսփոխան ընտրուած ըլլալուն, Ժողովին մէջ իբր երեսփոխան աշխատիլ նախընտրած եւ

Ալի Ռիզա փաշայի դահլիճը խիստ փափուկ կացութենէ մը յաջողած էր փրկել:

Մուսթաֆա Քէմալ փաշա Պոլսոյ մէջ պետական տագնապ մը ստեղծել կ'ուզէր, եւ ասոր հետեւանքով ժողովը ցրուելով իր ազդեցութեան տակ Անգարայի մէջ գումարել կ'ուզէր. իրեն երախտագէտ ըլլալիք ժողովը իրեն ենթարկելով բոլոր փափաքները ան գոհացնել տալ կ'ուզէր:

Մուսթաֆա Քէմալ փաշա այս նպատակը հետապնդած ատեն, առաւելագոյն շահեր որոնած եւ շատ մը վըրտանգներ ալ անտեսած էր:

\* \* \*

Անատոլուի մէջ ապահովութիւն կը տիրէր: Ասոր վըրայ Պոլիս գտնուող Համաձայնական բանակներու ընդհ. հրամանատար Զօրավար Հարինկթըն՝ Գոճա էլիի թերափղղին ազգային բանակ կոչուած յելուզակներու յարձակումին դէմ պաշտպանելու եւ Պոլիս գտնուող բանակին պաշտպանութիւնը զօրացնելու համար Իզմիթի ծովախորշը եւ անոր շրջակայքը մաս մը անգլիական զինուոր զրկած եւ Իզմիթը զինուորական գրաւման տակ առած էր:

Մուսթաֆա Քէմալ փաշա այս դէպքը Պոլսոյ մէջ պետական տագնապ ստեղծելու եւ այսպէսով ժողովը ցրուելու համար յարմար առիթ նկատած եւ անմիջապէս Ատարագարի շրջակայքը գտնուող չէթէներուն հրամայած էր, որ Իզմիթ գտնուող գրաւման զինուորներուն վրայ քաւեն եւ գիշերային յարձակում ծրագրել տուած էր:

Մուսթաֆա Քէմալ փաշային՝ այս հրամանը գործադրուած եւ գիշերային յարձակումն ալ խիստ ճարպիկ կերպով կատարուած եւ բաւականաչափ անգլիացի զինուորներ սպանուած էին:

Մուտրոսի զինադադարէն ետք, յաղթական տէրութեանց գրաւման ուժերուն դէմ կատարուող առաջին յարձակողականը Իզմիթի յարձակողականն էր:

Գրաւման բանակի ընդհ. հրամանատար Զօրավար Հարինկթըն, ազգային բանակի անունով գործող այս չէթէներուն յարձակողականին վերջին ծայր կարեւորութիւն տուած եւ անմիջապէս Ալի Ռիզա փաշային կառավարութեան խիստ ոճով վերջնագիր մը տալով՝ Բ. Իրան՝ Անատոլուի մէջ շարունակուող յելուզակային շարժումներու հանդէպ ի՞նչ դիրք բռնելը հարցուցած էր:

Անկարողութեան եւ շուարման մատնուած Ալի Ռիզա փաշային պատասխանը ուշացած եւ ասոր վրայ 1920 Մարտ

16ի առաւօտեան՝ անգլիական զինուորական գրաւման տակ առնուած էր Պոլիսը:

Գրաւման բանակի ընդհ. հրամանատար Զօրաւար Հարինկթրնի՝ այս գրաւման մասին հրատարակած պաշտօնական հաղորդակցութիւնը, գրաւման պատճառը բացատրող պատմական փաստ մը ըլլալուն՝ նոյնութեամբ կ'արձանագրենք.

Պաշտօնական հաղորդագրութեան պատճէնը

«Հինգ ու կէս տարի առաջ ձեռով մը Օսմանեան տէրութեան ճակատագիրը ձեռք անցնող Իթթիհատ եւ Թէրազըր կուսակցութեան ղեկավարները՝ Գերմանիոյ խոստումներէն տարուելով Օսմանեան Տէրութիւնը եւ ազգը ընդհանուր պատերազմի մղեցին: Այս վատ քաղաքականութեան հետեւանքը ծանօթ է:

«Օսմանեան Տէրութիւնը եւ ազգը, հազար ու մէկ փորձանքներէ անցնելէ յետոյ՝ անանկ պարտութեան մը մատնուեցան որ Իթթիհատ եւ Թէրազըր կուսակցութեան ղեկավարներն անգամ զինադադար մը կնքելով փախչել ուրիշ ճար չգտան:

«Զինադադարի կնքումէն ետք, Համաձայնական Տէրութեանց մտահոգութիւնն էր Օսմանեան տէրութեան բոլոր հպատակներուն՝ (առանց ցեղի եւ կրօնի խտրութեան), ապագայ բարօրութիւնը, յառաջդիմութիւնը, հանրային եւ տնտեսական վիճակին բարելաւումը ապահովելիք հաշտութեան մը հիմերը ղնել: Երբ Հաշտութեան Ժողովը այս պարտականութեան յրացումին կ'աշխատէր, փախստական Իթթիհատ եւ Թէրազըր կուսակցութեան ղեկավարներուն գաղափարակից եղող կարգ մը մարդիկ՝ Ազգային կազմակերպութիւն անուան տակ շարժում մը ստեղծեցին եւ թագաւորին եւ կեղր. Կատալարութեան հրամանները անտեսելով՝ պատերազմի հետեւանքով բոլորովին հիւժուժ ժողովուրդը կրկին զինուորացրել, ցեղամիջեան հակառակութիւն յառաջացնել եւ «Ազգ. հանդանակութիւն» անունով ժողովուրդը կեղեքելու նման գործեր բրին: Այսպէսով ո՛չ թէ հաշտութիւն, այլ գործնականապէս նոր պատերազմի մը սկսուելուն ձեռնարկեցին: Բոլոր այս շարժումներուն հակառակ՝ Հաշտութեան Ժողովը իր պարտականութիւնը շարունակեց եւ մերջապէս Պոլսոյ թուրք Իշխանութեան տակ մնալը որոշեց: Այս որոշումը բոլոր Օսմանցի սրտերը պիտի ցնծացնէ: Սոյն որոշումը Բ. Գրան հայտարարուած ժամանակ տեղեկացուցած էին նաեւ, որ ասոր գործադրութիւնը ի՞նչ պայմաններու կը կարօտի: Այս պայ-

մաններն էին՝ Օսմանեան նահանգներու քրիստոնեաներուն կեանքի ապահովութիւնը, դաշնակից զինուորական ուժերուն դէմ դիւականօրէն կատարուող յարձակումներուն վերջ տալը: Կեդրոնական կառավարութիւնը, թէեւ այս ազգարարութեան փոխան բարեացակամ գտնուեցաւ, սակայն Ազգային Կազմակերպութիւն անուան տակ գործող մարդիկ, ցաւալի է որ իրենց ընթացքէն շեղիլ չուզեցին, ընդհակառակը՝ Կառավարութիւնը իրենց գործակից ընել աշխատեցան: Ամենուն ակնդէտ սպասած հաշտութեան համար մեծ խոչընդոտ մը եղող այս վիճակին դէմ՝ Համաձայնական Տէրութիւնները, մօտերս որոշուելիք հաշտութեան պայմաններուն գործադրութիւնը կարենալ յաջողցնելու համար՝ պէտք եղած միջոցները խորհելու ստիպուեցան, եւ ասոր համար մէկ միջոց գտան՝, այդ ալ Պոլիսը առժամեայ կերպով գրաւելն էր: Այս որոշումը այսօր գործադրութեան դրուած ըլլալուն՝ հանրային կարծիքը լուսաբանելու համար հետեւեալ կէտերը անոր ուշադրութեանը կը յանձնուի.

Ա.— Գրաւումը առժամեայ է:

Բ.— Համաձայնական տէրութեանց նպատակը ո՛չ թէ Օսմանեան Գահուն հեղինակութիւնը կոտրել՝ այլ ընդհակառակը Օսմանեան վարչութեան տակ մնալիք հողերուն վրայ այդ հեղինակութիւնը բարձրացնել եւ զօրացնել է:

Գ.— Համաձայնական Տէրութեանց նպատակը նոյնպէս թուրքերը Պոլսէն զրկել չէ, սակայն եթէ գաւառներու մէջ խառնակութիւն եւ ընդհանուր ջարդի նման դէպքեր պատահին՝ այս որոշման փոփոխութիւնը հաւանական է:

Դ.— Այս փափուկ կացութեան ժամանակ, իսլամ եւ ոչ-իսլամ, բոլորին պարտականութիւնն է իրենց առօրեայ գործերով զբաղիլ, խաղաղութեան ապահովման ծառայելը Օսմանեան տէրութեան փլատակներէն նոր թուրքիա մը ստեղծելու յիմարական ցնորքներով զայն փճացնել ուզողներէն չի խաբուիլ եւ ներկայիս կայսրութեան Կեդրոնը եղող Պոլսէն տրուած հրահանգներուն հնազանդիլ: Վերել յիշուած շարժումներուն մասնակցող անձերէն ոմանք՝ Պոլսոյ մէջ ձերբակալուելով, բնական է իրենց գործած արարքներուն համար պատասխանատու պիտի նկատուին»:

Պոլսոյ գրաւման վրայ՝ Ալի Րիզա փաշա հրաժարելու ստիպուած եւ անոր տեղ Սալէհ փաշա նշանակուած էր:

Սալէհ փաշա ալ՝ Համաձայնականներու կողմէ տրուած վերջնագրին խուսափողական պատասխան մը տուած էր: Անոր պատասխանը՝ Յաղթական Տէրութեանց ներկա-

յացուցիչները չէր գոհացուցած: Անոնք երկրորդ եւ աւելի խիստ վերջնագրով մը Բ. Դրան՝ Անատոլուի մէջ Մուսթաֆա Քէմալ փաշայի կազմակերպութեան ընթացքին մասին հաշիւ պահանջուած էր:

Սալէհ փաշայի կառավարութիւնը այս երկրորդ վերջնագրին չկարենալով սլատասխանել՝ ստիպուած էր հրաժարիլ:

\* \* \*

Այս կերպով ստեղծուած տագնապը Օսմանեան Տէրութիւնը իրապէս դժուար կացութեան մատնած էր: Օսմանեան կայսրութեան փլուզումը յառաջացնելիք այս ընթացքը ո՞վ պիտի կրնար կասեցնել:

Կացութիւնը ըմբռնող, ժամանակին ու պէտքին համաձայն միջոցներ ձեռք առնող կարող անձերու պէտք կար, մինչդեռ այս տեսակ անձեր տասը տարի տեւող բռնապետութեան հետեւանքով Իթթիհատ եւ Թէրազգրին իշխանութեան մէջ մտած էին: Իթթիհատ եւ Թէրազգրն ալ պատերազմէն պարտուած դուրս դալէն յետոյ՝ ինքզինքը պատասխանատուութենէ փրկելու կ'աշխատէր: Անատոլուի մէջ տարբեր անուններով նորէն կառավարութիւն հիմնելու ջանքեր կը թափուէր: Զօրաւոր բրոքականտիստները տէրութեան ներքին թէ արտաքին կացութիւնը աակն ու վրայ բրած էին:

Հանգուցեալ Սուլթան Մուհամմէտ Վահիտեատին՝ կացութիւնը կ'ըմբռնէր եւ փրկութեան միջոցներ կը փրնտրուէր. սակայն իր շուրջ վստահելի եւ կարող անձերու սլակասը կը տեսնէր:

Սալէհ փաշայի հրաժարականին վրայ՝ թաղաւորը ստիպուած փորձի համար, անկարողութիւնը հատուտուած Տամատ Ֆէրիտ փաշան՝ կրկին գործի լծած էր:

\* \* \*

Տամատ Ֆէրիտ փաշա այս անգամ կրօնական հրամանագիրներով զինուած՝ գործի անցած էր. ժամանակին փափկութիւնը չէր կրցած ըմբռնել: Գիրքի Ա. մասին մէջ բացատրուածին պէս Օսմանեան Տէրութեան Գերմանիոյ հաշտոյն պատերազմի մտած ժամանակ կրօնական հրամանագիրներու յենելով Սր. Պատերազմ յայտարարուած էր: Ասիկա պատճառ դարձած էր, որ քաղաքական եւ կրօնական իշխանութիւնը իր անձին վրայ կեղբոնացնող Օսմանեան Քահակալին դէմ՝ Եւրոպայի հանրային կարծիքը,

մասնաւորապէս մեծ թիւով խալամ հպատակ ունեցող տէրութիւններու ընդվզումը զօրանայ:

Երբ կացութիւնը այսպէս էր, կրօնական հրամանագիրներով գործ տեսնել կարծելը՝ վերջին ծայր միամտութիւն էր: Սահմանադրական վարչաձեւ ունեցող Օսմանեան Տէրութիւնը՝ այսպիսով ցոյց կու տար, թէ կրօնական անկախութիւն հետապնդելէ չէր դադրած, մինչդեռ Մուրոսի զինադադարով եւ Ուիլսընեան ծրագրի հիման վրայ՝ իշխանութիւն հիմնելու սկզբունքը ընդունուած էր:

Տամատ Փէրիտ փաշայի այս առաջին փորձը՝ քաղաքակիրթ աշխարհի հետեւած սկզբունքներուն բոլորովին հակառակ էր:

Կրկին Աթոռ բարձրացող Տամատ Փէրիտ փաշայի մասին տրուած եւ մասնաւոր հանդիսութիւններով Բ. Դըրան մէջ կարդացուող թագաւորական հրամանագիրը՝ պատմական կարեւոր փաստաթուղթ մը ըլլալուն, կցուած կրօնական հրամանագիրներով միասին ամփոփել հարկ տեսանք.

Թագաւորական հրամանագրի պատճէնը

«Մեծ Եպարքոս Փէրիտ փաշային,

«Ձեր նախորդին Սալէհ փաշային հրաժարելուն համար՝ իբրեւ փորձառու վարչապետութիւնը Ձեզի, իսկ Շէյխ Իւլ Իսլամութիւնը Տէտէ Չատէ Ապտալլա պէյին յանձնուած է: Սահմանադրութեան 27րդ յօդուածին համաձայն ձեր կազմած նոր դահլիճը մեր կողմէ վաւերացման արժանացած է: Չինադադարի սկիզբէն ի վեր հետզհետէ դէպի բարեօրոճ յառաջացող մեր քաղաքական կացութիւնը «Ազգութիւն» անուան տակ տեղի ունեցող խառնակութիւններուն պատճառաւ վտանգաւոր վիճակի մը հասցուած եւ ասոր դէմ ցարդ ձեռք առնուած հաշտարար միջոցները ապարդիւն մնացած են: Նկատի առնելով որ, այս ապստամբութեան շարունակութիւնը — Աստուած հեռու ընէ —, վտանգաւոր վիճակի մը պիտի յանգի, կը փափաքինք որ այս խառնակութիւններուն ծանօթ հեղինակներուն մասին արժանի պատիժ տնօրինուի, իսկ խաբուելով ասոնց հետեւողներու մասին ալ ընդհ. ներում յայտարարուի եւ մեր կայսրութեան բոլոր մասերուն մէջ խաղաղութիւնը վերադարձնելու եւ ապահովելու համար շուտափոյթ միջոցներ ձեռք առնուին եւ գործադրուին: Մեր բոլոր հպատակներուն դէպի մեր գահը ունեցած հաւատարմութիւնը վերահաստատուի եւ ասոնց հետ միասին Համաձայնական մեծ տէրութիւններու հետ անկեղծ յարաբերութիւններ մշակ-

ուին, եւ Տէրութեան ու Ազգին շահերը արդարութեամբ պաշտպանելու ջանք թափուի, պատուաւոր հաշտութեան մը կնքումը փութացուի եւ մինչ այդ ելեւմտական եւ տընտեսական բոլոր միջոցներու դիմելով ժողովուրդին վիճակը բարւոքուի:

«Աստուած յաջողութիւն պարգեւէ»:

Կրօնական հրամանագրի պատմէններ

«Նորին կայսերական բարձրութեան իշխանութեան տակ գտնուող իսլամական երկիրներու մէջ, կարգ մը վատ մարդիկ միանալով, իրենց պետեր նշանակած եւ թագաւորին հաւատարիմ հպատակները ստորին միջոցներով խաբած եւ առանց Բարձրագոյն հրամանի՝ զինուոր հաւաքելու ձեռնարկած են: Երեւութեամբ զինուորները կերակրելու եւ պատսպարելու, իրականութեան մէջ հարստութիւն դիզելու նպատակով եւ կրօնական օրէնքներու եւ բարձր հրամանի հակառակ կարգ մը տուրքեր գանձելու դիմած են: Անոնք բռնութեամբ ժողովուրդին դրամը եւ ինչքը կողոպտելով՝ աստուածապաշտները կեղեքած եւ կայսրութեան կարգ մը քաղաքներուն եւ գիւղաքաղաքներուն վրայ յարձակելով քանդած եւ հիմնայատակ կործանած են: Անոնք հաւատացեալներու Պետին կողմէ նշանակուած կարգ մը կրօնական, զինուորական եւ քաղաքային պաշտօնեաները ըստ կամս պաշտօնանկ ըրած եւ իրենց հետեւորդները նշանակած են: Անոնք կեղր. կառավարութեան եւ Նահանգներու իշխանութեանց յարաբերութիւնները խզելնին եւ կառավարութեան կողմէ տրուած հրահանգներու գործադրութեան արգելք եւ կեղրոնը՝ նահանգներէն անջատելով փոխմարզարէութեան հմայքը նուաստացնելու նպատակով դաւաճանած են: Եւ դեռ Պետութեան օրէնքն ու կանոնը եւ երկրին ապահովութիւնը խանգարելու համար կեղծ հրատարակութիւններով եւ սուտերով, ժողովուրդը դէպի չարը մղելնին եւս հաստատուած է: Վերոյիշեալ անձերը եւ անոնց արբանեակները ցրուելու մասին տրուած Բարձրագոյն Իրան հրամանէն ետք, երբ տակաւին անոնք իրենց վտանգաւոր ընթացքին մէջ կը յամառին, հայրենիքը ասոնց փորձանքներէն եւ հաւատացեալները ասոնց վնասներէն ազատելու համար «Անոնք, որոնք իրենց պետերուն չեն հնազանդիք եւ կը հակառակին, պէտք է մեռցուին» Սբ. գրութեան համաձայն, ասոնց մեռցուիլը օրինական կը համարուի<sup>6</sup>:

Պատասխան.— Աստուած ամենագէտ է:

Տէտէ Զատէ Սէյտ Ապտուլլա

\* \* \*

«Ուրեմն կայսերական երկիրներու մէջ բնակող եւ պատերազմելու ընդունակ իսլամներու մեր մարգարէի-փոխանորդ Նորին Բարձրութիւն Սուլթան Վահիտետտինի շուրջը խմբուելով սպաննելու համար տրուած հրամանին հնազանդիլը եւ այս տեսակ մարդիկը սպաննելը օրինակա՞ն է:

Պատասխան.— Աստուած ամենագէտ է:

Նոյն

\* \* \*

«Ուրեմն, այս տեսակ հակառակորդները պատերազմելով սպաննելու համար նշանակուած զինուորները՝ երբ իրենց պարտականութեան մէջ թերաճան, այս աշխարհի մէջ պատիժի եւ հանդերձեալի մէջ դժոխքի կ'արժանանա՞ն:

Պատասխան.— Աստուած ամենագէտ է:

Տէտէ Զատէ Սէյտ Ապտալլա

\* \* \*

«Ուրեմն, այն զինուորները որոնք այս պատերազմի միջոցին կը սպաննուին, նահատակ եւ վարձատրելի կը համարուի՞ն:

Պատասխան.— Աստուած ամենագէտ է:

Տէտէ Զատէ Սէյտ Ապտալլա

«Ուրեմն, այն հաւատացեալները, որոնք այս ըմբոստները սպաննելու համար տրուած հրամանին ընդ առաջ չեն ելլար, կրօնական պատիժներու կ'արժանանա՞ն:

Պատասխան.— Աստուած ամենագէտ է:

Տէտէ Զատէ Սէյտ Ապտալլա

\* \* \*

Տամատ Ֆէրիտ փաշայի կառավարութեան հրատարակած պաշտօնական յայտարարութիւնն ալ առանձինն յիշատակութեան արժանի ըլլալուն ստորեւ ամփոփումը:

Տամատ Ֆէրիտ փաշայի կառավարութեան  
յայտարարութիւնը

«Օսմանեան կառավարութիւնը այսօր աննախընթաց վտանգի մը մէջ է. բառին բուն նշանակութեամբ հայրենիքը վտանգի մէջ է. ազգը՝ անգլիաակցօրէն եւ ահամայ մտած այդ սոսկալի պատերազմին մէջ հոգւով եւ մարմնով սմենամեծ զոհողութիւնը կատարելով հանդերձ՝ բա-



ցարձակ պարտութենէ չէր կրցած ազատիլ եւ այն ժամանակուան Կառավարութեան կողմէ կնքուած զինադադարով, Յաղթական Տէրութեանց յանձնուած էր: Պէտք է որ ցաւալի արդիւնքէն խրատուելով՝ գոնէ տրամաբանական եւ փրկութեան ճամբու հետեւէինք: Կարգ մը մարդոց միայն հարստութիւն դիզելու նպատակը եւ Ազգ. Կազմակերպութիւն անուան տակ մէջտեղ բերած խտրակութիւնները՝ մեր քաղաքական գոյութիւնը վտանգաւոր վիճակի հասցուցին եւ պատերազմի վնասներէն եւ մասնաւորապէս պատերազմի տարիներուն կատարուած զանազան ոճիրներէն խորապէս վիրաւորուած մեր հայրենիքին նոր վէրքեր բացին: Կարգ մը տգեղ դէպքերով Եւրոպայի եւ Ամերիկայի հանրային կարծիքին մէջ մեզի աննպաստ հոսանք մը ստեղծուելուն՝ հաշտութեան պայմաններուն աւելի սաստկանալուն պատճառ եղան:

«Վերջապէս այս վիճակին բերումով մեծ տէրութիւնները Պոլիսը առժամեայ գրաւման տակ առնելով, զինադադարի պայմանը գործադրեցին: Ասոր հակառակ՝ ըմբոստներուն Մայրաքաղաքին եւ Անատոլիին միջեւ յարարբրութիւնները խզելին ամենամեծ հայրենադաւուժիւնն է: Այսպէսով Ազգային Կազմակերպութիւն կոչուած ըմբոստական շարժումը, թէ՛ Անատոլուն գրաւել տալու եւ թէ՛ Կառավարութեան գլուխը մարմնէն անջատելու վտանգը կը պատրաստէ: Այսօր՝ Օսմանեան ազգին ամենամեծ թըշնամիները սուտ ազգասիրութեամբ հայրենիքը եւ սոզը իրենց շահուն դոհողներն են: Ասոնց վտանգաւոր ապագայ մը պատրաստելու համար ձեռք առած միջոցներն ալ՝ ոճիրներու շարք մը: Սահմանադրութիւնը եւ պետական օրէնքները ոտնակոխելով՝ ժողովուրդէն բռնի դրամ հաւաքելով ապօրինի զինուոր կ'արձանագրեն: Իրամ չտուողներուն եւ ասանկ գէշ նպատակի համար չզինուորագրուողներուն նեղութիւն կու տան, սպաննելու, գիւղերուն վրայ յարձակելու եւ աւերելու նման ոճիրներ կը դործեն: Մինչդեռ նման գործեր (ներփախ կրօնական հրամանագրի համաձայն), Աստուծոյ եւ կրօնքին հակառակ են:

«Օսմանեան հայրենիքին ենթարկուած վնասները դարմանել եւ անձի եւ նիւթականի տեսակէտով տուած կորուստները յեցնելու անհրաժեշտութենէ մղուած՝ ներկայ կառավարութեան սմէն անհատի կեանքը եւ աջակցութիւնը աւելի քան երբեք թանկագին է: Ասոր համար Կառավարութիւնը իր բարի նպատակին առանց արիւն թափելու հասնիլը նախընտրելով հանդերձ՝ Կառավարութեան եւ

ազգին իրական վտանգի մէջ եղած գոյութիւնը փրկելու համար անաստողները՝ համաձայն կրօնական օրինաց եւ թագաւորական հրամանագրի պատժելու ալ պիտի չերկմըտի:

«Հետեւաբար, նախ անոնք որոնք ներկայ ապստամբական շարժման հեղինակներուն եւ առաջնորդներուն խաբէութենէն եւ սպառնալիքէն տարուելով եւ իրենց ըրածին ի՛նչ աստիճան վտանգաւոր ըլլալը առանց խորհելու անոնց գործակցած են, եթէ մէկ շարթուան ընթացքին զղջում յայտնելով թագաւորին հաւատարմութիւն ուխտեն, ներման պիտի արժանանան: Ապա շարժումի առաջնորդները եւ անոնց հետ գործակցող յամառ ըմբոսաները օրէնքով եւ կրօնքով պիտի պատժուին: Երկրին բոլոր կողմերը իսլամ ժողովուրդին կողմէ ուրիշ տարրերու, կամ ոչ-իսլամներու կողմէ իսլամներու դէմ նախատինք կամ յարձակում ըստ օրէնքի ներելի չըլլալուն, նման դէպքի մը պարագային՝ անաստողները եւ անոնց կողմնակցութիւն ցոյց տրուողները կամ գործակցողները անձամբ եւ խստիւ պիտի պատժուին»:

\* \* \*

Պատճէնները վերեւ արձանագրուած թագաւորական գրութիւնը, կրօնական հրամանագիրները եւ կառավարութեան յայտարարութիւնը Պոլսոյ թերթերուն մէջ հրատարակուած էր: Ասկէ զատ հազարաւոր օրինակներ տրպուելով՝ հնարաւոր միջոցներով Անատոլուի բոլոր կողմերը ցրուած, Անատոլուի ժողովուրդին մէջ գրգռութիւն եւ տեղ տեղ հակաշարժում ստեղծած էր:

Այս կացութեան հանդէպ՝ Մուսթաֆա Բէմալ փաշա եւ իր համախոհները ամէն բանէ առաջ իրենք իրենց պաշտօնական հանգամանք տալու համար, կատարելապէս լիազօր հիմնադիրներու ժողովի մը բացման ձեռնարկած էին: Անատոլուի եւ Բուլղարիի Իրաւանց Պաշտպան Միութեան Ներկայացուցչական ժողովի անունով՝ հետեւեալ հռոագիրը Մուսթաֆա Բէմալ փաշայի ստորագրութեամբ շրջագայութեան հանած էին:

Պատնէն

«Պոլսոյ Երեսփոխանական ժողովը ցրուած է, որով կառավարութեան կեդրոնին անձեռնմխելիութիւնը եւ ազգին անկախութիւնը եւ Տէրութիւնը փրկելիք միջոցները գտնելու եւ գործադրելու համար ի դիմաց ազգին՝ կատարելապէս լիազօրուած ժողովի մը Անգարայի մէջ գումա-

րումը եւ ջրուած Երեսփոխանական Ժողովէն Անգարա գալ ուզողներուն ալ սոյն ժողովին մասնակցութիւնը ստիպողական դարձած է: Հետեւաբար ստորեւ ամփոփուած հրահանգին համաձայն ընտրութեան կատարումը ի սէր հայրենիքի կը սպասենք.—

Ա.— Կատարելապէս լիազօրուած ժողով մը, պետական գործերը վարելու համար Անգարայի մէջ պիտի գումարուի:

Բ.— Սոյն ժողովին անդամակցելու համար ընտրուելիք անձերը, երեսփոխաններու վերաբերեալ օրէնքին ենթակայ են:

Գ.— Ընտրութիւններու ժամանակ ենթանահանգները կեդրոն պիտի նկատուին:

Դ.— Ամէն ենթանահանգէն հինգ անդամ պիտի ընտրուի:

Ե.— Ընտրութիւնները նահանգային եւ ենթանահանգային Բ. կարգի ընտրելիներու եւ քաղաքապետական եւ վարչական ժողովի անդամներուն կողմէ միեւնոյն օրը եւ նոյն ժողովին մէջ պիտի կատարուին:

Զ.— Սոյն ժողովի անդամակցութեան, ամէն կուսակցութիւն, հատուած եւ միութիւն կրնայ թեկնածուներկայացնել: Ասկէ զատ սոյն նուիրական պայքարին գործնականապէս մասնակցելու համար, ամէն անհատ իր անկախ թեկնածութիւնը կրնայ ուրիշ վայրի մէջ յայտարարել:

Է.— Ընտրութիւններուն ամէն կեդրոնի ամենաբարձրը աստիճանի քաղաքային պաշտօնեան պիտի նախագահէ եւ ընտրութեան ազատութեան պահպանման պատասխանատու պիտի նկատուի:

Ը.— Ընտրութիւնները գաղտնի քուէով եւ բացարձակ մեծամասնութեամբ պիտի կատարուին, իսկ քուէհամարը ժողովին կողմէ նշանակուելիք երկու անձերու կողմէ եւ ժողովին ներկայութեան պիտի ըլլայ:

Թ.— Ընտրութեան վերջաւորութեան երեք օրինակ տեղեկագիր պիտի պատրաստուի: Այս տեղեկագիրները բոլոր անդամներու ստորագրութիւնը կամ անձնական կրօնիքը պէտք է կրեն: Մէկ օրինակը տեղւոյն մէջ պիտի մընայ, մէկը ընտրուած անձին պիտի յանձնուի, իսկ երրորդը ժողովին պիտի զրկուի:

Ժ.— Անդամներուն ամսականները ի վերջոյ ժողովին կողմէ պիտի որոշուին, իսկ ճամբորդութեան ծախքերը

ընտրական ժողովի կողմէ՞ որոշուելով՝ տեղական կառավարութիւնները պիտի վճարեն:

ԺԱ.— Ընտրութիւնները, ամենաուշը մինչեւ 15 օր Անգարայի մէջ գումարուելու պայմանով աւարտելէ ետք, ընտրուածներուն անունները եւ անոնց մեկնումը անմիջապէս պէտք է տեղեկացուի:

ԺԲ.— Հեռագրին ստացուած ժամը պէտք է տեղեկացուի:

Յ. Գ.— Զօրաբանակներու հրամանատարներուն, կուսակալներուն եւ անկախ կառավարիչներուն հաղորդուած է:

Պոլսոյ կառավարութեան շրջաբերութեան դրած կրօնական հրամանագիրներուն անդեցութիւնը կոտրելու համար ալ Քէմալականները սկսած էին ջերմեռանդի եւ հաւատացեալի լեղուով բրոքականա մղել, կրկնելով, թէ թագաւորը եւ իսլամներու մարգարէին փոխանորդը Պոլսոյ մէջ թշնամիներու ձեռքը գերի կը դտնուի, թէ Պոլիս կազմուած Տամատ Ֆէրիտ փաշայի կառավարութեան անդամները թշնամիին ծախուած հայրենադաւներ են, թէ կրօնական հրամանագիրները թշնամիներուն կողմէ պատրաստուած են: Միեւնոյն ժամանակ կը խնդրէին՝ որ թագաւորը բաժանման ենթակայ հայրենիքին ազատագրումին համար, մինչեւ այս կացութեան վերջանալը պետական գործերը վարելու համար Քէմալականներուն իրաւասութիւն տար: Նոյնիսկ Ա.զգին մայր անունը ստացող Խալիտէ Հանրմ, կրօնափոխ հրեայ էտիպին աղջիկը՝ կանաչ ծածկոցով եւ դեղին մոյկերով գիւղէ գիւղ շրջելով կրօնական քարոզչութիւններով այս հոսանքը զօրացնելու կ'աշխատէր:

Տրուած հրամանները կատարուած, բրոքականտը իր ազդեցութիւնը ցոյց տուած էր: Ընտրութիւնները փութով եւ պահանջուած պայմաններով լրացուած՝ եւ ժողովին՝ Ապրիլ 23ին բացումը որոշուած եւ բացման պարագաները՝ ժողովուրդին կրօնական զգացումները շոյելու ոճով խրմբագրուած եւ յայտարարուած էին:

Ներկայացուցչական ժողովի անունով Մուսթաֆա Քէմալ փաշայի ստորագրութեամբ շրջաբերութեան դրուած հետեւեալ հեռագիրը՝ ժողովին բացման մասին ձեռք առնուած միջոցները ներկայացնող պատմական փաստաթուղթ մը ըլլալուն նոյնութեամբ կ'ամփոփենք:

## Պաշտօնական յայտարարութիւն

Ա.— Աստուծոյ օգնութեամբ Ապրիլ 23 Ուրբաթ կէսօրուան աղօթքէն անմիջապէս ետք, Անգարայի մէջ Ազգ. Մեծ Ժողով պիտի բացուի:

Բ.— Հայրենիքին անկախութիւնը եւ թաղաւորական գահը փրկելու նման ամենակարեւոր եւ կենսական պարտականութիւնը ունեցող այս մեծ Ժողովին բացումը Ուրբաթ օր կատարելու նպատակն է, նոյն օրուան Սրբութեանէն օգտուելու եւ բոլոր երեսփոխաններու հետ Պայրամ Վէլի մզկիթին մէջ աղօթելու եւ Գուրանէն ներշնչուիլ: Աղօթքէն ետք, նուիրական դրօշակի առաջնորդութեամբ մասնաւոր Պաշտօնատուներ պիտի ուղղուին: Հոն հասնելուն՝ ներս չմտած աղօթք մը պիտի կարդացուի եւ զոհեր պիտի մատուցուին: Այս հանդիսութեան միջոցին մզկիթէն մինչեւ Մասնաւոր Պաշտօնատուներ զինուորական ջոկատներ դիրք պիտի բռնեն:

Գ.— Նոյն օրուան նուիրականութիւնը շեշտելու համար, այս օրուրնէ սկսեալ նահանգի կեդրոններուն մէջ կուսակալներու կարգադրութեամբ աղօթք պիտի սկսուի եւ այդ աղօթքին վերջին մասը՝ Ժողովի բացման օրը՝ Ուրբաթի աղօթքէն յետոյ մասնաւոր Պաշտօնատան առջեւը պիտի լրացուի:

Դ.— Մեր սուրբ եւ նուիրական հայրենիքին ամէն անկիւնը նոյն ձեւով եւ այս օրուրնէ սկսեալ, աղօթքէն առաջ մզկիթներու վրայ փառաբանութիւն պիտի ըլլայ եւ վերջաւորութեան թաղաւորին բարձր անունը յիշատակելու ժամանակ՝ Նորին Կայսերական Բարձրութեան եւ անոր բոլոր հպատակներուն ժամ առաջ ազատագրումին համար մաղթանքներ պիտի ըլլան եւ Ուրբաթի աղօթքը վերջանալէն յետոյ՝ թաղաւորին եւ հայրենիքին փրկութեան նպատակով կատարուած ջանքերուն կարեւորութեան եւ նուիրականութեան եւ ամէն անձի իր ներկայացուցիչներէն կազմուած՝ Ազգ. Մեծ Ժողովին իրեն յանձնելիք հայրենական պարտականութիւնը կատարելու ստիպողականութեան մասին քարոզ պիտի կարդացուի. ապա թաղաւորին, կրօնին, տէրութեան, հայրենիքին եւ ազգին փրկութեան, բարօրութեան եւ անկախութեան համար աղօթք պիտի կարդացուի: Այս կրօնական եւ հայրենական հանդիսութիւններէն եւ մզկիթէն ելլելէն ետք, Օսմանեան երկրին բոլոր կառավարչատուներու մէջ շնորհաւորութեան ընդունելութիւններ պիտի կատարուին:

Ե.— Սոյն հաղորդագրութեան անմիջապէս հրատարակուելուն համար ամէն միջոցի պիտի դիմուի եւ փութով ամենահեռու գիւղերուն եւ ամենափոքր գիւնուորական ջուկատներու եւ բոլոր հաստատութիւններուն պիտի հաղորդուի: Առանձինն խոչոր նշանատախտակներով ամէն կողմ պիտի կախուի եւ կարելի եղած վայրերու մէջ բազմագրուելով՝ ձրի պիտի բաժնուի:

Զ.— Տիրոջմէն յաջողութիւն կը խնդրուի:

\* \* \*

Ժողովին բացումէն օր մը առաջ հետեւեալ կարճ եւ սակայն նշանակալից հաղորդագրութիւնն ալ հրատարակուած էր: Այս յայտարարութեան մէջ ուշադրութեան արժանի կէտը, գործագիր իշխանութեան «կատարուած իրողութեամբ մը» ժողովին յանձնուած ըլլալն է:

Հաղորդագրութեան Պատմէն

«Աստուծոյ օգնութեամբ, Ապրիլ 23-ին, Ուրբաթ օր, Ազգ. մեծ ժողովը բացուելով գործի պիտի ձեռնարկէ: Այդ օրուրնէ սկսեալ՝ ամբողջ քաղաքային եւ գիւնուորական պաշտօնատուներուն եւ ազգին դիմումնավայրը՝ յիշեալ ժողովը պիտի ըլլայ:

Յանուն Ներկայացուցչական ժողովի  
Մուսթաֆա Քէմալ»

\* \* \*

1336(\*) տարուան Ապրիլ 23-ի Ուրբաթ օր գրուած ձեւով եւ հանդիսութիւններով Անգարայի մէջ, Ազգային Մեծ ժողով անունով ժողով մը բացուած էր: Հետեւեալ օրուան նիստին ժողովին նախագահութեան խնդիրը արծարծուած էր: Ճէլալէտտին Արիֆ պէյ, Պոլսոյ ժողովին նախագահը ըլլալու հանգամանքով՝ առանց վիճարանութեան նախագահական աթոռը որպէս կատարուած իրողութիւն գրաւելու զգած էր. սակայն չյաջողելով՝ նախագահութիւնը համաձայնութեամբ Մուսթաֆա Քէմալին տրուած էր: Ճէլալէտտին Արիֆ պէյին այս համարձակութենէն Մուսթաֆա Քէմալ փաշա վիրաւորուած էր, Ճէլալէտտին Արիֆ պէյն ալ չյաջողելուն համար ցաւած էր:

Մուսթաֆա Քէմալ փաշա այս ժողովին նոր ձեւ մը տալ ուղիով, գաղտագողի հանրապետութեան մը հիմերը դնելու համար՝ հետեւեալ Ուխտերը աննշան վիճարանութենէ մը ետք ընդունիլ տուած էր:

(\*) 1920՝ մեր թուականով:

## Ժողովին Ընդունած Ուխտերը

Ա.— Պետութեան կազմութիւնը ստիպողական է :

Բ.— Նոյնիսկ առժամեայ կերպով կառավարութեան պետ մը ճանչնալ եւ կամ թագաւորի տեղակալութիւն մը ստեղծել ընդունելի չէ :

Գ.— Ժողովին վրայ կեդրոնացած ազգային կամքը — գործնականապէս հայրենիքին նակատագրին գերիշխող նանչնալ — ուխտին հիմն է : Թուրքիոյ մէջ Ազգ. մեծ Ժողովէն վեր ուժ մը գոյութիւն չունի :

Դ.— Թուրքիոյ Ազգ. մեծ Ժողովը կրօնական եւ քաղաքային իրաւասութիւն ունի : Ժողովին անդամներէն նըշանակուած Յանձնախումբ մը, պետական գործերը պիտի վարէ : Ժողովին նախագահը այս յանձնախումբին ալ նախագահն է :

Մասնաւոր յիշատակութիւն.— Թագաւորը՝ Մարգարէի փոխանորդը երբ ազատ ըլլայ, ժողովին որոշելիք օրէնքներու հիման վրայ իր դիրքը կը գրաւէ» :

Մուսթաֆա Բէմալ փաշա այս ուխտերուն մասին խօսած ժամանակ կ'ըսէ.—

«Այս հիման վրայ կազմուած կառավարութեան մը ձեւը շատ շուտով կրնայ հասկցուիլ. նման պետութիւն մը ազգային գերիշխանութեան վրայ հիմնուած ժողովրդային պետութեան մը հանրապետութիւնն է» :

Եւ այս ուխտերու մասին խօսքը շարունակելով կ'ըսէ .

«Իրականութիւնը՝ Օսմանեան վեհապետութեան եւ մարգարէի փոխանորդութեան մարած եւ ջնջուած ըլլալը հաստատելով՝ նոր հիմերու վրայ արդիական Պետութիւն մը ստեղծել էր, սակայն այս պարագան իր մերկութեամբ ցոյց տալ, կրնար ծրարիքը ընդհատելու ջուրը ձգել, որովհետեւ ընդհ. կարծիքը այն էր, որ թագաւորը ապակալին անպարտ է : Նոյնիսկ առաջին նիստին՝ Օսմանեան Գահուն եւ վեհապետութեան ենթարկուիլ եւ կեդր. կառավարութեան հետ համաձայնութեան եզր մը գտնելու շուրջ կարծիքներ յայտնուած էին :

«Պոլսոյ պայմաններուն մէջ՝ թագաւորին հետ ո՛չ գաղտնի եւ ո՛չ ազատ յարարերութեան անյարմար ըլլալը բացատրեցի : Հարցուցի թէ նման յարարերութիւն մը ի՞նչ նպատակով պիտի ըլլայ. եթէ հասկցնելու համար է որ ազգը իր անկախութեան եւ իր հողային ամբողջութեան համար կը պայքարի, ասոր հարկ չկայ, որովհետեւ կը կարծէ՞ք որ թագաւորն ալ ասկէ ուրիշ փափաք կրնայ ունենալ : Ասոր հակառակը եթէ իր բերնէն լսեմ ; չեմ հաւատար : Այլ

կ'ընդունիմ, որ անիկա ճնշման տակ կը խօսի: Բացատրեցի, որ մեր մասին տրուած հրամանագիրները շինծու եւ կեդր. կառավարութեան հրամանները եւ հաղորդագրութիւնները մեկնուելու կարօտ են: Ըսի, որ կարգ մը վախկոտ եւ տրամաբանութիւնը տկար մարդոց վերապահումները անտեղի են:

«Ըսել կ'ուզեմ, որ պետութիւն մը հիմնելու առաջարկը չըրած՝ ներկաներուն զգացումները նկատի առնել պէտք էր»:

\* \* \*

Մուսթաֆա Քէմալ փաշա, բոլոր այս գործերը, իր պատկանած գաղտնի կազմակերպութեան մը հաշտոյն կը կատարէր, նախապէս պատրաստուած ծրագրի մը տառացի գործադրութեան կը ձգտէր: Այս ծրագիրը գիրքին առաջին մասին մէջ Իթթիհատ եւ Թէրագըր կուսակցութիւնը նկարագրելու ժամանակ բացատրուած է: Սելանիկի 1909ի Համագումարին որոշուած էր Օսմանեան կայսրութիւնը տապալել, կրօնի ազդեցութիւնը ջնջել, հայրենիքին հարստութեան աղբիւրները ընկերներու միջեւ բաժնել եւ Օսմանեան գահը կործանելով Հանրապետութիւն հռչակել էր:

Մուսթաֆա Քէմալ փաշա իր ճառին մէջ այս կէտերը խոստովանելէ չի քաշուիր. գաղտնի կուսակցութեան մը անուան եւ հաշտոյն աշխատիլը որոշ կերպով կը յայտնէ, երբ կ'ըսէ.—

«Բոլոր այս դէպքերուն, Թուրքիոյ Աղգ. մեծ Ժողովի, պետութեան Նախագահի, ընդհ. հրամանատարի եւ Հանրապետութեան Նախագահի տիտղոսները ստանալէ աւելի, մեր կազմակերպութեան Նախագահի հանգամանքով՝ այս պարտականութիւնը կատարելու ստիպուած էի»:

Աղա Օղլու Ահմէտ պէյ ալ, այս յայտարարութիւնը շեշտած է. ան ալ «Միլլիյէթ» թերթին մէջ «Նոր դասերու առթիւ» վերնագրով գրած յօդուածին մէջ կ'ըսէ.—

«Այս գործերուն կատարումովը անգամ մըն ալ կը հաստատուի, որ մեր յեղափոխութեան ընթացքը շատ առաջ մշակուած ծրագրով մը նախատեսուած էր: Այդ ծրագրին հետզհետէ գործադրութիւնը այս անգամ իր ամենակարեւոր հանգրուանը կը բոլորէր»:

\* \* \*

Սարի մէջ Մարէշալ Ֆոշի ստորագրած ընդհանուր զինադադարը՝ համաշխարհային պատերազմը վերջացու-



ցած, թնդանօթի ձայները լռեցուցած, մարդկութիւնը զի-  
րար սպաննելէ դադարիլ տուած էր: Սակայն տնտեսական,  
ընկերային եւ քաղաքական տազնապնեքը՝ բռնադատեալ  
յեղափոխութիւն յառաջացուցած էր: Պատերազմէն պար-  
տուած գերմանական եւ աստրիական կայսրութիւնները,  
ընդհ. պատերազմին փլած ռուսական կայսրութեան նմա-  
նած էին: Այս երկու տէրութիւններու փլատակներուն վրայ  
կարգ մը հանրապետութիւններ հիմնուած էին: Այս փոփո-  
խութեան եւ բաժանումին բնական հետեւանքը ըլլալով՝  
հնչուն դրամները հաւաքուած եւ պահուած էին: Փոխանա-  
կութեան միջոց ըլլալով սակայն փոխարժէքը հնչուն ոսկի  
չունեցող միլիոններով դրամաթուղթ մնացած էր. եւ  
թղթոսկին արժէքը չկարենալով պահել՝ սոսկալի անգոր-  
ծութեան, խոր թշուառութեան եւ խառնակութեան առիթ  
տուած էր:

Անանկ օրեր եղան՝ որ Ռուսիոյ մէջ մէկ օրս հացի  
համար մէկ միլիոն ռուբլի, իսկ Գերմանիոյ մէջ՝ մէկ նա-  
մակադրոշմի համար կէս միլիոն մարք վճարել հարկ ե-  
ղաւ:

Այս սոսկալի տնտեսական տազնապն եւ ընկերային  
փոփոխութիւնը՝ ազգերու կրօնական կապերը, ընտանեկան  
կարգ ու սարքը եւ բարոյականը խաթարած, ամէն բան,  
փոխած էր: Ամերիկացիները՝ եւրոպացիներուն, եւրոպա-  
ցիները՝ ամերիկեցիներուն, բանուորները՝ դրամատէրնե-  
րուն, պրահմինականները՝ պուտտայականներուն, պուտ-  
տայականները՝ քրիստոնեաներուն, քրիստոնեաները՝ իս-  
լամներուն, թուրքերն ալ պոլչեւիկներուն խառնուած՝  
կեանքի նախկին հաւասարակշռութիւնը հիմէն տապա-  
լած էր:

Զինադադարի շրջանը սոսկալի փոթորիկի մը նմա-  
նած էր: Ազգերը ետ ու առաջ կը տարուբերուէին: Նախկին  
աւանդութիւններ, օրէնքներ եւ քաղաքական վարչաձեւեր  
փտած, մարդկութեան մէջ տարբեր զգացումներ ծնած,  
եւ ընդհանուր փոփոխութիւն մը սկսած էր:

Այս մեծ փոփոխութեան դէմ անմիջական բարեկար-  
գութեան չդիմող եւ փութով չկատարող պետութիւններ  
փճացած էին: Այս մեծ փոփոխութեան շրջանը կառավա-  
րելու համար կացութիւնը ըմբռնող, հարկ եղածը տնօրի-  
նող եւ փութով կատարող անձերու պէտք կար:

Օսմանեան Վեհապետը, պետական մարդիկը, այս մեծ  
եւ բռնադատեալ փոփոխութիւնը կառավարելու կարողու-  
թենէն եւ համարձակութենէն զուրկ էին:

Իթիհատ եւ Թէրագգըն պատերազմի պարտութենէն սմբած, Օսմանեան կայսրութեան փլատակներուն վրայ տարրեր ձեռով իր իշխանութիւնը հիմնելու յարմար առիթի կը սպասէր, իսկ Ազատական կուսակցութեան ղեկավարները եղող շէյխեր եւ հոճաններ, կացութեան ահաւորութիւնը, Ժամանակին պահանջները չէին կրնար ըմբռնել. իրականութեան մէջ, ծագած յեղափոխութիւնները այս հատուածներուն համար աննպաստ էին:

Ես կացութիւնը իր ամբողջ մերկութեամբ տեսած, տէրութեան եւ հայրենիքին հանդէպ ունեցած սիրոյս պատճառաւ՝ փրկութեան միջոցներ խորհած, պետական հաստատութեան մէջ անյետաձգելի փոփոխութեան մը պէտքը զգացած էի, եւ այս իրականացնելու եւ գործադրելու համար ալ քաղաքական կուսակցութիւն մը հիմնած էի: «Ռատիգալ» (1) անունով հիմնած այս քաղաքական կուսակցութեան իր պաշտօնաթերթ «Ինգիլիապը Պէշիր» անունով թերթ մը հրատարակել սկսած էի:

Օսմանեան կայսրութեան ամբողջականութիւնը վրտանգուած էր: Ուիլսընի յղացած ազգային սկզբունքները իսլամ եւ ոչ-իսլամ տարրերու միջեւ բաժանումի զգացումները արթնցուցած էր: Հայեր, մասնաւորապէս յոյներ տարօրինակ պահանջներ կ'ընէին: Նահանգային եւ ենթանահանգային վարչական խորհուրդներու մէջ ինչպէս որ գատըն, միւֆթին, առաջնորդը, մեթրոպոլիտը եւ խախամպաչին իրաւական անդամի պէս կը գործեն, այնպէս ալ Նախարարաց Խորհուրդին մէջ, ինչպէս Շէյխ Իւլ Իսլամ, հայ, յոյն, կաթոլիկ պատրիարքներուն հետ խախամպաչին ալ անդամակցութեան անհրաժեշտութեան վրայ կը պնդէին եւ զօրաւոր պատճառներ ցոյց կոչ տային:

Այս իսլամներու մարգարէին փոխանորդութիւնը ունեցող Օսմանեան գահակալութիւնը Շէյխ Իւլ Իսլամութեան պաշտօնատուն մը ունէր, Շէյխ Իւլ Իսլամն ալ դահլիճը կազմող նախարարներուն մէջ վարչապետէն յետոյ ամենաընտրեալ մէկ անդամն էր:

Բայց քաղաքակիրթ աշխարհը կրօնը պետութենէն բաժնած, Օսմանեան պետութիւնն ալ Սահմանադրական ձեւի մը մտած էր: Այս կրօնական պաշտօնատունը անկասկած պետութեան ընդհ. քաղաքականութեան մէջ օժանդակողի դերքին մէջ չի կրնար մնալ: Զինադադարէն ետք, ինչպէս ըսի, աշխարհի կացութիւնը փոխուած, կիներն այ-

(1) «Արմատական» կուսակցութիւն:

լեւս ընկերային կեանքէ զրկելու հնարաւորութիւն չէր մնացած: Իրենց կողոպուտները գրաւումէ ազատելը եւ իրենց զաւակներուն եւ թոռներուն ապագայ մը ապահովելը ուզող հին եւ կաշառակեր պետական մարդիկը, իրենց ազգէն գողցած միլիոնները կարենալ պահելու համար՝ կրօնական դպրոց, աղօթատեղի եւ նման բարի նպատակներու նուիրատուութիւններ կատարած, իրենց զաւակներն ալ մատակարար նշանակած էին: Իմ պատասխանատուութեանս եւ վարչութեանս տակ, իբր «Ռատիգալ» կուսակցութեան պաշտօնաթերթ հրատարակուող «Ինգիլապը Պէշիր» թերթը այս խնդիրը խստօրէն պաշտպանած էր: Անշատ պարզ ոճով մը պահանջած էր՝ որ Շէյխ Իւլ Իսլամութիւնը պետական կազմէն անջատելով՝ ո՛չ պաշտօնական իսլամական հաստատութեան մը վերածուի, Էվգաֆը ջրնջելով՝ ժողովուրդին մատակարարութեան յանձնուի. կիներուն ընտրութեան մասնակցելու իրաւունք տրուի, կրօնական մէտրէսէներուն կրթական հաստատութեան մը ձեւը տրուի, եւ անոնք իրենց կալուածական հասոյթներով կրթական նախարարութեան փոխանցուին. անկելանոցները իրենց անունդի յատկացումներով քաղաքապետութեանց յանձնուին եւ ասոնց պատկանող կալուածային հասոյթներով որբանոցներու, ծերանոցներու նման բարեգործական հաստատութիւններ հիմնուին: Աւա՛ղ... գուցէ ապագան տեսնող աչքեր, պետութեան պաշտպանութիւնը փափաքող միտքեր, թագաւորական պալատ մտնող շէյխերու եւ հոճաներու կողմէ չէղոքացուին եւ այսպէսով, դարերու տիրապետութիւն ունեցող Օսմանեան Կայսրութիւնը հիմնովին կործանի եւ պատմութեան անցնի:

# ՀԱՅՈՒԹԵԱՆ ՎՐԻԺԱՌՈՒ ԵՒ ՇԵՐՈՍ ԶԱՒԱԿՆԵՐՔՆ



**ՍՈՂՈՄՈՆ ԹԷՀԼԻՐԵԱՆ**

Հայութեան ջարդարար, Թուրքոյ ներքին Գործոց նախարար ալաաթի ահաբեկիչը, 15 Մարտ 1921ին օր ցերեկով եւ մէկ գնդաւ Պերլինի մէջ գետին տապալեց այն :



**ՄԻՍԱՔ ԹՈՐԼԱՔԵԱՆ**

Ատրպէյնանի ներքին նախարար Պէհպատ Խան Զիվանջիբի ահաբեկիչը, որ 1918-ի Պաքուի հայոց ջարդը կազմակերպած էր : 19 Յուլիս 1921-ին Պոլսոյ մէջ զգետնուեցաւ :



**ԱՐՇԱԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ**

Թուրքիոյ վարչապետ Սաիւլիմ փաշայի ահաբեկիչը, որ եւ ի Հայոց եղեռնի կազմակերպեցերէն : Սպաննուեցաւ 6 Դեկտ 1ին Հոովմի մէջ :



**ԱՐԱՄ ԵՐԿԱՆԵԱՆ**

Տոք. Պէհաւտտին Շաքիբի ահաբեկիչը : 17 Ապրիլ 1922-ին Պերլինի մէջ Արշաիւր Շիրակեանի հետ Պէհաւտտինը եւ ձեմալ Ազմին միասին սպաննեցին :

**ՄԵՎԼԱՆ ԶԱԴԵ ՐԻՖԱԺ**

**Օսմանյան հեղափոխության մութ էջերը և Երբինտաի հայաջինջ  
ծրագրերը**

**МЕВЛАН ЗАДЕ РИФАД**

**Темные страницы османской революции  
и планы истребления армян иттиана.**

**(На армянском языке)**

**Издательство «МИК»**

**Ереван, 1990**

*Ստորագրված է տպագրության՝ 18. 06. 1990 թ.:*

*Զափսը՝ 84×108<sup>1</sup>/<sub>32</sub>: Թուղթ՝ օֆսեթ: Տպագրություն՝ օֆսեթ, պայմ.  
20,6 տպ. մամ.: Տպարանակ՝ 30000: Պատվեր՝ 1036: Գինը՝ 6 ուր.:*

**Издательство «МИК», 375041, Ереван—41. ул. Эребуни, 17.**

*ՀեՍՀ մամուլի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլի-  
գրաֆկոմբինատ, Երևան—9 Տերյան 91:*

**Полнграфкомбинат им. Акопа Мегاپарта Госкомитета Арм. ССР  
по печатн. Ереван—9, ул. Теряна, 91.**

